

Գիրքը յուսադատճեճահանվել է
A-PDF DjVu TO PDF DEMO: Purchase from www.A-PDF.com to remove the watermark

"Նամահայկական էլ. Գրադարան"

կայքի՝ www.freebooks.do.am

կողմից եւ ներկայացվում է իր

այցելուների ուշադրությանը:

The book created by "PanArmenian E. Library"



Գիրքը կարող է

օգտագործվել միայն ընթերցանության համար...

For more info: www.freebooks.do.am

Library

ՄԱՌ ԼՈՒՅՆՈՒԹՅԱՆ ԿԱՐՈՂ ԵՔ ՁՁԻ ԵՐԿՐՈՒԹՅԱՆ ԱՐԿԻՍԸ ԼՅՅԱՅԱՑ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ ԵՎ ԻՐԱԾԻՄ
ԼՈՒՄԳՈՍՏՆԵՆԱՄԱՆԷԼ ԳՐԵՐ:

Ք-ՈՒՅՆ ԳՐԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՄԱՆԸՄԱՄԱՆԸՐՈ ԿԱՐՈՂ ԵՔ
ԻՄԱՆԱԼ "ՏԱՐԱԾՄԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԻԿԻ ԳՐԱԿՈՐԹՆ" ԿՈՑՔԻՑ

www.freebooks.am

ԵՆԼՐՁԱԿԱԼ ԵՒՔ, ՈՐ ՕԳՏՎԻԹՄ ԵՔ ՄԵՐ ԿՈՑՔԻՑ
ՏԱՐԱԿՈՐԹ ԵՒՔ ՀԱՇՎԻ ԸՆԹՐՏՈՒՄՔՆԻՆ:



ԳՐԵՐ ՄԻՔ՝ freebooks@yambler.ru



ԱՆՆԵՐՍԱՆԻ
ԴՅՈՒՄԱ

ԱՍԿԱՆԻ

ԱՆԵԶՍԱՆԻՐ
ԳՅՈՒՄԱ



ԱՍԿԱՆԻՈ



ՎԵՊ

ԵՐԵՎԱՆ



1998

Ռուսերենից թարգմանեց

Ա. Ս. Հայրապետյանը

Դյումա, Ա.

Ասկանիոս Վեպ (Ալեքսանդր Դյումա: [Ռուս. թարգմ. Ա. Ս. Հայրապետյանը, խմբ.՝ Հ. Հ. Ֆելեքյան]).— Եր.: «Լույս», 1990.— 598 էջ:

Դ 600 «Ասկանիոս» վեպում հեղինակը նկարագրում է իտալացի հուշակազմի արձանագործ ու սակերիչ Բենվենուտո Չելլինիի կյանքի մի ժամանակահատվածը միայն՝ Ֆրանցիսկ I-ի արքունիքում եղած տարիները:

Վեպում նկարագրված են XVI դարի Ֆրանսիայի կենցաղն ու բարքերը:

Վեպն առաջին անգամ հրատարակվել է հայերեն 1968 թ.:

Դ 4703000000 (46) 194. 1990
702 (01) 90

ԳՄԴ 84. 4Ֆր-4

© «Սովետական գրող» հրատարակչություն, թարգմանված է հայերեն, 1987

© Թարգմանիչ՝ Հայրապետյան Ա. Ս., 1990





ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

Փողոցն ու արվեստանոցը

Դեպքը տեղի ունեցավ նոր թվականության 1540 թվականին, հուլիսի 10-ին, կեսօրվա ժամը շորսին, Փարիզում, համալսարանից ոչ հեռու, Օգոստինոսականների եկեղեցու մուտքի առաջ, օրհնած ջրով լի թասի մոտ:

Դեղեցիկ, բարեկազմ մի պատանի՝ թուխ դեմքով, երկար գանգուրներով, մեծ, սև աչքերով, վայելչորեն, բայց անպաճույճ հագնված ու զինված ոչ մեծ դաշույնով, որի երախակալը հմայում էր իր սքանչելի բանվածքով, երեկոյան, ամբողջ ժամերգության ընթացքում անշարժ կանգնած էր այնտեղ: Նա, բոտ երևույթին, համակված էր բարեպաշտ խոնարհությամբ. գլխահակ, դեմքի աստվածավախ արտահայտությամբ ինչ-որ բան էր մրմնջում, անկասկած՝ աղոթքներ, բանի որ բառերն արտասանում էր այնքան ցածրաձայն, որ դրանց իմաստը հասկանում էր միայն աստված և մեկ էլ՝ ինքր:

Բայց երբ ժամերգությունն ավարտվելու վրա էր, պատանին բարձրացրեց գլուխը, և հարևանները լսեցին կիսաձայն արտասանած նրա բառերը.

Այս ողորմելի ֆրանսիացի վանականները ի՞նչ նողկալի են չարակամները երգում: Մի՞թե ավելի լավ երգել չեն կարող չէ՞ որ նա սովոր է ունկնդրել հրեշտակների երգը: Օ՛հ,

բայց ցալն այդ չէ... Երեկոյան ժամերգությունն արդեն վեր-
ջացաւ: Տե՛ր աստված, տե՛ր աստված, այնպես արա, որ
այսօր բախտն ավելի ժպտա ինձ, քան անցյալ կիրակի: Թող
նա բարձրացնի աչքերն ու նայի ինձ:

Եվ իրոք, աղոթքի վերջին բառերն իզուր չէին ասված.
Եթե նա, ում ուղղված էին այդ բառերը, բարձրացնէր աչքերն
ու նայեր խոսողին, սույա կտեսներ պատանեկան սքանչելի
մի դեմք, որ պատկերացնել անգամ չէր կարող առասպելա-
կան հրաշալի պատմութիւնները կարողալիս, որոնք այդ ժա-
մանակ մեծ տարածում էին գտել անվանի սյոնտ Կլեման
Մարոյի¹ թեթև ձեռքով, որն իր բանաստեղծութիւններում
երգել է Պսիքի² սերն ու Նարկիսի³ մահը: Եվ իրոք, գորշա-
գուլն, հասարակ զգեստ հագած անծանոթը, որին քիչ առաջ
ձեզ ներկայացրինք, աչքի էր ընկնում, ինչպես արդեն սոսա-
ցինք, հազվագեպ գեղեցկութեամբ և զարմանալի նրբագեղու-
թյամբ: Նրա քնքուշ ժպիտն անբացատրելի հմայք ուներ,
խոշոր աչքերը դեռևս անսովոր էին հանդգնորեն նայելու և
փայլում էին այնպիսի հրաբորբոք կրքով, որը թերևս հա-
ճախ չես տեսնի տասնութամյա պատանու հայացքում:

Մինչդեռ եկեղեցում աղմուկով տեղաշարժեցին աթոռնե-
րը, աղոթարարելով ժամերգութեան ավարտը, սիրահարված
պատանին (որի խոսքերից ընթերցողը, հավանաբար, արդեն
գիտի է ընկել, որ նա իրավունք ունի այդպես անվանվելու),
կրկնում եմ, սիրահարված պատանին մի կողմ քաշվեց ու
սկսեց նայել իր մոտով լուռ անցնող բազմութեանը՝ եկեղե-
ցական խորհրդի փքված անդամներին, պատկառելի, ծան-
րաբարո տարեց կանանց և սիրունատես աղջիկներին: Բայց
գեղեցիկ պատանին նրանց համար չէ, որ այստեղ էր եկել:

¹ Կլեման Մարո (1496—1544) — վաղ վերածննդի շրջանի ֆրանսիա-
ցի բանաստեղծ: Գովերգելով երկրային կյանքի գեղեցկութիւնը և ուրա-
խութիւնը, նա հաճախ դիմում էր հին հունական առասպելներին:

² Պսիքն (հուն. առասպ.) — գեղեցկուհի (մարդկային հոգու մարմնա-
վորումը), որին սիրեց սիրո աստված էրոսը:

³ Նարկիս (հուն. առասպ.) — արտակարգ գեղեցիկ պատանի, որը
հմայվեց անվակի ջրի մեջ տեսած իր արտացոլմամբ, և սիրահարվեց ինքն
իրեն ու տառապանքից մեռավ:

Նրա հայացքը բոցկլտաց, և նա առաջ նետվեց միայն այն պահին, երբ մոտեցավ սպիտակազգեստ մի աղջիկ՝ դուենյայի՝ ուղեկցությամբ և պետք է ասել՝ հարգարժան տան դուենյայի, որը, ըստ ամենայնի, շատ բարեկիրթ էր, բավական երիտասարդ, ժպտադեմ և, ճիշտն ասած, պարզասլես հաճելի արտաքինով: Երբ երկու անձանոթուհիները մոտեցան թասին, պատանին ձեռքն ընկղմեց ջրի մեջ և, քաղաքավարությամբ խոնարհվելով, օրհնած ջուրը առաջարկեց կանանց:

Դուենյան ծնկածալ ողջունեց, ամենասիրալիր, երախտագետ ժպիտով ձեռքը հպեց երիտասարդի մատներին և խորին հուսախաբության մատնելով նրան, որպես միջնորդ, ինքը մանկամարդ աղջկան առաջարկեց օրհնած ջուրը, իսկ աղջիկը, շնայած պատանու քիչ առաջ արտասանած ազոթքին, այդպես էլ աչքերը չբարձրացրեց, որից հայտնի դարձավ, որ գեղեցիկ պատանու ներկայությունը գաղտնիք չէ նրա համար:

Իսկ երբ աղջիկը հեռացավ, գեղեցիկ պատանին ոտքը խփեց դետնին ու շշնջաց.

— Այս անգամ էլ նա ինձ չնկատեց:

Գրանից երևում էր, որ պատանին, ինչպես արդեն ասացինք, հազիվ տատնով տարեկան լինելու:

Բայց ահա նրա սրանեղությունը շրայավ: Նա ցած վազեց եկեղեցու աստիճաններով ու տեսավ, որ մտամոլոր գեղեցկուհին, բողն իջեցրած և ուղեկցող կնոջ թևը մտած, պնտմ է դեպի աջ: Պատանին էլ շտապեց թեքվել դեպի աջ, ի գեղ նկատելով, որ դա իր տուն տանող ճանապարհն է: Գետափով մինչև Սուրբ Միքայելի կամուրջը գնալով, աղջիկն անցավ կամուրջը, հասավ Տակառագործների փողոցի ծայրը և բայլերն ուղղեց դեպի ջրաղացի կամուրջը: Այդ ամենը պատանու տան ճանապարհին էր, և նա կրնկակոխ, ստվերի նման հետևեց աղջկան:

Վ դուենյա — տարեց կին, որն ըստ իսպանական սովորության մշտապես ուղեկցում է ազնվական օրիորդին կամ տիկնոջը

Միրահարը սիրունատես աղջկա ստվերն է:

Բայց, ավա՛ղ: Հենց Շատլի բանտի մոտ հմայիչ աստղը, որի ուղեկիցն էր դարձել մեր անծանոթը, հանկարծ անհետացավ. դուենյան բախեց թագավորական ամրոցի դուռը, նեղլիկ դռնակն ասես ինքն իրեն բացվեց ու անմիջապես փակվեց:

Երիտասարդն ապշած էր: Երբ նրան երկյուղածութուն ներշնչող սիրունատես աղջիկն անհետացավ, նա համակվեց վճռականությամբ և անմիջապես գտավ ելքը:

Թագավորական դղյակի՝ Շատլիի առաջ, նիզակն ուսին հանդիսավոր քայլքով գնում-գալիս էր պահնորդը: Մեր պատանի անծանոթը օրինակ վերցրեց հարգարժան պահակից և, մի կողմ քաշվելով, որպեսզի ուշադրություն չգրավի, բայց աչքաթող շանելով դարպասը, հերոսական արիությամբ սկսեց պահակային իր ծառայությունը, որը հաճախ են կատարում սիրահարները:

Եթե ընթերցողը երբևէ եղել է այդպիսի դրության մեջ, հավանաբար նկատած կլինի, որ պահակություն անելիս ժամանակն անցկացնելու լավագույն միջոցներից մեկն ինքն իրեն խոսելն է:

Ըստ երևույթին, երիտասարդն առաջին անգամը չէր, որ պահակություն էր անում, որովհետև գործի անցնելուն պես արտասանեց հետևյալ մենախոսությունը.

— Անշուշտ, նա ապրում է այստեղ: Այսօր, առախոտյուն ժամերգությունից հետո և վերջին երկու կիրակին, իր ևս համարձակվեցի աչքերով միայն ուղեկցել նրան (արածս հիմարություն էր), նա գետափով թեքվեց ոչ թե դեպի աջ, այլ ձախ, Նեյի դարպասի և Պրե-Օ-Կլերի կողմը. սատանան տանի, ի՞նչ գործ ունի նա թագավորական ամրոցում: Ոչինչ, կտեսնենք: Նա այցի է եկել ինչ-որ բանտարկյալի... 'Իուցն' եղբորը: Խեղճ աղջիկ: Երևի շատ է վշտացած: Չէ՞ որ նրա բարությունը, անկասկած, չի զիջում գեղեցկությունը: Թո՛ւհ, սատանան տանի: Այնքան եմ ուզում մոտենալ նրան, առանց այլևայլության հարցնել, թե ով է բանտում և առաջարկել ծառայություններս: Եթե բանտարկյալը նրա եղբայրն

է, ես ամեն բան կպատմեմ ուսուցչիս և կխորհրդակցեմ նրա հետ: Չէ՞ որ ուսուցչիս փախել է Սուրբ-Հրեշտակի ամրոցից, ուրեմն՝ գիտի, թե ինչպես են բանտից ազատվում: Այսպես ուրեմն, ես փրկում եմ նրա եղբորը: Այդպիսի ծառայութիւնից հետո նրա եղբայրը դառնում է իմ մտերիմ ընկերը: Նա փափագում է երախտահատույց լինել ինձ՝ մի մարդու, որն այդպիսի ծառայութիւն է մատուցել նրան: Ես խոստովանում եմ, որ սիրում եմ նրա քրոջը: Նա ծանոթացնում է մեզ. ես ծնկի եմ դալիս քրոջ առաջ, և այդ ժամանակ արդեն, անկասկած, նա բարձրացնում է աչքերն ու նայում ինձ:

Հասկանալի է, թե երազանքի պահին սիրահարվածի երեակայութիւնն ուր կարող է տանել: Այդ պատճառով երիտասարդը շատ զարմացաւ, լսելով, որ հնչում է ժամը շորսը և տեսնելով, որ պահակը փոխվել է:

Ահա նոր պահակն անցավ պարտականութիւնների կատարմանը, իսկ պատանին շարունակում էր իր պահակութիւնը: Ժամանակն անցկացնելու միջոցն այնքան հաջող էր, որ նա սրոշեց կրկին օգտվել այդ միջոցից ու սկսեց մի նոր մենախոսութիւն, որը նույնքան երկարաբան էր, որքան առաջինը:

— Ի՞նչ գեղեցիկ է նա: Ինչքա՞ն նազելի է նրա քայլվածքը, ինչքա՞ն ողջախոս հրբագեղութիւն կա նրա շարժումների մեջ, ինչքան նրբատուշ է դեմքը: Ամբողջ աշխարհում միայն Լեոնարդո դա Վինչին ու աստվածային Ռաֆայելը, և այն էլ իրենց տաղանդի ծաղկման շրջանում, կարող էին վերարտադրել այդ անմեղ ու անբիծ էակի կերպարը: Օ՛հ, աեր աստված, ինչո՞ւ ես գեղանկարիչ չեմ, այլ՝ փորագրիչ, արձանագործ, արծնիչ, ոսկերիչ: Ի դեպ, եթե ես նկարիչ լինեի, գեղեցկուհու դիմանկարը ստեղծելու համար պետք չէի ունենա անընդհատ նրան տեսնելու Երկնագույն, մեծ աչքերը, սքանչելի շեկ մազերը, սպիտակաթույր դեմքը, բարակ իրանը միշտ աչքիս առաջ կլինեին: Եթե ես նկարիչ լինեի, գեղեցկուհուն կպատկերեի իմ բոլոր կտավներում, ինչպես Ռաֆայել Սանտին՝ Ֆորնարինային և Անդրեա դել Սարտոն՝ Լուկրեցիային: Բայց Ֆորնարինային համեմատել իսկ չի

կարելի նրա հետ: Իհարկե, ո՛չ մեկը և ո՛չ էլ մյուսն արժանի չեն նրա կոշիկների կապերը քանդելու: Նախ և առաջ Ֆորնարինան...

Պատանին դեռ չէր ավարտել համեմատութիւնը, որը, բնականաբար, պատիւ էր բերում նրա ընտրյալին, երբ հընչեց ժամացույցը:

Պահակը փոխվեց երկրորդ անգամ:

— Ժամը վեցն է... Պարզապես զարմանալի է՝ ինչ արագ է անցնում ժամանակը, — մրմնջաց պատանին: — Իսկ եթե ժամանակն այսքան արագ է անցնում, երբ սպասում ես նրան, ապա ինչպե՞ք կթռչի, երբ նրա կողքին լինես: Օ՛հ, երբ նրա կողքին ես, ժամանակ գոյութիւն չունի. չէ՞ որ դրախտ ես ընկնում: Եթե ես նրա կողքին լինեի, անընդհատ կգմայլվեի նրա գեղեցկութեամբ, և այդպես կանցնեին ժամեր, օրեր, ամիսներ, ամբողջ կյանք: Օ՛հ, տեր աստված, ինչ երանելի կյանք կլիներ:

Երիտասարդը խանդավառվեց, որովհետև նրա՝ արվեստագետի աչքերի առաջ փայլատակեց սիրած աղջկա ասես կենդանի պատկերը:

Պահակը փոխվեց երրորդ անգամ:

Բոլոր ծխական եկեղեցիներում հնչեց ժամը ութը. մութն ընկավ: Ամենայն հավանականութեամբ, երեք հարյուր տարի առաջ էլ, հօւլիս ամսին, մութն ընկնում էր ժամը ութին, ճիշտ այնպես, ինչպես մեր օրերում, բայց, թերևս դարմանալին այդ չէ, այլ XVI դարի սիրահարների առասպելական հավատարմութիւնը: Այն ժամանակներում ամեն ինչ զորեղ էր, — երիտասարդ, տոկուն մարդիկ կանգ չէին առնում կես ճանապարհին ո՛չ սիրո, ո՛չ արվեստի, ո՛չ մարտական գործերում:

Ի միջի այլոց, պատանի արձանագործի համբերութիւնը (մենք արդեն դիտենք, թե ինչով էր զբաղված անժանոթը) ի վերջո վարձատրվեց: Նա տեսավ, որ բանտի դարոյասը բացվեց քսաներորդ անգամ, դուրս թողնելով նրան, ում ինքը սպասում էր: Նույն տարեց կինն ուղեկցում էր աղջկան, իսկ տասը քայլ հեռավորութեան վրա նրանք հետևից գնում էին

երկու զինված պահապան: Եվ կրկին նրանք գնացին նույն ճանապարհով, ինչպես հինգ ժամ առաջ, անցան շրաղացի կամուրջը, Տակառագործների փողոցը, Սուրբ Միքայելի կամուրջը, առափնյա փողոցները և Օգոստինոսականների Եկեղեցուց երեք հարյուր քայլ հեռավորության վրա կանգ առան խուլ նրբանցքում, հաստաբեստ դարպասի առաջ, որի կողքին երևում էր դռնակը: Դուռնյան բախեց, և դռնապանն անմիջապես բացեց դռնակը: Պահապանները, խոր գլուխ տալով, հետ դարձան Ծատիե, իսկ պատանի արձանագործը կրկին անշարժացավ դարպասի առաջ:

Ամենայն հավանականությամբ նա մինչև առավոտ այդպես էլ կանգնած կմնար այստեղ, որովհետև չորրորդ անգամ արդեն սկսել էր օդային ամրոցների կառուցել, բայց դիպվածով դիմացը ելավ մի հարբած անցորդ:

— Հե՛յ, բարեկամ,— բացականչեց անցորդը,— ասացե՛ք, խնդրեմ, դուք մա՞րդ եք, թե սյուն: Եթե սյուն եք, ապա մնացեք ձեր տեղում, և ես կտեսնեմ ձեզ, իսկ եթե մարդ եք, մի կողմ քաշվեք, ճանապարհ տվեք:

— Ներեցե՛ք,— ասաց մտամոլոր երիտասարդը,— ես օտարերկրացի եմ, չեմ ճանաչում փառավոր Փարիզ քաղաքը և...

— Այդ դեպքում ներելի է: Ֆրանսիացին հյուրասեր է, և ես ներողութուն կխնդրեմ ձեզնից: Ուրեմն դուք օտարերկրացի եք... հիանալի է: Քանի որ դուք ասացիք ձեր մասին, ապա ես էլ կասեմ իմ մասին: Ես ուսանող եմ ու գրագիր. իմ անունը...

— Ներեցե՛ք,— ընդմիջեց նրան պատանի արձանագործը,— մինչև ձեր անունն իմանալը, ես կցանկանայի տեղեկանալ, թե որտեղ եմ գտնվում:

— Նելի դարպասի մոտ, բարեկամս: Ահավասիկ և Նելի ամրոցը,— ավելացրեց ուսանողը, մատնացույց անելով հաստաբեստ դարպասը, որից օտարականը աչք չէր կտրում:

— Ահա թե ի՞նչ: Իսկ ինչպե՞ս դուքս գամ Սուրբ Մարտենի փողոցը, որտեղ ապրում եմ,— հարցրեց սիրահարված պատանին, պարզապես քաղաքավարութունից դրդված և հուսալով գլուխն ազատել զրուցակցից:

— Ինչ ասացի՞ք: Սուրբ Մարտենի փառո՞ցը: Գնանք, ես
և եղ կուղեկցեմ, ինքս էլ հենց այդ կողմն եմ գնում: Սուրբ
Միքայելի կամրջի վրա ես ձեզնից կբաժանվեմ և ցույց
կտամ, թե ինչպես տեղ հասնե՞ք: Այսպես, ուրեմն, ես ուսա-
նող եմ, վերադառնում եմ Պրե-Օ-Կլերից, իմ անունը...

— Իսկ դուք գիտե՞ք, թե ում է սլատկանում Նելի ամրո-
ցը. — հարցրեց պատանին:

— Իհարկե: Ինչպես չիմանամ, երբ դա առնչվում է հա-
մալսարանի հետ¹: Նելի ամրոցը, երիտասարդ, պատկանում
է նորին մեծությանը՝ թագավորին, իսկ այժմ ամրոցին տի-
րացել է Փարիզի պրեռոն² Ռոբեր դ'էստուրվիլը:

— Ինչպե՞ս: Այնտեղ ապրում է Փարիզի պրեռոն,³ — բա-
ղականչեց օտարերկրացին:

— Այ տղա, ես չեմ ասում, թե պրեռոն ապրում է այն-
տեղ, — առարկեց ուսանողը, — պրեռոն ապրում է Շատլետում:

— Ի՞նչ եք ասում: Բայց ինչպես է պատահել, որ ապրում
է Շատլետում, իսկ թագավորը շնորհել է նրան Նելի ամրոցը:

— Բանն այն է, որ ժամանակին թագավորը Նելի ամրոցն
ընծայել էր մեր բայիին³, վերին աստիճանի պատկառելի մի
մարդու, որը պաշտպանում էր ուսանողների իրավունքները,
դատական գործերն էր վարում և վարում էր հայրաբար: Փա-
ռահեղ պաշտոն էր: Ցավոք սրտի, մեր սքանչելի բային այն-
քան արդարադատ էր, այնքան արդարադատ... որ ահա եր-
կու տարի է արդեն, ինչ նա պաշտոնանկ է արվել և հանված

¹ Միջին դարերում Փարիզի համալսարանն ինքնապարփակ կորպո-
րացիա էր և օգտվում էր մի շարք արտոնություններից, ուներ իր ինքնա-
վարությունը, իր դատարանը, ազատված էր հարկերից և այլն: Ֆրանցիսկ
I-ի օրոք համալսարանը վերածվեց պետական հիմնարկության և ենթարկ-
վում էր Փարիզի պրեռոնի դատաստանական իշխանությանը:

² պրեռոն — պետական պաշտոնյա Ֆեոդալական Ֆրանսիայում, որն
ունեի դատաստանական և ռազմական լիազորություններ: Փարիզի պրեռոն
ղեկավարում էր քաղաքի ամրոցը կյանքը:

³ բայի (կամ՝ բալլի) — պաշտոնյա ֆեոդալական Ֆրանսիայում, որը
թագավորի կամ սենյորի անունից դատաստան էր անում

է այն պատրվակով, որ դատական նիստերի ժամանակ քնում է, թեև պարզ է, որ «բայի» բառը ծագել է «բայ-բայ»-ից: Եվ այսպես, նրա պաշտոնը վերացվեց, փարիզյան համալսարանի պաշտպանութունը հանձնվեց Փարիզի պրեռոյին: Չտեսնված պահապան է, արևս վկա: Լավ է, որ մենք ինքներս պաշտպանում ենք մեզ: Եվ այսպես, վերոհիշյալ պրեռոյին... դու լսո՞ւմ ես, բարեկամ... վերոհիշյալ պրեռոյին, իսկ նրա ձեռքերը գուրդ էն, որոշեց, որ եթե ինքը ստանձնել է բայի պարտականությունները, ապա նրա կալվածքներն էլ պետք է ժառանգի, և տիկին դ'էտամպի հովանավորությամբ սուսուփուս տիրացավ Նելի Մեծ և Փոքր ամրոցներին:

— Բայց ձեր խոսքերից դատելով՝ նա ամրոցում չի ապրում:

— Այդ անկուշտի մտքով էլ չի անցնում: Սակայն ես լսել եմ, որ այնտեղ բնակություն է հաստատել ծեր Կասանդրի՝ աղջիկը, թե՞ ազգականուհին, մի գեղեցկուհի, որի անունը Կոլոմբա է, կամ՝ Կոլոմբինա, հաստատ չգիտեմ: Նա այդ աղջկան պահում է փակի տակ, Նելի Փոքր ամրոցում:

— Ահա թե ի՞նչ, — բացականչեց արձանագործը, հուզմունքից շնչահեղձ լինելով, որովհետև առաջին անգամ լսեց իր սրտի տիրուհու անունը: — Իմ կարծիքով, դա պարզապես աղաղակոզ անօրինականություն է. բնակեցնել աղջկան այդպիսի հսկայական ամրոցում, գուցենայի հետ:

— Հո լուսնից չե՞ս իջել, օտարերկրացի: Մի՞թե չգիտես, որ անօրինությունը շատ բնական բան է և որ մենք՝ աղքատ գրագիրներս, վեց հոգով պատասպարվում ենք խարխուլ խրճիթում, իսկ ծանրակշիռ ազնվականի այսպիսի հսկայական կալվածքը՝ այգիներով, բակերով, գնդակ խաղալու սրահով՝ դատարկ է:

— Ասում եք այնտեղ գնդակ խաղալու սրահ էլ կա:

— Հոյակապ սրահ, բարեկամս, հոյակա՛պ:

¹ Կասանդր — իտալական ժողովրդական կատակերգության մշտական կերպարներից մեկը՝ կասկածամիտ ժերունի, որին խաբում են նրիաասարդ սիրահարները

— Բայց չէ՞ որ Նելի ամբողջ Ծրանցիակ Առաջին թագավորի կալվածքն է:

— Անշուշտ: Սակայն Ծրանցիակ Առաջին թագավորի ինչին է պետք այդ կալվածքը:

— Թող հանձնի ուրիշին, քանի որ պրևոն այնտեղ չի ապրում:

— Դե ինչ, խնդրիր, թող քեզ տա:

— Իսկ ինչո՞ւ շտա... Դուք սիրո՞ւմ եք գնդակ խաղալ:

— Անչափ:

— Այգ դեպքում հրավիրում եմ ձեզ առաջիկա կիրակի օրը լինել իմ խաղընկերը:

— Որտե՞ղ:

— Նելի ամբողջում:

— Համաձայն եմ, մոնսենյոր թագավորական ամբողջների կառավարիչ... Լսի՛ր, այնուամենայնիվ, դու պետք է իմանաս իմ անունը...

Բայց օտարերկրացին արդեն իմացել էր ամեն բան, ինչ ցանկանում էր իմանալ, իսկ մնացածը, ամենայն հավանականությամբ, քիչ էր հետաքրքրում նրան: Ահա թե ինչու նա ականջ չլրեց ընկերոջ պատմությանը, որը մանրամասնորեն տեղեկացրեց, որ իր անունը ժակ Օբրի է, որ ինքն ուսանող է համալսարանում և հիմա վերադառնում է Պրե-Օ-Կլերից, որ այսօր, իր բոլոր կանոնների հակառակ, խմել է:

Երբ երիտասարդ մարդիկ հայտնվեցին Քնար փողոցում, ժակ Օբրին արձանագործին ցույց տվեց ճանապարհը, որ վերջինս գիտեր ուսանողից էլ լավ. այնուհետև նրանք տեսակցություն նշանակեցին հետևյալ կիրակի, կեսօրին, Նելի ամբողջի դարպասի մոտ ու բաժանվեցին, ըստ որում մեկը գնաց իր ճանապարհով, կիսաձայն երգելով, մյուսը՝ երազելով:

Նա, որը երազանքների մեջ էր, հիմք ուներ հրազելու, որովհետև այդ օրն իմացել էր շատ ավելին, քան երեք շաբաթվա ընթացքում:

Նա իմացել էր, որ սիրած աղջիկն ապրում է Նելի Փոքր ամբողջում, որ նա, ըստ երևույթին, Փարիզի պրևոյի՝ պարոն

Ռոբեր դ' Էստուրվիլի ազգիկն է, և որ նրա անունը Կոլոմբա է: Ինչպես տեսնում ենք, պատանին ժամանակը զուր չէր կորցրել:

Երազների մեջ խորասուզված, նա թերիկեց Սուրբ Մարտենի փողոցը և կանգ առավ հոյակապ մի շենքի առաջ, որի մուտքի վրա աչքի էր ընկնում Ֆեռարայի կարդինալի ծեփածո գերբը: Նա բախեց երեք անգամ:

— Ո՞վ է, — անմիջապես արձադանքեց կայսառ, ղրնդուն մի ձայն:

— Ես եմ, օրիորդ Կատերինա, — պատասխանեց անծանոթը:

— Ո՞վ ես:

— Ասկանիոն:

— Օ՛, վերջապե՛ս:

Դարպասը բացվեց, և Ասկանիոն ներս մտավ:

Տասնութ-քսան տարեկան շատ սիրունատես մի աղջիկ, թերևս շափազանց սևուկիկ, շափազանց ցածրահասակ և շափաղանց աշխույժ, սակայն սքանչելի կազմվածքով, ուրախությամբ դիմավորեց պատանուն:

— Ահա՛ նա, փախստականը: Ահա՛ նա, — բացականչեց աղջիկը և փազեց, ավելի շուտ սլացավ Ասկանիոյի առջևից, որպեսզի հայտնի նրա դալատյան մասին, անզգուշորեն հանդցնելով ձեռքի կանթիկը:

Նա նույնիսկ շծածկեց դարպասը, որը փակեց ոչ նրա պես լիբեամիտ Ասկանիոն:

Երիտասարդը արագորեն առաջ նետված Կատերինայի շնորհիվ մնաց մթության մեջ, սակայն հաստատուն քայլերով կտրեց-անցավ բավական ընդարձակ, սալահատակ բակը, որի սալաքարերի ճեղքերում խոտ էր աճել, իսկ շուրջը վիթխարի գորշ զանգվածների պես վեր էին խոյանում ինչ-որ անհրապույր շինությունների ի դեպ, կարդինալի ապաստարանը պետք է հենց այդքան մոտյլ ու խոնավ լիներ: Ճիշտ է, ինքը՝ տերը վաղուց արդեն այստեղ չէր ապրում: Ասկանիոն, վազեվազ, մամռակալած, կանաչ աստիճաններով բարձրացավ արտասանդուղք ու մտավ ընդարձակ սրահը՝

ամբողջ տան միակ լուսավորված սենյակը, որը վանքի սեղանատան նման մի բան էր՝ սովորաբար տրտում, մութ ու ամայի, բայց երկու ամիս առաջ լույսով, ուրախությամբ, աղմուկով լցված:

Եվ իրոք, երկու ամիս էր, ինչ հսկայական ու ցուրտ սեղանատանն ապրում, աշխատում, ծիծաղում էր գործունյա, ուրախ մի ամբողջ աշխարհ: Երկու ամիս էր, ինչ հսկայական սրահն ասես փոքրացել էր, որովհետև այնտեղ հայտնվել էին տասը դադգահ, երկու զնդան, իսկ խորքում՝ դարբնոցի ինքնաշեն հնոց: Գորշացած պատերին կախված էին նկարներ, մոդելներ, դարակների վրա դարսված էին աքցաններ, մուրճեր ու խարտոցներ, սքանչելի, զարդարուն երախակալներով սուրսայր դաշույններ, գենք ու զրահ, սաղավարտներ, վահաններ՝ ոսկե նախշերով, աստվածների ու աստվածուհիների պատկերներով, ասես այդ զարդանկարները ստեղծված էին հիացմունք պատճառելու և գենքի կիրառումը մոռացության տալու համար: Լայնորեն բացված լուսամուտներից ներս էր հորդում լույսը, և թնդում էր կենսուրախ ու ճարպիկ ենթավարպետների երգը:

Կարգինալի սեղանատունը վերածվել էր ոսկերչի արվեստանոցի:

Սակայն այդ երեկո, 1540 թվականի հուլիսի 10-ին, կիրակնօրյա անգործությունն այդ աղմկոտ սրահը ժամանակավորապես սուզել էր լուռության մեջ, որն ամբողջ մի հարյուրամյակ իշխել էր այդտեղ: Կանթեղը, որն ասես գտնված լիներ Պոմպեյի պեղումների ժամանակ (այնքան անաղարտ ու նրբագեղ էր բանվածքը), լուսավորում էր շհավաքած սեղանը և շքեղ ընթրիքի մնացորդները, որոնք վկայում էին, որ կարգինալի պալատի այժմյան բնակիչները դեմ չեն նրբեմն հանգստանալու, բայց պաս պահելու սիրահար չեն:

Երբ Ասկանիոն արվեստանոց մտավ, այնտեղ շորս հոգի կային. ծեր սպասուհին, որը հավաքում էր սեղանը, Կատերինան կանթեղն էր վառում, երիտասարդ նկարիչն անկյունում նստած սպասում էր մինչև Կատերինան տեղը դնի կան-

թեղը, որպեսզի կրկին սկսի նկարել, և արվեստանոցի տերը, որը կանգնած էր ձեռքերը խաչած, դարբնոցի հնոցին կըռթնած:

Սրահ մտնելով, պատանին ամենից առաջ նկատեց հենց նրան:

Այդ արտասովոր մարդու դեմքը զարմանալի ուժ ու եռանդ էր արտահայտում, գրավելով նույնիսկ նրանց ուշադրութունը, ովքեր շէին ցանկանում նկատել նրան: Նա ջլուտ, բարձրահասակ, զորեղ մի մարդ էր, մոտ քառասուն տարեկան, բայց Միքելանջելոյի հատիչը միայն կամ Ռիբերայի վրձինը կարող էին պատկերել նրա նուրբ, հատու կիսադեմքը թուխ, արտահայտիչ դեմքը, կամ վերարտադրել խիզախ ու վեհ կերպարանքը: Նրա լայն ճակատն սովերում էր թավ հոնքերը և թվում էր, թե ուր որ է դրանք կխոժոռվեն. շինչ ու ազնիվ, խորաթափանց աչքերը երբեմն արթայական զայրույթի շանթեր էին արձակում, բարի ու ներողամիտ, բայց միաժամանակ մի քիչ հեզնական ժպիտը և՛ հմայում էր, և՛ նրկյուղածութունն ներշնչում: Նա սովորութուն ուներ սև բեղ ու մորուքը շոյել: Նրա երկար մատներով բավական խոշոր ձեռքը, կարող, ճարտար, ուժեղ, և այդ ամենի հետ նաև նուրբ, ազնվազարմ, նրբագեղ, նրա նայելու, խոսելու, գլուխը շրջելու ձևը, աշխուժութունը, արտահայտիչ, բայց ոչ կտրուկ շարժումները, անփույթ կեցվածքը, որ ընդունել էր, հիրս ներս մտավ Ասկանիոն, մի խոսքով նրա ամբողջ կերպարանքն ուժ էր արտահայտում. հանգստացող առյուծը մնում էր առյուծ:

Զարմանալի էր Կատերինայի և սենյակի անկյունում աշխատող նկարչի՝ Բենվենուտոյի աշակերտի հակադրութունը: Վերջինս մռայլ էր, անմարդամոտ, կնճիռներն արդեն ակոսել էին նեղ ճակատը, աչքերը կիսախուփ էին, շրթունքները սեղմված, իսկ աղջիկն ուրախ էր թռչնակի պես, փթթող ծաղկի նման թարմ: Նրա շինչ աչքերը նայում էին խորամանկորեն, իսկ շրթունքներն անընդհատ ժպտում էին, բացելով ճերմակափայլ ատամները: Պատանին խցկվել էր մի անկյուն: Նա դանդաղաշարժ էր, ալարկոտ և ասես վախե-

նում էր ավելորդ մի շարժում անել: Իսկ Կատերինան վազ-
վրդում էր, պտտվում, թռչկոտում, չէր կարողանում տեղում
նստել. կյանքը եռում էր նրա երակներում: Այդ երիտասարդ,
անհոգ էակը պետք է շարժվեր, նրան անծանոթ էին հոգե-
կան տազնապները:

Զարաճճի աղջիկն արտույտ էր հիշեցնում, այնքան կայ-
տառ, այնքան զրնգուն ու մաքուր էր ձայնը, այնպիսի ուրախ
խուժյամբ, թեթևությամբ ու անհոգությամբ էր ընդունում
կյանքը, որը դեռ շատ քիչ էր ճաշակել: Նրան շատ էր սա-
զում «Սկոցոնեն» անունը, որը տվել էր արվեստանոցի տերը
և որն իտալերեն նշանակում էր ու հիմա էլ դեռ նշանակում
է «թոկից փախած»-ի նման մի բան: Սիրունատես, հմայիչ,
մանկան պես շարաճճի Սկոցոնեն արվեստանոցի հոգին էր.
նա երգում էր՝ և բոլորը լսում էին. ծիծաղում էր՝ և բոլորը
ծիծաղում էին նրա հետ. կարգադրում էր՝ և բոլորը ենթարկ-
վում էին: Նրա քմահաճույքներն ու հնարանքները ոչ մեկին
չէին բարկացնում:

Աղջկա կյանքի պատմությունը սովորական պատմություն
էր. գուցե մենք կվերադառնանք այդ պատմությանը: Կա-
տերինան որք էր, ժողովրդի զավակ, նրան բաժին էին ընկել
շատ դժբախտություններ... Բայց բախտը ժպտաց աղջկան,
և նա ուրախանում էր այնպիսի անկեղծությամբ, այնպիսի
միամտությամբ, որ այդ ուրախությունը հաղորդվում էր
շրջապատի բոլոր մարդկանց, և բոլորն ուրախանում էին
նրա հաջողությամբ:

Եվ այսպես, մենք Պանոթացրինք ձեզ նոր գործող ան-
ձանց հետ, իսկ հիմա կշարունակենք մեր պատմությունը:

— Ա՛, եկա՞ր: Ո՞ւր էիր կորել, — հարցրեց ուսուցիչն Աս-
կանիոյին:

— Ինչպե՞ս թե ուր: Գնացել էի ձեր հանձնարարությունը
կատարելու, ուսուցի՛չ:

— Ամբողջ օ՞րը:

— Ամբողջ օրը:

— Խոստովանիր, որ արկածներ փնտրելով անգործ շրջ-
ում էիր:

— Ի՞նչ արկածներ, ուսուցի՛չ,— մրմնջաց Ասկանիոն:

— Ի՞նչ իմանամ:

— Օ՛, տեր աստված, ինչքան գունատ եք, Ասկանիո,— բացականչեց Սկոցոնեն:— Դուք, երևի, չեք ընթրել, պարոն թափառաշրջիկ:

— Իսկապես, չեմ ընթրել,— պատասխանեց պատանին:— Բոլորովին մոռացել էի:

— Օ՛, այդ դեպքում ես համաձայն եմ ուսուցչի հետ... Պատկերացնո՞ւմ եք, Ասկանիոն չի ընթրել: Ուրեմն նա սիրահարված է... Ռո՛ւպերտա: Ռո՛ւպերտա, ընթրի՛ք տվեք մեսսեր¹ Ասկանիոյին, շո՛ւտ:

Սպասուհին բերեց ընթրիքից մնացած կերակուրները, և երիտասարդը վրա ընկավ ուտելիքին: Ինչպե՞ս սոված շիւներ, երբ այդքան ժամանակ կանգնել էր մաքուր օդում:

Սկոցոնեն ու ուսուցիչը ժպտալով նայում էին պատանուն. Սկոցոնեն՝ քույրական բարյացակամությամբ, ուսուցիչը՝ հայրական գորովանքով: Անկյունում նստած նկարիչը գլուխը բարձրացրեց այն պահին, երբ ներս մտավ Ասկանիոն, բայց հենց որ Սկոցոնեն տեղը դրեց դուռը բացելու գնալիս հետք մերցրած կանթեղը, նորից իր գործին անցավ:

Չէ՞ որ ես ձեզ ասացի, որ ամբողջ օրը վազվզել եմ ձեր գործերով. մրմնջույց Ասկանիոն: Նա նկատեց, թե ինչպիսի խորամանկությամբ և ուշադրությամբ են նայում իրեն սրձանադործն ու Մկոցոնեն, և հավանաբար ցանկանում են փոխել խոսակցության նյութը:

— Ի՞ր գործերով:

— Սրեկ դուք ինքներդ ասացիք, որ այստեղի լուսավորությունը բանի պետք չէ և որ ձեզ ուրիշ արվեստանոց է հարկավոր:

— Անշուշտ:

— Ես էլ արվեստանոց գտա:

— Լսո՞ւմ ես, Պագոլո,— դիմեց ուսուցիչը նկարչին:

— Ի՞նչ ասացի՞ք, ուսուցիչ,— հարցրեց նկարիչը, կրկին գլուխը բարձրացնելով:

¹ մեսսեր — պարոն

— Դե, հերիք է նկարես, այստեղ արիւ Լսիր, թե ինչ է պատմում Ասկանիոն: Նա արվեստանոց է գտել:

— Ներեցեք, ուսուցիչ, բայց ես այստեղից էլ լսում եմ ընկերոջս՝ Ասկանիոյի ամեն մի բառը: Նա ուզում եմ ավարտել ճեպանկարը: Ազնիվ խոսք, մեղք չեմ գործում. եթե կիրակի օրն ակնածանքով կատարել ես քրիստոնյայի պարտքդ, ազատ ժամանակ զ-աղվիր որոշ օգտակար գործերով. աշխատել՝ նշանակում է աղոթել:

— Պագոլո, բարեկամս,— գլուխը տարուբերելով նկատեց ուսուցիչը ավելի շուտ տխուր, քան բարկացած ձայնով,— հավատա, լավ կլինեն, որ դու ավելի ջանասիրաբար և համբերատարութեամբ աշխատեիր շաբաթվա ընթացքում, իսկ կիրակի օրը մեր լավ ընկերների նման զվարճանայիր: Բայց դու անբանութուն ես անում աշխատանքային օրերին, իսկ տոներին մեծ եռանդ ցուցաբերելով, երկերեսանիութեամբ աշխատում ես աչքի ընկնել: Բայց դու քո գլխի տերն ես, վարվիր ինչպես կամենում ես... Պատմիր, Ասկանիո, տղաս,— շարունակեց ուսուցիչը, և նրա ձայնի մեջ անսահման ջերմութուն ու քնքշանք հնչեց,— ի՞նչ ես գտել:

— Սքանչելի արվեստանոց:

— Որտե՞ղ:

— Նելի ամրոցը գիտե՞ք:

— Իհարկե, գիտեմ: Այսինքն, անցել եմ այդ ամրոցի մոտով, բայց ներս չեմ մտել:

— Իսկ դրսից ձեզ դո՞ւր է գալիս:

— Անշուշտ, գրողը տանի: Բայց...

— Բայց ի՞նչ... •

— Բայց մի՞թե ամրոցը տեր չունի:

— Տերը Փարիզի պրևոն է՝ պարոն Ռոբեր դ'Էստուրվիլը: Պրևոն տիրացել է ամրոցին առանց որևէ իրավունքի: Բացի այդ, խղճի հանգստութեան համար մենք կարող ենք նրան թողնել Նելի Փոքր ամրոցը, որտեղ, կարծեմ, ապրում է նրա բարեկամներից մեկը, և բավարարվել Նելի Մեծ ամրոցով՝ բոլոր բակերի, մարզագետինների, գնդակախաղի սրահների հետ միասին:

- Այնտեղ գնդակախաղի սրահ կա:
- Ավելի լավը, քան Ֆլորենցիայի Սանտա-Կրոչեի սրահը:
- Երգվում եմ Բաքոսով, դա իմ սիրած խաղն է: Դու լավ գիտես, Ասկանիո:
- Գիտեմ: Եվ բացի այդ, ուսուցիչ, ամբողջ հիանալի է տեղադրված. այնտեղ շատ օդ կա և ի՞նչ օդ՝ գյուղական: Ոչ թե այս նողկալի նրբանցքի նման, որտեղ մենք պարզապես բորբոսնում ենք, արև չենք տեսնում: Իսկ այնտեղ մի կողմից Պրե-Օ-Կլերն է, մյուս կողմից՝ Սենը և երկու քայլի վրա՝ Լուվրը, որտեղ թագավորն է:
- Եվ ո՞ւմ է պատկանում կախարդական այդ ամբողջը:
- Ո՞ւմ: Գրողը տանի, թագավորին:
- Թագավորի՞ն... Ապա կրկնիր ինչ ասացիր: Նեյի ամբողջ պատկանում է թագավորի՞ն:
- Հենց նրան: Մնում է միայն իմանալ, թե թագավորը կհամաձայնի՞ արդյոք ձեզ շնորհել այդ փառահեղ հողանդակը:
- Ո՞վ է թագավորը: Ի՞նչ է նրա անունը, Ասկանիո:
- Ֆրանցիսկ Առաջին:
- Իսկ դա նշանակում է, որ մի շարաթ հետո Նեյի ամբողջ իմը կլինի:
- Բայց Փարիզի սյրեն, թերևս, կզայրանա:
- Ինձ ինչ:
- Իսկ եթե նա չկամենա հոժար կամքով զիջել:
- Չկամենա՞: Իմ անունն ի՞նչ է, Ասկանիո:
- Բենվենուտո Չելլինի, ուսուցիչ:
- Իսկ դա նշանակում է, որ եթե հարգարժան պրևոն շլանկանա հոժար կամքով հրաժարվել ամբողջից, ապա նրան ուժով կստիպեն... դե՛, իսկ հիմա քնելու ժամանակն է: Վաղը կխոսենք այդ ամենի մասին. օրը բացվի՝ բարին հետը:
- Եվ ուսուցչի նշանով բոլորը գնացին քնելու, բացի Պագոլոյից, որը գեռ որոշ ժամանակ անկյունում նստած աշխա-

տում էր. հետո, երբ աշակերտը մտածեց, որ բոլորը քնել են, ոտքի կանգնեց, աչք ածեց շուրջը, մոտեցավ սեղանին, մի բաժակ գինի լցրեց ու մի շնչով դատարկեց, նույնպես զնաց քնելու:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԳ

XVI դարի ոսկերիչը

Քանի որ մենք նկարագրեցինք Բենվենուտո Չելլինիի արտաքինն ու հիշատակեցինք նրա անունը, ընթերցողը թող մեզ թույլ տա խորացնել մեր պատմության զուտ գրական թեման և մի քիչ շեղվել բուն նյութից, պատմելու համար այդ արտակարգ մարդու մասին, որն արդեն երկու ամսից ավելի ապրում է Ֆրանսիայում, քանզի դժվար չէ կոահել, որ նրան վիճակված է դառնալ գրքի գլխավոր գործող անձերից մեկը:

Սակայն նախ մի քանի խոսք ասենք այն մասին, թե ինչ էր ներկայացնում իրենից XVI դարի ոսկերիչը:

Ֆլորենցիայում կա մի կամուրջ, որը Հին կամուրջ է կոչվում: Մինչև հիմա էլ այդ կամրջի վրա մնացել են այն շինությունները, որտեղ ոսկե ու արծաթե զարդեղենի արվեստանոցներն էին:

Ճիշտ է, դրանք զարդեր էին ոչ ժամանակակից հասկացողությամբ. ոսկե և արծաթե իրերի բանվածքը մեր օրերում արհեստ է, իսկ նախկինում եղել է արվեստ:

Այդ իսկ պատճառով չկար ավելի սքանչելի բան, քան այդ արվեստանոցները կամ ավելի ճիշտ՝ դրանք զարդարող իրերը: Այդտեղ կային եղնջառարի բոլորակ սկահակներ՝ գալարուն վիշապներով գոտևորված. հեքիաթային հրեշները գլուխները բարձրացրած, ոսկե աստղերով ծածկված կապուտակ թևերը տարածած և հրաշունչ երախները բաց՝ անհղորեն նայում էին միմյանց իրենց սուտակե աչքերով: Այդտեղ կային ագաթե սափորներ՝ պատված բաղեղի ճյուղով, որը, բռնակի պես կորանալով, ձգվում էր մինչև բերանը. իսկ զմրուխտե տերևների մեջ պահված էին արծնապատ սքանչելի դրախտահավեր, որոնք ասես կենդանի լինեին և ուր որ

է պիտի երգեին: Կային լաջվարդի աճյունասափորներ, որոնց վրա, կարծես ծարավը հագեցնելու համար, իրենց գլուխներն էին կախել երկու մողես. սրանք քանդակադրոշմված էին այնքան վարպետորեն, որ նրանց ոսկեգույն, երփներանգ մեջքերին նայող մարդկանց թվում էր, թե հազիվ լսելի խըշ-շոցն անգամ կվախեցնի մողեսներին և նրանք կթաքնվեն պատի ճեղքում: Կային գավաթներ ու մասնատուփեր, բրոնզե, ոսկե ու արծաթե մեղալներ. այդ ամենը ծածկված էին թանկարժեք քարերով, ասես այն ժամանակներում սուտակ-ները, ադամանդները, նոնաքարերն ու տպագիտները մարդիկ գտնում էին դեռի ավազի կամ ճանապարհի փոշու մեջ. վերջապես կային հավերժահարսեր, ներեիղներ, աստվածներ, աստվածուհիներ՝ ամբողջ լուսաճաճանչ Ոլիմպիոսը, ինչպես նաև՝ խաչեր, խաչելություններ, Գողգոթային պատկերներ. վշտահար տիրամայրեր և Վեներաներ, Քրիստոսներ ու Ապոլոններ, շանթարձակ Յուպիտերներ ու աշխարհաստեղծ Էհոփաներ:

Եվ այդ ամենը կատարված էր ոչ միայն վարպետորեն, այլև մտածված էր պոետական ոգեշնչմամբ, ոչ միայն սքանչելի էր, ինչպես սքանչելի են կանացի վարդասենյակի նրբագեղ իրերը, այլև հոյակապ էր, ինչպես արվեստի մեծագույն ստեղծագործությունները, որոնք կարող են անմահացնել Ռուսսոյի իշխանութունը կամ ազգի ողին:

Ընդոտ է, այդ դարաշրջանի ոսկերիչներն էին Դոնաթելո Գիրերտին, Գիրլանդայոն և Բենվենուտո Չելլինին:

Ինքը՝ Բենվենուտո Չելլինին, իր կենսագրության մեջ, սրն ամենահետաքրքրական վեպից ավելի գրավիչ է, պատմում է XV և XVI դարերի նկարիչների վտանգավոր, արկածներով լի կյանքի մասին, երբ Տիցիանը նկարում էր զրահ հագած, իսկ Միքելանջելոն քանդակում էր սուսերը կապած, երբ Մագաչչոյին և Դոմենիկինոյին թունավորեցին, իսկ Կոզիմոն փակվում էր արվեստանոցում՝ ջանալով այնպես կոփել պողպատը, որ պորփյուր կտրի:

Մենք ընթերցողին կժանոթացնենք Բենվենուտո Չելլինիի

հետ, պատմելով նրա կյանքից մի միջազեպ միայն. այն մասին, թե ինչն էր նրան Ֆրանսիա բերել:

Բենվենուտոն ապրում էր Հոռմում, ուր կանչել էր նրան կլիմենտ VII-ը, և ոգևորությամբ աշխատում էր հկեղեցական սքանչելի մի գավաթի վրա, որը պատվիրել էր նրան պապը. արվեստագետը ցանկանում էր ամենայն ջանասիրությամբ զարդարել թանկարժեք գավաթը, և այդ իսկ պատճառով աշխատանքը շատ դանդաղ էր առաջ գնում: Բենվենուտոն, բնականաբար, բազմաթիվ նախանձողներ ուներ, որովհետև ձեռնառու պատվերներ էր ստանում դուքսերից, թագավորներից ու պապերից և կատարում էր պատվերներն անգերազանցելի վարպետությամբ: Ի վերջո այնպես պատահեց, որ նրա ընկերակիցներից մեկը՝ Պոմպեո անունով մի ոսկերիչ, ծուլլ ու զրպարտիչ, օգտուկեց Չելլինիի աշխատանքի հապաղումից և սկսեց վարկաբեկել նրան պապի աչքում: Ամեն օր, քուն ու դադար կորցրած, Պոմպեոն շարախոսում էր Բենվենուտոյին, մերթ գաղտնաբար, մերթ բարձրաձայն, հավատացնելով, որ նա երբեք չի ավարտի գավաթը, որովհետև շատ զբաղված է և իբրև թե կատարում է ուրիշ պատվերներ՝ ի վնաս նորին սրբազնության պատվերների:

Հարգարժան Պոմպեոյի դավերն իրենց գործը կատարեցին: Մի անգամ, ուրախությունից փայլելով, նա մտավ Բենվենուտո Չելլինիի արվեստանոցը, որն իսկույն գլխի ընկավ, որ Պոմպեոն վատ լուր է բերել:

— Ահավասիկ, սիրելի ընկերակից, — սասաց Պոմպեոն, — ես եկել եմ այստեղ, որպեսզի ազատեմ ձեզ աշխատանքային պարտավորությունից: Նորին սրբազնությունը լավ է հասկանում, որ դուք չեք կարող ավարտել գավաթը ոչ թե ջանասիրության պակասից, այլ՝ ժամանակի: Այդ իսկ պատճառով նորին սրբազնությունը որոշել է բեռնաթափել ձեզ որոշ կարևոր գործերից և սեփական մղումով ազատում է դրամահատարանի փորագրողի պարտականություններից: Այսուհետև դուք ամիսը ինը դուկատ քիչ կունենաք, սակայն օրվա մեջ մի ժամ կշահեք:

Բենվենուտո Չելլինին սաստիկ բարկացավ և պատրաստ էր հեղնողին դուրս շարտել լուսամուտից, սակայն զսպեց

իրեն, նրա դեմքի ոչ մի մկանը չցնցվեց, և Պոմպեոն մտածեց, որ հարվածը նշանակեալին չհասավ:

— Բացի այդ,— շարունակեց նա,— ինքս էլ չգիտեմ ինչու, շնայած իմ պաշտպանութեանը, նորին սրբազնութիւնը պահանջում է, որ դուք անմիջապէս նրան հանձնեք գավաթը, բայտ որում՝ նույնիսկ անավարտ վիճակում: Ճիշտն ասած, Բանկագին Բենվենուտո, վախենում եմ, որ նորին սրբազնութիւնը մտադիր է գավաթի ավարտման գործը հանձնարարել ուրիշ ոսկերչի: Բարեկամարար նախազգուշացնում եմ ձեզ այդ մասին:

— Երբե՛ք,— բացականչեց ոսկերիչը, օձից խայթվածի պէս վեր թռչելով:— Գավաթի տնօրէնը ես եմ, ինչպէս դրամահատարանի տնօրէնը պապն է: Նորին սրբազնութիւնն իբրավունք ունի միայն պահանջել այն հինգ հարյուր էկյուն, որ ինձ նախապէս վճարել էին: Իսկ ես կավարտեմ իմ ստեղծագործութիւնը, երբ որ կամենամ:

— Զգուշացեք, վարպետ,— նկատեց Պոմպեոն,— մերժումը կարող է ձեզ բանտ հասցնել:

— Դուք ավանակ եք, պարոնս,— պատասխանեց Բենվենուտո Չելլինին:

Պոմպեոն գնաց կատաղութիւնից գլուխը կորցրած:

Հետեւյալ օրը Բենվենուտո Չելլինինի մոտ եկան սրբազնագոյն հար երկու կամերարի¹:

— Մենք եկել ենք քեզ մոտ պապի հրամանով,— ասաց նրանցից մեկը:— Դու պետք է վերադարձնես գավաթը, իսկ հետո մենք քեզ բանտ կտանենք:

— Պարոնայք,— պատասխանեց Բենվենուտոն,— ինձ նման մարդը արժանի է միայն ձեզ պէս պահակների: Թող այդպէս լինի, տարեք ինձ բանտ: Բայց նախազգուշացնում եմ, որ դա ամենևին չի արագացնի պապի գավաթի ավարտումը:

¹ կամերարի— սլաւոական պաշտոնյա, որը կառավարում է գանձատունը

Եվ Բենվենուտոն նրանց հետ գնաց Թագավորական բանտապետի մոտ, որը ճաշի հրավիրեց նրան, հավանաբար պապի հրամանով: Ճաշի ժամանակ Սուրբ Հրեշտակի ամսոցի կաստելյանը¹ համոզում էր Բենվենուտոյին՝ ուրախացնել պապին, նրա մոտ տանել իր ստեղծագործությունը, հավատացնելով, որ եթե Բենվենուտոն ենթարկվի, Կլիմենտ VII-ը թեև զայրացկոտ ու համառ մարդ է, կբավարարվի միայն նրա հնազանդությամբ: Բայց Բենվենուտոն պատասխանեց, որ ինքն արդեն վեց անգամ սրբազնագույն հորը ցույց է տվել անավարտ դավաթը, և պապն ուրիշ ոչինչ չի կարող պահանջել իրենից. բացի այդ, ինքը գիտի, որ նորին սրբազնությունը, օգտվելով իր դիրքից, կարող է խել գավաթն ու տալ որևէ ապուշի, որը կփշացնի այն: Բենվենուտոն կրկնեց, որ պատրաստ է վերադարձնել կանխավճարը՝ հինգ հարյուր էկյու: Դրանից հետո, ի պատասխան կաստելյանի բոլոր հորդորների Բենվենուտոն միայն գովում էր նրա խոհարարին ու հիանում գինիներով:

Ճաշից հետո եկան Չելլինիի հայրենակիցներն ու մտերիմ ընկերները, նրա աշակերտները՝ Ասկանիոյի գլխավորությամբ և սկսեցին աղերսել սրձանագործին, որ չկործանի իրեն, շնորհմանա Կլիմենտ VII-ի կամքին: Սակայն պարզվեց, որ Բենվենուտոն վաղուց արդեն ցանկանում էր հաստատել այն մեծ ճշմարտությունը, որ սակերիչը կարող է կամակորուքությամբ գերազանցել պապին: Եվ քանի որ այդպիսի հիանալի ու թերևս անկրկնելի առիթ էր ներկայացել, որի մասին կարելի էր երազել միայն, ինքն այդ առիթը բաց չի թողնի:

Բենվենուտոյի հայրենակիցները հեռացան՝ ուսերը թոթվելով: Ընկերները որոշեցին, որ նա խելագարվել է: Ասկանիոն լաց եղավ:

Բարեբախտաբար Պոմպեոն չէր մոռացել Չելլինիի մասին և, քանի դեռ տեղի էր ունենում այդ ամենը, նա ասում էր պապին.

— Ձերդ սրբազնություն, թույլ տվեք ձեր ծառային գոր-

¹ կաստելյան — ամբոցի կամ պալատի վերակացու

ծելու: Ես մարդ կուղարկեմ այդ կամակորին ասելու, որ եթե շատ է ցանկանում, թող վերադարձնի հինգ հարյուր էկյուն: Չէ՞ որ Բենվենուտոն շոալլորին վատնող մարդ է և այդքան փող չի ունենա, դրա համար ստիպված կլինի վերադարձնել գավաթը:

Կլիմենտ VII-ը որոշեց, որ Պոմպեոն հիանալի ելք է գտել և թույլ տվեց ոսկերչին վարվել ինչպես կամենում է: Այդ պատճառով նույն երեկոյան, երբ Բենվենուտոյին տանում էին Սուրբ Հրեշտակի ամրոցի բանտախուցը, հայտնվեց կամերարին և ասաց, որ սուրբ հայրը կամենում է անմիջապես ստանալ հինգ հարյուր էկյուն, կամ՝ գավաթը:

Բենվենուտոն պատասխանեց, որ կտա հինգ հարյուր էկյուն, հենց որ վերադառնա արվեստանոց:

Շվեյցարական գվարդիայի շորս զինվոր և կամերարին տուն ուղեկցեցին Բենվենուտոյին: Իր ննջասենյակը մտնելով, Բենվենուտոն գրպանից հանեց բանալին, բացեց սլափ երկաթյա պահարանը, մեծ քսակից հանեց հինգ հարյուր էկյուն և տալով կամերարիին՝ դուրս արեց նրան շվեյցարացի թիկնապահների հետ միասին:

Շվեյցարացիները նույնիսկ շորս էկյու ստացան ծառայության համար՝ ի պատիվ Բենվենուտո Չելլինիի, և գնալիս համբուրեցին նրա ձեռքը՝ ի պատիվ իրենց:

Կամերարին անմիջապես վերադարձավ սրբազան հոր մոտ ու նրան հանձնեց հինգ հարյուր էկյուն: Սրբազան հայրը բարկացավ: Բորբոքվելով՝ նա սկսեց նախատել Պոմպեոյին:

— Ինքզ զնա մեծ արձանագործի արվեստանոցը, անասո՛ւն,— հրամայեց պապը,— և ամենայն քաղաքավարությամբ, որին միայն ընդունակ է քո հիմար գլուխը, հայտնիդ նրան, որ եթե համաձայն է պատրաստել գավաթը՝ ցանկացած արտոնությունները կտամ նրան:

— Բայց, ձերդ սրբազնություն,— պատասխանեց Պոմպեոն,— ավելի լավ չէ՞ այդ բոլորն անել վաղն առավոտյան:

— Այս երեկո անգամ ուշ կլինի, հիմա՛ր. ես չեմ ցանկանում, որ Բենվենուտոն այս գիշեր-օրի ինձնից նեղացած:

Անմիջապես կատարիր կամքս և վաղն, արթնանալուս պես, իմանամ նրա համաձայնութեան մասին:

Պոմպեոն դուրս եկավ Վատիկանից գլուխը կորցրած ու զնաց Բենվենուտոյի արվեստանոցը: Արվեստանոցը փակ էր: Նա ներս նայեց բանալու անցքից, դռան ճեղքերից, աչքի անցկացրեց բոլոր լուսամուտները, հուսալով, որ դրանցից մեկը լուսավորված կլինի, բայց ամբողջ շենքը թաղված էր մթութեան մեջ: Այդ ժամանակ նա կամացուկ բախեց դուռը. երկրորդ անգամ սիրտ արեց բախել ավելի ուժգնորեն, իսկ երրորդ անգամ՝ է՛լ ավելի ուժգնորեն:

Այդ միջոցին երկրորդ հարկում բացվեց մի լուսամուտ, և երևաց Բենվենուտոն՝ շապկանց, արկեբուզը ձեռքին:

— Ո՞վ է, — հարցրեց Բենվենուտոն:

— Ես եմ, — պատասխանեց սուրհանդակը:

— Ո՞վ ես, — կրկին հարցրեց արձանագործը, որն արդեն ճանաչել էր իր ախոյանին:

— Պոմպեոն:

— Ստու՛մ ես, — գոչեց Բենվենուտոն: — Ես շատ լավ եմ ճանաչում Պոմպեոյին. նրա նման վախկոտը սիրտ չէր անի այս ուշ ժամին անցնել Հռոմի փողոցներով:

— Հավատացե՛ք, Չելլինի, բարեկա՛մս...

— Լռի՛ր: Դու պարզապես ավազակ ես և քեզ անբան Պոմպեոյի տեղ ես դնում, որպեսզի բացեմ դուռը. գու պատրաստվում ես թալանել ինձ:

— Վարպետ Բենվենուտո, արևս խավարի, եթե...

— Եվս մի խոսք, — գոչեց Բենվենուտոն, խոսակցի վրա ուղղելով արկեբուզը, — և ցանկութեամբ կկատարվի:

Պոմպեոն ուժ տվեց ոտքերին, օգնություն կանչելով սլացավ փողոցով ու անհետացավ:

Երբ նա զնաց, Բենվենուտոն փակեց լուսամուտը, արկեբուզը կախեց մեխից և կրկին պառկեց քնելու, քթի տակ ծիծաղելով, որ այդպես վախեցրեց Պոմպեոյին:

Հետևյալ օրն արվեստանոց իջնելով, որը մի ժամ առաջ բացել էին աշակերտները, Բենվենուտո Չելլինին տեսավ, որ դիմացի մայթին կանգնած է Պոմպեոն, որն առավոտը վաղ

եկել էր այստեղ ու սպասում էր նրա հայտնվելուն:

Զելլինին նկատելով, Պոմպեոն բարեկց այնքան սրտաբուխ ու բարեկամաբար, ինչպես, հավանորեն, դեռ ոչ ոքի չէր բարեկ:

— Օ՛հ,— բացականչեց Զելլինին,— այդ դո՞ւք եք, թանկագին Պոմպեո: Երգվում եմ պատվովս, այս գիշեր քիչ մնաց սպանեի մի սրիկայի, որը համարձակվեց կոչվել ձեր անունով:

— Իսկապե՞ս,— բռնազբոսիկ ժպիտով բացականչեց Պոմպեոն, քայլ առ քայլ մոտենալով արվեստանոցին:— Իսկ այդ ինչպե՞ս պատահեց:

Բենվենուտոն նորին սրբության պատվիրակին պատմեց տեղի ունեցածը: Բայց Պոմպեոն այդպես էլ չխոստովանեց, որ գիշերը Բենվենուտոն խոսել է հենց իր հետ, որովհետև այն ժամանակ արձանագործը նրան վախկոտ էր անվանել:

Այնուհետև, պատմությունն ավարտելով, Զելլինին հարցրեց Պոմպեոյին թե ի՞նչ երջանիկ առիթի է պարտական այս վաղ ժամին իր արվեստանոցում թանկագին հյուրին տեսնելու պատվի համար:

Պոմպեոն սկսեց պատմել, անշուշտ որոշ բացթողումներով, Կլիմենտ VII-ի հանձնարարության մասին: Մինչ նա խոսում էր, Բենվենուտո Զելլինիի դեմքը պայծառացավ: Այսպես, ուրեմն, Կլիմենտ VII-ը հանձնվեց: Ոսկերիչը կամակորությամբ գերազանցեց պապին:

Եվ երբ Պոմպեոն ավարտեց իր խոսքը, Բենվենուտոն ասաց.

— Հայտնեք նորին սրբազնությանը, որ ես երջանիկ կլինեմ հնազանդվել նրան և ջանք չեմ խնայի կրկին արժանանալու նրա ողորմածությանը, որը կորցրի ոչ իմ մեղքով, այլ նախաձեռնողների շարախոսության պատճառով: Ի դեպ, կարծեմ պապը շատ սպասավորներ ունի, այնպես չէ՞: Այսուհետև, պարոն Պոմպեո, թող ինձ մոտ ուրիշ սպասավոր ուղարկեն. ձեզ համար էլ այդպես ավելի լավ կլինի: Հանուն սեփական բարօրության՝ այլևս չխառնվեք իմ գործերին, պարոն Պոմպեո: Խղճացեք ձեզ. երբեք աչքիս չերևաք: Եվ հոգուս փրկության համար աղոթեք աստծուն, որ ես այն-

պես չվարվեմ ձեզ հետ, ինչպես Հուլիոս Կեսարը՝ Պոմպեոսի։
Պոմպեոն շտապեց հեռանալ և պապի մոտ դնալով, հաղորդեց Բենվենուտոյի պատասխանը, ի դեպ ոչ մի խոսք չասելով խոսակցութեան վերաջաբանի մասին։

Որոշ ժամանակ անց, ցանկանալով վերջնականապես հաշտվել Բենվենուտոյի հետ, Կլիմենտ VII-ը պատվիրեց նրան շքադրամ հատել իր դրոշմապատկերով։ Բենվենուտոն պատրաստեց այն բրոնզից, արծաթից, ոսկուց ու տարավ պապին։ Կլիմենտ VII-ը սքանչացավ և հիացմունքով հայտարարեց, որ անտիկ վարպետներն անգամ այդպիսի գեղեցիկ շքադրամներ չեն հատել։

— Տեսնո՞ւմ եք ինչ լավ է, ձերդ սրբություն,— ասաց Բենվենուտոն։— Եթե այն ժամանակ ես հաստատակամություն չցուցաբերեի, մենք ընգմիշտ կգժտվեինք. ես ձեզ չէի ների վիրավորանքը և գուք կկորցնեիք մի հավատարիմ ծառայ։ Տեսնո՞ւմ եք, սրբազան հայր,— խրատական ձայնով շարունակեց Բենվենուտոն,— երբեմն վատ չէ մտաբերել ողջամիտ, հասարակ մարդկանց ասացվածքը. «Յոթ անգամ չափիր, մի անգամ կտրիր»։ Այո, ձերդ սրբություն։ Բացի այդ, դուք լավ կանեք, եթե շարախոսներին ու զրպարտիչներին արգելեք մոլորեցնել ձեզ։ Այդ ամենը ես ասում եմ ձեր իսկ բարօրութեան համար։ Այլևս չխոսեմք այդ մասին, սրբազան հայր։

Այդպիսով Բենվենուտոն ներեց Կլիմենտ VII-ին։ Անշուշտ, նա այդ չէր անի, եթե չսիրեր պապին. բայց Բենվենուտոն շատ էր կապված պապի՝ իր հայրենակցի հետ։

Այդ իսկ պատճառով նա խորապես տխրեց, երբ վերը սլատմած իրադարձութեանից մի քանի ամիս անց պապը հանկարծամահ եղավ։ Բենվենուտոն՝ երկաթյա կամքի տեր այդ մարդը, լաց եղավ, երբ իմացավ նրա մահվան լուրը և երեխայի պես արցունք էր թափում ամբողջ մի շաբաթ։

Իսկ առհասարակ պապի մահը ճակատագրական դեր խաղաց խեղճ Բենվենուտո Չելլինիի կյանքում, որովհետև հուղարկավորութեան օրը նա հանդիպեց Պոմպեոյին, որին չէր տեսել այն առավոտից, երբ խորհուրդ տվեց այլևս չերևալ իր աչքին։

Պետք է ասել, որ Բենվենուտո Չելլինիի սպառնալիքներից հետո ողորմելի, վախկոտ Պոմպեոն դուրս էր գալիս տնից միայն տասներկու լսով զինված վարձկանների ուղեկցութեամբ, որոնց վճարում էր նույնքան, որքան պապն իր թիկնապահ-շվեյցարացիներին և քաղաքում կատարած ամեն մի դրոսանքը նրան նստում էր երկու, երբեմն երեք էկյու: Բայց նույնիսկ տասներկու սրիրների՝ ներկայութեամբ նա դողում էր վախից, մտածելով, որ կարող է հանդիպել Բենվենուտո Չելլինիին: Ընդ որում, նա գիտեր, որ եթե ընդհարում տեղի ունենա և Բենվենուտոյին որևէ բան պատահի, պապը, որը հոգու խորքում սիրում էր վարպետին, կպատժի իրեն՝ Պոմպեոյին: Բայց ահա, ինչպես ասացինք, Կլիմենտ VII-ը վախճանվեց, և նրա մահը սիրտ տվեց Պոմպեոյին:

Բենվենուտոն զնաց Սուրբ Պետրոսի տաճարը, հաճախեց յալ պապին վերջին հրաժեշտը տալու: Տաճարից նա վերադառնում էր Ասկանիոյի և Պագոլոյի հետ՝ Բանչի փողոցով, և հանկարծ դեմ-դիմաց եկավ Պոմպեոյին ու նրա տասներկու վարձկաններին: Թշնամուն տեսնելով, Պոմպեոն սոսկալի գունատվեց, բայց շուրջն աչք ածելով, համոզվեց, որ ինքը հուսալի պահակախումբ ունի, իսկ Բենվենուտոյի հետ ընդամենը երկու պատանյակ են: Այդ ժամանակ նա սիրտ առավ և կանգ առնելով, հեզնորեն գլուխ տվեց Բենվենուտոյին, իսկ աչք ձեռքն, ասես առանց դիտավորութեան, դրեց դաշույնի երախակալին:

Ուսուցչին սպառնացող ջոկատը տեսնելով, Ասկանիոն մերկացրեց դաշույնը, իսկ Պագոլոն ձևացրեց, թե ուրիշ կողմ է նայում: Բենվենուտոն շէր ցանկանում սիրած աշակերտին վտանգի ենթարկել այդպիսի անհավասար մարտում: Նա բռնեց Ասկանիոյի ձեռքն ու ստիպեց դաշույնը պատյանի մեջ դնել, այնուհետև արձանագործը շարունակեց իր ճանապարհը, ասես ոչինչ չէր տեսել, կամ թե այն, ինչ տեսել էր, բնավ չէր դիպչում նրա ինքնասիրութեանը: Ուսուցչի վարքագիծն ապշեցրեց Ասկանիոյին, սակայն ուսուցիչը նահանջեց, և Ասկանիոն նահանջեց նրա հետ:

Չ սրիք — քաղաքային պահակորդ Իտալիայում

Պոմպեոնն ցնծում էր. խոր գլուխ տալով Բենվենուտոյին, նա շարունակեց իր ճանապարհը, շրջապատված սքիրներով, որոնք, նրան ընդօրինակելով, շատ հանդուգն էին պահում իրենց:

Բենվենուտոն, զայրույթը զսպելով, արնոտելու աստիճան կրծոտեց շրթունքները, թեև ուրախ էր ձևանում: Անվանի վարպետի վարքագիծն անհասկանալի էր բոլոր նրանց, ովքեր գիտեին նրա դյուրաբորբոք բնավորութունը:

Բայց ահա, հարյուր քայլ անցնելուց հետո, հասնելով իր արվեստակիցներից մեկի արվեստանոցը, Բենվենուտոն ներս մտավ այն պատրվակով, թե ցանկանում է տեսնել հնադարյան սկահակը, որ վերջերս գտել են էտրուսական հին գերեզմանատան պեղումների ժամանակ, Կորնետոյում, ընդ որում իբր աշակերտներին պատվիրեց տուն գնալ, խոստանալով քիչ հետո վերադառնալ արվեստանոց:

Նա պարզապես ցանկանում էր հեռացնել Ասկանիոյին: Եվ իրոք, հենց որ պատանին ու նրա ուղեկիցը, որի համար Բենվենուտոն շատ ավելի քիչ էր անհանգստանում, իմանալով, որ Պագուոն քաջությամբ չի փայլում, անհետացան փողոցի անկյունում, նա տեղը դրեց սկահակը ու դուրս վազեց արվեստանոցից:

Մի վայրկյանում Բենվենուտոն հասավ այն փողոցը, որտեղ հանդիպել էր Պոմպեոյին, բայց վերջինս արդեն այնտեղ չէր: Բարեբախտաբար, կամ ավելի շուտ՝ գժբախտաբար, տասներկու պահնորդով շրջապատված մարդուն նկատելը դժվար չէ: Առաջին իսկ պատահած անցորդին Բենվենուտոն հարցրեց, թե որ ճանապարհով է գնացել Պոմպեոն, ու նրան անմիջապես ցույց տվին: Եվ, հետքը գտած խուզարկուի նման, նա նետվեց նրանց հետևից:

Պոմպեոն կանգ էր առել դեղատան գոան մոտ, Չիավիկա փողոցի անկյունում և պատկառելի դեղագործին պատմում էր իր համարձակ արարքի մասին՝ թե ինչպես քաջաբար մարտի հրավիրեց Բենվենուտո Չելլինիին: Բայց հանկարծ նա նկատեց փողոցի անկյունում հայտնված Բենվենուտոյին, որի աչքերը վառվում էին, իսկ ճակատը ծածկված էր քրտինքով:

Բենվենուտոն, իր հակառակորդին սեռնելով, ուրախության ճիշ արձակեց, իսկ Պոմպեոն՝ խոսքն անավարտ թողեց։ Պարզ էր, որ հիմա ինչ-որ սոսկալի բան է տեղի ունենալու վարձկանները շարվեցին Պոմպեոյի շուրջն ու մերկացրին սուսերը։

Մեն-մենակ հարձակվել տասներեք մարդու վրա՝ խելագարություն էր. բայց, ինչպես արդեն ասացինք, Բենվենուտոն աչքի էր ընկնում իրոք առյուծի քաջությամբ և շէր հաշվում թշնամիներին։ Նրան էին ուղղված տասներեք մերկացած սուսեր, իսկ նա պատշաճից համեց ոչ մեծ, սուրասյր մի դաշույն, որը միշտ խրամ էր դուսկի տակ, ճեղքեց-անցավ ջոկատի կենտրոնը, մի ձևորով թշնամիներից խլեց երկու-երեք սուսեր, մյուսով՝ ցած գլուխը վարձկաններից ոմանց և այնքան ճարակորեն, որ մի վայրկյանում հասավ Պոմպեոյին ու բռնեց նրա օձիքից. վարձկաններն իսկույն սեղմ օղակով շրջապատեցին Բենվենուտոյին։ Այդ ժամանակ ամեն ինչ իրար խառնվեց. լսվում էին գոչումներ, օղում փայլատակում էին սուսերներ. դոսեմարտի բռնված տձև, կենդանի մի կծիկ էր գլորվում գետնի վրա։ Իսկ մի վայրկյան անց ինչ-որ մեկը հաղթական կանչով ոտքի թռավ և, հուժկու ճիգ գործադրելով, ինչպես մինչ այդ ճեղքել-անցել էր ջոկատի կենտրոնը, դուրս պրծավ այնտեղից, արնաթաթախ, բայց հաղթականորեն ճոճելով արյունոտ դաշուսը։ Այդ մարդը Բենվենուտո Չելլինին էր։

Իսկ մի ուրիշը հոգեվարքի ջղակծկումների մեջ թավալվում էր մայթին։ Նրան դաշույնի երկու հարված էին հասցրել, մեկը ականջի հետևը, մյուսը՝ անրակին, հենց պարանոցի մոտ։ Մի քանի վայրկյան հետո նա շունչը փչեց։ Այդ մարդը Պոմպեոն էր։

Ով էլ լիներ Բենվենուտոյի փոխարեն, մարդ սպանելուց հետո կփախչեր, գլուխը կազատեր, բայց Բենվենուտոն դաշույնը փոխադրեց ձախ ձեռքը, աջով մերկացրեց սուսերը և

3 Ասկանին

անհողդողդ տեսքով սկսեց սպասել տասներկու վարձկանների հարձակմանը:

Բայց սբիրները միտք էլ չունեին Բենվենուտո Չելլինիի վրա հարձակվելու: Չէ՞ որ նրանց վարձողը մեռել էր, հետևավաբար չէր վճարելու: Եվ Պոմպեոյի դիակը թողնելով, փախուստի դիմեցին վախեցած նապաստակների պես:

Այդ պահին հայտնվեց Ասկանիոն և մոտ վազելով ուսուցչին, գրկեց նրան: Պատանին չէր հավատացել էտրուսական սկահակի պատրվակին և վերադարձել էր՝ սակայն, շնայած շտապելուն, այնուամենայնիվ մի քանի վայրկյան ուշացումով:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԳ

Դեղալու¹

Բենվենուտոն, մի փոքր անհանգստացած, տուն գնաց Ասկանիոյի հետ: Այդ անհանգստության պատճառը ստացած վերքերը չէին, որոնք թեթև էին և որոնց վրա նա ուշադրություն չէր դարձնում, այլ տեղի ունեցածը: Կես տարի առաջ նա հանդերձյալ աշխարհն ուղարկեց Գասկոնտիին, իր եղբորը սպանողին, բայց պատժից ազատվեց Կլեմենտ VII պապի հովանավորության շնորհիվ. բացի այդ, մարդասպանի մահը կարծես փոխհատուցում էր: Իսկ այժմ, երբ Բենվենուտոյի հովանավորը չկար, դրությունն ավելի բարդ էր:

Խղճի խայթի մասին, իհարկե, խոսք լինել չէր կարող: Եվ թող ընթերցողը վատ բան չմտածի մեր հարդարժան վարպետի մասին, որը սպանելով մեկ, ավելի ճիշտ՝ երկու մարդ, իսկ եթե պրպտելու լինենք նրա կյանքը, գուցե և

¹ Դեղալուս— ըստ հունական դիցաբանության՝ ճարտար շինարար, որը բանտարկվեց իր իսկ ստեղծած լարիդինթոսում և փախավ այնտեղից արտասովոր եղանակով. նա թռչունի փետուրներից թևեր պատրաստեց և, մոմով ամրացնելով, իր որդու՝ Իկարի հետ օդ բարձրացավ:

երեք մարդ, շատ էր վախենում պահակներից, բայց ամենևին չէր սոսկում աստժո զայրույթից, քանզի մեր թվականության 1540-ին այդ մարդն իր ժամանակի համար սովորական մարդ էր, «բուրբի նման», ինչպես ասում են գերմանացիները: Եվ դա հասկանալի է: Այն ժամանակներում մարդիկ չէին վախենում մահից և իրենք էլ սպանում էին սառնասրտորեն. մենք հիմա էլ քաջ ենք, բայց մեր նախնիները հանդգնության աստիճան խիզախ էին. մենք հասուն մարդիկ ենք, իսկ նրանք երիտասարդ էին: Այն ժամանակներում մարդիկ այնքան առատաձեռն էին, որ ամենայն սնհոգությանը կորցնում էին կյանքը, վաճառում, նվիրում և խլում:

Կար մի գրող, որին երկար ժամանակ ամբաստանում էին և որի անունը նենգության, դաժանության համանիշ էր, մի խոսքով՝ այն ամենի, ինչ նշանակում է ստորություն և միայն XIX դարում, մարդկային պատմության մեջ բուրբ դարերից ամենաանկանխակալ դարում, այդ գրողին՝ մեծ հայրենասերին ու խիզախ մարդուն արդարացրին: Բայց չէ՞ որ նիկոլո Մաքիավելլու միակ մեղքն այն էր, որ նա իր ժամանակի զավակն էր, երբ ամեն ինչ կախված էր ուժից ու հաջողությունից, երբ մարդիկ հարգում էին գործը և ոչ խոսքը և, երբ ամեն միջոցի դիմելով, առանց խորհրդածելու ուղղակի դեպի նպատակակետն էին գնում՝ տիրակալ Բորջան, մտածող Մաքիավելլին և ոսկերիչ Բենվենուտո Չելլինին:

Մի անգամ Չեզենե քաղաքի հրապարակում գտան քառատված մի դի՝ Ռամիրո դ'Օրկոյի դիակը: Եվ քանի որ Ռամիրո դ'Օրկոն ծանրակշիռ անձնավորություն էր և աչքի ընկնող դիրք էր գրավում Իտալիայում, Ֆլորենտական հանրապետությունը ցանկացավ իմանալ, թե որն է նրա մահվան պատճառը: Հանրապետության սինյորիայի՝ ութ անդամ գրեցին դեսպան Մաքիավելլուն, խնդրելով բավարարել իրենց հետաքրքրասիրությունը:

¹ սինյորինա — քաղաքական ինքնավարության մարմին իտալական քաղաք-հանրապետություններում

Եվ Մաքիավելլին սահմանափակվեց հետևյալ պատասխանով.

«Հարգարժան սինյորներ.

Ոչինչ չեմ կարող հայտնել ձեզ Ռամիրո դ'Սեկոյի մանվան մասին, բացի նրանից, որ Կեսար Բորջան տիրակալ է, որը մանվան է դատապարտում ու ներում է շնորհում մառդկանց ըստ արժանվույն:

Մաքիավելլի»:

Բենվենուտոն Ֆլորենտական հանրապետության քաղաքական ակնավոր գործչի տեսության պրակտիկ մարմնացումն էր: Հանճարեղ նկարիչ Բենվենուտոն և տիրակալ Կեսար Բորջան ենթագրում էին, որ ուժեղի իրավունքով իրենք օրենքից բարձր են կանգնած: Նրանք արդարության և անարդարության մեջ մի տարբերություն էին տեսնում միայն՝ այդ բանը հնարավոր է իրենց համար, թե ոչ. պարտքի և իրավունքի հասկացողությունները գոյություն չունեին:

Մարդը խանդարում էր՝ ոչնչացնում էին:

Մեր օրերում քաղաքակրթությունը պատիվ է անում մարդուն՝ գնելով նրան:

Բայց այն ժամանակներում հրիտասարդ ազգերն այնքան լիարյուն էին, որ առողջության համար էին արյուն հեղում: Ազգը պատերազմում էր ազգի դեմ, մարդը կովում էր մարդու դեմ ներքին մղումով, երբեմն հանուն հայրենիքի, երբեմն հանուն դամաչի, իսկ ամենից հաճախ՝ պարզապես կովելու համար: Բենվենուտոն պատերազմ հայտարարեց Պոմպեոյին, ինչպես Ֆրանցիսկ I-ը՝ Կարլոս V-ին: Ֆրանսիան և Իսպանիան մենամարտ էին մղում մերթ Մարինյանոյում, մերթ՝ Պավիայում, առանց իմաստակելու, բացատրություններ տալու, առանց փքուն հայտարարությունների, առանց խղճուկ բառերի:

Եվ հանճարեղությունն արտահայտվում էր անմիջականորեն, որպես բնածին հատկություն, որպես անվիճելի գերազանցություն, որպես աստվածային իրավունք. XVI դարում ստեղծագործությունը բնական երևույթ էր:

Սակայն չպետք է զարմանալ այդ դարաշրջանի մարդկանց վրա, որոնց ոչ մի բան չէր զարմացնում: Նրանց կատարած սպանությունները, նրանց քմահաճությունները, նրանց արարքները բացատրելու համար օգտվենք ֆրանսիական արտահայտությունից, որը, մանավանդ մեր օրերում, ամեն ինչ բացատրում և արդարացնում է. «Այդպես էր ընդունված»:

Սվ այդպես, Բենվենուտոն պարզապես արեց այն, ինչ ընդունված էր. Պոմպեոն խանգարում էր Բենվենուտո Չելլինիին և Բենվենուտո Չելլինին վերացրեց Պոմպեոյին:

Սակայն ոստիկանությունը երբեմն հետաքրքրվում էր այդպիսի սպանություններով: Ոստիկանությունն զգուշանում էր պաշտպանել մարդուն, քանի դեռ մարդը ողջ էր, սակայն երբեմն բուռն ցանկություն էր ունենում պատժել նրան սուրանդին:

Չենց այդպիսի եռանդ ցուցաբերեց ոստիկանությունը, հետապնդելով Բենվենուտո Չելլինիին: Տուն վերադառնալով, Չելլինին հազիվ հասցրեց այրել որոշ թղթեր և մի քանի էկյու դնել գրպանը, երբ հայտնվեցին պապի սբիրները, ձեռքակալեցին նրան ու տարան Սուրբ Հրեշտակի ամրոցը, և դա բավականին մխիթարեց Բենվենուտոյին, որովհետև նա մտաբերեց, որ Սուրբ Հրեշտակի ամրոցի բոլոր կալանավորներն ազնվականներ են:

Արձանագործին մխիթարեց ու սրտապնդեց նաև այն միտքը, որը ծագեց նրա գլխում, երբ նա ոտք դրեց Սուրբ Հրեշտակի ամրոցը. ինչ ձևով էլ լինի, իր նման հնարամիտ մարդը շուտով դուրս կգա այստեղից:

Ուստի, ամրոց մտնելով ու տեսնելով կաստելյանին, որը բաղձել էր կանաչ սփռոցով ծածկված սեղանի մոտ և կարգի էր բերում թղթերի կույտը, Բենվենուտոն ասաց:

— Պարոն կաստելյան, եռապատկե՛ք սողնակների, վանդակասլատերի և պահակների քանակը, փակե՛ք ինձ աշտարակի վերնատանը, կամ խորը ներքնահարկում, օր ու գիշեր արթուն հսկե՛ք ինձ, միևնույն է, կփախչեմ, զգուշացնում եմ ձեզ:

Կաստելյանն աչքերը բարձրացրեց կալանավորի վրա, որը խոսում էր այդպիսի դարմանալի ինքնավստահությամբ և ճանաչեց անվախ Բենվենուտո Չելլինիին, որին երեք ամիս առաջ պատիվ էր ունեցել ճաշի հրավիրելու:

Քեկ նա ճանաչում էր Բենվենուտոյին, իսկ գուցե հենց այդ ծանոթության պատճառով, պատվարժան կաստելյանը, նրա բառերը լսելով, խորին շփոթության մեջ ընկավ. այդ ֆլորենտացու՝ մեսսեր Զորջոյի, Ուգոլինո տոհմի կավալերի, սլավարժան այդ մարդու ուղեղը մի րիչ մթադնած էր: Սակայն կաստելյանն անմիջապես հաղթահարեց զարմանքը և Բենվենուտոյին տարավ ամբոցի վերնակի բանտախուցը: Տափակ տանիքը բանտախցի առաստաղն էր. տանիքի վրա անցուղարձ էր անում մի սլահակ, իսկ մյուսը կանգնած էր ցածում, հենց պատի մոտ:

Կաստելյանը կալանավորի ուշադրությունը հրավիրեց այդ բոլոր մանրամասնությունների վրա և որոշելով, որ վերջինս ըստ արժանավույն գնահատեց դրանք, ասաց.

— Սիրելի Բենվենուտո, կարելի է բացել փականները, կոտրել դռները, ամենամեկուսացված ներքնատանը ստորերկրյա անցք փորել, ծակել պատը, կաշառել սլահակներին խաբել բանտապահներին, բայց, միևնույն է, այսպիսի բարձրությունից չես իջնի հովիտ, եթե, իհարկե, թևեր չունենաս:

— Բայց մեկ է, ես կիջնեմ, — սլատասխանեց Բենվենուտոն:

Կաստելյանը շեշտակի նայեց նրան և մտածեց, որ կալանավորը խելագարվել է:

— Ուրեմն, դուք կթռչե՞ք:

— Ինչ կա որ, կթռչեմ: Ես միշտ էլ հավատացած եմ եղել, որ մարդը կարող է թռչել: Միայն թե երբեք ժամանակ չեմ ունեցել փորձելու: Իսկ այստեղ, սատանան տանի, ինչքան ասես ժամանակ կունենամ և ես ուզում եմ անձամբ համոզվել: Դեղալոսի հնարանքն իրական դեպք է, ոչ թե մտացածին բան:

— Զգուշացե՛ք արևից, սիրելի Բենվենուտո, — հեգնորեն պատասխանեց կաստելյանը: — Զգուշացե՛ք արևից:

— Իսկ ես գիշերը կթռչեմ,— ասաց Բենվենուտոն։
Կաստելլանը, որն այդպիսի պատասխանի չէր սպասում,
լռեց և, զայրույթից գլուխը կորցրած, դուրս գնաց։

Իրոք, Բենվենուտոն անպաշտան պետք է փախչեր։ Այլ
պարագաներում, փառք ասածո, հարկ չէր լինի անհանգրս-
տանալ կատարած սպանության պատճառով. մեղքը քավելու
համար բավական կլինեիր վերափոխման օրը երկնագույն
բաճկոնակ և տափտայե թիկնոց հագած մասնակցել նրթին։

Բայց նոր պապը՝ Պավել III-ը, աչքի էր ընկնում անա-
սելի հիշաշարությամբ։ Երբ նա դեռ կարգինալ Ֆարնեզե էր,
Բենվենուտոն գժտվեց նրա հետ արծաթե սկահակի համար։
Բանն այն է, որ նկարիչը հրաժարվեց անվճար նրան տալ
սկահակը, և նորին էմինենցիան¹ քիչ մնաց բռնությամբ խլեր
այն. ահա թե ինչու Բենվենուտոն ստիպված եղավ մի քիչ
կոպտարար վարվել նորին էմինենցիայի ծառաների հետ։
Բացի այդ, սուրբ հայրը վիրավորված էր, որ Ֆրանցիսկ I
թագավորը մեծարգո Մոնլյուկի՝ Վատիկանում իր դեսպանի
միջոցով գիմել էր նրան՝ Բենվենուտոյին, Ֆրանսիա թող-
նելու խնդրանքով։

Իմանալով, որ Բենվենուտոն ձերբակալված է, Մեծարգո
Մոնլյուկը ցանկացավ ծառայություն մատուցել խեղճ գե-
րուն և սկսեց ավելի համառորեն խնդրել։

Սակայն նա ծանոթ չէր նոր պապի բնավորությանը, որն
իր նախորդից՝ Կլիմենտ VII-ից ավելի համառ էր։ Եվ այդ-
պես, Պավել III-ը երդվեց, որ Բենվենուտոն թանկ կվճարի
իր արարքի համար։ Գուցե Բենվենուտոյին մահապատիժ չէր
էլ սպանում, քանի որ այն ժամանակներում այդպիսի նշա-
նավոր նկարչին կախաղան բարձրացնելու համար պապը
պետք է ամեն ինչ լավ կշռադատեր։ Բայց կալանավորին
ուրիշ վտանգ էր սպանում՝ նրա գոյության մասին կարող
էին մոռանալ։

Ուստի Բենվենուտոն չպետք է մոռանար իր մասին, և նա
որոշեց փախչել մինչև գատաքննությունը, որն, ի միջի այ-

¹ էմինենցիա — կաթոլիկական եպիսկոպոսների և կարդինալների
տիպը

լոց, կարող էր այդպես էլ տեղի շունենալ, քանի որ պապը, Ֆրանցիսկ I թագավորի միջամտութիւնից բոլորքոված, լսել անգամ չէր ուզում Բենվենուտո Չելլինիի մասին:

Կալանավորն այդ ամենն իմացել էր Ասկանիոյից, որն արվեստանոցում վարում էր գործերը և այցելում ուսուցչին՝ դժվարութեամբ թույլտւթյուն ձեռք բերելով: Անշուշտ, տեսակցութիւնների ժամանակ նրանց բաժանում էին երկու վանդակապատ, որտեղ կանգնած բանտապահները ուշադիր հետևում էին, որ աշակերտը խարտոց կամ պարան չտա իր ուսուցչին:

Եվ այսպես, երբ կաստելյանը փակեց բանտախցի գուռը, Բենվենուտոն սկսեց ուշադրութեամբ զննել շուրջը:

Ահա թե ինչ տեսավ նա իր նոր կացարանի մերկ պատերի մեջ. մահճակալ, օջախ, որի մեջ կարելի էր կրակ անել, սեղան ու երկու աթոռ: Երկու օր հետո Բենվենուտոն ձեռք բերեց կավ և ստեկա¹: Սկզբում կաստելյանը զրկեց կալանավորին ծեփելու հաճույքից, բայց հետո միտքը փոխեց, որոշելով, որ գուցե այդպիսով հաջողվի արձանագործին շեղել փախուստի սկեռուն մտքից, որն, ակնհայտորեն, համակել էր նրան: Նույն օրը Բենվենուտոն սկսեց ծեփել մի հսկայական վեներտ:

Դրանք միայն առաջին քայլերն էին, բայց հնարամտութեան, համբերութեան և աշխատանքի դեպքում կարելի էր շատ բանի հասնել:

Մի անգամ, դեկտեմբերին, շատ ցուրտ օր արեց, և Բենվենուտո Չելլինիի բանտախցում կրակ վառեցին: Բանտապահը փոխեց սավաններն ու դուրս եկավ, մոռանալով դրանք աթոռի վրա: Հենց որ նա փուկեց դուռը, Բենվենուտոն վեր թռավ, մի ուսուցչուով հայտնվեց անկողնու մոտ, ներքնակի միջից հանեց երկու խտիտ եգիպտացորենի տերևներ, որոնցով Խտալիայում լցնում են ներքնակները, տերևների փոխարեն խցկեց երկու սավանը, մոտեցավ արձանին, ձեռքն առավ թիակը և կրկին սկսեց աշխատել: Նույն վայրկյանին բանտապահը վերադարձավ սավանները տանելու,

¹ ստեկա — ծեփելու թիակ

փնտրեց ամեն տեղ, հարցրեց Բենվենուտոյին, թե արդյոք աչքով չե՞ն ընկել, բայց արձանագործը պատասխանեց անփութորեն, ձևանալով, թե կլանված է աշխատանքով, որ հավանաբար եկել է ծառայողներից մեկնումեկը և սպիտակեղենը վերցրել, կամ ինքը բանտապահն է պատահաբար տարել: Բանտապահը ոչինչ չկասկածեց. չէ՞ որ ինքը վերադարձել էր անմիջապես, իսկ Բենվենուտոն հիանալի խաղաց իր դերը: Սավանները շգտնվեցին, և բանտապահը գերադասեց լռել կորուստի մասին, վախենալով, որ իրեն կստիպեն վճարել սավանների արժեքը, կամ դուրս կանեն աշխատանքից:

Ինչպիսի սոսկալի տառապանքներ, ինչպիսի տանջալից սազնասլ է ապրում մարդը, երբ որոշվում է նրա ճակատագիրը: Ամենասովորական բաներն այդ ժամին դառնում են կարևոր իրադարձություններ, ուրախացնում են, կամ հուսահատեցնում:

Հենց որ բանտապահը դուրս գնաց, Բենվենուտոն ծնկի իջավ ու փառք տվեց աստծուն իրեն շնորհված օգնության համար: Նա կարող էր ներքնակի մեջ թողնել ոլորած սավանները. անկողինը գցված էր, ուրեմն բանտապահը մինչև առավոտ չէր մոտենա մահճակալին:

Երբ մթնեց, նա պատառոտեց սավանները, որոնք բարեբախտաբար նոր էին և բավականին կոսյիտ, երեք-չորս մատ լայնության շերտեր արեց և ամուր սլաքաններ հյուսեց դրանցից: Այնուհետև բացեց արձանի կավե յորովայնը, դուրս թափեց փորոտիքը և այնտեղ պահեց իր գանձը. հետո կտրվածքի վրա կավե մի գուղձ դրեց և մատներով ու թիակով խնամքով հարթեց. ամենանրբանկատ գիտակն անգամ չէր նկատի, որ խեղճ վեներային վիրահատել են: Հետևյալ օրը, ինչպես միշտ, անսպասելիորեն նրա խուցը մտավ կաստելյանը, բայց կալանավորն, ինչպես միշտ, խաղաղ աշխատում էր: Ամեն առավոտ խենթ կաստելյանը, որին Բենվենուտոն սպառնացել էր, թե գիշերով կփախչի, դողում էր վախից, սարսափելով, որ բանտախուցը դատարկ կգտնի: Եվ պետք է ասել, որ ամեն առավոտ տեսնելով Բենվենուտո Չելլինիին, չէր թաքցնում ուրախությունը:

— Պետք է խոստովանեմ, որ ձեր պատճառով հանգիստ չունեմ, Բենվենուտո,— ասաց խենթ կաստելյանը։— Սակայն սկսում եմ մտածել, որ դուք իզուր էիք սպառնում ինձ փախուստով։

— Ես չեմ սպառնացել և չեմ սպառնում, պարոն Զորչո,— պատասխանեց Բենվենուտոն,— ես նախազգուշացնում եմ։

— Ինչ է, դուք դեռ հույս ունեք թռչե՞լ։

— Բարեբախտաբար դա անհիմն հույս չէ, այլ, գրողը տանի, վստահություն։

— Տարօրինակ բան է։ Իսկ ինչպե՞ս պետք է գլուխ բերեք այդ ամենը, հը՞,— բացականչեց շարաբախտ կաստելյանը, որին համբերությունից հանում էր Բենվենուտոյի չգիտես թվացող, թե՛ անկեղծ վստահությունը, որ իրեն կհաջողվի դուրս թռչել բանտից։

— Իսկ դա իմ գաղտնիքն է, պարոն։ Բայց նախազգուշացնում եմ՝ թևերս աճում են։

Կաստելյանն ակամա նայեց իր գերու ուսերին։

— Այդպես է, մեսոեր կաստելյան,— շարունակեց Բենվենուտոն, անդադար ծեփելով արձանը. ըստ երևույթին, նա մտադրվել էր ստեղծել Վենետիկի Կալիպիտայի¹ մրցակցուհուն։

— Ես և դուք մենամարտում ենք. մենք մարտի ենք հրավիրել միմյանց։ Ձեր տրամադրության տակ կան բարձր աջտարակներ, ամուր դոններ, հուսալի սողնակներ, զգոն բանտապահներ, իսկ ես ունեմ գլուխ և ահա այս ձեռքերը։ Եվ ես նախազգուշացնում եմ. դուք կպարտվեք, իմացած եղեք։ Եվ բացի այդ, ուզում էի ասել... դուք ճարպիկ եք, դուք նախազգուշական բոլոր միջոցները ձեռք եք առել, այդ պատճառով, երբ ես դուրս կթռչեմ այստեղից, թող ձեզ մխիթարի այն գիտակցությունը, որ դուք ամենևին մեղավոր չեք, հարգելի Զորչո, որ դուք ձեզ կշտամբելու ոչինչ

¹ Վենետիկի Կալիպիտա— անտիկ արձան, որը պատկերում է սիրո և գեղեցկության աստվածուհուն

չունեք և որ դուք արել եք ամեն բան, հարգելի Զորչո, ինձ
այստեղ փտեցնելու համար: Ի դեպ, ի՞նչ կարծիք ունեք
արձանիս մասին: Չէ՞ որ ես գիտեմ, թե ինչպես եք սիրում
արվեստը:

Կալանավորի ինքնավստահությունը զրգոում էր կաստեղ-
յանին՝ այդ սահմանափակ մարդուն: Նրան անընդհատ հե-
տապնդում, խելագարության էր հասցնում այն միտքը, որ
Բենվենուտոն կարող է փախչել: Այդ միտքը վհատեցնում
էր նրան, զրկում ախորժակից. նա անընդհատ ցնցվում էր,
ինչպես ցնցվում է մարդը, որին հանկարծակիորեն արթնաց-
նում են քնից:

Մի անգամ, գիշերը, Բենվենուտոն աղմուկ լսեց տափա-
րակ տանիքի վրա, այնուհետև աղմուկը լսվեց միջանցքում
ու գնալով մոտենում էր, և դադարեց հենց բանտախցի մոտ:
Հանկարծ դուռը բացվեց, և կալանավորը տեսավ պարոն
Զորչոյին, խալաթով ու դիշերային թասակով, իսկ նրա թի-
կունքում՝ շորս վերակացու և ութ պահակ: Կաստելյանը մոտ
վազեց Բենվենուտոյի անկողնուն: Նա հուզմունքից իրեն
կորցրել էր: Բենվենուտոն տեղից բարձրացավ, նստեց ներք-
նակին և քահ-քահ ծիծաղեց: Ուշադրություն չդարձնելով
նրա ծիծաղի վրա, կաստելյանը հառաչեց, ինչպես հառաչում
էր ջրից դուրս եկած լողորդը:

— Օ՛հ, փառք աստծու,— բացականչեց նա,— իմ հո-
գեառը դեռ այստեղ է: Իսկապես ճիշտ են ասում, որ երազ-
ները սուտ են:

— Ի՞նչ է պատահել,— հարցրեց Բենվենուտո Չելլի-
նին:— Ինչպիսի՞ երջանիկ պատահականության եմ սպրտա-
կան, որ այս ուշ ժամին տեսնում եմ ձեզ, հարգելի Զորչո:

— Հիսո՞ւս Քրիստոս: Ամեն ինչ բարեհաջող է. այս ան-
գամ էլ ես միայն վախեցա և ուրիշ ոչինչ: Կիտեք, երազումս
տեսա, որ ձեր անիծյալ թևերն աճել են, այն էլ՝ հսկայա-
կան թևեր, և իբրև թե դուք հանգիստ ճախրում եք Սուրբ
Հրեշտակի ամրոցի վրա, մրմնջալով. «Մնա՛ք բարով, սիրե-
լի կաստելյան, մնա՛ք բարով: Չէի ցանկանում թռչել-գնալ
առանց ձեզ հրոժեշտ տալու, իսկ հիմա անէ՛ստե՛մ եմ: Եվ

ինչրան ուրախ եմ, որ այլևս երբեք ձեզ չեմ տեսնելու»:

— Մի՞թե: Ես այդպես էլ ասացի՞, հարգելի Ջորջո:

— Այդպես էլ ասացիք, բառ առ բառ... Օ՛հ, Բենվենուտո, գլխիս փորձանք են ուղարկել ձեզ:

— Մի՞թե կարծում եք, որ ես այդքան վատ եմ դաստիարակված: Լավ է, որ դա երազ էր միայն, հակառակ դեպքում ես ձեզ չէի ների:

— Բարեբախտարար, նման բան տեղի չի ունեցել: Ես ձեզ պահում եմ փակի տակ, հարգելիս, և թեպետ, պետք է խոստովանեմ, ձեր ընկերակցությունն այնքան էլ սրտովս չէ, բայց և այնպես, հուսով եմ, դեռ երկար ժամանակ կսպասեմ ձեզ այստեղ:

— Հազիվ թե դա ձեզ հաջողվի,— սլատասխանեց Բենվենուտոն, ինքնավստահ քմծիծաղով, որը հավասարակշռությունից հանում էր բանտապետին:

Կաստելյանը, գրողի ծոցն ուղարկելով Բենվենուտոյին, դուրս եկավ բանտախցից, իսկ առավոտյան հրամայեց բանտապահներին ամեն երկու ժամը մեկ, գիշեր ու ցերեկ աչքի անցկացնել բանտախուցը:

Այդպես շարունակեց ամբողջ մի ամիս, բայց ամսվա վերջին պարզվեց, որ պատճառներ չկան ենթադրելու, թե Բենվենուտոն պատրաստվում է փախուստի, և հսկողութունը թուլացրին:

Մինչդեռ հենց այդ ամբողջ ամիսը Բենվենուտոն մարդկային ուժերից վեր աշխատանք կատարեց:

Ինչպես արդեն նշել ենք, Բենվենուտոն բանտախուց ոտք տնկելու բոպեից արդեն սկսեց մանրամասնորեն ուսումնասիրել այն և այդ պահից իսկ նրա ամբողջ ուշադրությունը կենտրոնացավ մի մտքի վրա՝ ինչպես փախչել: Լուսամուտը վանդակապատ էր, և երկաթյա ձողերն այնքան հաստատուն էին, որ դուրս քաշելը կամ ծեփի թիակով խարխլելն անհնար էր. իսկ թիակից բացի նա երկաթյա ուրիշ ոչինչ չուներ: Մխնելույզը վերևի մասում շատ նեղ էր և կալանավորը պետք է կախարդ Մելլուզինայի՝ նման օձ դառնար այնտեղից

1 կախարդ Մելլուզինա— բարի կախարդուհի, ֆրանսիական միջնադարյան առասպելների և ասպետական վեպերի գործող անձ

դուրս սողոսկելու համար: Մնում էր միայն դուռը: Այո՛, դուռը Տեսնենք, թե այդ դուռն ինչպես էր սարքված. երկու մատ հաստություն ունեցող կաղնե դուռը փակված էր երկու կողպեքով, չորս սողնակով, ներսի կողմից պատված էր երկաթե թիթեղներով, որոնք շատ ամուր մեխված էին ցածում ու վերևում:

Եվ ազատության ճանապարհն այդ դուռն էր:

Բենվենուտոն նկատեց, որ դռնից մի քանի քայլ հեռավորության վրա, միջանցքում, սանդուղք կա, որտեղից անցնում է հերթափոխության համար տանիք բարձրացող ժամապահը: Ամեն երկու ժամը մեկ Բենվենուտոն լսում էր քայլերի ձայնը. այդ դիտակալն էր բարձրանում սանդուղքով, իսկ քիչ անց մյուս դիտակալը ցած էր իջնում. հետո, երկու ժամ անց, նորից քայլերի ձայն էր լսվում, և երկու ժամ տիրում էր խորունկ լռություն:

Ահա թե որն էր ամբողջ խնդիրը. հարկավոր էր հայանվել երկու մատ հաստություն ունեցող կաղնե դռան մյուս կողմում, որը փակված էր երկու կողպեքով, չորս սողնակով և, բացի այդ, ինչպես արդեն ասացինք, ներսի կողմից պատված էր երկաթե թիթեղներով, որոնք ամուր մեխված էին ցածում և վերևում:

Եվ այսպես, այդ ամսվա ընթացքում Բենվենուտոն ձեփելու թիակի օգնությամբ դուրս քաշեց բոլոր մեխերը, թողնելով միայն չորս մեխ վերևում և չորս մեխ՝ ցածում. հետո, որպեսզի ոչ ոք ոչինչ չնկատի, նա դրանք փոխարինեց կավե մեխերով և գլխիկները ծածկեց երկաթե քերվածքով, այնպես որ ամենափորձված աչքն էլ կեղծ մեխերն իսկականից չէր տարբերի: Դռան վերևում ու ցածում վաթսուն մեխ կար. ամեն մեխի վրա հարկ էր լինում աշխատել մեկ ժամ, իսկ երբեմն էլ՝ երկու: Դժվար չէ պատկերացնել, թե կալանավորի դիտավորության իրականացումն ինչպիսի շարշարանք էր պահանջում:

Երեկոները, երբ բոլորը պառկում էին քնելու և լսվում էին միայն գլխավերևում անցուղարձ անող պահակի քայլերը, կալանավորն օջախում կրակ էր անում և մի կույտ թեժ

ածուխներ լցնում դռանն ամրացրած երկաթե թիթեղների տակ: Երկաթը շիկանում էր, կաս-կարմիր կտրում, հետզհետե ածխացնելով փայտը, որին ամրացված էր. սակայն գրսի կողմից աննկատելի էր, որ դուռն ածխացել է:

Ինչպես արդեն ասացինք, Բենվենուտոն ամբողջ ամիսը տարված էր աշխատանքով: Եվ ամսվա վերջին նա ավարտեց ամբողջ գործը. կալանավորն սպասում էր միայն փախուստի համար բարենպաստ մի գիշերվա: Սակայն նա ստիպված եղավ սպասել մի քանի օր, որովհետև երբ վերջացրեց աշխատանքը, լիալուսնի օրերն էին:

Բենվենուտոն դուրս քաշեց բոլոր մեխերը և այլևս անելիք չունեի, բայց շարունակում էր շիկացնել դռան երկաթե թիթեղները և հոգեհան անել կաստելյանին:

Մի անգամ կաստելյանը Բենվենուտոյի խուցը մտավ արտակարգ մտահոգ տեսքով:

— Սիրելի կալանավոր,— սկսեց պատվարժան պարոն Զորջոն, որը գտնվում էր իր սևեռուն մտքի տիրապետության տակ,— ուրեմն, դուք դեռևս հույս ունե՞ք թռչելու Պատասխանեք անկեղծորեն:

— Ինչպես երբեք, սիրելի տանտեր,— պատասխանեց Բենվենուտոն:

— Լսեք,— շարունակեց կաստելյանը,— կարող եք դուրս տալ ինչ կամենում եք, բայց չէ՞ որ, ճիշտն ասած, այդ անհրնարին է:

— Անհնարին է ձեզ համար, պարոն Զորջո, ձեզ համար է անհնարին,— հարեց արձանագործը:— Բայց դուք շատ լավ գիտեք, որ այդ բանն ինձ համար գոյություն չունի: Ես սովոր եմ անել այն, ինչ հասարակ մահկանացուների համար անհնար է և այն էլ՝ հաջողությամբ, սիրելի տանտեր: Ես զվարճության համար մրցության մեջ չմտա՞ արդյոք բնության հետ, ոսկուց, դմրուխտներից և ադամանդներից ստեղծելով գեղեցկագույն ծաղիկներ՝ ծածկված ցողի մաքուր գարտյա կաթիլներով: Թե՞ դուք կարծում եք, որ նա, ով ստեղծում է ծաղիկներ, չի կարող թևեր պատրաստել:

— Ողորմած տեր,— աղաղակեց կաստելյանը,— ձեր շտեմնված ինքնավստահության պատճառով ես շուտով գլու-

խըս կկորցնեմ: Առացեք, ի՞նչ ձե եք տալու ձեր թևերին: Չէ՞ որ այդ թևերը պետք է պահեն ձեզ օդում... Թեև կարծում եմ, որ այդ ամենն անհնարին է:

— Իհարկե, ես ինքս էլ շատ եմ մտածել այդ մասին, քանի որ թևերի ձևից է կախված իմ բարեհաջողությունը:

— Հետո՞ ինչ:

— Այն, որ եթե հետևեք թևավոր արարածներին, կտեսնեք, որ աստծո կողմից նրանց շնորհված թևերը հաջողությամբ վերարտադրելու համար պետք է ընդօրինակել միայն շղջիկին:

— Բայց ասուցեք խնդրեմ, Բենվենուտո,— առարկեց կաստելյանը,— ենթադրենք միջոցը գտնված է, և դուք պատրաստեցիք թևերը: Մի՞թե քաջություն կունենաք օդովել դրանցից:

— Տվեք ինձ այն ամենը, ինչ հարկավոր է դրանք պատրաստելու համար, սիրելի կաստելյան, և ես պատասխանելու փոխարեն կթռչեմ:

— Իսկ ձեզ ի՞նչ է հարկավոր:

— Օ՛հ, տեր աստված, շատ քիչ բան. կտքրիկ դարբնոց, զնդան, խարտոցներ, արցաններ և ունելի՛ զսպանակներ պատրաստելու համար, մեկ էլ քսան կանգուն մոմլաթ՝ թաղանթավոր թևերի համար:

— Լա՛վ, լա՛վ,— ասաց մեսսեր Ջորջոն,— կաբժես մի սար ընկավ ուսերիցս. թեև դուք խելոք եք, բայց ձեզ չի հաջողվի այստեղ ձեռք բերել դրանցից ոչ մեկը:

— Իսկ ես արդեն ամեն ինչ ունեմ,— պատասխանեց Բենվենուտոն:

Կաստելյանը վեր ցատկեց աթոռից, բայց իսկույն գլխի ընկավ: որ մարդու ուժերից վեր է բանտում թևեր պատրաստելը:

Եվ, այնուամենայնիվ, այդ անհեթեթ միտքը հանգիստ չէր տալիս նրա հիվանդ ուղեղին: Լուսամուտի առաջ ճախրող ամեն թռչունի մեջ նա տեսնում էր Բենվենուտո Չելլի-նիին. այդքան մեծ է հանճարեղ մտքի ազդեցությունը շարքային, ողորմելի ուղեղի՛ վրա:

Նույն օրը պարոն Զորջոն մարդ ուղարկեց Հոռմի ամենաճարտար վարպետին կանչելու և հրամայեց նրան շղջիկի թևերի նման թևեր պատրաստել:

Զարմանքից քարացած վարպետը լուռ նայում էր կաստելյանին, հիմք ունենալով մտածելու, որ վերջինս խելագարվել է:

Բայց պարոն Զորջոն պնդում էր: Եվ քանի որ պարոն Զորջոն հարուստ էր, ապա երբ խենթություններ էր անում, ի վիճակի էր վճարել դրանց համար: Այդ պատճառով էլ վարպետը հանձն առավ պատվիրած գործը կատարել և մի շաբաթ հետո բերեց մի գույգ հիանալի թև, որոնք ամրանում էին մարմնին երկաթե կորսետի օղնությամբ, շարժման մեջ էին դրվում շափազանց հնարամիտ զսպանակներով և գործում շատ հուսալիորեն:

Մեսսեր Զորջոն վճարեց սարքավորման համար նշանակված գումարը, շափեց թևերը, բարձրացավ Բենվենուտո Չելլինիի խուցը և, ոչ մի բառ չարտասանելով, խուզարկեց զնդանը: Նա նայում էր մահճակալի տակ, զննում օջախը, շոշափում ներքնակը. մի խոսքով, մտավ բոլոր անկյուններն ու ծակուծուկերը:

Հետո դուրս եկավ, այդպես էլ ոչ մի բառ չարտասանելով, վստահ, որ Բենվենուտոն, եթե միայն կախարդ չէ, չի կարող բանտախցում թաքցնել այնպիսի թևեր, ինչպիսիք պատրաստել էր վարպետը:

Ակնհայտ էր, որ խեղճ կաստելյանի գիտակցությունը գնալով մթազնում էր:

Տանը պարոն Զորջոյին սպասում էր վարպետը, որը եկել էր ասելու, որ ամեն մի թևին ամրացված է երկաթե օղակ, որոնք պետք է թռչողի ոտքերը պահեն հորիզոնական դրություն մեջ:

Հենց որ վարպետը դուրս եկավ, պարոն Զորջոն փակվեց իր սենյակում, հազավ կորսետը, բացեց թևերը, ոտքերը մտցրեց օղակների մեջ և, մեջքի վրա հատակին պռկած, փորձեց օդ բարձրանալ: Բայց, շնայած բոլոր ջանքերին,

չհաջողվեց գետնից պոկվել: Երկու-երեք փորձից հետո նա կրկին ուղարկեց վարպետին կանչելու:

— Պարոն,— ասաց նրան կաստելյանը,— ես փորձեցի ձեր թևերը. դրանք բանի պետք չեն:

— Իսկ դուք ինչպե՞ս էիք փորձում:

Մեսսեր Զորջոն մանրամասն պատմեց, թե ինչպես բազմիցս փորձել է դրանք:

Վարպետը հանդիսավորությամբ լսեց նրան, իսկ հետո բարբառեց.

— Զարմանալու ոչինչ չկա. երբ դուք պառկում եք գետնին, ձեր շուրջը հարկ եղած քանակությամբ օդ չի լինում: Ապա փորձեք բարձրանալ Սուրբ Հրեշտակի ամրոցի տանիքը և այնտեղից խիզախորեն նետվել օդային տարածության մեջ:

— Եվ կարծում եք, որ ես կթռչե՞մ:

— Վստահ եմ,— պատասխանեց վարպետը:

— Բայց եթե դուք այդքան վստահ եք,— նկատեց կաստելյանը,— ինչո՞ւ ինքներդ չեք փորձում:

— Թևերը պատրաստված են ձեր մարմնի քաշին համապատասխան, ոչ թե իմ,— առարկեց վարպետը:— Ինձ համար սահմանված թևերի միջև եղած տարածությունը պետք է մեկուկես ոտնաչափ ավելի լինի:

Եվ վարպետը, գլուխ տալով, դուրս եկավ:

— Գրողը քեզ տանի,— բացականչեց մեսսեր Զորջոն:

Այդ օրը բոլորը նկատում էին, որ մեսսեր Զորջոն բավականին ցրված է: Հավանաբար Ռոլանդի¹ նման նա մտքով սավառնում էր ցնորքների աշխարհում:

Երեկոյան, մինչև անկողին մտնելը, նա կանչեց բոլոր ծառայողներին, բոլոր բանտապահներին և բոլոր պահակներին:

— Եթե դուք իմանաք,— ասաց նա,— որ Բենվենուտո

¹ Այստեղ խոսքն իտալացի պոետ Լոդովիկո Արիոստոյի «Մոլեգին Ռոլանդը» պոեմի մասին է (1532), որի մեջ ֆրանսիական միջնադարյան ժողովրդական էպոսի հերոսը՝ քաջ ասպետ Ռոլանդը, պատկերված է մոտամոլոր, վշտահար և վերջապես՝ դժբախտ սիրո պատճառով խելացնոր դարձած:

Չելլինին պատրաստվում է թռչել, թող թռչի, միայն տեղեկացրեք ինձ: Նույնիսկ դիշերը ես առանց դժվարության կբռնեմ նրան. ախր ես իսկական շղջիկ եմ, իսկ Բենվենուտոն, ինչ էլ ասելու լինի՝ իբրևական չէ:

Խեղճ կաստելյանը խելքը լրիվ թրցրել էր, բայց շրջապատի մարդիկ հույս ունեին, որ քունը կսթափեցնի նրան, ուստի որոշեցին սպասել ու սուսվորտյան միայն նախազգուշացնել պասպին:

Հստ որում, եղանակը զզվելի էր, անձրևոտ և շատ մութ. այդպիսի եղանակին ոչ ոք չէր ուզենա փողոց դուրս գալ:

Սակայն Բենվենուտո Չելլինին, իհարկե հակադրվելու դժուրումից դրգված, փախուստի համար ընտրեց հենց այդ դիշերը:

Այդ պատճառով ժամը տասը հնչելուն պես, դիտակալը հերթափոխվեց, նա ծունկի իջավ և ակնածալից աղոթքից հետո գործի անցավ:

Նախ և առաջ հարկավոր էր դուրս քաշել մնացած շորս մեխը, որոնք պահում էին երկաթե թիթեղները: Վերջին մեխը տեղի տվեց՝ երբ հնչեց կեսգիշերը:

Բենվենուտոն լսեց տափարակ տանիք բարձրացող դիտակալների ոտնաձայնը. նա անշարժացավ տեղում և շունչը պահած սեղմվեց դռանը: Դիտակալները հերթափոխվեցին, ցած իջան, քայլերի ձայնը լռեց, և ամեն ինչ խորասուզվեց լուսթյան մեջ:

Սկսեց հորդառատ անձրև տեղալ, և Բենվենուտոյի սիրտն ուրախությունից թպրտաց, երբ լսեց, թե անձրևն ինչպես է թմբկահարում լուսամուտները:

Այդ ժամանակ նա փորձեց պոկել արդեն ոչ մի մեխով չպահվող երկաթյա թիթեղները, որոնք տեղի տվին, և Բենվենուտոն մեկ առ մեկ պատին դեմ արեց դրանք:

Հետո նա պառկեց փորի վրա և ծեփելու թիակով, որը սրել էր դաշույնի պես ու հագցրել փայտե բռնակին, սկսեց փորել դռան տակը: Կաղնե ածխացած տախտակները տեղի տվին: Չանցած մի վայրկյան Բենվենուտոն այնքան լայն անցք բացեց դռան մեջ, որ կարելի էր դուրս սողոսկել:

Նա բացեց արձանի որովայնը, հանեց ինքնաշեն պարանը, կապեց մեջքին, զինվեց ծեփելու թիակով, որը, ինչպես արգեն առացինք, դաշույն էր դարձրել, ծունկի իջավ և կրկին սկսեց աղոթել:

Աղոթքը վերջացնելով, նա անցքից դուրս հանեց գլուխը, հետո՝ ուսերը և դուրս եկավ միջանցք:

Բենվենուտոն ոտքի կանգնեց, բայց ծնկներն այնպես էին դողում, որ ստիպված եղավ հենվել պատին, հակառակ դեպքում վայր կընկներ: Սիրտը բաբախում էր, ասես պատրաստ էր կրծքից դուրս թռչել, դեմքը կասկարմիր էր, ճակատը ծածկվել էր քրտինքի կաթիլներով: Նա ջղաձգորեն սեղմում էր ինքնաշեն դաշույնի կոթը, կարծես ինչ-որ մեկը պատրաստվում էր խլել այն:

Շուրջը լռութուն էր, ոչ մի շրշույն չէր լսվում, ուստի Բենվենուտոն իսկույն ուշքի եկավ և խարխափելով սկսեց առաջ շարժվել միջանցքով, պատի ուղղությամբ, մինչև զգաց, որ պատը վերջացավ: Նա մի քայլ արեց, և ոտքը դիպավ սանդուղքի առաջին աստիճանին՝ տանիք տանող շարժական սանդուղքին:

Սկսեց բարձրանալ, ցնցվելով փայտե աստիճանների ճոնշոցից. բայց ահա զգաց քամու շունչը, ահա անձրևը սկսեց մտրակել դեմքը. դուրս էր եկել տանիք... Փախստականը քառորդ ժամից ավելի մնաց անթափանց խավարի մեջ: Եվ հիմա միայն հասկացավ, թե ինչից պետք է վախենա և ինչի վրա հույս դնի:

Կշեռքի նժարը թեքվում էր հույսի կողմը:

Ժամապահն անձրևից պատսպարվելու համար թաքնվել էր պահատնակում: Բանն այն է, որ Սուրբ Հրեշտակի ամբողջի տանիքի վրա երկու ժամը մեկ հերթափոխվող ժամապահները հսկում էին ոչ թե տանիքը, այլ բերդի փոսն ու մերձակայքը, այդ իսկ պատճառով պահատնակի խուլ պատն ուղղված էր սանդուղքի կողմը, որով բարձրացել էր Բենվենուտո Չելլինին:

Բենվենուտոն անաղմուկ, շորեքթաթ սողալով մոտեցավ տանիքի եզրին, հնարավորին չափ հեռու մնալով պահա-

տնակից: Այդտեղ նա սավաններից հյուսած պարանը կապեց հինավուրց պատի մոտ վեց մատնաշափ դուրս ցցված աղյուսից և երրորդ անգամ ծունկի եկավ՝ աղոթք մրմնջալով:

— Տե՛ր աստված, տեր աստված: Օգնի՛ր ինձ, որովհետև ես արեցի ամեն բան, ինչ կարող էի:

Աղոթքն ավարտելով, նա բռնեց պարանը և սկսեց ցած սահել, ծնկներն ու ճակատն անընդհատ զարկելով սլատին, բայց ուշադրութուն չդարձնելով քերժվածքների վրա: Վերջապես Բենվենուտոն ցած իջավ:

Երբ ոտքերի տակ հաստատուն հող զգաց, սիրտը լցվեց աննկարագրելի ուրախությամբ ու հպարտությամբ: Հայացքով շափեց հսկայական, բարձր պարիսպը, որից ցած էր իջել, և ահամա կիսաձայն մրմնջաց. «Վերջապես ես ազատ եմ»: Բայց Բենվենուտոյի ուրախությունը երկար չտևեց:

Նա հետ նայեց և ոտքերը թուլացան. նրա առաջ վեր էր խոչանում ամրոցի վերջերս կառուցված պատը, որի մասին չգիտեր: Բենվենուտոն հասկացավ, որ կորած է: Նա թևաթափ ու հուսաբեկ փովեց գետնին. ընկնելիս գիպավ ինչոր բանի. դա մի երկար գերան էր: Բենվենուտոն նույնիսկ ճչաց զարմանքից և ուրախությունից. նա հասկացավ, որ փրկված է:

Օ՛, պարզապես անիմանալի է, թե մի վայրկյանում մարդ քանի անգամ է հուսահատությունից ուրախության անցնում:

Բենվենուտոն կառչեց գերանից, ինչպես նավաբեկյալը կառչում է կայմի բեկորից՝ ջրի ևրեսին մնալու համար: Սովորական ուժի տեր երկու մարդ դժվարությամբ կբարձրացնեին գերանը, իսկ Բենվենուտոն մեն-մենակ քարշ տվեց այն և դեմ արեց պատին:

Հետո փախստականը վեր մագլցեց, ոտքերով ու ձեռքերով կառչելով գերանից, հասավ պատի գլուխը, բայց ուժերը դավաճանեցին, և նա ոչ մի կերպ չկարողացավ վեր քաշել գերանն ու տեղափոխել պատի մյուս կողմը:

Գլուխը պտտվեց, շուրջն ամեն ինչ իրար խառնվեց, նա

փակեց աչքերն ու նրան թվաց, թե շուրջը կրակի ծով է:

Հանկարծ մտաբերեց սափաններից հյուսած պարանը, որի օգնութեամբ իջել էր տանիքից:

Չելլինին ցած սահեց գերանով ու վազեց այն կողմը, որտեղ կախված էր պարանը. բայց այնտեղ՝ վերևում, նա այնքան ամուր էր կապել պարանն աղյուսից, որ չկարողացավ քանդել:

Հուսահատութեամբ կախվեց պարանից, սկսեց ամբողջ ուժով ձգել, հուսալով, որ կպոկի: Բարեբախտաբար շերտերը միացնող չորս հանգույցներից մեկը քանդվեց, և Բենվենուտոն երեսնիվայր ցած ընկավ՝ ձեռքում բռնած մոտ տասներկու ոտնաչափ երկարութուն ունեցող պարանի կտորը:

Նրան էլ հենց այդ էր պետք: Ոտքի կանգնելով, նա վեր մագլցեց գերանի վրայով. ահա կրկին պատին հեծավ և ինքնաշեն պարանը կապեց խոտորնակից: Իջավ մինչև պարանի ծայրը, բայց զուր էր ոտքերի տակ հող փնտրում: Ցած նայելով, նա տեսավ, որ մինչև գետին ընդամենը վեց ոտնաչափ է մնում: Բաց թողեց պարանն ու հայտնվեց պարսպի հիմքի մոտ:

Բենվենուտոն թեք ընկավ. ուժասպառ էր եղել, ոտքերի ու ձեռքերի մաշկը պլոկվել էր, մի քանի րոպե նայում էր արնաթոր քերծվածքներին, որոնցով ծածկված էր մարմինը... Բայց ահա հնչեց ժամը հինգը, և փախստականը նկատեց, որ աստղերն աղոտանում են:

Դեռ ոտքի չէր կանգնել, երբ մոտերքում հայտնվեց ժամապահը, որին մինչև հիմա չէր նկատել, թեև վերջինս, իհարկե, վաղուց հետևում էր փախստականին: Բենվենուտոն հասկացավ, որ ամեն ինչ կորած է և եթե ինքը շտպանի, իրեն կսպանեն: Նա գոտու տակից դուրս քաշեց ինքնաշեն զաշույնը և անհողգողգ տեսքով գնաց ուղիղ ժամապահի վրա: Վերջինս էլ, անշուշտ, տեսավ, որ իր դիմաց կանգնած է ոչ միայն պարզապես շատ ուժեղ, այլև հուսահատութեան հասած մի մարդ, որը պատրաստ է կենաց ու մահվան կռվի:

Իրոք, Բենվենուտոն չէր էլ մտածում նահանջել: Եվ պահակը հանկարծ մեջքը նրա կողմն արեց, շնկատելու տալով

նրան: Փախստականը հասկացավ, թե դա ինչ է նշանակում:

Նա նետվեց դեպի ամրոցի վերջին պատը, որը տասներկու-տասնհինգ ոտնաչափ բարձրություն ուներ և շրջապատված էր փոսով: Բայց Բենվենուտո Չելլինիի նման կտրիճը, այն էլ անելանելի դրություն մեջ, այդպիսի արգելքից չի սրդողի. և քանի որ ինքնաշեն պարանի մի մասը մնացել էր դուրս ցցված աղյուսի վրա, իսկ մյուսը՝ գերանի, և իջնելու ոչ մի հարմարանք չկար, ժամանակն էլ չէր սպասում, նա, մտովին օգնություն աղերսելով աստծուց, ցած թռավ:

Այս անգամ Բենվենուտոն անմիջապես կորցրեց գիտակցությունը: Նա ուշքի չէր գալիս առնվազն մեկ ժամ, բայց ահա փչեց վաղորդյան հովը, և նա սթափվեց: Եվս մի պահ պառկած էր շմած, հետո ձեռքով շփեց ճակատն ու ամեն ինչ մտաբերեց:

Սոսկալի գլխացավ զգաց և տեսավ արյան կաթիլներ, որոնք քրտինքի պես հոսում էին դեմքով ու ընկնում քարերին, որոնց վրա պառկած էր: Հասկացավ, որ վիրավորված է և կրկին ձեռքը հպեց ճակատին, բայց արդեն ոչ մտքերը ժողովելու համար, այլ՝ վերքը շոշափելու: Պարզվեց, որ վերքերը ծանր չեն, պարզապես քերծվածքներ են, որոնք չեն վնասել դանգը: Բենվենուտոն քմծիծաղ տվեց և փորձեց ոտքի կանգնել, բայց իսկույն դառ ընկավ. շարզված էր աչ ոտքը՝ երեք մատնաչափ կոճից վեր: Ոտքն այնքան էր թմրել, որ սկզբում նա ցավ չզգաց:

Բենվենուտոն հանեց շապիկը, պատռեց, բարակ շերտեր արեց, հետո միացրեց կոտրված ոտքի ոսկորներին ու ամուր վիրակապեց, ընդգրկելով ոտքի թաթը, որպեսզի վիրակապն ավելի լավ պահվի կոտրված ոտքի վրա: Հետո շորեթաթ ոողաց դեպի Հոոմ տանող դարպասներից մեկը, որը հինգ հարյուր քայլի վրա էր:

Երբ կեսժամյա տանջալից ճանապարհից հետո նա հասավ դարպասին, պարզվեց, որ այն փակ է: Բենվենուտոն դարպասի տակ տեսավ մի մեծ քար. նա հեշտություն մեղաշարժեց քարը և բացված անցքից ներս սողոսկեց:

Բենվենուտոն սողալով անցավ ևս երեսուն մետր, բայց

հանկարծ նրա վրա հարձակվեց սոված, անտուն շների մի ոհմակ, որոնք արյան հոտից զգացել էին, որ նա վիրավոր է: Բենվենուտոն դուրս քաշեց ինքնաշեն դաշույնն ու մխեց ամենամեծ ու կատաղած շան կողքը՝ մի հարվածով սպանելով նրան: Ամբողջ ոհմակն իսկույն հարձակվեց ու խժոեց սպանված շանը:

Սողալով հասավ Տրանսպոնտանի եկեղեցուն, որտեղ հանդիպեց մի ջրկիրի, որը նոր էր լցրել կժերն ու բեռնել ավանակին:

Բենվենուտոն մոտ կանչեց ջրկիրին և ասաց.

— Լսիր, ես հյուր էի սիրածիս մոտ, բայց այնպես պատահեց, որ նրա տունը մտա դռնից, իսկ դուրս եկա լուսամուտից: Ցած թռա երկրորդ հարկից ու ջարդեցի ոտքս: Եթե ինձ տանես Սուրբ Պետրոսի տաճարի գավիթը, մի ոսկի կտամ:

Ջրկիրը լուռ շալակեց վիրավորին ու տարավ մատնանշած տեղը: Այնուհետև, խոստացված պարգևն ստանալով, շարունակեց իր ճանապարհը, նույնիսկ հետ շնայելով: Իսկ Բենվենուտոն առաջվա պես շորեքթաթ սողաց գեպի սենյոր Մոնլյուկի՝ Ֆրանսիական դեսպանի տունը, որն ապրում էր տաճարից մի քանի քայլ հեռավորության վրա:

Սենյոր Մոնլյուկն օգնեց նրան և այնպիսի ջանասիրություն ցուցաբերեց, որ մի ամիս անց Բենվենուտոն ապաքինվեց, երկու ամիս հետո ներումն ստացավ, իսկ շորս ամիս անց մեկնեց Ֆրանսիա՝ Ասկանիոյի և Պագուլոյի հետ:

Իսկ ձախորդ կաստելյանը խելագարվեց՝ կյանքի վերջին օրերն ապրեց ու մեռավ խելագար. նրան անընդհատ թվում էր, թե ինքը շղջիկ է և անդադրում փորձում էր թռչել:

ԳԼՈՒԽ ԶՈՐՐՈՐԴ

Սկոցոնե

Երբ Բենվենուտո Զելլինին ժամանեց Ֆրանսիա, Ֆրանսիսկ I-ը Ֆոնտենբլո պալատում էր՝ իր արքունիքով շրջա-

պատված: Եվ այդպես, արձանագործը պետք է հանդիպեր նրա հետ, ում այնքան փափագում էր տեսնել: Բենվենուտոն իջևանեց Ֆոտենբլոյում և խնդրեց, որ իր ժամանման մասին հայտնեն Ֆերարայի կարդինալին: Կարդինալը, գիտենալով, որ թագավորն անհամբերությամբ սպասում է Բենվենուտոյին, նորությունն անմիջապես հայտնեց նորին մեծությանը: Նույն օրը թագավորն ընդունեց Բենվենուտոյին և խոսեց նրա հետ այն հյութեղ ու հարուստ լեղվով, որին այնքան լավ տիրապետում էր Չելլինին:

— Բենվենուտո, մի քանի օր նվիրեք զվարճություններին, ուշքի եկեք ձեր ձախորդություններից ու հոգնածությունից, հանգստացեք, ուրախացեք: Իսկ մենք մինչ այդ կմտածենք, թե ինչ սքանչելի ստեղծագործություն պատվիրենք ձեզ:

Այնուհետև, քանդակագործին ամրոցում բնակեցնելով, Ֆրանցիսկ I-ը կարգադրեց կանխել նրա բոլոր ցանկությունները:

Այդպիսով Բենվենուտոն անմիջապես հայտնվեց Ֆրանսիական քաղաքակրթության կենտրոնում, որն այն դարաշրջանում դեռևս հետ էր մնում իտալական քաղաքակրթությունից, սակայն արդեն պատրաստվում էր գերազանցել նրան: Արձանագործն ուշադրությամբ աչք էր ածում շրջապատը, և նրան թվում էր, թե ինքը չի հեռացել Տոսկանայի մայրաքաղաքից, որովհետև նրան շրջապատում էին դեռևս Ֆլորենցիայից ծանոթ արվեստի գործերն ու նկարները. այստեղ նույնպես Պրիմատիչոն փոխարինել էր Լեոնարդո դա Վինչիին և մանստրո Ռոստոյին¹:

Եվ այսպես Բենվենուտոն պետք է դառնար այդ հռչակավոր մարդկանց ժառանգորդը և նվրոպայի ամենանրբաճաշակ արքունիքի ուշադրությունը գրավեր արձանագործության արվեստի վրա, որի մեջ հասել էր նույնպիսի վարպետության, ինչպիսի վարպետության հասել էին այդ երեք մեծ նկարիչները գեղանկարչական արվեստում: Այդ իսկ

¹ Պրիմատիչո (1504—1570) — իտալացի նկարիչ, քանդակագործ ու ճարտարապետ, հրավիրված էր Ֆրանցիսկ I-ի արքունիքում աշխատելու, ինչպես Լեոնարդո դա Վինչին և նկարիչ Ռոստո դել Ռոստո (1494—1541)

պատճառով Բենվենուտոն ցանկանում էր կանխել թագավորի ցանկությունը և, սքանչելի գործ ստեղծելու խոստացված պատվերին շսպասելով, որոշեց սեփական միջոցներով, իր ոգեշնչման թելադրանքով որևէ գործ ստեղծել: Չելլինին իսկույն նկատեց, թե որքան սիրելի է թագավորի համար նրստավայրը, որտեղ իրենք հանդիպեցին և որոշեց նրա սիրտը շահելու նպատակով ստեղծել մի արձան ու անվանել «Փոնտենբլոյի հավերժահարսը»:

Նրա գլխում մի սքանչելի ստեղծագործություն հղացավ. արձան՝ պսակված հասկերով, դափնե տերևներով ու խաղողի վազերով, քանզի Փոնտենբլոն գտնվում է հովտի եզրին, ստվերապատված՝ անտառներով ու շրջապատված խաղողի այգիներով: Հավերժահարսը, որի մասին երազում էր Բենվենուտոն, պետք է մարմնավորեր Կեբերային¹, Դիանային², և էրիզոնեին³. երեք սքանչելի աստվածուհի՝ մի ներդաշնակ ամբողջության մեջ: Արձանագործը ցանկանում էր պահպանել նրանցից ամեն մեկի բնորոշ գծերը, սակայն մի կերպարի մեջ. իսկ արձանի պատվանդանի վրա պետք է պատկերեր երեք աստվածուհիներին: Եվ նրանք, ովքեր սեսել են Չելլինիի Պերսևսի⁴ պատվանդանը զարդարող սքանչելի քանդակապատկերները, գիտեն, թե Ֆլորենտացի վարպետն ինչպիսի արվեստով էր կերտում քանդակագործական զմայլելի դետալները:

Արձանագործն ուներ գեղեցիկ անսխալական զգացում, սակայն իդեալի մարմնավորման համար նրան պետք էր բնորոշուհի, և ամբողջ ցավը հենց այդ էր: Որտեղից գտներ այնպիսի մի կին, որի մեջ զուգակցվեին երեք աստվածուհու սքանչելի գծերը:

¹ Կեբերա (հուսմ. դիցաբ.) — պտղաբերության աստվածուհի

² Դիանա (հուսմ. դիցաբ.) — որսի աստվածուհի, անտառների տիրուհի, ինչպես նաև Լուսնի աստվածուհի

³ Էրիզոնե (հուն. դիցաբ.) — գինու աստված Բաքոսի գեղանի սիրուհին, որին, մահից հետո, աստվածներն աստղ դարձրին

⁴ Պերսևս (հուն. դիցաբ.) — հերոս, որը բազմաթիվ սխրագործություններ է կատարել: Նա կտրել է կնոջ կերպարանք ունեցող սոսկալի հրեշի՝ Մեդուզայի գլուխը: Քանդակագործ Բենվենուտո Չելլինին պատկերել է Պերսևսին սքանչելի պատանու կերպարանքով՝ Մեդուզայի գլուխը ձեռքին:

Իհարկե, եթե այնպես լիներ, ինչպես անտիկ ժամանակներում՝ Ֆիդիասի և Ապելեսի ժամանակներում, երբ հռչակված գեղեցկուհիները, մարմնաձևերի այդ իշխանուհիները, հոժարակամ գալիս էին արձանագործի մոտ, Բենվենուտոն ազնվազարմ տիկնանց մեջ առանց դժվարության կգտներ իր փնտրածին: Այդ ժամանակ արքունիքում շողում էին իրոք Ուլիմպոսի աստվածուհիներ, աննման գեղեցկուհիներ՝ Եկատերինա Մեդիչին, որը դեռ քսաներկու տարեկան էր, Մարգարիտա դե Վալուան՝ Նավարայի թագուհին, որին անվանել էին «Չորրորդ գեղուհի» ու «Տասներորդ մուսա» և, վերջապես, դքսուհի դ'Էտամպլը, որին բավականին կարևոր դեր է հատկացված մեր պատմության մեջ: Նա համարվում էր ամենագեղեցիկը գիտուն կանանց մեջ և ամենագիտունը՝ գեղեցկուհիների մեջ: Ուրեմն, գեղեցիկ կանայք այստեղ ավելի քան շատ կային նկարչի համար. բայց մենք արդեն ասացինք, որ Ֆիդիասի և Ապելեսի ժամանակները վաղուց արդեն անցել էին:

Պետք էր բնորդուհի փնտրել ուրիշ տեղ: Այդ պատճառով Բենվենուտոն շատ ուրախացավ, իմանալով, որ արքունիքը պատրաստվում է Փարիզ մեկնել: Ցավոք սրտի, ինչպես պատմում է ինքը՝ Բենվենուտոն, արքունիքն այն ժամանակ ճամփորդում էր հուղարկավորության թափորի նման. առջևից արշավում էին տասներկու-տասնհինգ հազար հեծյալ, կանգ էին առնում գյուղակներում, որտեղ հազիվ երկուերեք խրճիթ կար, ամեն երեկո շորս ժամ կորցնում էին վրանները խփելու և ամեն առավոտ՝ շորս ժամ դրանք հավաքելու համար, և թեև թագավորական աթոռանիստից մինչև մայրաքաղաք ընդամենը տասնվեց լյո է, տեղ էին հասնում հինգ օրում:

Ճանապարհին Բենվենուտո Չելլինին մոտ քսան անգամ ցանկացավ առաջ սլանալ, բայց ամեն անգամ նրան զսպում էր Ֆերարայի կարդինալը, ասելով, որ եթե թագավորը մի ամբողջ օր շտեմնի արձանագործին, անկասկած կհարցնի, թե ինչ է պատահել նրան և, իմանալով, որ նա մեկնել է առանց թուլլտվություն խնդրելու, այդ բանն անհարգալից

վերաբերմունք, կհամարի իր թագավորական մեծության նկատմամբ:

Եվ այդպես, Բենվենուտոն դժվարությամբ էր հաղթահարում իր անհամբերությունն ու երկարատև կանգառներին աշխատում էր ժամանակը սպանել «Ֆոնտենբլոյի հավերժաճարս»-ի ճեպանկտորներն անելով:

Վերջապես հասան Փարիզ: Նախ և առաջ Բենվենուտոն այցելեց Պրիմատիչոյին, որին հանձնարարված էր Ֆոնտենբլոյում շարունակել Լեոնարդո դա Վինչիի և Ռոսսոյի աշխատանքները: Պրիմատիչոն վաղուց արդեն ապրում էր Փարիզում և հավանաբար կարող էր լավ խորհուրդներ տալ, մատնանշել, թե որտեղ կարելի է բնորդուհի գտնել:

Ի դեպ, երկու խոսքով պատմենք Պրիմատիչոյի մասին:

Սենյոր Ֆրանչեսկո Պրիմատիչոն, որին այն ժամանակ անվանում էին դա Բոլոնյա, համաձայն նրա ծննդավայրի, իսկ մենք անվանում ենք սլարգասլես Պրիմատիչո, Զուլիո Ռոմանոյի աշակերտն էր, վեց տարի ուսանել էր նրա մոտ և արդեն ութ տարի ապրում էր Ֆրանսիայում, ուր նրան հրավիրել էր Ֆրանցիսկ I-ը՝ Մանտուայի մարքիզի խորհրդով, որը մեծագույն նկարիչ հավաքագրող էր:

Պրիմատիչոյի ստեղծագործությունը զարմանալիորեն բեղմնավոր է. այդ բանում կարելի է համոզվել, այցելելով Ֆոնտենբլո. նրա նկարելու ձևն անկաշկանդ է ու մոնումենտալ, գծերի մաքրությունն անբասիր: Երկար ժամանակ անհայտության մեջ մնացին թե ինքը՝ նկարիչը, և թե նրա բազմակողմանի դիտելիքները, լայն մտահորիզոնը, հուժկու տաղանդն ու վարպետությունը՝ գեղանկարչության բոլոր ժանրերում. մեր դարաշրջանը պատժեց նրան երեք դար անարդարացի մոռացումով: Մինչդեռ նա, կրոնական էքստազի մեջ, որմնանկարներով զարդարել է Բորեգարի մատուռը, Մոնմորանսիի պալատի պատերը ծածկել է բարոյախոսական բովանդակության նկարներով, պատկերելով քրիստոնեական գլխավոր առաքինությունները, իսկ Ֆոնտենբլո պալատի ընդարձակ սրահները մինչև հիմա էլ պահպանել են նրա տաղանդի դրոշմը: Նա այլաբանական սյուժետներով սքանչելի որմնանկարներ է արել Ոսկե դար-

սլոսի վրա և Պարասրահում: Ուլլիսի պատկերասրահում և Մարր Լյուդովիկոսի սենյակներում ստեղծել է էպիկական բանաստեղծ Հոմերոսի պատկերն ու գեղանկարչորեն վերարտադրել «Ողիսականը» և «Իլիական»-ի մի մասը: Այնուհետև, առասպելական ժամանակաշրջանից անցել է հերոսականին և իր ստեղծագործությունը նվիրել պատմությունը: Ալեքսանդրի և Ռոմուլի կյանքի հիմնական դրվագները, Հավրի հանձնումը պատկերված են կտավների վրա, որոնք զարդարում են Մեծ սրահը և Պարասրահին կից սենյակը: Նա ոգևորությամբ նկարում էր թանգարանը զարդարող բնապատկերներ:

Վերջապես, եթե շափելու լինենք այդ ականավոր նկարչի սաղանդի ամբողջ խորությունը, թվարկենք նրա բազմապիսի ստեղծագործությունները, հաշվենք աշխատությունները, կտեսնենք, որ նա ստեղծել է իննսուներե մեծ և հարյուր երեսուն փոքր կտավ՝ բնանկարներ, ծովանկարներ, պատկերներ Աստվածաշնչից ու պատմությունից, դիմանկարներ, այլաբանական ու էպիկական սյուժեներ ունեցող ստեղծագործություններ:

Այդպիսի մարդը կարող էր հասկանալ Բենվենուտոյին: Այդ պատճառով Փարիզ ոտք դնելուն պես Բենվենուտոն բաց սրտով շտապեց Պրիմատիչոյի մոտ: Նկարիչն ընդունեց նրան նույնքան սրտաբաց:

Անկեղծ զրույցից հետո, որը սովորաբար անմիջապես սկիզբ է առնում, երբ հայրենակից-ընկերները հանդիպում են օտարության մեջ, Բենվենուտոն բացեց թղթապանակը, ցույց տվեց Պրիմատիչոյին իր ճեպանկարները, պատմեց նոր մտահղացումների մասին ու հարցրեց, թե բնորոշիչների մեջ չկա՞ արդյոք իր երազանքի մարմնավորումը:

Պրիմատիչոն, թախծոտ ժպտալով, զլուխը տարուբերեց: Եվ իրոք, չէ՞ որ նրանք Իտալիայում՝ Հունաստանի այգ երջանիկ մրցակից երկրում չէին: Ֆրանսիան այդ ժամանակներում, ինչպես և այժմ, համարվում էր նրբագեղության, բարեկրթության և հրքոտության երկիր, բայց զուր կլինեիր Վալուաների հողում վսեմ գեղեցկություն փնտրել, սրը Տիբրի ու Առենոյի ափերին ոգեշնչել էր Միքելանջելոյին, Ռաֆայելին,

Ջովանի Բոլոնյային և Անդրեա դել Սարտոյին: Իհարկե, եթե նկարիչը կամ արձանագործը, ինչպես արդեն ասացինք, կարողանար բնորոշի ընտրել արխատակրատական միջավայրում, ապա անմիջապես կգտներ իր ստեղծագործութունների նախակերպարը, բայց Ստիքսի այս ափին մնացած սովերի նման նա բավարարվում էր միայն սքանչելի, ազնվազարմ կերպարանքներին նայելով, որոնք ճեմում էին Ելիսեյան դաշտերում, որտեղ նրա մուտքն արգելված էր: Այդ տեսարանը միայն կրթում էր նրա գեղարվեստական ճաշակը:

Տեղի ունեցավ այն, ինչ կանխատեսում էր Պրիմատիչոն: Բենվենուտոն աչքի անցկացրեց բնորոշիների բանակը, բայց նրանցից ոչ մեկը չէր մարմնավորում նրա մտահղացումն իրականացնելու համար անհրաժեշտ գծերը:

Այն ժամանակ նա Ֆերարայի կարդինալի իր իշևանած սլալատը կանչեց բոլոր հայտնի բնորոշիներին, որոնք սեանսի համար վերցնում էին մեկ էկյու, սակայն ոչ մեկը չարդարացրեց նրա հույսերը:

Բենվենուտոն արդեն բոլորովին հուսալքվել էր, բայց մի անգամ երեկոյան, երբ Փարիզում հանդիպած երեք հայրենակիցների՝ սենատոր Պյետրո Ստոյիի, նրա փեսա կոմս դ'Անդիյարի և հռչակավոր Ժան Պիկ Միրսնգուի եղբորսրգու՝ Գալեոտո Պիկոյի հետ ընթերելուց հետո վերադառնում էր տուն, մեն-մենակ քայլելով Պաի Շան փողոցներով, հանկարծ տեսավ գեղեցիկ, նազանի մի աղջիկ: Բենվենուտոյի սիրտն ուրախութունից տրոփեց. նա դեռևս չէր հանդիպել մի կնոջ, որն այդքան կենդանի մարմնավորեր «Ֆոնտենբլոյի հավերժահարս»-ի նրա երազը: Եվ Բենվենուտոն զնաց աղջկա հետևից: Աղջիկը բարձրացավ Եղինջի բլրակը, անցավ Սուրբ Օնորեի եկեղեցին և թեքվեց Հավալուանի փողոցը: Նա շրջվեց, համոզվելու համար, թե արդյոք անծանոթն իր հետևից չի՞ գալիս և, մի քանի քայլի վրա Բենվենուտոյին տեսնելով, արագորեն բացեց մի դուռ, ներս մտավ ու ծածկեց այն: Բենվենուտոն մոտեցավ տանը և նույնպես լայն բացեց դուռը: Նա ճիշտ ժամանակին ներս մտավ և

հասցրեց մխացող ճրագով լուսավորված սանգուղքի ոլորանում տեսնել իր հետապնդած անծանոթուհու շրջազգեստի բոլորածալը:

Բարձրացավ երկրորդ հարկ. սենյակ տանող դուռը կիսաբաց էր, և նա տեսավ աղջկան:

Իր գալու պատճառը չբացատրելով, ոչ մի բառ անգամ չասելով՝ Բենվենուտոն նախ և առաջ ցանկացավ հավաստիանալ, թե նրա մարմնի դժերը ներդաշնակո՞ւմ են արդյոք դիմագծերին և երկու-երեք անգամ պտտվեց զարմացած աղջկա շուրջը, ասես անտիկ արձան զննելիս լիներ, իսկ աղջիկն ակամա ենթարկվում էր նրան: Բենվենուտոն նույնիսկ ստիպեց աղջկան բարձրացնել ձեռքերը. այդպիսի կեցվածքով էր ցանկանում պատկերել «Տոնտենբլոյի հավերժահարս»-ին:

Բենվենուտոյի առաջ կանգնած աղջիկը քիչ էր նմանվում Կեբերային, ավելի քիչ՝ Դիանային, սակայն շատ էր հիշեցնում էրիզոնեին: Քանդակագործը հասկանում էր, որ անհնարին է համատեղել այդ երեք կերպարը, և որոշեց կանգ առնել Բաքոսի քրմուհու կերպարի վրա:

Իսկ հեշտասեր կնոջը պատկերելու համար աղջիկն, իսկապես, գլուտ էր. վառվուռն աչքերը, մարջանե շուրթերը, մարդարտաշար ատամները, նրբատաշ պարանոցը, բարակ ուսերը, բարակ իրանը, նրբագեղ կոճերն ու գաստակները, երկար մատները արիստոկրատական ինչ-որ երանգ էին տալիս նրան, և դա վերջնականապես համոզեց արձանագործին:

— Չեր անունն ի՞նչ է, օրիորդ,— վերջապես հարցրեց Բենվենուտոն, բառերն օտարերկրյա առոզանությամբ արտասանելով և մեծ զարմանք պատճառելով աղջկան:

— Կատերինա է, ձերդ արժանապատվություն,— պատասխանեց նա:

— Լավ: Օրիորդ Կատերինա,— շարունակեց Բենվենուտոն,— ահա ձեզ մի ոսկե էկյու ծառայության համար: Իսկ վաղը եկեք ինձ մոտ, Սուրբ Մարտենի փողոցը, Ֆերարալի

կարգինալի պալատը և նույնպիսի աշխատանքի համար կատանաք նույնքան:

Աղջիկը տատանվում էր. նա ենթադրեց, թե օտարերկրացին որոշել է կատակ անել: Բայց ոսկե էկյուն փայլվում էր, ապացուցելով, որ դա լուրջ խոսակցութիւն է և կորճ մտածմունքից հետո հարցրեց:

— Ժամը քանի՞սին:

— Առավոտյան ժամը տասին: Այդ ժամանակ դուք արդեն արթնացած կլինե՞ք:

— Անշուշտ:

— Ուրեմն, կսպասեմ ձեզ:

— Լավ, կդամ:

Բենվենուտոն գլուխ տվեց այնպես, ինչպես գլուխ կտար դքսուհուն, և պալատ վերադարձավ շատ ուրախ տրամադրութեամբ: Տանը նա այրեց մտացածին քանդակների իր բոլոր էսքիզներն ու նոր էսքիզ ուրվագծեց՝ շարժումով ու կյանքով լի:

Ճեպանկարն ավարտելով, Բենվենուտոն պատվանդանի վրա դրեց մի մեծ կտոր մոմ: Եվ քանդակագործի ձեռքի տակ մոմը մի ակնթարթում ընդունեց այն հավերժահարսի կերպարանքը, որի մասին երազում էր: Բենվենուտոն աշխատում էր այնքան ոգեշնչված, որ երբ առավոտյան Կատերինան եկավ արհեստանոց, շատ բան արդեն արված էր:

Արդեն ասացինք, որ Կատերինան չէր հասկացել Բենվենուտոյի դիտավորութիւնները. նա շատ զարմացավ, երբ արձանագործը նրա հետևից գուռը փակելով, ցույց տվեց արձանի ճեպանկարը և բացատրեց, թե ինչու է նրան հրավիրել:

Աղջիկը, հպարտ այն մտքից, որ մոդել է լինելու թագավորին ընծա տրվելիք աստվածուհու արձանի համար, ցած նետեց հագուստը և, արձանագործի ցուցմունքներին շապասելով, արձանի դիրքն ընդօրինակեց այնպիսի ճշգրտութեամբ ու նազանքով, որ Բենվենուտոն ճշաց ուրախութիւնից, երբ շրջվելով տեսավ, թե ինչքան հմայիչ ու անբռնագրոսիկ է նրա կեցվածքը:

Բենվենուտոն սիրում էր իր աշխատանքը: Ինչպես արդեն ասել ենք, նկարիչն այն ազնիվ ու մեծապես օժտված մարդկանցից էր, որոնք ոգևորությամբ ստեղծագործում են, տարվում աշխատանքով: Նա հանեց բաճկոնակը, արձակեց շապկի օձիքը, վեր քաշեց թևերն ու սկսեց ոչ այնքան ընդօրինակել, որքան վերակերտել բնությունն արվեստի մեջ: Թվում էր, թե արձանագործը Յուպիտերի նման կարող է կյանքի կոչել այն ամենը, ինչի ձեռք է տալիս: Կատերինան, որը սովոր էր գործ ունենալ շարքային մարդկանց հետ և ճանաչում էր միայն քաղքենիներին կամ երիտասարդ ազնվականներին, որոնց համար խաղալիք էր, նայում էր նկարչին հիացմունքով. նրա կուրծքն ալեկոծվում էր իր համար անհասկանալի հուզմունքից: Աղջկան թվում էր, թե ինքը հասել է նկարչի բարձրությանը, և նրա աչքերը փայլում էին. վարպետի ոգևորությունը հաղորդվում էր նաև բնորդուհուն:

Կատարահերթը տևեց երկու ժամ: Այնուհետև Բենվենուտոն վճարեց Կատերինային մի ոսկե էկյու և հրաժեշտ տալով նույնքան քաղաքավարությամբ, որքան նախօրեին, խնդրեց դալ հաջորդ օրը, նույն ժամին:

Կատերինան վերադարձավ տուն և ամբողջ օրն այլևս դուրս չեկավ: Առավոտյան նա արվեստանոց եկավ նշանակված ժամից տասը րոպե շուտ:

Կրկնվեց նախօրեի տեսարանը: Բենվենուտոն առաջվա պես համակված էր մեծ ոգեշնչմամբ և նյութը նրա ձեռքի տակ կյանք էր առնում, ինչպես Պրոմեթեոսի ձեռքի տակ: Բաքոսի քրմուհու դեմքն արդեն քանդակված էր. թվում էր, թե անձև զանգվածի միջից հառնում է կենդանի մի դեմք: Կատերինան ժպտում էր իր երկնաբնակ քրոջը, որը ստեղծված էր ըստ նրա պատկերի ու նմանության. նա երբեք այդքան երջանիկ չէր եղել և տարօրինակն այն է, որ չէր կարողանում հասկանալ, թե ինչու է այդքան երջանիկ զգում իրեն:

Առավոտյան արձանագործն ու բնորդուհին հանդիպեցին նույն ժամին, և Կատերինան հանկարծ շիկնեց շփոթմուն-

քից, որն առաջ անժանոթ էր նրան: Խեղճ աղջիկը սիրահարվել էր, իսկ սիրո հետ ծնվել էր և պարկեշտութունը:

Հետևյալ օրը գործն այնտեղ հասավ, որ արձանագործը ստիպված էր հիշեցնել բնորդուհուն, թե քանդակում է ոչ Մեդիչիի Վեներա, այլ էրիզոնն՝ կրքից ու գինուց արբեցած: Սակայն պետք էր գինվել համբերությամբ: Նա պատրաստվում էր երկու օր հետո ավարտել իր գործը:

Երկու օրն անցավ: Իսկ երեկոյան, վերջին անգամ հատիչն իր ստեղծագործությանը հպելով, Բենվենուտոն շնորհակալութուն հայտնեց Կատերինային սիրալիրության համար և տվեց նրան շորս ոսկե էկյու. բայց ոսկեդրամները դուրս սահեցին աղջկա ձեռքից ու ընկան հատակին: Ամեն ինչ վերջացած էր խեղճ աղջկա համար. այսուհետև նա վերադառնում էր նախկին ապրելակերպին. սակայն այն օրից, ինչ ոտք էր գրել քանդակագործի արվեստանոցը, նախկին կյանքն ատելի էր դարձել նրա համար: Բենվենուտոն, չկասկածելով անգամ, թե ինչ է կատարվում դժբախտ աղջկա հոգում, հավաքեց շորս էկյուն, կրկին մեկնեց Կատերինային և ձեռքը սեղմելով ասաց, որ եթե երբևէ օգնության կարիք ունենա, թող դիմի միմիայն իրեն: Հետո Բենվենուտոն դնաց արվեստանոց, որտեղ աշխատում էին ենթավարպետներն ու կանչեց Ասկանիոյին, շտապելով ցույց տալ նրան իր ավարտած ստեղծագործությունը:

Մենակ մնալով, Կատերինան համբուրեց բոլոր գործիքները, որոնցով աշխատում էր Բենվենուտոն, և արցունք թափելով, դնաց:

Հետևյալ առավոտ Կատերինան կրկին եկավ արվեստանոց, երբ Բենվենուտոն մենակ աշխատում էր այնտեղ: Նրան տեսնելով, արձանագործը շատ զարմացավ, բայց մինչև կհարցնեք, թե ինչու է հայտնվել, աղջիկը ծնկի իջավ նրա առաջ ու ասաց, որ եկել է նրա սպասուհին դառնալու: Բենվենուտոն արվեստագետի սիրտ ունի, իսկ այդ նշանակում է, որ կարող էր ամեն ինչ ղգալ ու ամեն ինչ հասկանալ: Նա կռահեց, թե ինչ է կատարվում խեղճ աղջկա հոգում, ոտքի կանգնեցրեց նրան ու համբուրեց ճակատը:

Այդ բոլորից Կատերինան ընդմիշտ մնաց արվեստանոցում. նրա մանկական կենսուրախութիւնն ու անդադրում շարաճճիութիւններն աշխուժութիւն ու զվարթութիւն բերին արվեստանոց: Աղջիկը պարզապէս անհրաժեշտութիւն դարձավ բոլորի համար, իսկ ամենից շատ՝ Բենվենուտոյի: Նա վարում էր տնտեսութիւնը, տնօրինում ամեն բան. մերթնախատում էր Ռուպերտային, մերթ փաղաքշում նրան, և ծեր սպասուհին, որը վախով դիմավորեց Կատերինային, ի վերջո, բոլորի նման, սիրեց նրան:

էրիզոնեն այդ ամենից միայն շահեց: Հիմա Բենվենուտոն ձեռքի տակ ուներ իր բնորդուհին և արձանն սվարտեց այնպիսի ջանասիրութեամբ, որպիսին մինչև այժմ չէր ներդրել իր ստեղծագործութիւններից և ոչ մեկի մեջ: Նա արձանը տարավ Ֆրանցիսկ I թագավորի մոտ, որը սքանչացավ և հանձնարարեց Բենվենուտոյին արծաթից ձուլել այն: Թագավորը երկար զրուցում էր ոսկերչի հետ, հարցուփորձ անում, թե հարմա՞ր է արդյոք արվեստանոցը, որտե՞ղ է գտնվում և կա՞ն այնտեղ արվեստի գործեր: Այնուհետև նա հրաժեշտ տվեց Բենվենուտո Չելլինիին, որոշելով մի առավոտ անակնկալ գնալ նրա արվեստանոցը, բայց իր մտադրութիւնը ոչ ոքի չհայտնեց:

Իսկ հիմա վերադառնանք մեր սկսած պատմութեանը և տեղափոխվենք արվեստանոց, որտեղ աշխատում էր Բենվենուտոն, երգեր էր երգում Կատերինան, երազում էր Ասկանիոն, և աղոթք էր անում Պագոլոն:

Այն օրվա հաջորդ առավոտը, երբ Ասկանիոն այնքան ուշ վերադարձավ Նելի ամրոցի մերձակայքում կատարած զբոսանքից, հանկարծ դարպասն ուժգնորեն բախեցին: Սպասուհի Ռուպերտան իսկույն ոտքի կանգնեց, որ գնա բացի, բայց Սկոցոնեն (եթե ընթերցողը հիշում է, Բենվենուտոն այդպէս էր կոչել Կատերինային) վայրկենաբար դուրս թռավ սենյակից:

Մի բոլոր անց լսվեց նրա ոչ այն է ուրախ, ոչ այն է վախեցած ձայնը:

— Պարո՞ն ուսուցիչ: Տե՛ր աստված, ախր սա հենց ինքը

Թագավորն է... Թագավորն անձամբ եկել է արվեստանոց
ձեզ տեսնելու:

Եվ բոլոր դռները կրնկի վրա բացելով, գունաթափ, գո-
ղացող Սկոցոնեն հայտնվեց արվեստանոցի շեմին, որտեղ
Բենվենուտոն աշխատում էր՝ շրջապատված աշակերտներով
ու ենթավարպետներով:

ԳԼՈՒԾ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Հանճարը և թագավորական իշխանությունը

Եվ իրոք, Սկոցոնեի հետևից բակ մտավ թագավոր Ֆրան-
ցիսկ I-ը՝ ամբողջ շքախմբով: Նա հանդիսավորությամբ
առաջ էր շարժվում դքսուհի դ'Էտամպի թևը մտած: Նրանց
հետևից գալիս էին Նավարայի թագավորը գոֆինայի՝ Եկա-
տերինա Մեդիչիի հետ: Դոֆինը, հետագայում Հենրիխ II
թագավորը, գալիս էր հորաբրոջ՝ Մարգարիտա դե Վալուայի՝
Նավարայի թագուհու հետ: Նրանց ուղեկցում էին համարյա
բոլոր պալատականները:

Բենվենուտոն ընդառաջ գնաց հյուրերին և, ամենևին
չշփոթվելով ու չհուզվելով, ընդունեց թագավորներին, ար-
քայազներին, ազնվականներին ու պալատական տիկնանց,
ինչպես ընդունում են բարեկամներին: Բայց հյուրերի թվում
էին Ֆրանսիայի ամենաբարձրաստիճան պետական գործիչ-
ները, և աշխարհի ամենափայլուն գեղեցկուհիները: Մարգա-
րիտան հմայում էր, տիկին դ'Էտամպը՝ հիացնում, Եկատե-
րինա Մեդիչին՝ ապշեցնում, Դիանա դե Պուատյեն՝ շլաց-
նում: Բայց այդ ամենը Բենվենուտոյի համար նորություն
չէր, որովհետև Իտալիայում նա սերտ հարաբերությունների
մեջ էր եղել հնագույն տոհմերի ամենափայլուն ներկայա-
ցուցիչների՝ XVI դարի ազնվականների հետ և, որպես Մի-
քելանջելոյի սիրելի աշակերտ, սովոր էր թագավորների ըն-
կերակցությանը:

— Թույլ տվեք, տիկին, հիանալ ոչ միայն ձեզնով, այլև՝ արվեստի գործերով, — ասաց Ֆրանցիսկ I-ը, գիմելով դքսուհի դ'էտամպին, որն ի պատասխան ժպտաց:

Աննա դե Պիսլեն, դքսուհի դ'էտամպը, որին հաջողվել էր գրավել թագավորի բարեհաճ ուշադրությունը, երբ վերջինս վերադարձել էր իսպանական գերությունից, և նրա սրտից դուրս մղել կոմսուհի դե Շատոբրիանին, այն ժամանակ իրոք որ գտնվում էր իր արքայական գեղեցկության ծաղկունքի շրջանում: Նա վայելչակազմ էր, բարակիրան և հպարտորեն, ինչ-որ կատվային նազանքով բարձրացնում էր իր շքնաղ գլուխը. բայց չէ՞ որ նազանքը հատուկ է ոչ միայն կատվին, այլև՝ հովազին. ի դեպ, նա հովազ էր հիշեցնում նաև իր փոփոխամտությունը ու անկշտում ազատությանը: Թագավորի հոմանունին կարողանում էր միաժամանակ այնպիսի անկեղծություն, այնպիսի անմեղություն խաղալ, որ մոլորության մեջ էր դցում ամենակասկածամիտ մարդկանց: Արտակարգ փոփոխուն ու նենգ էր այդ կնոջ դեմքը՝ նման մերթ շերմոնիային¹, մերթ Գալատեային². նրա գունատ շուրթերին խաղում էր մերթ հրապուրիչ, մերթ սոսկալի ծպիտ, իսկ աչքերը, որոնք երբեմն շատ քնքուշ էին, հանկարծ սկսում էին շանթեր արձակել ու բոցավառվել զայրույթից: Նա սովորություն ուներ այնքան տամուկ բարձրացնել ու խոնարհել աչքերը, որ անհնարին էր հասկանալ՝ նրա հայացքում քնքշություն է պահված, թե սպառնալիք: Այդ մեծամիտ ու իշխանատենչ կինը նվաճեց Ֆրանցիսկ I-ին, հմայեց նրան: Դքսուհին ամբարտավան էր ու նախանձ, հնարագետ ու ծածկամիտ:

— Վաղուց ցանկանում էի այցելել ձեզ, Բենվենուտո, եթե չեմ սխալվում, երկու ամիս է ինչ ոտք եք դրել մեր

¹ Լեոմոնիա — Ֆրանսիացի դասական դրամատուրգ Ժան Թասինի «Անդրոմաքե» ողբերգության (1667 թ.) գործող անձ: Խանդից նա սպանել է տալիս իր փեսացուին՝ Պիրոսին:

² Գալատեա (հուն. դիցաբ.) — շքնաղ հավերժահարս, որին սիրահարվեց միաշքանի կիկլոպ հովիվ Պոլիփեմոսը:

Թագավորութիւնը, բայց տաղտկալի գործերն ու հոգսերը խանգարում էին ինձ այդ ամիսների ընթացքում խորհել արվեստի վեհ նպատակների մասին: Ի դեպ, մեղավորը մեր զարմիկն է, մեր եղբայր կայսրը. նա ոչ մի բոպե հանդիսա չի տալիս մեզ,— ասաց Ֆրանցիսկը:

— Եթե կամենաք, ձերդ մեծութիւն, ես կգրեմ կայսրին ու կաղերսեմ, որ թույլ տա ձեզ արվեստի մեծ բարեկամը մնալու, քանզի դուք արդեն ապացուցել եք նրան, որ մեծ զորավար եք:

— Ինչպես, դուք ճանաչո՞ւմ եք Կարլոս V-ին,— զարմացավ Նավարոյի թագավորը:

— Այո, սրբ, շորս տարի առաջ Հռոմում պատիվ ունեցա սլատրաստածս մաշտոցը նորին սրբազան մեծութեանն ընծայելու. ընդ որում ես մի քանի բառ ասացի և նա ունկնդրեց հույժ բարեհաճ:

— Եվ ի՞նչ ասաց ձեզ նորին մեծութիւնը:

— Որ դեռ երեք տարի առաջ ճանաչում էր ինձ. պապի որսումուճանի վրա տեսել էր նրբանախշ կոճակներ, որոնք պատիվ են բերում իմ վարպետութեանը:

— Օ՛, այո, տեսնում եմ, որ թագավորներն իրենց գովասանքներով ձեզ երես են տվել,— նկատեց Ֆրանցիսկ I-ը:

— Իրավացի եք, ձերդ մեծութիւն, ես երջանիկ մարդ եմ, իմ սակզագործութիւններն արժանացել են կարդինալների, թագածառանդների, արքայազների ու թագավորների գովասանքին:

— Հապա ցույց տվեք ձեր հրաշալի ստեղծագործութիւնները: Եվ տեսնենք, թե ես ավելի պահանջկոտ դատավոր չե՞մ լինի:

— Ես շատ քիչ ժամանակ ունեի, սրբ: Այնուհանդերձ, ահա արծաթե մի թաս և սկահակ, որոնց վրա հիմա աշխատում եմ: Բայց սրանք, թերևս, արժանի չեն ձերդ մեծութեան ուշադրութեանը:

Հինգ բոպե թագավորը լուռ զննում էր Չելլինիի աշխատանքները: Թվում էր, թե հրաշագեղ ստեղծագործութիւնները մոռացնել են տվել ստեղծագործողին: Նկատելով, որ

կանայք հետաքրքրասիրութիւնից խմբվել են իր շուրջը, Ֆրանցիսկ I-ը բացականչեց.

— Տեսեք, տիկնայք, ախր սա պարզապես հրաշք է: Սկահակի ձեռն այնքան նոր ու համարձակ է: Տե՛ր աստված, որքան նուրբ, որքան վարպետորեն են արված խորաքանդակներն ու բարձրաքանդակները: Առանձնապես հիացմունք է պատճառում այս դժերի գեղեցկութիւնը. տեսնո՞ւմ եք ինչքան բազմազան ու բնական են մարդկանց կեցվածքները: Ապա նայեք այս աղջկան... Արձանագործը զարմանալիորեն ճիշտ է հաղորդել նրա փութանցիկ շարժումը: Թվում է, աղջիկը ուր որ է կթափահարի ձեռքը: Ճիշտն ասած, հին ժամանակներում անգամ այսպիսի սքանչելի գործեր չեն ստեղծել: Մտաբերում եմ անտիկ վարպետների և Իտալիայի անվանի արձանագործների ստեղծագործութիւնները... Չէ՛, ոչ մի բան ինձ վրա այսպիսի ուժեղ տպավորութիւն չի գործել: Ահա, նայեք այս սքանչելի փոքրիկին. մանկիկը ծածկված է ծաղիկներով, շարժում է տոտիկը: Այս ամենի մեջ այնքան կյանք կա, նրբագեղութիւն...

— Դուք մե՛ծ թագավոր եք, սրբ,— բացականչեց Բենվենուտոն:— Մյուսներն ինձ գովաբանում էին միայն, իսկ դուք հասկանում եք:

— Մեկ ուրիշ բան էլ ցույց տվեք,— մի տեսակ անհաջ անհամբերությամբ ասաց թագավորը:

— Ահա լեղային ու կարապին պատկերող մոդելը: Ես պատրաստել եմ սա կարդինալ Գաբրիել Չեզարինիի համար: Ահա կնիքը, որի վրա փորանկարել եմ սուրբ Հովհաննես Մկրտիչի և սուրբ Ամբրոջիոսի պատկերները: Ահա արծնապատ տապան...

— Մի՞թե դուք մեղալ եք կտրում,— հարցրեց տիկին գ'էտամպը:

— Միլանցի Կավադոնեի նման, տիկին:

— Դուք ոսկին արծնապատո՞ւմ եք,— բացականչեց Մարգարիտան:

— Ֆլորենտացի Ամերիգոյի նման:

— Կնիքնե՞ր եք փորագրում,— տեղեկացավ Եկատերի՛նան:

— Պերուզցի Լանտիզկոյի նման: Գուցե կարծում եք, տիկին, որ իմ տաղանդը հազիվ կարող է միայն ոսկե մանրանուրբ զարդեր պատրաստել և արծաթադրամ հատել: Փառք աստծո, ձեռքիցս ամեն ինչ գալիս է: Ես վատ չգիտեմ ինժեներական արվեստը, երկու անգամ կասեցրել եմ թշնամու հարձակումը Հոոմի վրա, գրում եմ ոչ վատ սոնետներ, և դուք, ձերդ մեծություն, կարող եք ներբող պատվիրել ինձ: Ես ձեր պատվին այնպիսի գովերգ կհորինեմ, որը, հիրավի, չի զիջի Կլեման Մարոյի ներբողներին: Հայրս երաժշտություն սովորեցրեց ինձ ճիպտի ուժով: Այդ մեթոդն օգտակար եղավ ինձ համար. ես նվագում եմ ֆլեյտա և կոռնետ այնքան լավ, որ Կլիմենտ VII պապը, երբ ես քսանչորս տարեկան էի, ինձ ընդունեց իր նվագախումբը: Բացի այդ, ես գտել եմ վառող ստանալու միջոցը, կարողանում եմ հիանալի պատրույգավոր հրացաններ ու վիրահատական գործիքներ պատրաստել: Իսկ եթե դուք, ձերդ մեծություն, պատերազմ սկսեք, ապա բարեհաճեցեք կանչել ինձ: Եվ կտեսնեք, որ պետք կգամ ձեզ. ես շեշտակի կրակում եմ արկերուզից և կարողանում եմ կուլերինով¹ դիպուկ նշան բռնել: Որսի ժամանակ պատահել է, որ մի օրում քսանհինգ սիրամարդ եմ խփել: Հրետանային մարտի ժամանակ ես կայսրին ազատեցի Օրանի դուրսից, իսկ ձերդ մեծությանը՝ կոնետարլ Բուրբոնից²: Ինչպես տեսնում եք, դավաճանների նկատմամբ ներողամիտ չեմ:

— Իսկ ինչո՞վ եք ավելի շատ հպարտանում,— ընդհա-

¹ կուլերինա— հին թնդանոթ

² կոնետարլ— թագավորական զորքերի գլխավոր հրամանատար միջնադարյան Ֆրանսիայում: Տվյալ գեպքում խոսքը կոնետարլ Շարլ դե Բուրբոնի մասին է: Թագավոր Ֆրանցիսկ I-ը վախենում էր նրա քաղաքական մրցակցությունից և փորձեց իր մոր՝ Լուիզա Սավոյացու օգնությամբ խլել կոնետարլից նրա տիրություններից մի մասը: Այդ ժամանակ կոնետարլը զաղտնի պայմանավորվեց Կարլոս V-ի հետ, փախավ նրա մոտ և սկսեց պատերազմել իր հայրենիքի դեմ, դավաճանի խայտառակ ճանաչում ձեռք բերելով

տեց նրան երիտասարդ դոֆինը,— որ սպանել էք կոնետաբլիֆօն, թե՞ քսանհինգ սիրամարդ էք խփել:

— Ես չեմ հպարտանում ո՛չ մեկով, ո՛չ մյուսով, մոնսենյոր... Ճարպկությունը, ինչպես և մյուս բոլոր տաղանդները, մեզ շնորհել է աստված, և ես դրսևորել եմ դրանք, ուրիշ ոչինչ:

— Բայց ես չգիտեի, որ այդպիսի ծառայություն էք մատուցել ինձ,— ասաց թագավորը:— Ուրեմն, դո՞ւք էք սպանել կոնետաբլ Բուրբոնին: Իսկ այդ ինչպե՞ս պատահեց:

— Տեր աստված, շատ հասարակ: Կոնետաբլի բանակն անսպասելիորեն մոտեցավ Հոտմին և սկսեց գրոհել բերդի պատնեշը: Ես և ընկերս գնացինք մարտը տեսնելու: Տնից դուրս գալիս ես, պատահմամբ, վերցրի արկերուզս: Հասանք հողապատնեշին: Տեսնում եմ այնտեղ անելիք չկա: «Բայց որ եկել եմ, մի բան պետք է անեմ»,— անցավ մտքովս: Եվ ահա արկերուզս ուղղեցի այնտեղ, որտեղ ավելի հոծ ու խիտ էին շարքերը, նշան բռնեցի բարձրահասակ մի զինվորի, որը մի զուխ բարձր էր մյուսներից, ու կրակեցի: Նա ցած ընկավ. կրակոցն իսկույն շփոթություն առաջացրեց թշնամու շարքերում: Պարզվեց, որ ես սպանել եմ Բուրբոնին: Նա, ինչպես հետո իմացա, բոլորից բարձրահասակն էր:

Մինչդեռ Բենվենուտոն անհող ու անկաշկանդ պատմում էր այդ բոլորը, դամաների և ազնվականների շրջանը հետքաշվեց. բոլորը հարգանքով, համարյա վախով նայում էին հերոսին, որի մտքով անգամ չէր անցնում, թե ինքը սխրագործություն է կատարել: Միայն Ֆրանցիսկ 1-ը շարունակում էր կանգնած մնալ Չելլինիի կողքին:

— Ուրեմն, սիրելի բարեկամ,— ասաց նա,— տեսնում եմ, որ մինչև ձեր տաղանդն ինձ նվիրաբերելը, դուք ծառայություն էք մատուցել ինձ խիզախությամբ:

— Ձերդ մեծություն,— ժպտալով պատասխանեց Բենվենուտոն,— ինձ թվում է, որ ծնվածս օրից ես ձեր ծառան եմ: Մի դեպք իմ մանկությունից ստիպում է այդպես մտածել: Ձեր զինանշանի վրա, կարծեմ, սալամանդը է պատկերված, այնպես չէ՞:

— Այո, և «Nutriseoet extinguo»¹ նշանաբանը:

— Այսպես ահա... Մի անգամ, երբ հինգ տարեկան էի, հորս հետ նստած էի վերնասենյակում, որտեղ մինչ այդ մոխրաջրով սպիտակեղեն էին եռացրել: Օջախում դեռ վառվում էին կաղնե փայտերը, դրսում սառնամանիք էր: Ես նայեցի կրակին ու բոցեղեն լեզուների մեջ նկատեցի մոզեսի նման ինչ-որ արարած: Թվում էր, թե մոզեսն ուրախ ցատկոտում էր թե՛ կրակի մեջ: Ես այդ մասին ասացի հորս, իսկ նա... խնդրում եմ ներող լինել, բայց այդպիսին է մեր վայրերի բիրտ սովորությունը... մի շառաշուն ապտակ հասցրեց ինձ և քնքշորեն ասաց. «Դու մեղք չունես, տղաս. ես քեզ ապտակեցի, որպեսզի միտդ պահես հրակեզ սալամանդրին: Չեմ լսել, որ մեկն ու մեկին բախտ վիճակված լինի տեսնել նրան»: Չե՞ք կարծում, արդյոք, ձերդ մեծություն, որ դա նախանշան էր: Ես սնահավատ եմ: Քսան տարեկանում պատրաստվում էի մեկնել Անգլիա, բայց դրվագիչ Պյետրո Տորեչիանոն, որի հետ պետք է մեկնեի, պատմեց, թե ինչպես մի անգամ, դեռևս երեխա ժամանակ, ապտակել է Միքելանջելոյին, արհեստանոցում կովի բռնվելով նրա հետ: Եվ ամեն ինչ վերջացավ. ոչ մի դեպքում ես չէի գնա մի մարդու հետ, որը ձեռք էր բարձրացրել մեծ քանդակագործի վրա: Ես մնացի Իտալիայում, իսկ Իտալիայից ընկա ոչ թե Անգլիա, այլ՝ Ֆրանսիա:

— Ֆրանսիան հպարտ է, որ դուք նախապատվությունն իրեն տվիք, Բենվենուտո: Եվ մենք ամեն բան կանենք, որպեսզի հայրենիքի կարոտը չբաշխեք:

— Օ՛, իմ հայրենիքն արվեստն է, որը միշտ ինձ հետ է, իսկ տիրակալս նա է, ով պատվիրում է դրվագել ամենահարուստ գավաթը:

— Հիմա դուք որե՛ք մտահղացում ունե՞ք:

— Օ՛, այո, ձերդ մեծություն: Ես ցանկանում եմ կերտել Քրիստոսի կերպարը, բայց ոչ խաչված Քրիստոսի, այլ աստվածային փառքի փայլով պսակված և, եթե հնարավոր

¹ «Սնուցանում եմ ու ոչնչացնում» (լատ.):

լինի, արտահայտել անպատմելի ամբողջ իմաստությունը, որը նա բացահայտեց ինձ:

— Մի՞թե դուք տեսել եք ոչ միայն երկրային թագավորներին, այլև՝ երկնային թագավորին, — ծիծաղելով բացականչեց Մարգարիտան, որն ամեն ինչ կասկածի տակ էր առնում:

— Այո՛, տիկին, — մանկական պարզամտությամբ պատասխանեց Բենվենուտոն:

— Ուրեմն, այդ մասին էլ պատմեք մեզ, — խնդրեց Նավարայի թագուհին:

— Հաճույքով, տիկին, — մտերմաբար ասաց Բենվենուտո Չելլինին, բնավ չմտածելով, թե մեկն ու մեկը կարող է կասկածի տակ առնել իր խոսքերի ճշմարտացիությունը: — Դրանից քիչ առաջ ես տեսա սատանային՝ իր բոլոր արքայականների հետ. նրան կանչեց իմ ընկերը՝ քահանա դիագուշակը: Սատանան հայտնվեց մեզ Կոլիզեյում, և մենք մեծ դժվարությամբ ազատվեցինք նրանից: Բայց դժոխքի ծնունդի սոսկալի հուշն իսպառ ջնջվեց, երբ ի պատասխան իմ կաթոգին աղերսանքի՝ բանտարկության մեջ ինձ հոգեկան ուժ տալու, հայտնվեց փրկարար աստվածն արևի ճաճանչների մեջ՝ լուսապսակը դլխին:

— Եվ դուք վստահ եք, որ իրոք... — հարցրեց թագուհին, — միանգամայն վստահ եք, որ ձեզ հայտնվեց Քրիստոսը:

— Լիովին վստահ եմ, տիկին:

— Այդ դեպքում, Բենվենուտո, պալատի մատուռի համար պատրաստեք Քրիստոսի անդրին, — բարեհոգությամբ ասաց Ֆրանցիսկ I-ը:

— Չերդ մեծություն, ողորմած եղեք, ուրիշ բան պատվիրեք: Թողնենք այդ գործը:

— Բայց ինչո՞ւ:

— Որովհետև ուխտ եմ արել աստծուն՝ այդ ստեղծագործությունը միայն նրան նվիրել:

— Սքանչելի է: Ուրեմն, Բենվենուտո, ինձ հարկավոր է սեղանի տասներկու ջահ:

— Օ՛, այդ ուրիշ... Ես ուրախութեամբ կկատարեմ ձեր կամքը, սրբ:

— Եվ ոչ թե պարզապես ջահեր, այլ՝ արծաթաձուլլ արձաններ:

— Չերդ գերազանցություն, դա սքանչելի կլինի:

— Այո, տասներկու արձան՝ իմ բարձրության. վեց աստված և վեց աստվածուհի:

— Կլինեն ձեր բարձրության, սրբ:

— Դուք պատվիրում եք ամբողջ մի պոեմ,— ասաց տիկին դ՛էտամպլը:— Սքանչելի, զարմանա՛լի: Այդպես չէ՞, պարոն Բենվենուտո:

— Ինձ երբեք ոչինչ չի զարմացնում, տիկին:

— Իսկ ես կզարմանայի,— նրա պատասխանից խոցված ասաց դքսուհին,— եթե որևէ արձանագործ, անտիկ քանդակագործներից բացի, այդպիսի գործ ստեղծեր...

— Այնուամենայնիվ, հուսով եմ, որ կկատարեմ պատվերն անտիկ վարպետներից ոչ պակաս,— սառնասրտորեն առարկեց Բենվենուտոն:

— Դա սնապարծություն չէ՞, վարպետ Բենվենուտո:

— Ես երբեք չեմ պարծենում, տիկի՛ն,— ասաց Չելլինին, շեշտակի նայելով տիկին դ՛էտամպլին:

Եվ գոռոզ դքսուհին ակամա խոնարհեց աչքերը, շղիմանալով նրա հաստատակամ, խաղաղ հայացքին, որի մեջ նույնիսկ զայրույթ չկար: Աննան անբարյացակամութեամբ լցվեց դեպի Չելլինին. նա զգաց նկարչի հոգևոր գերազանցությունը, թեև չէր կարողանում հասկանալ, թե ինչում է նրա ուժը: Մինչև հիմա դքսուհին ենթադրում էր, թե գեղեցկությունն ամենազոր է. նա մոռացել էր հանճարի զորության մասին:

— Բայց ինչպիսի՞ գանձեր են պետք ձեր տաղանդը վարձատրելու համար,— թունտո հարց տվեց դքսուհին:

— Անշուշտ, իմ գանձերը քիչ են,— նկատեց Ֆրանցիսկ I-ը:— Ի դեպ, Բենվենուտո, դուք կարծեմ ստացել եք միայն հինգ հարյուր ոսկե էկյու: Կբավարարի՞ ձեզ արդյոք այն աշխատավարձը, որը վճարում էինք մեր արքունիքի նկարիչ

Լեոնարդո դա Վինչիին՝ տարեկան յոթ հարյուր ոսկի: Բացի այդ, իմ անձնական բոլոր պատվերների դիմաց կվճարվի առանձին:

— Չերդ մեծություն, այդպիսի առատաձեռնությունն արժանի է Ֆրանցիսկ I-ի նման թագավորին և, համարձակվում եմ ասել, Չելլինիի նման արձանագործին: Եվ, այնուամենայնիվ, համարձակվում եմ դիմել ձերդ մեծությանը ևս մի խնդիրքով:

— Նախապես խոստանում եմ կատարել ձեր խնդիրքը, Բենվենուտո:

— Չերդ մեծություն, իմ արվեստանոցը անհարմար է ու նեղվածք: Աշակերտներիցս մեկը մի շենք է գտել, որը շատ ավելի հարմար է խոշորագույն գործեր ստեղծելու համար, որոնք գուցե կպատվիրեք ինձ, տե՛ր իմ: Այդ շենքը պատկանում է ձերդ մեծությանը: Դա նեղի Մեծ ամրոցն է, որը Փարիզի պրևոյի տնօրինության տակ է, բայց պրևոն այնտեղ չի ապրում, այլ զբաղեցնում է նեղի Փոքր ամրոցը միայն, որը հաճույքով կզիջեմ նրան:

— Թող այդպես լինի, Բենվենուտո,— ասաց Ֆրանցիսկ I-ը:— Տեղավորվեք նեղի Մեծ ամրոցում և, երբ ցանկություն ունենամ ձեր հետ զրուցելու կամ ձեր գլուխգործոցներով հիանալու, հարկ կլինի անցնել միայն Սենի կամուրջը:

— Ինչպես, ձերդ մեծություն,— ընդմիջեց թագավորին տիկին դ'էտամպը,— դուք առանց որևէ պատճառի զրկում եք ազնվականին՝ ինձ նվիրված մարդուն, ամրոցի տնօրինության իրավունքի՞ց:

Բենվենուտոն նայեց նրան, և Աննան երկրորդ անգամ խոնարհեց աչքերը, շղիմանալով նրա զարմանալիորեն խորաթափանց, ուշադիր հայացքին:

Իսկ Չելլինին շարունակեց նույն բարեհոգի պարզամտությամբ, ինչպես պատմում էր իր տեսիլքների մասին.

— Բայց չէ՞ որ ես էլ ազնվական ծագում ունեմ, տիկին: Իմ սոհմը սերում է անվանի մարգուց՝ Հուլիոս Կեսարի ամենազլխավոր զորավարից, որի անունը Ֆիորինո էր, ծնունդով՝ Չելլինոյից, որը գտնվում է Մոնտեֆիասկոնեի

մերձակայքում: Նրա անունով է կոչված Ֆլորենցիան, իսկ ձեր պրևոյի և նրա նախնիների անունով, եթե հիշողութունս չի դավաճանում, դեռ ոչինչ չի կոչված: Սակայն,— շարունակեց Բենվենուտոն, շրջվելով դեպի Ֆրանցիսկ 1-ը, ըստ որում նրա աչքերի արտահայտությունն ու ձայնի երանգն անմիջապես փոխվեցին,— գուցե ես շատ հանդուգն եմ... գուցե ատելի դարձա իշխանավորների համար և դա, շնայած ձեր դ մեծության հովանավորությանն, ի վերջո, կկործանի՞ ինձ: Ասում են, որ Փարիզի պրևոն մի ամբողջ բանակ ունի...

— Ինձ պատմել են,— ընդհատեց նրան թագավորը,— որ մի անգամ Հոռմում ումն Չելլինի, սակերիչ, չի ցանկացել մոնսենյոր Ֆարնեզեի՝ այն ժամանակ կարդինալի, այժմ՝ պապի պատվիրած արժաթե վաղն առանց վճարի տալ նրան:

— Բացարձակապես ճիշտ է, ձեր դ մեծութուն:

— Ասում են նաև, որ կարդինալի ամբողջ պահակախումբը հայտնվել է սուսերները մերկացրած ու հարձակվել արվեստանոցի վրա՝ վազը բռնազրավելու համար:

— Դա էլ բացարձակ ճշմարտություն է:

— Բայց այդ նույն Չելլինին, դոան հետևը պահված, մուշկետը ձեռքին, խիզախորեն պաշտպանվում էր և փախուստի մատնեց մոնսենյորի թիկնապահներին. իսկ առավոտյան կարդինալը վճարեց նրան լրիվ արժեքը:

— Այդ բոլորը բացարձակ ճշմարտություն է, ձեր դ մեծութուն:

— Գուցե հենց դո՞ւք եք այն Չելլինին:

— Այո, սիր, հենց ես եմ և, եթե ձեր դ մեծութունն ինձ շորկի իր բարյացակամութունից, ես ոչ մի վախ չունեմ:

— Համարձակորեն հառա՛ջ,— բացականչեց թագավորը հազիվ նկատելի ժպիտով.— Չնահանջեք, որովհետև դուր ազնվական եք:

Տիկին դ'էտամպլը լռեց, սակայն այդ սյահից ատեց Չելլինին՝ վիրավորված կնոջ անհաշտ ատելությամբ:

— Ձեր դ մեծութուն, պետք է ձեզնից խնդրեմ վերջին ողորմածությունը,— կրկին խոսեց Չելլինին.— Չեմ համարձակվում ներկայացնել ձեզ բոլոր ենթավարպեաներիս, տա-

սը հողի են՝ ֆրանսիացիներ և գերմանացիներ, սքանչելի մարդիկ են, ճարտար օգնականներ: Բայց երկու աշակերտի՝ Պագոլոյին և Ասկանիոյին, ես բերել եմ Իտալիայից: Մոտեցեք, Պագոլո, գլուխներդ բարձր, ուրախ նայեք: Ոչ թե լրկտիաբար, այլ այնպես, ինչպես նայում են ազնիվ մարդիկ, որոնք կարմրելու ոչինչ չունեն, քանի որ վատ արարքներ չեն կատարել... Պագոլոյին թերևս պակասում է հնարամտությունը, ձերդ մեծություն, ինչպես նաև՝ ոգեշնչումը, սակայն նա կատարող ու բարեխիղճ վարպետ է. աշխատում է դանդաղ, բայց լավ, հիանալիորեն հասկանում է իմ մտահղացումներն ու ճշտորեն ի կատար է ածում... Ահա և Ասկանիոն, աղնիվ մի պատանի, իմ թանկագին աշակերտը, իմ սիրելին: Նա, անկասկած, օժտված չէ ստեղծագործական զորեղ երևակայությամբ, որի կամքով խորաքանդակի վրա բախվում ու զարնվում են թշնամական երկու բանակի ջուկատները, կամ սկահակի մեջ են մխրճվում առյուծի հուժկու ճիրանները, վագրի ժանիքները: Ո՛չ, երևակայությունը չի թելադրի նրան հրաշալի, կախարդական մի կերպար. ո՛չ հրեշավոր քիմիաներ, ոչ էլ հեքիաթային թևավոր վիշապներ, բայց նրա հողին, որը նույնքան գեղեցիկ է, որքան մարմինը, բնազդաբար ընկալում է, եթե կարելի է այդպես արտահայտվել, աստվածային իդեալը: Խնդրեք Ասկանիոյին ստեղծել հրեշտակ կամ հավերժահարսերի մի խումբ, և ոչ ոք նրա հետ համեմատվել չի կարող, այնքան նրբագեղություն, բանաստեղծություն, անկրկնելի հմայք կա նրա ստեղծագործություններում: Երբ աշխատում եմ Պագոլոյի հետ, ունեմ շորս ձեռք, իսկ երբ աշխատում եմ Ասկանիոյի հետ՝ երկու հողի Պետք է ասեմ նաև՝ նա սիրում է ինձ, և ես շատ երջանիկ եմ, որ իմ կողքին բարախում է այդքան մաքուր, այդքան հավատարիմ մի սիրտ, ինչպիսին Ասկանիոյի սիրտն է:

Մինչգեո ուսուցիչն ասում էր այդ բոլորը, Ասկանիոն կանգնած էր նրա մոտ համեստորեն, բայց անկաշկանգ և նրա կեցվածքն այնքան վայելչագեղ էր, որ տիկին գ'էտամպը շէր կարողանում աչքը կտրել սևաչյա ու սևահեր իտա-

լացուց, չքնաղ պատանուց՝ Ապուլոնի կենդանի մարմնավորումից:

— Եթե Ասկանիոն մանրագարդերի այդքան նուրբ վարպետ է,— ասաց նա,— թող մի անգամ առավոտյան գա ինձ մոտ՝ դ'էտամպ ապարանքը: Ես ուզում եմ, որ նա թանկարժեք քարերից ու ոսկուց որևէ սքանչելի ծաղիկ պատրաստի:

Ասկանիոն դլուխ տվեց, դքսուհուն նայելով անկեղծ երախտագիտությամբ:

— Իսկ ես,— ասաց թագավորը,— նրան և Պագուլոյին տարեկան հարյուր ոսկի աշխատավարձ եմ նշանակում:

— Նրանք կարդարացնեն իրենց աշխատավարձը,— ասաց Բենվենուտոն:

— Իսկ այն ի՞նչ հմայիչ աղջիկ է, երկար արտեանունքներով, որ թաքնվել է անկյունում,— հարցրեց Ֆրանցիսկ I-ը, այդ պահին միայն նկատելով Սկոցոնեին:

— Օ՛, ուշադրություն մի դարձրեք նրա վրա, ձերդ մեծություն,— հոնքերը կիտելով պատասխանեց Բենվենուտոն:— Չեմ սիրում, երբ արվեստանոցս զարդարող բոլոր սքանչելի ստեղծագործությունների մեջ նկատում են և նրան: Ազնիվ խոսք, այդ ինձ դուր չի գալիս:

— Օ՛, դուք խանդոտ եք, Բենվենուտո:

— Ինչ արած, սիր, չեմ սիրում, երբ սեփականությունս յուրացնելու փորձ են անում: Պատկերացրեք, թեև այդ համեմատությունը տեղին չէ, եթե մեկն ու մեկը համարձակվեր երազել տիկին դ'էտամպի մասին, ինչպե՞ս կզայրանայիք, ձերդ մեծություն: Իսկ Սկոցոնեն իմ դքսուհին է:

Այդ բառերը սթափեցրին մտազբաղ դքսուհուն, որը հիանում էր Ասկանիոյով, և նա կծեց շրթունքը: Ազնվականներից ոմանք ակամա ժպտացին, կանայք քշվեցին: Թագավորը ծիծաղեց.

— Դե լավ, լավ: Դուք իրավունք ունեք խանդելու, Բենվենուտո, ազնվականի խոսք: Մենք բոլորս՝ թե՛ նկարիչներդ, թե՛ թագավորներս հասկանում ենք միմյուսն... Յտեսություն, բարեկամս: Խնդրում եմ, սկսեք աշխատել արձանների վրա: Առաջինն, անշուշտ, Յուպիտերը կլինի, և երբ

մողելը պատրաստեք, բերեք ինձ մտա: Մնաք բարով, հաջողութուն եմ ցանկանում: Կհանդիպենք նեղի ամրոցում:

— Հեշտ է ասելը, ձերդ մեծութուն, որ մողելը բերեմ ձեզ մտա: Բայց ինչպե՞ս մտնեմ Լուվր:

— Պալատի դռնապահ զինվորներին հրաման կտրվի ներս թողնել ձեզ:

Չելիհին գլուխ տվեց և Պագոլոյի ու Ասկանիոյի ուղեկցութեամբ թագավորին ու նրա շքախումբն առաջնորդեց մինչև դարպասը: Այդտեղ նա ծնկի իջավ, համրուրեց Ֆրանցիսկ I-ի ձեռքը և զգացված ասաց.

— Ձերդ մեծութուն, մոնսենյոր դե Մոնլյուկի միջնորդութեան շնորհիվ դուք փրկեցիք ինձ բանտարկութունից, իսկ գուցե և մահից: Դուք առատաշնորհ եղաք իմ նկատմամբ, խղճուկ արվեստանոցս մեծարեցիք ձեր ներկայութեամբ: Իսկ գլխավորը՝ ապշեցուցիչ խորաթափանցութեամբ դուք կանխագուշակում եք մտահղացումներս և ես շգիտեմ ինչպես երախտահատույց լինեմ ձեզ: Միշտ այնպես է եղել, որ մենք՝ արվեստագետներս, աշխատել ենք նրանց համար, ովքեր գնահատում են մեզ շատ դարեր հետո: Իսկ ինձ բախտ է վիճակվել կենդանութեան օրոք գտնել դատավոր, որը միշտ կօգնի ինձ, միշտ լուսավոր խորհուրդ կտա: Մինչև հիմա ես գալիք սերունդների վարպետն էի: Այսուհետև թույլ տվեք լինել թագավորական ոսկերիչ-վարպետ, ձերդ մեծութուն:

— Դուք կլինեք իմ վարպետը, իմ ոսկերիչը, իմ արձանագործը և իմ բարեկամը, Բենվենուտո, եթե միայն այդ կոչումը ձեր սրտով է: Մնաք բարով, կամ ավելի ճիշտ՝ ցտեսութուն:

Հարկ չկա ասելու, որ թագավորի օրինակով, պալատականները, տիկին դ'էտամպից բացի, գովեստներ շոպյեցին Չելիհին:

Երբ բոլորը մեկնեցին և Բենվենուտոն մնաց բակում իր երկու աշակերտի հետ, Ասկանիոն սկսեց ջերմորեն շնորհակալութուն հայտնել նրան, իսկ Պագոլոն՝ կարծես դժկամորեն:

— Շնորհակալութուն մի հայտնեք ինձ, զավակներս, շարժե: Բայց լսեք. եթե դուք, իրոք, ձեզ պարտավորված եք

համարում, կատարեք միակ խնդիրքս: Քանի որ այսօր խոսք բացվեց այդ մասին, պետք է ասեմ, որ այդ աղջիկն ինձ համար ամեն բանից թանկ է: Դուք լսեցիք, թե ես ինչ ասացի թագավորին Կատերինայի մասին. իմ բառերը նվիրական զգացմունքիս արտահայտությունն էին: Այդ աղջիկն անհրաժեշտություն է դարձել ինձ համար, բարեկամներս, նաև ստեղծագործության մեջ. չէ՞ որ դուք գիտեք ինչպիսի ուրախությամբ է Սկոցոնեն ծառայում ինձ թե՛ որպես մոդել, և թե՛ կյանքում. ես հավատում եմ, որ նա սիրում է ինձ: Այդպես, ուրեմն, խնդրում եմ ձեզ, թեև Սկոցոնեն սիրունատես է և ձեզ նման երիտասարդ, շատաժեք նրա մասին: Աշխարհում ուրիշ շատ գեղեցիկ աղջիկներ կգտնեք: Չտանջեք սիրտս, չվիրավորեք ձեր նկատմամբ ունեցած բարեկամությունս, ցանկասեր հայացքով շնայեք Սկոցոնեին: Իսկ երբ բացակայում եմ, հոգ տարեք նրա մասին և պահպանեք եղբոր նման: Աղաչում եմ ձեզ: Ես գիտեմ իմ բնավորությունը, ճանաչում եմ ինձ և երգվում եմ աստծո անունով, եթե վատ բան նկատեցի, կսպանեմ և՛ նրան, և՛ դավաճանին:

— Բուտցի՛չ,— բացականչեց Ասկանիոն,— ես մեծարում եմ ձեզ որպես իմ դաստիարակի և սիրում եմ՝ ինչպես հոր: Հանգիստ եղեք:

— Ամենակարող տեր,— ձեռքերը թափահարելով բացականչեց Պագոլոն:— Աստված մի արասցե, որ մտածեմ այդպիսի ստորության մասին: Մի՞թե բացարձակապես ամեն ինչով պարտական չեմ ձեզ: Չէ՞ որ աստվածամերժ հանցագործություն կատարած կլինեմ, եթե շարաշահեմ ինձ համար սուրբ ձեր վստահությունը և բոլոր բարեգործությունների համար հատուցեմ այդպիսի ստոր դավաճանությամբ:

— Շնորհակալ եմ, զավակներս,— նրանց ձեռքերը սեղմելով, ասաց Բենվենուտոն:— Շնորհակալ եմ հազար անգամ: Ես գոհ եմ ձեզնից, ես հավատում եմ ձեզ... Իսկ հիմա, Պագոլո, գործի անցիր և շնորհաս, որ ես խոստացել եմ պարոն դե Վիրուաչին վաղը հանձնել կնիքը, որի վրա դու աշխատում ես: Ես և Ասկանիոն կգնանք աչքի անցկաց-

նելու կալվածքը, որ ամենաողորմած թագավորը շնորհել է մեզ: Իսկ հետևյալ կիրակի կզվարճանանք. կգրավենք Նելի ամրոցը, ինչ գնով էլ լինի...— Այնուհետև, դառնալով Ասկանիոյին, ավելացրեց,— դե, Ասկանիո, գնանք նշանավոր Նելի ամրոցը, որն արտաքուստ այնքան դուր էր եկել քեզ, և տեսնենք, թե ներսն արժանի՞ է մեր լսած գովեստներին:

Եվ աչք ածելով արվեստանոցը, ստուգելու համար, թե բոլոր ենթավարպետները տեղո՞ւմ են, նա քնքշորեն շոյեց Սկոցոնեի կլորիկ, կարմիր թշիկն ու, թեանցուկ անելով իր աշակերտին, որը շհասցրեց անգամ մի բառ արտասանել, դուրս եկավ տնից:

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

Ինչի համար են դուենչաները

Դեռ տաս քայլ էլ չէին արել, երբ հանդիպեցին ոչ բարձրահասակ, մոտ հիսուն տարեկան, նրբագեղ, արտահայտիչ դեմքով մի մարդու:

— Իսկ ես գալիս էի ձեզ մոտ, Բենվենուտո,— ասաց անծանոթը, որին Ասկանիոն գլուխ տվեց ոչ միայն հարգալից, այլև՝ խորին պատկառանքով, իսկ Բենվենուտոն բարեկամաբար պարզեց ձեռքը:

— Եթե կարևոր գործով եք եկել, թանկագին Ֆրանչեսկո, ես կվերադառնամ ձեզ հետ, իսկ եթե պարզապես տեսության եք եկել, ապա գնանք ինձ հետ:

— Ես եկել եմ ձեզ խորհուրդ տալու, Բենվենուտո:

— Հաճույքով կլսեմ: Բարեկամի խորհուրդը միշտ օգտակար է:

— Բայց խորհուրդս կողմնակի մարդկանց համար չէ:

— Այս պատանին իմ երկրորդ «ես»-ն է, ասացեք, Ֆրանչեսկո:

— Կասեի, եթե հնարավոր համարեի,— պատասխանեց Բենվենուտոյի բարեկամը:

— Ներեցեք, ուսուցիչ,— համեստութեն մի կողմ քաշվելով, ասաց Ասկանիոն:

— Ինչ արած, ստիպված կլինես մենակ գնալ այնտեղ, ուր պետք է միասին գնայինք, զավակս,— ասաց Բենվենուտոն:— Դու գիտես, որ վստահում եմ քեզ այնպես, ինչպես ինքս ինձ: Ամենայն մանրամասնությամբ աչքի անցկացրու ամբողջ շենքը: Ուշադրություն դարձրու արվեստանոցի լուսավորությանը, տես բակում կարելի՞ է արձան ձուլել և հնարավո՞ր է արդյոք մեր արվեստանոցն անջատել այն սենյակից, որտեղ աշխատելու են մյուս ենթավարպետները: Զմոռանաս նաև գնդակ խաղալու սրահի մասին:

Եվ Բենվենուտոն, թևանցուկ անելով անժանոթին, դիսի շարժումով հրաժեշտ տվեց իր աշակերտին ու վերադարձավ արվեստանոց, իսկ երիտասարդն այդպես էլ անշարժ կանգնած մնաց Սուրբ Մարտենի փողոցի մեջտեղում:

Եվ իրոք, ուսուցչի հանձնարարությունը տակնուվրա արեց Ասկանիոյի հոգին: Առանց այդ էլ նա արդեն գլուխը կորցրել էր այն պահից, երբ Բենվենուտոն կանչեց նրան ամրոցը զննելու: Ինքներդ դատեք, թե պատանին հիմա ինչ դրության մեջ ընկավ, երբ ուսուցիչը նրան մենակ ուղարկեց ամրոց:

Այդպես ուրեմն, Ասկանիոն, որը երկու կիրակի շարունակ տեսել էր Կոլումբային և չէր համարձակվել հետևել նրան, իսկ երրորդ կիրակի հետևել էր աղջկան, բայց չէր համարձակվել հետը խոսել, հիմա պետք է գնար սիրած աղջկա տունը... Եվ ինչո՞ւ: Աչքի անցկացնելու համար Նելի ամրոցը, որը Բենվենուտոն, ցանկանալով զվարճանալ, մտադիր էր հետևյալ իսկ կիրակի խլել Կոլումբայի հորից, գործի դնելով և՛ հորգորանք, և՛ ուժ:

Ով էլ լիներ Ասկանիոյի փոխարեն, կզգար դրության կեղծությունը, իսկ սիրահարված պատանին սարսափեց:

Բարեբախտաբար, Սուրբ Մարտենի փողոցից մինչև Նելի ամրոցը բավական հեռու էր, այլապես Ասկանիոն ոչ մի քայլ չէր անի. բայց պետք էր կես մղոնի շափ տարածություն անցնել, և պատանին ճանապարհ ընկավ:

Ոչ մի բան այնպես չի հաշտեցնում վտանգի հետ, որքան ժամանակը կամ տարածությունը, որը մեզ բաժանում է այդ վտանգից: Մտորումները լավ օգնական են քաջակորով, կամ մեծապես օժտված մարդկանց համար: Այդպիսի մարդկանց թվին էր պատկանում և Ասկանիոն: Այն ժամանակ նոր կյանք մտած պատանիների շրջանում դեռ մոդա չէր հուսախաբություն խաղալը... Անկեղծ էին բոլոր զգացմունքները, անկեղծ էր և դրանց արտահայտությունը. ուրախանալիս մարդիկ ծիծաղում էին, վշտանալիս՝ լաց լինում: Շինծու համարյա ոչինչ չկար՝ ինչպես կյանքում, այնպես էլ արվեստի մեջ, և այն ժամանակ քսանամյա գեղեցիկ երիտասարդն ամենևին ստորացած չէր համարում իրեն, խոստովանելով, որ երջանիկ է:

Այդպիսով, շնայած բոլոր տագնապներին, Ասկանիոն երջանիկ էր: Չէ՞ որ նա կարծում էր, թե տեսնելու է Կոլոմբային կիրակի օրը միայն, սակայն կտեսնի հենց այսօր: Չէ՞ որ դա նշանակում է շահել վեց օր, իսկ սիրահարված մարդու համար վեց օր սպասելը, ինչպես հայտնի է, հավասարազոր է վեց դարի:

Եվ որքան ավելի էր մոտենում ամբողջին, այնքան ամեն ինչ շատ ավելի հեշտ էր թվում: Ճիշտ է, նա ինքը գլխի գցեց Բենվենուտոյին թագավորից թուլլտվություն խնդրել Նելի ամբողջում բնակություն հաստատելու և այնտեղ արվեստանոց հիմնադրելու համար: Բայց մի՞թե Կոլոմբան կբարկանա, որ ինքն աշխատում է ավելի մոտ լինել նրան: Ճիշտ է, ամբողջում Ֆլորենտացի վարպետի բնակություն հաստատելը վնաս կհասցնի Կոլոմբայի հորը, որն ամբողջը իր սեփականությունն է համարում: Բայց քանի որ պարոն Ռոբեր դ'էստուրվիլն այնտեղ չի ապրում, մի՞թե մեծ կորուստ կլինի նրա համար: Բացի այդ, Բենվենուտոն այնքան հնարավորություններ ունի շենքի համար վճարելու. օրինակ, կարող է սափոր նվիրել պրևոյին կամ մանյակ՝ նրա աղջկան (և Ասկանիոն որոշեց իր ձեռքով սլատրաստել մանյակը): Արվեստի ծաղկման այդ դարաշրջանում նման ընծաները կարող էին և պետք է որ հաղթահարեին բոլոր դժվարությունները: Ասկանիոն տեսել էր ամենազոր դուքսերի, թա-

գավորների ու պապերի, որոնք պատրաստ էին վաճառել թագը, գայիսոնը, խուչը՝ գնելու համար այն սքանչելի, թանկարժեք իրերից մեկը, որ պատրաստված էր իր ուսուցչի ձեռքով: Եվ, ի վերջո, մեսսեր Ռոբերը կհասկանա, որ գործը կարելի է խաղաղությամբ գլուխ բերել և դեռ վարսյետ Բենվենուտոյի պարտապանը կմնա: Չէ՞ որ վարպետն այնքան մեծահոգի է, որ եթե մեսսեր դ՛էստուրվիլը քաղաքավարութուն ցուցաբերի, ապա վարպետ Բենվենուտոն կհատուցի թագավորական առատաձեռնությամբ: Ասկանիոն համոզված էր դրանում:

Սուրբ Մարտենի փողոցն անցնելով, Ասկանիոն արդեն ասածն առաքած խողաղության բանքեր պատկերացրեց իրեն, որը կրկու տերությունների մեջ հաշտութուն պիտի հաստատի:

Սակայն, հավատալով դրան, Ասկանիոն հակված էր (սիրահարվածներն այնքա՛ն տարօրինակ են) երկարաձգել իր ճանապարհը ևս տասը րոպեով: Ուստի Սենը անցնելու համար նավակ շնտեց, այլ գետափով գնաց դեպի ջրաղացի կամուրջը: Գուցե այդ ճանապարհն ընտրեց այն պատճառով միայն, որ նախօրեին, Կոլոմբային հետևելիս այդպես էր գնացել: Ի դեպ, ինչ պատճառով էլ երկարաձգած լիներ իր ճանապարհը, այնուամենայնիվ, քսան րոպե հետո հայտնվեց Նելի ամրոցի առաջ: Եվ ահա, երբ Ասկանիոն հասավ իր նպատակակետին, երբ տեսավ նեղլիկ, սրագագաթ դուռը, որտեղից պետք է ներս մտներ, երբ աչքի առաջ կանգնեց գոթական ոճով կառուցված շինությունը՝ հանդդիորեն վեր խոյացող, սրածայր աշտարակներով պսակված, երբ մտածեց, որ լուսամուտների փեղկերի հետևում, որոնք արևվից պաշտպանվելու համար կիսախուփ էին արված, ապրում էր գեղեցիկ Կոլոմբան, փառահեղ օդային ամրոցը, որ նա կառուցել էր ճանապարհին, փլվեց ամպերի մեջ հայտնվող սքանչելի շինությունների նման, որոնք քամու թեթև շնչից անգամ անէանում են: Եվ պատանին մնաց իրականությանը դեմ հանդիման, իսկ իրականությունը բավականին անմխիթարական էր:

Սակայն, մի քանի րոպե հապաղելով (և այդ հապաղումն առավել տարօրինակ էր, որովհետև տոթակեզ այդ օրը գետափին ոչ ոք չկար), Ասկանիոն հասկացավ, որ պետք է որևէ որոշում ընդունել: Պետք էր մտնել ամրոց. դա էր միակ որոշումը: Եվ պատանին մոտեցավ դռանն ու բարձրացրեց մուրճը: Բայց դժվար էր ասել, թե երբ ցած կիջեցներ այն, եթե հենց այդ րոպեին դուռը պատահաբար շրացվեր և նրա դեմ-դիմաց շհայտնվեր մոտ երեսուն տարեկան ինչ-որ մարդ, որը չգիտես ծառա՞ էր, թե գեղջուկ, և, ըստ երևույթին, կատարում էր ամեն տեսակ հանձնարարություն: Այդ մարդը մեսսեր դ՛էստուրվիլի այգեսպանն էր:

Ասկանիոն և այգեսպանն ընկրկեցին...

— Ի՞նչ եք կամենում,— հարցրեց այգեսպանը:— Ինչո՞ւ եք այստեղ կանգնել:

Նահանջելն ուշ էր, և Ասկանիոն, օգնության կանչելով իր ամբողջ արիությունը, խիղախորեն պատասխանեց.

— Ցանկանում եմ ամրոց մտնել:

— Ինչպե՞ս թե՛ ամրոց մտնել,— զարմացավ այգեսպանը:— Ո՞վ է ձեզ ուղարկել:

— Թագավորը,— պատասխանեց Ասկանիոն:

— Թագավո՞րը,— ճշաց այգեսպանը:— Տե՛ր աստված: Գուցե թագավորը միտք ունի խլե՞լ մեզնից ամրոցը:

— Շատ հավանական է,— պատասխանեց Ասկանիոն:

— Բայց ինչո՞ւ...

— Ինքներդ էլ հասկանում եք, բարեկամ,— ասաց Ասկանիոն այնպիսի հանդիսավորությամբ, որ ինքն էլ գոհ մնաց,— ես հարկ չեմ համարում բացատրություն տալ ձեզ:

— Ինչ արած, իրավացի եք: Ո՞ւմ հետ կկամենայիք խոսել:

— Ասացեք, պարոն պրևոն տա՞նն է,— հարցրեց Ասկանիոն, վստահ լինելով, որ պրևոն ամրոցում չէ:

— Ոչ, պարոն, նա Շատլեում է:

— Իսկ ո՞վ է փոխարինում ձեր տիրոջը, երբ վերջինս բացակայում է:

— Նորին ողորմածության աղջիկը, օբիորդ Կոլոմբան:

Ասկանիոն զգաց, որ մինչև ականջները կարմրում է:

— Եվ մեկ էլ,— շարունակեց այգեսլանը,— տիկին Պերինան: Ո՞ւմ հետ կկամենայիք խոսել, տիկին Պերինայի, թե՞ օրիորդ Կոլոմբայի, պարոն:

Այդ հասարակ հարցը զգացմունքների մի ամբողջ փոթորիկ բարձրացրեց Ասկանիոյի հոգում: Պատանին բացեց բերանը, պատրաստվելով ասել, որ ցանկանում է տեսնել օրիորդ Կոլոմբային, սակայն հանդուգն բառերն այդպես էլ դուրս չթռան նրա բերանից, և նա խնդրեց առաջնորդել իրեն տիկին Պերինայի սենյակը:

Այգեսլանը, որ չէր կատկածում, թե իր տեսակետից միանգամայն բնական այդ հարցը կարող էր խոռովել երիտասարդի հոգին, գլխով արեց ի նշան հնազանդության և բակի միջով քայլեց դեպի Նելի Փոքր ամրոցը: Ասկանիոն հետևեց նրան:

Նրանք անցան երկրորդ բակը, ներս մտան երկրորդ դռնից, անցան ծաղկանոցը, աստիճաններով բարձրացան արտասանդուղք, հասան երկար պատշգամբի ծայրը:

Եվ այդտեղ այգեսլանը բացեց դուռն ու զեկուցեց.

— Տիկին Պերինա, եկել է մի երիտասարդ ու թագավորի անունից պահանջում է ցույց տալ ամրոցը:

Եվ նա մի կողմ քաշվեց, իր տեղն Ասկանիոյին զիջելով, որը կանգնած էր շեմին:

Ասկանիոն կռթնեց պատին, աչքերը շաղվեցին. պատահեց այն, ինչ չէր կանխատեսել՝ Կոլոմբան նույնպես սենյակում էր:

Տիկին Պերինան թել էր մանում: Կոլոմբան քարգահով ասեղնագործում էր...

Երկուսն էլ միաժամանակ բարձրացրին գլուխներն ու նայեցին դռանը: Կոլոմբան անմիջապես ճանաչեց Ասկանիոյին: Աղջիկը սպասում էր նրան, թեև գիտակցությունը թելադրում էր, որ նա գալ չի կարող: Իսկ երբ նրանց հայացքները հանդիպեցին, պատանուն թվաց, թե հիմա կմեռնի, թեև աղջկա հայացքն անսահման քնքշություն էր արտահայտում:

Բանն այն է, որ Կոլոմբային հանդիպելու մասին մտա-

ծելիս Ասկանիոն կանխատեսում էր բազմաթիվ դժվարութիւններ, երեւակայութեան մեջ պատկերվում էին բազմաթիվ արգելքներ, արգելքները պետք է ոգեշնչեին, դժվարութիւնները՝ ամրապնդեին: Եվ ահա ամեն բան դասավորվեց այնքան պարզ, այնքան լավ: Պատանին հանդիպեց Կոլոմբային անսպասելիորեն, և բոլոր նախապես մտածված արտահայտութիւնները, բոցաշունչ պատկերավոր բառերը, որոնք պետք է շարժեին աղջկա սիրտն ու ապշեցնեին նրան, ջնջվեցին հիշողութիւնից՝ շմնաց ոչ նախադասութիւն, ոչ բառ, ոչ վանկ:

Կոլոմբան էլ քարացավ. նստել էր անշարժ, անձպտուն: Անաղարտ ու պատանի էակներն, ասես երկնքում նախապես միացած, արդեն զգում էին, որ պատկանում են միմյանց և առաջին հանդիպումից սարսափած, տազնապահար սարսրում էին, չկարողանալով մի բառ արտասանել:

Տիկին Պերինան վեր կացավ աթոռից. մի կողմ դնելով իլիկը, նա կոթնեց ճախարակի անիվին և առաջինը խախտեց լռութիւնը:

— Այդ ցանցառ Ռեմբոն հիմարութիւններ է դուրս տալիս,— ասաց հարգարժան դուենյան:— Դուք լսեցի՞ք, Կոլոմբա:

Կոլոմբան շտապախանեց:

Եվ դուենյան, Ասկանիոյին մոտենալով, շարունակեց.

— Ո՞ւմ եք ուզում պարոն... օ՛հ, ողորմած տեր,— հանկարծ պատանուն ճանաչելով բացականչեց նա:— Ախր սա այն սիրալիր երիտասարդն է, որ արդեն երեք կիրակի եկեղեցու դռան մոտ, այնքան քաղաքավարութեամբ սուրբ ջուր է առաջարկում ինձ: Ի՞նչ եք կամենում, բարեկամ:

— Ես պետք է խոսեմ ձեզ հետ,— մրմնջաց Ասկանիոն:

— Առանձի՞ն,— սեթևեթելով հարցրեց տիկին Պերինան:

— Առանձին...

Եվ այդ ասելով, Ասկանիոն հասկացավ, որ աններելի հիմարութիւն է գործում:

— Այդ դեպքում այստեղ համեցեք, երիտասարդ, այստեղ համեցեք,— ասաց տիկին Պերինան, բացելով կողքի դուռը և հրամիրելով Ասկանիոյին հետևել իրեն:

Եվ Ասկանիոն հետեց նրան, բայց գնալիս Կոլոմբայի վրա մի հայացք նետեց՝ այն տեական հայացքներից մեկը, որոնց մեջ ամեն սիրահար կարողանում է շատ բան ներդրանել. դրանք անհասկանալի են անիրազեկ մարդկանց, բայց լի են խորին իմաստով նրանց համար, ում ուղղված են: Եվ Կոլոմբան, անշուշտ, հասկացավ այդ խոսուն հայացքի իմաստը, որովհետև, երբ աչքերն ակամա հանդիպեցին երիտասարդի աչքերին, հանկարծ շիկնեց, և այդ զգալով, գլուխը խոնարհեց, ձևանալով, թե զննում է ասեղնակարը և սկսեց անզթորեն ծակոտել ոչ մի մեղք չունեցող ծաղիկը Ասկանիոն, տեսնելով, որ Կոլոմբայի դեմքը շիկնեց, անմիջապես կանգ առավ և ուզում էր նետվել դեպի նա, բայց այդ պահին տիկին Պերինան, շրջվելով, ձայն տվեց երիտասարդին, և վերջինս ստիպված էր գնալ նրա հետևից: Հենց որ Ասկանիոն ոտքը դուրս դրեց շեմից, Կոլոմբան մի կողմ նետեց ասեղը, ձեռքերը տարածեց բազկաթոռի արմնկակալներին, հետ գցեց գլուխն ու խոր հառաչեց. ի դեպ, նրա հառաչանքի մեջ (այդպիսին է սրտի անբացատրելի գաղտնիքը) միախառնվել էր և՛ ամոսոսանք, որ Ասկանիոն գնում է, և՛ թեթևության զգացում, որ նա արդեն չկա:

Իսկ Ասկանիոն ակնհայտորեն վատ տրամադրություն մեջ էր: Նա բարկանում էր Բենվենուտոյի վրա, որ իրեն այդպիսի անմիտ հանձնարարություն է տվել, բարկանում էր իր վրա, որ շօգտվեց հարմար առիթից, իսկ ամենից շատ բարկանում էր տիկին Պերինայի վրա, որովհետև նրա մեղքով ինքը դուրս եկավ սենյակից հենց այն պահին, երբ թվաց, թե Կոլոմբան հայացքով խնդրում է չգնալ:

Այգ պատճառով, երբ դուենյան մենակ մնալով Ասկանիոյի հետ հարցրեց նրա գալու պատճառը, պատանին պատասխանեց բավական հանդգնորեն, որոշելով հատուցել նրան իր իսկ սխալի համար:

— Հարգելի տիկին, ես եկել եմ խնդրելու, որ ցույց տաք ինձ Նելի ամրոցը՝ ծայրից ծայր:

— Ցույց տամ ձեզ Նելի ամրոցը, — հարցրեց տիկին Պերինան: — Իսկ ձեր ինչի՞ն է պետք:

— Որպեսզի տեսնեմ հարմա՞ր է մեզ համար,՝ կարո՞ղ ենք տեղավորվել և արժե՞ արդյոք գլուխ դնել այստեղ տեղափոխվելու համար:

— Ինչպե՞ս թե: Տեղափոխվել այստե՞ղ: Մի՞թե ամբողջ պարոն պրեռոյից վարձով եք վերցրել:

— Ոչ, ամբողջ մեզ պարգևում է նորին մեծությունը:

— Նորին մեծությունն ամբողջ պարգևում է ձե՞զ,— զարմանքից իրեն կորցրած, բացականչեց տիկին Պերինան:

— Որպես լիակատար սեփականություն,— պատասխանեց Ասկանիոն:

— Ձե՞զ:

— Ոչ, սիրելիս, ոչ թե ինձ, այլ ուսուցչիս:

— Իսկ ո՞վ է ձեր ուսուցիչը, թույլ տվեք իմանալ, երիտասարդ: Երևի որևէ օտարերկրացի աղնվակա՞ն է:

— Աղնվականից էլ ծանրակշիռ, տիկին Պերինա, մեծ արվեստագետ է, որը եկել է Ֆլորենցիայից հատկապես նորին քրիստոնեագույն մեծությանը ծառայելու համար:

— Ահա թե ի՞նչ,— ասաց դուենյան, որն այնքան էլ լավ չհասկացավ, թե ինչի մասին է խոսքը:— Իսկ ի՞նչ է անում ձեր ուսուցիչը:

— Ինչ է անո՞ւմ: Ամեն բան: Պատրաստում է մատանիներ՝ մանկամարդ աղջիկների համար, սափորներ՝ թագավորական սեղանի համար, արձաններ՝ տաճարների համար, իսկ ազատ ժամանակ քաղաքներ է պաշարում, կամ պաշտպանում, եթե հանկարծ մտքով անցել է սարսափահար անել կայսրին, կամ ամրապնդել պապի իշխանությունը:

— Տե՛ր աստված,— բացականչեց տիկին Պերինան:— Իսկ ի՞նչ է ձեր ուսուցչի անունը:

— Նրա անունը Բենվենուտո Չելլինի է:

— Տարօրինակ է, չեմ լսել այդ անունը,— մրմնջաց դուենյան:— Ի՞նչ զբաղմունքի տեր է:

— Ոսկերիչ է:

Տիկին Պերինան, զարմանքից աչքերը շռած, նայեց Ասկանիոյին:

— Ոսկերի՞չ,— կրկնեց նա:— Եվ գուք կարծում եք, թե

մեսսեր պրևոն իր ամբողջ հեշտ ու հանգիստ կզիջի ինչ-որ
ոսկերչի՞:

— Եթե շզիջի, ուժով կվերցնենք:

— Ուժո՞վ:

— Ճիշտ այդպես:

— Հուսով եմ, ձեր ուսուցիչը չի համարձակվի պարոն
պրևոյի դեմ գնալ:

— Պատահել է, որ նա դեմ է գնացել երեք դուքսի և եր-
կու պապի:

— Հիսո՞ւս Քրիստոս: Երկու պապի Գուցե հերետի-
կո՞ւ է...

— Նա ինձ և ձեզ նման կաթոլիկ է, տիկին Պերինա: Հան-
գրատացեք. սատանան մեր դաշնակիցը չէ, բայց մեզ հա-
մար հմայություն է անում ինքը թագավորը:

— Ահա՛ թե ինչ: Բայց պարոն պրևոյի համար էլ են
հմայություն անում և ոչ ավելի վատ, քան ձեզ համար:

— Ո՞վ:

— Տիկին դ'էտամպլ:

— Այդ դեպքում մեր ուժերը հավասար են,— նկատեց
Ասկանին:

— Իսկ եթե մեսսեր դ'էտամպլիլը մերժի՞ ձեզ:

— Վարպետ Բենվենուտոն ամբողջ կգրավի ուժով:

— Իսկ եթե մեսսեր Ռոբերը փակվի այստեղ, ինչպես
բերդո՞ւմ:

— Վարպետ Չելլինին կպաշարի ամբողջը:

— Մեսսեր պրևոն քսանչորս ղինված պահնորդ ունի
Հաշվի առեք այդ:

— Վարպետ Բենվենուտո Չելլինին տասը աշակերտ ունի:
Ինքներդ էլ աեսնում եք, որ մեր ուժերը հավասար են, տի-
կին Պերինա:

— Բայց ինքը՝ մեսսեր դ'էտամպլիլը, վաանգա՛վոր հա-
կառակորդ է: Ֆրանցիսկ I-ի հարսանիքի պատվին տեղի
ունեցած մրցախաղում նա ցած տապալեց բոլորին, ովքեր
համարձակվեցին մրցել նրա հետ:

— Ավելի լավ, տիկին Պերինա: Բենվենուտոն ցանկա-

նում է հենց այդպիսի քաջ մարդու հետ շափել իր ուժը: Նա էլ, մեսսեր դ'էստուրվիլի նման, ցած է տապալել իր բոլոր հակառակորդներին: Միայն թե նրանք, ում հաղթել է ձեր պրևոն, երկու շաբաթ անց եղել են ողջ և առողջ, իսկ նրանք, ովքեր գործ են ունեցել իմ ուսուցչի հետ, այդպես էլ ոտքի չեն կանգնել և երեք օր հետո նրանց տարել են գերեզմանատուն:

— Օ՛, փորձանք է լինելու, փորձանք,— մրմնջաց տիկին Պերինան:— Ասում են պաշարված քաղաքներում սոսկալի բաներ են կատարվում:

— Հանգստացեք, տիկին Պերինա,— ծիծաղելով պատասխանեց Ասկանիոն,— հաղթողները գթասիրտ կլինեն ձեր նկատմամբ:

— Իսկ այդ բոլորը ես ասացի, պատանի բարեկամս, որովհետև վախենում եմ, որ արյուն կթափվի,— պատասխանեց տիկին Պերինան, որն, ըստ երևույթին, դեմ չէր պաշարողների մեջ օգնական ձեռք բերելու,— Ձեր հարևանութունը, ինքներդ էլ հասկանում եք, հաճելի կլինի մեզ համար: Չէ՞ որ մենք այս անիծյալ ամբողջում զուրկ ենք հասարակութունից: Մեսսեր դ'էստուրվիլն իր աղջկան և ինձ համարյա բանտարկել է այստեղ, երկու խեղճ միանձնուհիների նման, թեև մենք, աստված մի արացե, կուսակրոնության ուխտ չենք արել: «Մարդ պետք է մենակ շմնա»,— ասում է Աստվածաշունչը, իսկ երբ Աստվածաշունչն ասում է «մարդ», ապա նկատի է առնում նաև կինարմատին: Ճիշտ չե՞մ ասում, պարոն:

— Ինքնըստիքյան հասկանալի է:

— Իսկ մենք այս հսկայական սրահներում բոլորովին մենակ ենք և, իհարկե, սոսկալի տխրում ենք:

— Բայց մի՞թե ոչ ոք չի այցելում ձեզ,— հարցրեց Ասկանիոն:

— Տե՛ր աստված: Ախր մենք միանձնուհիներից էլ վատ ենք ասյրում, ես ձեզ արդեն ասացի: Միանձնուհիները գոնե բնդունում են բարեկամներին, ծանոթներին, վանդակապատի հետևից տեսնում են նրանց: Միանձնուհիներն ունեն սեղանատուն, որտեղ հավաքվում են, զրույց են անում, շատախո-

սում: Այդ բոլորն, իհարկե, մեծ ուրախութիւնն չէ, բայց և այնպես ժամանց է: Իսկ մեզ մոտ երբեմն միայն գալիս է պրևոն և նախատում է աղջկան, երևի նրա համար, որ աղջիկը գնալով գեղեցկանում է: Ազնիվ խոսք, դրանից բացի խեղճ աղջիկն ուրիշ մեղք չունի: Ինձ էլ է նախատում. պատվիրում է ավելի խստորեն հսկել աղջկան: Փառք ասածո, չէ՞ որ Կոլոմբան ոչ մեկի երեսը չի տեսնում և, եթե հաշվելու շինենք ինձ հետ ունեցած խոսակցութիւնները, բերանը բացում է միայն աղոթք անելու համար: Խնդրում եմ, երիտասարդ, ոչ ոքի շատեք, որ ձեզ ներս են թողել ամրոց և որ Նելի Մեծ ամրոցն աչքի անցկացնելուց հետո եկել եք Փոքր ամրոց մեզ հետ զրուցելու:

— Ուրեմն Նելի Մեծ ամրոցն աչքի անցկացնելուց հետո... — բացականչեց Ասկանիոն: — Ուրեմն, ես ձեզ հետ վերադառնալու եմ Փոքր ամրոցը: Ուրեմն ես... — Եվ Ասկանիոն ձայնը կտրեց, հասկանալով, որ իր ուրախութիւնը շափազանց ակնհայտ է:

— Բարեկիրթ մարդը, երիտասարդ, օրիորդ Կոլոմբային ներկայանալուց հետո (իսկ նա, խնդրում եմ նկատի առնել, իր հոր բացակայութեան ժամանակ այս ամրոցի տիրուհին է), այդպես ուրեմն, բարեկիրթ մարդը, իմ կարծիքով, հաղիվ թե Նելի ամրոցից հեռանա միայն ինձ հետ զրուցելով, հրաժեշտի ոչ մի խոսք չասելով Կոլոմբային: Սակայն եթե չեք ցանկանում, դուք գիտեք, ձեր կամքն է, կարող եք դուրս գալ հենց Նելի Մեծ ամրոցից, այնտեղ դարպաս կա:

— Երբե՛ք, երբե՛ք, զրոզը տանի, — բացականչեց Ասկանիոն: — Տիկին Պերինա, հավատացեք, ես ուրիշներից վատ չեմ դաստիարակված և կանանց նկատմամբ քաղաքավարի եմ: Միայն թե խնդրում եմ, տիկին Պերինա, շուտ աչքի անցկացնենք Մեծ ամրոցի սենյակները, ես շատ եմ շտապում:

Եվ իրոք, այժմ արդեն իմանալով, որ կարելի է վերագառնալ Փոքր ամրոց, Ասկանիոն շտապում էր վերջացնել իր գործը Մեծ ամրոցում: Իսկ տիկին Պերինան, վախենալով, որ պրևոն կարող է հանկարծ վրա հասնել, չէր ուզում Աս-

կանխոյին երկար պահել ամբողջում, վերցնելով դուան հետևը կախված բանալիների կապուկը, նա առաջ անցավ:

Ասկանխոյի հետ միասին մի հայացք նետենք Նելի ամբողջի վրա, որտեղ այսուհետև տեղի են ունենալու մեր պատմության ամենակարևոր իրադարձությունները:

Ամբողջը, կամ ավելի ճիշտ՝ Նելի կալվածքը, ինչպես սովորաբար անվանում էին այն ժամանակներում, տեղավորված էր, ինչպես արդեն գիտի ընթերցողը, Սենի ձախ ափին, այն նույն տեղում, որտեղ հետագայում կառուցեցին Նեվերի պալատը, իսկ ավելի ուշ՝ դրամահատարանը և ակադեմիան: Ամբողջը գտնվում էր Փարիզի հարավարևմտյան մասում. պարսպից այն կողմ երևում էր միայն քաղաքը բոլորող խանդակը և տարածվում էին Պրե-Օ-Կլերի կանաչ մարգագետինները: Ամբողջը կառուցել էր պիկարդացի կալվածատեր Նելի սենյոր Ամորին VIII դարի վերջերին: 1308 թվականին Ֆիլիպ Գեղեցիկը գնեց ամբողջը և դարձրեց թագավորական աթոռանիստ: 1520 թ. Նելի աշտարակը, որի արյունոտ, շվայտ անցյալի հուշը մնացել է դարերում, անջատեցին ամբողջից, գետի երկայնքով առափնյա փողոց բացեցին, իսկ խանդակի վրայով կամուրջ գցեցին: Մուսլ աշտարակը կանգնած էր կղզու վրա՝ ապաշխարհող, մեղսագործ կնոջ նման միայնակ ու դժնդակ:

Նելի կալվածքն այնքան ընդարձակ էր, որ աշտարակի անջատումը համարյա շանդրադարձավ նրա ամբողջության վրա: Կալվածքը հիշեցնում էր ամբողջ մի գյուղ: Բարձր պարիսպը՝ լայն, սրագագաթ դարպասով ու նեղ դռնակով, կալվածքը բաժանում էր գետափից: Նախ ընդարձակ, քառանկյունի բակն էր, որը նույնպես շրջափակված էր պարսպով և երկու դուռ ուներ. մեկը ձախ կողմում, մյուսը՝ բակի խորքում: Եթե ներս մտնեիք ձախակողմյան դռնից, ինչպես քիչ առաջ արեց Ասկանխոն, ապա ձեր հայացքի առաջ կկանգնի XIV դարի գոթական ոճով կառուցված ոչ մեծ, սքանչելի մի շինություն՝ Նելի Փոքր ամբողջը, որի հարավային պատի երկայնքով ձգվում էր այգին: Իսկ եթե ներս մտնեիք բակի խորքում երևացող դռնից, ապա ձեր աչ

կողմում վեր էր խոյանում նեւի Մեծ, քարաշեն ամրոցը՝ իր երկու սրածայր աշտարակներով, ճաղաշարքերով եզրազարդված, սանդուղքաձև բարձրացող ճակատով, բարձր, նախազարդ լուսամուտներով և քսան հողմնացույցներով, որոնք ճոնչում էին քամուց։ Մեր օրերում այնտեղ կարելի էր երեք դրամատուն տեղավորել։

Իսկ եթե ավելի առաջ գնայիք, պարզապես կմոլորվեիք ամեն տեսակի ու շափի այգիներում և այդ այգիներում կտեսնեիք շինություններ՝ գնդակ և սերսո խաղալու համար, ձուլարան, ռազմամթերքի պահեստ, այնուհետև՝ թռչնանոցներ, ոչխարի փարախներ, գոմեր ու ախոռներ։ Մեր օրերում այնտեղ կարելի էր երեք ազարակ տեղավորել։ Պետք է ասել, որ այդ ամենի վրա լքվածության դրոշմ կար, ամեն ինչ աչքաթող էր արված։ Այգեպան Ռեմբոն և նրա երկու օգնականը հազիվ էին հասցնում խնամել նեւի Փոքր ամրոցի այգին, որտեղ Կոլոմբան ծաղիկներ էր աճեցնում, իսկ տիկին Պերինան՝ կաղամբ։ Բայց ամրոցում տեղ շատ կար, լուսավորությունը լավ էր, ամեն ինչ փառավոր էր կառուցված և մի քիչ փող ու ջանք ներդնելով կարելի էր, իհարկե, աշխարհի լավագույն արվեստանոցը դարձնել։

Բայց եթե նույնիսկ շինությունն այդքան հարմար չլիներ, Ասկանիոն ամենևին ավելի քիչ չէր հիանա, որովհետև այնտեղ, մոտակայքում, ապրում էր Կոլոմբան, իսկ դա գլխավորն էր։

Նա արագորեն շրջանցեց ամրոցը. փութկոտ պատանին ամեն ինչ աչքի անցկացրեց, ամեն ինչ ստուգեց, ամեն ինչ մի ակնթարթում գնահատեց։

Տիկին Պերինան սկզբում փորձում էր հասնել նրա հետևից, բայց քիչ անց բանալիների կապուկը հանձնեց նրան, որն Ասկանիոն, պտույտն ավարտելուց հետո, ազնվորեն վերադարձրեց։

— Իսկ հիմա, տիկին Պերինա, — ասաց Ասկանիոն, — ես ձեր արամադրության տակ եմ։

— Լավ, վերադառնանք նեւի Փոքր ամրոցը, երիտասարդ, որովհետև այդ է պահանջում քաղաքավարությունը։

— Իհարկե: Հակառակ դեպքում ես պարզապես անբարեկիրթ կլինեի:

— Եվ տեսեք, Կոլումբային ոչ մի խոսք ձեր այցելության դրդապատճառի մասին:

— Տեր աստված, այդ դեպքում ինչի՞ մասին խոսեմ նրա հետ, — բացականչեց Ասկանիոն:

— Մի հուզվեք, հոգիս: Չէ՞ որ ինքներդ ասացիք, որ ոսկերիչ եք:

— Այո ոսկերիչ եմ:

— Ուրեմն, խոսեք նրա հետ զարդերի մասին: Այդպիսի խոսակցությունը միշտ էլ հաճելի է նույնիսկ ամենահամեստ օրիորդին: Նա Եվայի դո՞ւստրն է, թե ոչ: Իսկ եթե Եվայի դուստրն է, ուրեմն սիրում է այն ամենը, ինչ փայլում է: Եվ բացի այդ, խեղճ աղջիկն այնքան քիչ զվարճություններ ունի, ապրում է այնքան մեկուսացած, որ նրան մի քիչ ուրախացնելը պարզապես բարեգործություն է: Եվ ամեն անգամ, երբ պարոն Ռոբերը գալիս է մեզ մոտ, ես կամացուկ ասում եմ նրան. «Ամուսնացրեք, ամուսնացրեք խեղճ աղջկան»:

Այդ բառերն արտասանելով, տիկին Պերինան քայլերն ուղղեց դեպի Նելի Փոքր ամրոցը և Ասկանիոյի ուղեկցությամբ մտավ այն սենյակը, որտեղ նրանք թողել էին Կոլումբային:

Կոլումբան նստած էր մտազբաղ ու երազկոտ տեսքով, նույն կեցվածքով, ինչպես թողել էինք նրան, միայն շարունակ բարձրացնում էր գլուխն ու հայացքը հառում դռանը, որտեղից դուրս էր եկել գեղեցիկ պատանին: Եվ եթե որևէ մեկը հետևեր նրա հայացքներին, ապա կմտածեր, որ սպասում է Ասկանիոյին: Սակայն հենց որ դուռը բացվեց, աղջիկն անմիջապես ձեռքն առավ ձեռագործը: Եվ ո՛չ տիկին Պերինան, ո՛չ Ասկանիոն չկասկածեցին, որ աշխատանքն ընդհատված էր:

Կոլումբան ինչպե՞ս գլխի ընկավ, որ երիտասարդը գալիս է գուենյայի հետ: Դա կարելի կլիներ բացատրել հիպնոտիզմով, եթե այն ժամանակներում հիպնոտիզմն արդեն հորինված լիներ:

— Կոլոմբա, ես բերեցի պատանուն, որը մեզ սուրբ ջուր էր մատուցում: Սիրելիս, ես նրան իսկույն ճանաչեցի, նա՛ է: Ես պատրաստվում էի ուղեկցել նրան մինչև Նելի Մեծ ամրոցի դուռը, բայց նա ասաց, որ ձեզ հրաժեշտ չի տվել: Եվ դա ստույգ ճշմարտություն է, չէ՞ որ դուք ոչ մի բան չփոխանակեցիք: Բայց երկուսդ էլ, փառք ասածու, շեք պապանձվել...

— Տիկի՛ն Պերինա, — ընդհատեց դուենյային հուզմունքից կարկամած Կոլոմբան:

— Այո: Ի՞նչ կա որ: Ինչո՞ւ շիկնեցիք: Պարոն Ասկանիոն օրինավոր երիտասարդ է, իսկ դուք, բարեբարո օրիորդ: Բացի այդ, նա, ըստ երևույթին, զարդերի, թանկարժեք քարերի և նրբագեղ իրերի սքանչելի վարպետ է, իսկ սիրունատես աղջիկները, սովորաբար, սիրում են այդ ամենը: Եվ եթե կամենում եք, աղջիկս, նա կբերի իր պատրաստած զարդերը:

— Ինձ ոչինչ հարկավոր չէ, — թոթովեց Կոլոմբան:

— Հիմա գուցե հարկավոր չէ, բայց հուսով եմ, որ դուք այս խուլ անկյունում շեք թառամելու: Արդեն տասնվեց տարեկան եք, Կոլոմբա, և կգա մի օր, երբ կդառնաք գեղեցկուհի հարսնացու, և ձեզ կնվիրեն բազմաթիվ թանկարժեք զարդեր. իսկ հետո կդառնաք անվանի տիկին, և ձեզ պետք կլինեն ամեն տեսակի նրբագեղ իրեր: Ավելի լավ է բոլոր վարպետների մեջ առաջնությունը տալ այս երիտասարդին, որը, իհարկե, մյուսներից ավելի արժանավոր է:

Կոլոմբան տանջվում էր: Այդ նկատելով, Ասկանիոն, որին տիկին Պերինայի ենթադրություններն այնքան էլ չէին ուրախացրել, շտապեց օգնության հասնել խեղճ աղջկան, որի համար ավելի հեշտ էր խոսել պատանու հետ, քան լսել դուենյայի մենախոսությունը:

— Օ՛, մաղմուազել, — ասաց նա, — մի ղրկեք ինձ այդ շնորհից և թույլ տվեք բերել պատրաստածս զարդերից մի քանիսը: Հիմա ինձ թվում է, որ բոլոր զարդերը պատրաստել եմ ձեզ համար և որ դրանք պատրաստելիս մտածել եմ ձեր մասին: Օ՛, հավատացեք խոսքիս, որովհետև մենք՝ արվեստագետ-ոսկերիչներս, թանկարժեք քարերից, ոսկուց,

արծաթից պատրաստած զարդերի մեջ երբեմն մարմնավորում ենք մեր մտահղացումները...

Եվ անկեղծորեն ասած, ինչպես վայել է պատմագրին, լսելով քնքշությամբ լի այդ բառերը, Կոլոմբայի սիրտը հրճվեց, որովհետև Ասկանիոն, երկարատև լուսթյունից հետո, վերջապես խոսեց և խոսեց այնպես, ինչպես պետք է խոսեր նրա երազած երիտասարդը. ըստ որում նույնիսկ պչքերը շքարձրացնելով, աղջիկը զգում էր, թե ինչպիսի հրակեզ, ճառագայթող հայացք է հառված իր վրա: Օտարերկրյա արտասանությունն առանձնահատուկ հմայք էր տալիս պատանու բառերին՝ Կոլոմբայի համար նոր, անհասկանալի, խորին իմաստ և անդիմադրելի հմայք սիրո անորսալի, ներդաշնակ այն լեզվին, որն աղջիկները հասկանում են ավելի շուտ, քան սկսում են խոսել այդ լեզվով:

— Իհարկե, — աչքը Կոլոմբայից շփտելով, շարունակեց Ասկանիոն, — իհարկե, մենք ամենևին չենք հարստացնում ձեր գեղեցկությունը: Աստված ավելի զորավոր չի դառնում, երբ մենք զարդարում ենք նրա զոհասեղանը: Մենք պարզապես շրջանակում ենք կնոջ գեղեցկությունը իր նման հմայիչ ու սքանչելի թանկարժեք զարդերով, և երբ ստվերի մեջ պահված, մենք՝ փայլուն ու հմայիչ զարդերի համեստ, խոնարհ վարպետներս, տեսնում ենք ձեզ՝ լուսապայծառ գեղեցկուհիներիդ, խորհելով մեր ոչնչության մասին, մխիթարվում ենք, որ մեր վարպետությունը ձեզ դարձրել է է՛լ ավելի գեղեցիկ:

— Օ՛, պարոն, — պատասխանեց Կոլոմբան, վերջնականապես շփոթվելով նրա բառերից, — ես, թերևս, երբեք չեմ կրի ձեր սքանչելի զարդերը: Հիրավի, դրանք ինձ պետք չեն գա: Ես ապրում եմ մեկուսացած, շճանաչված և այս մենավոր կյանքն ու անհայտությունն ինձ բոլորովին չեն նեղում: Ետտովանում եմ, որ կցանկանայի միշտ այսպես ապրել: Եվ, այնուամենայնիվ, ճիշտն ասած, շատ կցանկանայի տեսնել ձեր պատրաստած զարդերը... Ոչ թե ունենալ, ո՛չ, այլ պարզապես տեսնել միայն... Ոչ թե զարդարվել դրանցով, այլ պարզապես հիանալ:

Եվ սարսափելով այն մտքից, որ շափազանց շատ բան ասաց, իսկ գուցե ավելին շասելու համար, Կոլոմբան լռեց,

զլուխ տվեց և դուրս թռավ այնպիսի աճապարանքով, որ նման գործերում ավելի փորձված մարդը կմտածեր, թե դա փախուսա է:

— Հիանալի է, — բացականչեց տիկին Պերինան: — Վերջապես մենք էլ սկսում ենք կոկետություն անել: Պետք է խոստովանեմ, որ դուք, երիտասարդ, իրոք շատ պերճախոս եք: Հիրավի, թերևս ձեր կողմերում գիտեն մարդկանց գուր գալու գաղտնիքը: Եվ ահա ձեզ ապացույցը. դուք անմիջապես շահեցիք իմ համակրանքը: Երդվում եմ պատվովս, ես ի սրտե ցանկանում եմ, որ պարոն պրևոն շատ էլ խստորեն շվարվի ձեզ հետ: Ցտեսություն, երիտասարդ, և ասացեք ձեր ուսուցչին, որ զգուշանա: Նախազգուշացրեք, որ մեսսեր դ'էստուրվիլը շար բնավորություն ունի, իսկական սատանա է: Եվ, բացի այդ, նա ազդեցիկ դեմք է արքունիքում: Թող ձեր ուսուցիչն իմանա ու հրաժարվի իր դիտավորությունից: Բնակություն մի հաստատեք Նելի Մեծ ամրոցում, և գլխավորը՝ ուժով մի գրավեք այն: Իսկ ձեզ հետ մենք դեռ կհանդիպենք, այո՞: Եվ խնդրում եմ, մի հավատացեք Կոլոմբային. նա իր հանգուցյալ մորից այնքան հարստություն է ժառանգել, որ կարող է ցանկացած քմահաճույքը թույլ տալ իրեն և կվճարի ձեր զարդերի համար քսան անգամ ավելի, քան դրանք արժեն: Ի դեպ, ավելի հասարակ զարդեր էլ բերեք. գուցե նրա մտքով անցնի որևէ բան նվիրել ինձ: Փառք աստծո, ես դեռ բավականին երիտասարդ եմ, եթե զարդարվեմ, կարող եմ դուր գալ: Դուք ինձ հասկացաք, այո՞:

Եվ մտածելով, որ իր բառերն ավելի համոզիչ դարձնելու համար հարկավոր է նաև ժեստ, տիկին Պերինան ձեռքը դրեց պատանու ուսին: Ասկանիոն ցնցվեց, ասես նրան հանկարծակի արթնացրել էին քնից: Եվ իսկապես, պատանուն թվում էր, թե այդ բոլորը տեսել է երազում: Նա շէր կարողանում պատկերացնել, որ եկել է սիրած աղջկա մոտ, շէր հավատում, որ այդ անաղարտ տեսիլքը, որի քաղցրահնչուն ձայնը դեռ արձագանքում էր ականջներում, իսկ եթերային կերպարանքը քիչ առաջ սահեց-անցավ աչքերի առջևից, իսկապես նա էր, որի մի հայացքի համար գեռ երկ և այսօր առավոտյան իր կյանքը կտար:

Եվ ահա, երջանկությամբ ու ապագայի հույսերով լի, Ասկանիոն խոստացավ տիկին Պերինային այն ամենը, ինչ նա կամենում էր, նույնիսկ չլսելով նրա խնդիրքը: Նա պատրաստ էր իր ամբողջ ունեցվածքը տալ, միայն թե կրկին տեսնի Կոլոմբային:

Բայց Ասկանիոն հասկացավ, որ այստեղ մնալն այլևս պատշաճ չէ, և հրաժեշտ տալով տիկին Պերինային, խոստացավ վերադառնալ հետևյալ առավոտ:

Երբ դուրս էր գալիս նեւի Փոքր ամրոցից, Ասկանիոն հանդիպեց երկու մարդու: Նրանցից մեկն այնպես նայեց Ասկանիոյին, որ հայացքից միայն, էլ շենք ասում զգեստի մասին, պատանին ճանաչեց պրևոյին:

Եվ Ասկանիոյի ենթադրությունը վստահություն դարձավ, երբ տեսավ ինչպես այդ երկուսը բախեցին դարպասը, որտեղից ինքը քիչ առաջ դուրս էր եկել: Այդ ժամանակ պատանին ցավեց, որ ավելի շուտ չի գնացել: Ով գիտի, իր անզգուշությունը Կոլոմբայի դեմ չի՞ ուղղվի...

Եվ ուշադրություն չդրավելու համար, եթե, իհարկե, պրևովոն առհասարակ նկատել էր նրան, Ասկանիոն, առանց հետ նայելու հեռացավ ամբողջ աշխարհում այն միակ անկյունից, որին կամենում էր անբաժանելիորեն տիրել այդ պահին:

Արվեստանոց վերադառնալով, նա տեսավ, որ Բենվենուտոն շատ մտահոգված է: Այն մարդը, որ կանգնեցրել էր նրան փողոցում, Պրիմատիչոն էր, որն աճապարել էր, ինչպես վայել է բարեկամ հայրենակցին, նախազգուշացնել Չելլինիին, որ Ֆրանցիսկ I-ի առավոտյան այցի ժամանակ արձանագործն անզգուշ է եղել և ի դեմս դքսուհի 'էտամպի ձեռք է բերել մահացու մի թշնամի:

ԳԼՈՒԽ ՅՈՒԵՐՈՐԴ

Փեսացուն և բարեկամը

Նեւի ամրոցի մուտքի մոտ Ասկանիոյին հանդիպած անծանոթներից մեկն իրոք մեսսեբ Ռորեր դ'էստուրվիլն էր, Փա-

րիզի պրևոն, իսկ մյուսի մասին շուտով կիմանանք:

Ասկանիոյի գնալուց հետո անցել էր հինգ րոպե, իսկ Կոլոմբան, դեռ իր սենյակում սլահված, ականջը ձայնի կանգնել էր մտազբաղ, երբ ներս ընկավ տիկին Պերինան ու հայտնեց, որ հարևան սենյակում հայրը նրան է սպասում:

— Հայրի՛կը, — բացականչեց վախեցած Կոլոմբան և իսկույն հազիվ լսելի ձայնով ավելացրեց. — Տեր աստված, մի՞թե նրանք հանդիպել են:

— Այո, ձեր հայրը, սիրելիս, — պատասխանեց տիկին Պերինան, չսեղով վերջին բառերը, — հետն էլ ինչ-որ պատկանելի ծերունի, բայց թե ով է, չգիտեմ:

— Ինչ-որ պատկանելի ծերունի՞, — վատ նախազգացումից սարսռելով, մրմնջաց Կոլոմբան: — Տեր աստված: Ի՞նչ է նշանակում դա, տիկին Պերինա: Երկու երեք տարվա ընթացքում թերևս առաջին անգամ է, որ հայրիկը գալիս է մեզ մոտ ոչ մենակ:

Սակայն, շնայած վախին, աղջիկն ստիպված էր հնազանդվել, մանավանդ որ լավ գիտեր մեսսեր դ'էստուրվիլի անհամբեր բնավորությունը: Նա օգնության կոչեց իր ամբողջ արիությունն ու ժպտալով մտավ սենյակ, որտեղից քիչ առաջ փախել էր: Բանն այն է, որ շնայած ակամա վախին, որը Կոլոմբան առաջին անգամ էր զգում, նա սիրում էր հորն անկեղծ սիրով, և թեև պրևոն վարվում էր նրա հետ բավական խստորեն, աղջիկը միապաղաղ ու տրտում օրերի շարքից առանձնացնում էր այն օրերը, երբ հայրը լինում էր նեղի ամբոցում, և տոն էր համարում դրանք:

Կոլոմբան մոտեցավ հորը և ցանկանում էր գրկել նրան, որևէ քնքուշ բան ասել, բայց պրևոն հետ քաշվեց, շթողնելով, որ աղջիկը որևէ բառ արտասանի: Հայրը բռնեց նրա ձեռքը, մոտ տարավ անձանոթին, որը կանգնած էր ծաղիկներով զարդարված հսկայական բուխարուն կոթնած և ասաց.

— Ահա՛, սիրելի բարեկամ, ներկայացնում եմ քեզ աղջրկանս... — Այնուհետև Կոլոմբային գիմելով, ավելացրեց. — Կոլոմբա, կոմս դ'Օրբեկն է, թագավորի գանձապահը և քո փեսացուն:

Կոլումբան, քաղաքավարութիւնից իրեն զսպելով, կամացուկ ախ քաշեց, բայց ծնկները դողացին ու նա հենվեց ասթուի թիկնակին:

Նվ իբոք, հասկանալու համար, թե նորութիւնն ինչպես սարսափեցրեց Կոլումբային, մանավանդ հիմա, երբ նա այդպիսի հոգեկան դրութիւն մեջ էր, պետք էր անգնել կոմս դ'Օրբեկին:

Ճիշտ է, Կոլումբայի հայրը՝ մեսսեր Ռոբեր դէնտուրվիլը՝ էլ աչքի չէր ընկնում գեղեցկութեամբ. նա կիտում էր թափ հոնքերը, երբ ընդդիմանում էին, կամ որևէ բանում հակաճառում: Նրա դեմքը խիստ էր, ամբողջ ամբակազմ կերպարանքի մեջ ինչ-որ կոպիտ, անճոռնի, նրա օգտին քիչ տրամադրող բան կար. բայց երբ պրևոն կանգնած էր կոմս դ'Օրբեկի կողքին, նրան կարելի էր համեմատել վիշապի կողքին կանգնած Գարրիել հրեշտակապետի հետ: Համենայն դեպս, լայն դեմքը և ցայտուն դիմադժերը խոսում էին վրձնականութիւնն ու կամքի մասին, փոքրիկ, մոխրագույն աչքերում խորաթափանց ու աշխույժ միտք էր առկայծում... Իսկ կոմսը հիվանդոտ, վտիտ, թուլակազմ, երկար ձեռքերով, որոնք սարդի շանչեր էին հիշեցնում, մոծակի բարակ ձայնով, խխունջի պես դանդաղկոտ, ոչ միայն այլանդակ էր, այլև նողկալի. ի դեպ, այլանդակութիւնն հետ մեկտեղ նա հիմար էր ու շարասիրտ: Արմատացած սովորութիւնն համաձայն նա կանգնել էր գլուխը թեթևակի մի կողմ հակած և նողկալիորեն ժպտում էր. նրա հայացքի մեջ ինչ-որ նենգ բան կար:

Այդ պատճառով, տեսնելով զզվելի ծերուկին, որին հայրը ներկայացրեց որպես փեսացու այն ժամին, երբ նրա հոգում, հիշողութիւնն մեջ, աչքերում դրոշմվել էր գեղեցիկ պատանու պատկերը, որը քիչ առաջ այս սենյակում էր, Կոլումբան, ինչպես արդեն ասացիք, քիչ մնաց ճշա, բայց զրպեց իրեն և գունատվելով անշարժացավ տեղում, վախով լի հայացքը հառած հորը:

— Ներիր, խնդրեմ, սիրելի բարեկամ, Կոլումբայի անպաղաքավարութիւնն համար,— շարունակեց պրևոն:— Նախ,

և առաջ իմ ամոթխաժ աղջիկն այստեղից դուրս չի եկել մտաւորապես երկու տարի, որովհետև, ինչպես քեզ հայտնի է, մեր օրերի հովերն այնքան էլ օգտակար չեն սիրունատես աղջիկների համար: Եվ հետո, ճիշտն ասած, ես հիմարութուն արեցի, որ շնախազգուշացրի նրան մեր ծրագրերի մասին: Ասենք, դա ավելորդ է. չէ՞ որ իմ որոշումը ոչ մեկի հատատման կարիքը չունի և կատարվում է անառարկելիորեն: Վերջապես, նա շգիտի, թե ով ես դու, շգիտի, որ քո անունով, հարստությամբ և տիկին դ'էտամպի բարյացակամությամբ դու կարող ես հասնել ցանկացածիդ: Եվ խորհելով այդ մասին, նա կգնահատի այն պատիվը, որ դու քո փառավոր, հինավուրց տոհմը կապում ես մեր նորելուկ, ազնվական տոհմի հետ: Նա կհասկանա, որ քառասնամյա բարեկամութունը...

— Բավական է, սիրելի բարեկամ: Ի սեր աստծո, բավական է, — ընդհատեց նրան կոմսը: Այնուհետև, դիմելով կոլումբային այն սանձարձակությամբ և հանդուգն ինքնավստահությամբ, որն այնքան տարբերվում էր խեղճ Ասկանիոյի երկշտությունից, ասաց. — դե, հանգստացեք, հոգյակս, թող ձեր այտերին շողա սքանչելի ավարդը, որն այնքան սազում է ձեզ: Օ՛հ, տեր աստված, մի՞թե ես շգիտեմ աղջկա և նույնիսկ երիտասարդ կնոջ հոգին, չէ՞ որ ես արդեն երկու անգամ ամուսնացած եմ եղել, անուշիկս: Իսկապես, շարժե այդքան հուզվել: Հուսով եմ, դուք շեք վախենում ինձնից, այո՞, — ինքնագոհ ձայնով ավելացրեց կոմսը, կուրծքն ուղցրելով և ձեռքը քսելով ցանցառ բեղերին ու թաղավորական ձևով խուզած մորուքին: — Ձեր հայրն իզուր այդքան անսպասելիորեն փեռացու հայտարարեց ինձ. այդ բառն առաջին անգամ միշտ էլ հուզում է աղջիկների սիրտը, բայց դուք կհաշտվեք այդ բառի հետ, փոքրիկս, և ի վերջո ձեր սիրունիկ շրթունքներով կարտասանեք... Օ՛հ, դուք ավելի գունատվեցիք... Ողորմա՛ծ աստված... Գուցե նա վա՛տ է զգում:

Եվ դ'Օրբեկն ուզում էր ձեռք մեկնել նրան, բայց կոլումբան ձգվեց, մի քայլ հետ քաշվեց, ասես վախենալով դիպչել

կոմսին, ինչպես վախենում են օձից, հավաքեց բոլոր ուժերն ու կմկմալով ասաց.

— Ներեցեք, պարոն... Ներեցեք, հայրիկ... Դատարկ բան է... Չէ՞ որ ես հույս ունեի, մտածում էի...

— Այդ ինչի՞ մասին էիր մտածում, ի՞նչ հույս ունեիր: Դե շուտ ասա,— հրամայեց պրևոն, իր սրատես, շար աչքերը աղջկանից շկտրելով:

— Որ ինձ թույլ կտաք ընդմիշտ մնալ ձեզ հետ, հայրիկ,— պատասխանեց Կոլոմբան:— Չէ՞ որ մայրիկի մահից հետո միայն ես եմ հոգ տանում ձեր մասին, սիրում եմ ձեզ և կարծում էի, որ...

— Լսի՛ր, Կոլոմբա,— տիրաբար ասաց պրևոն:— Ես այնքան էլ ծեր չեմ և խնամքի կարիք չեմ զգում, իսկ դու արդեն այն հասակում ես, որ պետք է ամուսնանալ:

— Տե՛ր աստված,— կրկին խոսակցությանը խառնվեց կոմսը:— Դե համաձայնեք, ինչի՞ համար են այդ բոլոր ձևականությունները, սիրելիս: Բառեր չեմ գտնում նկարագրելու, թե ինչքան երջանիկ կլինեք ինձ հետ: Երդվում եմ, շատ կանայք կնախանձեն ձեզ: Ես հարուստ եմ, գրողը տանի: Ես ուզում եմ, որ դուք իմ կինը դառնաք: Ձեզ կընդունեն արքունիքում և ձեր ազամանդներին կնախանձի եթե ոչ թագուհին, ապա ինքը՝ տիկին դ'Էտամպր:

Դժվար է ասել, թե վերջին բառերն ինչ զգացմունքներ հարուցեցին Կոլոմբայի սրտում, բայց նրա այտերը հանկարծ շիկնեցին և նա, շնայած պրևոյի խիստ ու սպառնալից հայացքին, պատասխանեց կոմսին.

— Ես կխնդրեմ հորս, մոնսենյոր, որ թույլ տա ինձ մտածելու ձեր առաջարկի մասին:

— Ինչե՛ր ես դուրս տալիս,— կատաղորեն գոռաց դ'Էտամպրիլը:— Ոչ մի ժամ, ոչ մի րոպե: Այսուհետև դու կոմսի հարսնացուն ես, լավ հիշիր այդ: Դուք կամուսնանալիք հենց այս երեկո, եթե կոմսը մի ժամ հետո մեկնելու չլիներ իր նորմանդական կոմսությունը: Կարծեմ դու գիտես, որ իմ կամքը հրաման է: Չհակաճառե՛լ: Գնանք, դ'Օրբեկ, թողնենք



այս կատրաստվող աղջկան: Այդպես, ուրեմն, այսուհետև նա բռնն է, բարեկամս, և դու քո հարսնացուն կհայտարարես նրան, երբ կամենաս... Գնանք, աչքի անցկացնենք ձեր ապագա բնակավայրը:

ԴՕրբեկը դանդաղում էր, պատրաստվելով էլի ինչ-որ բան ասել Կոլոմբային, բայց պրևոն նրա թևը մտավ և դժգոհությամբ փնթփնթալով տարավ իր հետ. այդ պատճառով կոմսը ստիպված եղավ բավարարվել միայն գլխի շարժումով և, շարախնդորեն քմծիծաղ տալով, դուրս եկավ մեսսեր Ռոբերի հետ:

Նրանց դուրս գալուն պես դիմացի դռնից սենյակ վազեց տիկին Պերինան: Նա լսել էր պրևոյի գրգռված ձայնը և օգնության շտապեց, գլխի ընկնելով, որ հայրը, ինչպես միշտ, կոպիտ է վարվել Կոլոմբայի հետ: Դուենյան հայտնվեց ճիշտ ժամանակին և հասցրեց ձեռքը մեկնել Կոլոմբային, որը քիչ էր մնում ցած ընկնի:

— Մ, տեր աստված, տեր աստված,— բացականչեց խեղճ աղջիկը, ձեռքերով աչքերը ծածկելով, ասես վախենում էր կրկին տեսնել դՕրբեկի գարշելի կերպարանքը, թեև վերջինս արդեն սենյակում չէր:— Տեր աստված, ուրեմն ամեն ինչ վերջացավ: Մնաք բարով, սքանչելի երազներ: Մնաք բարով, քաղցր հույսեր: Ամեն ինչ կորավ, կործանվեց, և ինձ մնում է միայն մեռնել:

Հարկ չկա ասելու, որ այդ բառերը, Կոլոմբայի թուլությունն ու գունատությունը վախեցրին տիկին Պերինային, և վախը գրգռեց հետաքրքրասիրությունը: Իսկ Կոլոմբան ցանկանում էր թեթևացնել հոգին և աղի արցունք թափելով պատմեց հարգարժան դաստիարակչուհուն այն ամենի մասին, ինչ տեղի ունեցավ հոր, կոմս դՕրբեկի և իր միջև:

Տիկին Պերինան համաձայնեց, որ փեսացուն երիտասարդ չէ և ոչ էլ սիրունատես. բայց գտնում էր, որ ավելի մեծ փորձանք չկա, քան պառաված աղջիկ մնալը, այդ պատճառով սկսեց ապացուցել Կոլոմբային, որ շատ ավելի լավ է ամուսնանալ այլանդակ, բայց հարուստ ազնվական ծերունու հետ, քան պառաված օրիորդ լինել: Դուենյայի այդ բո-

լոր շատախոսությունները մինչև հոգու խորքը վրդովեցին Կոլոմբային, և նա վերագարձավ իր սենյակը, մինակ թողնելով տիկին Պերինային, որն օժտված լինելով բավական վառ երևակայությամբ, արդեն երազում էր այն մասին, թե ինչպես մադամուազել Կոլոմբայի դաստիարակչուհին կբարձրանա մինչև կոմսուհի դ'Օրբեկի կոմպանյոնուհու աստիճանը:

Իսկ այդ ժամանակ պրևոն և կոմսն աչքի էին անցկացնում Նելի Մեծ ամրոցը, ինչպես մի ժամ առաջ՝ տիկին Պերինան և Ասկանիոն:

Զվարճալի կլիներ, եթե պատերն ականջներից բացի, որ վերագրում են նրանց, ունենային նաև աչքեր ու լեզու և բոլոր անցորդներին պատմեին այն մասին, ինչ տեսել են ու լսել:

Բայց պատերը լուռ նայում էին պրևոյին ու գանձապահին, գուցե ծիծաղելով պատերին հատուկ ծիծաղով. այդ պատճառով սկսեց խոսել մեզ արդեն ծանոթ թագավորական գանձատան պահապանը:

— Իսկապես, — խորհրդածում էր նա, Նելի Փոքր ամրոցից դեպի Մեծ ամրոցը գնալիս: — Իսկապես, մեր փոքրիկը շատ սիրունիկն է: Ինձ պետք է հենց այդպիսի կին, դ'էստուրվիլ, բարեկամս, խելամիտ, մաքուր, դաստիարակված: Առաջին ամպրոպը ճայթելուց հետո ամպերը կցրվեն, հավատացեք ինձ: Բոլոր մանկամարդ աղջիկները երազում են երիտասարդ, գեղեցիկ ու հարուստ ամուսին ունենալ. ես նրանց լավ եմ ճանաչում: Տեր աստված, չէ՞ որ ես ունեմ, համենայնդեպս, այդ բոլոր հատկությունների կեսը:

Հարսնացուի մասին իր կարծիքը հայտնելուց հետո նա խոսք բացեց ապագա կալվածքների մասին, ըստ որում և՛ ազգկա, և՛ օժիտի մասին խոսում էր նույն տոնով:

— Ահա Նելի հինավուրց ամրոցը, — բացականչեց գանձապահը: — Սենյակները սքանչելի են, շնորհակալ եմ: Այստեղ մեզ համար շատ լավ կլինի՝ ինձ, կնոջս և թագավորական գանձերի: Ահա այստեղ կլինեն մեր սենյակները, այնտեղ կպահեմ գանձերը, իսկ այստեղ՝ ծառաներին: Սակայն

ամբողջում ամեն ինչ բավականին խարխուլվել է, բայց վերանորոգման վրա ծախս անելով (ըստ որում, մենք կհամոզենք նորին մեծությանը վճարել այդ բոլորի համար), հիանալի կապրենք այստեղ: Ի դեպ, դ՛էստուրվիլ, դու հաստատ համոզված ես, որ այս կալվածքը քեզ կմնա: Պետք է այնպես անել, որ տիրակալելու իրավունքները տան քեզ: Որքան հիշում եմ, թագավորը քեզ ընծայագիր չի շնորհել:

— Ճիշտն ասած, նա ամբողջը ինձ չի ընծայել, — ծիծաղելով հաստատեց պրևոն: — Սակայն, թույլատրել է զբաղեցնել, իսկ դա համարյա նույն բանն է:

— Բայց եթե որևէ մեկը շար կատակ անի քեզ հետ և կարողանա ընծայագիր ձեռք բերել:

— Է՛, այդ խելագարը լավ ընդունելություն չի գտնի այստեղ, երաշխավորում եմ, թող միայն փորձի ներկայացնել իր իրավունքները: Քո և տիկին դ՛էստամպի հովանավորությունամբ ես կստիպեմ սրիկային զղջալ իր պահանջների համար: Ի՞նչ ես ասում, ես բացարձակապես հանգիստ եմ. նեղի ամբողջը պատկանում է ինձ, և դա նույնքան հաստատ է, բարեկամս, որքան այն, որ իմ աղջիկը՝ Կոլոմբան, քո հարսնացուն է: Ճանապարհ ընկիր, տերն ընդ քեզ, և շուտ վերադարձիր:

Երբ պրևոն արտասանում էր այդ բառերը, որոնց ճշմարտացիությունը ոչ նա ինքը, ոչ նրա զրուցակիցը պատճառներ չունեին կասկածելու, քառանկյունի բակից նեղի Մեծ ամբոցի այգիները տանող դարպասի մեջ հայտնվեց երրորդ գործող անձը՝ այգեպան Ռեմբոյի ուղեկցությամբ: Դա Վիկոնս դե Մարմանն էր:

Վիկոնսն էլ Կոլոմբայի ձեռքը խնդրելու հավակնորդ էր, սակայն՝ ձախորդ հավակնորդ: Այդ թեթևսուլիկը շիկակարմիր մազեր ուներ, վարդաճերմակ դեմք. նա ինքնագոհ էր, հանդուգն, շատախոս և պարծենում էր նրանով, որ զբաղեցնում է թագավորական քարտուղարի պաշտոնը. այդ պաշտոնի շնորհիվ նա ազատ ելումուտ ուներ նորին մեծության մոտ՝ որսկան շների, թութակների ու կապիկների հետ միասին: Ահա թե ինչու պրևոյին մոլորության մեջ չգցեցին նորին մեծության թվացող բարյացակամությունը, կամ կար-

ծեցյալ սիրալիրութիւնը դե Մարմանի նկատմամբ: Չէ՞ որ այդ բարյացակամութիւնը և սիրալիրութիւնը նա շահում էր միայն կատարելով ամեն տեսակի հանձնարարութիւններ, նույնիսկ՝ ո՛չ այնքան բարոյական: Բացի այդ, վիկոնտ դե Մարմանն արդեն վաղուց քամուն էր տվել իր ունեցվածքը, և նրա ամբողջ բարեկեցութիւնը կախված էր Ֆրանցիսկ I-ի առատաձեռնութիւնից: Սակայն այդ առատաձեռն սպարպենները ամեն րոպե կարող էին սպառվել, և մեսսեր Ռոբեր դ'էստուրվիլն այնքան էլ դյուրահավատ չէր, որ այդպիսի կարևոր դեպքերում հույս դներ թագավորի քմահաճույքների վրա, որը շատ փոփոխամիտ բնավորութիւն ուներ: Նա զգուշորեն մերժեց վիկոնտ դե Մարմանի առաջարկութեանը, որպէս գաղտնիք ասելով նրան, որ իր աղջիկն արդեն վաղուց նշանված է ուրիշի հետ: Այդ խոստովանութեան շնորհիվ, որը բացատրում էր մերժման պատճառը, վիկոնտ դե Մարմանը և մեսսեր Ռոբերն արտաքուստ մնացին մտերիմ բարեկամներ, թեև այդ օրից վիկոնտն ատեց պրևոյին, իսկ պրևոն սկսեց զգուշանալ վիկոնտից, որովհետև վերջինս իր սիրալիր ժպիտների ու բարյացակամութեան տակ չէր կարող չարութիւնը թաքցնել մի մարդուց, որի համար պալատական խճճված գաղտնիքներն ու մարդկանց հոգու խորքերը բաց գիրք էին: Ամեն անգամ, երբ հայտնվում էր վիկոնտը, այնքան սիրալիր ու հաճոյակատար, պրևոն պատրաստվում էր վատ լուրեր լսել, որոնք Մարմանը սովորաբար հաղորդում էր նրան արցունքն աչքերին, շինծու, կեղծ կարեկցանքով, բորբոքելով նրա վերքը:

Իսկ կոմս դ'Օրբեկի հետ վիկոնտ դե Մարմանը համարյա խղեց իր կապերը: Դեռ ավելին՝ նրանց փոխադարձ հակակրօնքը պարզապէս աչքի էր զարնում, իսկ արքունիքում դա հազվադեպ է լինում: Դ'Օրբեկն արհամարհում էր դե Մարմանին, քանի որ դե Մարմանը հարուստ չէր և չէր կարող արժանավայել կերպով պահպանել իր բարձր դիրքը: Դե Մարմանն ատում էր դ'Օրբեկին, քանի որ դ'Օրբեկը հեքիաթային հարստութեան տեր էր: Մի խոսքով, երկուսն էլ ատում էին միմյանց, որոգայթներ լարում իրար դեմ ամեն անգամ, երբ ընդհարվում էին նեղ արահետի վրա:

Այդ պատճառով, հանդիպելիս, երկու պալատականները գլուխ էին տալիս միմյանց այն հեզնական ու օտոր ժպիտով, որը կարելի է տեսնել միայն պալատական ընդունարաններում և որը նշանակում է. «է՛հ, եթե մենք այսքան ստոր վախկոտներ չլինեինք, մեզնից մեկն ու մեկը վաղուց արդեն ողջ չէր լինի»:

Սակայն պետք է խոստովանել, քանզի պատմողի պարտքն է ասել և՛ վատը, և՛ լավը, որ այս անգամ էլ նրանք սահմանափակվեցին միայն ողջունով և ժպիտներով. կոմս դ'Օրբեկը ոչ մի խոսք չփոխանակեց վիկոնտ դե Մարմանի հետ և պրևոյի ուղեկցությամբ շտապով դուրս եկավ այն դռնից, որից ներս էր մտել նրա թշնամին:

Շտապենք ավելացնել, որ շնայած փոխադարձ ատելությանը, թշնամիները հարկ եղած դեպքում անմիջապես կմիանային, ջանալով ոչնչացնել երրորդին:

Եվ այդպես, կոմս դ'Օրբեկը գնաց, իսկ պրևոն մենակ մնաց իր «բարեկամ» վիկոնտ դե Մարմանի հետ:

Պրևոն մոտոցավ նրան՝ դեմքին ուրախ արտահայտություն տալով, իսկ վիկոնտն սպասում էր նրան՝ տրտում տեսք ընդունած:

— Այդպես, ուրեմն, սիրելի պրևո,— ասաց վիկոնտը, առաջինը խախտելով լռությունը:— Շատ ուրախ եք երևում:

— Իսկ դուք, թանկագին Մարման, շատ տրտում եք:

— Բանն այն է, իմ խեղճ գ'էստուրվիլ, որ բարեկամներիս ձախորդությունները վշտացնում են ինձ նույնքան, որքան իմը:

— Այո, այո, ես գիտեմ, թե ինչպիսի կարեկից սիրտ ունեք,— պատասխանեց պրևոն:

— Եվ երբ տեսա, որ դուք փայլում եք ուրախությունից, ինչպես նաև՝ ձեր ապագա փեսա կոմս դ'Օրբեկը, քանզի նրա ամուսնությունը ձեր աղջկա հետ արդեն ոչ մեկի համար գաղտնիք չէ, և ես շնորհավորում եմ ձեզ, սիրելի գ'էստուրվիլ...

— Բայց ես ձեզ վաղուց էի ասել, որ Կոլոմբան նշանված է, սիրելի Մարման:

— Պարզապես շեմ հասկանում, թե ինչպես եք համա-
ձայնում բաժանվել ձեր սքանչելի աղջկանից:

— Դե ես շեմ էլ բաժանվում նրանից, — առարկեց մես-
սեր Ռոբերտը: — Իմ փեսան՝ կոմս դ'Օրբեկն իբր ամբողջ ունեց-
վածքով կտեղափոխվի Սենի այս ափը և բնակութուն կհաս-
տատի Նելի Մեծ ամրոցում: Իսկ ես ազատ ժամերս անց
կկացնեմ Նելի Փոքր ամրոցում:

— Խեղճ բարեկամս, — ասաց Մարմանը, գլուխը տարու-
բերելով և խորապես մտահոգված ձևանալով. նա մի ձեռ-
քով թևանցուկ արեց պրևոյին, մյուսով սրբեց երևակայա-
կան արցունքի կաթիլը:

— Իսկ ինչո՞ւ «խեղճ», — հարցրեց մեսսեր Ռոբերտը: —
Գրողը տանի, ուրիշ ի՞նչ լուրեր եք պատրաստվում հաղոր-
դել ինձ:

— Մի՞թե ես առաջինը պետք է հաղորդեմ ձեզ այդ վատ
լուրը...

— Ի՞նչ լուր: Դե ասացեք:

— Գիտեք, սիրելի պրևո, պետք է փիլիսոփա լինել մեր
անցավոր աշխարհում: Կա մի հին առած, որն անդադար
պետք է կրկնի դժբախտ մարդկութունը, քանզի նրա մեջ է
պարփակված կյանքի ամբողջ իմաստութունը:

— Վերջապես ասացեք: Ի՞նչ առած:

— Մարդը ենթադրում է, սիրելի բարեկամ... Մարդը են-
թադրում է, իսկ աստված կարգադրում է:

— Իսկ ի՞նչ էմ ենթադրում ես, և ինչպե՞ս է կարգադրում
աստված: Դե ասացեք ու վերջացրե՛ք:

— Դուք Նելի հինավուրց ամրոցը հատկացրել եք ձեր
փեսացուին ու աղջկա՞ն:

— Անշուշտ: Եվ հուսով եմ, որ երեք ամիս հետո նրանք
բնակութուն կհաստատեն այստեղ:

— Սխալվում եք, սիրելի պրևո, սխալվում եք: Նելի ամ-
րոցն արդեն ձեր սեփականությունը չէ: Ներեցե՛ք, ես ձեզ
այնպիսի վիշտ եմ պատճառում, բայց մտածեցի, որ ավելի
լավ է դուք (իսկ ես գիտեմ ձեր բռնկվող բնավորութունը)
այդ նորութունն իմանաք բարեկամից, որն այդ բոլորը

կհայտնի ձեզ զգուշորեն, հոգատարութեամբ, քան մի սրիկայի բերանից, որը կուրախանա ձեր դժբախտութեան վրա և ամեն ինչ կպատմի ձեզ առանց երկարաբանութիւնների: Ավա՛ղ, բարեկամս, նելի Մեծ ամբողջն այլևս ձերը չէ:

— Իսկ ո՞վ է խլել ինձնից:

— Նորին մեծութիւնը:

— Նորին մեծութիւնը:

— Անձամբ: Հիմա դուք հասկանո՞ւմ եք, որ դժբախտութիւնն անուղղելի է:

— Ե՞րբ է տեղի ունեցել այդ:

— Այսօր առավոտյան: Եթէ զրազված շինելի կուլքում, ավելի շուտ կտեղեկացնէի ձեզ:

— Ձեզ մոլորութեան մեջ են գցել, Մարման: Դա սուտ լուր է, որ տարածել են թշնամիներս, իսկ գուք ոչինչ չճշտելով, հրապարակում եք:

— Շատ կկամենայի, որ հենց այդպես լինէր, բայց դժբախտաբար ինձ ոչ ոք ոչինչ չի ասել. այդ բոլորը ես լսեցի սեփական ականջներովս:

— Ի՞նչ լսեցիք:

— Լսեցի, թէ ինչպես թագավորն անձամբ հրամայեց նելի Մեծ ամբողջը տալ ուրիշին:

— Իսկ ո՞վ է այդ «ուրիշը»:

— Մի թափառական, Իտալիայից եկած ոմն ոսկերիչ, որի անունը, անկասկած, ծանոթ է ձեզ: Բենվենուտո Չելլինին է, երկու ամիս առաջ Ֆլորենցիայից ժամանած մի բանասարկու: Չգիտեմ ինչու, թագավորը հիացած է նրանով և այսօր անձամբ բոլոր պալատականների հետ այցելեց նրան Ֆերարայի կարդինալի պալատում, որտեղ այդ վայ-նկարչի արվեստանոցն է:

— Ասացեք, վիկոնտ, դուք ներկա՞ էիք, երբ թագավորն այդ սրիկային շնորհեց նելի Մեծ ամբողջը:

— Իհարկե, ներկա էի,— պատասխանեց Մարմանը, բառերն արտասանելով վանկ-վանկ, դանդաղորեն և մեծագույն հաճույքով:

— Այդպե՛ս, այդպե՛ս,— ասաց պրևոն:— Ինչ արած,

կսպասեմ այդ թափառականին: Թող գա թագավորական
պարզեն ստանալու:

— Ինչպես, դուք մտադիր եք դիմադրութիւն ցույց տալ:

— Անշուշտ:

— Չկատարել թագավորի հրամանը:

— Աստժո հրամանը, սատանայի հրամանը, մի խոսքով՝
բոլոր նրանց, ովքեր կհրամայեն դուրս անել ինձ այստեղից:

— Չգուշացե՛ք, զգուշացե՛ք, պրեռ, — բացականչեց վի-
կոնտ դե Մարմանը: — Ես դեռ չեմ ասում այն մասին, որ
դուք շնորհադրկութեան եք դատապարտում ձեզ: Բայց մի՛
մոռացեք, որ Բենվենուտո Չելլինին ավելի սոսկալի է, քան
կարծում եք:

— Իսկ դուք գիտե՞ք, թե ով եմ ես, վիկոնտ:

— Նախ և առաջ նրան հովանավորում է ինքը՝ թագա-
վորը: Ճիշտ է, գուցե ժամանակավորապես, բայց, այնուա-
մենայնիվ, հովանավորում է:

— Իսկ դուք գիտե՞ք, որ ես Փարիզի պրեռն եմ՝ նորին
մեծութեան ներկայացուցիչը Շատլետում, որ ես բազմում եմ
ամպհովանու տակ, բաճկոնակ հագած, օծիքավոր պատմու-
ճանով, դաշույնը կողքիս, փետրազարդ գլխարկով և ձեռքիս
երկնագույն գավազան բռնած...

— Այնուհետև պետք է ասեմ, որ այդ անիծյալ իտա-
լացին հաճույքով կուլի է ընկնում արքայազնների, կարգինալ-
ների ու պապերի հետ, որպես հավասարը՝ հավասարի:

— Իսկ դուք գիտե՞ք, որ ես իմ տրամադրութեան տակ
հատուկ կնիք ունեմ, որը վավերացնում է ակտերի իսկու-
թյունը:

— Ասում են, որ այդ անիծյալ կովարարը վիրավորում
ու սպանում է անխտիր բոլորին, ովքեր կանգնում են նրա
ճանապարհին:

— Մի՞թե ձեզ հայտնի չէ, որ քսանչորս հրաձիգ օր ու
գիշեր սպասում են իմ հրամաններին:

— Ասում են, որ նա վաթսուն հոգու հետ կուլի բռնվելով,
սպանել է իր թշնամի ոսկերչին:

— Դուք մոռանում եք, որ նեղի ամբողջ — պարտապանված

է, որ պատերի մեջ հրակնատներ կան, դռները վերևում՝ մաշիկուլներ¹ և, բացի այդ, քաղաքային պարսպի շնորհիվ ամբողջ մի կողմից անառիկ է:

— Հավատացնում են, որ Բենյամինուտոն պաշարման գործը նույքան լավ գիտե, որքան Բայարդը, կամ Անտոնիո դե Անյվան²:

— Կտեսնենք:

— Ես վախենում եմ ձեզ համար...

— Իսկ ես սպասում եմ:

— Ներեցեք, սիրելի բարեկամ, շէի՞ք կամենա խորհուրդս լսել:

— Ասացե՛ք միայն առանց երկարաբանության:

— Կովի մի բռնվեք թշնամու հետ, եթե նա ձեզնից ուժեղ է:

— Ինձնից ուժե՞ղ: Այդ իտալացի ողորմելի արհեստավորը: Վիկոնտ, դուք համբերությունից հանում եք ինձ:

— Երդվում եմ պատվովս, կարծում եմ, որ կզղջաք: Նախազգուշացնում եմ, որովհետև դրա համար ծանրակշիռ պատճառներ ունեմ:

— Վիկոնտ, դուք ինձ կատաղեցնում եք:

— Մտածեցե՛ք, նրա կողմն է թագավորը:

— Ի՞նչ անենք. իսկ իմ կողմն է տիկին դ'Էտամպր:

— Նորին մեծությունը կարող է զայրանալ ձեր անհնազանդության համար:

— Ես արդեն շատ անգամ եմ այդպես վարվել, պարոն, և հաջողությամբ:

¹ մաշիկուլ — ծածկի հրակնատ

² Բայարդ Պյեո՝ դյու Տերայլ (1473—1524) — ֆրանսիական հռչակավոր զորապետ, որի հավատարմության, խիզախության ու արիության մասին առասպելներ է հյուսել ժողովուրդը: Նա ստացավ «անվախ ու անբասիր ասպետ» մականունը:

Անտոնիո դե Անյվա (1480—1536) — Կարլոս V-ի ամենաակախավոր զորավարներից մեկը

— Այո, գիտեմ, Մանտի կամրջով անցնել և տուրքի գործում: Բայց...

— Ի՞նչ «բայց»...

— Բանն այն է, որ այնքան էլ վտանգավոր չէ, երբեմն նույնիսկ ամենևին վտանգավոր չէ դեմ գնալ թուլակամ ու բարի թագավորին, սակայն շատ վտանգավոր է, երբ պայքարի մեջ ես մտնում Բենվենուտո Չելլինիի նման ուժեղ ու սոսկալի մարդու հետ:

— Գրո՞ղը տանի, վիկոնտ, դուք խելագարության կհասցընեք ինձ:

— Ընդհակառակն, ես ցանկանում եմ խելքի բերել ձեզ:

— Բավական է, վիկոնտ, բավական է: Ա՛յ քեզ սրիկա: Երգվում եմ, նա թանկ կվճարի այս ըոպենների հաճույքի համար, որ զգացի ձեզ բարեկամական կարեկցանքի շնորհիվ:

— Տա աստված, պրևո, տա աստված:

— Բավական է, բավական է: Դուք ինձ ամե՞ն ինչ ասացիք:

— Այո, այո, կարծեմ ամեն ինչ, — պատասխանեց վիկոնտը, ասես ջանալով մտաբերել, թե ուրիշ նման նորություն չկա՞ արդյոք:

— Գնաք բարով, — բացականչեց պրևոն:

— Մնաք բարով, խեղճ բարեկամս:

— Գնաք բարով:

— Այնուամենայնիվ, ես ձեզ նախազգուշացրի:

— Գնաք բարով:

— Իմ խիղճը լիովին հանգիստ կլինի. ահա թե ինչն է ինձ մխիթարում:

— Գնա՛ք բարով, գնա՛ք բարով:

— Հաջողություն եմ ցանկանում: Բայց պետք է ասեմ, որ ցանկությունս հազիվ թե իրականանա:

— Գնաք բարով, գնաք բարով, գնաք բարով:

— Մնաք բարով:

Եվ Մարմանը, տրտում տեսքով, ծանր հառաչելով, սեղ-

մեց պրևոյի ձեռքը, ասես ընդմիշտ հրաժեշտ էր տալիս նրան և, ձեռքերը դեպի երկինք կարկառելով, հեռացավ:

Պրևոն ճանապարհ դրեց վիկոնտին և նրա հետևից իր ձեռքով փակեց մուտքի դուռը:

Հասկանալի է, որ այդպիսի բարեկամական շրույցից հետո մեսսեր գ'էստուրվիլը կատաղությունից գլուխը կորցրել էր. կուտակված մաղձը հանգիստ չէր տալիս: Նա ցանկանում էր որևէ մեկի գլխին թափել իր բարկությունը և հանկարծ մտաբերեց երիտասարդին, որը դուրս էր գալիս նեւի Մեծ ամրոցից այն պահին, երբ ինքն ու կոմս դ'Օրբեկը ներս էին մտնում: Ռեմբոն շատ էլ հեռու չէր. պարոն գ'էստուրվիլը հրամայական ժեստով մոտ կանչեց այգեպանին ու հարցրեց, թե ով էր այն անծանոթը:

Այգեպանը պատասխանեց, որ տիրոջը հետաքրքրող երիտասարդը եկավ թաղավորի անունից, ցանկություն հայտնեց նեւի Մեծ ամրոցը տեսնել. իսկ ինքը՝ Ռեմբոն, վախեցավ հանձն առնել այդպիսի կարևոր մի գործ և եկվորին տարավ տիկին Պերինայի մոտ. կառավարչուհին մեծ սիրալիրությամբ ամեն ինչ ցույց տվեց նրան:

Պրևոն աճապարեց նեւի Փոքր ամրոցը, հարգարժան դուենյայից բացատրություն պահանջելու, բայց, ցավոք սրտի, վերջինս քիչ առաջ գնացել էր ամբողջ շաբաթվա համար մթերք գնելու:

Տանը միայն Կոլոմբան էր: Սակայն պրևոն մտածել անգամ չէր կարող, որ գեղեցիկ երիտասարդների վերաբերյալ տիկին Պերինային արված խստագույն հրամանից հետո աղջիկը կարող է տեսած լինել անծանոթին, այդ իսկ պատճառով նա ոչ մի բառ շասաց Կոլոմբային:

Մառայության գործերը պարոն գ'էստուրվիլին կանչում էին Շատլե և մեկնելուց առաջ սպառնալով Ռեմբոյին՝ շեմ-թարկվելու դեպքում անմիջապես դուրս վճնդել, նա կարգադրեց ոչ ոքի ներս չթողնել նեւի ո՛չ Մեծ, ո՛չ էլ Փոքր ամրոցները, ում անունից էլ հայտնվելու լինեն պատվիրակները և մանավանդ անարգ թափառականին, որն արդեն եղել է ամրոցում:

Այդ պատճառով, երբ հետևյալ առավոտ տիկին Պերինայի հրավերով Ասկանիոն եկավ, բերելով թանկարժեք զարդեր, Ռեմբոն բացեց միայն ձեղնալուսամուտը և վանդակապատի հետևից ասաց, որ մուտքը Նելի ամբողջ արգելված է բոլորին, մանավանդ՝ նրան:

Ասկանիոն, անշուշտ, շատ վշտացավ, բայց պետք է խոստովանել, որ նրա մտքով էլ շանցավ մեղադրել Կոլոմբային այդպիսի անսպասելի ընդունելության համար. նախօրեին աղջիկը միայն նայեց նրան, միայն մի նախադասություն ասաց, բայց նրա հայացքում այնքան երկշոտ սերկար, իսկ ձայնի մեջ՝ այնքան քնքշություն, որ մինչև հիմա Ասկանիոյին անդադար թվում էր, թե իր հոգում հրեշտակային երգ է հնչում: Պատանին գլխի ընկավ, որ մեսսեր Ռոբեր դ'էստուրվիլը տեսել է նրան և տվել այդ խստագույն հրամանը, որի զոհը դարձավ ին

ԳԼՈՒՍ ՌԻԹԵՐՈՐԴ

Հարձակման և պաշտպանության նախապատրաստությունը

Հենց որ Ասկանիոն պայատ մտավ և Բենվենուտոյին հաշիվ տվեց իր արշավի մասին, ավելի ճիշտ այն ամենի մասին, ինչ վերաբերում էր Նելի ամբողջի տեղադրությանը, Չելլինին, տեսնելով, որ շենքը բոլոր տեսակետներից հարմար է, անմիջապես գնաց թագավորի քարտուղարի՝ սենյոր դե Նյոֆվիլի մոտ՝ թագավորի անունից ընծայագիր խնդրելու:

Սենյոր դե Նյոֆվիլը խնդրեց սպասել մինչև առավոտ, հավաստիանալու համար, թե մեսսեր Բենվենուտոյի հավանությունները համապատասխանում են արդյոք իրականությանը, թեև արձանագործը հանդգնություն համարեց, որ իր խոսքին չեն հավատում, այնուամենայնիվ, հասկացավ այդ խնդիրքի օրինականությունն ու ենթարկվեց անհրաժեշտությունը, որոշելով սակայն երկարաձգման ոչ մի հնարավորություն չտալ սենյոր Նյոֆվիլին:

Ուտի հետևյալ առավոտ Չելլինին ճիշտ նշանակված
ժամին հայտնվեց թագավորի քարտուղարի քննարանում:
Նրան անմիջապես ընդունեցին, և նա լավ կանխանշան հա-
մարեց այդ:

— Դե ի՞նչ, մոնսեյնյոր, — հարցրեց Բենվենուտոն, —
իտալացին ճի՞շտ էր ասել ձեզ, թե՞ ստախոսի մեկն է:

— Ստույգ ճշմարտություն էր, սիրելի բարեկամ:

— Հաճելի է լսել:

— Թագավորը հրամայեց ինձ բոլոր օրենքների համա-
ձայն ընծայագիր տալ ձեզ:

— Շատ գոհ եմ:

— Սակայն... — անվստահ ձայնով շարունակեց Ֆինանս-
ների գծով քարտուղարը...

— Ուրիշ ի՞նչ կա, ասացե՛ք:

— Սակայն, եթե թույլատրեք, ես բարի խորհուրդ կտամ
ձեզ...

— Բարի խորհո՞ւրդ, գրողը տանի: Ախր դա հազվադեպ
բան է, պարոն քարտուղար: Խնդրեմ, խնդրեմ...

— Այսպես, ուրեմն, ավելի լավ է արվեստանոցի համար
Նելի Մեծ ամրոցի փոխարեն ուրիշ շենք փնտրեք:

— Ահա թե ի՞նչ, — քմծիծաղ տալով, ասաց Բենվենու-
տոն: — Ձեր կարծիքով ամրոցն ինձ վայել չէ՞...

— Ընդհակառակը:

— Ուրեմն, ինչպե՞ս հասկանալ ձեզ:

— Բանն այն է, որ ամրոցը պատկանում է բավականին
բարձրաստիճան անձնավորության, և պայքարը ձեզ համար
անպատիժ չի ավարտվի:

— Ես Ֆրանսիայի ազնվագույն թագավորի ծառան եմ, —
պատասխանեց Չելլինին, — և երբեք չեմ զիջի, որովհետև
գործելու եմ նրա անունից:

— Այո, բայց մեր երկրում, պարոն Բենվենուտո, ամեն
մեծատոհմիկ կալվածատեր թագավոր է իր տիրություն-
ներում, և եթե փորձեք արտաքսել պրևոյին նրա զբաղեց-
րած շենքից, վտանգի կենթարկեք ձեր կյանքը:

— Չէ՞ որ վաղ թե ուշ մեռնելու ենք, — խրատական տո-
նով պատասխանեց Չելլինին:

— Ուրեմն, գուք որոշել եք...

— ...որնչացնել սատանային, քանի գեռ սատանան չի որնչացրել ինձ: Հավատացեք, որ այդպես էլ կլինի, սենյոր քարտուղար, իսկ պաբոն պրևոն թող զգուշանա, ինչպես և բոլոր նրանք, ովքեր կփորձեն ընդդիմանալ թագավորի կամքին, մանավանդ, երբ նրա կամքը պետք է ի կատար ածի Բենվենուտո Չելլինին:

Այդ բառերից հետո մեսսեր դե Նյոֆվիլը վերջ տվեց իր հոգեփրկարար խոսակցություններին, բայց մեջտեղ բերեց զանազան ձևականություններ, որոնք իբրև թե պետք է կատարվեին մինչև ընծայագիրը նրան հանձնելը: Սակայն Բենվենուտոն խաղաղ նստեց, հայտարարելով, որ տեղից չի շարժվի, մինչև շտանա ընծայագիրը. իսկ եթե հարկ լինի այստեղ գիշերել, ապա կգիշերի, քանի որ նախապես զգուշացրել է տնեցիներին, որ կարող է ամբողջ գիշեր չվերադառնալ:

Այդ ամենը տեսնելով, մեսսեր դե Նյոֆվիլը հնազանդվեց և, շնայած վախենում էր բարգություններից, բայց Բենվենուտո Չելլինին տվեց ընծայագիրը, որոշելով նախազգուշացնել մեսսեր Ռորեր գ'էստուրվիլին, որ հարկադրված էր այդպես վարվել մասամբ թագավորի կամքով, մասամբ էլ ոսկերչի պահանջով:

Իսկ Բենվենուտո Չելլինին տուն վերադարձավ, ոչ մեկին ոչ մի բառ չասաց իր արարքի մասին, ընծայագիրը փակեց պահարանի մեջ, որտեղ պահում էր թանկարժեք քարերը, և հանգիստ գործի անցավ:

Թագավորի ֆինանսների գծով քարտուղարի հաղորդած նորությունը Ռորեր գ'էստուրվիլին ապացուցեց, որ վիկոնտ դե Մարմանն իրավացի էր, Բենվենուտոն իրոք մտադրվել է ամեն գնով տիրանալ Նելի ամրոցին: Պրևոն որոշեց զգոն լինել: Նա հավաքեց իր ամբողջ պահակախումբը՝ քառնչորս հոգի, ամրոցի պարիսպներին պահակներ կարգեց և մեկնում էր Շատլե՝ միայն անհետաձգելի գործերով:

Մինչդեռ ժամանակն անցնում էր, իսկ Չելլինին առաջվա պես հանգիստ աշխատում էր և գրոհի չէր դիմում: Բայց

պրևոն վստահ էր, որ այդ թվացող հանգստութիւնը միայն խորամանկութիւնն է, և թշնամին սպասում է, որ ինքը թուլացնի հսկողութիւնը, որպեսզի անակնկալ հարձակում գործի ամբողջ վրա: Այդ պատճառով մեսսեր Ռոբերն անդադար հսկում էր, ականջ էր դնում, միշտ լարված էր ու մարտականոթին տրամադրված: Եվ շփտես խաղաղ, թե պատերազմական այդ դրութիւնը, սպասումի տենդը, հոգեկան տազնաւ պը, եթե երկար տևելու լինէին, կարող էին խելագարութեան հասցնել նրան, ինչպես Սուրբ Հրեշտակի ամբողջ կաստելյանին: Պրևոն շէր ուտում, շէր քնում և օրեցօր նիհարում էր:

Երբեմն նա հանկարծ մերկացնում էր սուսերը, թափահարում օդում և գրոհելով պատի վրա, գոռում.

— Թող հայտնվի՛: Թող գա այդ ավազակը. ես սպասում եմ նրան:

Իսկ Բենվենուտոն այդպես էլ չէր հայտնվում: Երբեմն մեսսեր Ռոբերը խաղաղվում էր, համոզելով իրեն, որ արձանագործն ավելի ճարտար է լեզու բանեցնելու մեջ, քան սուսերամարտի, և երբեք չի համարձակվի իրականացնել իր նողկալի դիտավորութիւնը: Այդպիսի բոպեններից մեկի ժամանակ Կոլոմբան, պատահաբար դուրս գալով իր սենյակից, տեսավ մարտի նախապատրաստութիւնները և հարցրեց հորը, թե ի՞նչ է նշանակում այդ ամենը:

— Պատրաստվում եմ պատժել մի դատարկապորտի և ուրիշ ոչինչ, — պատասխանեց պրևոն:

Պատժելը պարոն պրևոյի պարտականութիւնն էր, այդ պատճառով Կոլոմբան նույնիսկ շհարցրեց, թե ով է այդ դատարկապորտը, որին պատժելու համար այդպես նախապատրաստվում են, և այնքան տարված էր իր մտքերով, որ բավարարվեց այդ բացատրութեամբ:

Եվ իրոք, մեսսեր Ռոբերի վերջերս կայացրած որոշումը նրա աղջկա կյանքում խորին ու տխրալից փոփոխութիւն մտցրեց: Մինչև հիմա նա ապրում էր անվրդով, համեստորեն ու մեկուսացած: Օրերն անց էր կացնում խաղաղ անհոգութեամբ, գիշերները հանգիստ քնում էր: Իսկ հիմա նրա կյանքը կարելի էր համեմատել փոթորկված լճակի հետ:

Օ՛, աղջիկը որքա՛ն էր ափսոսում անգիտության ու հանգրստության այն օրերը, երբ ինքը բավարարվում էր անտաշ, բայց հոգատար տիկին Պերինայի բարեկամությամբ և համարյա երջանիկ էր. այն օրերը, երբ հույս ուներ ու հավատ, երբ ապավինում էր ապագային, ինչպես ապավինում են բարեկամին և, վերջապես, երբ որդիական վստահությամբ հավատ էր ընծայում հոր զգացմունքներին: Ավա՛ղ: Ապագան դարձավ ներկա, հայտնվեց կոմս դ'Օրբեկը, որն այնքան զզվելի է իր համար: Պարզվեց նաև, որ հոր սերը քողարկված փառամոլություն է: Ինչու ինքը հարուստ մեծատոհմիկի միակ ժառանգն է, և ոչ արվարձաններում ապրող համեստ քաղքենու աղջիկ, որը կփաղաքշեր և հոգ կտաներ իր մասին: Եվ այն ժամանակ ինքը կարող էր տեսնվել երիտասարդ նկարչի հետ, որի հուզումնալից բառերը հմայեցին իր սիրտը, գեղեցիկ Ասկանիոյի հետ, որի հայացքն այնքան երջանկություն, այնքան սեր էր խոստանում...

Եվ երբ սրտի արագ բաբախոցը, շառագունած այտերը նախադգուշացնում էին Կոլոմբային, որ օտարերկրացու պատկերը վաղուց արդեն զբաղեցնում է նրա միտքը, աղջիկն ամեն անգամ հաստատակամորեն խոստանում էր վանել երազանքները և կարողանում էր ի կատար ածել իր խոստումը, որովհետև հասկանում էր, թե ինչքան անմխիթարական է իրականությունը: Ի դեպ, այն ժամանակից, երբ հայրը հայտարարեց Կոլոմբային ամուսնացնելու իր որոշումը, աղջիկը տիկին Պերինային խստորեն արգելեց ընդունել Ասկանիոյին, ինչ պատրվակով էլ որ նա հայտնեց վելու լինի, սպառնալով հակառակ դեպքում ամեն ինչ պատմել հորը: Եվ դուենյան, վախենալով, որ իրեն կմեղադրեն Ասկանիոյի հետ խոսքը մեկ անելու մեջ, ոչինչ շասաց նրա ուսուցչի հանդուգն ծրագրերի մասին, այդ պատճառով խեղճ Կոլոմբան ենթադրեց, թե ինքը պաշտպանված է ամեն տեսակ պատահականություններից:

Սակայն չկարծեք, թե հեզ աղջիկը որոշել էր զոհել իրեն և հնազանդվել հոր կամքին: Ո՛չ, նրա ամբողջ էությունն ըմբոստանում էր այն մտքից, որ ինքը պետք է ամուսնանա

մի մարդու հետ, որին կատեր, եթե ատելութեան զգացումը ծանոթ լիներ իրեն: Եվ այդպես, Կոլոմբայի շքնաղ, սպիտակաթուշր ճակատի տակ խոնվում էին բազմաթիվ մտքեր, որոնք նախկինում երբեք մտքում չէին ծագել, ըմբոստ, խռովահույզ մտքեր, որոնք նա համարյա հանցավոր էր համարում և ծնկաչոք ներում էր աղերսում աստծուց դրանց: Համար: Երբեմն նույնիսկ մտածում էր գնալ Փրանցիսկ I-ի մոտ, նրա ոտքերն ընկնել: Բայց Կոլոմբայի ականջին հասել էին շշուկով հաղորդվող լուրեր այն մասին, որ առավել սարսափելի հանգամանքներում նման միտք է ծագել Դիանա դե Պուատյեի՝ գլխում և որ այդ արարքի համար նա վճարել է իր սլատվի գնով: Տիկին գ'էտամպը կարող էր հսկանավորել Կոլոմբային, փրկել նրան, եթե ցանկանար: Բայց կցանկանա՞ր որչոք: Աղջկա գանգատները լսելով, ի պատասխան հեգնորեն չի՞ ժպտա: Այդպիսի արհամարհական, ծաղրական ժպիտ նա արդեն տեսել էր իր հոր շուրթերին, երբ աղերսում էր նրան չբաժանվել իրենից, և այդ քմծիծաղը հոգեկան մեծ տառապանք էր պատճառել աղջկան:

Կոլոմբան օրը հարյուր անգամ ծունկի էր գալիս, աղոթում և օգնութուն էր հայցում ամենազոր աստծուց, խնդրելով փրկութուն ուղարկել այս երեք ամսվա ընթացքում՝ մինչև ատելի փեսացուի հետ ամուսնանալը, իսկ եթե այդ անհնարին է, թույլ տալ, որ գնա իր մոր մոտ:

Ինչ վերարերում է Ասկանիոյին, ապա նրա կյանքը նույնքան տազնապալից էր, որքան սիրած աղջկա կյանքը: Ռեմբոյի հայտարարութունից հետո, որ Նելի ամբողջ դռները փակ են նրա առաջ, շատ անգամ առավոտները, երբ դեռ ոչ ոք արթնացած չէր լինում, կամ երեկոները, երբ արդեն բոլորը քնած էին, նա թափառում էր բարձր պարսպի շուրջը, որը պատանուն բաժանում էր իր կյանքի ամբողջ եր-

¹ Դիանա դե Պուատյե — ժամանակին պալատական հուշակավոր գեղեցկուհի, Փրանցիսկ I-ի որդու՝ հեաագայում Փրանսիայի թագավոր Լենրիխ II-ի սիրուհին: Ըստ ավանդության նա Փրանցիսկ I-ի ոտքերն է ընկել և ներում հայցել իր հոր համար, որը մահվան էր դատապարտված որսեմա քաղաքական դավադրութունների մասնակից:

շանկությունից: Բայց ոչ մի անգամ ո՛չ բացեիրաց, ո՛չ էլ ծածուկ չէր փորձել մուտք գործել արգելափակ այգին: Նրա հոգում դեռ մաքուր, պատանեկան հարգանք կար դեպի կինը, որը պահպանում է սիրած աղջկան նույնիսկ սիրուց:

Բայց դա չէր խանգարում Ասկանիոյին ոսկու վրա զարդանկարներ փորագրելիս, ագուցարանի մեջ մարգարիտներ ու ազամանդներ դնելիս տարվել խելացնոր երազանքներով, էլ չենք ասում առաջնության ու երեկոյան զրոսանքների ժամանակ կառուցած օղային ամրոցների, գիշերային տազնապալից երազների մասին:

Իր մտածմունքների մեջ նա ամենից շատ փափագում էր այն սարսափելի, իսկ այժմ ցանկալի օրը, երբ Բենվենուտոն կզառնա Նելի ամրոցի տերը, որովհետև Ասկանիոն լավ էր ճանաչում իր ուսուցչին և տեսնում էր, որ Զելլինիի արտաքին խաղաղությունը նման է ժայթքելու պատրաստ հրաբլի խաղաղության:

Եվ ահա հրաբուխը ժայթքեց. Զելլինին որոշեց գրավել ամրոցը հետևյալ կիրակի: Ասկանիոն չէր կասկածում, որ հետևյալ կիրակի Զելլինին ի կատար կածի իր ծրագիրը:

Սակայն այդ ծրագիրն անհնարին էր իրականացնել անարգել կերպով, որովհետև Նելի ամրոցը շրջանցելիս Ասկանիոն նկատել էր, որ պարիսպների վրա օր ու գիշեր հերթապահում են պահակները և ամրոցն ըստ ամենայնի նախապատրաստվում է պաշտպանության: Ուրեմն, եթե գրոհելու լինեն, պաշարվածները դիմադրություն ցույց կտան. ըստ երևույթին, ամրոցը չի էլ պատրաստվում հանձնվել, ուրեմն, այն պետք է գրավել ուժով:

Մի խոռոչով, այդ վճռական ժամին Ասկանիոն պետք է ասպետորեն պահի իրեն: Կսկսվի ճակատամարտը, իրենք ամրոց կխուժեն ճեղքվածքի միջով... Գուցե հրդեհ բռնկվի... Ա՛հ, երանի թե այդպիսի մի բան պատահի: Եվ ամենից լավը հրդեհն է: Հրդեհը բորբոքվում է, Կոլամբայի կյանքը վտանգի տակ է: Եվ ահա նա՝ Ասկանիոն, բարձրանում է խախուտ աստիճաններով, ցատկում է այրվող գերանների վրայից, անցնում բացավառ պատերի վրայով, նա լսում է

Կոլումբայի ձայնը, որն օգնութիւն է կանչում, և հասնում է նրան, բարձրացնում է մեռնող, համարյա գիտակցութիւնը կորցրած աղջկան, տանում է ծով-կրակի միջով, սեղմելով իր կրծքին, զգալով նրա սրտի բարախոցն իր սրտի մոտ: Իսկ հետո, հաղթահարելով բոլոր վտանգները, բոլոր խոչընդոտները, Կոլումբային դնում է վշտից խելագարված հոր ոտքերի մոտ, և պրևտն, փրկարարի արիութեանը որպէս պարգևատրութիւն, աղջկան տալիս է նրան: Կամ էլ, խարխուլ կամրջակի վրայով անցնելիս, որի տակ մուկնում է կրակը, Ասկանիոն հանկարծ սայթաքում է, և նրանք միասին մեռնում են, միացնելով իրենց սրտերը վերջին շնչի, առաջին ու վերջին համբուլի մեջ... Այդպիսի սոսկալի վախճանն անգամ չէր կարող սարսափեցնել Ասկանիոյի նման հուսալքված մարդուն, որովհետև միմյանց համար ապրելու մեծագույն երջանկութիւնից հետո բարձրագույն երջանկութիւնը միասին մեռնելն է:

Ինչպէս տեսնում է ընթերցողը, մեր հերոսներն օր ու գիշեր անց են կացնում տագնապների մեջ, բացառութեամբ Բենվենուտո Զելլինիի, որը կարծես բոլորովին մոռացել էր Նելի ամրոցը պաշարելու հանդուգն ծրագրերը, և Սկոցոնիի, որը շփաւեր դրանց մասին:

Եւ այդպէս, շաբաթն անցավ տագնապների մեջ, որոնց մասին արդեն ասել ենք, և Բենվենուտո Զելլինին, շաբաթվա յոթ օրը ջանասիրաբար աշխատելուց հետո համարյա ավարտեց Յուպիտերի կավե մոդելը, իսկ շաբաթ օրը, երեկոյան ժամը հինգին, հագավ օղազրահը, վրայից բաճկոնակը, կանչեց Ասկանիոյին և, պատվիրելով պատանուն ուղեկցել իրեն, ճանապարհ ընկավ դեպի Նելի ամրոցը: Պարսպի հիմքին հասնելով, նա շրջանցեց ամրոցը և փրնտրելով խոցելի տեղեր՝ սկսեց մտմտալ պաշարման ծրագիրը:

Ամրոցի վրա գրոհելը հեշտ չէր, ինչպէս ասում էր պրևտն իր ընկերոջը՝ դե Մարմանին, և ինչպէս Ասկանիոն հայտնել էր իր ուսուցչին. ի դեպ, ինքը Զելլինին էլ տեսնում էր, որ այդպէս է: Նելի ամրոցում կային հրակնատներ և մաշիկուլաներ. գետափի կողմից ամրոցը շրջապատված էր կրկնակի

պարսպով, Պրե-Օ-Վլերի կողմից՝ խրամատներով: Իսկ այն հաստատուն ու պատկանելի հսկա-ամրոցներից էր, որը կարող էր հիանալիորեն պաշտպանվել, եթե միայն դարպասը փակված էր շատ ամուր, և առանց կողմնակի օգնության հետ քշել գողերի ու ավազակների հրոսակախմբերը, ինչպես ասվում էր այն ժամանակ, իսկ հարկ եղած դեպքերում՝ նույնիսկ թագավորի ռազմիկներին: Ի միջի այլոց, այն հետաքրքրական ժամանակաշրջանում՝ մարդիկ հաճախ ստիպված էին թե՛ ոստիկան և թե՛ պահակ լինել իրենք իրենց համար:

Ավարտելով հետախուզությունը հին ու ժամանակակից ստրատեգիայի բոլոր օրենքների համաձայն և որոշելով նախ պահանջել, որ հանձնեն ամրոցը, իսկ հետո միայն պաշարել այն, Բենվենուտոն բախեց նույն դոճակը, որտեղից մի անգամ ամրոց մտավ Ասկանիոն: Ինչպես այն ժամանակ, բախոցի վրա անմիջապես բացվեց ձեղնալուսամուտը, բայց այս անգամ խաղաղաբարո այգեպանի փոխարեն եկվորների առաջ հայտնվեց զինված պահակը:

— Ի՞նչ եք կամենում,— հարցրեց նա նեղի ամրոցի դուռը բախող անձանոթին:

— Տիրանալ ամրոցին, քանի որ ընծայագիրը շնորհված է ինձ՝ Բենվենուտո Չելլինիին,— պատասխանեց արձանագործը:

— Լա՛վ, սպասե՛ք,— պատասխանեց ազնիվ զինվորն ու աճապարեց, ինչպես նրան հրամայված էր, նախազգուշացնել մեսսեր դ'էստուրվիլին:

Նա անմիջապես վերադարձավ թիկնապահներով շրջապատված պրեոյի ուղեկցությամբ, բայց պարոն դ'էստուրվիլը պահվեց ու սկսեց ականջ դնել, որպեսզի կարողանա պատկերացում կազմել դրուժյան լրջության մասին:

— Մենք չենք հասկանում, թե ի՞նչ եք ուզում մեզնից,— ասաց պահակը:

— Այդ դեպքում,— պատասխանեց Բենվենուտոն,— ընծայագիրը հանձնեք մեսսեր պրեոյին. սա վավերացված պատճենն է:

Եվ նա ձեռնալուսամուտից ներս մեկնեց ընծայագիրը։
Պահակը կրկին անհետացավ. բայց այս անգամ նա միայն պետք է ձեռք մեկներ ընծայագրի պատճենը պրեռնին հանձնելու, իսկ հետո, համարյա անմիջապես, ձեռնալուսամուտը կրկին բացվեց։

— Ահա ձեզ պատասխանը, — ասաց պահակը, լուսամուտից դուրս նետելով կտոր-կտոր պատառոտած ընծայագիրը։

— Շատ լավ, — սառնասրտորեն ասաց Չելլինին։ — Ցտեսություն։

Նրան հիացրել էր Ասկանիոյի կողմից ամբողջ ուշագիր գննությունը, հիացրել էին առաջիկա խիզախ նախաձեռնության կապակցությամբ երիտասարդի խելամիտ գիտողությունները և արվեստանոց վերադառնալով, նա ասաց, որ իր աշակերտը կարող էր մեծ զորավար լինել, եթե նրան վիճակված չլիներ է՛լ ավելի մեծ նկարիչ դառնալ, իսկ Չելլինիի աչքում դա անհամեմատ ավելի պատվաբեր էր։

Հետևյալ առավոտ արևածագը սքանչելի էր. նախօրեին Բենվենուտոն խնդրել էր իր օգնականներին գալ արվեստանոց։ Թեև օրը կիրակի էր, հավաքվեցին բոլորը՝ առանց բացառության։

— Զավակներս, — դիմեց նրանց ուսուցիչը, — ես վարձել եմ ձեզ ոսկե և արծաթե զարդեր պատրաստելու համար և ոչ ուղմի գործերի, այդ պարզ է։ Ահա երկու ամիս է արդեն, որ մենք աշխատում ենք միասին և լավ ճանաչում ենք միմյանց. այդ իսկ պատճառով անհրաժեշտության դեպքում ես կարող եմ դիմել ձեր օգնությանը, ինչպես և դուք ամեն ինչում միշտ կարող եք դիմել իմ օգնությանը։ Դուք գիտեք, թե խոսքս ինչի մասին է։ Այստեղ մեզ համար դժվար է աշխատել առանց լույսի և օդի. մեր ձեռքերը կաշկանդված են, չենք կարող իսկական գործ ձեռնարկել, նույնիսկ ի վիճակի չենք ինչպես հարկն է դարբնել։ Եվ ահա թագավորը, գուք բոլորդ վկա էիք, բարեհաճեց շնորհել ինձ ավելի ընդարձակ ու հարմար մի շենք։ Բայց նա ժամանակ չունի այդպիսի մանրուքներով զբաղվելու և հրամայել է, որ ես ինքո

հոգ տանեմ իմ մասին: Իսկ ոմանք չեն ցանկանում հանձնել ինձ այդ շենքը, որն այնքան մեծահոգաբար ընծայել է թագավորը. ուրեմն, ամբողջ պետք է վերցնել ուժով: Փարիզի պրևոն չի տալիս ամբողջը, շնայած նորին մեծության հրամանին. թերևս այդպես է ընդունված այս երկրում. սակայն պրևոն, հավանաբար, չգիտի թե ում հետ գործ ունի: Երբ ինձ մերժում են՝ ես պահանջում եմ. երբ դիմադրում են՝ հաղթում եմ: Ցանկանո՞ւմ եք օգնել ինձ: Չեմ ծածկի, վտանգավոր գործ է. ստիպված կլինենք ճակատամարտ տալ, գրոհել ամբողջի վրա: Սպասվում են և ուրիշ, ոչ այնքան անմեղ զվարճություններ: Մենք վախենալու ոչնիչ չունենք ո՛չ ստիկանությունից, ո՛չ պահակազորից. նորին մեծությունը մեզ ընծայագիր է տվել: Հավանաբար, զավակներս, գոհեր կլինեն: Այնպես որ ովքեր կամենում են նահանջել, թող բացեիրաց հրաժարվեն, ովքեր կամենում են տանը նստել, թող չբաշվեն: Ես կոչ եմ անում միայն անվախ մարդկանց: Եթե դուք թողնեք ինձ Ասկանիոյի և Պագոլոյի հետ, մի անհանգրոտացեք: Չգիտեմ, թե ես ինչ կանեմ, բայց գիտեմ, որ որոշումս անխախտ է: Սակայն, երգվում եմ Քրիստոսի արյամբ, եթե հոգով ու մարմնով նվիրված լինեք ինձ, իսկ ես հուսով եմ, որ այդպես է, թող սարսռա պրևոն իր աթոռանիստում: Իսկ հիմա, երբ դուք ամեն ինչ մանրամասնորեն գիտեք, ասացեք, կգա՞ք ինձ հետ:

Հնչեց միահամուռ բացականչություն.

— Կգա՞նք, ուսուցիչ, կգանք ուր կամենում եք:

— Ապրե՛ք, զավակներս: Չէ՞ որ բոլորդ էլ սիրում եք զվարճանալ...: Բոլո՞րդ: Որո՞տ ու կայծակ: Մի լավ կզվարճանանք,— զգալով, որ վերջապես իր տարերքի մեջ է, բացականչեց Բենվենուտոն:— Թե չէ ես բոլորովին թթվել եմ: Առա՛ջ, առա՛ջ, համարձակորեն մերկացրեք ձեր սուտերը: Փառք աստծո, բազմաթիվ շեշտակի հարվածներ կհասցնենք, շատ հարվածներ հետ կմղենք:

Հասկանո՞ւմ եք, սիրելի զավակներս, հասկանո՞ւմ եք, քաջարի բարեկամներս, պետք է լավ զինված լինել, պետք է պայմանավորվել ընդհանուր ծրագրի մասին, պետք է նա-

խապատրաստել հարձակումը. պետք է վարժվեք սուսերամարտի մեջ, և թող կեցցե՛ ուրախությունը: Ամեն ինչ ձեր տնօրինութեանն եմ հանձնում՝ և՛ հարձակողական զենքերը, և՛ պաշտպանողական, շհաշված այն զենքերը, որ կախված են պատից: Թող ամեն մեկն ընտրի իր հավանածը: Է՛հ, պետք էր ունենալ մի լավ գնդացի: Բայց ինչ արած: Դրա փոխարեն, ահավասիկ, խնդրեմ, վերցրեք այս բոլորը՝ արկերուզներ, մուշկետներ, նիզակներ, դաշույններ ու սուսեր, ահա և օղադրահներ, սաղավարտներ, զրահներ... Եվ շուտ, շուտ զարդարվենք պարահանդեսի համար, իսկ պրևոն թող վճարի երաժշտության վարձը:

— Ուրա՛, — գոռաց ամբողջ շոկատը:

Հաճելի էր տեսնել, թե ինչպիսի աշխուժություն է տիրում արվեստանոցում, ինչպիսի իրարանցում է այնտեղ. ամեն ինչ տակնուվրա էր արված:

Բենվենուտոյի սգեշնչվածությունը, մարտական ավյունն ուրախացնում էր սրտերը, աշխուժացնում բոլորին: Նրա օգնականները փորձում էին օղազրահները, ճոճում էին սուսերը, պատյաններից դուրս քաշում դաշույնները, ծիծաղում էին, երգում... Կարելի էր կարծել, թե բոլորը պատրաստվում են տոնակատարության կամ դիմակահանդեսի: Բենվենուտոն օգնության էր հառնում բոլորին. մեկին ցույց էր տալիս, թե ինչպես պետք է հարվածել, մյուսի սուսերակայն էր կապում. զգում էր, սր տաք արյունն ազատ ու անկաշկանդ հոսում է իբր երակներում, ասես կրկին սկսել էր ապրել իսկական կյանքով:

Ենթավարպետներն անդադար կատակում էին իրենց մարտական տեսքի, սպառազինության, զենք ու զրահ բանեցնել շիմանալու վրա:

— Հե՛յ, ուսուցիչ, տեսե՛ք, — գոռում էր մեկը, — տեսե՛ք Ջախլիկ-Սիմոնը ոնց է կապում սուսերը... Աջ կողմից կապիր, աջ կողմից:

— Իսկ ժանը ս՞նց է բռնել գեղարդը, — պատասխանեց Սիմոնը: — Նա այդպես կրոնի գավազանը, երբ եպիսկոպոս դառնա:

— Իսկ Պագուլո՞ն: Պագուլոն երկու օղազրահ է հագնում,— գոռում էր ժանը:

— Ի՞նչ կա որ,— առարկեց Պագուլոն,— տեսեք, գերմանացի Հերմանը հագնված է ճիշտ այնպես, ինչպես կայսեր Բարբարոսայի ժամանակների ասուպետը:

Եվ իրոք, նա, ում գերմանացի Հերման անվանեցին, թեև Հերման անունն իր գերմանական հնչումով արդեն ցույց էր տալիս, որ այդ անունը կրողը պատկանում է Սուրբ Կայսրությունից եկածների թվին, կրկնում ենք, Հերմանը ոտից գլուխ կաշկանդված էր զրահների մեջ և հիշեցնում էր այն հսկա արձաններից մեկը, որոնք արվեստի ծաղկման այդ սքանչելի ժամանակներում զարգարում էին դամբարանները: Թեև Հռենոսի մյուս ափին ծնված բաշ պատանու ուժն ասացվածք էր դարձել ենթավարսյետների շրջանում, Բենվենուտոն դիտողություն արեց նրան, որ այդպիսի զրահի մեջ նա հազիվ թե կարողանա շարժվել և նրա ուժը դրանից ոչ թե կալելանսու, այլ՝ կպակասի: Բայց Հերմանը պատասխանի փոխարեն թուով դործասեղանի վրա այնպիսի թեթևությամբ, ասես թավիշ հագած լինեք, և կեռից կախված հսկայական մուրճը վերցնելով, թափահարեց գլխավերևում, իսկ հետո երեք անգամ հարվածեց զնդանին, բայց այնպես, որ ամեն մի հուժկու հարվածից զնդանը մի մատնաչափ խրրվում էր հողի մեջ: Այդպիսի համոզիչ պատասխանից հետո Զելլինին հարգալից գլուխ տվեց ի նշան լիակատար զոհունակության:

Ասկանին գենք ու զրահը հագնում էր լուռ, մի կողմ քաշված. պատանին հուզմունքով մտածում էր հանդուզն նախաձեռնության հետևանքների մասին: Իսկ հանկարծ Կոլումբան շների նրան, որ իր հոր վրա կատարած հարձակման մասնակիցն է: Եվ գուցե Կոլումբայից ոչ հեռու բնակություն հաստատելով, ինքը սիրելի շղառնա նրա համար, մանավանդ, եթե պրևոն սպանվի ճակատամարտում, կամ ծանր վերք ստանա:

Իսկ Սկոցոնեին այդ բոլորը և՛ զվարճացնում էր, և՛ անհանգստացնում. նա մերթ լաց էր լինում, մերթ ծիծաղում: Զանազան փոփոխություններն ու պայքարը նրա սրտով էին.

բայց արյունոտ գոտեմարտը և վերքերը վախեցնում էին նրան: Նայելով ճակատամարտի նախապատրաստութիւններին, շարաճճի Սկոցոնեն թռչկոտում էր ուրախութիւնից, բայց մարտի հետևանքների մասին մտածելիս կին-Սկոցոնեն դողում էր վախից:

Վերջապես Բենվենուտոն նկատեց, որ Ֆա ծիծաղում է արցունքների միջից, մոտեցավ նրան ու ասաց.

— Սկոցոնե, դու կմնաս տանը, Ռուպերտայի հետ: Դեղորայք պատրաստիր վիրավորների համար, իսկ առողջների համար՝ համեղ ճաշ:

— Ինչե՛ր եք ասում,— բացականչեց Սկոցոնեն:— Ես ձեզնից ոչ մի քայլ չեմ հեռանա: Ձեզ հետ ես չեմ վախենա պրևոյից ու նրա բոլոր համախոհներից, իսկ այստեղ, Ռուպերտայի հետ, վախից ու անհանգստութիւնից կմեռնեմ...

— Երբե՛ք, ո՛չ մի դեպքում ես քեզ չեմ տանի ինձ հետ,— պատասխանեց Բենվենուտոն,— այլապես անընդհատ պետք է անհանգստանամ, որ քեզ որևէ բան կսպտահի: Դու կսպասես մեր վերադարձին և կսուղո՞ւես ասածուն մեզ համար, թանկագին փոքրիկս:

— Կսեք, Բենվենուտո, — առարկեց Սկոցոնեն. ըստ երեւոյթին, նրա գլխում հանկարծ ինչ-որ միտք ծագեց, — ինքներդ էլ հասկանում եք, ես չեմ կարող հաշտվել այն մտքի հետ, որ պետք է նստեմ այստեղ ձեռքերս ծալած, իսկ այնտեղ ձեզ կվիրավորեն... գուցե նույնիսկ՝ կսպանեն: Բայց ազնիվ խոսք, ամեն ինչ կարելի է կարգավորել. ես կսուղոթեմ ոչ թե արվեստանոցում, այլ կգնամ եկեղեցի, ճակատամարտի վայրին ավելի մոտ: Այնտեղ ապահով կլինեմ և անմիջապես կիմանամ հաղթանակի կամ սլարտութիւնի մասին:

— Թող քո ասածը լինի, պատասխանեց Բենվենուտոն:— Մենք էլ, անշուշտ, մահվան կռվի չենք բռնվի մինչև պատարագը շսենք ինչպես հարկն է: Ուրեմն, որոշված է գնում ենք Օգոստինոսականների եկեղեցին, որը հեռու չէ նէլի ամրոցից. այնտեղ էլ, սիրելիս, դու կմնաս:

Այդպես էլ որոշեցին. նախապատրաստութիւնները վերջացնելով, մուրճեր, աքցաններ, ճոպաններ, պարանե սան-

դուզք վերցրին և գնացին ոչ մարտական շարքով, այլ զույգ-զույգ ու միմյանցից որոշակի հեռավորության վրա, որպես-զի ուշադրություն չգրավեն:

Այդպիսի հարձակումներ այն ժամանակ տեղի էին ունենում ոչ ավելի հազվադեպ, քան մեր օրերում ապստամբություններն ու մինիստրությունների տապալումը, բայց, ճիշտն ասած, այն ժամանակներում էլ ոչ ոք, սովորաբար, կիրակի օրն այդպես չէր գվարճանում, այն էլ՝ կեսօրին, և այդպիսի հնարանքն իրականացնելու համար պետք էր ունենալ Բենվենուտո Չելլինիի քաջությունը, որին, ի դեպ, ուժ էր տալիս իր իրավացիության գիտակցությունը:

Եվ այսպես, մեր հերոսները մեկը մյուսի հետևից մտան Օգոստինոսականների եկեղեցին և, զենքն ու գործիքները դնելով դպիրի՝ Չախլիկ-Սիմոնի ընկերոջ խցիկում, բարեպաշտորեն լսեցին առավոտյան պատարագը, աղերսելով ասածուն ողորմած լինել և ուժ տալ իրենց՝ ավելի շատ պահնորդ ոչնչացնելու:

Սակայն պետք է խստովանել, որ շնայած դրության ամբողջ լրջությանը, շնայած իր աստվածապաշտությանը և այն աղոթքի կարևորությանը, որով նա պատրաստվում էր դիմել ամենազորին, Բենվենուտոն, եկեղեցի մտնելով, զամանալի ցրվածության նշաններ ցուցաբերեց: Երա պատճառն այն էր, որ գիմացի պատի մոտ, գունազարգ աղոթարանի վրա խոնարհվել էր մի աղջիկ, այնքան հմայիչ գեմքով, որ կարող էր գրավել ոչ միայն արձանագործի ուշադրությունը, այլև՝ սրբի: Եվ հիմա նկարիչն ակամա խանգարում էր հավատացյալին: Մեր բարեհոգի Չելլինին ցանկանում էր որևէ մեկին հայտնել իր հիացմունքը և քանի որ ձախ կողմը գտնվող Կատերինան հագիվ թե բարյացակամորեն ընդուներ վարպետ Բենվենուտոյի հիացմունքը, ապա նա շրջվեց դեպի աջ, դեպի Ասկանիոն և նրա ուշադրությունը հրավիրեց սղջկա սքանչելի կերպարանքի վրա: Բայց Ասկանիոյի հայտարան առանց այդ էլ սևեռված էր աղջկան. եկեղեցի մտնելու պահից ևրիտասարդն աչքը շէր կտրում նրանից: Տեսնելով, որ սպատանին նույնպես կլանված է հայեցողությամբ, Բենվենուտոն արմունկով բռթեց նրան:

— Այո, այո,— ասաց Ասկանիոն,— Կոլոմբան է: Ինչ-
քան գեղեցիկ է նա, ուսուցիչ, չէ՞:

Իրոք, Կոլոմբան էր: Պրևոն, որը չէր կարծում, թե օրը
ցերեկով կարող են հարձակում գործել, թույլատրել էր նրան,
թեև ոչ առանց Երկմտանքի, գնալ Օգոստինոսականների
եկեղեցում աղոթելու: Ճիշտ է, Կոլոմբան ստիպված եղավ
շատ երկար համոզել հորը. չէ՞ որ աղջկա միակ մխիթարու-
թյունն աղոթքն էր: Նրա կողքին տիկին Պերինան էր:

— Իսկ ո՞վ է Կոլոմբան,— հետաքրքրվեց Բենվենուտոն:

— Ա՛խ, իսկապես, դուք նրան չեք ճանաչում: Կոլոմբան
պրևոյի՝ մեսսեր Ռոբեր դ'էստուրվիլի դուստրն է: Ինչ գեղե-
ցիկն է, չէ՞,— կրկին բացականչեց Ասկանիոն:

— Ի՞նչ ես ասում,— առարկեց Բենվենուտոն,— ոչ, նա
Կոլոմբան¹ չէ, նայիր, Ասկանիո, չէ՞ որ նա Հեբեն է², հա-
վերժ դեռատի Հեբեն, որ պատվիրել է ինձ թագավորը: Հե-
բեն, որի մասին երազում էի, աղերսելով աստծուն ի վե-
րուստ առաքել նրան ինձ մոտ: Եվ ահա, իմ աղոթքով նա
Երկնքից իջել է այստեղ...

Եվ ինքն էլ շնչատելով, թե ինչպիսի անմտություն է Հե-
բեին պատկերացնել աղոթագիրքը ձեռքին, հոգով Հիսուս
Քրիստոսին ասլավինած, Բենվենուտոն շարունակում էր գո-
վերգել նրա գեղեցկությունը, աղոթելով և միաժամանակ
ծրագրելով իրենց հարձակումն ամբողջի վրա: Նրա հոգում
պայքարի էին բռնվել արձանագործը, կաթոլիկը և զորա-
վարը:

— «Հայր մեր, որ յերկինս ես...», նայիր, Ասկանիո,
ինչպիսի հմայիչ, ինչպիսի նուրբ կիսադեմ է: «Սուրբ եղիցի
անուն քո, եկեսցէ արքայութիւն քո...» Ինչ գեղեցիկ է իրա-
նի զծագրությունը: «Զհաց մեր հանապազորդ սուր մեզ
այսօր...» Ուրեմն ասում ես, այս սքանչելի արարածը պրևո-
աղջիկն է, այդ սրիկայի, որին ես պատրաստվում եմ
չացնել սեփական ձեռքերո՞վ: «Եւ թող մեզ զպարտիս

¹ Կոլոմբա անունը Ֆրանսերեն նշանակում է «աղավնյակ»:

² Հեբե (հուն. դիցար.)— աստվածների արքա Զևսի դուստրը, հա-
վերժ երիտասարդության աստվածուհին

մեր, որպես եւ մեր թողումք մերոց պարսապանաց...» Եւ պատրաստ եմ հրկիզել ամրոցը: Ա՛մեն:— Եվ Բենվենուտոն խաչակնքեց դեմքը, համոզված լինելով, որ հարկ եղած բարեպաշտությամբ կարդաց կիրակնօրյա աղոթքը:

Պատարագը վերջացավ: Այլ ժամանակաշրջանում ապրող, այլ բնավորության տեր մարդու համար Չելլինիի արարքները, թերևս, սրբապղծություն թվային, սակայն դրանք ջատքնական էին այնպիսի անմիջական մարդու համար, ինչպիսին էր նկարիչը և այնպիսի ժամանակաշրջանի, երբ Կլեման Մարոն սիրային րանաստեղծությունների վերածեց ապաշխարանքի յոթ սուղմոսը:

«Et messa est»¹ Բացականչությունից հետո Բենվենուտոն և Կատերինան միմյանց ձեռք սեղմեցին: Եվ մինչդեռ աղջիկն արցունքներն էր սրբում, մնալով եկեղեցում, որտեղ պետք է սպասեր ճակատամարտի ավարտին, Չելլինին և Ասկանիոն անընդհատ Կոլոմբային նայելով, որն այդպես էլ հայացքը շքարձրացրեց աղոթագրքից, ընկերների ուղեկցությամբ գնացին սուրբ ջրով ցողվելու: Այնուհետև բոլորը մեկ-մեկ դուրս եկան ու կրկին միացան ամայի նրբանցքում, եկեղեցուց Նելի ամրոցը տանող կես ճանապարհին:

Իսկ Կատերինան, ինչպես պայմանավորվել էին, մնաց կեսօրվա սլատարագին. մնացին նաև Կոլոմբան և տիկին Պերինան: Նրանք եկել էին ծեղին և առավոտյան պատարագը լսելուց հետո սպասում էին տոնական ծիսակատարությանը. ո՛չ մեկը, ո՛չ մյուսը չէին կասկածում, որ Բենվենուտոն և նրա աշակերտները մտադիր են կտրել իրենց ճանապարհը դեպի տուն, որտեղից այդքան անզգուշորեն դուրս էին եկել:

ԳԼՈՒԽ ԻՆՆԵՐՈՐԴ

Անսպասելի հարձակում

Վրա հասավ վճռական պահը: Չելլինին իր տասը գինվորներին բռնանեց երկու ջոկատի. մեկը պետք է ամեն գնով ներս խուժեր ամրոցի դարպասից, իսկ մյուսը՝ ծածկեր նրա

¹ Գնացեր, պատարագն ավարտվեց (լատ.):

գործողութիւնները, կրակեր արկերուղներից, հակահարված տար պաշարվածներին, եթե նրանք հայտնվեին ատամնավոր պարսպի վրա, կամ փորձեին դուրս գալ ամրոցից: Բենվենուտոն այդ ջոկատի գլուխն անցավ և օգնական նշանակեց մեր բարեկամ Ասկանիոյին: Երկրորդ ջոկատի հրամանատարութիւնը հանձնարարեց մեր վաղեմի ծանոթ Հերմանին՝ բարի ու քաջ գերմանացուն, որը մուրճի հարվածով տափակեցնում էր երկաթե շորսուն և բռունցքի հարվածով տեղն ու տեղը մարդ էր սպանում: Իսկ Հերմանն էլ, իր հերթին, օգնական վերցրեց Ճատլիկ-Փանին: Տասնհինգամյա շարաճճին ճարպիկ էր սկյուռի նման, կապկի պես խորամանկ և մանկլավիկի նման քաջ: Սա կարողացել էր Գողիաթի անկեղծ սերը շահել, ըստ երևույթին, նրանով, որ անընդհատ ծիծաղում էր նրա վրա: Եվ այսպես, Ճատլիկ-Փանը հպարտ տեսքով կանգնեց իր պետի կողքին, մեծ սրտնեղութիւն պատճառելով Պագոլոյին, որն իր կրկնակի օղազրահի և ծանրաշարժութեան շնորհիվ շատ նման էր Կոմանդորի արձանին:

Երբ պարտականութիւնները բաշխված էին, Բենվենուտոն վերջին անգամ ստուգեց զենքերը, աչքի անցկացրեց դինվորներին և մի քանի խոսք ասաց քաջերին, որոնք իր սիրույն արիաբար ընդառաջ էին գնում վտանգին, իսկ գուցե՝ մահվան: Այնուհետև նա սեղմեց բոլորի ձեռքը, բարեպաշտորեն խաշակնքեց դեմքը և բացականչեց. «Առաջ»: Երկու ջոկատներն անմիջապես ճանապարհ ընկան և, անցնելով Օդոստինոսականների գետափի երկայնքով, որն այդ ժամին բոլորովին ամառի էր, միմյանցից որոշ հեռավորութիւն պահպանելով, շուտով հայտնվեցին Նելի ամրոցի պարսպի մոտ:

Սակայն Բենվենուտոն չէր ցանկանում հարձակվել թշնամու վրա, շկատարելով այդպիսի դեպքերում անհրաժեշտ քաղաքավարութեան բոլոր ձևականութիւնները: Նա սուսերի ծայրին սպիտակ թաշկինակ ամրացրեց և, մոտենալով դարպասին, որտեղ եղել էր արդեն նախօրեին, բախեց այն: Այս սնգամ էլ, ինչպես նախօրեին, վանդակապատի հետևից

նրան հարցրին, թե ինչ է կամենում: Բենվենուտոն կրկնեց իր պահանջը, ասելով, որ ցանկանում է տիրանալ ամրոցին, որը շնորհել է նրան թագավորը: Սակայն այս անգամ նրան նույնիսկ պատասխանի չարժանացրին:

Այնժամ, գեպի դարպասը շրջվելով, նա գոռաց ամպրոպալից, տիրական ձայնով.

— Ռորեր դ'էստուրվիլ, Վիլրոնի սենյոր, Փարիզի պրևո: Ես՝ ոսկերիչ, արձանագործ, նկարիչ, մեխանիկ և ինժեներ Բենվենուտո Չելլինիս, հայտնում եմ քեզ, որ նորին մեծութուն Ֆրանցիսկ I թագավորը հոժարակամ և իրեն պատկանող իրավունքի համաձայն, որպես լիակատար սեփականութուն շնորհել է ինձ Նելի Մեծ ամրոցը: Իսկ դու, թագավորական կամքին հակառակ, հրաժարվում ես ազատել ամրոցը: Եվ ես հայտնում եմ քեզ, Ռորեր դ'էստուրվիլ, Վիլրոնի սենյոր, Փարիզի պրևո, որ ուժով կգրավեմ: Պաշտպանվիր: Եվ եթե մերժմանդ պատճառով փոքձանք պատահի, իմացած եղիր, որ դրա համար ինքդ ետ պատասխանատու երկրի վրա ու երկնքում, մարդկանց առաջ և աստծու:

Եվ Բենվենուտոն լռեց, սպասելով: պատասխանի, բայց ամրոցի պարսպի հետևում լռութուն էր տիրում: Այնժամ Բենվենուտոն լցրեց արկերուզը և իր ջոկատին հրամայեց զենքերը պատրաստել. այնուհետև ռազմական խորհուրդ հրավիրեց, որին մասնակցում էին ինքը, Հերմանը, Ասկանին ու Փանը և գիմեց իր գինակիցներին հետևյալ բառերով.

— Զավակներս, ինքներդ էլ տեսնում եք, որ ճակատամարտն անխուսափելի է: Ինչի՞ց սկսենք:

— Ես ջարդեմ դարպաս,— առաջարկեց Հերմանը,— և դուր ինձ հետ ներս մտնել, ուրիշ ոչինչ:

— Դու, բարեկամս, իսկական Սամսոն ես: Բայց լինույի՞ս պետք է ջարդես դարպասը,— հարցրեց Բենվենուտո Չելլինին:

Հերմանը շուրջը նայեց և գետափին տեսավ մի գերան, որը լիկես սովորական ուժի տեր շորս մարդ դժվարությամբ տեղաշարժեին:

— Ես շարդեմ գերանով,— ասաց նա:

Եվ հանգիստ մոտենալով, բարձրացրեց գերանն ու ցցահարի պես բռնած, վերադարձավ զորավարի մոտ:

Մինչ այդ սկսեց բազմութիւնն հավաքվել: Բայց երբ Բենվենուտոն, հանգիստականների հրահրմամբ, հրաման տվեց սկսել գրոհը, փողոցի անկյունում հայտնվեց թագավորական պահստորդների կապիտանը՝ հինգ թե վեց ձիավորի ուղեկցութեամբ: Հալածանքն արան տեղեկացրեւ էր որեւէ բարեմիտ քաղաքացի: Կապիտանը, պրետչի բարեկամը, շատ լավ գիտեր գործի էությունը, նա ձինքը պեղծ Բենվենուտո Չելլինին, հաստատ համոզված լինելով, որ Բենվենուտո կվախենա. իսկ պահստորդները փակեցին Հերմանի ճանապարհը:

— Ի՞նչ եք տեսում այստեղ: Ինչ՞ու եք խանգարում քաղաքացիների հանգիստը:

— Հանգիստը խախտում է նա, ով հրաժարվում է ենթարկվել թագավորի կամքին,— պատասխանեց Չելլինին,— և ոչ թե նա, ով կատարում է այդ կամքը:

— Դրանով ի՞նչ եք ուզում ասել,— հարցրեց կապիտանը:

— Ուզում եմ ասել, ահա նորին մեծութեան շնորհագիրը՝ կազմված բոլոր օրենքների համաձայն, որը տվել է ինձ Ֆինանսների գծով քարտուղար պարոն դե Նյոֆվիլը. շնորհագրի մեջ ասված է, որ Նելի Մեծ ամրոցն ընծայել են ինձ: Սակայն ամրոցում բնակություն հաստատած մարդիկ չեն ցանկանում ենթարկվել թագավորական հրամանին, հետևաբար վիճարկում են իմ իրավունքը: Մի խոսքով, ինչ էլ որ լինի, ես հաստատ համոզված եմ,— կտակարանում իզուր չի ասված. «Կայսրինը տվեք կայսեր»— որ Բենվենուտո Չելլինին իրավունք ունի վերցնել այն, ինչ պատկանում է Բենվենուտո Չելլինին:

— Հե՛յ, դուք, մի՛ խանգարեք մեզ, ավելի լավ է օգնեք գրավել ամրոցը...,— ձայն տվեց Պագոլոն:

— Լոիր, անբան,— սաստեց նրան Բենվենուտոն, ոտքը դեմնին զարկելով,— Ես ոչ մեկի օգնութեան կարիքը չեմ զգում, հասկացա՞ր:

— Իհարկե, իրավունքը ձեր կողմն է, բայց իրականում դուք իրավացի չեք,— նկատեց կապիտանը:

— Այսինքն, ինչպե՞ս,— հարցրեց Բենվենուտոն, զգալով, որ ամբողջ արյունը խփեց գլխին:

— Դուք իրավացի եք, որ ցանկանում եք տիրանալ ձեր ունեցվածքին, բայց իրավացի չեք, որ դիմում եք այսպիսի միջոցի: Նախապես զդուշացնում եմ, որ ոչ մի արդյունքի չեք հասնի, եթե կովի բռնվեք պարիսպների հետ: Ես ուզում եմ մի խորհուրդ տալ ձեզ, բարեկամական խորհուրդ, հավատացեք. դիմեք արդարադատությանը: Օրինակ, բողոք ներկայացրեք Փարիզի պրեռյի դեմ: Իսկ առայժմ մնաք բարով, հաջողություն եմ ցանկանում:

Եվ թագավորական պահնորդների կապիտանը ծաղրաբար քմծիծաղ տալով հեռացավ, իսկ բազմությունը, տեսնելով որ իշխանության ներկայացուցիչը ծիծաղում է, քրքջաց:

— Ծիծաղում է նա, ով վերջինն է ծիծաղում,— բացականչեց Բենվենուտո Չելլիինին:— Առա՛ջ: Հերման, առա՛ջ:

Հերմանը կրկին ձեռքն առավ գերանը: Եվ մինչ Բենվենուտոն, Ասկանիոն և ջոկատի երկու-երեք լավագույն հրածիգները, արկերուզները ձեռքներին, պատրաստվում էին կրակ բացել ամրոցի պարսպի վրա, նա, իսկական քարնետ գործիքի նման, շարժվեց դեպի դուռը, որն ավելի հեշտ էր ջարդել, քան դարպասը:

Բայց հենց որ Հերմանը մտեցավ ամրոցին, վերևից քարերի կարկուտ թափվեց, թեև ոչ մի տեղ չէր երևում ոչ մի կենդանի արարած: Բանն այն է, որ պրեռն հրամայել էր ամրոցի պարսպի վրա քարեր կիտել. ստացվել էր հիմնապատի վրա բարձրացող երկրորդ պարսպի նման մի բան: Բովական էր մի թեթև հարված միայն, և քարերը հեղեղի պես թափվեցին պաշարողների գլխին:

Պաշարողները, որոնց դիմավորեցին քարե կարկուտով, փոքր-ինչ նահանջեցին: Եվ չնայած նրանցից ոչ մեկը չէր սպասում այդպիսի սոսկալի դիմադրության, այնուամենայնիվ, ոչ ոք չտուժեց, բացի Պագուռյից, որը կրկնակի օդադրահի մեջ այնքան ծանրաշարժ էր դարձել, որ շհասցրեց

մյուսների նման հեա վազել և վիրավորվեց կրունկից:

Իսկ Հերմանն, ուշադրություն չդարձնելով մանր քարերի տարափին, ինչպես կաղնին չի ճկվում կարկուտի տակ, գնալով մոտենում էր դռանը: Նպատակակետին հասնելով, նա գերանը մեծ ուժով սկսեց զարկել դռանը և բոլորի համար պարզ դարձավ, որ թեև դուռն ամուր է, բայց երկար չի դիմանա:

Բենվենուտոն և նրա օգնականները պատրաստ էին կրակ բացել արկերուզներից, հենց որ թշնամին հայտնվի ամրոցի պարսպի վրա, բայց ոչ ոք չէր երևում: Ասես անտեսանելի մի զորք էր պաշտպանում Նելի Մեծ ամրոցը: Բենվենուտոն կատաղում էր, որ չի կարող օգնել քաջ գերմանացուն: Հանկարծ նրա աչքով ընկավ Նելի հինավուրց աշտարակը, որը, ինչպես ասել ենք, հեռու էր ամրոցից, գետի մյուս ափին, փեշերը փռած Սենի ջրերի մեջ:

— Սպասիր, Հեքման,— բացականչեց Չելլինին,— սպասիր, քաջ բարեկամս: Նելի ամրոցը մերն է. դա նույնքան ստույգ է, որքան այն, որ իմ անունը Բենվենուտո Չելլինի է, և որ ես սկիծբիչ եմ:

Եվ հրաման տալով Ասկանիսյին ու երկու ենթավարպետներին հետևել իրեն, նա վազեց դեպի աշտարակը: Իսկ Հերմանը ուսուցչի կամքին հնազանդ, մի քանի քայլ նահանջեց, ընտրեց անվտանգ մի տեղ, ուր չէին հասնում քարերը և, գերանը գնելով աչնպես, ինչպես շվեյցարական զինվորը դնում է գեղարգը, որոշեց սպասել ու տեսնել, թե ինչով կավարտվի գլխավոր հրամանատարի զինախաղը:

Եվ իրոք, ինչպես ենթադրում էր Բենվենուտոն, պրևոն աչքաթող էր արել հինավուրց աշտարակի պաշտպանությունը: Չելլինին անարգել կերպով գրավեց աշտարակը և մի ակնթարթում սանդուղքով բարձրացավ տափարակ տանիքը, որն իշխում էր Նելի Մեծ ամրոցի վրա, ինչպես զանգակատունը՝ քաղաքի, այդ պատճառով պաշարվածները, որոնց մինչև հիմա պաշտպանում էին ամրոցի սլարիսպները, անսպասելիորեն հարվածի տակ ընկան:

Լավեց արկերուզի կրակոց, սուրաց գնդակը, վիրավոր

պահնորդը ճշալով ցած ընկավ, և պրևոն հասկացավ, որ դրութիւնը փոխվեց:

Այդ միջոցին Հերմանը, տեսնելով, որ գործողութեան դաշտն ազատ է, բարձրացրեց գերանն ու սկսեց ցնցել դուռը, որը ժամանակավոր դադարից օգտվելով, քիչ առաջ ամբարցրել էին պաշարվածները:

Իսկ ամբոխը ինքնապաշտպանութեան զարմանալի բնագոյով իսկույն հասկացավ, որ այդպիսի փոխհրաձգութեան մեջ իր բանը բուրդ է, որ սպասվող ողբերգական տեսարանի ականատեսներին մեծ վտանգ է սպառնում, ուստի աղափնիների տարմի նման ցրվեց, հենց որ Բենվենուտոն կրակեց արկերուզից և լավեց վիրավորի վայնասունը:

Հրապարակում մնաց միայն մի հանդիսատես:

Այդ հանդիսատեսը մեզ ծանոթ ժակ Օբրին էր: Հուսալով զվարճանալ գնդակախաղով, նա եկել էր տեսակցութեան, որ անցյալ կիրակի նշանակել էր Ասկանիոն: Աչք ածելով մարտի դաշտը, նա ամեն ինչ հասկացավ: Իմանալով ժակ Օբրիի բնավորութիւնը, հարկ չկար գուշակելու, թե նա ինչ որոշում կընդունի: Միևնույն չէ՞ ինչ խաղալ, գնդակ, թե պաշարում. չէ՞ որ և՛ մեկը, և՛ մյուսը խաղ են: Գլխի ընկնելով, որ իր բարեկամը հարձակվողների մեջ է, նա անմիջապես միացավ նրանց:

— Այդպես ուրեմն, բարեկամներս,— բացականչեց ժակը, մոտենալով ջոկատին, որը սպասում էր, թե ուր որ է դուռը կբացվի և կարելի կլինի ամբողջ խուժել:— Պատրաստվում ենք գրոհել, գրողը տանի: Դժվար գործ եք նախաձեռնել. դուք, մի բուռ մարդիկ, հարձակվում եք ոչ թե փոքր տնակի վրա, այլ լավ պաշտպանված ամբոցի:

— Մենք մենակ չենք,— հարեց Պագոյոն, կրունկը կապելով և մատնացույց արեց Բենվենուտոյին ու նրա երեք չորս պինակցին, որոնք շարունակում էին այնպիսի կատաղի կրակի տակ պահել պարիսպը, որ քարերի կարկուտը զգալիորեն պակասեց:

Հասկանում եմ, հասկանում եմ, մոնսենյոր Աբիլիս, ասաց ժակ Օբրին,— քանզի չեմ կասկածում, որ դուք

չատ նման եք Աքիլլեսին: Եվ այդ ընգհանրութունից բացի, դուք նույնպես վիրավորված եք կրունկից: Հասկանում եմ, հասկանում եմ: Ահա և իմ բարեկամ Ասկանիոն: Նրա հետ, իհարկե, վարպետ Չելլիին է. ահա նրանք աշտարակի գա-
գաթին են:

— Ճիշտ է,— ասաց Պագուլոն:

— Իսկ այն ի՞նչ հսկա է, որն այդքան կատաղորեն շար-
դում է դուռը: Նա է՞լ ձեր ջոկատից է:

— Հերմանն է,— հպարտորեն ասաց Ճստլիկ ժանը:

— Գրո՞ղը տանի, այ թե ճարակորեն է գործում,— բա-
ցականչեց ուսանողը:— Ողջունենք նրան:

Եվ Օրրին, ձեռքերը գրպանները դնելով և ուշադրություն չդարձնելով գլխավերևում սուրացող գնդակներին, մոտեցավ քաջ գերմանացուն, որը շարունակում էր իր գործը նույն ճշտակատարությամբ, ասես անբասիր մեխանիզմով գործի դրված մեքենա լիներ:

— Ձեզ որեէ բան հարկավոր չէ՞, սիրելի Գողիաթ,—
հարցրեց ժակ Օրրին:— Ես ձեր տրամադրության տակ եմ:

— Ես ցանկացա խմել,— պատասխանեց Հերմանը, շա-
րունակելով ջարդել դուռը:

— Գրողը տանի, հասկանալի է: Այդպիսի աշխատանքից
կարելի է կատաղել: Ափսոս, ձեռքիս տակ մի տակառ գարե-
ջուր կամ քաղցու չկա, կհչուրասիրեի ձեզ:

— Տուր ինձ ջուր,— գոռաց Հերմանը:— Զո՞ւր:

— Ձեզ դուր է գալիս ա՞յդ խմիչքը: Լավ, մեր կողքին
ամբողջ մի գետ կա: Մի րոպե համբերություն. ես կհչուրա-
սիրեմ ձեզ ցրով:

Եվ ժակ Օրրին վազեց դեպի Սենը, գլխարկը ջրով լցրեց
ու բերեց գերմանացուն. կտրիճը ցած դրեց գերանը, մի շըն-
չով խմեց ջուրն ու գլխարկը վերադարձրեց ուսանողին:

— Լավ,— ասաց նա և գերանը վերցնելով, շարունակեց
իր գործը:

Քիչ անց նա ասաց.

— Դուք գնաք ուսուցչի մոտ, դուք ասեք, որ շուտով
ամեն ինչ պատրաստ, թող ինքն էլ լինի պատրաստ:

Ժակ Օրբին նետվեց դեպի աշտարակը և մի ակնթարթում հայտնվեց Ասկանիոյի ու Բենվենուտոյի կողքին, որոնք արկերուզներից այնպիսի կատաղի կրակ էին բացել պաշարվածների վրա, որ մեսսեր պրևոյի պահնորդներից երկուերեք հոգի արդեն շարքից դուրս էին եկել: Քշնամին, չհամարձակվելով պարիսպը բարձրանալ, սպասում էր հարմար ժամանակի:

Մինչ Հերմանը պատվիրեց հաղորդել Բենվենուտոյին, թե դուռն ուր որ է տեղի կտա, պրևոն որոշեց վերջին փորձը կատարել. նրան հաջողվեց խրախուսել իր զինվորներին, և ահա նոր ուժով, քարերի մի ամբողջ կույտ ցած թափվեց. բայց համարյա նույն պահին արկերուզի երկու կրակոց կրկին սառեցրին պաշարվածների կիրքը, որը պրևոն հրահրել էր սպառնալիքներով ու խոստումներով. նրանք սսկվեցին և պահ մտան: Այդ տեսնելով, մեսսեր Ռոբերն անձամբ առաջ շարժվեց և երկու ձեռքով հսկայական մի քար վերցնելով, ուղում էր գցել Հերմանի գլխին:

Բայց Բենվենուտոն այն մարդկանցից չէր, որին կարելի լիներ հանկարծակիի բերել: Նկատելով, որ անզգույշ թշնամին մոտեցել է այնտեղ, որտեղ ոչ ոք արդեն չէր համարձակվում ոտք դնել, նա նշան բռնեց: Բայց այն պահին, երբ Չելլինին պատրաստվում էր սեղմել հրահանը, Ասկանիոն ճշաց և ձեռքով մի կողմ բաշեց արկերուզի փողը. գենքը կրակից օդի մեջ: Բանն այն է, որ Ասկանիոն ճանաչել էր Ապոմբուայի հորը:

Փրփրած Բենվենուտոն ցանկանում էր բացատրություն պահանջել Ասկանիոյից, բայց այդ պահին պրևոյի գցած քարն ընկավ ուղիղ Հերմանի սաղավարտին: Չնայած իր հուժկու ուժին, ժամանակակից Տիտանը չկարողացավ դիմանալ այդ Պելիոնին¹, բաց թողեց գերանը, ձեռքերը տա-

¹ Պելիոն — լեռ Հունաստանում (Քեսալիայում): Ըստ գիցաբանության, աստվածների ավագ սերունդը՝ Տիտանները, ըմբոստացան իշխանությունը բռնազրաված Ջևի դեմ, և Պելիոնը դրին հարևան սարի՝ Օսայի վրա, երկինք հասնելու համար:

րածեց, ասես հենարան փնտրելով և, հավասարակշռութիւնը կորցնելով, ուշաթափ ցած ընկավ:

Պաշարողները և պաշարվածները միաձայն ճիշ արձակեցին: Ճատիկ ժանր և մոտակայքում գտնվող երեք-չորս ենթավարպետ նետվեցին դեպի կտրիճը, պատից հեռու քաշեցին և սկսեցին ուշքի բերել: Այդ պահին Նելի ամրոցի դուռն ու դարպասը բացվեցին, և պրևոն տասնհինգ պահնորդների հետ նետվեցին դեպի վիրավորը, ընդ որում բոլորն էլ այնքան ճարպկորեն էին սուսեր բանեցնում՝ խոցում ու հարվածում, որ ժանն իր երեք ընկերով ստիպված էր նահանջել, չնայած Բենվենուտոյի խբախուսական բացականչութիւններին, տեղի շտալու հորդորներին, օգնութեան գալու խոստումներին: Եվ պրևոն օգտվեց դրանից: Ութ հոգի բռնեցին դեռևս ուշքի չեկած Հերմանի ոտքերից ու ձեռքերից, իսկ յոթ հոգի շարվեցին ջոկատի առաջ նրանց պաշտպանելու համար, և մինչ աշտարակի գագաթին գտնվող Չելլինին, Ասկանիոն, ժակ Օբրին և նրանց երեք-չորս զինակիցը կիջնեին շորս-հինգ հարկ բարձրութիւնից, Հերմանին ներս տարան Նելի Մեծ ամրոցը, և հենց որ Չելլինին, արկերուզը պատրաստ բռնած, հայտնվեց աշտարակի դռան առաջ, ամրոցի դարպասը փակվեց պրևոյի ջոկատի վերջին պահնորդի հետևից:

Պարտութիւնն ակնհայտ էր և այն էլ՝ լուրջ պարտութիւն: Չելլինին, Ասկանիոն և նրանց ընկերները արկերուզներից կրակելով, շարքից հանել էին պաշարվածներից երեք-չորսին, սակայն երեք-չորս պահնորդի կորուստն այնպիսի վնաս չհասցրեց պրևոյին, ինչպես Հերմանի կորուստը՝ Չելլինինին:

Պաշարողները մի պահ շփոթվեցին:

Հանկարծ Ասկանիոն ու Չելլինին հայացքներ փոխանակեցին:

— Ես մի ծրագիր ունեմ,— ասաց Չելլինին, նայելով ձախ, քաղաքի կողմը:

— Ես նույնպես,— պատասխանեց Ասկանիոն, նայելով աջ, դաշտերի կողմը:

— Ես գտա, թե ինչպես կարելի է պահակախումբը գուրս բերել ամբողջից:

— Իսկ եթե հաշոդվի գուրս բերել պահակախումբը, ես գիտեմ, թե ինչպես կբացենք դարպասը:

— Քեզ քանի՞ մարդ է պետք:

— Մեկը բավական է:

— Ընտրիր:

— Ժակ Օբրի,— հարցրեց Ասկանիոն,— ցանկանո՞ւմ եք գալ ինձ հետ:

— Թեկուզ աշխարհի ծայրը, թանկագին բարեկամս, թեկուզ աշխարհի ծայրը: Միայն թե չէր խանգարի, եթե ես էլ զենք ստանայի, դաշույնի մի կտոր, կամ կես սուսեր, մի քանի մատնաշափ երկաթ, որ հարկ եղած դեպքում խոցեմ թշնամուն:

— Շա՛տ լավ: Վերցրեք Պագոլոյի սուսերը. նա արդեն անգոր է սուսեր բանեցնել, չէ՞ որ աջ ձեռքով նա բռնել է կրունկը, իսկ ձախով՝ խաշակնքում է դեմքը:

— Ահա ձեզ իմ դաշույնը ևս,— ասաց Չելլինին:— Հարվածներ հասցրեք, երիտասարդ, բայց թշնամու մարմնի մեջ չթողնեք: Շատ թանկ նվեր կլինի հակառակորդին. երախակալն ինքս եմ գրվագել, հարյուր ոսկի էկյու արժե:

— Իսկ սա՞յրը,— հարցրեց Ժակ Օբրին:— Երախակալն, իհարկե, թանկարժեք բան է. բայց, ճիշտն ասած, ես գերազատում եմ սայրը:

— Սայրն անգին է,— սլառասխանեց Բենվենուտոն,— ես պրտնով սպանել եմ եղբորս սպանողին:

— Կեցցե՛ դաշույնը,— բացականչեց ուսանողը:— Գնանք, Ասկանիո:

— Հիմա,— ասաց Ասկանիոն, իրանի շուրջը փաթաթելով հինգ-վեց ծովային սաժեն երկարութուն ունեցող ճոպանը և ուսին դնելով սանդուղքը:— Ահա, ես պատրաստ եմ:

Եվ երկու խիզախ երիտասարդները հարյուր քայլի շահեգնացին գետափով, հետո շրջվեցին դեպի ձախ և անհետացան նեխ Մեծ ամբոցի անկյունում, քաղաքային խրամի մյուս կողմը:

Թող Ասկանիոն իրագործի իր մտահղացումը, իսկ մենք տեսնենք, թե Չելլինին ինչպես ի կատար ածեց իրենը:

Ասկանիոն, ինչպես ասացինք, նայում էր դեպի աջ, այսինքն՝ դաշտերի կողմը, իսկ Բենվենուտոն նայում էր դեպի ձախ, այսինքն՝ քաղաքի կողմը, որովհետև հանդիսականների բազմության մեջ, որոնք կանգնած էին որոշ հեռավորության վրա, Չելլինին նկատեց երկու կնոջ և կարծես ճանաչեց պրևոյի աղջկան ու դուենյային:

Եվ իրոք, Կոլոմբան և տիկին Պերինան այնտեղ էին: Երբ պատարագը վերջացավ, նրանք գնացին տուն, նեղի Փոքր ամրոցը, բայց պաշարման մասին լսած պատմություններից և իրենց աչքի առաջ բացված սոսկալի տեսարանից վախեցած, սարսափահար կանգ առան և խոնվեցին բազմությանը:

Սակայն Կոլոմբան, որին շատ էր անհանգստացնում հոր ճակատագիրը, երբ նկատեց, որ ճակատամարտը հանդարտվել է և կարելի է ազատորեն անցնել փողոցով, ականջ չդնելով տիկին Պերինայի աղաչանքներին, որը համոզում էր աղջկան հեռու մնալ ճակատամարտի վայրից, անվախորեն քայլերն ուղղեց դեպի ամրոցը, դուենյային լիակատար ազատություն տալով՝ վարվել ինչպես կամենում է, սակայն տիկին Պերինան հոգու խորքում քնքշորեն սիրում էր Կոլոմբային, և այդ պատճառով վախից սարսռելով, այնուամենայնիվ, որոշեց ուղեկցել իր սանուհուն:

Երկու կանայք բազմությունից անջատվեցին այն պահին, երբ Ասկանիոն և Ժակ Օրրին հեռացան ամրոցից:

Այժմ մեզ համար հասկանալի է Բենվենուտո Չելլինիի սլանը:

Տեսնելով, որ կանայք մոտենում են ամրոցին, Չելլինին ընդառաջ գնաց նրանց և քաղաքավարությամբ ձեռքը մեկնեց Կոլոմբային:

— Օրիորդ, մի վախենաք,— ասաց նա:— Եվ եթե կամենաք ինձ թևանցել, ես կտանեմ ձեզ ամրոցը, ձեր հոր մոտ:

Կոլոմբան տատանվում էր, բայց տիկին Պերինան կախվեց Չելլինիի թևից, թեև վերջինս մոռացավ իսկ օգնություն առաջարկել նրան:

— Համաձայնեք, հոգյակս, համաձայնեք ընդունել այս ազնիվ կավալերի հովանավորութիւնը... Տեսեք, խնդրեմ, անհավաստի և ինքը՝ պարոն պրևոն. նա կանգնած է ամրոցի պարսպին: Ահա նա խոնարհվում է... Իհարկե, անհանգստանում է մեզ համար:

Կոլոմբան թեանցուկ արեց Բենվենուտոյին, և նրանք երեքով մոտեցան ամրոցի դարպասին:

Այդ ժամանակ Չելլինին կանգ առավ՝ Կոլոմբային և տիկին Պերինային թեանցուկ արած:

— Պարոն պրևո,— բացականչեց նա,— ձեր աղջիկը ցանկանում է տուն վերագառնալ: Հուսով եմ կբացեք դուռը և ներս կթողնեք նրան, եթե չեք կամենում այսպիսի գեղանի պատանդուն հուն թշնամիների ձեռքը տալ:

Այդ երկու ժամվա ընթացքում, որ պրևոն ճակատամարտ էր մղում ամրոցի պարսպի պաշտպանութեան ներքո, նա շատ անգամ մտածել էր աղջկա մասին, որին այնքան անզգուշորեն թուլատրել էր դուրս գալ տնից և չէր կարողանում ելք գտնել, թե ինչպես ներս թողնի ամրոց: Պրևոն հույս ուներ, որ աղջկան ժամանակին կնախազգուշացնեն և նա գլխի կրնկնի գնալ Շատլե ու սպասել այնտեղ. սակայն հանկարծ տեսավ Չելլինին. արձանագործը բաժանվեց ջուկատից և քայլերն ուղղեց երկու կանանց կողմը, որոնց գ'էստուրվիլն անմիջապես ճանաչեց. մեկը Կոլոմբան էր, մյուսը՝ տիկին Պերինան:

— Հիմա՛ր աղջիկ,— ատամների միջից մոթմոթաց պրևոն:— Սակայն չի կարելի նրան թողնել այդ անհավաստների ձեռքում...

Ապա լուսամուտը բացելով և դեմքը հայելով վանդակապատին, նա բարձրաձայն հարցրեց Չելլինին:

— Ի՞նչ եք պահանջում:

— Իմ պայմանը հետևյալն է,— ասաց Բենվենուտոն:— Ու թույլ կտամ տիրուհի Կոլոմբային և նրա դուստրային տուն վերադառնալ, իսկ դուք ձեր բոլոր մարդկանց հետ դուրս կգաք փողոց, և մենք ճակատ ճակատի կովի կրոնվենք. ով մարտի պաշտում հաղթանակ տանի, նա էլ կլինի ամրոցի

տերը, և այն ժամանակ՝ վա՛յ պարտվածներին: *Voe victis!*— ինչպես ասում էր ձեր հայրենակից Բրենը¹:

— Համաձայն եմ,— ասաց պրևոն,— բայց մի պայմանով:

— Ասացեք:

— Դուք և ձեր զինվորները հեռու կբաշվեք, որպեսզի հնարավորություն տաք աղջիկս ներս մտնի, իսկ պահնորդները՝ դուրս գան:

— Թող այդպես լինի,— ասաց Չելլինին:— Բայց նախ դուրս կգաք դուք, այնուհետև ներս կմտնի տիրուհի Կոլոմբրան և, որպեսզի կտրեք ձեր նահանջի ճանապարհը, բանալին պատի վրայից ներս կշարտեք:

— Համաձայն եմ,— ասաց պրևոն:

— Խո՞ւք եք տալիս:

— Ազնվականի խոսք: Իսկ դո՞ւք:

— Բենվենուտո Չելլինիի խոսք:

Երբ նրանք ազնիվ խոսք փոխանակեցին, դարպասը բացվեց. պահնորդները դուրս եկան մեսսեր դ'էստուրվիլի գլխավորությամբ և շարվեցին՝ երկու շարք կազմած: Հիմա նրանք տասներ հոգի էին: Իսկ Բենվենուտո Չելլինիի ջոկատում, առանց Ասկանիոյի, Հերմանի և Ժակ Օբբիի, ութ հոգի էին միայն, այդ թվում և Չախլիկ-Սիմոնը, որը բարեբախտաբար վիրավորվել էր աջ ձեռքից: Բայց Բենվենուտոն այն մարդկանցից չէր, ովքեր հաշվում են թշնամիներին. չէ՞ որ նա խոցեց Պոմպետյին, որին պաշտպանում էին տասներկու վարձկան: Նա ուրախությամբ ազնիվ խոսք տվեց, քանզի բոլորից շատ էր ցանկանում, որ տեղի ունենա վճռական, գլխավոր ճակատամարտ:

— Հիմա դուք կարող եք ներս մտնել, օրիորդ,— ասաց նա իր գեղանի գերուհուն:

¹ Բրեն— Գալլերի առաջնորդը, որը 390 թ. ներխուժեց էտրուրիա և գրավեց Հռոմը: Ըստ ավանդության Բրենը քաղաքի բնակիչներից հսկայական փրկագին պահանջեց և, երբ նրա համար ոսկի էին կշռում, կշեռքի նժարի մեջ, որտեղ գրված էին կշռաքարերը, նետեց իր սուրը, բացականչելով. «Վա՛յ պարտվածներին» (լատ. «Voe victis»):

Կոլոմբան աղաժնյակի նման թռավ ճամբարից ճամբար
և, հուզմունքից գլուխը կորցրած, նետվեց պրևոյի գիրկը։

— Հա՛յրիկ, հայրի՛կ։ Աստծու սիրուն, ձեր կյանքը
վտանգի շենթարկեք,— արտասովելով բացականչեց նա։

— Հիռացիր,— կոպտությամբ պատասխանեց պրևոն,
բռնելով նրա ձեռքը և դեպի դարպասը տանելով,— բո հի-
մար արարքի պատճառով մենք դժվարին դրության մեջ ըն-
կանք։

Կոլոմբան մտավ ամրոց՝ տիկին Պերինայի ուղեկցու-
թյամբ, որը թեև իր գեղանի սանուհու նման չէր թեւածում,
սակայն վազում էր վախից և բավականին արագ, շնայած
տասը տարի շարունակ նրան թվացել էր, թե ոտքերը բռնը-
վում են։ Պրևոն նրանց հետևից փակեց դարպասը։

— Բանալին, բանալին,— բացականչեց Չելլինին։

Պրևոն, հավատարիմ մնալով իր խոսքին, հանեց բանա-
լին և պատի վրայից նետեց ամրոցի բակը։

— Իսկ հիմա,— բացականչեց Բենվենուտոն, նետվելով
գեպի պրևոն և նրա ջոկատը,— ամեն մարդ թող պաշտպանի
իրեն, իսկ աստված՝ բոլորիս պահապան։

Եվ այդ ժամանակ սկսվեց արյունահեղ մի գոտեմարտ,
որովհետև պահնորդները չհասցրին նշան բռնել ու կրակել
արկերուզներից, երբ Բենվենուտոն յոթ հնթավարպետի հետ
հայտնվեց նրանց կողքին, աչ ու ձախ հարվածներ հասցնե-
լով իր ահեղ սուսերով, որը նա ոչ միայն ճարակորեն էր
բանեցնում, այլև՝ ինքն էր կոփել։ այդ պատճառով աշխար-
հում շկար այնպիսի օղազրահ, այնպիսի սաղավաբտ, որ
դիմանար այդ սուսերին։ Պահնորդները մի կողմ նետեցին
անօգուտ դարձած արկերուզները, մերկացրին սուսերը և
անցան ձեռնամարտի։ Բայց շնայած թշնամիների քանակին
և ուժին, Չելլինիի ջոկատը մի ակնթարթում ցրեց նրանց
հրապարակով մեկ, իսկ ամենաքաջերից երկուսը այնքան
ծանր վերք ստացան, որ արդեն չէին կարող կովել և ստիպ-
ված էին նահանջել։

Պրևոն տեսնում էր վտանգը, բայց քաջ մարդ էր և ժա-
մանակին, ինչպես նշել ենք, կարող էր պարծենալ մարտա-

կան հաջողութիւններով. նա ընդառաջ նետվեց ահեղ Բեն-վենուտո Չելլինին, որի առաջ բոլորը նահանջում էին:

— Ինձ մոտ,— գոռում էր նա,— այստե՛ղ արի, գարշելի ավազակ, և թող մենամարտը որոշի ամեն բան: Հիմա կտեսնենք:

— Օ՛, երգվում եմ, որ դա իմ միակ ցանկութիւնն է, մեսսեր Ռորեր: Հրամայեք ձեր մարդկանց շխանգարել մեզ, և ես ձեր տրամադրութեան տակ եմ:

— Չգա՛ստ,— հրամայեց պրևոն պահնորդներին:

— Տեղից շարժվել,— ձայն տվեց Չելլինին իր օգնականներին:

Եվ բոլորն անշարժացան Հոմերոսի գովերգած ուղիղներին նման, որոնք գազարեցրին կոիվը՝ մենամարտի բռնկված երկու անվանի զորավարների ոչ մի շարժումն աչքաթող շանելու համար:

Եվ ահա պրևոն ու Չելլինին, սուսերը մերկացրած, նետվեցին միմյանց վրա:

Պրևոն վարպետորեն էր զենք բանեցնում, բայց Չելլինին էլ անգերազանցելի սուսերամարտիկ էր: Արդեն տասը-տասներկու տարի պրևոն առիթ չէր ունեցել սուսերը մերկացնելու: Եվ, ընդհակառակը, վերջին տասը-տասներկու տարվա ընթացքում համարյա օր չէր լինում, որ Բենվենուտոն սառը զենք շքանեցներ: Պրևոն, որն այդքան ինքնավստահորեն մարտի բռնվեց, առաջին իսկ հարվածներից զգաց թշնամու գերազանցութիւնը:

Իսկ Բենվենուտո Չելլինին, իր հերթին, ինչ-որ մի դատական պաշտոնյայից այդպիսի դիմադրութիւն շապասելով, սուսերամարտում էր թափով, արագ ու ճարպկորեն: Բոլորն ապշել էին, տեսնելով, թե ինչպես նրա սուսերը օձի երկճյուղված խայթի նման սպառնում է միաժամանակ թշնամու գլխին ու սրտին, տեղից տեղ է թռչում, թույլ շտալով թըշնամուն ոչ մի հարված հասցնել. պրևոն հազիվ էր կարողանում հետ մղել նրա հարվածները: Հասկանալով, որ գործունի ավելի ուժեղ սուսերամարտիկի հետ, պրևոն հետ քաշվեց, ճիշտ է՝ պաշտպանվելով, բայց ի վերջո սկսեց դիրքերը

դիշել: Մեսսեք Ռոբերի բախտը չբերեց. նա կանգնած էր մեջքով դեպի ամրոցը: Այդ պատճառով հենց որ մի քանի քայլ նահանջեց, Բենվենուտոն դեմ տվեց նրան դարպասին, որին բնագոյրեն մոտեցել էր պրևոն, թեև շատ լավ հիշում էր, որ իր ձեռքով փակել է այն ու բանալին գցել պատի մյուս կողմը:

Եվ այդ միջոցին պրևոն զգաց, որ ամեն ինչ վերջացած է. շներից պաշտպանվող վարազի նման նա հավաքեց ուժերն ու երեք-չորս հարված հասցրեց այնպիսի արագությամբ, որ Բենվենուտոն, իր հերթին, ստիպված էր անցնել պաշտպանության. բայց մի հարված նա ժամանակին հետ չմղեց, և թշնամու սուսերը, շնայած Բենվենուտոյի հագած սքանչելի, օղազրահին, ճանկոտեց նրա կուրծքը: Պողպատե սուրսայրի սառնությունը զգալով, Բենվենուտոն վիրավոր առյուծի նման կատաղեց, լարեց բոլոր ուժերը, և կայծակնային հուժկու հարվածը ցած կտապալեք մեսսեք դ՛էստուրվիլին, եթե այդ բոպեին դարպասը չբացվեր. պրևոն երեսնիվայր ցած ընկավ, և սուսերը խոցեց նրան, ով հանկարծակիորեն դարպասը բացելով, փրկեց մեսսեք պրևոյին:

Սակայն տեղի ունեցավ անսպասելի մի բան. վիրավորը շտնքաց, իսկ Բենվենուտոն հուսակատուր մի ճիշ արձակեց: Պարզվեց, որ նա խոյի է Ասկանիոյին:

Բենվենուտոն, ուշադրություն չդարձնելով ժակ Օբրիի և Հերմանի վրա, որոնք կանգնած էին վիրավորի հետևում, խելագարի նման գիրկն առավ պատանուն, շոշափում էր, ղենում, համբուրում էր նրան, փնտրելով վերքը և գոռում էր, մոնչալով ու լալով, ինչպես, հավանաբար, մոնչում ու լալիս է առյուծը:

— Սպանված է, սպանված: Ե՛ս նրան սպանեցի: Ասկանիո, զավակս, ես սպանեցի քեզ:

Այդ ժամանակ Հերմանը բարձրացրեց Ասկանիոյի և Չել: լինիի ոտքերի մոտ փռված ողջ և առողջ պրևոյին և փորձրիկ երեխայի նման տարավ ցախատուն, որտեղ Ռեմբոն սովորաբար պահում էր այգեգործական գործիքները, փակեց դուռը և սուսերը մերկացրած կանգնեց մուտքի մոտ, պատրաստվելով կանխել գերուն ազատելու ամեն մի փորձ:

Իսկ Ժակ Օբրին մի ուսայունով թռավ պարսպի վրա և, ի նշան հաղթանակի, դաշույնը ճոճելով, գոռաց:

— Փողհարե՛ք, փողհարե՛ք... Նեւի Մեծ ամրոցն այսուհետև մերն է:

Այն մասին, թե այս բոլոր զարմանալի իրադարձություններից հետո ինչ տեղի ունեցավ, ընթերցողը կիմանա հետևյալ գլխում:

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐՈՐԳ

Ամրոցների առավելության մասին

Նեւի ամրոցը Պրե-Օ-Կլերի կողմից շատ լավ պաշտպանված էր քաղաքի հողապատնեշով ու խրամով, և բոլորը գտնում էին, որ այդ մասում ամրոցը պարզապես անառիկ է: Եվ ահա Ասկանիոն, խելամտորեն դատելով, որ մարդիկ հազվադեպ են մտածում այն ամենի պաշտպանության մասին, ինչ անհնարին է նրանցից խելի, որոշեց մուտք գործել ամրոց այնտեղից, որտեղ պաշտպանությունն աչքաթող էր արված:

Այդ պատճառով նա հեռացավ իր ընկերոջ՝ Ժակ Օբրիի հետ, շկասկածելով, որ այն պահին, երբ ինքը կգնա մի կողմի վրա, մյուս կողմից կհայտնվի իր սիրելի Կոլոմբան, և որ դա հնարավորություն կտա Բենվենուտոյին հարկադրել պրևոյին ճարահատյալ դուրս գալ ամրոցից:

Դյուրին չէր կատարել այն ամենը, ինչ մտքում դրել էր Ասկանիոն. նրա դիտավորությունը հղի էր վտանգավոր հետևանքներով: Պատանին մտադրվել էր անցնել խոր խրամի վրայից և մագլցելով բարձրանալ քսանհինգ ոտնաչափ բարձրություն ունեցող պարիսպը. նա կարող էր ցած գլորվել, ընկնել թշնամու բանակատեղին: Եվ միայն խրամի եզրը հասնելով և, հետևապես, սկսելով մտահղացման իրագործումը, Ասկանիոն հասկացավ, թե ինչքան դժվար կլինի խրամի վրայից անցնել և ի կատար ածել իր մտադրությունը:

նր: Այդ պատճառով նա մի պահ քիչ մնաց հրաժարվելու իր որոշումից:

Ժակ Օբրին անվրդով տեսքով կանգ առավ ընկերոջից տասը քայլ հեռավորության վրա, դիտելով մերթ պարիսպը, մերթ խրամը: Այնուհետև, հայացքով շփեղով խոչընդոտը, նա ասաց.

— Ապա, սիրելի բարեկամ, ասա տեսնեմ, գրողը տանի, թե ինչո՞ւ ինձ քարշ տվիր այստեղ. կարծեմ ո՞չ գորտեր բռնելու համար... Ահա թե ինչ... Նայում ես ճոպանն սանդուղքին... Հիանալի է: Հասկանում եմ: Բայց սանդուղքի երկարությունը տասներկու ոտնաչափ է, պարսպի բարձրությունը՝ քսանհինգ ոտնաչափ, իսկ խրամը՝ տասը ոտնաչափ լայնք ունի. եթե շեմ սխալվում, պակասում է ընդամենը քսաներեք ոտնաչափ:

Այդպիսի հաշվարկը սկզբում ապշեցրեց Ասկանիոնին, բայց քիչ անց նա հանկարծ ձեռքը զարկեց ճակատին:

— Ա՛խ, ինչ հաջող միտք, — բացականչեց. — Ապա նայեք:

— Ո՞ւր:

— Այնտեղ, — ասաց Ասկանիոն, — այնտեղ:

— Բայց դու ինձ ցույց ես տալիս ոչ թե հաջող միտքը, այլ՝ կաղնին, — պատասխանեց ուսանողը:

Եվ իրոք, հենց խրամի մոտ վեր էր խոյանում մի հզոր կաղնի, որի ճյուղերն ասես հետաքրքրասիրությունը խոնարհվել էին նեղի ամբոցի պարսպի վրա:

— Մի՞թե չեք հասկանում, — հարցրեց Ասկանիոն:

— Այդպես, այդպես... Կարծես սկսում եմ կռահել: Ընդհանուր ասած, գլխի ընկա: Կաղնին ու պարիսպը կամրջի սկիզբը կլինեն, որը կավարտի սանդուղքը: Բայց դրա տակ, բարեկամս, խոր անդունդ է, ցեխով լի անդունդ: Գրողը տանի, այստեղ զգուշություն է պետք: Ես, գիտես, տոնական զգեստով եմ, իսկ դերձակը հրաժարվում է պարտքով կարել ինձ համար:

— Օգնեք սանդուղքով բարձրանամ, — ասաց Ասկանիոն, — ուրիշ ոչինչ չեմ խնդրում ձեզանից:

— Այդպես, այդպես... Իսկ ես, ուրեմն, կմնամ այստեղ, ներքևում: Խոնարհաբար շնորհակալ եմ:

Եվ ընկերները միաժամանակ կախ ընկան ճյուղից ու մի ակնթարթում հայտնվեցին կաղնու վրա:

Հետո, համատեղ ջանքերով սանդուղքը կապեցին կաղնու կատարից ու մագլցեցին ծառն ի վեր: Այնուհետև սանդուղքը գցեցին պարսպի մյուս կողմը՝ շարժական կամրջի նման և ուրախացան, տեսնելով, որ մի ծայրն ամուր կառչել է հաստ ճյուղից, իսկ մյուսը կախված է պարիսպն ի վար, երկու-երեք ոտնաշափ երկարությամբ:

— Իսկ երբ հայտնվենք պարսպի վրա, ի՞նչ ենք անելու,— հարցրեց Օբրին:

— Երբ հայտնվենք պարսպի վրա, կբաշենք սանդուղքն ու ցած կիջնենք:

— Այդպես է... Բայց ահա թե որն է դժվարությունը. պարսպի բարձրությունը քսանհինգ ոտնաշափ է, իսկ սանդուղքի երկարությունը՝ ընդամենը տասներկու:

— Այդ էլ է նախատեսված,— ասաց Ասկանիոն, քանդելով պարանը, որ փաթաթել էր մեջքին. հետո, մի ծայրը կապելով ծառաբնից, նա պարանը շարտեց պարսպի մյուս կողմը:

— Օ՛, խելոք գուխ, հասկանում եմ քեզ,— բացականչեց ժակ Օբրին:— Եվ հպարտ եմ ու երջանիկ, որ վիզս շարդելու եմ քեզ հետ միասին:

— Այդ ի՞նչ եք անում:

— Անցնում եմ,— պատասխանեց Օբրին, պատրաստվելով փոխադրվել պարսպի վրա:

— Ոչ, առաջ ես կանցնեմ,— ասաց Ասկանիոն:

— Վիճակ հանենք թրջած մատով,— առաջարկեց Օբրին և ընկերոջը մեկնեց ցուցամատն ու միջնամատը:

— Հավ,— համաձայնեց Ասկանիոն և ձեռքը հպեց մատներից մեկին:

— Դու շահեցիր,— ասաց Օբրին:— Բայց տե՛ս, հա՛, եղիր սառնասիրտ ու հանգիստ, հասկացա՞ր:

— Մի անհանգստացեք,— հարեց Ասկանիոն:

Եվ նա առաջ շարժվեց կախովի կամրջի վրայով: Ժակ Օբրին կառչեց պարանից և պահպանում էր սանդուղքի հավասարակշռությունը: Սանդուղքը երերուն էր, բայց քաջ պատանին ծանրամարմին չէր: Ուսանողը շունչը պահեց, նրան թվում էր, թե Ասկանիոն ուր որ է կսայթաքի... Բայց պատանին վազելով անցավ վերջին շորս քայլը և ողջ-առողջ ոտք դրեց պարսպի վրա: Եվ այնտեղ էլ նա մահացու վտանգի կենթարկվեց, եթե պաշարվածներից որևէ մեկը նկատեր նրան. բայց Ասկանիոն շխաբվեց իր ենթադրությունների մեջ: Ցած նայելով, նա ձայն տվեց ընկերոջը.

— Այստեղ ոչ ոք չկա, ոչ մի կենդանի շունչ:

— Այդ դեպքում ա՛նա՛ջ, — բացականչեց ժակ Օբրին: — հիմա ես էլ կցատկոտանմ պարանի վրա:

Եվ նա, իր հերթին, առաջ շարժվեց նեղլիկ ու երերուն օղաչին ճանապարհով, իսկ Ասկանիոն պահում էր սանդուղքը՝ նրա ծառայության փոխարեն ծառայությամբ հատուցելով: Օբրին նույնքան ճարպիկ ու դյուրաշարժ էր, որքան Ասկանիոն, և մի ակնթարթում հայտնվեց ընկերոջ կողքին:

Երկուսն էլ նստեցին պարսպին, վեր քաշեցին սանդուղքը, կապեցին պարանից, որի մյուս ծայրն ամուր կապված էր կաղնուց, և ցած իջեցրին, հարկ եղած երկարությունը տալով, որպեսզի ավելի հուսալիորեն ծառայի իրենց: Այնուհետև Ասկանիոն, որին բախտ էր վիճակվել ամեն փորձության ենթարկվելու, երկու ձեռքով բռնեց պարանը և ցած սահեց մինչև սանդուղքի առաջին շորսուն, իսկ մի վայրկյան հետո նա արդեն գետնի վրա էր:

Ժակ Օբրին բարեհաջող հետևեց նրան, և երկու ընկերները հայտնվեցին պարտեզում:

Հիմա գլխավորը հնարավորին չափ արագ գործելն էր: Անցման վրա բավականին ժամանակ վատնեցին, և Ասկանիոն գողում էր այն մտքից, որ իրենց բացակայությունը կարող է կործանիչ լինել ուսուցչի համար: Սուսերը մերկացրած, Ասկանիոն և ժակ Օբրին վազեցին դեպի առաջին բակը տանող դուռը, որտեղ, ըստ երևույթին, գտնվում էր պրե-

վոյի ջոկատը, եթէ միայն վերջինս չէր հասցրել փոխել դիրքերը:

Դուանը մոտենալով, Ասկանիոն նայեց բանալու անցքից և տեսավ, որ բակը դատարկ է:

— Բենվենուտոն հաջողութեան է հասել,— բացականչեց նա:— Զոկատը դուրս է եկել: Ամբողջը մե՛րն է:

Եվ նա փորձեց բացել դուռը, որը փակ էր:

Երկուսով սկսեցին ամբողջ ուժով ցնցել դուռը:

— Այստեղ եկեք,— լսվեց մի ձայն, որն արձագանք գտավ պատանու սրտում:— Այս կո՛ղմ, պարոն:

Ասկանիոն շրջվեց և առաջին հարկի լուսամուտի մեջ տեսավ Կոլոմբային:

Երկու ոստյունով նա հայտնվեց աղջկա մոտ:

— Ահա թե ինչ,— ծոր տվեց Ժակ Օբրին, հետևելով Ասկանիոյին,— ըստ երևույթին, մենք այստեղ ծանոթներ ունենք: Իսկ դուք ոչ մի խոսք չասացիք այդ մասին, պարոն ժածկամիտ:

— Օ՛, փրկեք հորս, պարոն Ասկանիո,— բացականչեց Կոլոմբան, ամենևին չղարմանալով, որ երիտասարդն այստեղ է, կարծես նրա ներկայութեանը միանգամայն հասկանալի էր:— Կո՛ղմ եք, նրանք կավում են այնտեղ, հրատարակում, և պատճառը միայն ես եմ. իմ մեղքով է: Օ՛, տեր աստված, տեր աստված, շտապեք, խնդրում եմ, այլապես նրան կսպանեն:

— Հանգստացեք,— ասաց Ասկանիոն, նետվելով երկրորդ բակ տանող սենյակները:— Հանգստացեք, ես պատասխանատու եմք ամեն ինչի համար:

— Հանգստացեք,— կրկնեց Ժակ Օբրին, որը կրկակոխ հետևում էր պատանուն:— Հանգստացե՛ք, մենք պատասխանատու ենք ամեն ինչի համար:

Դուան շեմին Ասկանիոն լսեց, որ մեկը կանչում է իրեն, բայց այս անգամ ձայնն այնքան էլ քնքուշ չէր:

— Ո՞վ է ինձ կանչում,— հարցրեց Ասկանիոն:

— Ես կանչում, պատանի բարեկամ, ես կանչում,— գերմանական շեշտված առողջանութեամբ կրկնեց նույն ձայնը:

— Ա՛խ, գրողը տանի,— բացականչեց ժակ Օբրին,— ախր սա մեր Գողիաթն է: Ի՞նչ եք անում այս հավարնում, կտրիճ հսկա:

Եվ իրոք, ոչ մեծ ցախատան ձեղնալուսամուտի մեջ նա տեսավ Հերմանի գլուխը:

— Ինքս չիմանա, ինչպես ընկա այստեղ: Սողնակ քաշի, որ գնամ կռվեմ: Չեռքերս քոր գան:

— Դուրս եկեք,— ասաց ուսանողը, շտապելով կատարել Գողիաթի խնդիրքը:

Մինչ այդ Ասկանիոն մտտեցավ դարպասին, որի հետևից լսվում էր խաչվող սուսերի ահեղ զրնգոցը: Միայն հաստարեստ դարպասն էր բաժանում նրան կովողներից, սակայն վախենալով հանկարծակի երևալ և թշնամու ձեռքն ընկնել, նա դուրս նայեց վանդակեսպատ լուսամուտից և դեմ-դիմաց տեսավ Չելլինիին, բորբոքված, կատաղած, անողոր Չելլինիին, ու հասկացավ, որ մեսսեր Ռոբերը կորած է: Ասկանիոն վերցրեց գետնին ընկած բանալին, վայրկենաբար բացեց դարպասը, մտածելով միայն Կոլոմբային տված իր խոստման մասին և ինչպես ասացինք, հարված ստացավ ուսին՝ այլապես սուսերն անխուսափելիորեն կխոցեր պրևոյին:

Արդեն տեսանք, թե ինչ եղավ դրանից հետո: Բենվենուտոն, վշտից գլուխը կորցրած, գրկել էր Ասկանիոյին. Հերմանը պրևոյին փակեց խցիկում, որտեղից ինքը քիչ առաջ դուրս էր եկել, իսկ ժակ Օբրին բարձրացավ ամրոցի պարբսպի վրա և ձեռքերը թափահարելով, ազդարարում էր հաղթանակի մասին:

Հաղթանակն, իրոք, լիակատար էր. պրևոյի պահնորդները, տեսնելով, որ պետք գերի է ընկել, նույնիսկ չփորձեցին դիմադրել ու զենքերը ցած դրին: Եվ ահա Բենվենուտոյի ենթավարպետները մտան այսուհետև իրենց սեփականութունը դարձած նեկի Մեծ ամրոցի բակն ու իրենց հետևից փակեցին դարպասը, դրսում թողնելով պրևոյի զինվորներին ու վարձկաններին:

Իսկ Բենվենուտոն ուշադրութուն չէր դարձնում այդ ամենի վրա: Նա Ասկանիոյի հագից հանեց օղազրահը և, պատա-

նուն իր գրկից բաց չթողնելով, պատուեց նրա բաճկոնը, վերջապես, վերքը գտնելով, սկսեց թաշկինակով սեղմել այն, ջանալով կանգնեցնել արյունը:

— Ասկանիո, զավակս,— անդադար կրկնում էր նա,— ես քեզ վիրավորեցի, վիրավորեցի: Այնտեղ, երկնքում, ի՞նչ կասի մայրդ: Ների՛ր, ների՛ր Ստեֆանա... Ցավո՞ւմ է: Դե՛ պատասխանիր, ուսդ ցավո՞ւմ է: Մի՞թե արյունը կանգ չի առնի... Բժիշկ կանչե՛ք, շո՛ւտ: Բժիշկ կանչեք...

Ժակ Օբրին վազեց բժշկի հետևից:

— Դատարկ բան է, սիրելի ուսուցիչ, ազնիվ խոսք, դատարկ բան է,— կրկնում էր Ասկանիոն:— Միայն ուսս է խոցված: Մի հուսահատվեք. նորից եմ ասում, դատարկ բան է:

Եվ իրոք, բժիշկը, որին հինգ րոպե հետո բերեց Ժակ Օբրին, հայտարարեց, որ թեև վերքը խորն է, բայց վտանգավոր չէ, և դրեց առաջին վիրակապը:

— Օ՛, ինչպես թեթևացրիք հոգիս, պարոն բժիշկ,— բացականչեց Բենվենուտո Չելլինին:— Թանկագին զավակս, ուրեմն ես քո դահիճը չեմ լինի: Բայց ի՞նչ պատահեց քեզ, Ասկանիո: Զարկերակդ սկսեց արագ բարախել, դեմքդ շիկնեց... Օ՛, պարոն բժիշկ, նրան պետք է տեղափոխել, նա ջերմություն ունի:

— Ո՛չ, ո՛չ,— ուսուցիչ,— պատասխանեց Ասկանիոն,— ընդհակառակը, ես ինձ ավելի լավ եմ ղգում: Օ՛, թողեք ինձ այստեղ, թողեք, աղաչում եմ:

— Իսկ ո՞ւր է հայրս,— հանկարծ Բենվենուտոյի թիկունքում լսվեց մի ձայն, որից Չելլինին ցնցվեց:— Ի՞նչ արիք հորս:

Բենվենուտոն շրջվեց և տեսավ գունատ, անշարժ Կոլոմբրային, որը հայացքով փնտրում էր պրեոյին:

— Օ՛, ձեր հայրը ողջ-առողջ է, մազմուազել: Ողջ առողջ է, փառք աստծո, — բացականչեց Ասկանիոն:

— Պետք է շնորհակալություն հայտնեք խեղճ տղայիս,— արձագանքեց Բենվենուտոն:— Նա իր վրա առավ հարվածը, որն ուղղված էր մեսեր պրեոյին... Եվ դուք, պարոն դ՛էստուրվիլ, կարող եք համարձակորեն ասել, որ կտրիճը փրկեց

ձեր կյանքը: Լսո՞ւմ եք: Որտե՞ղ եք, մեսսեր Ռոբեր, — հարցրեց Չելլինին, իր հերթին աչքերով փնտրելով մեսսեր Ռոբերին և չհասկանալով, թե նա ուր է կորել:

— Նա կա այստեղ, պարոն, — ձայն տվեց Հերմանը:

— Որտե՞ղ «այստեղ»:

— Այստեղ: Նա կա խցիկում:

— Օ՛, պարոն Բենվենուտո, — ձեռքերը թափահարելով բացականչեց Կոլոմբան, որի ձայնի մեջ հնչեցին թե՛ աղերսանք, թե՛ կշտամբանք, և վազեց դեպի ցախատուն:

— Բաց արեք, Հերման, — հրամայեց Չելլինին:

Հերմանը բացեց դուռը, և շեմին հայտնվեց պրևոն՝ իր ձախորդությունից մի քիչ շփոթված: Կոլոմբան գրկեց նրան:

— Օ՛, հայրիկ, — բացականչեց նա, — դուք վիրավորված չե՞ք: Չեզ վնաս չե՞ն պատճառել: — Եվ այդ ասելով նայեց Ասկանիոյին:

— Ոչ, — իր մշտական խստությամբ պատասխանեց սրևոն, — փառք ասածո, ինձ ոչինչ չի պատահել:

— Եվ... և... ձեզ իսկապե՞ս փրկել է այս երիտասարդը, — կմկմալով հարցրեց Կոլոմբան:

— Չեմ կարող ժխտել. նա շատ ժամանակին հայտնվեց:

— Այո՛, այո՛, պարոն պրևո, — ասաց Չելլինին, — նրան խոցեց ձեր կրծքին ուղղված սուսերը... Այո՛, մաղմուազել Կոլոմբա, — կրկնում էր նա, — ձեր հայրն իր կյանքով պարտական է խիզախ պատանուն, և եթե պարոն պրևոն այդ մասին չհայտարարի ի լուր ամենքի, ուրեմն նա ստախոս է և անշնորհակալ մարդ:

— Հուսով եմ ձեր փրկարարը շատ թանկ չի վճարել դրա համար, — ասաց Կոլոմբան և, իր համարձակությունից շփոթված, շիկնեց:

— Օ՛, մաղմուազել, — բացականչեց Ասկանիոն, — ես պատրաստ էի կյանքիս գնով անել այդ:

— Տեսնո՞ւմ եք, մեսսեր պրևո, ինչքան են սիրում ձեզ, — նկատեց Չելլինին: — Բայց վախենում եմ, որ Ասկանիոն թուլացել է: Վերքը կապված է և իմ կարծիքով նրան հանգիստ է պետք:

— Այն, ինչ Բենվենուտոն ասաց պրևոյին վիրավորի մատուցած ծառայութեան մասին, զուտ ճշմարտութիւնն էր, ըստ որում՝ ակնհայտ ճշմարտութիւնն, և պրևոն հոգու խորքում հասկանում էր, որ իր կյանքով պարտական է Ասկանիոյին. նա ջանք գործադրեց, մոտեցավ պատանուն և ասաց.

— Երիտասարդ, ձեր տնօրինութեանն եմ հանձնում ամբողջիս մի մասը:

— Ձե՞ր ամբողջի, մեսսեր Ռոբեր,— քրքշաց Բենվենուտո Չելլինին, որ Ասկանիոյի համար մի քիչ հանգստանալով, լավ տրամադրութեան մեջ էր:— Ձե՞ր ամբողջի: Երևի կամենում եք նորի՞ց ճակատամարտել:

— Ինչպե՞ս,— գոչեց պրևոն:— Մի՞թե ենթադրում եք, որ ձեզ կհաջողվի ամբողջից քշել ինձ և աղջկաս:

— Մխալվում եք, մեսսեր: Դուք զբաղեցնում եք նելի Փոքր ամբողջը. թող այգպես լինի, մնացեք Փոքր ամբողջում: Կապրենք որպես քարի դրացիներ: Այգպես, ուրեմն, մեսսեր. Ասկանիոն հենց հիմա կտեղավորվի Մեծ ամբողջում, իսկ մենք երեկոյան կմիանանք նրան: Բայց եթե ձեզ ավելի է գուր գալիս պատերազմը...

— Օ՛, հայրիկ...— բացականչեց Կալոմբան:

— Ոչ, թող հաշտութեան լինի,— ասաց պրևոն:

— Առանց պայմանների հաշտութիւնն չի լինում, պարտե՛ք պրևո,— ասաց Բենվենուտոն:— Բարի եղեք գալ ինձ հետ: Նելի Մեծ ամբողջը, կամ ի նշան բարեկամութեան ընդունեք ինձ նելի Փոքր ամբողջում, և մենք պայմանագիր կկնքենք:

— Ես հետևում եմ ձեզ, պարոն,— պատասխանեց պրևոն:

— Համաձայն եմ,— բացականչեց Չելլինին:

— Մաղմուազել,— դիմեց պարոն դ'էստուրվիլն իր աղջրկան,— չհամարձակվեք առարկել ինձ: Գնացեք տուն և սպասե՛ք իմ վերադարձին:

Կալոմբան, շնայած հրամանի խիստ տոնին, ճակատը դեմ արեց հորը համբույրի համար և հրաժեշտի հայացքն ուղղելով ներկա գտնվողներին, այդ թվում և Ասկանիոյին, դուրս գնաց:

Պատանին աչքերով ուղեկցեց նրան, մինչև աղջիկն անհետացավ: Այնուհետև նա ինքը խնդրեց տեղափոխել իրեն, որովհետև ոչինչ արդեն նրան այստեղ չէր պահում: Հերմանը գիրկն առավ Ասկանիոյին, ինչպես երեխայի, և տարավ Նելի Մեծ ամրոցը:

— Հիրավի, մեսսեր Ռոբեր... — ասաց Բենվենիտոն, իր հերթին աչքերով ուղեկցելով աղջկան, մինչև վերջինս անհետացավ, — հիրավի, դուք լավ արեցիք, որ հեռացրիք իմ նախկին գերուհուն: Ազնվորեն ասած, ես պետք է շնորհակալութուն հայտնեմ ձեզ շրջահայեցության համար. մադամուզել Կոլոմբրայի ներկայութունը թերևս կվնասեր իմ գործերին, հոգիս կփափկեր, և ես կմոռանայի, որ հաղթողը ես եմ ու կհիշեի միայն, որ նկարիչ եմ, այսինքն՝ աստվածային գեղեցկության և կատարյալ ձևի երկրպագու:

Մեսսեր դ'Էստուրվիլն այդ սիրալիր խոսքերին պատասխանեց բավականին անբաղաքավարի ծամածոությամբ. սակայն նա գնաց արձանագործի հետևից, ջանալով թաքցնել իր վատ տրամադրությունը, թեև ինչ-որ սպառնալիքներ էր մրմնջում: Չեղինին, որոշելով համբերությունից հանել հակառակորդին, խնդրեց դ'Էստուրվիլին միասին շրջանցել իր նոր կալվածքը՝ ամրոցը. այդ հրավերքն այնպիսի քաղաքալարությամբ էր արված, որ պրևոն չէր կարող հրաժարվել: Կամա-ակամա նա հարկադրված էր գնալ իր հարևանի հետեվից, որը ստիպեց նրան մտնել և՛ պարտեզ, և՛ սենյակները. մի խոսքով, բոլոր նրբանցքներն ու խուլ անկյունները:

— Այստեղ պարզապես սքանչելի է, — բացականչեց Բենվենիտոն, ավարտելով շրջագայությունը, որի ընթացքում նրանցից ամեն մեկը շատ հակասական զգացումներ ուներ: — Հիմա ես ներում եմ ձեզ, որովհետև հասկացա, թե ինչու էիք այնքան փսոսում թողնել ամրոցը, պարոն պրևո: Ասելու հարկ չկա, որ դուք միշտ էլ ցանկալի հյուր կլինեք, այստեղ, հենց որ բարեհաճեք պատիվ անել ինձ և այսօրվա պես այցելել աղքատիկ բնակավայրս:

— Դուք մոռանում եք, պարոն, որ այսօր ես եկել եմ ձեր պայմաններն իմանալու և իմ պայմանները ձեզ հաղորդելու

համար միայն: Ես սպասում եմ:

— Իհարկե, իհարկե, մեասեր Ռոբերտ Ես ձեր տրամադրության տակ եմ: Եթե թույլ կտաք, ես առաջինը կհայտնեմ իմ ցանկությունները, իսկ հետո արդեն դուք առանց արգելքի կարտահայտեք ձեր կամքը:

— Ասացեք:

— Նախ և առաջ պայմանավորվենք գլխավորի մասին:

— Ո՞րն է գլխավորը:

— Ահա թե որն է: «Առաջին պայման. մեասեր Ռոբերտ գ'էստուրվիլը, Փարիզի պրեռն, ճանաչում է Բենվենուտո Չելլինիի իրավունքները Նեյի Մեծ ամրոցի տերը համարվելու և ընդմիջա հրաժարվում է այդ ամրոցից»:

— Համաձայն եմ,— պատասխանեց պրեռն:— Բայց եթե թագավորը կրկին կամենա խլել ձեզնից այն, ինչ խլեց ինձնից, և ամրոցը հանձնել ուրիշ մեկին, ինքնըստինքյան հասկանալի է, որ ես դրա համար պատասխանատու չեմ:

— Հը՛մ...— ծոր տվեց Չելլինին:— Այդպիսի հարցադրման մեջ ինչ-որ խարդախություն կա, պարոն պրեռն: Բայց միևնույն է, ես ձեռքումս կպահեմ այն, ինչ գրավել եմ: Այնուհետև...

— Իմ հերթն է,— ասաց պրեռն:

— Իրավացի եք,— ասաց Չելլինին:

— «Երկրորդ պայման. Բենվենուտո Չելլինին պարտավորվում է ոտնձգություններ չկատարել Նեյի Փոքր ամրոցը գրավելու, որը Ռոբերտ գ'էստուրվիլի սեփականությունն է. դեռ ավելին, նա փորձ չի կատարի մուտք գործել այնտեղ ոչ որպես հարևան, ոչ էլ բարեկամի անվան տակ»:

— Թող այդպես լինի,— ասաց Բենվենուտոն,— թեև ձեր կողմից սիրալիրություն չէ այդպիսի պայման առաջարկելը. եթե իմ առաջ բացեն դուռը, ապա, բնականաբար, ես քաղաքավարությունից դրդված ներս կմտնեմ:

— Հեռակարար, ես կկարգադրեմ դուռը շրացել,— պատասխանեց պրեռն:

— Շարունակենք:

— Շարունակում եմ. «Երրորդ պայման. Նեյի Մեծ և Փոքր

ամբողջների միջև ընկած առաջին բազմ ընդհանուր կլինի երկու տիրությունների համար»:

— Շատ արդարացի է,— ասաց Բենվենուտոն,— Եվ եթե մադամուազել Կոլոմբան ցանկանա մտնել այդ բակը, ես նրան գերի շեմ վերցնի:

— Օ՛, մի անհանգստացեք: Ես կպատվիրեմ նոր դուռ բացել, և իմ աղջիկը ներս ու դուրս կանի այդ դռնից: Ես ցանկանում եմ միայն իրավունք ձեռք բերել կառքերի ու սալերի անցման համար:

— Եվ ուրիշ ոչի՞նչ,— հարցրեց Բենվենուտոն:

— Այո,— պատասխանեց մեսսեր Ռոբերը և տեղն ու տեղը ավելացրեց.— Ի դեպ, հուսով եմ, որ կթույլատրեք դուրս բերել կահույքս:

— Շատ արդարացի է: Ձեր կահույքը պատկանում է ձեզ, ինչպես նեղի Մեծ ամրոցը՝ ինձ... Այժմ, մեսսեր պրեո, մի վերջին լրացում ևս. լրացում, որը վկայում է մեր բարչապակամության մասին:

— Ասացեք:

— «Չորրորդ և վերջին պայման. մեսսեր Ռոբեր դ'Էստուրվիլը և Բենվենուտո Չելլինին ռիսակալ չեն լինի միմյանց նկատմամբ և պայմանավորվում են հաշտություն պահպանել՝ ազնիվ ու անկեղծ հաշտություն»:

— Ես պատրաստ եմ լսելու նկ այդ պայմանը,— ասաց պրեոն. բանի որ այն չի պարտավորեցնում ինձ օգնություն և աջակցություն ցույց տալ, եթե ձեզ վրա հարձակվելու լինեն, Համաձայն եմ վատություն չանել ձեզ, բայց չեմ խոստանում ծառայություններ մատուցել:

— Չէ՞ որ դուք, պարոն պրեո, շատ լավ գիտեք, որ ես կարողանում եմ ինձ պաշտպանել, այնպես չէ՞: Այդ պատճառով, եթե դուք,— ավելացրեց Չելլինին, գրիչը նրան մեկնելով,— ստորագրում եք, ապա ստորագրեք:

— Ստորագրում եմ,— հռոպելով ասաց պրեոն:

Պրեոն ստորագրեց, և պայմանավորվող կողմերից ամեն մեկն ստացավ պայմանագրի պատճենը:

Այնուհետև մեսսեր դ'Էստուրվիլը գնաց նեղի Փոքր ամրոցը. նա շտապում էր նախատել խեղճ Կոլոմբային անշրջահայաց

արարքի համար: Կոլումբան խոնարհեց գլուխը և շէր հակա-
ճառում: Ի միջի այլոց, աղջիկը շէր էլ լսում հորը, նա մտա-
ծում էր միայն մի բանի մասին՝ Ասկանիոյի: Նա շատ էր
ուզում հարցնել, թե ինչպես է պատանու առողջությունը,
բայց չկարողացավ ոչ մի բառ արտասանել, իսկ գեղեցիկ
պատանու անունն այդպես էլ չպոկվեց նրա շուրթերից:

Մինչդեռ պարսպի մի կողմում տեղի էր ունենում այս
ամենը, մյուս կողմում Կատերինան, որի մոտ պատգամա-
բեր էին ուղարկել, ներս մտավ Նելի Մեծ ամրոցը և հաճելի
անմիջականությամբ նետվեց Չելլինիի գիրկը, սեղմեց Աս-
կանիոյի ձեռքը, շնորհավորեց Հերմանին, ծաղրուծանակի
ենթարկեց Պագոլոյին... Նա լալիս էր, ծիծաղում, հարցեր էր
տալիս և այդ բոլորն անում էր միաժամանակ: Պետք է ասել,
որ ամբողջ առավոտ աղջիկն անցկացրեց տագնապի մեջ:
Արկեբուզների կրակոցների ձայնը հասնում էր նրա ական-
ջին և խանդարում աղոթել: Բայց ահա վերջապես ամեն ինչ
բարեհաջող ավարտվեց. ճիշտ է, կան սպանվածներ, կան
վիրավորներ, բայց մյուսները ողջ ու առողջ են: Սկոցոնեն
ուրախ էր, ինչպես միշտ:

Ծրբ աղմուկը դադարեց, Ասկանիոն ստաբերեց, թե ճիշտ
ժամանակին իրենց օգնության հասած ուսանողն ինչու էր
ամրոց եկել և, դեպի Բենվենուտոն շրջվելով, ասաց.

— Ուսուցիչ, ահա իմ ընկեր ժակ Օբրին: Մենք պատ-
րաստվում էինք այսօր պարտիա խաղալ: Ինչքան էլ ցանկա-
նամ, ես ի վիճակի չեմ նրա խաղընկերը լինելու, ինչպես
ասում է մեր բարեկամ Հերմանը: Բայց նա այնքան խիզա-
խորեն օգնեց մեզ, որ համարձակվում եմ խնդրել իմ փոխա-
րեն խաղալ նրա հետ:

— Հաճույքով, — պատասխանեց Բենվենուտոն: — Դե,
փորձեք դիմանալ, պարոն Օբրի:

— Կաշխատենք, կաշխատենք, մեսսեր:

— Իսկ հետո կընթրենք: Եվ իմացած եղեք, որ հաղթողը
պետք է ընթրիքի ժամանակ երկու շիշ ավելի դատարկի, քան
պարտվողը:

— Այդ նշանակում է, պարոն Բենվենուտո, որ ձեր տնից

ինձ, դուրս կբերեն ռաստիկ հարբած: Կեցցե՛ ուրախությունը:
Պա ինձ դուր է գալիս...

Ծվ վերցնելով գնդակներն ու ձեռնաթիակները, նրանք
գնացին այգի:

ՎՈՒԽ ՏԱՍՆՄԵԿԵՐՈՐԴ

Բուեր, կաշաղակներ, սոխակներ

Օրը կիրակի էր, ուստի Չելլինին ոչինչ չէր անում, միայն
գնդակ էր խաղում. իսկ խաղից հետո գինի խմեց ու աչքի
անցկացրեց իր նոր կալվածքը: Բայց հետևյալ օրն իսկ սկսե-
ցին տեղափոխել իրերը, և ինքը ենթավարպետ այնպես էին
աշխատում, որ երկու օրում ամեն ինչ տեղափոխեցին: Նր-
րորդ օրը Բենվենուտոն այնպես հանգիստ գործի անցավ,
ասես ոչինչ չէր պատահել:

Նրբ պրևոն տեսավ, որ վերջնականապես պարտված է,
երբ իմացավ, որ Բենվենուտոյի արվեստանոցը, աշակերտ-
ներն ու գործիքները վերջնականապես տեղավորված են Նե-
լի Մեծ ամրոցում, կրկին կատաղեց ու սկսեց վրեժխնդրու-
թյան ծրագրեր նյութել: Պրևոն կատաղի շարությամբ էր հա-
մակված, երբ երրորդ օրն ստավառյան, այսինքն՝ չորեքշաբ-
թի, անսպասելիորեն հայտնվեց դե Մարմանը: Ինքնասիրա-
հար, պարծենկոտ վիկոնտին, ինչպես ամեն մի տխմար ու
ստոր մարդու, միշտ ուրախացնում էին մտերիմների անհա-
չսպասելիություններն ու դժբախտությունները:

— Այգպես, ուրեմն,— մոտենալով դ՛էստուրվիլին ասաց
նա,— ես իրավացի՞ էի, սիրելիդ իմ պրևո:

— Ա՛խ, այդ դո՞ւք եք, վիկոնտ: Բարև ձեզ,— պատաս-
խանեց դ՛էստուրվիլը:

— Ուրեմն, ես իրավացի՞ էի:

— Ավաղ, այո՛: Ինչպե՞ս են ձեր գործերը:

— Համենյան դեպս, ինձ կշտամբելու պատճառ չունեմ:

Խիղճս հանգիստ է. չէ՞ որ ես ձեզ նախազգուշացրի:

— Ինչ է, թագավորը վերադարձել է Լո՞ւվր:

— Այդ բոլորն ասեկոսներ են, կրկնում էիք դուք. «Ինչ-որ մի արհեստավոր, ոչնչություն: Թող գա տեսնենք»: Եվ տեսաք, խեղճ բարեկամս...

— Ես ձեզ հարցնում եմ՝ նորին մեծությունը վերադարձե՞լ է Ֆոնտենբլոյից:

— Այո, և ցավում էր, որ կիրակի օրը Փարիզում չի եղել և Լուվրի աշտարակներից մեկին կանգնած՝ չի տեսել, թե ինչպես է իր ոսկերիչն ու արծաթագործը հաղթել պրևսյին:

— Իսկ ի՞նչ են ասում արքունիքում:

— Ասում են, որ դուք գլխովին ջախջախվեցիք:

— Հըմ... հըմ... — մոթմոթաց պրևոն, որին կատաղեցնում էր անախորժ խոսակցությունը:

— Իսկ այդ ինչպե՞ս պատահեց: Մի՞թե նա այդպիսի խայտառակ պարտության մատնեց ձեզ, — շարունակեց Մարմանը:

— Բայց...

— Նա սպանել է ձեր երկու պահնորդին, այնպես չէ՞:

— Կարծեմ...

— Եթե ցանկանում եք նրանց փոխարինել, ես կարող եմ ձեզ տրամադրել երկու կտրիճ, երկու վարձկան-խտալացի: Թերևս մի քիչ թանկ կնստի, բայց հուսալի մարդիկ են: Եթե նրանք ձեր կողքին լինեին, գործն ուրիշ ընթացք կստանար:

— Տեսնենք, ես չեմ հրաժարվում: Եթե ինքս չվարձեմ, գուցե նրանք պետք գան փեսայիս՝ կոմս դ'Օրբեկին:

— Սակայն, շնայած բոլոր ասեկոսներին, պարզապես հավատալիս չի գալիս, որ Բենվենուտոն իբրև թե սեփական ձեռքով գանահարել է ձեզ:

— Ձեզ ո՞վ ասաց:

— Բոլորն են ասում: Ոմանք զայրանում են, ինչպես ես, մյուսները ծիծաղում են, ինչպես թագավորը:

— Բավական է: Պայքարը դեռևս ավարտված չէ:

— Այդ անտաշի հետ գլուխ դնելը հիմարություն կլինի: Եվ հանուն ինչի՞: Հանուն ստոր շահամոլության:

— Հիմա կկոպեմ հանուն պատվի:

— Եթե, օրինակ, գործը կնոջ վերաբերեր, այդ դեպքում կարող էիր մերկացնել սուսերն ու խրատել այդ ամբողջ խաժամուժին, բայց կացարանի համար...

— Նեղի ամբոցն արժանի կացարան է նույնիսկ թաղավորի համար:

— Համաձայն եմ: Բայց ինչպե՞ս թույլ տվիր, որ թագավորին արժանի կացարանի համար ձեզ խրատեն, ինչպես ուամիկի:

— Օ՛, գլխումս մի միտք ծագեց, — բացականչեց պրևոն, ի վերջո համբերութունից դուրս գալով: — Գրո՛ղը տանի: Դուք այնքան նվիրված եք ինձ, որ ես էլ եմ ցանկանում բարեկամական ծառայություն մատուցել ձեզ: Եվ հիացած եմ, որ այսքան հարմար առիթ ներկայացավ: Պատվելի վիկոնտ, դուք ազնվական եք, թագավորի քարտուղարը, սակայն վատ եք ապրում Յուշետ փողոցում: Մինչդեռ վերջերս ես խնդրեցի դքսուհի դ'էտամպին, — իսկ նա իմ ոչ մի խնդիրքը չի մերժում, դուք այդ գիտեք, — բարեկամներիցս մեկի համար, որը շատ էր ցանկանում բնակվել թագավորական որևէ ապարանքում: Այդ հաջողվեց ինձ, թեև ոչ առանց դժվարության. բայց պարզվեց, որ իմ խնամարկյալն անհետաձգելի գործով հետ է կանչված Իսպանիա: Եվ այդպես, ինձ մոտ մնաց թագավորի շնորհագիրը, որն իրավունք է տալիս գրավել ցանկացած ապարանքը: Ես չեմ կարող օգտվել շնորհագրից: Արդյոք չէի՞ք ցանկանա ինքներդ օգտագործել այն: Ես երջանիկ կլինեմ, որ այդպիսով հատուցում եմ ձեզ սիրալիրության, ծառայությունների և անկեղծ բարեկամության համար:

— Թանկագին դ'էստուրվիլ, ինչպիսի՞ ծառայություն եք մատուցում ինձ: Դուք իրավացի եք, իմ բնակարանը նողկալի է, և ես քսան անգամ գանգատվել եմ թագավորին:

— Բայց մի պայման եմ դնում:

— Ի՞նչ պայման:

— Քանի որ դուք կարող եք ընտրել թագավորական ապարանքներից որը կամենաք, ընտրեցեք...

Սկսարտեք ձեր միտքը, ես սպասում եմ:

... Նեղի ամբոցը:

Ա՛հ, բայց դա ծուղակ է:

— Այ, ի՞նչ եք ասում: Ահա և ապացույցը՝ թագավորական շնորհագիրը՝ նորին մեծութեան անձնական ստորագրութեամբ: Մնում է միայն գրել խնդրատուի անուն-ազգանունը և նշել ապարանքը: Ահա ուրեմն, ես գրում եմ՝ Նելի Մեծ ամրոցը, իսկ դուք ազատ եք գրել ձեր ցանկացած անուն-ազգանունը:

— Իսկ անիծյալ Բենվենուտո՞ն:

— Նա պարզապես ոչինչ չի կասկածում. նրան հանգրսւտացրեց մեր կնքած պայմանագիրը: Ով ցանկանա ներս մտնել, դռները բաց կգտնի, իսկ եթե կիրակի օրը դա, ապա և բոլոր սրահներն էլ գատարկ կլինեն: Բացի այդ, չէ՞ սր հարցը Բենվենուտոյին դուրս անելը չէ, այլ նրա հետ Նելի Մեծ ամրոցը կիսելը: Չէ՞ որ այնտեղ բավականաչափ տեղ կա երեք-չորս ընտանիքի համար: Բենվենուտոն անխոհեմ չի լինի: Բայց այդ ի՞նչ եք ասում:

— Շնորհագրի վերջում գրում եմ անունս և տիտղոսս: Տեսնո՞ւմ եք:

— Բայց զգուշացեք, քանզի Բենվենուտոն կարող է ավելի ոռոկալի լինել, քան կարծում եք:

— Լավ: Ես վարձկաններին կպահեմ ինձ մոտ, և կիրակի օրը մենք նրան մի կերպ անակնկալի կբերենք:

— Ինչպե՞ս: Դուք գլուխ կղնեք այդ անտաշի հետ հանուն ստոր շահամուլութեան:

— Հաղթողներին չեն դատում, բացի գրանից, ես վրեժ եմ լուծում բարեկամիս համար:

— Այդ դեպքում հաջողութուն եմ ցանկանում: Ես ձեզ նախազգուշացրի, Մարման:

— Այդ դեպքում կրկնակի շնորհակալ եմ. նախ՝ ընծայի համար, ապա՝ նախազգուշացման:

Եվ Մարմանը, ուրախութունից գլուխը կորցրած, շնորհագիրը գրպանը գրեց ու շտապեց հեռանալ, որպեսզի ձեռքից բաց չթողնի վարձկան մարդասպաններին:

— Հիանալի է,— ձեռքերը շփելով և հայացքով նրան ուղեկցելով, ասաց մեսսեր դ'էստուրվիլը:— Գնա, վիկոնտ: Երկուսից մեկը՝ կամ՝ դու Բենվենուտոյին հաղթելով կլու-

Ժեզ իմ վրեժը, կամ Բենվենուտոն վրեժխնդիր կլինի քեզ-
նից ինձ ծագրելու համար: Երկու դեպքում էլ ես շահում եմ:
Ես միշտ թշնամիներին գրգռում եմ միմյանց դեմ. թող
կռվեն իրար հետ, թող սպանեն միմյանց, իսկ ես կսկսեմ
ծափահարել նրանց ամեն մի հարվածին, քանզի ամեն
հարված ինձ հաճույք կպատճառի:

Իսկ հիմա, երբ պրևոն ատելությամբ վառված, մտադիր
էր վրեժխնդիր լինել նեյի Մեծ ամբոցի բնակիչներից, անց-
նենք Սենը և տեսնենք, թե առայժմ վերջիններս ինչպե՞տ են
ապրում: Արդեն ասացինք, որ Բենվենուտոն ուժեղ մարդու
խաղաղ վստահությամբ անձնատուր եղավ աշխատանքին,
առանց անահանգստանալու, առանց մտածելու մեսեր
գ'էստուրվիլի հիշաչարության մասին: Ահա թե արձանա-
գործն ինչպես էր անցկացնում օրերը. արթնանալով ծեղին,
նա գնում էր ձուլման արվեստանոցի վերևում գտնվող
առանձնասենյակը, որի լուսամուտը նայում էր նեյի Փոքր
ամբոցի այգուն: Այնտեղ նա ծեփում էր Հեբեի արձանի մո-
ղելը: Ճաշից հետո, այսինքն՝ կեսօրվա ժամը մեկին մտնում
էր արվեստանոց, որտեղ աշխատում էր Յուպիտերի վրա.
երեկոյան, հանգստանալու համար, գնդակ էր խաղում,
կամ՝ զբոսնում: Իսկ Կատերինան իր օրն անց էր կացնում
այսպես. հողի նման պտտվում էր, կարում, ուրախանում,
երգում և նրան ավելի դուր էր գալիս նեյի Մեծ ամբոցը,
քան Ֆերարայի կարդինալի պալատը: Վերքը դեռևս թույլ
չէր տալիս Ասկանիոյին աշխատելու, բայց նա չէր տխրում՝
երազում էր:

Այժմ, եթե օգտվելու լինենք գողերի առավելության
իրավունքից և, պարսպի վրայից անցնելով մտնենք նեյի
Փոքր ամբոցը, ահա թե ինչ կտեսնենք. նախ Կոլոմբային,
որը Ասկանիոյի նման երազում է իր սենյակում, և թող
խույլ տրվի առայժմ ուրիշ ոչինչ շավելացնել դրան: Միայն
ասենք, որ եթե Ասկանիոյի երազները վարդագույն էին,
ապա խեղճ Կոլոմբայի մտքերը սև էին գիշերվա պես: Ահա
և աիկին Պերինան. նա գնացել է մթերք գնելու, և մենք էլ,
եթե կամենում եք, կհետևենք նրան:

Մենք բուրովին աչքաթող էինք արել պատվարժան դուենյային: Անկեղծ ասած, համարձակութիւնն այդ տիկնոջ հիմնական առաքինութիւնը շէր. նա դիտավորյալ կերպով մնում էր ստվերի մեջ, հեռու մեր սլատմած վտանգավոր իրադարձութիւններից, բայց այժմ, երբ հաստատված էր խաղաղութիւնը, նրա այտերին կրկին ծաղկեցին վարդերը, և մինչդեռ Բենվենուտոն նորից ոգեշնչվելով անձնատուր եղավ ստեղծագործութեանը, տիկին Պերինան վերջստացավ իր ուրախ տրամադրութիւնը, բոլոր շատախոսկանանց հատուկ զրուցասիրութիւնը, հետաքրքրասիրութիւնը, մի խոսքով՝ տնային կառավարչուհու բոլոր առաքինութիւնները:

Երբ տիկին Պերինան գնում էր մթերք գնելու, ստիպված էր կտրել-անցնել երկու տիրույթների ընդհանուր բակը, որովհետև նելի Փոքր ամրոցի պարսպի մեջ դեռ նոր դարպաս չէր բացված: Եվ ահա այնպես պատահեց, որ Ռուպերտան, Բենվենուտոյի տարեց սպասուհին, հենց այդ նույն րոպեին դուրս եկավ ճաշի համար մթերք գնելու: Այդ երկու հարգարժան ու պատվելի տիկնայք շափազանց մեծ կարծիք ունեին միմյանց մասին և չէին բաժանում իրենց տերերի անբարյացակամութիւնը:

Ահա թե ինչու նրանք միասին ճանապարհ ընկան ամենասրտառու ճամերաշխութեամբ, և քանի որ ճանապարհը կիսով չափ կարճ է թվում, երբ շատախոսում ես որևէ մեկի հետ, նրանք էլ շատախոսում էին: Տիկին Պերինան սկսեց նրանից, որ հայտնեց Ռուպերտային սննդամթերքի գները և այս թաղամասի խանութպանների ազգանունները, այնուհետև նրանց խոսակցութիւնը դարձավ ավելի անկեղծ ու հետաքրքրական:

— Ուրեմն, ձեր տերը վայրագ բնավորութիւնն ունի,— հարցրեց տիկին Պերինան:

— Ի՛նչ եք ասում: Եթե նրան շնեղացնես, Քրիստոսի նման հեզաբարո է. այ, եթե շկատարես նրա կամքը, այդ դեպքում վայ քեզ: Նա շատ է սիրում, որ ամեն բան անեն իր ցանկացածի համեմատ: Այդպիսին է նրա բնավորութիւնը: Իսկ եթե մի բան մտքում դրեց, դժողքի բոլոր սա-

տանաներն անգամ նրան հաղթել չեն կարող: Բայց երեխայի նման հնազանդ է, երբ տեսնում է, որ ենթարկվում ես նրան: Եվ այնքան սիրալիր է: Պետք է լսեք, ինչպես է ինձ հետ զրուցում. «Տիկին Ռուպերտի (նա ինձ «Ռուպերտի» է անվանում, իր օտարերկրյա ձեռով. իսկականից իմ անունը Ռուպերտա է), տիկին Ռուպերտի, ոչխարի բուրբ հիանալի է տապակած, ինչպես որ պետք է, և բակլան էլ համեմված է փառավորապես: Հիրավի, տիկին Ռուպերտի, հիրավի, դուք խոհարարուհիների թագուհին եք»: Եվ այնքան սիրալիր է ասում այդ բոլորը, որ սիրտս պարզապես հալվում է:

— Ահա՛ թե ինչ: Բայց ասում են, որ նա մարդ է սպանում:

— Օ՛, այո, փորձիր հակառակել, իսկույն կսպանի: Ինչ արած, նրա երկրում սովորութունն այդպես է: Եթե հարձակվեն վրան, պաշտպանվելիս կսպանի: Իսկ առհասարակ նա շատ ուրախ, բարեհամբույր մարդ է:

— Ես նրան երբեք չեմ տեսել: Նա շիկահե՞ր է:

— Ի՛նչ եք ասում, ոչ: Սևահեր է, ինչպես գուր և ես, այսինքն՝ ինչպես էի նախկինում: Ա՛խ, ուրեմն դուք երբեք չեք տեսել նրան: Լավ: Եկեք ինձ մոտ որևէ բան փոխ առնելու, որ նա գլխի շքնկնի, և ես ձեզ ցույց կտամ: Նա գեղեցիկ տղամարդ է ու սքանչելի մարտիկ կլիներ:

— Ի՞ գեպ, գեղեցիկ տղամարդկանց մասին... Ինչպե՞ս է մեր սիրալիր կավալերի առողջութունը: Խոսքս այն վիրավոր, սիրունատես պատանու մասին է, որն իմ վրա առավ սոսկալի հարվածն ու փրկեց պարոն պրևոյի կյանքը:

— Ասկանիո՞ն: Դուք ծանոթ եք նրա հետ:

— Իհարկե: Նա խոստացել էր Կոլոմբային՝ իմ տիրուհուն և ինձ ցույց տալ իր պատրաստած զարդերը: Հիշեցրեք նրան, հոգիս, խնդրում եմ, բայց կարևորն այդ չէ: Առացիք, ինչպե՞ս է նա: Կոլոմբան կուրախանա, եթե իմանա, որ իր հոր փրկարարի կյանքին վտանգ չի սպառնում:

— Օ՛, դուք կարող եք հայտնել ձեր տիրուհուն, որ ամեն ինչ հիանալի է: Հիմա Ասկանիոն մինչև անգամ վեր է կացել անկողնուց: Միայն թե ոսկրաբույժը արգելել է

նրան դուրս գալ սենյակից, մինչդեռ նրա համար օգտա-
կար կլինեք թարմ օդ շնչելը: Բայց այս շոգին դա պարզա-
պես անհնարին է: Չէ՞ որ նեղի Մեծ ամրոցի այգին անա-
պատ է: Ոչ մի ստվերաշատ անկյուն, եղինջ ու տատասկ-
ներ՝ բանջարանոցի փոխարեն և շորս-հինգ տերևաթափ
ծառ՝ պուրակի փոխարեն: Տեղ շատ կա, բայց զբոսնելն
այնքան էլ հաճելի չէ: Մեր տանտերը զվարճանում է գնդա-
կախազով, իսկ խեղճ Ասկանիոն ի վիճակի չէ նույնիսկ հեա
զցել գնդակը, դրա համար էլ տանջվում է ձանձրույթից:
Բայց չէ՞ որ մեր համակրելի պատանին շատ անզադրում
է: Ծս նրա մասին խոսում եմ այնպես, որովհետև նա իմ
սիրելին է: Ծվ այնքան քաղաքավարի է տարեց մարդկանց
հետ: Բոլորովին նման չէ կոպիտ Պազուլոյին ու թեթևամիտ
Կատերինային:

— Ծվ դուք ասում եք, որ խեղճ երիտասարդը...

— Նա օրն ի բուն իր սենյակում բազկաթոռին գամված
նստելուց կխելագարվի:

— Ախ, տե՛ր աստված,— բացականչեց գթասիրտ
դուհնյան:— Ասացեք խեղճ երիտասարդին, որ գա մեզ մոտ՝
Նեղի Փոքր ամրոցը. այնտեղ սքանչելի, ստվերաշատ ծառեր
կան: Ծս հաճույքով նրա համար կբացեմ դուռը, թեև մես-
սեր պրևոն խստորեն արգելել է: Թո՛ղ արգելի: Պրևոյի հրա-
մանը շկատարելը պարզապես բարի գործ է, քանի որ մենք
կօղնենք նրա փրկարարին: Վա՛յ, ասում եք, որ պատանին
սիրում է: Մենք էլ ձանձրույթից մեռնում ենք: Հաճելի
պատանին մեզ կզբաղեցնի. նա կպատմի մեզ իր երկրի՝
Իտալիայի մասին, ցույց կտա մանյակներ, ապարանջան-
ներ, կզրուցի Կոլոմբայի հետ: Երիտասարդ մարդիկ սիրում
են հասարակութուն, սիրում են շատախոսել և տանջվում
են միայնության մեջ: Այսպես, ուրեմն, որոշված է, ասա-
ցեք ձեր սիրեցյալին, թող չբաշվի և գա մեզ մոտ զբոսնելու
ինչքան կամենում է, միայն թե մենակ, կամ, ինքնըստինք-
յան հասկանալի է, ձեզ հետ, տիկին Ռուպերտա: Դուք կօգ-
նեք նրան: Բախեք դուռը շորս անգամ. առաջին երեքը կա-
մացուկ, իսկ վերջինը՝ ավելի ուժեղ. ես կիմանամ, թե դա
ինչ է նշանակում, և ինքս կբացեմ դուռը:

— Ծնորհակալ եմ Ասկանիոյի և ինձ համար: Անպայ-
ման կհայտնեմ ձեր սիրալիր հրավերքի մասին, և նա ան-
պայման կօգտվի դրանից:

— Շատ ուրախ եմ, տիկին Ռուպերտա:

Ցտեսութուն, տիկին Պերինա: Ես հիացած եմ ձե-
լնան սիրալիր տիկնոջ հետ ծանոթանալուս համար:

— Ես նույնպես, տիկին Ռուպերտա:

Շատախոս կանայք ծնկածալ խոնարհութուն արին և
բաժանվեցին իրարով հմայված:

Իրոք, Նելի կալվածքի այգիներն, ինչպես ասաց տիկին
Ռուպերտան, մի կողմում շոր էին ու խանձված, հավամրգի
պարապուտի նման, մյուս կողմում՝ զովաշունչ ու ստվե-
րաշատ, ինչպես անտառ: Նելի Մեծ ամրոցում այգին մնում
էր անմշակ՝ պրևոյի ժլատության պատճառով. այգու
խնամքը շափազանց թանկ կնստեր, իսկ պրևոն այնքան էլ
վստահ չէր, թե ինքը կմնա ամրոցի տերը և, շցանկանալով
փոխանորդ բարօրության համար ծառեր աճեցնել, շտա-
պեց կտրատել դրանք, հենց որ տիրացավ ամրոցին: Բայց
Նելի Փոքր ամրոցում ապրում էր նրա աղջիկը, այդ իսկ
պատճառով նա ստիպված եղավ այնտեղ պահպանել ստվե-
րաշատ ծառուղիներն ու ծառախմբերը, խեղճ աղջկա միակ
ուրախութունն ու զվարճությունը: Ռեմբոն, երկու օգնա-
կանների հետ, պահպանում և նույնիսկ դարդարում էր Կո-
լոմբայի այգին:

Այդ այգին փարթամ էր և բավականին լավ սարքված.
խորրում կանաչին էր տալիս բանջարանոցը՝ տիկին Պերի-
նայի թագավորությունը: Նելի Մեծ ամրոցի պարիսպների
երկայնքով ձգվում էր ծաղկանոցը, որը խնամում էր Կոլոմ-
բան: Տիկին Պերինան ծաղկանոցն անվանում էր Վաղորդ-
յան ծառուղի, որովհետև ծագող արևի շողերը թափանցում
էին այստեղ, և Կոլոմբան սովորաբար արևածագին էր ջրում
մարդարտածաղիկներն ու վարդերը: Ի միջի այլոց նշենք,
որ Նելի Մեծ ամրոցի ձուլարան-արհեստանոցի վերևում
գտնվող սենյակից կարելի էր շրջապատի համար աննկա-
տելիսրեն դիտել սիրունատես այգեպանուհուն, աշքաթող

շանելով նրա ոչ մի շարժումը: Հետևելով տիկին Պերինայի հորինած աշխարհագրական սահմանումներին, նշենք նաև Միջօրեի ծառուղին, որը վերջանում էր ծառախմբերի մոտ. այնտեղ շոգ օրերին Կոլումբան սիրում էր կարգալ, կամ ասեղնակարել: Իսկ այգու հակառակ ծայրում Իրիկնամուտի ծառուղին էր, բուրբատնկված երեք շարք լորենիներով, որոնց հովանու տակ միշտ դուրեկան զով էր. այդ ծառուղին Կոլումբան ընտրել էր ընթրիքից հետո զբոսնելու համար:

Բարեսիրտ տիկին Պերինան այդ ծառուղին էր ընտրել վիրավոր Ասկանիոյի ուժերն արագորեն վերականգնելու և առողջութունն ամրապնդելու համար: Այնուամենայնիվ, նա վախեցավ իր քրիստոնեական դիտավորությունների մասին հայտնել Կոլումբային: Հոր կամքին հլու աղջիկը կարող էր, թերևս, համաձայնություն չտալ անհնազանդ դուստրային: Իսկ այդ դեպքում ի՞նչ կմտածեր տիկին Ռուպերտան իր հարևանուհու մասին, նրա դիրքի և ազդեցություն մասին: Ոչ, քանի որ ինքն այդպիսի առաջարկություն է արել, պետք է շնահանջել: Իբրև արդարացում այդ սքանչելի կնոջ, հիշեցնենք, որ նա օր ու գիշեր ստիպված էր բավարարվել Կոլումբայի ընկերակցությամբ, և շատ հաճախ Կոլումբան, իր մտքերով տարված, չէր էլ պատասխանում նրան:

Հասկանալի է, թե ինչպիսի հրճվանք ապրեց Ասկանիոն, երբ իմացավ, որ իր առաջ բաց են դրախտի դռները, ինչպե՞ս էր օրհնում Ռուպերտային: Նա պատրաստ էր անմիջապես օգտվել այդ շտեմնված հարմար առիթից, և տիկին Ռուպերտային դժվարությամբ հաջողվեց համոզել նրան, որ սպասի գոնե մինչև երեկո: Չէ՞ որ ամեն բան խոսում էր այն մասին, որ տիկին Պերինան հրավիրել է նրան Կոլումբայի գիտությամբ, և այդ մտքից Ասկանիոն պարզապես խելագարվում էր ուրախությունից: Անհասկանալի վախի հետ միախառնված այնպիսի անհամբերությամբ էր հաշվում ժամերը, որոնք շատ դանդաղ էին սահում: Վերջապես, վերջապես հնչեց ժամը հինգը: Ենթավարպետները գնացել

են: Բենվենուտոն արդեն կեսօրից արհեստանոցում չէ. հավանաբար գնացել է Լուվր:

Եվ ահա Ռուպերտան հանդիսավորությամբ ասաց պատանուն.

— Ահավասիկ, հասավ ժամը: Եկեք իմ հետևից, երկտասարդ:

Նրանք կտրեցին անցան բակը, և տիկին Ռուպերտան շորս անգամ բախեց նեղի Փոքր ամրոցի դուռը:

— Միայն թե այս մասին չպատմեք ուսուցչին, իմ բարի Ռուպերտա,— դիմեց նրան Ասկանիոն, որը գիտեր, թե ինչ կատակասերն է Չելլինին, և չէր ցանկանում, որ կատակի դարձնեն իր անաղարտ սերը:

Ռուպերտան պատրաստվում էր տեղեկանալ, թե ինքն ինչու պետք է լռի, բայց այդ ժամանակ դուռը բացվեց, և նրանք տեսան տիկին Պերինային:

— Ներս եկեք, սիրունիկս,— ասաց նա:— Ինչպե՞ս է ձեր առողջությունը: Բայց գունատությունը սազում է նրան. նա շատ համակրելի է: Դուք էլ ներս եկեք, տիկին Ռուբերտա... Գնացեք դեպի ձախ, ծառուղիով, երկտասարդ: Կոլումբան հիմա այգի կիջնի. այս ժամին նա միշտ զբոսնում է այնտեղ: Խնդրում եմ միջնորդեք, որ ինձ այնքան էլ չնախատեն ձեզ այստեղ բերելուս համար:

— Ինչպե՞ս,— բացականչեց Ասկանիոն:— Մի՞թե օրիորդ Կոլումբան չգիտե...

— Ի՞նչ եք ասում, մի՞թե նա կարող էր շնազանդել հորը: Ես նրան դաստիարակել եմ հաստատուն սկզբունքներով: Ես անհնազանդ եղա երկուսիս փոխարեն: Ինչ արած, հո չի կարելի միշտ ապրել միանձնուհիների նման: Ռեմբոն չի նկատի, իսկ եթե նույնիսկ հոտն առնի, ես կհամոզեմ նրան, որ ձայն չհանի: Դեհ, իսկ վատթարագույն դեպքում, ինչպես արդեն մի քանի անգամ հակահարված եմ տվել պարոն պրևոյին, այդպես էլ կանեմ:

Այստեղ տիկին Պերինան սկսեց շաղակրատել իր տիրոջ մասին, բայց նրան լսում էր միայն տիկին Ռուպերտան. Ասկանիոն կանգնած էր անշարժ և ականջ էր դնում միայն

իր սրտի զարկերին: Սակայն նա լսեց տիկին Պերինայի հարեանցիորեն ասված բառերը:

— Ահա ծառուղին, որտեղ Կոլոմբան երեկոները զբոսնում է: Իհարկե, նա այսօր էլ կգա այգի: Ահա տեսնում եք, արևն այստեղ ձեզ շի խանգարի, մեր սիրելի հիվանդ:

Ասկանիոն, ի նշան շնորհակալության, գլուխ տվեց, մի քանի քայլ առաջ գնաց ծառուղիով և, կրկին երազների մեջ խորասուզվելով, տազնապալից անհանգստությամբ սկսեց սպասել: Եվ, այնուամենայնիվ, նա լսեց, թե ինչպես տիկին Պերինան ասաց տիկին Ռուպերտային.

— Ահա Կոլոմբայի սիրելի նստարանը:

Եվ թողնելով շատախոս կանանց, որ զբոսնեն ու շաղակրատեն, նա լուռ նստեց իր համար սուրբ այդ նստարանին:

Ի՞նչ էր ուզում նա: Ի՞նչ հույսեր ուներ: Ինքն էլ չգիտեր: Նա սպասում էր Կոլոմբային, որովհետև վերջինս երիտասարդ էր ու գեղեցիկ, և որովհետև ինքն էլ երիտասարդ էր ու գեղեցիկ: Նա փառասիրական դիտավորություններ չուներ: Կինն էլ Կոլոմբայի կողքին՝ ահա նրա միակ մտածմունքը: Մնացածը Գողնում էր աստծու ողորմածությանը: Ի դեպ, նա ապագայի մասին ենթադրություններ չէր անում: Միտ համար վաղվա օր չկա:

Կոլոմբան էլ հաճախ ակամա մտածում էր երիտասարդ օտարերկրացու մասին, որն անսպասելիորեն հայտնվել էր նրա մենության մեջ: Կրկին տեսնել նրան՝ ահա ինչը դարձավ աղջկա նվիրական իղձը Ասկանիոյի հետ ունեցած առաջին իսկ հանդիպումից հետո: Բայց չէ՞ որ մինչև հիմա նա ոչ մեկի մասին չէր երազել: Թեև անշրջահայաց հայրը նրան թողել էր բոլորովին մենակ, նա սեփական արարքներին վերաբերվում էր մշտական խստությամբ, որից ազնիվ մարդիկ հետ են կանգնում այն դեպքում միայն, երբ նրանց զրկում են ազատությունից: Կոլոմբան արիաբար աշխատում էր շմտածել Ասկանիոյի մասին և այդ սևեռուն միտքն ավելի հեշտորեն էր հաղթահարում եռակի փակոցները, որ նա կանգնեցրել էր իր սրտի շուրջը, քան Ասկանիոն հաղթահարեց Նելի Մեծ ամբոցի պարիսպները: Վերջին երեք-չորս օրը Կոլոմբան անբկացրեց խոովահույզ դրություն մեջ: Նա

մերթ անհանգստանում էր, որ այլևս չի տեսնի Ասկանիոյին, մերթ վախենում էր հանդիպել նրան: Կոլոմբայի միակ մխիթարությունը երազանքներն էին, ու նա երազում էր թե՛ աշխատելիս և թե՛ զբոսանքների ժամանակ: Յերեկն առանձնանում էր իր սենյակում, ի խորին ցավ տիկին Պերինայի, որը ստիպված էր անվերջ անիմաստ խոսակցություններ վարել ինքն իր հետ և բավարարվել դրանով: Երեկոյան դեմ, երբ շոգն սկսում էր նվազել, աղջիկը գնում էր ստվերախիտ, դով ծառուղին, որը տիկին Պերինան բանաստեղծորեն անվանել էր Իրիկնամուտի ծառուղի, և այնտեղ, նստարանին նստած, որն այժմ զբաղեցրել էր Ասկանիոն, սպասում էր մինչև գիշերը վրա հասնի, աստղերը երևան, ունկնդրելով իր մտքերին և պատասխանելով դրանց այնքան ժամանակ, մինչև տիկին Պերինան գալիս էր նրան տուն կանչելու:

Եվ ահա պատանին հանկարծ տեսավ, որ ծառուղու ոլորանում, սովորական ժամին, հայտնվեց Կոլոմբան, գիրքը ձեռքին: Աղջիկն սկզբում շնկատեց Ասկանիոյին, բայց տիկին Պերինայի կողքին անծանոթ կին տեսնելով, ցնցվեց զարմանքից: Այդ վճռական պահին տիկին Պերինան քաջ զորավարի նման խիզախորեն գրոհի դիմեց:

— Կոլոմբա, հոգյակս, — ասաց նա, — ձեր բարի սիրտը գիտենալով, ես հարկ չհամարեցի թուլյալություն խնդրել ձեզանից և հրավիրեցի խելճ երիտասարդին, որը վիրավորվել էր ձեր հորը փրկելիս, թարմ օդ շնչելու: Կարծեմ գիտեք, որ նեյի Մեծ ամրոցի շուրջը ստվեր չես գտնի: Իսկ եթե երիտասարդն ամեն օր մի ժամ չզբոսնի, ապա բժիշկը չի երաշխավորում նրա կյանքի համար:

Եվ մինչդեռ դուենյան խոսում էր, դիմելով կոպիտ, բայց փրկարար ստախոսության, Կոլոմբան հեռվից նայում էր Ասկանիոյին, և հանկարծ նրա այտերը շառագունեցին: Իսկ Ասկանիոն ի վիճակի չէր ոտքի կանգնել:

— Բայց տիկին Պերինա, չէ՞ որ հարցն իմ թուլյալությունը չէ, — վերջապես արտասանեց աղջիկը: — Պետք է հայրիկի թուլյալությունը:

Ասելով այդ խոսքերը տխուր, բայց հաստատակամու-

թյամբ, Կոլոմբան մոտեցավ քարե նստարանին, որի վրա նստած էր Ասկանիոն: Վերջինս սպասում էր նրան, ձեռքերն աղերսագին ծալած:

— Ներեցեք ինձ, օրիորդ, — ասաց Ասկանիոն, — ես կարծում էի... ես հուսով էի... որ դուք բարեհաճել եք հաստատել տիկին Պերինայի սիրալիր հրավերքը: Իսկ հիմա, երբ իմացա, որ այդպես չէ, — շարունակեց նա հնազանդորեն, բայց արժանապատվությամբ, — աղաչում եմ, ներեցեք ինձ հանդգնությանս համար և թույլ տվեք հեռանալ:

— Բայց իսկապես, որոշողը ես չեմ, — անմիջապես առարկեց հուզված Կոլոմբան: — Չէ՞ որ ես այս տան տիրուհին չեմ: Մնացեք գեթ այսօր, եթե նույնիսկ հորս արգելքը տարածվում է նաև նրա փրկարարի վրա. մնացեք, պարոն, հենց թեկուզ նրա համար, որ ես կարողանամ շնորհակալություն հայտնել ձեզ:

— Օ՛, օրիորդ, — ասաց Ասկանիոն, — ի սրտե շնորհակալ եմ ձեզանից: Բայց եթե մնամ, արդյոք չե՞մ խանգարի ձեզ: Բացի այդ, կարծես անհուշող տեղ եմ բնտրել:

— Օ՛, ոչ, ընդհակառակը, — առարկեց Կոլոմբան և, հուզմունքից ամեն ինչ մոռանալով, նստեց նույն քարե նստարանի մյուս ծայրին:

Այդ պահին տիկին Պերինան, որը Կոլոմբայի խիստ պատասխանից հետո քարացել էր տեղում, ձանձրացավ կանգնած մնալուց. բացի այդ, հարգարժան դուենյային շփոթեցրեց լուռթյունը և, տիկին Ռուպերտայի թևը մտնելով, նա կամացուկ հեռացավ:

Պատանին և աղջիկը մենակ մնացին:

Կոլոմբան նստել էր գլուխը խոնարհած և սկզբում շնկատեց, որ դուենյան գնացել է. բայց նա չէր կարողում, աչքերը մշուշվել էին:

Աղջիկը դեռ հուզված էր, շվարած և ակամա ջանում էր թաքցնել իր հուզմունքը, խաղաղեցնել թարտացող սիրտը: Ասկանիոն էլ շփոթված էր: Սկզբում, երբ Կոլոմբան ցանկանում էր հեռացնել նրան, պատանին ամուսելի ցավ զգաց. հետո շափազանց ուրախացավ, կռահելով, թե ինչպիսի խոռ-

վահույզ դրութեան մեջ է իբ սիրելին. նա այնքան թույլ էր, որ թաղված լինելով երանութեան մեջ, բոլորովին ուժասպառ էր եղել անասելի հուզումներից: Նա կիսաուշաթափ գրութեան մեջ էր, բայց մտքերն արտասովոր արագութեամբ հաջորդում էին միմյանց:

«Նա ինձ արհամարհում է: Ո՛չ, նա ինձ սիրում է...», — անընդհատ ինքն իրեն կրկնում էր պատանին: Նա նայում էր լուռ ու անշարժ նստած Կոլոմբային և չէր զգում, որ արցունքներ են հոսում իր այտերով: Նրանց գլխավերևում, ճյուղերի մեջ, երգում էին թռչունները: Քամին խշշացնում էր տերևները: Օգոստինոսականների եկեղեցու զանգը կանչում էր երեկոյան ժամերգութեան, և մեղմ ղողանջը տարածվում էր լութեան մեջ: Հուլիսյան երեկոն զարմանալիորեն խաղաղ էր ու լուռ: Դա այն հանդիսավոր պահերից մեկն էր, երբ հոգին վերակենդանանում է, և երբ մի րոպեն բովանդակում է ասես քսան տարի. մի պահ, որի մասին հիշում ես ամբողջ կյանքումդ: Գեղանի պատանին ու աղջիկը կարծես ստեղծված լինեին իրար համար, կարծես նախապես նշանված լինեին. պետք էր միայն ձեռք մեկնել միմյանց: Բայց պարզվեց, որ անդունդ է բաժանում նրանց:

Անցավ մի քանի վայրկյան, և Կոլոմբան բարձրացրեց պուխը:

— Դուք լալի՞ս եք, — բուցականչեց նա, ավելի շատ ղգացմունք ներդնելով, քան ցանկանում էր:

— Ես չեմ լալիս, — պատասխանեց Ասկանին, բայց ձեռքը դեմքին քսելով զգաց, որ այտերը թաց են: — Այո, դուք իրավացի եք, — ասաց նա:

— Ինչո՞ւ Ի՞նչ պատահեց ձեզ: Որքե՞ մեկին կանչե՞մ: Յա՞՛վ եք զգում:

— Այո, հենց միայն այն մտքից...

— Ո՞ր մտքից...

— Ես մտածում եմ այն մասին, որ ինձ համար, թերևս, ավելի լավ կլիներ մեռնել:

Մեռնե՞լ: Քանի՞ տարեկան եք, ինչո՞ւ եք խոսում մահվան մասին:

— Տասնինը: Սակայն դժբախտութեան տարին պետք է լինի և մահվան տարի:

— Բայց ձեր ծնողները կողքան ձեր մահը, — շարունակեց Կոլոմբան, անմիտում ցանկանալով իմանալ պատանու անցյալը և աղոտ կերպով նախազգալով, որ նրա ապագան իրեն է պատկանում:

— Ես ոչ հայր ունեմ, ոչ մայր, և ոչ ոք ինձ համար արցունք չի թափի, բացի իմ ուսուցչից՝ Բենվենուտոյից:

— Խեղճ որբուկ:

— Այո, իրոք որբ եմ: Հայրս ինձ երբեք չի սիրել, իսկ մորս կորցրել եմ վաղ մանկութեան տարիներին. ես նույնիսկ չհասցրի գնահատել նրա սերը, շկարողացա հատուցել նրան: Հայր... Բայց ինչո՞ւ եմ այս րոլորն ասում, ձեզ համար ի՞նչ հետաքրքիր են իմ ծնողները:

— Շարունակեք, Ասկանիո, խնդրում եմ:

— Օ՛, սուրբ աստվածածին: Դուք հիշում եք իմ անո՞ւնը:

— Շարունակեք, շարունակեք, — մրմնջաց Կոլոմբան, ձեռքերով ծածկելով շիկնած դեմքը:

— Հայրս ոսկերիչ էր. իմ բարի մայրիկը իտալական լավ տոհմի ֆլորենտացի ոսկերիչ Ռաֆայել դել Մորոյի աղջիկն էր: Իտալիայում, մեր քաղաք-հանրապետություններում աշխատանքն անպատվություն չէ. խանութպանների ցուցանակների վրա կարդում ես հնագույն ու փառաբանված անուններ: Օրինակ, իմ ուսուցիչ Չելլինին մեծագարմ է, ինչպես Տրանսիայի թագավորը, իսկ գուցե և ավելի: Ռաֆայել դել Մորոն աղքատ էր և իր աղջկան՝ Ստեֆանային ամուսնացրեց նրա կամքին հակառակ իր արհեստակցի հետ, որը նրա հասակակիցն էր, բայց՝ հարուստ: Ավա՛ղ: Մայրիկս ու Բենվենուտո Չելլինին սիրում էին միմյանց, բայց աղքատ էին: Այն տարիներին Բենվենուտոն թափառում էր աշխարհում անուն ստեղծելու և հարստություն ձեռք բերելու համար: Նա հեռու էր և չէր կարող խանգարել այդ միութեանը: Զիզմոնդո Գադդին, այդպես էին անվանում հորս, երբեք չիմացավ, որ մայրիկս սիրում էր ուրիշի, բայց ավաղ, ատեց կնոջն այն պատճառով, որ վերջինս չէր սիրում իրեն: Հայրս շար

մարդ էր, նախանձ: Թող ներվի ինձ, որ մեղադրում եմ նրան, բայց երեխաները դաժան հիշողութուն ունեն: Քանի՜ քանի անգամ մայրիկս հորս հարձակումներից պաշտպանութուն է փնտրել իմ օրորոցի մտա: Բայց հայրս միշտ չէ, որ խնայում էր և այդ ապաստանը: Պատահում էր, որ նա ծեծում էր մորս, թող աստված ների նրան, երբ ես մորս զրկում էի լինում. ի պատասխան ամեն հարվածի, մայրս համբուրում էր ինձ, որպեսզի խլացնի ցավը:

Ամենազոր աստվածն իր արդար զայրույթով պատժեց հորս, զրկելով նրան աշխարհում իր համար ամենաթանկ բանից՝ հարստութունից: Հայրս սնանկացավ: Նա մեռավ վշտից, որովհետև աղքատացել էր, իսկ մայրս մի քանի օր հետո նույնպես մահացավ, որովհետև կարծում էր, թե իրեն այլևս չեն սիրում:

Ես մենակ մնացի աշխարհում: Հորս պարտատերերը զավթեցին մեր ունեցած-չունեցածը. նրանք ամբողջ տունը տակնուվրա արին, ոչինչ չմոռացան. բայց լաց լինող երեխային չնկատեցին: Մեր, հավատարիմ սպասուհին երկու օր կերակրում էր ինձ գթասրտութունից, բայց խեղճ կինն ինքն էլ ապրում էր ողորմությամբ, կիսաքաղց:

Նա շփտեր, թե ինչ անի ինձ, երբ սենյակ մտավ մի մարդ, ճամփորդական փոշոտ հագուստով, գրկեց ինձ, լաց լինելով համբուրեց, փող տվեց բարի պառավին ու ինձ տարավ իր հետ: Այդ մարդը Բենվենուտո Չելլինին էր: Նա Հոռմից եկել էր Ֆլորենցիա՝ ինձ տանելու: Նա սիրեց ինձ, սովորեցրեց իր արհեստը, ու մենք մինչև հիմա միասին ենք. և միայն նա կողբա, եթե ես մեռնեմ...

Կոլոմբան գլխահակ, ծանր սրտով լսում էր կյանքի սպասմութունը որք պատանու, որը նույնքան մենավոր էր, որքան ինքը և Ասկանիոյի դժբախտ մոր սպասմութունը: Հավանարար այդպիսին կլինեիր և իր սպասմութունը. չէ որ ինքն էլ հարկադրաբար ամուսնանում է մի մարդու հետ, սրբ կատի իրեն, որովհետև ինքը երբեք չի սիրի նրան:

Մի բարկացրեք աստծուն, — ասաց նա Ասկանիոյին: — Գոնե կա ինչ-որ մեկը, որը սիրում է ձեզ... հենց թեկուզ

ձեր բարի ուսուցիչը. և դուք տեսել եք ձեր մորը. իսկ ես առհասարակ զուրկ եմ եղել մայրական փառաբանքից: Մայրս մահացել է ինձ լույս աշխարհ բերելիս: Ինձ մեծացրել է հորաքույրս, փնթփնթան, ոչ քնքուշ մի կին և, այնուամենայնիվ, երբ երկու տարի առաջնա մահացավ, ես ողբացի նրա մահը, որովհետև բոլորովին մենակ էի և հարազատացել էի այդ կնոջը, ինչպես բաղեղը՝ ժայռին: Երկու տարի ապրում եմ այստեղ, ամբողջում, տիկին Պերինայի հետ և, շնայած միայնությանը (չէ՞ որ հայրս հազվադեպ է այցելում ինձ), այս տարիները եղել են ու կլինեն իմ կյանքի ամենաերջանիկ ժամանակամիջոցը:

— Դուք շատ եք տանջվել, այդ ճիշտ է,— պատասխանեց Ասկանիոն:— Անցյալում գուր դժբախտ եք եղել, բայց ինչու կասկածի տակ առնել ապագան: Դուք փայլուն ապագա ունեք: Դուք հարուստ եք, գեղեցիկ, և ձեր տխուր պատանեկության համեմատությամբ կյանքը ձեզ ավելի սքանչելի կթվա:

Կոլոմբան տրամությամբ տարուբերեց գլուխը:

— Օ՛, մայրի՛կ, մայրի՛կ,— շշնջաց նա:

Երբեմն, երբ մտովի սավառնում ես առօրյա խղճուկ հոգսերից հեռու, հանկարծ, ինչպես կայծակի փայլատակման պահին, տեսնում ես ամբողջ կյանքդ, գալիքն ու անցյալը, և քեզ համակում է հոգեկան վտանգավոր հուզում, ինչ-որ տարօրինակ խորթացում: Եվ անհամար վշտերից, որոնք դու նախազգում ես, սիրտդ ցնցվելով լցվում է անբացատրելի, մահացու տագնասլով, ինչ-որ սոսկալի հոգնածությամբ: Թերևս բավական էր, որ պատանին և աղջիկը, որոնք այդքան տառապանքներ էին կրել ու այդքան միայնակ էին, արտասանեին գեթ մի բառ, որպեսզի նրանց տխուր անցյալը միախառնվեր մի ընդհանուր ապագայի մեջ. բայց աղջիկն այնքան մաքուր էր, իսկ պատանին այնքան էր աստվածացնում նրան, որ այդ բառը շարտասանվեց:

Սակայն Ասկանիոն նայում էր Կոլոմբային անսահման քնքշությամբ, իսկ Կոլոմբան նայում էր նրան հեզորեն ու

հավատով, և ահա, ձեռքերը կրծքին ծալելով, պատանին
ասաց աղջկան այնպիսի ձայնով, ասես աղոթում էր.

— Լսեցեք, Կոլոմբա, եթե դուք որևէ ցանկություն ունեք,
եթե ձեզ որևէ փորձանք է սպառնում, ասացեք ինձ ինչպես
եղբոր, և ես ամբողջ արյունս կտամ, միայն թե կատարեմ
ձեր կամքը: Ես կյանքս կզոհեմ, որպեսզի փորձանքից ազա-
տեմ ձեզ, և հպարտ ու երջանիկ կլինեմ դրանով:

— Շնորհակալություն, շնորհակալություն,— պատասխա-
նեց Կոլոմբան:— Դուք արդեն իմ մի խոսքով մեծահոգաբար
վտանգի ենթարկեցիք ձեզ, ես այդ դիտեմ: Բայց այս ան-
գամ աստված միայն կարող է փրկել ինձ...

Նա շհասցրեց այլևս ոչինչ ասել, որովհետև այդ րոպեին
հայտնվեցին տիկին Պերինան և տիկին Ռուպերտան:

Շատախոս կանայք ժամանակն անց էին կացրել ոչ պա-
կաս օգտակարությամբ, քան մեր սիրահարները և հասցրել
էին սերտ բարեկամություն հաստատել, հիմնված փոխա-
դարձ համակրանքի վրա: Տիկին Պերինան ցրտահարության
դեղ առաջարկեց տիկին Ռուպերտային, իսկ տիկին Ռուպեր-
տան պարտքի տակ շմնաց և հայտնեց տիկին Պերինային
սալոր պահելու գաղտնիքը: Դժվար չէ հասկանալ, որ այ-
սուհետև նրանք ընդմիշտ բարեկամներ դարձան. ահա թե
ինչու տիկնայք խոստացան միմյանց, շնայած ըստ ար-
գելքներին, հանդիպել:

— Դե՛, ի՞նչ կասեք, Կոլոմբա,— հարցրեց տիկին
Պերինան, մոտենալով նստարանին,— դուք դեռ շարունա-
կում եք կշտամրե՞լ ինձ: Շատ ամոթ կլինեք, եթե դուները
փակեինք պատանու առաջ: Ախր նա չլինեք, տունը կզրկվեք
տանտիրոջից: Եվ, ի վերջո, հարցը մեր պատճառով ստա-
ցած վերքի բուժման մասին է... Ապա, նայեք, տիկին Ռու-
պերտա, նրա տեսքն ինչքան լավացել է, այնպես չէ՞: Եվ
նա այնքան էլ դուռնատ չէ:

— Այո՛, այո՛,— հաստատեց տիկին Ռուպերտան,— նույ-
նիսկ առողջ ժամանակ նրա դեմքն այսպես վարդագույն չէր:

— Մտածեք, Կոլոմբա,— շարունակեց տիկին Պերի-
նան,— չէ՞ որ պարզապես մեղք կլինեք խանգարել այսքան

հաջող ապաքինմանը: Առել կուղի, բարի վերջն է պատկում գործը: Դուք, իհարկե, թույլ կտաք ինձ վաղը երեկոյան հրավիրել նրան մեզ մոտ: Ձեզ համար էլ, մանկիկս, գա զվարճութուն կլինի և անմեղ զվարճություն: Բացի այդ, փառք աստծու, ես և տիկին Ռուպերտան կլինենք այստեղ, ձեր կողքին: Հիրավի, Կոլոմբա, հավատացնում եմ, ձեզ անհրաժեշտ է զվարճանալ: Եվ ո՞վ պետք է տեղեկացնի մեսսեր պրեոյին, որ մենք ինքնակամորեն մի քիչ շրջանցել ենք նրա խստիվ արգելքը: Բացի այդ, դեռ մինչև նրա կարգադրութունը, դուք թույլատրեցիք Ասկանիոյին գալ և ցույց տալ ձեզ իր թանկարժեք զարդերը: Նա այսօր մոռացել է բերել դրանք, թող բերի վաղը:

Կոլոմբան նայեց Ասկանիոյին. վերջինս գունատվեց և ճմլվող սրտով սպասում էր նրա պատասխանին:

Այդպիսի հնազանդութունն անսպասելիորեն շոյեց նվաստացած ու միայնակ աղջկան. ուրեմն, աշխարհում կա մի մարդ, որը կախման մեջ է իրենից և իր մի բառը կարող է երջանկացնել կամ վշտացնել նրան: Ո՞վ չի սիրում իշխել: Կոմս դ'Օրբեկի սանձարձակութունը վիրավորում էր Կոլոմբային: Եվ խեղճ միանձնուհին, ներողամիտ լինենք նրա նկատմամբ, անհաղթահարելի ցանկություն զգաց տեսնել, թե ինչպե՞ս ուրախութունից կփայլեն Ասկանիոյի աչքերը, և նա ժպտալով ու շիկնելով ասաց.

— Ի՛նչ արած, տիկին Պերինա, թող ձեր ասածը լինի:

Ասկանիոն ցանկանում էր ինչ-որ բան ասել, բայց միայն թախանձագին ծալեց ձեռքերը. նրա ծնկները թուլացան:

— Շնորհակալ եմ, գեղեցկուհիս,— ասաց Ռուպերտան, ծնկածալ ողջունելով:— Դեռ՛նք, Ասկանիո: Դուք դեռ թույլ եք, տուն գնալու ժամանակն է: Տվեք ինձ ձեր ձեռքը:

Ասկանիոն հազիվ ուժ գտավ Կոլոմբային հրաժեշտ տալու և շնորհակալութուն հայտնելու, բայց բռռերը փոխարինեց հայացքով, որի մեջ ներդրեց իր ամբողջ հոգին և խոնարհաբար, սիրտն ուրախությամբ լի, հետևեց սպասուհուն:

Կոլոմբան, մտքերով տարված, նորից նստեց նստարա-

նին. նա հրճվում էր իբր երջանկութեամբ և քանի որ սովոր չէր այդ դգացմունքին, կշտամբում էր իրեն:

— Վաղը կհանդիպենք,— հաղթական տեսքով ասաց տիկին Պերինան, ուղեկցելով հյուրերին մինչև դուռը:

— Եվ խնդրում եմ, երիտասարդ, եկեք մեզ մոտ, երբ կամենաք, թեկուզ ամեն օր՝ առաջիկա երեք ամսվա ընթացքում:

— Իսկ ինչո՞ւ միայն երեք ամսվա ընթացքում,— հարցրեց Ասկանին, որը երազում էր մշտապես դալ այստեղ:

— Հապա ինչպե՞ս,— պատասխանեց տիկին Պերինան:— Չէ՞ որ երեք ամիս հետո Կոլումբան ամուսնանում է կոմս դ'Օրբեկի հետ:

Ասկանին վայր շրնկնելու համար լարեց իր բոլոր ուժերը:

— Կոլումբան ամուսնանում է կոմս դ'Օրբեկի հետ,— մրմնջաց նա:— Օ՛, տեր աստված, ուրեմն ես մոլորութեան մեջ եմ, Կոլումբան չի սիրում ինձ...

Բայց այդ բոպեին տիկին Պերինան նրա հետևից փակում էր դուռը, իսկ տիկին Ռուպերտան գնում էր առջևից, այդ պատճառով ո՛չ մեկը, ո՛չ մյուսը չլսեցին նրան:

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐԿՈՒԵՐՈՐԳ

Թագավորի տիրուհին

Մենք ասացինք, որ առավոտյան ժամը տասնմեկին Բենվենուտոն դուրս եկավ արվեստանոցից, ոչ մի խոսք չասելով այն մասին, թե ուր է գնում: Ուղևորվեց նա Լուվր, որտեղի իր հարգանքի հավաստիքը մատուցի Ֆրանցիսկ I-ին, որն այցելել էր նրան Ֆերարայի կարդինալի պալատում:

Թագավորը կատարել էր խոստումը: Բենվենուտո Չելլինիի առաջ բացվեցին պալատի բոլոր դռները, սակայն վեր-

ջին դռնից նրան ներս շնորհեցին. այդ դուռը տանում էր սրահ, որտեղ հավաքվել էր խորհուրդը: Ֆրանցիսկ I-ը գործերն էր քննարկում պետական այրերի հետ, և, շնայած նրա հրամանին, Չելլինիին սրահ շնորհեցին. դրա համար անհրաժեշտ էր թագավորի հատուկ կարգադրությունը:

Պետք է ասել, որ Ֆրանսիան իրոք ծանր դրության մեջ էր: Մինչև հիմա մենք քիչ խոսեցինք պետական գործերի մասին, քանզի մեր խորին համոզմամբ ընթերցողները և հատկապես ընթերցողուհիները սիրային գործերը գերադասում են քաղաքականից. բայց այժմ չենք կարող լուսնյան մատնել այդ գործերը և ստիպված ենք գոնե հարևանցիորեն շոշափել պետական գործերի վիճակը Ֆրանսիայում և Իսպանիայում, կամ ավելի ճիշտ՝ Ֆրանցիսկ I-ի և Կարլոս V-ի փոխհարաբերությունները, քանի որ XVI դարում թագավոր՝ նշանակում էր պետություն:

Մեր նկարագրած տարիներին քաղաքական կշեռքի նժարը, — իսկ թե նժարի այդ տատանումներն ինչի են հանգեցնում, քաջ հայտնի էր երկու միապետներին, — սկսեց թեքվել Ֆրանցիսկ I-ի կողմը և նրա դրությունը բարելավվեց, իսկ Կարլոս V-ի դրությունը վատացավ: Եվ իրոք, իրավիճակը բավականին փոխվել էր այն օրից, երբ Կամբրում ստորագրվեց հաշտության նշանավոր պայմանագիրը, ըստ որում բանակցությունների ժամանակ որպես միջնորդուհիներ հանդես էին եկել երկու կին՝ Մարգարիտա Ավստրիացին՝ Կարլոս V-ի հորաբույրը, և Անգուլեմի դքսուհին՝ Ֆրանցիսկ I-ի մայրը: Այդ պայմանագիրը, որը Մադրիդյան պայմանագրի լրացումն էր, հայտարարում էր, որ Իսպանիայի թագավորը հրաժարվում է Բուրգունդիայից՝ հօգուտ Ֆրանսիայի թագավորի և որ Ֆրանսիայի թագավորը, իր՝ հերթին, հրաժարվում է Ֆլանդրիայի և Արտուա գավառի վրա ունեցած իրավունքներից: Բացի այդ, երկու պատանի արքայազնները, որոնք պատանդ էին վերցված, կվերադարձվեն հորը երկու միլիոն ոսկի էկյու փրկագնով: Վերջապես, բարի էլեոնորա թագուհին, Կարլոս V-ի բույրը, որն սկզբում կնության էր խոս-

տացված կոնետարը Բուրբոնին, որպես պարզև նրա դավաճանության, իսկ այնուհետև կնության տրվեց Ֆրանցիսկ I-ին որպես հաշտության գրավական, կվերադառնա ֆրանսիական արքունիք՝ երկու երեխաների հետ, որոնց խնամում էր մոր նման: Պայմանավորվող կողմերն ազնվորեն ի կատար ածեցին այդ ամենը:

Բայց Ֆրանցիսկ I-ը, որին գերության մեջ հարկադրեցին հրաժարվել Միլանի դքսությունից, անշուշտ ժամանակավորապես միայն հրաժարվեց դրանից: Ազատություն ստանալուն պես նա վերականգնեց իր ուժն ու իշխանությունը և նորից հայացքն ուղղեց դեպի Իտալիա: Եվ ահա, իր սահանջները հոռմեական արքունիքում ամրապնդելու համար Ֆրանցիսկ I-ը ամուսնացրեց իր տղային՝ Հենրիխին, որն ավագ եղբոր՝ Ֆրանցիսկի մահից հետո թագաժառանգ էր դարձել Կլիմենտ VII պապի քրոջ աղջկա՝ Եկատերինա Մեդիչիի հետ:

Դժբախտաբար, երբ թագավորի նյութած ներխուժման նախապատրաստումն ավարտված էր, Կլիմենտ VII պապը մահացավ և նրան հաջորդեց Ալեքսանդր Ֆարնեզեն, որը սուրբ Պետրոսի գահը բարձրացավ Պավել III անվան տակ:

Պավել III-ը որոշեց իր քաղաքականության մեջ շրջանակ ու կայսրի, ոչ էլ Ֆրանսիայի թագավորի ազդեցության տակ և շխառնվել Կարլոս V-ի ու Ֆրանցիսկ I-ի գործերին:

Կայսրն այլևս վախ չունեի պապից, նրան արդեն չէր անհանգստացնում Ֆրանսիայի պատերազմական նախուսպատրաստությունը և նա, իր հերթին, սկսեց պատրաստվել թունիսի վրա արշավելու:

Արշավանքը հաջող անցավ, և Կարլոս V-ը, ջրասույզ անելով Սոլիմանի՝ երեք-չորս նավ, հաղթականորեն մտավ Նեապոլի նավահանգիստը:

Այստեղ նա տեղեկություններ ստացավ, որոնք ավելի րաջալերեցին նրան. պարզվեց, որ Կարլոս III-ը, Սավոյայի

¹ Սոլիման — տաճիկ սուլթան Սոլիմանի (1494—1566) անվան ֆրանսիերեն արտասանությունը

դուքսը, Ֆրանցիոկ I-ի քեռին, խզել է միությունը Ֆրանսիայի թագավորի հետ իր նոր կնոջ՝ Բեատրիսայի, Պորտուգալիայի թագավոր էմանուելի աղջկա խորհրդով: Այգ պատճառով, երբ Կարլոս III-ի հետ ունեցած իր նախկին պայմանագրերի հիման վրա Ֆրանցիսկ I-ը համաձայնություն պահանջեց դուքսից՝ Ֆրանսիական զորքերը Սավոյա մտցնելու, վերջինս պատասխանեց մերժումով. այդպիսով Ֆրանցիսկ I-ը ստիպված էր դժվարագույն արշավանք նախաձեռնել Ալպերի վրայով, մինչդեռ սկզբում կարծում էր, թե Սավոյան իր համար բաց է դաշնակցի և բարեկամի բարեհաճությամբ:

Կարլոս V-ը, վստահ իր անվտանգությանը, ասես շանթահար եղավ ծավալվող իրադարձություններից: Ֆրանցիսկ I թագավորի հրամանով զորքերը շտեմնված արագությամբ մտան Սավոյա, և դուքսը, դեռ իր պարտությանն անտեղյակ, տեսավ, որ նահանգը գրավված է թշնամու կողմից: Զորավար Բրիոնը դրավեց Շամբերին, հայտնվեց Ալպերի բարձունքներում և սկսեց սպառնալ Պյեմոնտին այն ժամանակ, երբ Ֆրանցիսկ Սֆորցան, թշնամու սրբնթաց առաջընթացից շանթահարված, հանկարծամահ եղավ, թողնելով Միլանի դքսությունն առանց թագաժառանգի, որը ոչ միայն թեթևացնում էր Ֆրանցիսկ I-ի խնդիրը, այլև նոր իրավունքներ էր տալիս նրան:

Բրիոնը լեռներից իջավ Իտալիա և գրավեց Թուրինը: Քաղաքը գրավելով, նա բանակը կանգնեցրեց Սեզիայի ափերին ու սկսեց սպասել:

Կարլոս V-ը, իր հերթին, նեապոլից տեղափոխվեց Հռոմ:

Քրիստոնեության երգվյալ թշնամիների դեմ հաղթանակ տանելուց հետո նա հանդիսավորությամբ մտավ կաթոլիկական աշխարհի մայրաքաղաքը: Փայլուն հաղթանակն արբեցրեց կայսրին և, իբր սովորությանը հակառակ, նա կորցրեց չափի զգացումը. կոնսիստորիայի առաջ մեղադրեց Ֆրանցիսկ I-ին հերետիկոսության մեջ, պատճառ բերելով, որ թագավորը հովանավորում է բողոքականներին, որ նա դաշինք է կնքել թուրքերի հետ: Այնուհետև, մտարեբելով բոլոր

հին գծաթուփյունները, որոնց պարագլուխը, նրա կարծիքով, Ֆրանցիսկ I-ն էր, նա երդվեց անխնա պատերազմ մղել փեսայի դեմ:

Այս գծաթուփյուններից հետո Ֆրանցիսկ I-ը դարձել էր նույնքան զգույշ, որքան նախկինում անշրջահայաց էր: Այդ պատճառով, տեսնելով, որ իրեն պատերազմի վտանգ է սպառնում և՛ Իսպանիայի, և՛ կայսրության կողմից, նա հրամայեց Աննեբոյին պաշտպանել Թուրինը ու հետ կանչեց Բրիոնին, հանձնարարելով նրան պարզապես սահմանների պաշտպանությունը:

Բոլոր նրանք, ովքեր ծանոթ էին Ֆրանցիսկ I-ի ասպետական խիզախ բնավորությանը, շհասկացան, թե ինչու թագավորը նահանջեց և ենթադրեցին, թե դրա պատճառն այն է, որ նա իրեն նախապես պարտված է համարում: Այդ լուրը հիմք տվեց Կարլոս V-ին ավելի գոռոզանայու: Նա իր բանակի դուխս անցավ և որոշեց Ֆրանսիա ներխուժել հարավից:

Այդ փորձի հետևանքները հայտնի են. Մարսել քաղաքը, որը դիմադրում էր կոնետաբլ Բուրբոնին և Պեսկերին¹, ժամանակի երկու մեծագույն զորավարներին, առանց դժվարության հետ մղեց խոշորադույն քաղաքական գործչի, բայց վատ զորավարի, բուռն գրոհը: Կարլոս V-ը շհամառեց, նա շրջանցեց Մարսիլը և որոշեց շարժվել դեպի Ավինյոն: Սակայն Մոնմորանսին² անառիկ դիրքեր էր գրավել Դյուրանս և Ռոնա գետերի միջև, և Կարլոս V-ը զուր էր ջանում հաղթել նրան: Մեկուկես ամսվա անօգուտ փորձերից հետո նա հետ շարտվեց. նրան նեղում էին թևերից, սպառնում էին ճանապարհը փակել թիկունքից, և նա հրաման տվեց նահանջելու, որը շատ նման էր խուճապահար փախուստի: Եվ հա-

1 Պեսկեր Ալֆոնս դ'Ավալոս (1504—1546)— Կարլոս V-ի զորավարներից մեկը, Ֆրանցիսկ I-ի դեմ վարած պատերազմի բոլոր զլխավոր ճակատամարտերի մասնակիցը

2 Մոնմորանսի— խոսքը Ան դե Մոնմորանսիի մասին է (1473—1567), որը Ֆրանցիսկ I թագավորի ամենամտերիմ պաշտակալներից էր և անսահման իշխանություն ուներ արքունիքում

դիվ ազատվելով գերի ընկնելու վտանգից, նա վերջապես մեծ դժվարութեամբ հասավ Բարսելոնա, առանց զորքի ու առանց փողի:

Այդ ժամանակ բոլոր նրանք, ովքեր սպասում էին իրադարձութիւնների վախճանին՝ կովի դուրս գալու համար ոտքի ելան Կարլոս V-ի դեմ: Հենրիխ VIII-ը բաժանվեց իր կնոջից՝ Եկատերինա Արագոնցուց և ամուսնացավ իր հոմանունով՝ Աննա զը Բուրբոնի հետ: Սուլիմանը հարձակվեց նեապոլիտանական թագավորութեան և Հունգարիայի վրա: Գերմանիայի բողոքական իշխանները գաղտնի լիզա ստեղծեցին կայսրի դեմ: Վերջապես Քենտի բնակիչները, ուժասպառ լինելով ծանր հարկերից, որ անգաղար գրվում էին նրանց վրա Ֆրանսիայի դեմ մղվող պատերազմի ծախսերը հողալու համար, անսպասելիորեն ապստամբեցին և դեսպաններ ուղարկեցին Ֆրանցիսկ I-ի մոտ, առաջարկելով անցնել իրենց զորքի գլուխը:

Բայց այդ բոլոր իրադարձութիւնների ժամանակ, որոնք սպառնում էին Կարլոս V-ի ճակատագրին, վերջինիս և Ֆրանցիսկ I-ի միջև կրկին բանակցութիւններ սկսվեցին: Երկու միապետները հանդիպեցին էտ-Սորտում, և Ֆրանցիսկ I-ը, խաղաղութիւն ցանկանալով, որը, ինչպես նա զգում էր, ամենից ավելի պետք էր Ֆրանսիային, որոշեց այսուհետև նպատակին հասնել ոչ թե զենքով, այլ՝ բարեկամական բանակցութիւններով:

Եվ այդպես, նա հրամայեց տեղեկացնել Կարլոս V-ին, որ Քենտի բնակիչները դիմել են իրեն և միաժամանակ առաջարկեց նրան Ֆրանսիայի վրայով անցնել Ֆլանդրիա:

Հենց այդ պատճառով էլ խորհրդի էին հավաքվել, երբ Բենվենուտոն եկավ Լուվր: Ֆրանցիսկ I-ը, նախազգուշացված լինելով մեծ վարպետի գալստյան մասին և հավատարիմ իր խոստմանը, հրամայեց ներս թողնել նրան: Այդպիսով, Բենվենուտոն լսեց քննարկման վերջաբանը:

— Այո՛, պարոնա՛յք, — ասում էր Ֆրանցիսկ I-ը, — այո՛, ես համաձայն եմ պարոն դե Մոնմորանսիի հետ. ես նույն-

պէս երազում եմ դահանիստ կայսեր հետ երկարատև դաշինք կնքելու մասին. ես երազում եմ, որ մենք երկուսով իշխանք ամբողջ քրիստոնեական աշխարհը և մեր առաջ անհետանան այդ բոլոր կորպորացիաները, այդ բոլոր կոմունաները, այդ բոլոր ժողովրդական հավաքները, որոնք ցանկանում են սահմանափակել մեր թագավորական իշխանութիւնը և ստիպել մեր հպատակներին հրաժարվելու մեզ ղինվորներ կամ փող տալուց: Ես երազում եմ բոլոր հերետիկոսներին, որոնք վիշտ են պատճառում մեր սուրբ մայր եկեղեցուն, կրօնի գիրկը գրավել պապի իշխանության տակ: Ես երազում եմ, վերջապես, իմ բոլոր ուժերն ի մի բերել ընդդեմ Քրիստոսի թշնամիների, Կոստանդնուպոլսից քշել տաճկական սուլթանին,— այդ ժամանակ, հակառակ լուրերի, ես կապացուցեմ, որ նա իմ դաշնակիցը չէ,— Կոստանդնուպոլիսը դարձնել երկրորդ կայսրության մայրաքաղաքը, որն իր հզորութեամբ, փայլով ու մեծութեամբ մրցակցի առաջինի հետ: Ահա իմ երազանքը, պարոնայք: Ես ասում եմ «երազանքը», որպեսզի այնքան էլ չհրապուրվենք հաջողութեան հույսերով և շատ չհուսախարվենք, եթե ապագան ցույց տա, որ այդ բոլորն անհնարին է: Բայց եթե միայն իմ երազանքն իրագործվի... այո, եթե այն իրագործվի, կոնեստարլ, եթե իմ իշխանութեան տակ լինեն Ֆրանսիան և Տաճկաստանը, Փարիզը և Կոստանդնուպոլիսը, Արևմուտքը և Արևելքը, համաձայնեք, պարոնայք, դա սքանչելի կլինի, վեհաշուք ու փառահեղ:

— Ուրեմն, սի՛ր, որոշված է,— ասաց դուքս դե Գիզը,— դուք հրաժարվո՞ւմ եք սյուզերենի իրավունքներից, որ Քենտի բնակիչներն առաջարկել են ձեզ, ինչպես նաև Բուրգունդական դինաստիայի վաղնջական տիրապետութիւններից:

— Այո, որոշված է. կայսրը կտեսնի, որ ես ազնիվ եմ, թե՛ որպես դաշնակից և թե՛ որպես թշնամի: Բայց նախ և առաջ հասկացեք, ես ցանկանում եմ, ես պահանջում եմ, որ լինձ վերադարձվի Միլանի դքսութիւնը: Այն պատկանում է

ինձ ժառանգման իրավունքով ու այն պատճառով, որ հանձնելով էր Ֆրանսիական թագավորների տիրությանը: Ազնելվականի խոսք, ես կստանամ այն, բայց հուշով եմ, շխախտելով բարեկամությունն իմ եղբոր՝ Կարլոսի հետ:

— Եվ դուք կառաջարկեք Կառլոս V-ին անցնել Ֆրանսիայի վրայով, Քենտի ապստամբած բնակիչներին պատժելու համար,— հարցրեց Պուլայեն:

— Այո, պարոն վարչապետ,— պատասխանեց թագավորը:— Հենց այսօր պարոն Ֆրեժուսին ուղարկեք կայսրի մոտ, թող իմ անունից հայտնի նրան այդ առաջարկությունը: Յուլյոստանք կայսրին, որ խաղաղությունը պահպանելու համար մենք պատրաստ ենք ամեն ինչ անել: Իսկ եթե նա ծարավի է պատերազմի...

Այդ բառերն ուղեկցվեցին ձեռքի սպառնալից ու վեհ մի շարժումով, բայց նույն միջոցին Ֆրանցիսկ I-ը մի պահ լռեց, նկատելով նկարչին, որը համեստորեն կանդնած էր դռան մոտ:

— Իսկ եթե նա ծարավի է պատերազմի,— շարունակեց թագավորը,— երդվում եմ Յուլիտերով, որի մասին ինձ տեղեկություններ է բերել Բենվենուտոն, երդվում եմ, որ պատերազմը կլինի արյունահեղ, սոսկալի, դաժան... Դե՛, Բենվենուտո, որտե՞ղ է իմ Յուլիտերը:

— Սիր,— պատասխանեց Բենվենուտոն,— ես բերել եմ Յուլիտերի մոդելը: Բայց գիտե՞ք ինչի մասին էի երազում, նայելով ու լսելով ձեզ: Ես երազում էի շատրվանի մասին ձեր Ֆոնտենբլոյի համար: Պատկերացրեք, շատրվանի վրա վեր է խոյանում հսկայական մի արձան, վաթսուն ոտնաչափ, աչ ձեռքում բռնել է ջարդված նիզակ, իսկ ձախով հենվել է սուսերի երախակալին: Արձանը պատկերում է Մարսին¹, այլ կերպ ասած, ձեզ՝ ձերդ գերազանցություն, քանզի դուք խիզախության մարմնավորումն եք, սիր, և այդ խիզա-

¹ Մարս (հռոմ. դիցար.) — պատերազմի աստված

խությունն օգտագործում եք արդար գործի համար՝ ձեր փառքի սուրբ պաշտպանության... Սպասեցեք, սիր, այդ դեռ բոլորը չէ... Արձանի պատվանդանի անկյուններում ես տեսնում եմ շորս քանդակապատկեր, պոեզիան, գեղանկարչությունը, արձանագործությունն ու առատաձեռնությունը: Ահա թե ինչի մասին էի երազում, նայելով ու լսելով ձեզ, սիր:

— Եվ դուք կառաջարկեք Կառլոս V-ին անցնել Ֆրանսիական բրոնզի մեջ, Բենվենուտո: Այդ է իմ կամքը,— ասաց թագավորը տիրաբար, բայց անկեղծորեն ժպտալով:

Խորհրդի բոլոր անդամներն այդ բառերը դիմավորեցին ծափահարություններով, քանզի գտնում էին, որ թագավորն արժանի է այդ արձանին, իսկ արձանն արժանի է թագավորին:

— Իսկ առայժմ,— ասաց թագավորը,— տեսնե՞ք թե ինչպիսին է մեր Յուպիտերը:

Բենվենուտոն թիկնոցի տակից հանեց մոդելն ու դրեց սեղանին, որի շուրջը քիչ առաջ որոշվում էր աշխարհի բախտը:

Ֆրանցիսկ I-ը նայում էր մոդելին հիացմունքով. նրա դեմքի արտահայտությունն ակնհայտորեն այդ էր ասում:

— Վերջապես ես գտա մի վարպետ, որն իմ սրտով է,— բացականչեց նա և, Բենվենուտոյի ուսը թոթվելով, շարունակեց,— բարեկամս, ո՞վ է իրեն ավելի երջանիկ զգում. թագավո՞րը, որին հաջողվել է իր բոլոր մտահղացումները հասկացող արվեստագետ գտնել, մի խոսքով՝ ձեզ նման արվեստագետ, թե՞ արվեստագետը, որը հանդիպել է հասկացող թագավորի: Ճիշտն ասած, ինձ թվում է, որ իմ ուրախությունն ավելի մեծ է...

— Օ՛հ, ոչ, սիր, համաձայն չեմ,— բացականչեց Բենվենուտոն:— Իմ ուրախությունն, անկասկած, ավելի մեծ է:

— Ո՛չ, իմն ավելի է, Բենվենուտո:

— Չեմ համարձակվում առարկել ձերդ գերազանցությանը, սակայն...

— Դե՛, համաձայնության գանք, որ մեր ուրախությունը հավասար է, բարեկամս:

— Սիր, դուք ինձ անվանեցիք ձեր բարեկամը,— ասաց Բենվենուտոն:— Հենց միայն այդ բառը հարյուրապատիկ վարձատրում է այն ամենը, ինչ ես արդեն արել եմ ձերդ գերազանցության համար և այն ամենը, որ դեռևս անելու եմ:

— Այդ իսկ պատճառով ես ուզում եմ ապացուցել քեզ, որ դա պատահաբար ասված դատարկ խոսք չէր, Բենվենուտո, և եթե ես անվանեցի քեզ իմ բարեկամը, ուրեմն դու իրո՛ք իմ բարեկամն ես: Ես սպասում եմ Յուպիտերին: Հնարավորին չափ շուտ վերջացրու դործդ, և ազնվականի խոսք եմ տալիս, դու կստանաս ամեն բան, ինչ կամենաս, եթե միայն թագավորական իշխանությունը կարող լինի այդ անել... Լսո՞ւմ եք պարոնայք: Եվ եթե ես մոռանամ խոստումս, հիշեցրեք ինձ:

— Սի՛ր,— բացականչեց Բենվենուտոն:— Դուք մեծ ու ազնիվ թագավոր եք, և ես ամաչում եմ, որ չեմ կարող ըստ արժանվույն երախտահատույց լինել այս ամենի համար:

Եվ համբուրելով թագավորի մեկնած ձեռքը, Չելլինին թիկնոցի տակ պահեց Յուպիտերի մողելն ու դուրս եկավ խորհրդարանից հպարտության և ուրախության զգացումով համակված:

Լուվրից դուրս գալով, նա հանդիպեց Պրիմատիչոյին, որը պալատ էր մտնում:

— Ո՞ւր եք շտապում և ի՞նչն է ձեզ այդքան արախացրել, բարեկամս, թանկագին Բենվենուտո,— հարցրեց Պրիմատիչոն Չելլինինին, որն առաջին պահ չէր նկատել նրան:

— Ա՛խ, այդ դո՞ւք եք, Ֆրանչեսկո, — բացականչեց Չելլինին: — Այո, իրավացի եք, ես ուրախ եմ, որովհետև քիչ առաջ տեսա մեր մեծ, անզուգական, աստվածային Ֆրանցիսկ Առաջինին:

— Իսկ տիկին դ՛էտամպին նույնպե՞ս տեսաք, — հարցրեց Պրիմատիչոն:

— Չեմ համարձակվում կրկնել նրա բառերը, Ֆրանչեսկո, թեև ասում են, որ ես համեստությամբ չեմ տառապում:

— Իսկ ի՞նչ ասաց ձեզ տիկին դ՛էտամպը:

— Թագավորն ինձ անվանեց իր բարեկամը: Հասկանո՞ւմ եք, Ֆրանչեսկո: Նա խոսում էր ինձ հետ «դու»-ով, ինչպես իր մարշալների հետ: Ի վերջո, նա ասաց ինձ, որ երբ պատրաստ լինի Յուպիտերը, ես կարող եմ խնդրել ինչ կամենամ, և որ ինքը նախապես շնորհում է ինձ կամեցածս:

— Դե՛, իսկ ի՞նչ խոստացավ ձեզ տիկին դ՛էտամպը:

— Տարօրինակ մարդ եք, Ֆրանչեսկո:

— Ինչո՞ւ:

— Շարունակ հարցնում եք ինձ տիկին դ՛էտամպի մասին, բայց չէ՞ որ ես ձեզ թագավորի մասին եմ պատմում:

— Որովհետև ձեզանից լավ եմ ճանաչում արքունիքը, Բենվենուտո, որովհետև դուք իմ լավ հայրենակիցն ու բարեկամն եք, որովհետև դուք բերել եք ձեզ հետ մեր սքանչելի Խալիսայի մի փշուրը և, ի երախտագիտություն, ես ցանկանում եմ ազատել ձեզ մեծ վտանգից: Լսեք, Բենվենուտո, ես արդեն նախազգուշացրել եմ ձեզ՝ դքսուհի դ՛էտամպը ձեր մահացու թշնամին է: Բայց առաջ ես պարզապես կասկած ունեի, իսկ հիմա վստահ եմ դրանում: Դուք վիրավորել եք դքսուհուն և եթե շխաղաղեցնեք նրան, նա ձեզ կկործանի: Լսեք ինձ ուշադրությամբ, Բենվենուտո, տիկին դ՛էտամպը թագավորի տիրուհին է:

— Տեր աստված, ինչե՛ր եք ասում, — ծիծաղելով պատասխանեց Չելլինին: — Բանից պարզվում է՝ ես վիրավորել եմ տիկին դ՛էտամպին: Բայց ինչո՞ւ:

— Ես ձեզ լավ եմ ճանաչում, Բենվենուտո, և կարծում եմ, որ այդ անբարյացակամության պատճառները ձեզ յայտնի են ոչ ավելի, քան ինձ և հենց տիկին դ՛էտամպին:

Քայց ի՞նչ արած: Կանայք այդպես են ստեղծված. նրանք և՛
ատում, և՛ սիրում են, իրենք էլ շիմանալով ինչու: Այդպես
ուրեմն, դքսուհի դ՛էտամպը ձեզ ատում է:

— Իսկ ի՞նչ կարող եմ անել:

— Ինչ կարող եք անե՞լ: Ահա թե ինչ. սիրաշահելով փրո-
կել արվեստը:

— Սիրաշահել կուրտիզանուհու՞ն:

— Դուք իրավացի չեք, Բենվենուտո,— քմծիծաղ տալով
պատասխանեց Պրիմատիչոն:— Դուք իրավացի չեք: Տիկին
դ՛էտամպը գեղեցկուհի է, և արվեստագետը պետք է ընդու-
նի այդ:

— Իսկ ես չեմ ժխտում, որ նա գեղեցկուհի է,— ասաց
Բենվենուտոն:

— Ուրեմն, այդ մասին ասացեք հենց իրեն, ոչ թե ինձ:
Ավելին չի էլ պահանջվում, և դուք բարեկամներ կդառնաք:
Դուք եք նրան վիրավորել քմահաճ վարմունքով, դուք էլ
պետք է անեք առաջին քայլը:

— Եթե ես իրոք վիրավորել եմ դքսուհուն,— ասաց Չել-
լինին,— ապա պատահաբար, կամ ավելի ճիշտ՝ ոչ շարա-
մբտորեն: Նա իմ հասցեին թունոտ խոսք ասաց, իսկ ես ար-
ժանի չէի դրան. ես էլ նրան արժանի պատասխան տվի:

— Դե լավ, հերիք է: Մոռացեք նրա ասածները, Բենվե-
նուտո, և հարկադրեք նրան մոռանալ ձեր պատասխանը:
Կրկնում եմ, նա հիշաշար է, ոխակալ, թագավորի սրտի տի-
րուհին է: Ճիշտ է, թագավորը սիրում է արվեստը, բայց ավե-
լի շատ սիրում է նրան: Տիկին դ՛էտամպը կհարկադրի ձեզ,
Բենվենուտո, զղջալ ձեր հանդգնության համար: Նրա պատ-
ճառով դուք թշնամիներ ձեռք կբերեք. չէ՞ որ պրևոն նրա
գրդմամբ հանդգնեց դիմադրել ձեզ: Կեք, ես մեկնում եմ
Իտալիա, Հոռոմ՝ տիկին դ՛էտամպի հրամանով: Եվ այդ ճամ-
փորդությունը, Բենվենուտո, ուղղված է ձեր դեմ, ըստ որում
ձեր բարեկամը ստիպված է նրա վրեժխնդրության գեներ
դառնալ:

— Իսկ ի՞նչ եք անելու Հոռոմում:

— Ինչ եմ անելու՞: Դուք թագավորին խոստացել եք
մրցության մեջ մտնել հին վարպետների հետ, և ես գիտեմ,

որ կկատարեք ձեր խոստումը: Բայց դքսուհին մտածում է, թե դուք պարծենկոտի մեկն եք և, հավանաբար, համեմատությամբ ձեզ ոչնչացնելու համար Հոռոմ է ուղարկում ինձ՝ գեղանկարչիս, ձուլելու համար ամենասքանչելի հին արձանները՝ Լաոկոոնը, Վեներան և ուրիշ շատ հրաշալիքներ:

— Իրոք, սոսկալի նրբին վրեժ է,— ասաց Բենվենուտոն, որը շնայած իր ամբողջ ինքնավստահությանը, չէր կարող շահահանգստանալ, իմանալով, որ իր ստեղծագործությունները համեմատելու են մեծագույն վարպետների ստեղծագործությունների հետ:— Բայց ոչ, ես տեղի չեմ տա կնոջը,— բոունցքները սեղմելով ավելացրեց նա:— Երբե՛ք, երբե՛ք:

— Ինչո՞ւ տեղի տալ: Լսեք, կա մի միջոց. տիկին դ՛էտամպին դուր է եկել Ասկանիոն: Նա ցանկանում է պատվեր տալ Ասկանիոյին և նույնիսկ խնդրեց, որ ես նրա մոտ ուղարկեմ պատանուն: Տեսնո՞ւմ եք, որ գործը կարելի է հեշտությամբ գլուխ բերել. ձեր աշակերտին ուղեկցեք դ՛էտամպի պալատը և ինքներդ ներկայացրեք նրան գեղանի դքսուհուն: Օգտվեք առիթից ու տարեք ձեզ հետ որևէ զմայլելի խաղալիք. չէ՞ որ դուք աշխարհի լավագույն ոսկերիչն եք, Բենվենուտո: Տույց տվեք նրան զարդը, իսկ երբ տեսնեք, որ կնոջ աչքերը փայլեցին, նվիրաբերեք այն, որպես ոչ լիարժեք տուրք նրա դեղեցկության: Դքսուհին կընդունի թանկարժեք իրը, սիրալիր շնորհակալություն կհայտնի, փոխարենը որևէ արժանավայել բան կընծայի ու կվերադարձնի ձեզ իր սղարմածությունը: Իսկ եթե ի գեմս այդ կնոջ գուք թշնամի ունենաք, նախապես հրաժարվեք ձեր բոլոր մեծ նախաձեռնություններից: Ավա՛ղ: Ես էլ ստիպված էի մի պահ խոնարհվել, սակայն հետո կրկին բարձրացրի գլուխս: Մինչ այդ նախապատվությունը տալիս էին ոչ թե ինձ, այլ խզմզող Ռոսսոյին. ամենուրեք և միշտ նրան ինձնից բարձր էին դասում: Նա նույնիսկ նշանակված էր թագի պահապան:

— Դուք անարդարացի եք Ռոսսոյի նկատմամբ, Ֆրանչեսկո,— նկատեց Չելլինին իրեն հատուկ անմիջակալություն, — նա մեծ նկարիչ է:

— Դուք գտնո՞ւմ եք:

— Ես դրանում համոզված եմ:

— Է՛հ, ես էլ եմ համոզված,— ասաց Պրիմատիչեն,— հենց դրա համար էլ ատում եմ նրան: Հասկացեք, նրան օգտագործում էին, որպեսզի ոչնչացնեն ինձ: Ես շոյեցի տիկին դ'էտամպի մանր փառասիրությունը, և այժմ մեծն Պրիմատիչո եմ, իսկ հիմա էլ կօգտագործեն ինձ ձեզ ոչնչացնելու համար: Վարվեք այնպես, ինչպես վարվեցի ես, Բենվենուտո, հետևեք իմ խորհրդին, և շեք զղջա: Աղաչում եմ այդպես վարվեք հանուն ձեզ, հանուն ինձ, աղաչում եմ հանուն ձեր փառքի և ձեր ասպագայի: Չէ՞ որ եթե համառեք՝ կկործանեք թե՛ ձեր ասպագան և թե՛ ձեր փառքը:

— Բնավորությունը կտարել դժվար է,— ասաց Չելլինին, թեև զգացվում էր, որ նա հանձնվում է:

— Բենվենուտո, եթե ձեր մասին շեք մտածում, արեք այդ հանուն թագավորի: Մի՞թե ցանկանում եք, որ նրա սրտից արյուն կաթի, երբ հարկադրեն՝ նրան ընտրել երկուսից մեկին՝ կամ կնոջը, որին սիրում է, կամ արձանագործին, որի առաջ գլուխ է խոնարհում:

— Ինչ արած, թող ձեր ասածը լինի: Հանուն թագավորի ես պատրաստ եմ ամեն ինչ անել,— բացականչեց Չելլինին, ուրախանալով, որ պատրվակ գտնվեց, որի շնորհիվ իր ինքնասիրությունը չի տուժի:

— Փա՛ռք ասածու,— ասաց Պրիմատիչեն:— Բայցի այդ, իմացած եղևք, որ եթե մեր խոսակցության մասին փոքրագույն ակնարկ անգամ հասնի դքսուհու ականջը, ինքնըստինքյան հասկանալի է, որ ես կորած եմ:

— Կարծում եմ, որ կարող եք վստահել ինձ,— նկատեց Չելլինին:

— Եթե Բենվենուտոն խոսք է տալիս, ուրիշ ոչինչ հարկավոր չէ:

— Խոսքը տրված է:

— Ուրեմն, մնաք բարով, եղբայրս:

— Բարի ճանապարհ:

— Հաջողություն:

Եվ ընկերները, հրաժեշտ տալով, ամուր սեղմեցին միմյանց ձեռք և, դիխի շարժումով ասես հաստատելով իրենց պայմանագիրը, բաժանվեցին:

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐԵՔԵՐՈՐԳ

Գեղեցկուհու սիրտը

Դ՛էտամպի պալատը գտնվում էր Նելի ամրոցից ոչ հեռու: Այդ պատճառով ընթերցողը թող չզարմանա, որ մենք այսքան արագորեն ամրոցից հասանք պալատ:

Այդ պալատը գտնվում էր Օգոստինոսականների գետափի մոտ և ձգվում էր Պարզամիտ-Աղբատի փողոցի երկայնքով, որը վերանվանված էր Հոգու Ապաստարան: Շքամուտքը Միծեռնակի փողոցից էր: Ֆրանցիսկ I-ը պալատը նվիրել էր իր սիրուհուն մի պայմանով, որ նա համաձայնի ամուսնանալ ժակ Դերրոսի՝ կոմս դե Պանտերի հետ, իսկ Պանտերի կոմս ժակ Դերրոսին նա շնորհեց էտամպ դքսությունը և Բրետանի կառավարումը, պայմանով, որ կոմսն ամուսնանա իր սիրուհու հետ:

Թագավորն աշխատեց իր ընծան արժանի դարձնել գեղեցկուհի դքսուհուն: Նա հրամայեց հինավուրց պալատը զարդարել նորագույն ճաշակով: Շենքի մոայլ ու խստաշունչ ճակատով մեկ, ասես մոգական գավազանի զորությամբ (իսկ այդպես լինում է սիրո թելադրած մտահղացումներն իրականացնելիս), ծաղկեցին վերածննդի դարաշրջանի ծաղիկները: Եվ, ի վերջո, դատելով այն եռանդից, որ թագավորը ցուցաբերեց, ջանալով զարդարել պալատը, կարելի էր ենթադրել, որ նա ինքը մտադիր է անցկացնել այնտեղ ոչ ավելի քիչ ժամանակ, քան դքսուհի դ՛էտամպը: Աննյակները կահավորված էին իրոք թագավորական շքեղությամբ, և ամբողջ պալատը զարդարված էր այնպես, ասես նտխորոշված էր իսկական թագուհու համար և, իհարկե, շատ ավելի լավ, քան սքանչելի, բարձր բարոյականության տեր աիկնոջ, Կարլոս V-ի քրոջ և Ֆրանցիսկ I-ի օրինական կնոջ՝ էլեոնորայի պալատը, որի հետ շատ քիչ էին հաշվի նստում բարձր հասարակության մեջ, նույնիսկ՝ արքունիքում:

Այժմ առավոտ է, և Լթե մենք աչք տծենք դքսուհու բնակարանը, ապա կտեսնենք, որ նա թիկնած է լայն ու փա-

փուկ րազմոցին, սքանչելի գլուխը նրբագեղ ձեռքին հենած, իսկ մյուս ձեռքով խաղում է իր ոսկեփայլ-շագանակագույն գանգուրների հետ: Աննայի բոբիկ ոտքերն է՛լ ավելի փոքրիկ, է՛լ ավելի սպիտակ են թվում սև թավշե րաց կոշիկներին մեջ, իսկ անփուլթ, անկաշկանդ ծալքերով ցած իջնող զգեստը մեծ հմայք է տալիս գեղունուն:

Այստեղ է նաև թագավորը. նա կանգնած է լուսամուտի մոտ, բայց դքսունուն չի նայում: Նա մատներով թխկթըխկացնում է ապակուն և, ըստ երևույթին, խորասուզված մտածմունքների մեջ: Նա, անկասկած, կարևոր հարց է կրճռադատում, կապված Կարլոս V-ի Ֆրանսիա ժամանելու հետ:

— Այդ ինչի՞ մասին եք միտք անում, ձերդ գերագանացություն, և այն էլ ինձնից երես թեքած,— վերջապես սրբունեղած հարցրեց դքսունին:

— Ձեզ նվիրված բանաստեղծության մասին, հոգիս: Իմ կարծիքով այդ բանաստեղծությունը լիովին ավարտված է,— պատասխանեց Ֆրանցիսկ I-ը:

— Օ՛, աղաչում եմ, անմիջապես կարդացեք այդ բանաստեղծությունը, շքնադագեղ, թագակիր իմ բանաստեղծ:

— Հաճույքով,— պատասխանեց թագավորը՝ հանգաթուխ վեհապետ-բանաստեղծի ինքնավստահությամբ:— Լսեցեք, խնդրեմ.

Դեռ նոր էր լուսանում.
Այնժամ այստեղ կանգնած,
Ավրորային տեսա՝ թևատարած,
Հելիոսի ուղին էր նա մատնանշում:
 Բայց այդ պահին,
 Արշալույսի շողը չէ
 Որ շլացրել էր ինձ,
Այլ գանգուրները ոսկեփայլ,
Ժպիտը քնքուշ, հայացքը սլայծառ,
Եվ ձայն տվի ևս աստվածներին.
— Լուսնից գունատ եք դուք,
Իմ սիրո կողքին
Անփայլ եք ու անշուք:

— Ա՛խ, ի՛նչ սքանչելի բանաստեղծութիւնն է,— ծափ տալով բացականչեց դքսուհին:— Հիացեք Ավրորայով, որքան կամենում եք, հիմա ես շեմ խանգարի, քանզի նրա շնորհիվ ես այսպիսի սնգուզական բանաստեղծութիւնն ունեմ: Մի անգամ էլ կարդացեք, խնդրում եմ:

Ֆրանցիսկ I-ը կրկին կարդաց բանաստեղծութիւնը, որպեսզի հաճույք պատճառի թե՛ նրան, և թե՛ իրեն, բայց Աննան այլևս ոչ մի բառ չասաց:

— Ի՞նչ պատահեց ձեզ, հոգիս,— հարցրեց Ֆրանցիսկ I-ը, որ սպասում էր գովասանքի:

— Պատահեց այն, սիր, որ այսօր շատ ավելի վստահորեն, քան երեկ, ես կրկնում եմ. բանաստեղծի համար առավել աններելի է, քան ասպետ-թագավորի, հանդուրժել իր դամային հասցրած վիրավորանքը, մի կնոջ, որը ոչ միայն նրա սիրուհին է, այլև՝ մուսան:

— Նորի՞ց հին երգը, շարասիրտ,— ասաց թագավորը, գրգռված, ուսերը թոթվելով:— Դա ի՞նչ վիրավորանք է, տեր աստված: Ինչ հիշաչարն եք, օ՛, իմ արքայական հավերժահարս, եթե վիրավորանքներն ստիպում են ձեզ մոռանալ իմ բանաստեղծութիւնը:

— Սիր, իմ ատելութիւնը նույնքան մեծ է, որքան և սերս:

— Եվ, այնուամենայնիվ, խնդրում եմ շքարկանալ Բենվենուտոյի վրա, այդ տարօրինակ մարդու, որը չդիտի, թե ինչ է ասում, որը խոսելիս նույնքան անխոհեմ է, որքան կովելիս, որի մտքով էլ չի անցել, երդվում եմ, վիրավորել ձեզ: Եվ, բացի դրանից, դուք կարծեմ գիտեք, որ ներողամտութիւնն աստվածների սեփականութիւնն է, սիրելիդ իմ աստվածուհի: Ներեցեք այդ խենթ մարդուն ի սեր ինձ:

— Խե՞նթ է արդյոք,— կիսաձայն առարկեց Աննան:

— Այո, մեծագո՛ւյն խենթ և դա ստույգ ճշմարտութիւնն է,— հաստատեց Ֆրանցիսկ I-ը:— Երեկ ես տեսա նրան, և նա խոստացավ սքանչելի գործեր ստեղծել: Չէ՞ որ արվեստի այդ բնագավառում նրան հավասար վարպետ չկա: Նա ինձ կպանծացնի գալիք դարերում, ինչպես Անդրեա դել Սարտոն, Տիցիանը և Լեոնարդո դա Վինչին: Կարծեմ դուք դի-

տեք, որ ես հիացած եմ նկարչով, թանկագին դքսուհի: Բարյացակամ ու ներողամիտ եղեք նրա նկատմամբ, աղաչում եմ ձեզ: Հիրավի, ինձ դուր են գալիս և ամենևին չեն բարկացնում անսպասելի ձյունախառն անձրևն ապրիլ ամսին, կնոջ քմահաճությունները, նկարչի տարօրինակությունները: Եվ նա, ուրիշ ես սիրահարված եմ, թող ների նրան, ում համակրում եմ:

— Ես ձեր ստրկուհին եմ, և հնազանդ եմ ձեր կամքին, սիր:

— Շնորհակալ եմ: Ձեր կանացի բարությունը ինձ շնորհ անելով, դուք փոխարենը կարող եք պահանջել ինձնից ամեն բան, ինչ կամենում եք, ինչ թագավորն ի վիճակի է կատարել: Բայց ավա՛ղ, ժամանակն է ձեզ հրաժեշտ տալու: Այսօր մենք խորհուրդ ունենք: Ինչպիսի՞ ձանձրույթ... Այո՛, մեր եղբայր Կարլոս V-ը շատ բարդություններ է մտցնում թագավորական գործերի մեջ: Նա դիմում է խորամանկությունների և ոչ ասպետական սխրանքների. գործի է դնում գրիչը և ոչ սուսերը. դա ամոթալի է: Ազնիվ խոսք, իմ կարծիքով պետք է նոր անվանումներ հորինել պետական գործերն այդքան վարպետորեն ու ճարպկությամբ վարելու համար: Մնաք բարով, սիրելիս, ես կաշխատեմ լինել խորամանկ ու ճարպիկ: Շատ երջանիկ կին եք, մի հոգս ունեք միայն՝ միշտ լինել գեղեցիկ: Եվ բնությունն ամեն ինչ արել է դրա համար: Մնաք՝ բարով: Ուղեկցելու կարիք չկա, մանկավիճկն սպասում է ինձ նախասենյակում: Ցտեսություն: Մտածեք իմ մասին:

— Միշտ մտածում եմ, սիր:

Եվ հրաժեշտի օդային համբույր ուղարկելով տիկին դ'Էտամպլեն, Ֆրանցիսկ I-ը բարձրացրեց վարագույրն ու դուրս եկավ, միայնության մեջ թողնելով գեղանի դքսուհուն, որը, արդարև, այնքան հավատարիմ էր իր խոստմանը, որ անմիջապես սկսեց մտածել ոչ թե թագավորի, այլ բոլորովին այլ մարդկանց մասին:

Տիկին դ'Էտամպլեն ուներ գործունյա, հախուռն, փառասեր բնավորություն: Դքսուհին համառորեն հետամուտ էր լինում

և խիզախորեն նվաճեց թագավորի սերը, բայց նրա խոռովահույզ հոգին շուտով հագեցաւ այդ սիրով, և նա սկսեց ախրել: Ծովակալ Բրիոնը և կոմս դե Լոնգվալը, որոնք մի ժամանակ դուր էին գալիս նրան, Դիանա դե Պուատյեն, որին նա ատել էր մեկընգմիշտ, շէին զբաղեցնում նրա բոլոր մտքերը. բայց արդեն մի շաբաթ կլիներ, ինչ դքսուհու հոգեկան պարապությունը լցվել էր և նա կրկին սկսեց ապրել, որովհետև նորից ատեց ու նորից սիրեց: Նա ատում էր Չելլինիին, սիրում էր Ասկանիոյին, և այժմ, մինչև սպասուհիները հագցնում էին նրան, մտածում էր նրանց մասին:

Երբ ամեն ինչ, սանրվածքից բացի, պատրաստ էր, դրքսուհուն զեկուցեցին Փարբդի պրևոյի և վիկոնտ դե Մարմանի գալստյան մասին:

Այդ մարդիկ դքսուհու ամենամուլի համախոհների թվին էին պատկանում այն երկու թևում, որ կազմվել էին արքունիքում դոֆինի սիրուհու՝ Դիանա դե Պուատյեի և տիկին դ'էտամպի շուրջը: Չէ՞ որ բարեկամիդ լավ ես ընդունում, երբ մտածում ես թշնամուդ մասին: Տիկին դ'էտամպն անսահման գեղանազուծյամբ ձեռքը մեկնեց համբույրի համար մոռայադեմ պրևոյին և ժպտացող վիկոնտին:

— Մեսսեր պրևո,— ասաց նա դ'էստուրվիլին, և զգացվում էր, որ նրա զայրույթի մեջ շինծու ոչինչ չկա, իսկ էարեկցանքի մեջ՝ ոչ մի վիրավորանք,— մեղ հայտնի է դարձել, թե այդ անտաշ իտալացին ինչպես է վարվել ձեզ հետ՝ մեր լավագույն բարեկամի, և մենք մինչև հիմա վրդովված ենք:

— Տիկին,— պատասխանեց դ'էստուրվիլը, իր անհաջողությունն անգամ շողոքորթաբար մատուցելով,— ինձ համար ամոթ կլիներ, եթե այդ անօրենը, որին շղտեցին ոչ ձեր գեղեցկությունը, ոչ սիրայիրությունը, խնայեր ինձ ճերմակ մաղերիս ու կոշմանս համար:

— Օ՛, բանն այն է,— արտասանեց Աննան,— որ թաղավորը, որն իսկապես շափազանց ներողամիտ է այդ լիտալացած օտարերկրացիների նկատմամբ, խնդրել է մոռանալ ինձ հասցված վիրավորանքը, և ես մոռացել եմ:

— Այդ դեպքում, տիկին, մեր խնդրանքն, անկասկած, վատ ընդունելություն կգտնի: Թույլ տվեք ոչինչ չասել և հեռանալ:

— Ինչպե՞ս, մեսսեր դ'էստուրվիլ, մի՞թե ես բարեկամ չեմ եղել ձեզ համար ամեն ժամանակ, բոլոր դեպքերում: Դե՛, ասացեք, ասացե՛ք, այլապես ես կբարկանամ այդպիսի կասկածամիտ բարեկամի վրա:

— Դե լավ, տիկին, ահա թե ինչ գործով ենք եկել: Ես որոշեցի, ի բարօրություն վիկոնտ դե Մարմանի, օգտվել իմ իրավունքից, որ շնորհել էիք ինձ ձեր առատաձեռնությունը, և զբաղեցնել ցանկացած թագավորական ամրոցը. մենք բնականաբար, ընտրեցինք Նելի ամրոցը, որն այդքան նողկալի մարդու ձեռք է ընկել:

— Այդպե՛ս, այդպե՛ս: Ուշադրությամբ լսում եմ ձեզ, — նկատեց դքսուհին:

— Սկզբում վիկոնտը բավական ուրախացավ, տիկին, բայց հիմա, խորհրդածելով, վարանում է և վախով է մտածում շարագործ Բենվենուտոյի մասին...

— Ներողություն, հարգարժան բարեկամս, — ընդհատեց նրան վիկոնտ դե Մարմանը, — դուք լավ չբացատրեցիք գործի էությունը: Ինձ վախեցնում է ոչ թե Բենվենուտոն, այլ թագավորի զայրույթը: Հիրավի, ես չեմ վախենում, որ ինձ կսպանի այդ անտաշ խտալացին, ինչպես անվանում է նրան դքսուհին, այլ, այսպես ասած, վախենում եմ, որ կսպանեմ նրան, վախենում եմ հանկարծ փորձանքի մեջ ընկնելը: Թագավորն իմ պատճառով կզրկվի մի ծառայից, որին, եթե չեմ սխալվում, շատ թանկ է գնահատում:

— Եվ ես, տիկին, համարձակվեցի հուսադրել վիկոնտին, որ եթե հարկ լինի, դուք կհովանավորեք նրան:

— Բարեկամներիս ես միշտ հովանավորում եմ, — ասաց դքսուհին: — Եվ բացի այդ, մի՞թե դուք շունեք ինձանից ավելի հուսալի բարեկամ՝ արդարությունը: Մի՞թե դուք թագավորի կամքի համաձայն չեք գործում:

— Նորին մեծության հրամանով ոչ ոք, այդ Բենվենուտոյից բացի, իրավունք չունի զբաղեցնել Նելի ամրոցը, և մեր

րնտրութիւնը, — չի կարելի աչք փակել դրա վրա, — նման կլինի վրիժառութեան: Բայց եթե ես սպանեմ Չելլինիին, իսկ դա կասկածի տեղիք չի տալիս, քանզի ես ունեմ երկու հուշ սալի մարդ, այդ դեպքում ի՞նչ անենք...

— Ա՛խ, տեր աստված, — բացականչեց դքսուհին և քրմ-ծիժաղ տալով փայլեցրեց իր սպիտակ ատամները: — Չէ՞ որ թագավորը հովանավորում է ողջերին: Հավատացեք, նա հազիվ թե հետաքրքրվի մեռյալների վրիժառութեամբ, և երբ արվեստը գեղեցկութիւնների նկատմամբ ունեցած նրա հիացմունքի աղբյուրը ցամաքի, հուսով եմ, նա կհիշի միայն իմ նկատմամբ տածած զգացմունքի մասին: Օտարերկրացին հրապարակավ այնպիսի սոսկալի անարգանք հասցրեց ինձ: Հիշո՞ւմ եք, Մարման:

— Բայց, տիկին, — պատասխանեց շրջահայաց վիկոնտը, — հարկավոր է, որ դուք պարզորոշ պատկերացնեք այն, ինչ պետք է պաշտպանեք:

— Օ՛, այո, ձեր դիտավորութիւնները միանգամայն պարզ են, վիկոնտ:

— Ոչ, թույլ տվեք պատմել ամեն բան. ես չեմ ցանկանում անտեղյակ թողնել ձեզ: Կարող է պատահել, որ ուժով շկարողանանք նրա հախից գալ, չէ՞ որ նա իսկական սատանա է: Այդ դեպքում, խոստովանում եմ, մենք կդիմենք խորամանկութեան, և եթե Բենվենուտոն օրը ցերեկով դուրս պրծնի վարձկանների ձեռքից, փախչի իր ամրոցը, վերջիններս մի օր երեկոյան պատահաբար կհանդիպեն Չելլինիին մի նեղլիկ նրբանցքում և... նրանք ունեն ոչ միայն սուսեր, տիկին, այլ դաշույններ...

— Ես ամեն ինչ հասկացա, — ասաց դքսուհին և նրա սրանչելի, սլաշժառ դեմքն ամենևին չդունատվեց, երբ նրան համատոտակի պատմեցին սպանութեան ծրագրի մասին:

— Հիանալի է, տիկին:

— Հիանալի է, վիկոնտ: Ես տեսնում եմ, որ դուք հեռատես մարդ եք և որ շարժե ձեզ հետ թշնամի լինել, երզվում եմ պատվովս:

— Իսկ դուք ինչպե՞ս եք նայում մեր գիտավորութեանը, տիկին:

— Այդ գործն իրոք բավական լուրջ է: Թերևս հարկավոր է մի լավ կշռադատել. բայց ես ձեզ ասացի, և այդ հայտնի է բոլորին, նույնիսկ ինքը թագավորը հասկանում է, որ այդ անտաշը խորապես խոցել է հպարտութունս: Ես ատում եմ նրան... ինչպես ատում եմ ամուսնուս, կամ տիկին Դիանային: Եվ ազնիվ խոսք, երևի կարող եմ խոստանալ ձեզ... Ի՞նչ է պատահել, Իզարո: Դու մեզ խանգարեցիր:

Այդ բառերով կոմսուհին դիմեց սպասուհուն, որը գլուխը կորցրած ներս էր վազել:

— Տե՛ր աստված, տիկին,— ասաց Իզաբոն,— խնդրում եմ ներեցեք ինձ, բայց Ֆլորենցիացի ոսկերիչ Բենվենուտո Չելլինին բերել է սքանչելիագույն, ոսկեջրած մի վազ, որի նմանը տեսած չկամ: Եվ այնքան քաղաքավարութամբ ասաց, որ այդ վաղն ընծա է բերել ձերդ պայծառափայլութեանը և խնդրում է, որ մի րոպե հատկացնեք իրեն:

— Ա՛խ, ահա՛ թե ի՞նչ,— բացականչեց դքսուհին: Նրա հպարտութունը բավարարված էր, և նա մեղմացավ:— Իսկ դու ի՞նչ պատասխանեցիր նրան, Իզաբո:

— Որ տիկինը դեռ հագնված չէ և որ հիմա կզեկուցեմ նրան:

— Սքանչելի է... Կարծես մեր թշնամին խելքի է գալիս,— ավելացրեց դքսուհին, շրջվելով դեպի ապշահար պրեֆոն,— և սկսում է ճանաչել մեր կշիռն ու մեր ուժը: Միևնույն է, թող շղարծի, թե այդքան էժան կպրծնի: Ես մտադիր չեմ անմիջապես լսելու նրա ներողութունը: Թող զգա, թե ում է վիրավորանք հասցրել և ինչ է նշանակում մեր զայրույթը... Իզաբո, ասա նրան, որ դու տեղեկացրել ես ինձ, և որ ես հրամայել եմ սպասել:

Իզաբոն դուրս գնաց:

— Այդպես ուրեմն, ես ձեզ ասում էի, վիկոնտ,— շարունակեց դքսուհին, որի զայրույթը փոքր-ինչ խաղաղվել էր,— որ ձեր ձեռնարկած գործը բավական լուրջ է, և ես չեմ կարող օգնութուն խոստանալ. չէ՞ որ ի վերջո դա շարագործութուն է կամ գաղտնի սպանութուն:

— Վիրավորանքը բոլորի համար ակնհայտ էր,— համարձակվեց միջամտել պրևոն:

— Ներողութիւնն էլ, հուսով եմ, բոլորի համար ակնհայտ կլինի, մեասեր: Այդ մարդը, որը վախ է ներշնչում բոլորին, այդ ամբարտաւան մարդը, որը չի ենթարկվել աշխարհի տիրակալներին, սպասում է այնտեղ, իմ նախասենյակում, թե զայրույթս երբ կփոխարինեմ ողորմածութեամբ, և երկու ժամը որ նա անց է կացնելու բաւարանում, հավատացնում եմ, կսանձեն նրա հանդգնութիւնը: Սակայն չի կարելի անխիղճ լինել: Ներեցեք նրան, ինչպես ես եմ ներելու երկու ժամ հետո: Մի՞թե իմ ազդեցութիւնը ձեզ վրա ավելի քիչ է, քան թագավորի ազդեցութիւնն ինձ վրա:

— Բարեհաճեք, տիկին, թույլ տալ, որ գնանք,— ասաց պրևոն, գլուխ տալով,— որովհետև չէի ցանկանա զուր խոստում տալ միակ իշխանուհու...

— Թույլ տամ, որ գնա՞ք: Օ՛, ոչ,— բացականչեց դքսուհին, որը վառուցում էր իր հաղթանակի վկաներին պահելու ցանկութեամբ:— Ես կամենում եմ, պարոն սրևո, որ տեսնեք, թե ինչքան ստորացված է ձեր թշնամին, այդպիսով միաժամանակ կլուծվի թե՛ իմ և թե՛ ձեր վրեժը: Այս երկու ժամը ես նվիրում եմ ձեզ և վիկոնտին: Շնորհակալութիւն հայանելու հարկ չկա: Ասում են, որ դուք ձեր աղջկան սամուանացնում եք կոմս դ'Օրբեկի հետ, ճի՞շտ է: Հիրավի, սրանչելի միութիւն է: Ես ասացի «սքանչելի», բայց պետք էր ասել «ձեռնտու»: Նստեք, մեասեր: Գիտեք, որպեսզի հարսանիքը կայանա, պետք է իմ համաձայնութիւնը, որը դեռևս չեք հարցրել: Բայց ես տալիս եմ համաձայնութիւնս: Գ'Օրբեկն ինձ նվիրված է այնպես, ինչպես և դուք: Հուսով եմ, մենք կտեսնենք ձեր շքնաղ աղջկան, բավականութիւն կստանանք նրա ընկերակցութիւնից: Եվ ձեր փեսան, անկասկած, ողջամիտ կլինի ու կներկայացնի նրան թագավորին: Ձեր աղջկա անունն ի՞նչ է:

— Կոլոմբա, տիկին:

— Գեղեցիկ, հաճելի անուն է: Ասում են, թե անուններն ազդում են ճակատագրի վրա. եթե իրոք այդպես է, ուրեմն

խեղճ աղջիկը քնքուշ սիրտ ունի և տանջվելու է... Դե, նորից
ի՞նչ պատահեց...

— Ոչինչ, տիկին: Նա ասաց, որ կսպասի:

— Լավ, հիանալի է: Իսկ ես նրա մասին բոլորովին մո-
ռացել էի... Այդպես, ուրեմն, կրկնում եմ՝ պահպանեք Կո-
լոմբային, մեսսեր դ'էստուրվիլ: Ձեր աղջկա ապագա ամու-
սինը, կոմս դ'Օրբեկը, շատ նման է իմ ամուսնուն: Նրա
փառամոլութունը չի զիջում դուքս դ'էտամպի ազահուլթյանը
և նրա համար բնավ դժվար չէ կնոջը փոխել որևէ դքսու-
թյան հետ: Բացի այդ, ես էլ պետք է զգույշ լինեմ: Մանա-
վանդ, եթե ձեր աղջիկն այնքան գեղեցիկ է, ինչքան ասում
են: Դուք նրան կներկայացնեք ինձ, այնպես չէ՞, մեսսեր:
Չէ՞ որ ես պետք է պատրաստվեմ պաշտպանության:

Դքսուհին փայլում էր հաճույքից, կանխաճաշակելով իր
հաղթանակը Բենվենուտոյի նկատմամբ, երկար ժամանակ
ինչ-որ ինքնամոռացության մեջ խոսում էր նույն ոգով, և
նրա բոլոր շարժումները լի էին հրճվալից անհամբերու-
թյամբ:

— Դե՛հ, ևս կես ժամ և երկու ժամը կլրանա,— վերջա-
պես ասաց նա,— այն ժամանակ խեղճ Բենվենուտոն
կազատվի տառապանքից: Պատկերացրեք, որ մենք նրա
տեղը լինեինք: Նա հավանորեն սոսկալի տանջվում է: Բեն-
վենուտոն սովոր չէ այսպիսի վերաբերմունքի: Լուվրի դռ-
ները միշտ բաց են նրա առաջ, իսկ թագավորը՝ միշտ մատ-
չելի: Ճիշտն ասած, ես խղճում եմ նրան, թեև արժանի չէ
Ո՛չ, պատկերացրեք, թե նա ինչքան է զայրացած: Հա՛-հա՛-
հա՛, երկար կմտաբերեմ այս ամենն ու կժիծաղեմ... Տե՛ր
աստված, ի՞նչ աղմուկ է: Գոռում-գոչյուն, ինչ-որ զզրոց...

— Գուցե անիծյալ Չելլինին, քավարանում ձանձրանա-
լով, աղմո՞ւկ է բարձրացրել,— ոգեշնչվելով, ասաց պրևոն:

— Ուզում եմ տեսնել, թե ինչ է կատարվում այնտեղ,—
գունատվելով ասաց դքսուհին:— Եկեք ինձ հետ, պարոնայք,
եկեք:

Բենվենուտոն, մեզ հայտնի նկատառումներից ելնելով,
սրոշեց հաշտության ձեռք մեկնել ամենազոր ֆավորիտու-
հուն և Պրիմատիչոյի հետ ունեցած խոսակցության հետևյալ

օրն իսկ վերցրեց ոչ մեծ, ոսկեջրած մի վազ՝ իր հանգստի վրկագինը և, թևանցուկ անելով Ասկանիոյին, որը տազնապալից գիշերից հետո շատ գունատ ու թուլացած էր, գնաց դ'էտամպ ամրոցը: Նախ նրան դիմավորեցին ծառաները, որոնք հրաժարվեցին այդ վազ ժամին զեկուցել տիկնոջը նրա գալստյան մասին, և նա ուղիղ կես ժամ կորցրեց բանակցութունների վրա: Այդ արգեն բավական էր նրան բորբոքելու համար: Վերջապես եկավ Իզաբոն և համաձայնեց զեկուցել տիկին դ'էտամպին: Շուտով նա վերադարձավ ու հայտնեց, որ դքսուհին հագնվում է, որ Բենվենուտոն ստիպված կլինի մի քիչ սպասել: Եվ ահա Բենվենուտոն, համբերությամբ գինվելով, տեղավորվեց նստարանի վրա՝ Ասկանիոյի կողքին, որն ուժասպառ էր եղել քայլելուց, ջերմությունից ու իր մտածմունքներից և մի քիչ վատ էր զգում իրեն:

Այդպես անցավ մի ժամ: Զելլինին սկսեց հաշվել ռոպեները: «Իհարկե,— մտածում էր նա,— ամբողջ օրվա ընթացքում դքսուհու ամենակարևոր զբաղմունքը զուգվելն է քառորդ ժամ շուտ, քառորդ ժամ ուշ՝ արժե՞ արդյոք դրա համար զոհաբերել այն օգուտը, որ կբերի այս այցելութունը»: Սակայն, չնայած փիլիսոփայական դատողություններին, նա սկսեց հաշվել վայրկյանները:

Մինչդեռ Ասկանիոն գնալով ավելի ու ավելի էր գունատվում: Նա որոշեց ծածկել ուսուցչից իր տկարությունը և արիաբար, առանց առարկության եկավ նրա հետ. առավոտյան ոչինչ չէր կերել և զգում էր, թեև չէր խոստովանում ինքն իրեն, որ ուժասպառ է լինում: Իսկ Բենվենուտոն, շկարողանալով հանգիստ նստել, սկսեց մեծ քայլերով շարժվել նախասենյակը:

Անցավ ևս քառորդ ժամ:

— Դու քեզ վատ ես զգում, զավակս,— հարցրեց նա Ասկանիոյին:

— Ո՛չ, ազնիվ խոսք, ո՛չ, ուսուցիչ: Ավելի շուտ դուք եք ձեզ վատ զգում: Զինվեք համբերությամբ, ազաշում եմ, հիմա արգեն քիչ մնաց:

Այդ ռոպեին կրկին հայտնվեց Իզաբոն:

— Չեր տիրուհին բավականին ուշացավ,— փնթփնթաց
Բենվենուտոն:

Մաղրասեր աղջիկը մոտեցավ լուսամուտին և նայեց բա-
կում կախված ժամացույցին:

— Բայց դուք ընդամենը մեկուկես ժամ է, որ սպասում
եք,— ասաց նա:— Ինչո՞ւ եք գանգատվում:

Չելլինին հոնքերը կիտեց, իսկ Իզաբոն, քրքջալով, գլխա-
պատառ դուրս վազեց:

Այս անգամ Բենվենուտոն, անասելի ճիգ գործադրելով,
զսպեց իրեն: Նա կրկին նստեց և, ձեռքերը կրծքին խաշելով,
վե՛հ կեցվածքով, լուռ անշարժացավ: Թ՛վում էր, թե արձա-
նագործը լիովին հանգիստ է, բայց նրա հոգում բորբոքվում
էր զայրույթը: Դուռն մոտ անշարժ կանգնած ծառաները նա-
յում էին նրան հանդիսավորությամբ, իսկ Բենվենուտոյին
թվում էր՝ ծաղրանքով:

Ժամացույցը հնչեցրեց քառորդ ժամ: Բենվենուտոն նա-
յեց Ասկանիոյին ու տեսավ, որ նա շափազանց գունատ է
և ուր որ է կուշաթափվի:

— Ա՛խ, այդպե՛ս,— բացականչեց Չելլինին, այլևս չկա-
րողանալով զսպել իրեն:— Այս ամենը նրա սարքած գործն
է, ահա թե ինչ: Իսկ ես պատրաստ էի հավատալ նրա խոս-
քերին ու քաղաքավարությունից զրդված սպասել: Բայց նա
կամենում է վիրավորել ինձ, իսկ ես գլխի չընկա, որովհետև
սովոր չեմ վիրավորանքների: Սակայն ես նրա գիտցած մար-
դը չեմ, ես վիրավորանք չեմ հանդուրժի նույնիսկ կնոջից ու
հեռանում եմ: Գնանք, Ասկանիո:

Եվ այդ բռուերն արտասանելով, Բենվենուտոն իր զորեղ
ձեռքերով բարձրացրեց անհյուրընկալ աթոռակը, գետնով
տվեց, ջարդուփշուր արեց. չէ՞ որ ամբողջ երկու ժամ նստել
էր այդ աթոռակին հիշաշար դքսուհու ողորմածությամբ և,
անտեղյակ, ենթարկվել ստորացման: Մառաններն ուզում էին
մոտ վազել, բայց Չելլինին ձեռքը դրեց դաշույնին, և նրանք
կանգ առան: Ասկանիոն, ուսուցչի համար վախենալով, ցան-
կանում էր ոտքի կանգնել, բայց այնքան հուզված էր, որ
ուժերը դավաճանեցին և, գիտակցությունը կորցնելով, ցած
ընկավ: Սկզբում Բենվենուտոն շնկատեց այդ:

Հենց նույն պահին շեմքին հայտնվեց գունատ ու զայրացած դքսուհին:

— Այո՛, ես գնում եմ, — ամպրոպալից ձայնով շարունակեց Բենվիենուտոն, տեսնելով նրան: — Հայտնեք այդ տիկնոջը, որ ես տանում եմ իմ ընծան և կտամ առաջին պատահած անկիրթ ռամիկին: Թերևս նա ավելի արժանի կլինի այսպիսի ընծայի: Եվ ասացեք դքսուհուն, որ սիրովում է, և թե ինձ ձեզ նման ծառայի տեղ է դնում: Մենք՝ արվեստագետներս, հնազանդությունն ու հարգանքը շենք վաճառում նրա ծախու սիրո նման: Մի կողմ քաշվեք: Հետևիր ինձ, Ասկանիո:

Այդ պահին նա շրջվեց և տեսավ, որ իր սիրելի աշուկերտը նստած է պատի մոտ, գլուխը հետ գցած, որ նրա աչքերը փակ են, իսկ դեմքը՝ սոսկալի գունատ:

— Ասկա՛նիո, — գոչեց Բենվիենուտոն: — Ասկա՛նիո, դա՛վակա: Բայց նա ուշաթափվել է, մեռնում է: Օ՛, սիրելիդ իմ Ասկանիո: Եվ բոլորի պատճառն այդ կինն է... — Բենվիենուտոն սպառնալից տեսքով շրջվեց դեպի դքսուհի դ՛էտամպը և անմիջապես խոնարհվեց Ասկանիոյի վրա, նրան բարձրացնելու և տանելու համար:

Իսկ դքսուհին, զայրույթից ու վախից գլուխը կորցրած, չէր կարողանում շարժվել տեղից, չէր կարողանում խոսել: Բայց տեսնելով Ասկանիոյի մարմարի նման ճերմակ դեմքը, նրա խոնարհված գլուխը, երկար խոնված մազերը, տեսնելով ուշաթափ պատանու սքանչելի, գունատ ճակատն ու զեղանազ կեցվածքը, նա, ինքն իրեն հաշիվ շտալով, նետվեց դեպի պատանին, խոնարհվեց, համարյա ծունկի եկավ Բենվիենուտոյի կողքին և նրա նման ամուր բռնեց Ասկանիոյի ձեռքը:

— Չե՞ք տեսնում, որ պատանին մահամերձ է: Դուք կոպանեք նրան, պարոն, եթե փորձեք տեղափոխել: Հավանարար, պետք է անմիջապես օգնություն ցույց տալ նրան: Ժերտմ, վազիր բժիշկ Անդրեին կանչելու... Նրան տեղափոխել չի կարելի. չէ՞ որ ծանր դրության մեջ է: Կսո՞ւմ եք: Դուք կարող եք գնալ, կարող եք մնալ, բայց նրան ձեռք չտար:

Բենվենուտոն խորաթափանց հայացքով նայեց դքսուհուն, ապա տազնապալից մի հայացք նետեց Ասկանիոյի վրա: Նա հասկացավ, որ տիկին դ'էտամպի մոտ իր սիրելի աշակերտին ոչ մի վտանգ չի սպառնում, որ, թերևս, վտանգավոր է տեղափոխել Ասկանիոյին առանց նախազգուշություններու: Եվ անմիջապես որոշում ընդունեց, քանզի անհասպաղությունն ու անդրդվելիութունը Չելլինիի արժանիքներից, գուցե և թերություններից, մեկն էր:

— Դուք պատասխանատու եք նրա համար, տիկին,— ասաց նա:

— Օ՛, այո՛, կյանքիս գնով,— բացականչեց դքսուհին:

Բենվենուտոն քնքշորեն համբուրեց իր աշակերտի ճակատը, փաթաթվեց թիկնոցի մեջ և, ձեռքը դաշույնի երախակալին դրած, հպարտորեն դուրս եկավ, ատելությամբ ու արհամարհանքով լի մի հայացք փոխանակելով դքսուհու հետ: Իսկ պրևոյին և վիկոնտին շքարեհաճեց նույնիսկ նկատել:

Աննան ցասումնալից մի հայացքով ուղեկցեց Բենվենուտոյին, մինչև վերջինս անհետացավ, այնուհետև նրա աչքերի արտահայտութունը փոխվեց և նա անհանգստացած ու տխրորեն նայեց իր սրտին սիրելի հիվանդին. սերը դուրս մղեց զայրույթը, էգ վազը կրկին վիթ դարձավ:

— Դոկտոր Անդրե,— դիմեց նա բժշկին, որն անմիջապես վազել եկել էր,— քնեք նրան: Փրկե՛ք: Նա վիրավորված է, նա մեռնում է...

— Դատարկ բան է,— ասաց բժիշկը,— ուժերի ժամանակավոր անկում:— Եվ նա Ասկանիոյի բերանը լցրեց մի քանի կաթիլ բուժիչ թմրադեղ, որը միշտ մոտն էր պահում:

— Նա ուշքի է գալիս,— բացականչեց դքսուհին:— Շարժվե՛ց: Իսկ հիմա, բժիշկ, նրան հանգիստ է պետք, այո՞: Տեղափոխեք ահա այստեղ, այս սենյակը և դրեք բազմոցին,— հրամայեց նա երկու ծառային ու կիսաձայն, որպեսզի նրանցից բացի ոչ ոք չսի, ավելացրեց.— նախազգուշացնում եմ, եթե ձեր տեսածի ու լսածի մասին մի բառ բերանից թոցնեք, կյանքով կհատուցեք շատախոսության համարս Գնացեք:

Սառանները, վախից դողալով, գլուխ տվին, դգուշորեն
բարձրացրին Ասկանիոյին ու տարան:

Մենակ մնալով պրևոյի և վիկոնտ դե Մարմանի հետ,
որոնք նրան հասցված նոր վիրավորանքի դգուշավոր վկա-
ներն էին, տիկին դ'էտամպն արհամարհական հայացքով
ուտից գլուխ շափեց նրանց, առանձնապես վիկոնտին, սա-
կայն անմիջապես զսպեց իր զգացմունքները:

— Այդպես, ուրեմն, ես ասացի, վիկոնտ,— նկատեց նա
թունոտ, բայց խաղաղորեն,— որ ձեր ձեռնարկած գործը
բավական լուրջ է, բայց ասացի առանց լավ մտածելու:
Կարծում եմ, որ ես այդքան իշխանութուն ունեմ շարագոր-
ծին պատժելու, իսկ հարկ եղած դեպքում՝ հարվածելու
նրանց, ովքեր կհրապարակեն գաղտնիքը: Հուսով եմ, որ
այս անգամ թագավորը կբարեհաճի պատժել նրան. բայց ես
գերադասում եմ վրեժ լուծել: Պատիժն ակնհայտ է դարձնում
վիրավորանքը, իսկ վրեժը ծածկում է այն: Դուք, պարոնայք,
բավականաչափ սառնասրտութուն ունեցաք և հապաղում
եք, որպեսզի ավելի դիպուկ հարվածեք: Գովում եմ ձեզ դրա
համար, բայց խորհուրդ եմ տալիս. խելամիտ եղեք, առիթը
բաց չթողեք, շտիպեք ինձ ուրիշների աջակցութեանը դի-
մել: Վիկոնտ դե Մարման, ձեզ հետ պետք է խոսեմ անկեղ-
ծորեն. ես երաշխավորում եմ, որ դուք անպատիժ կմնաք,
ինչպես անպատիժ է մնում դահիճը: Սակայն, եթե կամե-
նում եք իմանալ իմ կարծիքը, խորհուրդ եմ տալիս ձեզ և
ձեր ստահակներին հրաժարվել սուսերից ու գործի դնել
դաշույնը: Այդպես, ուրեմն, որոշված է՝ չշատախոսել, այլ
գործել առանց հապաղման՝ ահա լավագույն պատասխանը:
Գնաք բարով, պարոնայք:

Նա խոսում էր կցկտուր, կտրուկ ձայնով և ձեռքը մեկ-
նեց, ասես մատնացույց անելով գուռը: Նրանք այն աստի-
ճան շփոթվեցին, որ հապշտապ գլուխ տալով և ձայն-ծրպ-
տուն շհանելով, ապշահար դուրս եկան:

— Օ՛, ահա թե ինչ է նշանակում սոսկ կին լինել և օգ-
նութուն հայցել այսպիսի վախկոտներից,— ասաց Աննան՝
գարշանք արտահայտող ծամածոանքով նայելով նրանց հե-

տևից:— Օ՛, ինչպես եմ ատում այս բոլոր մարդուկներին, թագակիր սիրահարին, ծախու ամուսնուն, բաճկոնակ հագած սպասյակին, լիվրե հագած ծառային, արհամարհում եմ բոլորին, բացի նրանից, որով ակամա հիանում եմ և որին սիրում եմ խենթի պես:

Նա ներս մտավ գեղեցիկ հիվանդի սենյակը... Ասկանիոն բացեց աչքերն այն պահին, երբ դքսուհին մոտեցավ նրան:

— Դատարի բան է,— կրկնեց բժիշկ Անդրեն, դիմելով տիկին դ'էտամպին:— Երիտասարդը վիրավորված է ուսից: Թուլությունը, հոգնածությունը, հոգեկան ցնցումը, իսկ գուցե և քաղցը պատճառ են դարձել ուշաթափության: Ինչպես տեսնում եք, բուժիչ թմրադեղն ընդունելուց հետո ամեն ինչ անցավ: Հիմա նա ուշքի է եկել և կարելի է պատգարակի վրա տուն տեղափոխել նրան:

— Բավական է,— ասաց դքսուհին, փողի քսակը մեկնելով պարոն Անդրեին, որը խոր գլուխ տվեց և դուրս գնաց:

— Որտե՞ղ եմ ես,— սթափվելով հարցրեց Ասկանիոն, նա ջանում էր մտքերը հավաքել:

— Դուք ինձ մոտ եք, Ասկանիո,— պատասխանեց դքսուհին:

— Ձեզ մո՞տ եմ, տիկին: Ա՛խ, այո, ճանաչեցի ձեզ: Դուք տիկին դ'էտամպն եք: Մտաբերում եմ... Իսկ որտե՞ղ է Բենվենուտոն: Որտե՞ղ է ուսուցիչս:

— Չշարժվեք, Ասկանիո: Ձեր ուսուցչին վտանգ չի սպառնում: Չանհանգստանաք, նա խաղաղ նստած է իր տանն ու ճաշում է:

— Բայց նա ինչպե՞ս մենակ թողեց ինձ:

— Դուք ուշաթափվեցիք, և նա իմ հոգառարությանը հանձնեց ձեզ:

— Իսկ դուք ճի՞շտ եք ասում, որ նրան վտանգ չի սպառնում, որ նա անվնաս դուրս եկավ այստեղից:

— Կրկնում եմ ու հաստատում, որ նրան ոչ մի վտանգ չի սպառնում: Դե հասկացեք, Ասկանիո, անշնորհակա՛լ: Ես՝ դքսուհի դ'էտամպս, հսկում եմ նրա անկողնու մոտ, խնամում նրան քրոջ հոգատարությամբ, իսկ նա խոսում է միմիայն իր ուսուցչի մասին:

— Օ՛, տիկին, ներեցեք ինձ և ընդունեք շնորհակալանքս, — պատասխանեց Ասկանին:

— Վերջապես, — ասաց դքսուհին, օրորելով իր գեղանի գլուխն ու շարաճճիորեն ժպտալով:

Եվ այդ ժամանակ դքսուհի դ՛էտամպը սկսեց խոսել: Նրա խոսակցության տոնը սրտաբուխ էր, ամենահասարակ բառերի մեջ նա գաղտնի իմաստ էր ներգնում, հարցեր էր տալիս անհագ հետաքրքրասիրությամբ, բայց և ինչ-որ հարգանքով ու պատասխանները լսում էր այնպիսի ուշադրությամբ, ասես դրանցից էր կախված իր ճակատագիրը: Նա դարձել էր հեզ, կատվի նման փաղաքուշ ու մեղմ, սիրալիր ու նրբազգաց և, ինչպես հմուտ գերասանուհին բեմի վրա, աննկատելիորեն խոսեցնում էր զրույցից խուսափող Ասկանիոյին, վերագրում նրան իր խորհած ու արտահայտած մտքերը: Նա կարծես կորցրել էր իր ամբողջ ինքնավրաստահուծությունը և ունկնդրում էր Ասկանիոյին՝ ինչպես մարգարեի, ի հայտ բերելով իր ամբողջ լուսավորյալ, հմայիչ միտքը, որի շնորհիվ, ինչպես ասել ենք, նրան անվանում էին ամենագեղեցիկը ուսյալ կանանց մեջ և ամենաուսյալը գեղեցկուհիների մեջ: Մի խոսքով, նա զրույցը վերածեց ամենանրբին շողոքորթության, ամենահմուտ գայթակղության և, ի վերջո, քանզի պատանին երրորդ թե շորրորդ անգամ փորձ էր անում գնալու, նրան պահելով, ասաց.

— Ասկանիո, դուք ձեր սքանչելի ոսկերչական արհեստի մասին պատմում եք այնպիսի պերճախոսությամբ, այնպիսի կրքոտությամբ, որ դա ինձ համար յուրօրինակ հայտնություն է: Այսուհետև ես խորին իմաստ կգտնեմ այն ամենի մեջ, ինչ նախկինում ինձ թվում էր սոսկ զարդարանք: Ուրեմն, ձեր կարծիքով, Բենվենուտոն իր գործի վարպե՞տն է:

— Տիկին, այդ գործում նա գերազանցել է նույնիսկ աստվածային Միքելանջելոյին:

— Ես բարկացած եմ ձեզ վրա: Ձեր շնորհիվ ես, թերևս, այնքան էլ շղայրանամ նրա անբաղաբավարության համար:

— Օ՛, ուշադրություն մի դարձնեք ուսուցչի հանդգնությունը, տիկին: Նրա կոպտության տակ պահված է ամենա-

ջերմ ու անդամաճան սիրտն աշխարհում: Բայց Բենվենուստոն անհամբեր է ու անզուսպ. նրան թվաց, թե դուք ստիպեցիք նրան սպասել զվարճանալու համար և որ դա վիրաւորանք է...

— Ավելի ճիշտ՝ կատակ,— ասաց դքսուհին շփացած աղջկա տոնով, որն անհարմար է զգում իր շարաճճիութեան համար: Հավատացեք, ես գեռ հագնված չէի, երբ հայտնուվեց ձեր վարպետը, և տուալետս պարզապես մի քիչ երկաթ աւեց: Այդ վատ է, շատ վատ: Տեսնում եմ, ես խոստովանում եմ ձեզ: Մակայն ես չգիտեի, որ դուք էլ եք եկել նրա հետ,— աշխուժորեն ավելացրեց նա:

— Այդ ամենը ճիշտ է, տիկին, բայց Չելլինին,— իսկ նա իհարկեւ, այնքան էլ խորաթափանց չէ և, բացի այդ, նրան մոլորութեան մեջ են գցել, ես կարող եմ ձեզ խոստովանել, չէ՞ որ դուք այնքան հմայիչ եք ու այնքան բարի,— այդպես, ուրեմն, Չելլինին գտնում է, որ դուք սոսկալի շար եք ու դաժան, իսկ ձեր մանկական արարքի մեջ վիրավորանք տեսալէ:

— Մի՞թե,— անկարող լինելով զսպել թունոտ քմծիծաղը, բացականչեց դքսուհին:

— Օ՛, ներեցեք նրան, տիկին: Հավատացեք, եթե ուսուցիչը ճանաչեր ձեզ, ծունկի եկած ներումն կխնդրեր ձեզնից իր սխալի համար. չէ՞ որ նա այնքան ազնիվ է ու մեծահոգի:

— Դե բավական է: Դուք կարծեմ ջանում եք հարկադրել, որ սիրե՞մ նրան: Կրկնում եմ, ես անբարյացակամ եմ տրամադրված նրա նկատմամբ և առաջին հերթին մրցակից կդառնեմ նրան:

— Դժվար թե գտնեք, տիկին:

— Ո՛չ, Ասկանիո, քանզի այդ մրցակիցը դուք եք, նրա աշակերտը: Թույլ տվեք հարևանցիորեն միայն պատշաճը հատուցել մեծ հանճարին, որն ասում է ինձ: Լսեք, չէ՞ որ ինքը՝ Չելլինին գովաբանում էր ձեզ նուրբ վարպետութեան համար: Մի՞թե չեք ցանկանում, որ ձեր ստեղծագործութունը ծառայի ինձ: Ապացուցեք, որ դուք չեք բաժանում վարպետի կանխակալ կարծիքն իմ մասին և համաձայնեք դարդարել ինձ: Դե, ի՞նչ կասեք:

— Տիկին, իմ բուրբ ընդունակությանները, իմ ամբողջ ջանասիրությունը ձեր տրամադրության տակ են: Գուր աշն- քան բարյացակամ եք իմ նկատմամբ, այնպիսի կարեկցան- քով եք հարցունքորձ անում իմ անցյալի, իմ հույսերի մա- սին, որ այսուհետև ես հոգով ու սրտով նվիրված եմ ձեզ:

— Երեխա՛: Ես դեռ ոչինչ չեմ արել ձեզ համար և միայն մի բան եմ խնդրում ձեզնից՝ նվիրեք ինձ ձեր տաղանդի մի փշուրը: Ասացեք, դուք ձեր անուրջներում չե՞ք ստեղծել արդյոք ինչ-որ սքանչելի, թանկարժեք զարդեր: Ես հոյա- կապ մարգարիտներ ունեմ: Չէի՞ք կամենա հեքիաթային անձրև պատրաստել ինձ համար, սիրելիդ իմ կախարդ: Գի- տեք ինչ, ես կսլատմեմ իմ մտահղացման մասին, ցանկա- նո՞ւմ եք: Հենց հիմա, երբ դուք պառկած էիք այստեղ, սեն- յակում, գունատ, գլխահակ, ես պատկերացրի սքանչելի մի շուշան, քամուց կոացած: Ուստի մարգարիտներից ու արծա- թից շուշան պատրաստեք ինձ համար, և ես կկրեմ այն հոր- սածիս վրա,— ձեռքը սրտին դնելով ասաց դքսուհին:

— Ախ, տիկին, դուք շատ բարի եք...

— Ասկանիո, ցանկանո՞ւմ եք երախտահատույց լինել ինձ, ինչպես ասում եք, այդ բարության համար: Գարձրեք ինձ ձեր մտերմուհին, բարեկամը, մի թաքցրեք ձեր արարք- ները, ցանկությունները, վշտերը, որովհետև ես տեսնում եմ, որ դուք տխուր եք: Խոստացեք գալ, երբ ձեզ պետք կլինի օգնություն ու խորհուրդ:

— Բայց չէ՞ որ դուք ևս շնորհ եք անում ինձ, ամենևին չպահանջելով շնորհակալանքիս ապացույցը:

— Մի խոսքով, դուք խոստանո՞ւմ եք ինձ:

— Ավա՛ղ: Դեռ երեկ կխոստանայի, տիկին, դեռ երեկ ես կարող էի ընդունել ձեր սքանչելի ընծան և դրա կարիքն ունեի: Իսկ այսօր ոչ ոք չի կարող օգնել ինձ:

— Ով գիտե...

— Ես գիտեմ, տիկին:

— Ա՛խ, ես տեսնում եմ, ինչ-որ վիշտ տանջում է ձեզ, Ասկանիո:

Ասկանիոն տխրորեն գլխով արեց:

— Գուք անկեղծ շեք ձեր ընկերոջ հետ, Ասկանիու Լավ շէ, Լավ շէ,— շարունակեց դքսուհին, բռնելով պատանու ձեռքն ու քնքշորեն սեղմելով:

— Վարպետը, երևի, անհանգստանում է ինձ համար, տիկին և, բացի այդ, ես չեմ համարձակվում ձանձրացնել ձեզ: Ես ինձ շատ Լավ եմ զգում: Թույլ տվեք գնալ:

— Ինչպե՞ս եք ջանում շուտափույթ հեռանալ ինձնից: Սպասեք, գոնե պատգարակը բերեն: Մի ընդդիմանաք, դա բժշկի կարգադրութլունն է, ինչպես և իմը:

Աննան կանչեց ծառայիկն և հարկ եղած կարգադրութլուններն արեց, այնուհետև հրամայեց Իզաբոյիկն բերել մարգարիտները և որոշ թանկարժեք քարեր ու տվեց Ասկանիույին:

— Ես վերադարձնում եմ ձեր ազատութլունը,— ասաց նա:— Բայց երբ ձեր տկարութլունն անցնի, անմիջապես կզբաղվեք իմ շուշանով: Իսկ մինչ այդ մտածեք շուշանի մասին, խնդրում եմ, և հենց որ ճեպանկարը պատրաստ լինի, եկեք ինձ ցույց տալու:

— Եթե կամենում եք, կգամ:

— Գուցե չե՞ք ցանկանում, որ ես ծառայութլուն մատուցեմ ձեզ: Չէ՞ որ դուք իմ ցանկացածը կկատարեք: Ինչո՞ւ ես էլ չկատարեմ այն, ինչ դուք եք կամենում: Արդարև, սիրելիդ իմ Ասկանիու, ի՞նչ կցանկանայիք: Հիրավի, ձեր հասակում, որքան էլ աշխատես զսպել սրտի ձայնը, փախցնել աչքերը, սեղմել շուրթերը, միշտ ինչ-որ բան ցանկանում ես: Սակայն դուք, ըստ երևութլին, շեք հավատում իմ ազգեցութլանն ու գորութլանը, կարծում եք, որ ես անարժան եմ ձեր սրտակիցը դառնալ:

— Ես գիտեմ, տիկին,— պատասխանեց Ասկանիուն,— որ դուք, ըստ արժանվույն, մեծազոր եք: Բայց մարդկային ուժերից վեր է իմ վիշտն ամոքելը:

— Եվ, այնուամենայնիվ, պատմեք ինձ ամեն ինչ,— ասաց դքսուհի դ՛էտամպը:— Ես այդպես եմ կամենում:— Եվ հմայիչ ժպիտով, որը կերպարանափոխեց թե՛ նրա դեմքը, և թե՛ ձայնը, ավելացրեց.— Ես աղաչում եմ:

— Ավա՛ղ, ավա՛ղ տիկին,— բացականչեց Ասկանիոն, որի հոգին լի էր թախծով:— Ավա՛ղ: Չէ՞ որ դուք այնքան բարի եք իմ նկատմամբ, ու հիմա մենք կբաժանվենք, և ես կթաքցնեմ ձեզնից իմ խայտառակությունն ու արցունքները: Ահա թե ինչու եմ դիմում ոչ թե դքսուհուն, ինչպես կանեի երեկ, այլ կվստահեմ կնոջը: Երեկ ես կասեի ձեզ, ես սիրում եմ Կոլոմբային ու երջանիկ եմ... Այսօր ասում եմ ձեզ. Կոլոմբան չի սիրում, և ինձ մնում է միայն մեռնել: Մնաք բարով, տիկին, խղճացեք ինձ:

Ասկանիոն արագ համբուրեց ընկճված ու անխոս տիկին դ'էտամպի ձեռքը՝ և դուրս վազեց:

— Մրցակցուհի, մրցակցուհի՛,— մրմնջաց Աննան, ասես քնից արթնանալով:— Բայց նա չի սիրում Ասկանիոնին, և Ասկանիոն կսիրի ինձ. ես այդպես եմ ցանկանում... Այո՛, այո՛, երգվում եմ, նա կսիրի ինձ, և ես կսպանեմ Բենվիենուտոյին:

ԳԼՈՒԽ ՏԱՄԵՉՈՐՍԵՐՈՐԴ

Որտեղ խոսվում է այն մասին, որ մարդկաչին կյանքի էությունը տառապանքն է

Թող ների մեզ ընթերցողը, որ այսպիսի դառնությունք ու շուտահատությունք է համակված վերնագիրը: Բայց իրականում այս գլուխը, պետք է խոստովանել, պատմում է հոգեկան տառապանքների մասին, որոնցով լի է կյանքը: Այս միտքը նոր չէ, ինչպես կասեր ինչ-որ վոգելիլի ինչ-որ գործող անձ, բայց մեզ համար մխիթարական է, քանզի կարող է ներողամիտ դարձնել ընթերցողին, որին մենք կտանենք, ինչպես Վերդիլիոսն էր տանում Դանթեին, տառապանքի սողիով:

Եվ թող համեմատության համար շնեղանան մեզանից ո՛չ ընթերցողը, ո՛չ Վերդիլիոսը:

Հիրավի, այն ժամանակ, որի մասին հիմա պատմելու ենք, մեր բարեկամները, սկսած Բենվիենուտոյից մինչև Ժակ

Օբրին, շատ տխուր էին, և մենք շուտով կտեսնենք, թե ինչպես վիշտը մակընթացության նման կամաց-կամաց կկլանի նրանց բոլորին:

Մենք բաժանվեցինք Չելլինիից այն պահին, երբ նա անհանգստանում էր Ասկանիոյի ճակատագրի համար: Նեւի Մեծ ամրոց վերադառնալով, նա, հավատացնում եմ ձեզ, արդեն չէր էլ մտածում զայրացած դքսուհու մասին: Նրա բոլոր մտքերը կենտրոնացած էին իր սիրելի հիվանդ պատանու վրա: Այդ պատճառով մեծ էր ձրա ուրախությունը, երբ դարպասը բացվեց, ներս թողնելով պատգարակը, և Ասկանիոն թեթևորեն գետնին ցատկելով՝ մոտ վազեց նրան, սեղմեց ձեռքն ու սկսեց հավատացնել, որ ինքը հիմա լիովին առողջ է:

Բայց Բենվենուտոն նրա առաջին իսկ բառերից մռայլվեց և պատանու պատմությունը լսում էր ինչ-որ տարօրինակ, վշտալից արտահայտությամբ:

— Ուսուցիչ, ես ցանկանում եմ հերքել մի անարդարացի մտահանգում և գիտեմ, որ դուք շնորհակալ կլինեք դրա համար ու ամենևին չեք բարկանա: Դուք սխալ կաբժիք եք կազմել տիկին դ'էտամպի մասին, նա ո՛չ արհամարհանք ունի ձեր նկատմամբ, ո՛չ էլ ատելություն. ընդհակառակը, նա հարգում է ձեզ ու հիանում է ձեզնով: Եվ, ճիշտն ասած, դուք պարզապես կոպտաբար վարվեցիք նրա հետ՝ կնոջ և դքսուհու: Ուսուցիչ, տիկին դ'էտամպը ոչ միայն գեղեցիկ է աստվածունու նման, նա բարի է ինչպես հրեշտակ, համեստ է ու հուզավառ, հասարակ է ու մեծահոգի, նրբանկատ է ու խելոք: Այն արարքը, որը դուք այս առավոտ համարեցիք ծայր աստիճան վիրավորական, պարզապես երեխայական շարաճճիություն էր: Եվ ես խնդրում եմ ձեզ, չէ՞ որ դուք չեք սիրում անարդարություն, հանուն ինձ, քանզի նա ընդունեց ինձ ու հոգ տարավ իմ մասին այնպիսի սրտաշարժ սիրալիրությամբ, մի՛ համառեք, մի՛ վերաբերվեք նրան անարդարացի արհամարհանքով: Երաշխավորում եմ, որ առանց դժվարության դուք կստիպեք նրան մոռանալ այդ ամենը: Բայց դուք լռո՞ւմ եք, թանկագին ուսուցիչ: Դուք տարուբերում եք ձեր գլուխը: Դուցե նեղացա՞ծ եք:

— Լսիր, զավակս,— լրջորեն պատասխանեց Բենվենուտոն:— Ես հաճախ ասել եմ քեզ, որ իմ կարծիքով անմահական գեղեցկութիւնն, անմահական երիտասարդութիւնն և բեղուն ուժ ունի միմիայն աստվածային արվեստը: Սակայն ես հավատում եմ, ես գիտեմ, ես հուսով եմ, որ ոմանց քնքուշ հոգիներում ծաղկում է իսկական, խոր սեր, որը կարող է երջանկացնել մարդուն ամբողջ կյանքի ընթացքում. բայց դա հազվագեղ է լինում: Ի՞նչ է սովորական սերը: Թեթև հափշտակութիւնն, ուրախ միութիւնն, որի մեջ տղան և աղջիկը խաբվում են և հաճախ՝ անկեղծորեն: Չէ՞ որ դու գիտես, Ասկանիո, ես սիրում եմ ծաղրել այդպիսի սերը. ես ծիծաղում եմ դրա հավակնութիւնների, դրա արտահայտութիւնների վրա: Ես չեմ շարախոսում, ոչ թվ ինձ, ճիշտն ասած, դուր է գալիս այդ սերը, որի մեջ, ինչպես մի կտթիլ ջրի, արտացոլվում են և՛ ուրախութիւնները, և՛ քնքութիւններ, և՛ խանդը՝ այն ամենը, ինչ կա մեծ, կրքոտ զգացմունքի մեջ, բայց մահացու վերք չի հասցնում: Ողբերգութիւնն դառնա, թե կատակերգութիւն, մեկ է. անցնում է ժամանակը, և մտաբերում ես այն, ինչպես մի թատերական ներկայացում: Ավելացրու, Ասկանիո, որ այդ բոլոր անհաստատ միութիւնները միանման են և դրանց հիմքը լիովին բավարարում է նկարչին. դա ձեռք երկրպագութիւնն է, մաքուր գեղեցկութեան պաշտամունք: Եվ այդ է նման սիրո մաքուր կողմը: Ահա թե ինչու ես, թեև ծաղրում եմ, բայց չեմ զրբւարտում այդպիսի սերը: Բայց լսիր, Ասկանիո, գոյութիւն ունի և ուրիշ մի սեր, որը հարուցում է ոչ թե ծիծաղ, այլ՝ սարսափ. սոսկալի, խելացնոր, պատրանքի նման անիրազորժելի մի սեր:

«Տեր աստված,— մտածեց Ասկանիոն,— գուցե նա իմացել է Կոլոմբայի նկատմամբ ունեցած սիրուս մասին:

— Այդ սերը,— շարունակեց Չելլինին,— չի տալիս ո՛չ ուրախութիւն, ո՛չ երանութիւն, բայց համակում է քեզ լիովին, ամբողջապես: Դա վամպիր է, որը կաթիլ առ կաթիլ ձծում և ամբողջ արյունդ, դանդաղորեն խժռում է հոգիդ: Սերը անհաղթահարելի ուժով պահում է քեզ իր ճիրաննե-

րում և ազատվելն անհնարին է: Ասկանիո, Ասկանիո, վախեցիր այդ սիրուց: Տեսնում ես, որ այն ցնորք է, որ երջանկութիւն չի բերելու, բայց, այնուամենայնիվ, տրվում ես նրան ամբողջ հոգով, համարյա ուրախութեամբ զոհում ես ամբողջ կյանքդ:

«Հենց այդպես է որ կա: Նա ամեն ինչ գիտի»,— մտածեց Ասկանիոն:

— Թանկագին զավակս,— շարունակեց Բենվենուտոն,— եթե դեռևս ուշ չէ, կտրիր շղթաները, որոնք՝ կարող են ընդմիջտ կապել քեզ:

— Բայց ձեզ ո՞վ ասաց, որ ես սիրահարված եմ նրան,— բացականչեց Ասկանիոն:

— Փառք աստծո, եթե սիրահարված չես,— ասաց Բենվենուտոն, որը պատանու բացականչութիւնն ընդունեց որպէս ժխտում, թեև այն հարց էր միայն:— Եվ, այնուամենայնիվ, զգուշացիր, քանզի այս առավոտ ես նկատեցի, որ նա սիրահարված է քեզ:

— Այս առավո՞տ: Բայց ո՞ւմ նկատի ունեք: Ի՞նչ եք ուղում ասել:

— Ում նկատի ունե՞մ: Տիկին դ՛էտամպին:

— Տիկին դ՛էտամպի՞ն,— հարցրեց ապշահար աշակերտը:— Բայց դուք սխալվում եք, ուսուցիչ: Այդ պարզապէս անհնար է: Դուք ասում եք, որ նկատել եք, իբրև թե տիկին դ՛էտամպը սիրահարված է ի՞նձ:

— Ասկանիո, ես քառասուն տարեկան եմ, գլխովս շատ բան է անցել և ես ամեն ինչ գիտեմ: Այդ կնոջ քեզ ուղղված հայացքից միայն, նրա այդքան բարի ձևանալուց ես հասկացա, երգվում եմ, որ նա սիրահարված է քեզ. իսկ դատելով նրանից, թե հիմա ինչպիսի խանդավառութեամբ էիր պաշտպանում նրան, վախենում եմ, որ դու էլ սիրահարված լինես: Հասկանում ես, թանկագին Ասկանիո, դու կորած ես, եթե այդ այդպես է. սերը դեպի այդ կինը կայրի քո հոգին: Իսկ երբ անէանա, դու կմնաս տոանց պատրանքների, առանց հավատի, առանց հույսի և մոռացում կդտնես միայն նույնպիսի սիրո մեջ, ինչպես սիրել են քեզ՝ թունավորված

ու օրհասական, և կսկսես ամայացնել սրտերը, ինչպես քոնն են ամայացրել:

— Ուսուցիչ,— ասաց Ասկանիոն,— շգիտեմ, սիրահարված է ինձ արդյոք տիկին գ'էտամպը, բայց ես, անկասկած, չեմ սիրում տիկին գ'էտամպին:

Բենվենուտոն համոզվեց միայն կիսով շափ, շնայած Ասկանիոյի անկեղծութեանը, որովհետև մտածում էր, թե պատանին կարող է ինքն էլ մոլորութեան մեջ լինել: Այդ խոսակցութեանը նա այլևս չվերադարձավ, բայց մի քանի օր, հաճախակի, տխրորեն նայում էր իր աշակերտին:

Ի դեպ, պետք է ասել, որ նա կարծես այնքան էլ չէր անհանգստանում Ասկանիոյի համար: Թվում էր, թե նա լինել էլ ինչ-որ տանջալից հոգսեր ունի: Բենվենուտոն այլևս առաջվա պես կենսուրախ չէր, մոռացել էր իր կատակները, զվարճալի արարքները: Առավուտը նա անց էր կացնում ձուլարանի վերևում գտնվող իր սենյակում փակված և բոլորին արգելել էր մտնել այնտեղ ու անհանգստացնել իրեն: Մնացած ամբողջ ժամանակը նա աշխատում էր Մարսի հսկայական արձանի վրա՝ իր մշտական խանդավառութեամբ, թեև արձանի մասին չէր խոսում սովորական կրթութեամբ:

Մանավանդ Ասկանիոյի ներկայութեամբ նա թվում էր մոռալ, շփոթված, կարծես ամոթահար: Թվում էր, թե նա խուսափում է իր սիրելի աշակերտից, ինչպես խուսափում են պարտատիրոջից, կամ դատավորից: Եվ դժվար չէր նկատել, որ մեծ թախիծ ու լինչ-որ ուժասպառող կերք ծվարել է նրա գորեղ հոգում և ավերում է այն:

Ասկանիոն ավելի երջանիկ չէր. նա վստահ էր, ինչպես ասաց տիկին գ'էտամպին, որ Կոլոմբան չի սիրում իրեն: Խանդոտ երևակայությունը սլատկերում էր կոմս գ'Օրբեկին, որին նա ճանաչում էր միայն անունով, երիտասարդ ու նըրբագեղ աղնվական, իսկ մեսսեր գ'էստուրվիլի աղջկան՝ գեղեցիկ արիստոկրատ երջանիկ հարսնացու, որը չի էլ մտածում անհայտ նկարչի մասին: Եվ շնայած Ասկանիոն տարտամ ու վեհերոտ հույս էր տածում, որը երբեք չի լքում սիրով լի սիրտը, բայց ընդմիջտ փակեց իր երջանկության

Ճանապարհը, հայտնելով տիկին դ'էտամպին նրա ախոյանուհու անունը, եթե դքսուհին, իրոք, սիրահարված էր նրան: Գուցե դքսուհին կարող էր խափանել հարսանիքը, իսկ հիմա նա բոլոր ուժերով կսկսի շտապեցնել այն: Դքսուհին կատի խեղճ Կոլոմբային: Այո, Բենվենուտոն իրավացի էր. այդ կնոջ սերը սոսկալի է ու վտանգավոր, սակայն Կոլոմբայի սերը հավանաբար հենց այն վեհ, երկնային զգացմունքն է, որի մասին սկզբում ասում էր ուսուցիչը: Բայց երջանկությունն, ավաղ, վիճակված է ուրիշի...

Ասկանիոն հուսահատության մեջ էր. նա հավատաց տիկին դ'էտամպի բարեկամական կարեկցանքին, իսկ այդ կեղծ բարեկամությունը դարձավ նրա համար վտանգավոր սեր. նա հույս էր դրել Կոլոմբայի սիրո վրա, իսկ պարզվեց, որ այդ երևակայական սերը միայն սառը բարեկամություն է: Ասկանիոն պատրաստ էր առել երկուսին էլ. չէ՞ որ նրանք խարել էին իր երազանքները. նա ցանկանում էր, որ նրանցից ամեն մեկի զգացմունքն էլ այլ լինի:

Մոռյլ տրամության մեջ ընկնելով, Ասկանիոն չէր էլ մտածում շուշանի՝ տիկին դ'էտամպի պատվերի մասին, և խանդից դրդված որոշեց այլևս երբեք ոտք չդնել նեւի Փոքր ամրոցը, շնայած Թուպերտայի հորդորանքներին ու կշտամբանքներին, շնայած նրա հարցերի տարափին, որոնց նա նույնիսկ չէր պատասխանում: Սակայն երբեմն նա, այնուամենայնիվ, զղջում էր, որ այդպիսի որոշում էր ընդունել, թեև, իհարկե, շարաշար տանջվում էր միայն ինքը: Նա ցանկանում էր տեսնել Կոլոմբային, հաշիվ պահանջել նրանից, բայց ինչի՞ համար. սեփական անմիտ զառանցանքների՞: Իսկ եթե ինքը տեսներ Կոլոմբային, երբեմն մեղմանալով այդպես էր մտածում պատանին, ապա անպայման կխոստովաներ նրան իր սերը, կխոստովաներ ինչպես հանցագործ, և նա, որ այնքան բարի է, գուցե մխիթարեր նրան, սիոփեր նրա վիշտը: Բայց ինչպե՞ս բացատրել նրան իր երկարատև րացակայությունը, ինչպե՞ս արդարանալ ազջկա աչքում:

Ժամանակն անցնում էր, իսկ Ասկանիոն շարունակում էր անձնատուր լինել իր պարզամիտ, վշտալից խոհերին և չէր համարձակվում որևէ որոշում ընդունել:

Իսկ Կոլոմբան վախով և ուրախությամբ սպասում էր Ասկանիոյին այն ամբողջ օրը, որի նախօրերին տիկին Պերինան հուսախաբ արեց պատանուն, հայտնելով նրան գաղտնիքը: Բայց աղջիկը զուր էր հաշվում ժամերն ու րոպեները, տիկին Պերինան զուր էր ականջ դնում. Ասկանիոն, որը կարող էր օգտվել Կոլոմբայի սիրալիր թուլյությունից, այդպես էլ չհայտնվեց Ռուպերտայի ուղեկցությամբ, այդպես էլ չորս անգամ, ինչպես պայմանավորված էր, չբախեց Նելի Փոքր ամրոցի գուռը: Ի՞նչ էր նշանակում այդ:

Այդ նշանակում էր, որ Ասկանիոն հիվանդ է... գուցե մեռնում է, կամ թե այնքան վատ է զգում իրեն, որ գուցե չի կարող: Համենայն դեպս, այդպես էր մտածում Կոլոմբան: Ամբողջ երեկո, ծնկաչոք, նա արցունք էր թափում ու աղաթում, իսկ երբ դադարեց աղոթել, նկատեց, որ արցունքները դեռ շարունակում են հոսել այտերն ի վար: Այդ վախեցրեց նրան: Թախիծը, որ սեղմել էր նրա սիրտը, շատ բան էր ասում: Հիրավի վախենալու պատճառ կար. մի ամիս էլ չի անցել, իսկ Ասկանիոն այնպես է գրավել իր մտքերը, որ ինքը մոռացել է աստծուն, հորը, իր վշտերը:

Սակայն հիմա ինքն այդ մասին մտածել չի կարող: Չէ՞ որ Ասկանիոն այստեղ է, երկու քայլի վրա, նա հիվանդ է, նա մեռնում է, իսկ ինքը չի կարող տեսնել նրան: Կոլոմբան ի վիճակի չէր դատողություններ անել, նա ազատություն տվեց արցունքներին ու լաց էր լինում անղսպորեն: Երբ Ասկանիոն լավանա, ինքն ամեն ինչի մասին կմտածի:

Իսկ հետևյալ օրը գործն ավելի վատ ընթացք ստացավ: Տիկին Պերինան հետամտեց Ռուպերտային ու տեսնելով, որ վերջինս դուրս է գալիս, նետվեց դեպի դարսպասը նորությունների պաշար բերելու, որը շատ ավելի կենսական էր, քան՝ միևրքի պաշարը: Այդպես, ուրեմն, Ասկանիոն հիվանդ չէ. Ասկանիոն պարզապես չի ցանկանում գնալ Նելի Փոքր ամրոցը, նույնիսկ չի կամենում պատասխանել տիկին Ռու-

պերտային, որը հարցերի տարափ է տեղում նրա գլխին, և համառորեն լռում է:

Սրկու շաշանակները շփտեին, թե ինչ մտածեն: Իսկապես, նրանց համար այդ ամենն անհասկանալի էր:

Իսկ Կոլոմբան երկար շփնտրեց այդ հարցի պատասխանը. նա շուտով ամեն ինչ հասկացավ ու մտածեց. «Ասկանիոն ամեն ինչ գիտի: Նա տեղեկացել է, որ երեք ամիս հետո ես դառնալու եմ կոմս դ'Օրբեկի կինը և շի ցանկանում ինձ տեսնել»:

Սկզբում նա երախտագիտությամբ լցվեց սիրելի պատանու նկատմամբ նրա զայրույթի համար ու ժպտաց: Թող ընթերցողն ինքը բացատրի այդ ուրախության պատճառը. մեր գործը միայն անաչառ պատմությունն է: Բայց մի քիչ խորհելուց հետո բարկացավ Ասկանիոյի վրա. մի՞թե նա գլխի շի ընկել, որ ամուսնության միտքը հուսահատության է հասցրնում իրեն: «Ուրեմն, նա արհամարհում է ինձ»,— ինքն իրեն որոշեց աղշիկը: Այդ բոլոր անցումները՝ զայրույթից քնքշության, բավականին վտանգավոր էին. նրա անսովոր սիրտը պղտորվել էր: Կոլոմբան համոզում էր իրեն, թե տեսնել անգամ շի ցանկանում Ասկանիոյին, իսկ ներքին ձայնը կրկնում էր, որ նա սպասում է Ասկանիոյին, հուսալով արդարանալ:

Եվ նրան տանջում էր վախը, որ ինքը մեղքի մեջ է ընկել, տանջում էր սնպատասխան սիրո գիտակցությունը:

Բայց Ասկանիոն շփտեք նրա սիրո մասին, ինչպես նաև նրան հայտնի չէր մի ուրիշ սեր:

Մի կին էլ սիրում էր նրան և այդ կնոջ սերն առավել կրքոտ էր ու պահանջկոտ: Հետամուտ լինելով փոխադարձ սիրո, նա ծածուկ երազում էր երջանկության մասին, ինչպես ատելությունը հույս է փայփայում՝ երազելով վրիժառության մասին:

Տիկին դ'էտամպը չէր հավատում, չէր ցանկանում հավատալ Ասկանիոյի խորին զգացմունքը Կոլոմբայի նկատմամբ. «Նա իսկական երեխա է, ինքն էլ չգիտի, թե ինչ է ուզում,— պնդում էր նա:— Սիրահարվել է սուաջին պատահած սիրունատես աղջկան, դեմ է առել հիմար, պարծենկոտ

օրիորդի արհամարհանքին, և նրա հպարտութիւնը վիրավոր-
ված է: Օ՛, երբ նա կզգա, թե ինչ է փսկական սիրը՝ կրքոտ ու
անհողզող, երբ կիմանա, որ ես սիրում եմ իրեն... Ես՝ դքս-
սուհի դ'էտամպս, որի քմահաճույքներն օրենք են մի ամ-
բողջ թագավորութեան համար: Այո, թող նա իմանա այդ մա-
սին»:

Վիկոնտ դե Մարմանը և Փարիզի պրևոն նույնպես տանջ-
վում էին, տանջվում էին ատելութունից, ինչպես Աննան և
Կոլոմբան՝ սիրուց: Նրանք մահացու ռիսկալութեամբ էին
լցված Բենվենուտոյի նկատմամբ, նամանավանդ՝ Մարմա-
նը: Բենվենուտոյի պատճառով նրան արհամարհում ու ստո-
րացնում էր դքսուհին, Բենվենուտոյի պատճառով նա պետք
է քաջ ձեռնար, քանզի մինչև դ'էտամպ ամբողջում տեղի
ունեցած տեսարանը վիկոնտը կարող էր վարձու մարդաս-
պաններին հանձնարարել փողոցում արձանագործին սպա-
նել, իսկ հիմա ստիպված է ինքը կովի բռնվել նրա հետ,
նրա իսկ սեփական տանը և այդ մտքից միայն Մարմանը
դողում էր վախից. բայց մարդուն, որը զգացնել է տվել ձեր
վախկոտ ու ստոր լինելը, շես ներում:

Այդպես, ուրեմն, տանջվում էին բոլորը, նույնիսկ՝ Սկո-
ցոնեն, թեթևամիտ Սկոցոնեն. ծիծաղկոտ Սկոցոնեն այլևս
չէր ծիծաղում, չէր երգում, և նրա աչքերը հաճախ կարմրած
էին արցունքներից: Բենվենուտոն այլևս չէր սիրում նրան,
Բենվենուտոն հիմա միշտ սառն էր, իսկ երբեմն նույնիսկ
կոպիտ էր նրա հետ:

Խեղճ Սկոցոնեին հետապնդում էր սևեռուն մի միտք. նա
պարզապես խելքը կորցրել էր: Աղջիկն անսահմանորեն
ցանկանում էր ամուսնանալ Բենվենուտոյի հետ: Երբ Սկո-
ցոնեն բնակութիւն հաստատեց արվեստագետի տանը, վեր-
ջինս հարգանքով ընդունեց նրան, որպես օրինավոր կնոջ, և
ոչ թեթևամիտ գեղեցկուհու: Այդ անսպասելի հարգանքի ու
ընտրատեսված պատկառանքի շնորհիվ աղջիկն իսկույն
տանց սեփական աչքում և հանդեպ իր բարերարի լցվեց խո-
րին հրախառագիտութեամբ ու միամիտ հպարտութեամբ, որ
իրեն այդքան բարձր են գնահատում: Այդ օրից ոչ թե Չելլի-
նիի պահանջով, այլ նրա խնդիրքով, Սկոցոնեն ուրախու-

Յյամբ համաձայնեց բնորոշի լինել նրա համար և այնքան անգամ մարմնավորում գտա՞վ բրանզի, արծաթի, ոսկու մեջ, այնքան անգամ հիացան նրանով, որ աղջիկը միամտորեն իրեն վերագրեց վարպետի հաջողությունների կեսը: Սկոցոնեն ակամա կարմրում էր, երբ գովեստներ էին շոայլում արձանագործին, հիանալով այս կամ այն արձանի գծերի մաքրությամբ: Նա խեղճագահությամբ ներշնչում էր ինքն իրեն, որ պարզապես անհրաժեշտ է դարձել արձանագործի համար, որ առանց իրեն Բենվենուտոն չի կարող հուշակ ձեռք բերել, որ նրա փառքի մի մասը պատկանում է իրեն, ինչպես իրենն է նաև նրա սիրտը:

Խեղճ աղջիկ: Նա չգիտեր, որ նկարչի համար ինքը երբեք չի եղել այն սրբություն-սրբոցը, այն նվիրական աստվածուհին, որին գիժում է ամեն արվեստագետ և որը նրան ոտնդժագործող է դարձնում: Բենվենուտոն ընդօրինակում էր աղջկա կազմվածքը, նրա նրբագեղ կեցվածքները, իսկ աղջիկը ննթադրեց, թե արձանագործն ամեն բանով պարտական է իրեն և, հետզհետե ինքնավստահություն ձեռք բերելով, սկսեց հուսալ, որ կդառնա նրա կինը:

Սկոցոնեն ծածկամիտ չէր, զրա համար անկեղծորեն հայանեց իր հաժակությունները: Չելլինին լսեց նրան ամենայն լրջությամբ և պատասխանեց.

— Կապրենք, կանսնենք:

Իրականում նա կգերազասեր կրկին ընկնել Սուրբ Հրեշտակի ամրոցը և նույնիսկ մի անգամ էլ ջարդել իր ոտքը փախուստի ժամանակ: Այդ չի նշանակում, թե նա արհամարհում էր իր սիրելի Սկոցոնեին: Ընդհակառակը, նա քեղքորեն սիրում էր աղջկան և նույնիսկ մի քիչ խանգում էր, ինչպես արդեն տեսանք: Բայց Բենվենուտոն պաշտում էր միայն արվեստը և նրա ամենաառաջին խկական ու օրինակալակացված սիրուհին արձանագործությունն էր: Բացի դրանից, ամուսնախնայալ կարող էր մթազնել թափառաշրջիկ-զվարճասեր արձանագործի կյանքը: Ընտանեկան հոգուները կարող էին կսրժանել նրա տաղանդը: Ծվ, վերջապես, եթե նա ստիպված լիներ ամուսնանալ իր բոլոր բնորոշիչ

ների հետ, ապա ամենաքիչը հարչուր անգամ երկկնության կապանքների մեջ կլիներ:

«Ես փեսացու կգտնեմ Սկոցոնեի համար,— մտածում էր Բենվենուտսն,— սրևէ համակրելի պատանու. լավ օժիտ կտամ նրան: Այդպես ահա կիրականացնեմ Սկոցոնեի թուռն ցանկությունը. նա էլ բոլոր քաղքենուհիների նման երազում է կրել ամուսնու ազգանունը»:

Բենվենուտոն համոզված էր, որ Սկոցոնեի միակ ձգաու-մը ամուսնությունն է, բայց թե ով կլինի ամուսինը, ամե-նեին կարևոր չէ:

Իսկ մինչ այդ նա հնարավորություն տվեց փառասեր սղջկան փայփայել իր անիրականանալի երազները: Բայց Նե-լի Մեծ ամրոցը տեղափոխվելու օրից Սկոցոնեի բոլոր օդա-յին ամրոցները հօդս ցնդեցին. նա հիանալիորեն տեսնում էր, որ ինքն այնքան էլ պետք չէ Չելլինիին կյանքում, կամ ստեղծագործության մեջ, ինչպես ենթադրում էր. նրան չէր հա-ջողվում արախացնել արձանագործին, ցրել նրա ճակատը մթազնոզ տխրության ամպը: Բենվենուտսն սկսել էր մամից ծեփել Հերբին, սակայն բնորոշուհին Սկոցոնեն չէր ծվ, բացի այդ, մտածելն անգամ սարսափելի է, խեղճ աղջիկը փոր-ձեց կոկետություն անել Ասկանիոյի հետ Չելլինիի ներկա-յությամբ, և վարպետն աչքն անգամ չթարթեց, ոչ մի բա-նով չարտահայտեց ո՛չ զայրույթ, ո՛չ խանդ: Մի՞թե ստիպ-ված է լինելու հրաժեշտ տալ իր սքանչելի երազներին:

Իսկ Պագոլոյի մասին պետք է ասել, եթե ընթերցողի համար անհետաքրքրահան չէ թափանցել նրա հոգու մութ խորրերը, որ վերջին ժամանակներս նա դարձել էր առաջվա-նիստ ավելի մռայլ ու անմարդամտ:

Ընկերացողը, հավանաբար, կարծում է, թե մեր վաղեմի ծանոթը՝ զվարճասեր Ժակ Օրբին, ազատվել էր ցավի այդ րնդհանուր համաճարակից: Ոչ, նրան էլ բաժին հասավ այդ պանոսիտոններից: Ժակ Օրբին արագորեն մաշում էր զգե-ծոր, չէր խնայում այն (ավելի խնայում էր իր գրպանը), իսկ նստածույ գերձակը հրաժարվեց պարտքով հագցնել նրան:

Այդպես ուրեմն, մեր խեղճ բարեկամն անհաջողության

մատնովեց կենցաղային գործերում: Սակայն, բարեբախտաբար, ինչպես արդեն կարողացանք համոզվել, նա այն տարօրինակ մարդկանցից չէր, որոնք թթվում են անհաջողություններից: Շուտով Օբրին մի սքանչելի մխիթարանք գտավ, որի անունը ժերվեզա էր: Բայց աղջիկն ուշադրություն չէր դարձնում ժակ Օբրիի վրա, և վերջինս պարզապես հալումաշեղավ նրա սիրտը գրավելու միջոցներ փնտրելով: Նա համարյա ոչինչ չէր ուտում, չէր խմում, մանավանդ որ սրիկա պանդոկապանք, սրիկա դերձակի հորեղբոր որդին, շքանկացավ անվճար կերակրել նրան:

Այսպես, ուրեմն, բոլոր հերոսները, որոնց անունները հիշատակվել են այս պատմության էջերում, դժբախտ էին՝ սկսած թագավորից, որին անհանգստացնում էր այն միտքը, թե Կարլոս V-ը մտադիր է արդյոք անցնել Ֆրանսիայի վրայով, թե ոչ, մինչև տիկին Պերինան ու տիկին Ռուպերտան, որոնք բավական վշտացած էին շատախոսելու հնարավորությունից զրկված լինելու համար: Եվ եթե մեր ընթերցողները անտիկ Յուպիտերի նման ունենային մահկանացուների տրտունջներն ու գանգատները լսելու ոչ այնքան հաճելի իրավունքը, ահա թե տրտում ձայների ինչպիսի խմբերգ կլսեին:

Ժակ Օբրի— Երանի ժերվեզան դադարեք ծիծաղել ինձ վրա:

Սկոցոնե— Երանի Բենվենուտոն մի քիչ խանդեր ինձ:

Պագոլո— Երանի վարպետ Բենվենուտոն ատելի դառնար Սկոցոնեի համար:

Մարման— Երանի ինձ հաջողվեք հանկարծակիի բերել Չելլինիին:

Տիկին դ'Էտամպ— Երանի Ասկանիոն հասկանար, թե ինչքան եմ սիրում իրեն:

Կոլոմբա— Երանի գեթ մի բոպե տեսնեի նրան ու արգարանայի:

Ասկանիո— Երանի նա արդարանար:

Բենվենուտո— Երանի ուժ գտնեմ իմ մեջ ու հայտնեմ Ասկանիոյին տառապանքներիս մասին:

Բոլորը միասին— Ավա՛ղ, ավա՛ղ, ավա՛ղ:

ՂԱՌԻՆՍ ՏԱՍՆՆԻՆԳԵՐՈՐԴ

Այն մասին, թե ինչպես ուրախությունը փոխվում է վշտի

Այդքան բուռն արտահայտված բոլոր ցանկություններին վիճակված էր իրականանալ մինչև շաբաթվա վերջը: Սակայն ցանկությունների կատարումից հետո նրանք, ովքեր ձգտում էին դրան, դարձան առավել դժբախտ, ավելի վշտահար: Այդպես է օրենքը. ուրախության մեջ կան վշտի սաղմեր:

Այդպես, ուրեմն, ժերվեզան այլևս չէր ծիծաղում ժակ Օրբիի վրա: Եթե ընթերցողը հիշում է, այդ փոփոխության մասին էր ջերմորեն աղերսում ուսանողը: Հիրավի, ժակ Օրբին գտավ թալիսման, որը նվաճեց թեթևամիտ աղջկա սիրտը: Այդ թալիսմանը սքանչելի ոսկե մատանի էր, Բենվենուտոյի գործը, որը պատկերում էր երկու ձեռք՝ միացած իրար:

Հարկ է ասել, որ նեղի ամբողջի համար մղված մարտից հետո ժակ Օրբին մեծ համակրանքով լցվեց դեպի Փլորենցիացի արձանագործը, հիանալով նրա անկեղծությամբ ու անսպառ եռանդով: Եվ, ս՛վ զարմանք, նա չէր ընդհատում Բենվենուտոյին, երբ վերջինս խոսում էր: Նա նայում էր արձանագործին ու լսում հարգանքով, որին ոչ մի կերպ չկարողացան արժանանալ Օրբիի ուսուցիչները: Նա հիանում էր Չելլինիի ստեղծագործություններով և, շնայած արվեստի խոշոր գիտակ չէր, բայց խոսում էր անկեղծորեն, խանդավառությամբ: Իսկ Չելլինիին դուր եկավ ժակի անկեղծութունը, խիզախությունը և ուրախ բնավորությունը: Գնդակ խողալիս դպրոցականը կարող էր մի քանի թաս գինի գատարկել և իր ուժը շափել ցանկացած բաժակակցի հետ: Մի խոսքով, նա ու Բենվենուտոն մտերմագույն բարեկամներ դարձան, և արձանագործը (իսկ նա մեծահոգի էր, որովհետև գիտեր, որ իր հարստությունն անսպառ է) մի անգամ ստիպեց փակին բնծա ընդունել մի մատանի, որն այնքան վարպետորեն էր պատրաստված, որ կգայթակղեր Եվային, ինչ-

այես խնձորը գծուած յուն պցեց Թեախի և Պելևսի՝ հարսան-
յաց հանդեսին:

Այգ մատանին ժակ Օրբիի ձեռքից անցալ ժերվեզայի
ձեռքը, և վերջինս դադարեց ծաղրել գարոցականին, որը
ենթադրեց, թե աղջիկն այսուհետև պատկանում է իրեն:

Սկոցոնեի ցանկությունն էլ կատարվեց. նա Բենվենու-
տոյի սրտում բարբոքեց խանդի մի կայծ: Ահա թե ինչոյես
պատահեց այդ:

Մի անգամ երեկոյան, երբ Սկոցոնեն շատ կոկետութուն
անելուց ու շողոքորթութունից հետո շկարողացալ գրավել
Բենվենուտոյի ուշագրությունը, որը մնում էր անտարբեր ու
լուրջ, ինքն էլ գտող տեսք ընդունեց ու ասաց.

— Բենվենուտո, երևում է գուք շեք էլ մտածում իմ
նկատմամբ ունեցած ձեր պարտավորութունների մասին:

— Այգ ո՞ր պարտավորութունների, սիրելի փոքրիկ, —
հարցրեց Բենվենուտոն, նայելով առաստաղին, ասես այն-
տեղ փնտրելով նրա կշտամբանքների բացատրությունք:

— Բայց չէ՞ որ գուք հարյուր անգամ խոստացել եք
ամուսնանալ ինձ հետ:

— Ինչ-որ շեմ հիշում, — պատասխանեց նա:

— Չե՞ք հիշում:

— Ոչ: Ի դեպ, եթե շեմ սխալվում, ես ասացի. «Կապ-
րենք, կտեսնենք»:

— Եվ ի՞նչ: Դեռ ոչինչ չե՞ք տեսել:

— Տեսել եմ:

— Ի՞նչ եք տեսել:

— Որ ես դեռ չափազանց երիտասարդ եմ և ամուսնու
գերը ինձ չի սազում, Սկոցոնե: Մենք դեռ կվերագառնանք
այս խոսակցությանը:

— Իսկ ես, պարոն, այնքան էլ հիմար չեմ, և այլևս չեմ

1 Ըստ հունական դիցաբանության, երկպառակության աստվածուհի
էրիսը, որին չէին հրավիրել ծովերի աստվածուհի Թետիսի և Պելևս թա-
գավորի հարսանիքին, վրիժառության համար խրախճանքի սրահը նետեց
մի ոտկն խնձոր, որի վրա գրված էր «Ամենագեղեցիկին»: Դա պատճառ
գարձալ աստվածուհիների գժառության և, ի վերջո՝ Տրոյայի պատերազմի,
որը երգել է Հոմերոսը:

կարող բաժարարվել անորոշ խոստումով ու սպասել ձեզ ամբողջ մի դար:

— Վարվիր ինչպես կամենում ես, փոքրիկ: Եվ եթե շտապում ես, երջանկություն փնտրիր:

— Հասկանում եմ,— աշխուժորեն բացականչեց Սկոցոնենն ու հոնգուր-հոնգուր լաց եղավ:— Դուք շափազանց հրուշակված եք և շեք ցանկաձեռում ձեր անունք առ մի ոչնչություն՝ մի աղջիկ, որը տվել է ձեզ իր հոգին, իր կյանքը: Բայց չէ՞ որ նա հանուն ձեզ պատրաստ է կրել ամեն տառապանք, նա շնչում է միայն ձեզնով, սիրում է միմիայն ձեզ...

— Գիտեմ, Սկոցոնե, և հավատացնում եմ, որ անսահմանորեն շնորհակալ եմ քեզից:

— Նա ամբողջ հոգով կապված է ձեզ հետ, նա ուրախություն մտցրեց ձեր միայնակ կյանքի մեջ և երբեք ուշադրություն չի դարձրել հրաձիգների ու հերոզիների փայլուն հեծելախմբերին, չի լսել քնքուշ խոստովանություններ, իսկ դրանք քիչ չեն եղել, նույնիսկ այստեղ...

— Նույնիսկ այստե՞ղ,— ընդհատեց նրան Բենվենուտոն:

— Այո, այստեղ: Նույնիսկ այստեղ, լսո՞ւմ եք:

— Սկոցոնե,— բացականչեց Բենվենուտոն,— մի՞թե դա իմ ենթադրապաններից որեէ մեկն է:

— Եվ երկրպագուն կամուսնանար ինձ հետ, եթե ես յանկանայի,— շարունակեց Սկոցոնեն, կարծելով, թե Չելլինին զայրացավ իր նկատմամբ ունեցած քնքուշ զգացմունքների հորդումից:

— Սկոցոնե, պատասխանիր, ո՞վ է այդ սրիկան... Հուսով եմ, ո՞չ Ասկանիոն:

— Չէ՞ որ նա հարյուր անգամ կրկնում էր ինձ. «Կատերինա, ուսուցիչը խաբում է ձեզ, նա երբեք չի ամուսնանա ձեզ հետ, թեև դուք այնքան բարի եք ու այնքան գեղեցիկ: Նա շատ է գոռոզացել: Օ՛, եթե նա սիրեր ձեզ, ինչպես ես եմ սիրում, կամ եթե ինձ սիրեիր այնպես, ինչպես նրան եք սիրում...»

Անո՛ւնր, դավաճանի անո՛ւնր,— գազազած բացականչեց Բենվենուտոն:

— Միայն թե ես չէի լսում նրան,— շարունակեց ուրախացած Սկոցոնեն։— Ընդհակառակը, զուր էր նա մեղրածոր խոսքեր շոայլում։ Ծս նույնիսկ սպառնացի ամեն ինչ պատմել ձեզ, եթե նա շարունակի։ Ծս սիրում էի միայն ձեզ, ոչ ոքի չէի նկատում, և երկրպագուն իր նպատակին չհասավ։ Նրա քաղցր խոսքերն ու քնքուշ հայացքները ոչ մի բանի չհանգեցրին։ Խնդրեմ, ինչպես միշտ, ձևացեք, թե ձեզ համար ամեն ինչ միևնույնն է, թե դուք ինձ չեք հավատում։ Բայց չէ՞ որ այս բոլորը զուտ ճշմարտություն է։

— Չեմ հավատում քեզ, Սկոցոնե,— ասաց Բենվենուտոն, հասկանալով, որ այդ կերպ խոսելով միայն ամեն ինչ կիմանա։

— Ինչպես, դուք ինձ չե՞ք հավատում,— բացականչեց շվարած Սկոցոնեն։

— Չեմ հավատում։

— Չլինի՞ կարծում եք, թե ստում եմ։

— Կարծում եմ, որ մոլորության մեջ ես։

— Ուրեմն, ձեր կարծիքով, ինձ այլևս սիրել չի՞ կարելի։

— Ծս այդպիսի բան չասացի։

— Բայց մտածեցի՞ք։

Բենվենուտոն քմծիծաղ տվեց, որովհետև կռահել էր, թե ինչպես կարելի է բաց անել Կատերինայի լեզուն։

— Սակայն նա սիրում է ինձ, և դա զուտ ճշմարտություն է,— շարունակեց Սկոցոնեն։

Բենվենուտոն կրկին թերահավատորեն թոթվեց ուսերը։

— Այն էլ ինչպե՞ս է սիրում։ Ոչ ձեզ նման. դուք երբեք չեք կարող այդպես սիրել, օղ արեք ձեր ականջին, պարոն։ Բենվենուտոն քրքշաց։

— Հետաքրքիր է իմանալ, ո՞վ է այդ գեղեցիկ Մեդոորը¹։

— Նրա անունն ամենևին էլ Մեդոոր չէ,— պատասխանեց Կատերինան։

— Իսկ ի՞նչ է։ Ամադի՞ս¹։

— Ոչ, ոչ էլ Ամադիս։ Նրա անունը...

— Գալատ² է՞։

¹ Մեդոոր — գեղեցիկ պատանի, Արիոստոյի «Մոլեզին Ռուանդ» պոեմի գործող անձ։ Ամադիս — իսպանական ասպետական հռչակավոր վե-
232

— Պագոլո է նրա անունը, եթե այդքան ցանկանում եք իմանալ:

— Ա՛... Ուրեմն ինքը՝ պարոն Պագոլոն է,— մրմնջաց Չելլինին:

— Այո, ինքը՝ պարոն Պագոլոն,— հարտատեց Սկոցոնեն, վիրավորված Չելլինիի արհամարհական տոնից:— Սքանչելի տղա է, լավ ընտանիքից, պատվական, սուսուփուս, հավատացյալ և օրինավոր ամուսին կլինի:

— Դու համոզված ես դրանում, Սկոցոնե:

— Այո, համոզված եմ:

— Եվ նրան ոչ մի հույս չե՞ս տվել:

— Նույնիսկ ասածները լսել չէի ցանկանում: Օ՛հ, ինչքան հիմարն էի: Բայց հիմա արդեն...

— Իրավացի ես, Սկոցոնե, պետք է լսել նրան և պատասխանել:

— Ինչպե՞ս թե: Ինչ ասացի՞ք:

— Ասացի, որ պետք է լսել Պագոլոյի խոստովանությունները և շվանել նրան: Մնացածը՝ իմ գործն է:

— Այո, բայց...

— Մի անհանգստանա, ես պարզապես, մի բան մտածեցի:

— Ի՛նչ արած: Միայն թե, խնդրում եմ, շատ դաժանորեն չպատժեք խեղճ տղային. երբ նա ասում է. «Ես ձեզ սիրում եմ», ասես մեղքերն է խոստովանում: Եթե շատ եք ցանկանում, զվարճալի մի խաղ խաղացեք նրա գլխին, բայց սուսերը գործի շղնեք: Խնդրում եմ, խնայեք նրան:

— Դու գոհ կլինես իմ վրիժառությունից, Սկոցոնե, քանզի այն օգուտ կբերի քեզ:

— Այդ ինչպե՞ս:

— Այո, այդ վրեժխնդրության շնորհիվ կկատարվի քո ամենուցեքիմազին ցանկություններից մեկը:

Իրանով ի՛նչ եք ուզում ասել, Բենվենուտո:

— Այլ իմ գաղտնիքն է:

— Օ՛, եթե իմանայիր ինչքան ծիծաղելի տեսք է ունենում նա քնքուշ խոսքեր ասելիս, — շարունակեց շարահանձի Սկոցոնեն, որն ընդունակ չէր նույնիսկ հինգ բոպե անձնատուր լինել տխրությանը: — Այդպես, ուրեմն, շարասի՛րտ, ձեզ համար, այնուամենայնիվ, միևնույն չէ, սիրահետո՞ւմ են արդյոք ձեր ծիծաղկոտ աղջկան, թե ոչ: Դուք մի քիչ սիրո՞ւմ եք խեղճ Սկոցոնեին:

— Այո՛ Բայց տես հա, Պագոլոյի հետ քեզ պահիր ասածիս պես և ճշտությամբ կատարիր կարգազրույթուններս:

— Օ՛, հանգիստ եզեք, ես կարողանում եմ ձևանալ ուրիշներից ոչ վատ: Հենց որ նա սկսի իր հրզը երգել. «Ասացեք, Կատերինա, դուք առաջվա պես անսի՛րտ եք», — ես կպատասխանեմ. «Դուք նորի՞ց սկսեցիր, պարոն Պագոլո»: Բայց, իհարկե, ոչ այնքան բարկացած, ավելի շուտ նույնիսկ քնքորեն: Նա կտեսնի, որ ես հրաժարվել եմ նախկին խստությունից և կերևակայի իրեն կանանց սրտեր նվաճող... Իսկ դուք ի՞նչ եք անելու նրան, Բենվենուտո: Ինչպե՞ս եք վրեժ լուծելու: Երկա՞ր կձգձգվի այդ: Ամենայն հավանականությամբ շատ զվարճալի կլինի: Մեխք կծիծաղե՞նք:

— Կծիծաղենք, — ասաց Բենվենուտոն:

— Իսկ դուք ինձ առաջվա պես կսիրե՞ք:

Պատասխանի փոխարեն Չելլինին համբուրեց նրա ճակատը, իսկ դա ամենապերճախոս պատասխանն է, քանզի ոչինչ չի նշանակում և նշանակում է ամեն ինչ: Խեղճ Սկոցոնեն չէր կասկածում, որ Չելլինիի համբույրը նրա վրիժառության սկիզբն է:

Վիկոնտ դե Մարմանը, ինչպես ցանկանում էր, Բենվենուտոյին մենակ գտավ: Ահա թե ինչպես պատահեց այդ:

Պրևոյի զայրույթից սրտնեղած, տիկին դ'էտամպի արհամարհանքից նեղացած, իսկ գլխավորը՝ իր անհագ ազահությունից խթանված, վիկոնտը որոշեց հարձակվել առյուծի վրա նրա որջում, երկու վարձկան մարդասպանի օգնությամբ, և արշավանքի համար ընտրեց ուրր Էլիզայի օրը՝ ոսկերիչ ու արծաթագործ վարպետների միության տոնը, երբ նելի ամբողջը պետք է դատարկ լիներ: Եվ այդպես, նա քայլում էր առափնյա փողոցով, գլուխը բարձր պահած՝ սրտի տրոփյու-

նով. վարձկան մարդասպանները գնում էին նրա հետևից, տասը քայլ հեռավորության վրա:

— Ահավասիկ, — հնչեց մոտակայքում ինչ-որ մեկի ձայնը, — գեղեցիկ, երիտասարդ սենյորը գնում է սիրային տեսակցութեան. քաջ տեսքը դամայի համար է, իսկ երկու ուտիկանական պահնորդները՝ դամայի ամուսնու համար:

Մարմանը շրջվեց, մտածելով, որ կատակողն իր բարեկամներից որևէ մեկն է, բայց տեսավ անծանոթ մի մարդու, որը գնում էր նույն ուղղությամբ: Վիկտորը մինչև հիմա չէր նկատել նրան, այնքան կլանված էր իր մտքերով:

— Գրագ կգամ, սր շեմ սխալվել, սիրալիր կավալեր, — շարունակեց անծանոթը, մենախոսությունից անցնելով երկխոսության: Փողիս քսակը դնում եմ ձերինի գիմաց, շիմանալով նույնիսկ, թե մեջն ինչքան կա... Բայց ինձ համար գա կարևոր չէ... որ դուք գնում եք բախտ որոնելու Օ՞, լոնք, համեստ եզեք սիրո հարցում: Դա մեր պարտքն է: Իսկ իմ անունը ժակ Օբբի է, կոչումով ես ուսանող եմ. հիմա գնում եմ տեսակցության ժերվեզա Պոպինոյի հետ, շատ սիրունիկ մի ազգիա, որը, մեր մեջ առած, սոսկալի փշփշոտն է. բայց մատանին կակղեցրեց նրան: Ճիշտ է, այդ մատանին պարզապես հրաշք է: Հրաշք մատանի է, Բենվենուտո Չելլինիի ձեռքի գործը:

Մինչև այդ պահը վիկտոր գե Մարմանը համարյա չէր լսում հանդուգն շատախոսին և զգուշանում էր պատասխանել: Բայց Բենվենուտո Չելլինիի անունը լսելով, ականջները սրեց.

— Բենվենուտո Չելլինիի գործն է: Գրողը տանի: Չափազանց շքեղ նվեր է ուսանողի համար:

Դե, ինքներդ էլ հասկանում եք, հարգելի բարոն... Ի դեպ, ս՞ի կք դուք. բարոն, կո՞մս, թե՞ վիկտոր:

Վիկտոր, — շրթունքները կրծոսելով պատասխանեց Մարմանը. նրան զայրացնում էր ուսանողի անհարգալից, անպարկեշտ տոնը, բայց կամենում էր Չելլինիի մասին տեղեկություններ կորզել նրանից:

Ինչներդ էլ հասկանում եք, հարգելի վիկտոր, որ ես մատանին շեմ գնելու Ոչ, թեև հոգով արվեստագետ եմ, բայց

այդպիսի դատարկ բաների վրա փող չեմ ծախսում: Այդ մատանին ինձ նվիրել է Բենվենուտոն, ի նշան երախտագիտութեան. անցյալ կիրակի ես օգնեցի նրան խլել պրևոյից Նելի Մեծ ամբոցը:

— Ուրեմն, դուք Չելլինիի բարեկամն եք,— հարցրեց Մարմանը:

— Սրտակից բարեկամը, վիկոնտ, ու հպարտանում եմ դրանով: Եվ պետք է ասեմ, որ ցմահ կմնամ նրա բարեկամը: Դուք էլ, անկասկած, ծանոթ եք նրա հետ:

— Այո:

— Ինչպիսի՞ երջանկութիւն է ձեզ համար: Մեծ տաղանդ է, այնպես չէ՞, հարգելիս: Ներեցե՛ք, ես կոչեցի ձեզ «հարգելիս»... Ինչ արած, այդպիսի սովորութիւն ունեմ: Բացի այդ, ես էլ ազնվական եմ: Համենայն դեպս, այդպես էր ասում մայրիկս ամեն անգամ, երբ հայրս քոթակում էր նրան: Այդպես, ուրեմն, ինչպես ձեզ արդէն ասացի, ես մեծ Բենվենուտո Չելլինիի երկրպագուն եմ, հավատարմատարր, եղբայրացուն. հետևաբար նրա բարեկամների բարեկամն եմ, թշնամիների թշնամին, քանզի մեծ վարպետը թշնամիներ ունի: Եվ առաջնագույն թշնամին տիկին դէտամպն է, այնուհետև՝ Փարիզի պրևոն, այդ բթամիտը. նրա թշնամիներից է և ոմն Մարման, սոսկալի անճոռնի, լողլողի մեկը, դե դուք հավանաբար նրան ճանաչում եք... Ասում են նա ցանկանում է տիրանալ Նելի Մեծ ամբոցին. Թող փորձի միայն քիթը խոթել, գրո՛ղը տանի:

— Ուրեմն, Բենվենուտոյին հայտնի՞ են նրա գիտավորութիւնները,— հարցրեց Մարմանը, աշխուժորեն հետաքրքրվելով ուսանողի խոսքերով:

— Նրան նախազգուշացրել են, բայց... լռենք: Չխոսենք այդ մասին: Թող վերահիշյալ Մարմանն իր արժանի պատիժն ստանա:

— Ուրեմն, Բենվենուտոն անընդհատ զգա՞ստ է,— հարցրեց վիկոնտը:

— Չգա՞ստ: Դե նա միշտ զգաստ է: Քանի անգամ նրան ցանկացել են սպանել այնտեղ, հայրենիքում, բայց փառք աստծո, ամեն անգամ բարեհաջողութեամբ ազատվել է:

— Իսկ դուք ի՞նչը նկատի ունեք, երբ ասում եք, թե նա զգաստ է:

— Դե, իհարկե, ոչ այն, որ նրա տանը մի ամբողջ կայզոր կա, ինչպես այդ ծեր վախկոտի՝ պրևոյի տանը: Օ՛, ոչ, ոչ, ընդհակառակը, հիմա նա բոլորովին մեռնակ է. չէ՞ որ նրա բոլոր ենթավարպետները դնացել են Վանվր՝ զվարճանալու: Ես պատրաստվում էի դնալ հարգելի Բենվենուտոյի մոտ գնդակ խաղալու, բայց դժբախտաբար ժերվեզան դարձավ մեծ վարպետի մրցակցուհին և, ինքներդ էլ հասկանում եք, ես գերադասեցի ժերվեզային:

— Այդ դեպքում ես կփոխարինեմ ձեզ,— հայտարարեց Մարմանը:

— Հիանալի է, գնացեք նրա մոտ: Այդպիսի արարքն արժանի է գովասանքի: Գնացեք, հարգելի վիկոնտ, և ասացեք իմ բարեկամ Բենվենուտոյին, որ այս երեկո ես կայցելեմ նրան: Բացի այդ, բախեք դուռը երեք անգամ և այն էլ ուժգնորեն. այդպես ենք պայմանավորվել: Բենվենուտոն է այդպես որոշել՝ զգուշանալով լող-լող դե Մարմանից, որն անընդհատ ինչ-որ դավեր է նյութում նրա դեմ: Իսկ դուք չե՞ք ճանաչում այդ վիկոնտ դե Մարմանին:

— Չեմ ճանաչում:

— Է՛հ, ափսոս: Թե չէ կնկարագրեիք նրա արտաքինը:

— Չեր ինչի՞ն է պետք:

— Թե հանդիպի, ուրիշ երգ կերգեր: Հավատացեք, սիրելի վիկոնտ, ես այդ Մարմանի երեսն էլ չեմ տեսել, բայց ինքս էլ, շգիտեմ ինչու, պարզապես ատում եմ նրան: Եթե ձեռքս ընկներ, մի լավ կխրատեի... Բայց ներող եղեք, ահա մենք Օդոստինոսականների եկեղեցու մոտ ենք, և ես ստիպված եմ բաժանվել ձեզնից... հա, ի դեպ, ի՞նչ է ձեր անունը, հարգելիս:

Վիկոնտը հեռացավ, ասես հարցը չսելով:

Ա՛հ, — ծոր տվեց ժակ Օբրին, նրա հետևից նայելով: Աստ երևույթին, հարգելի վիկոնտ, դուք կամենում եք ձայնայտ մնալ: Եթե ես առհասարակ որևէ բան հառկանում եմ, ապա հենց սա է իսկական ասպետութունը: Չեր կամքն է. հարգելի վիկոնտ, ձեր կամքն է...

Եւ ժալ Օբրին, ձեռքերը գրպանները գրած, ինչ-որ երգ սուլելով առաջ շարժվեց ու թերվեց Վալկա փողոցը, որի ծայրին ապրում էր Ժերվեզան:

Իսկ վիկոնտ դե Մարմանը շարունակեց իր ճանապարհը դեպի Նելի Մեծ ամրոցը:

Եւ իրոք, ինչպես առում էր Օբրին, Բենվենուտոն տանը մենակ էր. Ասկանին թափառում էր ինչ-որ տեղ, ցնորքներով տարված, Կատերինան տիկին Ռուպերտայի հետ հյուղ էր դնացել ինչ-որ ընկերուհու մոտ, իսկ ենթավարպետները Վանվրում տոնում էին սուրբ Էլիզայի օրը:

Արձանագործն աշխատում էր այգում, Մարտի արձանի կավե հսկայական մողելի վրա, որի վիթխարի գլուխը վեր էր բարձրանում Նելի Մեծ ամրոցի տանիքներից, և թվում էր, թե դեմ-դիմաց զննում է Լուվրը, երբ Ճաստիկ Ժանը, որն այդ օրը պահակ էր կանգնած դռան մոտ, Մարմանի եռակի բախոցից խաբված, բարեկամի տեղ դրեց վիկոնտին և տարավ այգի երկու սրիքների հետ միասին:

Թեև Բենվենուտոն աշխատելիս գրահ չէր հաղնում, ինչպես Տիցիանը, սուկայն Սալվատոր Ռոզայի նման կողքին կախած ուներ սուսեր և մուշկետը ձեռքի տակ էր: Եւ Մարմանը տեսավ, որ Զելլինիի մոտ ներխուժելով, շատ բանի չի հասել. չէ՞ որ հանդիպել էր զինված մարդու:

Վիկոնտը վախեցավ, բայց, այնուամենայնիվ, փորձեց ծածկել վախը և, երբ Զելլինին առարկությունը շահնդուրժող, հրամայական տոնով հարցրեց, թե ինչո՞ւ է հայտնվել, և ահանդգնորեն հայտարարեց.

— Ես գործ շունեմ ձեզ հետ: Իմ անունը վիկոնտ դե Մարման է. ես թագավորի քարտուղարն եմ: Ահա և նորին մեծության հրամանագիրը, — ավելացրեց նա, հրովարտակր գլխավերևում բարձրացնելով, — որը բարեհաճել է շնորհել ինձ Նելի Մեծ ամրոցի մի մասը: Այդպիսով, ես եկել եմ կարգադրություններ անելու, որպեսզի ճաշակիս համեմատ կահավորեն ինձ հատկացված սենյակները, որտեղ այսուհետև ես ապրելու եմ:

Այդ ասելով, Մարմանը իր երկու պահակի ուղեկցությամբ շարժվեց դեպի ամրոց տանող դուռը:

Բենվենուտոն ճանկեց մուշկետը, որն ինչպես ասացինք միշտ ձեռքի տակ էր, և երկու ուսույունով հայտնվեց արտասանգուզքի վրա, դռան առաջ:

— Տեղից շարժվե՛լ,— գոռաց նա ամպրոպալից ձայնով, աջ ձեռքը պարզելով գեպի Մարմանը:— Եվս մի քայլ՝ և դուք սպանված կլինեք:

Վիկոնտը, իրոք, կանգ առավ, ասես մեխվեց տեղում, թեև, սկզբնական վարքագծից դատելով, ընթերցողը կարող էր սպասել արյունոտ մարտ:

Այո, կան մարդիկ, որոնք ահաբեկելու ընդունակութուն ունեն: Անբացատրելի սարսափ է ներշնչում նրանց տեսքը, հայացքը, շարժումները, ինչպես առյուծի տեսքը, շարժումները, հայացքը: Նրանց զայրույթը սոսկում է ազդում, իսկ ուժը զգում ես անմիջապես, առաջին հայացքից: Եթե այդպիսի մարդը քոքը վարկի գետնին, բռունցքները սեղմի, ոունգներն ուռցնելով հոնքերը կիսի, կտրիճներն անգամ կշփոթվեն: Երբ մանր գիշատիչների ոհմակը հարձակվում է մեծ գազանի վրա, բավական է, որ վերջինս մազերը փշաքաղի, ու մոնչա՝ և գազանիկները կսարսռեն: Մեր խոսքն ահեղ մարգիտնց մասին է: Քաշարիները գնահատում են նրանց ըստ արժանվույն, ու շնայած գաղտնի տազնապին, պատրաստ են իրենց դժը շափել նրանց հետ: Բայց թույլ մարդիկ, երկշոտ, վախկոտ, նրանց տեսնելով դողում են ու նահանջում:

Մարմանը, ինչպես արդեն հավանաբար գլխի է ընկել ընթերցողը, խիզախների թվին չէր պատկանում, իսկ Բենվենուտոն ահարկու էր:

Այդ պատճառով, երբ վիկոնտը լսեց ահեղ թշնամու ձայնը ու տեսավ, թե Բենվենուտոն ինչպիսի վսեմությամբ ձևորր կտրկառեց, հասկացավ, որ մուշկետը, սուսերը և գուշույնը չեն փրկի ո՛չ իրեն, ո՛չ էլ երկու թիկնապահին: Բայց այդ, ճատլիկ-ժանը, տեսնելով, որ վարպետը վտանգի մեջ է, ձեռքն առավ երկար նիզակը:

Մարմանը զգաց, որ խաղը տանուլ է տրված և մեծ բախտավորութուն կլինի, եթե հաջողվի օղջ-առողջ դուրս

զալ վտանգավոր դրութիւնից, որի մեջ ընկել էր իր կամքով:

— Լավ, լավ, մեասեր ոսկերիչ, — ասաց նա: — Մենք սյարզապես ցանկանում էինք իմանալ, թե դուք կենթարկվե՞ք արդյոք նորին մեծութեան հրամաններին: Դուք արհամարհում եք դրանք, չեք կամենում ի կատար ածել: Թող այդպես լինի: Մենք կղիմենք նրան, ով կստիպի ձեզ հպատակվել: Բայց մտքներովդ շանցնի, թե կբարեհաճենք մարտի բռնվել ձեզ հետ: Մնաք բարով:

— Գնաք բարով, — պատասխանեց Բենվենուտոն, շղթայելով սրտաբուխ, վարակիչ ծիծաղը: — Ժան, ճամփու դիր այս պարոններին:

Վիկոնտը և երկու սբիրը դուրս եկան նելի Մեծ ամրոցից. նրանք խայտառակված էին. երեքին վախեցրեց մեկը, իսկ ճամփու դրեց մի կաթնակեր:

Այդպիսով, ի խորին ցավ վիկոնտի, կատարվեց և Բենվենուտոյին տանը մենակ գտնելու նրա ցանկութիւնը:

Մեր քաջարի վիկոնտը դազազած էր. կյանքն ավելի դաժանորեն խարեց նրա ակնկալութիւնները, քան՝ Ժակ Օբրիի և Սկոցոննի, որոնք սկզբում նույնիսկ շնկատեցին ճակատագրի ամբողջ ծաղրը:

«Ուրեմն, տիկին դ'էտամպն իրավացի էր, — մտածում էր վիկոնտը, — և ես ստիպված կլինեմ հետևել նրա խորհրդին. հարկավոր է ջարդել սուսերն ու սրել դաշույնը: Ախր նա իսկական սատանա է: Նրա համբավն էլ հենց այդպիսին է: Անհամբեր մարդ է, կամակոր: Նրա հայացքն ինձ կտրուկ ու հասկանալի ասաց՝ մի քայլ ևս, և սպանված կլինես: Բայց երբ մարդ տանուլ է տալիս, հետո պետք է որ շահի. եո կվերադարձնեմ տանուլ տվածու: Զգուշացի՛ր, վարպետ Բենվենուտո, զգուշացի՛ր»:

Եվ նա սկսեց նախատել վարձկաններին՝ փորձված կրովողներին, որոնք պատրաստ էին յուրօրինակ ազնվութեամբ վաստակել խոստացած փողը՝ սպանել կամ սպանվել. նահանջելով, նրանք կատարեցին միայն իրենց տիրոջ հրամանը: Վարձկանները խոստացան, որ դարան մտած կաշ-

խատեն գործել ավելի հաջող, բայց Մարմանն իր պատիվը պաշտպանելով՝ ասաց, որ անհաջողութեան մեղավորը նրանք են և որ այս անգամ ինքը չի ընկերանա նրանց: Քող գործը գլուխ բերեն ինչպես կամենում են: Նրանց էլ հենց այդ էր պետք:

Այնուհետև, խորհուրդ տալով ձայն-ծպտուն շհանել այդ ամբողջ պատմութեան մասին, Մարմանը գնաց Փարիզի սյրևոյի մտտ ու ասաց, սր անվերադարձորեն որոշել է ավելի հաստատ գործ տեսնել և բոլոր կասկածները ցրելու համար, Բենվենուտոյի դատաստանը հետաձգել մինչև այն օրը, երբ վերջինս փողի զգալի մի գումար կամ իր թանկարժեք աշխատանքներից մեկը ձեռքին ընկնի խուլ, ամայի մի փողոց-խակ դա հաճախ է պատահում: Այդպիսով, բոլորը կհավատան, որ Բենվենուտոյին սպանել են կողոպտիչները:

Հիմա մեզ մնում է միայն իմանալ, թե տիկին դ'էտամպի, Ասկանիոյի և Չելլինիի ցանկությունների կատարումը ինչպիսի՞ ճախորդություններ բերեց նրանց:

ԳԼՈՒԽ ՏԱՍՆՎԵՑԵՐՈՐԴ

Արքունիքում

Մինչ այդ Ասկանիոն, ավարտեց շուշանի գծանկարը և հետաքրքրությունից դրդված կամ այն համակրանքից, որ դժբախտութեան մեջ ընկած մարդն զգում է դեպի իրեն կարեկցող հոգին, անմիջապես ճանապարհ ընկավ դ'էտամպ ամբոցր: Կեսօրվա ժամը երկուսն էր և օրվա այդ ժամին դրսուհին բազմել էր՝ շրջապատված պալատականների հիրտովի մի ամբողջ տարմով: Դ'էտամպ ամբոցի դռները միշտ բաց էին Ասկանիոյի առաջ, ինչպես Լուվրի դռները՝ Չելլինիի առաջ: Ասկանիոյին անմիջապես տարան ընդունարան, այնուհետև գնացին գքսուհուն գեկուցելու: Դքսուհին ցնցվեց ուրախությունից, մտածելով, որ կներկայանա երիտասարդին իր ամբողջ փայլով ու կիսաձայն ինչ-որ հրամաններ ավեց Իգարոյին: Եվ ահա Իգարոն բռնեց Ասկանիոյի ձեռքը,

նրա հետ դուրս եկավ միջանցք և, վարագույրը բարձրացնելով, կամացուկ առաջ հրեց պատանոն: Ասկանիոն հայտնրվեց ընդունելության սրահում, ամբողջի տիրուհու բազկաթոռի մոտ:

Գեղեցկուհի դքսուհին, ինչպես ասացինք, շրջապատված էր պալատականների խսկական շքախմբով: Նրա աջ կողմում նստած էր դուքս դե Մեդինա-Սիզոնիան, Կարլոս V-ի դեսպանը, ձախ կողմում՝ պարոն դե Մոնբրիոնը, թագավորի երկրորդ որդու՝ Կարլոս Օռլեանցու դաստիարակը: Մյուս ազնվականները տեղավորվել էին նրա ոտքերի մոտ, կիսաշրջան կազմած:

Այստեղ էին թագավորության ոչ միայն նշանավոր անձինք՝ զորավարներ, պետական գործիչներ, պաշտոնյաներ, արվեստագետներ, այլև քողոքականների պարագույնները, որոնց տիկին դ'էտամպը գազտնաբար հովանավորում էր. արքունիքում փայփայված այդ բոլոր ազնվականները դարձան ֆավորիտուհու պալատականները:

Տեսարանը փառահեղ էր և առաջին պահերին պարզապես շլացնում էր: Զրույցն աշխուժացնում էին ծաղր ու ծանակը դոֆինի ֆալսեթառուհու՝ Դիանա դե Պուատյեի հասցեին, որի նկատմամբ տիկին դ'էտամպը թշնամաբար էր տրամադրված: Աննան համարյա չէր մասնակցում այդ լեզվակովին՝ սրամտության վարժություններին և միայն երբեմն, ասես ի միջի այլս, այսպիսի գիտողություններ էր անում. «Բավական է, բավական է, պարոնայք, վերջ տվեք շարախոսել Դիանայի մասին, թե չէ տեսեք, էնդիմոնը՝ կզայրանա»: Կամ թե՛ «եեղձ տիկին Դիանան ամուսնացավ այն օրը, երբ ես ծնվեցի»:

Զրույցն ավելի լարված դարձնող այդ խայթոցները չհաշված, տիկին դ'էտամպը խոսում էր միայն իր երկու հարևանի հետ. խոսում էր շատ աշխուժորեն և բավականին բարձրաձայն, այդ պատճառով Ասկանիոն, բարձրաստիճան անձանց շրջապատում շվաբած, գլուխը կորցրած, կարող էր լսել նրան:

¹ Էնդիմոն (հուն. դիցար.) — զեղանի պատանի, որտեղ, աստվածուհի Սելենի (ըստ հռոմեացիների՝ Դիանա) սիրահարը: Դքսուհի դ'էտամպն օգտագործում է զուգադիպությունը Դիանա դե Պուատյեի անվան հետ:

— Այո, պարոն Մանրրիոն,— մտերմաբար ասում էր դեղանի դքսուհին իր ձախակողմյան հարեանին,— պետք է աշխատել, որ ձեր սանը դառնա փայլուն միապետ: Բանն այն է, որ ես է մեր ապագա թագավորը: Ես փառաօրեական երազանքներ ունեմ սիրելի ազաջի ապագայի վերաբերյալ և հիմա արդեն նրա համար նախապատրաստում եմ թագավորություն թագավորութեան մեջ՝ եթե աստված խլի մեզնից նրա հորը: Ենթադրենք Հենրիի II-ը (իսկ մեր մեջ ասած նա լիակատար ոչնչութիւն է) գահ բարձրացավ: Թող այդպես լինի: Տրանսիայի թագավորը կլինի մեր թագավորը, թեև նրա ավագ եղբորը մենք կտրամադրենք Դիանային ու Փարիզը: Բայց մենք մեր Կարլոսի հետ կտանենք Փարիզի ողին: Արքունիքը կլինի այնտեղ, որտեղ կլինեմ ես, պարոն Մոնրրիոն: Ես կտեղափոխեմ արևը. մեր շուրջը կհավաքվեն այնպիսի մեծ նկարիչներ, ինչպիսին է Պրիմատիչոն, այնպիսի սքանչելի բանաստեղծներ, ինչպիսին է Կլեման Մարոն... Ահա նա սուսուփուս քաշվել է մի անկյուն. բանաստեղծը հուզված է, իսկ դա ակնհայտ ապացույց է, որ նա յրանկանում է կարգալ մեզ համար իր բանաստեղծութիւնները: Այդ բոլոր մարդիկ հոգու խորքում ավելի շուտ փառասեր են, քան շահամուլ, ավելի շատ փափագում են փառք, քան փող, և նրանք նվիրված կլինեն ո՛չ առատաձեռն նվերների շնորհողին, այլ անդադրում իրենց գովերգողին: Իսկ ուա, ում այս մարդիկ նվիրված լինեն, կփառաբանվի, քանզի իրենց փայլով նրանք կչառափորեն իրենց փառքը պատրաստարող քաղաքը: ԴոՖինը սիրում է միայն մրցախաղեր... Թող այդպես լինի, տանք նրան նիզակներն ու սուսերք, իսկ ինքներս վերցնենք գրիչներն ու վրձինները: Օ՛, անհանգստանալու հարկ չկա, պարոն Մոնրրիոն, ես երբեք թույլ չեմ ստա, որպեսզի առաջնութիւնը տրվի Դիանային՝ գուցե և ապագա թագուհուն: Թող համբերատարութեամբ սպասի. բարտոված չէ, որ ժամանակն ու դիպվածը հանկարծ տիրակալութիւն բերեն նրան: Իսկ ես կարժանանամ թագավորական կրկնակի իշխանութեան... Ի դեպ, ի՞նչ կասեք Միլանի դքսութեան մասին: Այնտեղ դուք կլինեք ժնեի ձեր բարեկամ-

ներից սչ հեռու. ես գիտեմ, որ ձեզ խորթ չէ Գերմանիայում ծնունդ առած նոր ուսմանքը... Սը՛ս... մենք դեռ կվերադառնանք այս խոսակցութեանը և ես շատ բան կպատմեմ ձեզ. դուք կապշեք. ի՛նչ արած: Ինչո՞ւ տիկին Դիանան սկսեց հովանավորել կաթոլիկներին: Նա հովանավորում է, ես հակամարտում եմ, ուրիշ ոչինչ:

Այդ բառերն արտասանելիս տիկին գ'էտամպը հրամայական ժեստ արեց ու բազմանշանակալից հայացք նետելով, ընդհատեց իր գաղտնի խոստովանությունները, որոնք ապշեցրին Կարլոս Օրլեանցու դաստիարակին: Վերջինս ցանկանում էր պատասխանել, բայց դքսուհին արդեն շրջվել էր դեպի դուքս դե Մեդինա-Սիդոնիսան:

Մենք արդեն ասացինք, որ Ասկանիոն ամեն ինչ լսում էր:

— Ի՞նչ նորություններ կան, պարոն դեսպան,— ասաց տիկին գ'էտամպը,— կայսրը վերջապես որոշում ընդունե՞ց անցնել Ֆրանսիայով: Ճիշտն ասած, նա ուրիշ կերպ չի էլ կարող դուրս գալ դժվարին դրությունից. չէ՞ որ միշտ պետք է փնտրել ծանծաղ անցահուն: Նրա զարմիկը՝ Հենրիխ VIII-ը, առանց խղճի խայթի կբռնի նրան: Իսկ եթե նա դուրս պրծնի անգլիացիների ձեռքից, ապա կընկնի թուրքերի ձեռքը. ցամաքում նրան կկալանավորեն բողոքական թագավորները: Ուրիշ ելք չկա: Պետք է անցնել Ֆրանսիայով, կամ շատ բան զոհաբերել, հրաժարվելով ճնշել Գենտի բնակիչների՝ նրա սիրելի հայրենակիցների ապստամբությունը: Չէ՞ որ մեծն կայսր Կարլոսը Գենտի քաղաքացի է և դա ակնառու դարձավ այն ժամանակ, երբ նա առանց հավուր պատշաճի վարվեց նորին մեծության հետ: Կայսրն այժմ գործում է այդքան անվստահորեն ու զգուշ-լիթյամբ հենց այդ հիշողությունների պատճառով, պարոն դե Մեդինա-Սի՛, մենք նրան լավ ենք հասկանում: Նա վախենում է, որ Ֆրանսիայի թագավորը հանկարծ կարող է վրեժ լուծել իսպանական գերու համար և փարիզյան գերին հանկարծ

ստիպված կլինի վճարել էսկուրիալի՝ կալանավորի պարտք մնացած փրկագնի մի մասը: Օ՛հ, տեր աստված, թող շահահանգստանա: Եթե նույնիսկ Կարլոս V-ը չի հասկանում մեր սուպետական ազնվությունը, հուսով եմ, որ նա, համենայն դեպս, լսել է այդ մասին:

— Անշուշտ, տիկին, — պատասխանեց դեսպանը: — Մեզ հայտնի է Ֆրանցիսկ I-ի ազնվությունը՝ ինքն իր հետ լինելու պահին: Սակայն մենք վախենում ենք...

Դուքսը լռեց:

— Դուք վախենում եք խորհրդատուներից, այնպես չէ՞, — արձագանքեց դքսուհին: — Ահա՛ թե ինչ: Այո՛, այո՛, ես գիտեմ, որ սիրունատես կնոջ խորհուրդը, սրամտորեն և ուրախությամբ տրված խորհուրդն անպայման իր ազդեցությունը կունենա թագավորի կարծիքի վրա: Չեր գործն է մտածել այդ մասին, պարոն դեսպան, և նախազգուշական միջոցների դիմել: Բացի այդ, դուք, թերևս, անսահմանափակ լիազորություններ ունեք, իսկ եթե ոչ, ապա ունեք մաքուր թերթ, որի վրա շատ ու շատ բան կգետեղվի: Մենք լավ գիտենք, թե այդ ինչպես է արվում: Մենք ուսումնասիրել ենք դիվանագիտությունը, և ես նույնիսկ խնդրել եմ թագավորին ինձ դեսպան նշանակել: Իմ կարծիքով ես ակնհայտ հակում ունեմ դիվանագիտությամբ զբաղվելու: Ես շատ լավ հասկանում եմ, որ Կարլոս V-ի համար անշուփ ծանր կլինի տալ կայսրության մի մասը հանուն սեփական անձի ազատագրման, կամ հանուն իր անձեռնմխելիության: Մյուս կողմից, Ֆլամանդրիան նրա թագի լավագույն զարդերից մեկն է, որը մասնագույն է մնացել մորական տատից՝ Մարիա Բուրգունդացուց, և դժվար է դրչի մի շարժումով հրաժարվել նախնիների կարողությունից, մանավանդ, եթե այդ կարո-

Լսկուրիալ — պալատ և վանք, իսպանական թագավորների հանգստարանով, Մադրիդից ոչ հեռու, որի շինարարությունը սկսվել է Կարլոս V-ի օրոք՝ թագավոր Ֆելիպ II-ի օրոք, 1563 թ., այդ պատճառով Ֆրանցիսկ I-ը լեր կարող լինել «էսկուրիալի կալանավորը». այստեղ, վեպում, անհրաժեշտություն է թույլ տրված:

դությունը կարող է մեծ դքսությունից վերածվել ոչ մեծ միապետության: Բայց, տեր աստված, ինչո՞ւ եմ ասում այս ամենը: Չէ՞ որ քաղաքականությունն այնքան զզվելի է ինձ համար: Ասում են, որ քաղաքականությունից մարդ տգեղանում է: Խոսքն, իհարկե, կանանց մասին է: Ճիշտ է, ժամանակ առ ժամանակ ես առանց որևէ դիտավորության երկուերեք խոսք եմ ասում պետական գործերի մասին, բայց եթե նորին մեծությունը պնդում է, ցանկանում է ավելի խորը թափանցել մտքերիս մեջ, ես աղերսում եմ ազատել ինձ ձանձրալի խոսակցություններից, իսկ երբեմն նույնիսկ փախչում եմ, թողնելով նրան մտորումների մեջ: Դուք այնպիսի փոքրված գիվանագետ եք, այնքան լավ եք ճանաչում մարդկանց, որ կարող եք ասել, թե քամուն տված խոսքերը ծիլ են տալիս հենց թագավորի նման մարդկանց մտքերում, և քամին սպասածի հակառակ չի տանում այդ խոսքերը, որոնք համարյա միշտ ավելի մեծ ազդեցություն են գործում, քան ձանձրալի, երկար-բարակ շաղակրատանքները: Դուցե և այդպես է, պարոն դե Մեդինա, գուցե... չէ՞ որ ես ընդամենը մի թույլ կին եմ, պաշտում եմ զգեստներ, դարդեր, և դուք ինձնից հազար անգամ ավելի լավ եք գլուխ հանում կարևոր հարցերից. բայց երբեմն առյուծն էլ դիմում է մրջյունի օգնությանը, իսկ նավակը փրկում է խորտակվող նավի անձանակազմը: Չէ՞ որ ես և դուք ստեղծված ենք միմյանց հասկանալու համար, դուքս, և խոսքը միայն այն մասին է, թե ինչպե՞ս հասնել այդ փոխըմբռնմանը:

— Եթե դուք կամենաք, տիկին,— ասաց դեսպանը,— դա անմիջապես կկատարվի:

— Ողորմացողը չի սնանկանա,— շարունակեց դքսուհին, խուսափելով ուղղակի պատասխանեց:— Ունկնդրելով սրտիս ձայնին, ես միշտ խորհուրդ եմ տալիս Ֆրանցիսկ առաջինին կատարել վեհ, ազնիվ գործեր, բայց երբեմն սիրտս հակառակվում է բանականությանս: Հարկավոր է մտածել նաև օգուտի մասին, ինքնըստինքյան հասկանալի է՝ Ֆրանսիայի օգուտի: Բայց ես վստահում եմ ձեզ, պարոն Մեդինա, և խորհուրդ կանեմ ձեզ հետ: Ի դեպ, կարծում եմ, որ կայսրը,

ողջախոհ կվարվի, եթե վստահի թագավորի ազնիվ խոսքին:

— Ա՛խ, եթե դուք մեր կողմը լինեիք, տիկին, նա չէր տատանվի...

Վարպետ Կլեման Մարտ,— հանկարծ ընդհատեց դեսպանին դքսուհին, սաեա չսեւելով նրա բացականչութիւնները:— Վարպետ Կլեման, շնորհնեցի՞ք արդյոք որևէ նրբագեղ գովերգ, կամ հնչեղ ստեփան: Արդյոք մեզ համար որևէ բան չե՞ք արտասանի:

— Տիկին,— պատասխանեց բանաստեղծը,— բալոր սոնետներն ու գովերգները ծաղիկներ են միայն, որոնք բացվում են ձեր որանչելի աչքերի արևի տակ. դրանց նայելով, ես հենց նոր տասը տող հորինեցի:

— Մի՞թե, պարսն: Մենք լսում ենք ձեզ... Օ՛, մեծներ պրևո, ուրախ եմ ձեզ տեսնելու համար: Ծերեցեք, ես ձեզ չէի նկատել: Տեղեկութիւն ունե՞ք ձեր ապագա փեսայի՞ մեր բարեկամ կոմս Գ'Օրբեկի մասին:

— Այո, տիկին,— պատասխանեց մեծներ Գ'էստուրվիրը:— Նա տեղեկացնում է, որ կաճապարի վերադառնալ, և հուսով եմ, մենք շուտով կտեսնենք նրան:

Ինչ-որ մեկի սքստածմլիկ, խուլ հառաչանքը ստիպեց տիկին Գ'էտամպին ցնցվել, բայց նա, նույնիսկ հետ շնայելով, շարունակեց.

— Օ՛, շատ ուրախ կլինենք: Ահա և դուք, վիկոնտ Մարման: Ինչպե՞ս են ձեր գործերը. կիրառում գտա՞ք ձեր դաշույնի համար:

Ո՛չ, տիկին: Բայց ելքը գտա և հիմա գիտեմ, թե որտեղ ձեռք բերեմ այն, ինչ փնտրում եմ:

Հաջողութիւն եմ ցանկանում, պարոն վիկոնտ, հաջողութիւն եմ ցանկանում... Դուք պատրաստ եք, վարպետ Կլեման: Մենք ուշադրութեամբ լսում ենք:

Բանաստեղծութիւնն՝ նվիրված Գ'էտամպին,— հայտարարեց բանաստեղծը:

Լսվեցին հավանութեան շշուկներ, և բանաստեղծը սկսեց սեփեկթանրով արտասանել.

Տամպեն հեշտանքի հովիտ է ծաղկուն,
Մուսաների օֆևան, սիրո ծով-անհուն.
Գարուն ես բուրում դու մեր օրերում,
Ո՛չ Հելլադայի հեռու լեռներում.
Իշխում ես այստեղ, հայրենի երկրում,
Ուր տիրոջ բարձր քաջազոր՝ ուժով
Տեղափոխեց տառերը՝ դարձնելով
Տամպեն էտամպ, և նրան՝
Բոլոր սրտերի վսեմ տիրուհուն,
Հավերժահարսերի շքնաղ թագուհուն
Տվեց. դափնեպսակն իմաստության:

Տիկին դ'էտամպը ծափահարեց, ժպիտներ շռայլելով բանաստեղծին, իսկ նքանից հետո մյուսները նույնպես սկսեցին ծափահարել ու ժպիտներ շռայլել նրան:

— Սակայն,— արտասանեց դքսուհին,— ես տեսնում եմ, որ Տամպեի հետ Յուպիտերը Փրանսիա է տեղափոխել նաև Պինդարին¹:

Այդ խոսքերի հետ դքսուհին ոտքի ելավ. ոտքի կանգնեցին և մյուսները: Այդ կինը հիմք ուներ իրեն իսկական թագուհի համարելու: Դրա համար նա ձեռքի վեհապանձ շարժումով հասկացրեց ներկա գտնվողներին, որ ընդունելությունն ավարտված է, և պալատականները հեռանալով, խոր գլուխ էին տալիս ինչպես թագուհու:

— Մնացեք, Ասկանիո,— շնչաց նա:

Ասկանիոն հնազանդվեց:

Բայց երբ բոլորը հեռացան, երիտասարդի առաջ կանգնեց ոչ ամբարտավան ու գոռոզ տիրակալուհին, այլ հնազանդ ու սիրող կինը:

Ասկանիոն, անհայտության մեջ ծնված, բարձր հասարակութունից հեռու դաստիարակված, արհեստանոցի համարյա մենաստանային առանձնությանը սովոր, հազվադեպ հյուր պալատներում, որտեղ նա լինում էր միայն իր ուսուց-

¹ Պինդար (VI—V դ. մ. թ. ա.)— հին հունական պոետ, ժողովրդական տոնակատարությունների հանդիսավոր ներբողների հեղինակ

չի հետ, ապշած էր, շփոթված, կուրացած այդ ամբողջ փայ-
լից, այդ աշխուժութիւնից և այդ բոլոր խոսակցութիւն-
ներից: Նրա գլուխը պտտվեց, երբ լսեց, թե ինչպիսի պար-
զութիւնամբ, ասես կատակելով է խոսում տիկին դ'էտամպը
ապագայի այդքան կարևոր պլանների մասին և անբնական-
տորեն խաղում արքաների ճակատագրի և թագավորութիւն
բարօրութիւն հետ: Հենց հիմա, նրա աչքի առաջ, այդ կինը
նախախնամութիւն նման վշտի մեջ գցեց ոմանց, կամ
ուրախութիւն պարգևեց. միևնույն ձեռքով նա կարող էր
յնցեղ շղթաներն ու թագեր խլել: Եվ այդ կինը, որն ուներ
երկրային բարձրագույն իշխանութիւն, որն այդքան գոռո-
զաբար էր վարվում բարձրաստիճան շողքորթների հետ,
նայում է նրան ոչ միայն սիրող կնոջ քնքշութիւնամբ, այլև՝
անձնվեր ստրկուհու աղերսալից հայացքով: Եվ Ասկանիոն
հանկարծ հասարակ հանդիսատեսից դարձավ գլխավոր գոր-
ծող անձ:

Ի դեպ, դքսուհին, փորձված սլշրուհի լինելով, տպավոր-
ութիւն գործելու համար ամեն ինչ հաշվել ու հմտորեն
նախապատրաստել էր: Ասկանիոն զղաց ինչպես այդ կինը,
իր կամքից անկախ, ազդեցութիւն է ձեռք բերում եթե ոչ իր
սրտի, ապա՝ բանականութիւն վրա. բայց նա գեռ այնքան
մանուկ էր, որ ցանկանալով ծածկել հոգեկան խռովութիւնը,
զինվեց սառնութիւնամբ ու խստութիւնամբ: Գուցե նրան թվաց,
թե իր և դքսուհու միջև սահեց-անցավ անաղարտ Կոլոմբայի
ստվերը և նա տեսավ աղջկա սպիտակ շրջագգեստը, ոգե-
լրելիված դեմքը...

ԳԼՈՒԽ ՏԱՍՆՅՈՒԵՐՈՐԴ

Սեր—կիրք

Տիկին,— ասաց Ասկանիոն դքսուհի դ'էտամպին,—
հիշում եմ, դուք ինձ շուշան էիք պատվիրել: Գուք կարգադ-
րեցիք ավարտելուն պես բերել ճեպանկարը: Ես այսօր առա-
ջի սլան ավարտեցի. ոճավասիկ:

— Մենք դեռ ժամանակ կունենանք, Ասկանիտ,— շողորթ-թաթար, հրապուրիչ ժպիտով սրատառիանեց դքսուհին։— Դե՛ նստեք: Սիրելի հիվանդ, ինչպե՞ս է ձեր վերքը:

— Վերքս տպաքինվել է, տիկին,— ասաց Ասկանիտն:

— Ասի վերքն տպաքինվել է, խեղ աչտե՞ղ,— հարցրեց դքսուհին, ձեռքը դեղանազ ու քնքուշ շաքժումով պատանու սրտին դնելով:

— Աղաչում եմ ձեզ, տիկին, մտաօցեք իմ բոլոր դառանցանքները: Ես այնքան դժգոհ եմ ինձնից, որ ձանձրացրի ձեր գողարմատիկները:

— Ա՛խ, տեր աստված: Ինչա՞նչ այդպիսի անբնական տեսք, խոթողված ճակատ: Ինչա՞նչ այդքան խստաշունչ ձայն: Ձեզ ձանձրացրել են այս բոլոր մարդուկները, այնպես չէ՞, Ասկանիտ: Իսկ ե՞ս ինչ անեմ: Ես ատում եմ նրանց, նրանք զզվելի են ինձ համար, բայց վախենում եմ նրանցից: Օ՛, ինչպես էի ուզում որքան կարելի է շուտ մենակ մնալ ձեզ հետ: Դուք նկատեցի՞ք, թե ինչպես ճարպկությամբ ազատվեցի նրանցից:

— Իրավացի եք, տիկին: Ես՝ խեղճ նկարիչս, այդ բոլոր աղնվականների մեջ ինձ լավ չէի զգում: Չէ՞ որ ես եկել էի պարզապես շուշանը ձեզ ցույց առնու:

— Ա՛խ, տե՛ր աստված: Հետո ցույց կտաք, Ասկանիտ,— շարունակեց դքսուհին, գլուխը տարաբեքելով:— Ինչքան առտն եք, մռայլ, բայց չէ՞ որ ես ձեր բարեկամն եմ: Անցյալ անգամ դուք այնպես զվարթ էիք, այնպես սիրալիր: Ի՞նչն է այդ փոփոխության պատճառը, Ասկանիտ: Անկապած, ձեր ուսուցչի խրատները, որն ինձ տանել չի կարողանում: Եվ ինձ ուղղված նրա մեղադրանքներն ազդե՞լ են ձեզ վրա, Ասկանիտ: Դե՛, անկեղծ եղեք. դուք խոսել եք նրա հետ իմ մասին, չէ՞: Եվ նա ասել է ձեզ, որ ինձ վստահելը վտանգավոր է, որ իմ բարեկամության մեջ նենդություն կա: Իսկ զույցն ասել է, որ ես արհամարհո՞ւմ եմ ձեզ: Դե՛, պատասխանեք:

— Նա ասաց, որ դուք սիրահարված եք ինձ, տիկին,— սրատառիանեց Ասկանիտն, շեշտակիորեն նայելով դքսուհուն:

Տիկին գ'էտամպը լսեց բազմաթիվ հակասական մտքերն ճնշման տակ: Նա, իհարկե, ցանկանում էր, որ Ասկանիուն իմանա իր սիրտ մասին, բայց որոշել էր հեռզհետե հող նախապատրաստել և անտարբեր ձևանալ, գուրս կտրվել նրա սրտից սերը գեպի Կուլմբան: Այժմ, երբ նրա միտքը կռահել էին, նա կարող էր հաղթանակել միայն լիակատար անկեղծությամբ, բացահայտ մարտի մեջ: Եվ անմիջապես որոշեց այդպես էլ վարվել:

— Ինչ արած, այդ ճիշտ է,— ասաց նա:— Ես սիրում եմ քեզ: Մի՞թե դա հանցագործությունն է, կամ մուրբություն: Մի՞թե մենք ազատ ենք սիրու, կամ ատելության մեջ: Գուերքեք չէիք իմանա իմ սիրտ մասին: Ինչս' սիրտս բացե՞ք քո ասաջ, երբ դու սիրում ես ուրիշին: Բայց ուսուցիչդ, իմ գաղանփքը կռահելով, հայտնել է քեզ ամեն ինչ և լավ է արել, Ասկանիու: Նայիք սրտիս մեջ և կտեսնես այնպիսի անձնվեր պաշտամունք, որ անտարբեր մնալ շեռ կարող: Իմացիք, Ասկանիս, դու էլ պետք է սիրես ինձ:

Աննա գ'էտամպը՝ այդ ուժեղ, արտասովոր բնավորության տեր կինը լավ էր ճանաչում մարդկանց, արհամարհում էր իր շրջապատը, ձանձրույթից փառասեր էր և գեռ սչ ոքի չէր սիրել: Նա հրապարեց թագավորին, ծովակալ Բրիտնը ցնցեց նրա երևակայությունը, կոմս Լոնգվալը դուր եկավ նրան, բայց բանականությունը միշտ իշխում էր սրտի վրա: Եվ ոհա վերջապես նա առաջին անգամ զգաց, թե ինչ է սերը՝ ուժեղ, իսկական սերը, քնքուչ սե խոր, այդքան սպասված, բայց դեռևս չճաշակած: Սակայն պարզվեց, որ նա մրցակցունի ունի: Ինչ արած, ավելի վատ մրցակցունու համար: Մրցակցունին չգիտի, որ դքսունի գ'էտամպը անողոր է իր կրքի մեջ: Աննան իր սիրուն կտա ամբողջ կամքը, հոգու ամբողջ ուժը: Աղջիկը չգիտի, որ իրեն կործանում է սպասում, եթե մրցակցության մեջ մտնի գքսունու հետ՝ ամենակարող դքսունի գ'էտամպի, որը ոչ սքի չի՛ տա իր Ասկանիոյին: Չէ՞ որ նրա հայացքը, մի խոսքը, շարժումը ամենապոր եև ու կարող են խորթակել բոլոր խոշրնդոտները, որ բաժանում են նրան սիրելի պատանուց: Այդպես, ուրեմն,

վիճակը նետված է: Թագավորի Ֆավորիաուհու փառասիրությունը, գեղեցկությունը այսուհետև կծառայեն նրա սիրուն դեպի Ասկանիոն և խանդին՝ դեպի Կոլոմբան:

Իսկ խեղճ Կոլոմբան այդ պահին գուցե մանուկ էր... Գուցե նստած էր ասեղնակարի վրա խոնարհված, կամ ծունկի եկած ազոթում էր:

Իսկ Ասկանիոյին այդպիսի անկեղծ, վտանգավոր սերը՝ և՛ համայում էր, և՛ վախեցնում: Բենվենուտոն նախազգուշացրել էր նրան, և Ասկանիոն հիմա հասկացավ, որ դքսուհու զգացմունքը դատարկ քմահաճույք չէ. բայց պայքարի համար նրան պակասում էր ոչ թե ուժը, ո՛չ, նրան պակասում էր փորձը, որի օգնությամբ խաբում ու ենթարկում են թրշնամուն: Նա քսան տարեկան էր ու շափազանց ճշմարտասեր և չէր կարողանում ձևանալ: Խեղճ պատանին կարծում էր, թե Կոլոմբայի պատկերը, անմեղ աղջկա անունը զենք կլինեն իր համար դրոհի և պաշտպանության ժամանակ, վահան ու սուսեր կլինեն, բայց պարզվեց, որ, ընդհակառակը, նա ավելի խոր մխեց նետը տիկին դ'էտամպի սրտի մեջ, քանզի սերն առանց մրցակցության ու պայքարի, թերևս, շուտով կձանձրացներ նրան:

— Ի՛նչ արած, Ասկանիո,— ավելի խաղաղորեն ասաց դքսուհին, նկատելով, որ երիտասարդը լռեց, հավանաբար վախեցած նրա բառերից:— Մոռանանք իմ սերը: Շատ է անախորժ, որ խոսք բացվեց այդ մասին: Դրա պատճառը միմիայն ձեր անզգույշ Ֆրազն էր: Ավելի լավ է մտածենք ձեր մասին: Օ՛, ես սիրում եմ ձեզ անձնվիրաբար, երզվում եմ: Ես ուզում եմ լուսավորել ձեր կյանքը, ինչպես դուք լուսավորեցիք իմը: Դուք որք եք, թույլ տվեք մոր տեղ լինել ձեզ համար: Դուք լսեցիք իմ խոսակցությունը Մոնրրիոնի և Մեդինայի հետ և մտածեցիք, թե ես փառասիրությունից բացի ուրիշ զգացմունքներ չունեմ: Ճիշտ է, ես փառասեր եմ, բայց միայն հանուն ձեզ: Ո՞ր ժամանակվանից ետ սկսեցի երազել Իտալիայի կենտրոնում անկախ դքսություն ստեղծելու մասին: Այն օրից, երբ սիրեցի ձեզ: Եթե ես այնտեղ էլ թագուհի լինեմ, ո՞վ կդառնա իսկական թագավորը: Դո՛ւք:

Կայսրութիւնը, հանուն ձեզ, ես կդարձնեմ թագավորութիւն: Օ՛, դուք դեռ չեք ճանաչում ինձ, Ասկանիո, չգիտեք իմ բնավորութիւնը: Կարծեմ տեսնում եք, որ ես ասում եմ ձեզ զուտ ճշմարտութիւնը, բացում եմ ձեր առաջ բոլոր դիտավորութիւններս: Եվ դուք էլ, ձեր հերթին, խոստովանեք ինձ ամեն բան, Ասկանիո: Պատմեք ինձ ձեր երազանքները մասին, և ես ամեն ինչ կկատարեմ: Հայտնեք ինձ ձեր քահանայքները, և ես դրանց գերին կդառնամ:

— Տիկին, ես էլ ցանկանում եմ ձեզ նման անկեղծ լինել ու սրտաբաց, ուզում եմ հայտնել ձեզ ամբողջ ճշմարտութիւնը, ինչպես արեցիք դուք: Ես ոչինչ չեմ երազում, ոչինչ չեմ կամենում, ոչ մի բանի չեմ ձգտում՝ Կոլոմբայի սիրուց բացի:

— Բայց նա չի սիրում քեզ, դու ինքդ ասացիր ինձ այդ մասին:

— Այն օրը ես, իրոք, հուսալքվել էի: Բայց այսօր, ո՛վ գիտե...— Ասկանիոն աչքերը խոնարհեց ու կիսաձայն ավելացրեց.— Չէ՞ որ դուք սիրում եք ինձ:

Դքսուհուն ապշեցրեց այն առանձնահատուկ իմաստը, որ սիրահարված պատանին դրեց այդ բառերի մեջ, բնազդաբար կռահելով անվիճելի ճշմարտութիւնը: Կարճատև լուսնային տիրեց, և դքսուհին հասցրեց տիրապետել իրեն: Ես ասաց:

— Ասկանիո, այսօր շխտենք սիրո մասին. ես ձեզ խնդրեցի ու նորից եմ խնդրում: Բանն այն է, որ սերը չի լցնում ձեր՝ տղամարդկանց ամբողջ կյանքը: Մի՞թե դուք, որինակ, չեք երազել մեծարանքների, հարստութեան, փառքի մասին:

— Ո՛, այո, երազել եմ: Ահա արդեն մի ամիս է, ինչ տեսնում եմ այդ ամենը,— պատասխանեց Ասկանիոն, կրկին վերապատնալով իրեն տանջող մտքերին:

Նորից լուսնային տիրեց:

Դուք սիրո՞ւմ եք Իտալիան,— ջանք գործադրելով, հարցրեց Աննան:

Այո, տիկին,— պատասխանեց Ասկանիոն:— Այնտեղ ծաղկում են նորնջի ծառերը և դրանց տակ այնքան հաճելի

է զբուցելու Կապույտ երկնքի Ֆոնի վրա ավելի քեքուշ, ավելի գեղեցիկ են թվում որանշելի բնապատկերները...

— Օ՛, փախցնել քեզ այնտեղ, որպեսզի դու պատկանես ինձ, միմիայն ինձ: Լինել քեզ համար ամեն ինչ աշխարհում, ինչպես դու ես ինձ համար: Տե՛ր աստված, տեր աստված, — բացականչեց դքսուհին, մի պահ անզոր լինելով հաղթահարել իր դպացմունքը: Բայց մտածելով, որ կարող է վախեցնել Ասկանիոյին, կրկին տիրապետեց իրեն ու շարունակեց. — Իսկ ես կարծում էի, որ դուք ամենից շատ սիրում եք արվեստը:

— Ամենից շատ ես սիրում եմ նրան: Նրան եմ սիրում, — ասաց Ասկանիոն: — Ոչ թե ես, այլ իմ ուսուցիչ Չելլինին է ամբողջապես տրվում իր ստեղծագործութուններին: Հիացմունքի արժանի, մեծ, անգերազանցելի արվեստագետ է նա: Իսկ ես ընդամենը մի խղճուկ ենթավարպետ եմ: Եվ ես Չելլինիի հետ եկա Ֆրանսիա ոչ հանուն հարստության, ոչ հանուն փառքի, այլ միայն նրա նկատմամբ ունեցած սիրուց, որպեսզի շրջանվեմ նրանից, որովհետև այն ժամանակ նա էր իմ ամենահարազատը: Ես շունեմ սեփական կամք, չունեմ ինքնուրույնութուն: Ես ոսկերիչ դարձա նրան գոհացնելու համար, որովհետև այդ էր նրա կամքը: Հանուն նրա ես դրվագիչ էլ դարձա. չէ՞ որ նա հիանում էր դրվագիչների նուրբ ու գեղանի աշխատանքով:

— Ուրեմն լսիր, — ասաց դքսուհին: — Ապրել Իտալիայում, լինել ամենազոր, համարյա թագավոր, հովանավորել նկարիչներին ու առաջին հերթին՝ Չելլինիին, պարգևել նրան բրոնզ, արծաթ, ոսկի՝ դրամահատման, ձուլման, ծեփի համար, իսկ գլխավորը՝ սիրել և սիրված լինել: Ասա, Ասկանիո. մի՞թե դա դժայելի երազանք չէ:

— Դրախտ է, տիկին, եթե ինձ հետ լինեիր սիրելի ու ինձ սիրող Կոլոմբան:

— Նորից Կոլոմբա, մի՛շտ Կոլոմբա, — բացականչեց դքսուհին: — Թող այդպես լինի, քանի որ անընդհատ, համառորեն նրան է վերագառնում մեր խոսակցութունը, նրան է ձգտում քո հոգին, քանի որ Կոլոմբան երբորդե է մեր զբույցի մեջ, քանի որ նա անընդհատ կանգնած է աչքիդ առաջ,

սրտիդ միակ տիրուհին է: Խոսենք նրա մասին և իմ մասին անկեղծորեն, առանց կեղծիքի: Նա չի սիրում քեզ, և դու շատ լավ գիտես այդ:

— Օ՛, ոչ, արդեն չդիտեմ, տիկին...

— Բայց չէ՞ որ ես ամուսնանում է ուրիշի հետ,— գռչեց դքսուհին:

— Ո՛չ, հայրն է հարկադրում նրան,— առարկեց Ասկանին:

— «Հայրն է հարկադրում»: Եթե դու սիրեիր ինձ, ինչպես նրան ես սիրում, ու եթե ես նրա տեղը լինեի, մի՞թե աշխարհում գոյութուն կունենար այնպիսի մի ուժ, այնպիսի կամք, իշխանություն, որը բաժաներ մեզ միմյանցից: Ես ամեն ինչ կթողնեի, ամեն ինչից կհրաժարվեի, վազելով կգայի քեզ մոտ, քո ձեռքը կտայի իմ սերը, պատիվը, կյանքը: Ո՛չ, ո՛չ, հավատա ինձ, նա չի սիրում քեզ: Եվ դեռ ավելին՝ դու ինքդ էլ չես սիրում նրան:

— Այդ ե՞ս չեմ սիրում: Չեմ սիրում Կոլոմբայի՞ն: Դուք, հավանաբար, սխալվեցիք, տիկին:

— Ոչ, դու չես սիրում նրան: Դու խաբված ես: Քո հասկում սիրելու փափազը սիրո տեղ են դնում: Եթե դու առաջինը ինձ տեսած լինեիր, կսիրեիր ոչ թե նրան, այլ՝ ինձ: Օ՛, պաակերացնում ես, որ այն ժամանակ դու կարող էիր ինձ սիրել: Ի դեպ ոչ, ոչ... Ես դերադասում եմ քո քնտրյալը լինելու: Ես չեմ ճանաչում Կոլոմբային: Նա Գեղեցիկ է, նա անմեղ է, նա անտրջներից մարմնավորումն է, բայց քո Կոլոմբան չէր ասի քեզ այն, ինչ ասացի ես՝ արհամարհանքիդ արժանացածս: Նա շափազանց փառամուլ է, շափազանց դուստլ... Թերևս՝ շափազանց ամաչկոտ... Իսկ իմ սերն անպահույճ է ու խոտում է պարզ լեզվով: Դու արհամարհում ես ինձ, գտնում ես, որ մոռացության եմ տվել կնոջը վայել փարբողիծը և այդ ամենը նրա համար, որ ծածկամտություն չեմ տնում: Երբ դու ավելի լավ ծանոթանաս բարձրաշխարհիկ հասարակությանը, երբ ավելի խոր ճանաչես կյանքն ու ճաշակես նրա ամբողջ դառնությունը, կհասկանաս, թե ինչքան անարդարացի էիր ու կհիանաս ինձնով: Բայց ես

չեմ ցանկանում, որ ինձնով հիանան, ես ուզում եմ, որ ինձ սիրեն: Կրկնում եմ, Ասկանիո, եթե ես այսքան ուժգնորեն շահրեի քեզ, կսկսեի ստել, խորամանկել, կոկետություն անել. բայց ես սիրում եմ անսահմանորեն ու չեմ կարող հրապուրել քեզ: Ծս ցանկանում եմ ստանալ թո սիրտը որպես պարզի, ես չեմ ցանկանում զողանալ այն: Ի՞նչ կտա քեզ սերդ այդ աղջկա հանդեպ: Պատասխանիր: Տանջանք, սիրելիս, և ուրիշ ոչինչ: Չէ՞ որ ես կարող եմ շատ բանում օգնել քեզ: Նախ և առաջ ես տառապել եմ այնքան, որ, հույս ունեմ, աստված ողորմած կլինի ու իմ հաշվին կազատի քեզ տառապանքներից: Իսկ իմ հարստությունը, իմ իշխանությունը, իմ փորձը՝ այդ ամենը ես կշարտեմ ոտքերիդ տակ: Իմ կյանքը կմիաձուլվի քոնի հետ. ես հեռու կպահեմ քեզ սխալներից, ապականող ազդեցություններից: Հարստության և նույնիսկ փառքի հասնելու համար արվեստագետը հաճախ ստիպված է լինում ստորաբարշտություն անել, քծնել, նվաստանալ. ինձ հետ դու կարող ես շվախենալ դրանից: Ծս անդադար կբարձրացնեմ քեզ, սանդուղք կլինեմ հաջողության հասնելու համար: Ինձ հետ դու կպահպանես հպարտությունդ ու մաքրությունդ, Ասկանիո:

— Իսկ Կոլոմբա՞ն: Չէ՞ որ Կոլոմբան անաղարտ զոհար է:

— Երեխա՛, — պատասխանեց դքսուհին արդեն ոչ խանգավառությամբ, այլ՝ տխրորեն, — հավատա ինձ, ողջախոհ, անմեղ Կոլոմբան թո կյանքը կդարձնի ձանձրալի, միապաղաղ: Դուք երկուսդ էլ շափազանց երկնային եք. աստված ստեղծել է հրեշտակներին ոչ նրանց միացնելու համար, այլ վատ մարդկանց ավելի լավը գարձնելու:

Եվ դքսուհին այդ բառերն արտասանեց այնքան արտահայտիչ ու համոզված, այնպիսի անկեղծությամբ, որ Ասկանիոն ակամա քնքշություն ու կարեկցանք զգաց նրա նկատմամբ:

— Ավա՛ղ, տիկին, — ասաց նա, — ես տեսնում եմ, որ դուք շատ եք սիրում ինձ և խորապես զգացված եմ, բայց իմ սերն առավել սքանչելի է:

— Օ՛, որքան ճիշտ է դա: Որքան ճշմարիտ է թո ասածը:

Քս արհամարհանքը ես բարձր եմ դասում թագավորի ամենարնրուշ խոսքերից: Օ՛, ես սիրում եմ առաջին անգամ, առաջին անգամ կյանքումս, երդվում եմ քեզ:

— Իսկ թագավորի՞ն: Ուրեմն դուք չե՞ք սիրում թագավորին, տիկին:

— Ո՛չ:

— Բայց նա դեռևս սիրում է ձեզ:

— Տե՛ր աստված,— բացականչեց Աննան, սևեռուն նայելով Ասկանիոյի դեմքին ու սեղմելով նրա ձեռքերը:— Տե՛ր աստված, որքան երջանիկ կլինեի, եթե խանդերի ինձ: Քեզ համար անհաճո՞ է թագավորին մտաբերելը: Լսի՛ր, մինչև հիմա ես քեզ համար դքսուհի էի, հարուստ, վեհաշուք, ամենազոր, պատրաստ հանուն քեզ ցիրուցան անելու արքայական թագերը և տապալելու զահերը: Գուցե քեզ ավելի դուր կգտա աղքատ, հասարակ կինը, որն ապրում է միայնակ, հասարակութունից հեռու, համեստ, ճերմակ շրջագեստ հագած, դաշտային ծաղիկները մազերի մեջ: Գուցե նա քեզ ավելի՞ դուր կգա, Ասկանիո: Այդ դեպքում հեռանանք Փարիզից, թողնենք հասարակութունը, արքունիքը: Գնանք այստեղից, թաքնվենք քո Իսալիայի որևէ անկյունում, ծովամինչա սքանչելի սոճիների տակ, գեղատեսիլ Նեապոլիտանական ծոցի մոտ: Ես քոնն եմ, ես պատրաստ եմ գալ քո հետևից: Օ՛, Ասկանիո, մի՞թե հպարտութունդ չի շոյվում, որ ես հանուն քեզ զոհաբերելու եմ թագակիր սիրեկանիս:

— Տիկին,— պատասխանեց Ասկանիոն, զգալով, թե ինչպես է սիրտն ակամայից հալվում նրա մեծ սիրո կիզիչ հնուցում:— Տիկին, իմ սիրտը շատ հպարտ է ու շատ պահանջկոտ, դուք չեք կարող նվիրել ինձ ձեր անցյալը:

«Անցյալը»: Օ՛, ինչ դաժան են բոլոր տղամարդիկ: «Անցյալը»: Բայց մի՞թե դժբախտ կինը պետք է պատասխան տա իր անցյալի համար, երբ իրադարձությունները, հանգամանքները համարյա միշտ ուժեղ են նրանից: Պատկերացրու, որ մրրիկը քշի-տանի քեզ Իսալիա, անցնի մի տարի, երկու, երեք և դու վերադառնաս, մի՞թե զայրույթդ

կշարժի քո սիրելի Կոլոմբան, երբ իմանաս, որ նա հնազանդվել է ծնողների կամքին ու ամուսնացել կոմս դ'Օրրեկի հետ: Մի՞թե քեզ կզայրացնի նրա առաքինությունը: Մի՞թե կպատժես նրան, որ ենթարկվել է աստժո պատվիրաններից մեկին: Իսկ երևակայիր, որ քո պատկերը ջնջվի նրա հիշողությունից, ասես նա չի էլ ճանաչել քեզ, որ կարոտից տանջված, վշտից ընկճված, մի պահ աստժուց մոռացված, նա ցանկանա ճաշակել ուրախություն, դրախտ, որը սեր է կոչվում, որի դռները փակ են նրա առաջ, որ նա սիրի մի ուրիշին և ոչ ամուսնուն, որին անզոր էր սիրել, որ խանդավառ ինքնամոռացման ընթացքին նա իր սիրտը նվիրի ընտրյալին: Մի՞թե այդ կինը կոբած կլինի քո աչքում, անվանարկված՝ քո սրտում: Եվ նա երջանկություն հուսալու իրավունք չունի, որովհետև այլևս չի կարող սրտի փոխարենն տալ իր անցյալը: Օ՛, կրկնում եմ, սոսկալի անարգարություն է, սոսկալի դաժանություն...

— Տիկին...

— Ի՞նչ գիտես, գուցե դա իմ կյանքի պատմությունն է: Դե լսիր ինչ կասեմ և հավատա ինձ: Կրկնում եմ, իմ տանջանքները հերիք կանեին երկու մարդու: Այդպես, ուրեմն: Աստված ներում է տառապյալ կնոջը, իսկ դու չես ներում: Դու չես հասկանում, որ ավելի վսեմ, ավելի սքանչելի է անկումից հետո բարձրանալ անդունդից, քան անցնել անդունդի մոտով երջանկության քողն աչքերին ու շտեպնել այն: Օ՛, Ասկանիո, Ասկանիո: Իսկ ես կարծում էի, թե դու մյուսներից լավն ես, որովհետև ավելի երիտասարդ ես, որովհետև ավելի շքնաղ ես...

— Օ՛, տիկին...

— Տուր ինձ ձեռքդ, Ասկանիո, և ես կբարձրանամ անդունդից, կբարձրանամ մինչև քո սիրտը: Ցանկանո՞ւմ ես: Վաղն իսկ ես կխզեմ կապերս թագավորի, արքունիքի, բարձրաշխարհիկ հասարակության հետ: Օ, այո, սերն ինձ արիություն կտա: Եվ, բացի այդ, ես չեմ ցանկանում ավելի լավ թվալ, քան կամ, հավատա, ես քեզ մեծ զոհաբերություն չեմ անում: Այդ բոլոր մարդիկ քո մի հայացքը շարժեն: Բայց եթե լսես ինձ, թանկագին մանկիկ, ապա թույլ կտաս պահ-

ուանել իշխանութիւնս հանուն քեզ, հանուն քո ապագայի: Ես մեծազոր կդարձնեմ քեզ. շէ՞ որ դուք՝ բոլոր տղամարդիկ, սիրուց գնում եք դեպի փառք և վաղ թե ուշ փառամուկը դառնում: Իսկ թագավորի սերը թող քեզ շանհանգստացնի: Ես այնպես կանեմ, որ նա իր ուշադրութիւնը դարձնի ուրիշ կնոջ վրա և տա նրան իր սիրտը, իսկ ես կիշխեմ նրա բանականութեան վրա: Դե՛, ընտրիր, Ասկանիո, կամ դու իմ կամքով ու ինձ հետ կհասնես հզորութեան, կամ ես քո կամքով ու քեզ հետ կսայրեմ: Լսի՛ր: Քիչ առաջ ես նստած էի այս բազկաթոռին և դու դիտես, որ ամենահզոր ազնվականները ոտքերիս մոտ էին: Նստիր իմ տեղը, նստիր, ես այգայես եմ կամենում... Եվ ահա ես ոտքերիդ մոտ եմ. օ՛, ինչ լավ եմ զգում ինձ, Ասկանիո: Ի՛նչ երանութիւն է տեսնել քեզ, նայել դեմքիդ: Դու գունատվեցիր, Ասկանիո: Օ՛, ասա, որ երբեք... շեմ ասում հիմա և ոչ էլ ասողայում, բայց դու, այնուամենայնիվ, կսիրես ինձ:

— Տիկի՛ն, տիկի՛ն,— բացականչեց Ասկանիոն, դեմքը ձածկելով, ականջները թխմելով ու աչքերը փակելով, քանզի դպում էր, որ դքսուհու և՛ դեմքը, և՛ ձայնը հմայում են իրեն:

— Ինձ մի անվանիր տիկին, մի անվանիր Աննա,— ասաց դքսուհին, երիտասարդի ձեռքերն իրարից անջատելով:— Անվանիր ինձ Լուիզա: Դա իմ անունն է, բայց դեռ ոչ որ ինձ այդպես շի կոչել. միայն դու կիմանաս այդ անունը. Լուիզա, Լուիզա... Ասկանիո, շատ անուշ անուն է, այնպես շէ՞:

— Կա ևս մի անուն, շատ ավելի անուշ,— պատասխանեց Ասկանիոն:

Օ՛, զգուշացիր, Ասկանիո,— բացականչեց դքսուհին, վերափոքրված առյուծ հիշեցնելով:— Եթե քո պատճառով ևս սուրբաբոյն շատ տանջվեմ, թերևս կսկսեմ ատել քեզ նույնքան սովորական, որքան հիմա սիրում եմ:

Անտված իմ, տիկին,— ասաց երիտասարդը, գլուխը թափաւարելով, ասես կախարդանքը ցրելու համար:— Տե՛ր ստաւած, մտքերս իրար են խառնվել, հոգումս երկույտակաւթյուն է: Գուցէ երազի մե՞ջ եմ: Եթե նույնիսկ ինչ-որ շար

բան ասացի ձեզ, ներեցեք, ես պետք է ցրեի հմայքները: Դուք իմ ոտքերի մոտ եք, դուք՝ գեղեցկուհի, աստվածուհի, թագուհի: Այդպիսի դայթակղութունն ինձ ուղարկված է հոգուս կործանման համար: Այո՛, այո՛, դուք ինքներդ ասացիք, որ ընկել եք անդունդը: Իսկ հիմա ինձ եք քաշում այնտեղ: Դուք շեք բարձրանա և ցանկանում եք, որ ես էլ ձեր հետևից նետվեմ խորխորատը: Ես թույլ եմ, այդպիսի փորձության մի ենթարկեք ինձ:

— Այստեղ ո՛չ փորձություն կա, ո՛չ դայթակղութուն, ո՛չ երազատեսություն: Մեր առաջ սքանչելի իրականությունն է: Ես սիրում եմ քեզ, Ասկանիո, սիրում եմ քեզ:

— Դուք սիրում եք ինձ, բայց կզղջաք այդ սիրո համար: Երբեք դուք կկշտամբեք ինձ ձեր զոհաբերությունը հիշեցնելով, կամ կմեղադրեք, որ խորտակել եմ ձեր կյանքը:

— Ախ, դու շեռ ճանաչում ինձ,— բացականչեց դքսուհին:— Ես հոգով այնքան թույլ շեմ, որ զղջամ: Ուղո՞ւմ ես երաշխիք:

Եվ Աննան աշխուժորեն նստեց սեղանի առաջ, մոտ քաշեց թանաքամալն ու թուղթը, ձեռքն առավ գրիչը և հապշտապ գրեց մի քանի բառ:

— Ահա, վերցրու,— ասաց նա,— և սրանից հետո համարձակվիր շվստահել ինձ:

Ասկանիոն վերցրեց թղթի կտորն ու կարդաց.

«Ասկանիո, ես սիրում եմ քեզ: Արի ինձ հետ՝ իմ ճանապարհով, կամ թույլ տուր գալ քեզ հետ՝ քո ճանապարհով:

Աննա դ'Էյլի»:

— Օ՛, այդ անհնարին է, տիկին: Ինձ թվում է՝ իմ սերը կխայտառակի ձեզ:

— «Կխայտառակի՞»,— բացականչեց դքսուհին:— Բայց մի՞թե ինձ կարելի է խայտառակել: Ես շափաղանց հպարտ եմ դրա համար: Հպարտությունը հոգուս հատկութունն է:

— Ախ, ես գիտեմ ավելի քնքուշ, ավելի մաքուր մի հոգի,— ասաց Ասկանիոն:

Հարվածը անվրեպ խոցեց դքսուհու սիրտը. նա վեր թռավ գայրույթից զողալով:

— Դուք համառ ու դաժան երեխա եք, Ասկանիո,— բեկբեկուն ձայնով ասաց նա:— Ես ցանկանում էի, որ ազատվեք տառապանքներից, բայց տեսնում եմ, որ միայն վիշտը կսովորեցնի ձեզ ապրել: Դուք կվերադառնաք ինձ մոտ, Ասկանիո: Կվերադառնաք վիրավոր, արնաթաթախ, խոշտանգված և այն ժամանակ կհասկանաք, թե ինչ արժեք ձեր Կոլումբան և ինչ արժեք ես: Սակայն ես ներող կլինեմ, քանզի սիրում եմ ձեզ: Բայց իմացած եղեք, մինչ այդ տեղի կունենան սոսկալի իրադարձություններ: Ցտեսություն:

Եվ տիկին դ'էտամպլը, ատելությունք ու սիրով համակված, դուրս եկավ սրահից, մոռանալով, որ Ասկանիոյի ձեռքում մնաց ինքնամոռացման րոպեին զրած իր երկտողը:

ԳԼՈՒԽ ՏԱՍՆՈՒԹԵՐՈՐԴ

Սեր—անորջ

Հենց որ տիկին դ'էտամպլը դուրս գնաց, նրա հմայքի ուժը չքացավ, և Ասկանիոն ի մի բերեց այն ամենը, ինչ կակատարվում էր իր հոգում և իր շուրջը: Եվ նա մտաբերեց, թե ինչ ասաց տիկին դ'էտամպլին. գուցե Կոլումբան սիրում է իրեն, քանի որ սիրեց նույնիսկ դքսուհին: Եվ այսպես, այսուհետև նա արդեն ազատ չէր իր կյանքը տնօրինելու, քանզի սիրտը նրան լավ ծառայություն էր մատուցել, թելադրելով այդ միտքը, բայց ինքն անշրջահայեցորեն հայտնել էր այդ մասին դքսուհուն: Եթե անկեղծ ու շիտակ պատանին կարողանար խորամանկել, ամեն ինչ փրկված կլիներ, բայց նա կասկած գցեց չար ու ահեղ դքսուհու սիրտը: Պատերազմը հայտարարված էր, և դա առանձնապես սարսափեցնում էր սպտանուն, որովհետև սպառնում էր միայն Կոլումբային:

Ասկայն նրա և Աննայի միջև տեղի ունեցած բուռն ու վառագոյն տեսարանը որոշ օգուտ բերեց: Նա ինչ-որ զգրելու գրուց, ինքնավստահություն: Պատանու գիտակցությունը, նոր սպավորություններից ու հոգեկան վերելքից

բորբոքված, տենդագին աշխատում էր: Ասկանիոն պատ-
րաստ էր գործել և գործել խիզախորեն: Համարձակություն
ստանալով, նա որոշեց տեղեկանալ, թե կարո՞ղ է արդյոք
հուսալ, իսկ դրա համար պետք է թափանցել Կոլոմբայի
հոգին, եթե նույնիսկ այնտեղ հայտնաբերելու լինե՞ր մի-
միայն անտարբերություն: Եթե Կոլոմբան իրոք սիրում է
կոմս գ'Օրբեկին, ինչո՞ւ պայքարել տիկին դ'էտամպի դեմ:
Այդ դեպքում թող դքսուհին ինչ կամենում է անի իր խոռ-
վահույզ, մերժված, անսպասելի, կորած հոգու հետ: Ինքը
կդառնա մոռյլ, շար... Ինչ արած, այդ արդեն կարևոր չէ:
Բայց նախ և առաջ պետք է փարատել բոլոր կասկածները և
վճռականորեն ընդառաջ գնալ իր ճակատագրին: Այդ դեպ-
քում տիկին դ'էտամպի պարտավորագիրն իր ապագայի
երաշխիքը կլինի:

Ասկանիոն կշռագատեց այդ ամենը գետափով տուն վե-
րադառնալիս, աչքը չկտրելով մայրամուտի հրացուլքից, որի
Ֆոնի վրա սևին էր տալիս նեղի ամրոցը: Տանը, առանց հա-
պաղելու և վարանելու, վերցրեց մի քանի նրբագեղ զարդ-
քայլերն ուղղեց դեպի նեղի Փոքր ամրոցը և վճռականորեն
չորս անգամ բախեց դուռը:

Բարեբախտաբար, տիկին Պերինան հեռու չէր: Նա զար-
մացավ և, հետաքրքրությունից վառվելով, նետվեց դուռը
բացելու: Սակայն պատանուն տեսնելով, նա հարկ համարեց
սառը ընդունելություն ցույց տալ:

— Ա՛խ, այդ գո՞ւք եք, պարոն Ասկանիո,— ասաց նա:—
Ի՞նչ եք կամենում:

— Ես կամենում եմ, սիրելի տիկին Պերինա, ահա այս
զարդարանքներն անմիջապես ցույց տալ օրիորդ Կոլոմբա-
յին: Նա այգո՞ւմ է:

— Այո, զբոսնում է իր սիրած ծառուղում: Այդ ո՞ւր եք
գնում, երիտասարդ:

Ասկանիոն, որ լավ էր հիշում ճանապարհը, նետվեց այ-
գի, մոռանալով դուենյայի գոյության մասին:

«Ահա թե ինչ,— բացականչեց դուենյան և կանգ առավ,
այդ ամենը կշռագատելու համար:— Թերևս շարժե մոտենալ

նրանց: Թող Կոլոմբան ուզածն առնի թե իր համար և թե նվիրելու: Վայել չէ, որ ես այնտեղ լինեմ, չէ՞ որ նա, անկասկած, ինձ համար որևէ նվեր կընտրի: Ավելի լավ է հետո մտանամ, երբ ամեն ինչ գնած կլինի: Այդ ժամանակ, հասկանալի է, պարզապես անհարմար կլինի հրաժարվել նվերից: Ինչ ճիշտ է, ճիշտ է: Մնանք այստեղ ու շխանգարենք մեր սիրելի փոքրիկին. չէ՞ որ նա շատ բարի սիրտ ունի»:

Ինչպես նույնպես եք, հարգարժան դուենյան բավականին փափկանկատ տիկին էր:

Այդ տասը օրը Կոլոմբան անց էր կացրել Ասկանիոյի մասին երազելով: Անմեղ, մաքուր աղջկան ծանոթ չէր սիրո զգացումը: Բայց այժմ հենց սիրով էր լցված նրա սիրտը: Նա շարունակ կրկնում էր, որ վատ է այդպիսի երազների հանձնվելը, բայց իր ներումը գտնում էր այն բանում, որ ինքն ու Ասկանիոն այլևս երբեք չեն հանդիպելու և որ իրեն վիճակված չէ, Ասկանիոյի առաջ արդարանալով, մխիթարանք գտնել:

Այդ պատրվակով էլ Կոլոմբան բոլոր երեկոները անց էր կացնում այն նույն նստարանի վրա, որտեղ մի անգամ նըստել էր Ասկանիոյի կողքին, խոսել նրա հետ, ունկնդրել նրան, իսկ այժմ ամբողջ հոգով տրվում էր այդ հիշողությանը. այնուհետև, երբ բոլորովին մթնում էր, և տիկին Պերինան կանչում էր տուն, գեղանի, անբջող աղջիկը գնում էր դանդաղ քայլերով ու երազներից սթափվելով, մտաբերում էր հոր հրամանը, կոմս դ'Օրբեկին և այն, թե ինչքան սրտագ է անցնում ժամանակը: Նա գիշերներն անց էր կացնում տանջալից անձկության մեջ, բայց դրանից էլ չէին խամրում իրիկնամուտի նրա զմայլելի երազանքները:

Այդ երեկո Կոլոմբայի երևակայությունը կրկին, սովորականի պես, պայծառորեն պատկերում էր երջանիկ անցյալը՝ Ասկանիոյի հետ անցկացրած մի ժամը, երբ հանկարծ, ուր, երբ բարձրացնելով, աղջիկը ճշաց:

Ասկանիոն կանգնած էր նրա առաջ և լուռ նայում էր նրան:

Պատանին դառավ, որ Կոլոմբան փոխվել է, բայց դարձել է ավելի գեղեցիկ: Գունատությունն ու թափածն այնքան

էին սազում նրա բացարձակապես անթերի դեմքին: Նրա գեղեցկութիւնն ասես դարձել էր ավելի ոգեշունչ: Նա երբեք այդքան գեղեցիկ չէր եղել, և կասկածները, որոնք սկսել էին փարատվել տիկին դ'էտամպի սիրո ազդեցութեան տակ, կրկին համակեցին նրան: Մի՞թե այդ երկնային էակը կարող է սիրել իրեն:

Եվ այդպես, ի վերջո, հանդիպեցին սքանչելի անմեղ այդ արարածները, որոնք վաղուց ի վեր լուռ սիրում էին միմյանց և արդեն այնքան տառապանքներ էին պատճառել մեկ մեկու: Իհարկե, հանդիպելով, նրանք պետք է որ անմիջապես մոռանային իրենց բաժանող տարածութեան մասին. չէ՞ որ երազանքներում նրանցից ամեն մեկը քայլ առ քայլ հազթահարում էր այդ տարածութիւնը: Հիմա արդեն նրանք կարող էին բացատրվել, առաջին իսկ խոսքից հասկանալ միմյանց և ուրախութեան պոռթկման մեջ արտահայտել իրենց զգացմունքները, որոնք մինչև հիմա, տառապելով, զսպում էին:

Բայց երկուսն էլ շափազանց երկշոտ էին ու, թեև հուզմունքը մատնում էր սիրահարների զգացմունքները, այնուամենայնիվ նրանց անարատ հոգիները չկարողացան միանգամից կրկին մերձենալ:

Կոլոմբան շիկնեց և լուռ վեր թռավ տեղից: Ասկանիոն հուզմունքից գունատվեց ու դողացող ձեռքը կրծքին սեղմելով, փորձում էր զսպել սրտի տրոփումը:

Նրանք սկսեցին խոսել միասին: Ասկանիոն ասաց. «Ներեցեք, խնդրեմ, օրիորդ, բայց դուք թույլատրել էիք որոշ վարդեր ցույց տալ ձեզ»: Կոլոմբան մրմնջաց. «Ուրախ եմ տեսնել, որ դուք բոլորովին առողջ եք, պարոն Ասկանիո»:

Սիրահարները նույն բոպեին լոեցին և, շնայած ընդմիջել էին միմյանց, շնայած նրանց քնքուշ ձայները միաձուլվել էին, ըստ երևույթին, նրանք հիանալի լսել էին ամեն ինչ, քանի որ Ասկանիոն, խրախուսված աղջկա ակամա ժպիտից, որին անշուշտ զվարճացրել էր ծիծաղաշարժ դիպվածը, պատասխանեց մի քիչ ավելի վստահորեն.

— Մի՞թե բարեսրտորեն դեռ հիշում եք, որ ես վիրավոր էի:

— Ես և տիկին Պերինան շատ էինք անհանգստանում ձեզ համար ու անընդհատ զարմանում էինք, թե ինչու չեք գալիս:

— Ես որոշել էի այլևս չգալ:

— Ինչո՞ւ:

Այդ վճռական պահին Ասկանիոն ստիպված եղավ կորթնել ծառաբնին, այնուհետև հավաքեց բոլոր ուժերը, ամբողջ արիությունն ու բեկբեկուն ձայնով ասաց.

— Դե ինչ, կարող եմ խոստովանել. ես սիրում էի ձեզ:

— Իսկ հիմա՞:

Կոլոմբայի կրծքից դուրս թռած այդ ճիշը կփարատեր Ասկանիոյից ավելի փորձված մարդու բոլոր կասկածները, իսկ Ասկանիոյի սրտում հույսի մի նշույլ միայն հարուցեց:

— Հիմա, ավա՞ղ, — շարունակեց նա: — Ես չափեցի մեզ բաժանող տարածությունը և գիտեմ, որ դուք անվանի կոմսի ևրջանիկ հարսնացուն եք...

— «Երջանի՛կ», — ընդմիջեց նրան Կոլոմբան դառը ժպտով:

— Ինչպես, դուք չե՞ք սիրում կոմսին: Տե՛ր աստված, օ՛, ասացեք, մի՞թե նա արժանի չէ ձեզ:

— Նա հարուստ, զորավոր ազնվական է: Նա ինձնից շատ ավելի բարձր է իր դիրքով... Ասենք, մի՞թե դուք նրան չեք տեսել:

— Ոչ: Եվ չէի համարձակվում հարձուփորձ անել նրա մասին, բայց, չգիտեմ ինչու, վստահ էի, որ նա երիտասարդ է ու գեղեցիկ, որ նա դուր է գալիս ձեզ:

— Նա հորիցս մեծ է, և ես նրանից վախենում եմ, — անհաղթահարելի զզվանքով ասաց Կոլոմբան, ձեռքերով դեմքը ծածկելով:

Ասկանիոն, ուրախությունից գլուխը կորցրած, ծունկի եկավ. սուրբալից ծալեց ձեռքերը և ավելի գունատվելով, կիսախուսի արեց աչքերը, բայց արտևանունքերի տակից փայլատակում էր. նրա քնքուշ հայացքը, իսկ գունաթափ չորթերին ծաղկեց աստվածային թովիչ ժպտը:

Ի՞նչ պատահեց ձեզ, Ասկանիո, — վախեցած հարցրեց Կոլոմբան:

— Ինչ պատահե՞ց,— բացականչեց երիտասարդը, ուրախության պոռթկման մեջ ձեռք բերելով այն համարձակությունը, որը սկզբում տվել էր նրան վիշտը:— Ի՞նչ պատահեց: Չէ՞ որ ես սիրում եմ քեզ, Կոլոմբա:

— Ասկա՛նիո, Ասկա՛նիո,— մրմնջաց Կոլոմբան, և նրա ձայնի մեջ հնչեցին կշտամբանք, ուրախություն և այնպիսի քնքշություն, ասես նա սիրո խոսքեր էր արտասանում:

Այո, նրանք հասկացան միմյանց. նրանց սրտերը միացան, և իրենք էլ շնկատեցին, թե ինչպես իրենց շրթունքները հանդիպեցին:

— Բարեկամս,— ասաց Կոլոմբան, քնքշորեն հետ մղելով Ասկանիոյին:

Նրանք նայում էին միմյանց մի տեսակ ինքնամոռացման մեջ. դա երկու հրեշտակների հանդիպում էր: Այդպիսի պահերը չեն կրկնվում:

— Եվ այսպես,— ասաց Ասկանիոն,— դուք չեք սիրում կոմս դ'Օրբեկին: Ուրեմն կարող էիք սիրել ինձ:

— Բարեկամս,— կրկնեց Կոլոմբան լրջորեն ու քնքշությամբ:— Մինչև հիմա հայրս է միայն համբուրել ճակատս և, ավա՛ղ, այնքան հազվադեպ: Ես միամիտ եմ՝ կյանքը չճանաչող երեխայի նման, բայց երբ դուք համբուրեցիք ինձ, ես ուրախության թրթիռ զգացի ու հասկացա, որ իմ պարտքն է այսուհետև պատկանել միայն ձեզ, կամ՝ աստծուն: Հիրավի, եթե այդ զգացումը չլիներ, ես կմտածեի, որ մեղանշել եմ: Ձեր շուրթերը օրհնեցին մեր միությունը: Այո, այսուհետև ես ձեր հարսնացուն եմ ու կինը, և թող նույնիսկ ինքը՝ հայրս ինձ ասի՝ «ոչ», ես հավատում եմ միայն աստծո ձայնին, որը հնչում է իմ հոգում ու ասում է ինձ՝ «այո»: Ահա իմ ձեռքը, այն պատկանում է ձեզ:

— Դրախտի հրեշտակներ, ունկնդրեք նրան ու նախանձեք ինձ...— բացականչեց Ասկանիոն:

Սիրահարների բերկրանքն անհնար է նկարագրել, անհնար է վերապատմել: Այն կարող է հասկանալ միայն նա, ով ապրել է այդ զգացումը: Անհնար է նկարագրել այդ անարատ ու սքանչելի պատանի էակների բառերը, հայացք-

ները, ձեռքերի սեղմումը: Նրանց անբիծ հոգիները միա-
խառնվում էին, ինչպես երկու վճիտ աղբյուր, շփոխելով ոչ
իրենց հատկությունները, ոչ գույնը: Ոչ մի անհամեստ դի-
տավորությամբ Ասկանիոն շմթագնեց իր սիրած աղջկա
պայծառ ճակատը: Կոլոմբան վստահորեն կռթնեց փեսա-
ցուի ուսին: Եվ եթե Մարիամ աստվածածինը վերևից նայե-
լու լիներ նրանց, երես չէր թեքի:

Երբ սիրում ես, շտապում ես բոլոր մտքերդ ու զգաց-
մունքներդ կիսել սիրած էակի հետ, պատմել կյանքիդ մա-
սին, ներկայի, անցյալի, ապագայի մասին: Եվ ահա, երբ
Ասկանիոն ու Կոլոմբան վերադառան խոսելու ընդունակու-
թյունը, պատմեցին միմյանց վերջին օրերի իրենց բոլոր
վշտերը, բոլոր հույսերը: Այդ սքանչելի էր: Նրանց զգաց-
մունքներն այնքան նման էին, ասես պատմում էին մեկը
մյուսի մասին: Երկուսն էլ տառապել էին, բայց հիմա ժպի-
տով էին մտաբերում իրենց տառապանքները:

Բայց ահա խոսք բացվեց ապագայի մասին, և նրանք
տնմիջապես լրջացան ու տխրեցին: Նախախնամությունն
ի՛նչ էր սահմանել վաղվա համար: Նրանք ստեղծված են
միմյանց համար, բայց պայմանականությունները մեծարող
մարդիկ նրանց ամուսնությունը կհամարեին անհավասար,
պարզապես հրեշավոր: Ի՞նչ անել: Ինչպե՞ս ստիպել կոմս
Ե՛ծորբեկին, որ հրաժարվի հաբսնացուից, իսկ Փարիզի պրեռ-
յին՝ որ ամուսնացնի աղջկան ինչ-որ արհեստավորի հետ:

— Ավա՛ղ, բարեկամս,— ասաց Կոլոմբան,— չէ՞ որ ես
կրկում եմ տվել պատկանել միայն ձեզ, կամ՝ աստծուն և
սպորդ տեսնում եմ, որ ինձ վիճակված է պատկանել աստ-
ծուն:

— Ո՛չ, ո՛չ,— պատասխանեց Ասկանիոն,— դուք իմն եք
Մեծը շատ անփորձ ենք և շենք կարող երկուսով տակնուվրա
անել աշխարհը, բայց ես կխոսեմ թանկագին ուսուցչիս՝ Բեն-
վեդուատ Գիլլինիի հետ: Ահա թե ով է քաջակորով, Կոլոմբա,
ահա թե ով շունի ոչ մի նախապաշարում: Երկրի վրա նա
վարվում է այնպես, ինչպես թերևս աստված՝ երկնքում, և
կարողանում է ի կատար ածել իր բոլոր ցանկությունները:

Նա այնպես կանի, որ դու իմը կլինես: Չգիտեմ նույնիսկ, թե ինչ կերպ կանի, բայց այդպես կլինի: Նա սիրում է խոչընդոտներ: Բենվենուտոն կխոսի Ֆրանցիսկ Առաջինի հետ, կհամոզի հորդ: Նա կարող է խորտակել ուզածդ արգելքները: Միայն մի հարցում նա անզոր կլինի, բայց դու ինքդ կատարես իր այդ առանց նրա միջամտության՝ դու սիրես իր ինձ: Մնացածը դատարկ բան է: Գիտես, սիրելի՛ս, հիմա ես հավատում եմ հրաշքների:

— Ասկանիո, սիրելի՛ս, քանի որ դուք հավատում եք, ես էլ հույսս չեմ կորցնում. բայց ինչ եք կարծում, չփորձե՞մ ես էլ որևէ բան անել: Կա մի անձնավորություն, որի կամքին հայրս հնազանդ է: Ինչ եք կարծում, չգրե՞մ, արդյոք, տիկին դ՛ էտամպին:

— Տիկին դ՛ էտամպին, — բացականչեց Ասկանիոն: — Տե՛ր ասոված, ես նրան բոլորովին մոռացել էի:

Եվ Ասկանիոն պարզամտորեն, առանց որևէ ձևականություն, պատմեց դքսուհու հետ ունեցած հանդիպման մասին, այն մասին, որ դքսուհին սիրել է նրան, ինչպես հենց այսօր, բնզամենը մի ժամ առաջ, հայտնել է իր մահացու ասելությունը նրա սիրած աղջկա հանդեպ: Ի դեպ, այդ բոլորը դատարկ բաներ են: Բենվենուտոյի համար մի քիչ ավելի դժվար կլինի, ուրիշ ոչինչ: Մի թշնամի կավելանա, մեծ բան չէ, դրանով չես վախեցնի նրան:

— Բարեկամս, — ասաց Կոլոմբան, — դուք հավատում եք ձեր ուսուցչին, իսկ ես հավատում եմ ձեզ: Հնարավորին շափ շուտ խոսեք Չելլինիի հետ. նրա ձեռքը տանք մեր ճակատագիրը:

— Վաղը ևեթ ես ամեն ինչ կխոստովանեմ նրան: Նա այնքան է սիրում ինձ: Նա ամեն ինչ կհասկանա կես խոսքից: Բայց քեզ ի՞նչ պատահեց, Կոլոմբա, հոգիս, ինչո՞ւ տխրեցիր:

Կոլոմբան որսում էր Ասկանիոյի ամեն մի բառը և սկզբում էր ճանաչել իր սիրո ամբողջ խորությունը, զգալով, թե ինչպես է խանդի խայթոցը խրվում իր սիրտը: Մի քանի անգամ նա ուժգնորեն սեղմեց Ասկանիոյի ձեռքը, որը բաց չէր թողել իր մանրիկ ձեռքերից:

— Ասկանիո, տիկին դ'էտամպլը գեղեցկուհի է, մեծ թա-
ղավորի սիրուհին: Տեր՝ աստված, գուցե ձեր հոգին ենթարկ-
վի է նրա հմայքի՞ն:

— Ես սիրում եմ քեզ,— պատասխանեց Ասկանիոն:

— Սպասեք ինձ,— մրմնջաց Կոլոմբան:

Եվ անմիջապես վերադարձավ մի սպիտակ շուշան ձեռ-
քին, թարմություն բուրոզ շուշան:

— Դե լսիր,— ասաց աղջիկը:— Երբ դու աշխատես դըք-
սուհու ոսկե շուշանի վրա և զարդաբես ծաղիկը թանկարժեք
բարերով, մեկ-մեկ նայիր քո Կոլոմբայի ծաղկանոցի հա-
սարակ շուշանին:

Եվ հմայիչ ժպտով (այդպես կժպտար ինքը՝ տիկին
դ'էտամպլը) համբուրեց ծաղիկը, իսկ հետո հանձնեց Աս-
կանիոյին:

Բայց այդ պահին ծառուղու ծայրում հայտնվեց տիկին
Պերինան:

— Գնաս բարով, ցտեսություն,— շտապով ասաց Կոլոմ-
բան, ծածուկ, գեղանազ շարժումով մատը դնելով սիրածի
շուրթերին:

Դուենյան մոտեցավ նրանց և դիմեց Կոլոմբային.

— Դե՛, զավակս, հուսով եմ դուք նախատեցիք փախըս-
տականին և զարդարանքներ ընտրեցիք ձեզ համար:

— Ահա վերցրեք, տիկին Պերինա,— բացականչեց Աս-
կանիոն, դուենյային հանձնելով թանկարժեք զարդերով լի
տրիզիկը, որն այդպես էլ ցույց չէր տվել Կոլոմբային:— Ես
և սրիսրդ Կոլոմբան որոշեցինք, որ ավելի լավ է ինքներդ
ձեր ճաշակով որևէ զարդ ընտրեք: Իսկ վաղը ես կգամ մնա-
ցածը ասնելու:

Այ՛ նա, ուրախությունից փայլելով, հրաժեշտի պերճա-
խոս մի հույացք նետեց Կոլոմբային ու արագորեն հեռա-
ցավ:

Կոլոմբան ձեռքերը խաչեց կրծքին, ասես պաշտպանելով
երբանկոսթյունը, որով լի էր իր հոգին, ու անշարժացավ տե-
ղում: Իսկ տիկին Պերինան այդ միջոցին տնտղում էր Աս-
կանիոյի բերած սքանչելի իրերը:

Ավա՛ղ: Դաժան էր խեղճ աղջկա արթնացումը քաղցր անուրջներից:

Նրա առաջ հանկարծ հայտնվեց ինչ-որ կին, որին ուղեկցում էր պրեոյի ծառաններից մեկը:

— Նորին պայծառափայլութունն կոմս դ'Օրբեկը կբարեհաճի ժամանել վաղը չէ մյուս օրը, — ասաց անծանոթուհին, — և նա ինձ հրամայել է այսօրվանից սպասավորել ձեզ, օրիորդ: Ես գիտեմ, թե այժմ ինչ են հագնում արքունիքում, ես ցույց կտամ ձեզ շրջագրեստների նոր, գեղեցիկ ձևեր, իսկ պարոն կոմսը և մեսսեր պրեոն ինձ պատվիրել են կարել ձեզ համար, օրիորդ, զտոբաբի սքանչելի զգեստ, քանզի նորին բարձրութունն դքսուհի դ'էտամպը մտադիր է ներկայացնել ձեզ թագուհուն նորին մեծության Սեն-ժերմեն մեկնելու օրը, այլ կերպ ասած՝ շոքս օր հետո:

Ընթերցողը կհասկանա, թե քիչ առաջ նկարագրած տեսարանից հետո ինչ սոսկալի տպավորություն գործեցին Կոլոմբայի վրա այդ երկու նորութուննր:

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԻՆՆԵՐՈՐԳ

Սեր—երագանք

Հետևյալ օրը, լույսը բացվելուն պես, Ասկանիոն, որը որոշում էր ընդունել իր ճակատագիրը վստահել ուսուցչին, գնաց ձուլարան, որտեղ առավոտներն աշխատում էր Չելլինին, այդ սենյակն անվանելով «իմ խուցը»: Ասկանիոն պատրաստվում էր բախել սենյակի դուռը, երբ լսեց Սկոցոնի ձայնը: Մտածելով, որ նա լնորդուհու պարտավորություններ է կատարում, Ասկանիոն համեստորեն հեռացավ, որոշելով գալ ավելի ուշ: Սպասելով, պատանին անցուդարձ էր անում նկի Մեծ ամրոցի այդում ու խորհում, թե ինչ է ստելու Չելլինին, և վերջինս ամենայն հավանականությամբ լինչ պատասխան կտա:

Մինչդեռ Սկոցոնեն այս սնդամ ամենևին էլ բնարդուհու

պարտականութիւններ չէր կատարում: Նա դեռ ոչ մի անգամ չէր եղել Բենվենուտոյի խցիկում, որտեղ արձանագործը ոչ ոքի չէր թողնում, իսկ դա բորբոքում էր Կատերինայի հետաքրքրասիրութիւնը: Չելլինին նույնիսկ բարկանում էր, եթե որևէ մեկը խախտում էր նրա հանգիստը: Այդ իսկ պատճառով վարպետ Բենվենուտոն զայրացավ, երբ շուռ գալով տեսավ Կատերինային, առանց այդ էլ մեծ աչքերը դարմանքից լայն բացած: Սակայն անկոչ հյուրի հետաքրքրասիրութիւնը բավարարված էր ոչ լիովին: Պատին կախված մի քանի նկար, լուսամուտին՝ կանաչ վարագույր, Հերի նոր սկսած արձանը և ծեփելու գործիքների հավաքածու. ահա այն ամենը, ինչ կար սենյակում:

— Ի՞նչ ես ուզում, օձի ճուտ: Ինչո՞ւ եկար այստեղ: Ողորմած տեր: Դու ինձ դժոխքում էլ կհետապնդես, — Կատերինային տեսնելով, պոռթկաց Բենվենուտոն:

— Ավաղ, ուսուցիչ, — փաղաքուշ ձայնով ասաց Սկոցոնեն, — ազնիվ խոսք, ես օձ չեմ: Խոստովանում եմ, որ հաճույքով ձեր հետևից դժոխք կգայի, միայն թե երբեք չբաժանվեիր: Իսկ այստեղ եկել եմ այն պատճառով, որ ուրիշ տեղ անհնարին է գաղտնի խոսել ձեզ հետ:

— Լավ, միայն շուտ վերջացրու: Ի՞նչ ես ուզում:

— Ա՛խ, տեր աստված, — բացականչեց Սկոցոնեն, նկատելով նոր սկսած քանդակը: — Ինչ սքանչելի դեմք է, Բենվենուտո: Սա ձեր Հերեն է: Մտքովս էլ չէր անցնում, որ աշխատանքն այսքան առաջ է գնացել: Եվ ինչքան գեղեցիկն է:

— Իսկապե՞ս, — հարցրեց Բենվենուտոն:

— Օ՛, այո, շնաշխարհիկ գեղեցկութիւն է: Եվ հիմա եմ հասկանում, թե ինչու չէիք ցանկանում, որ ես լինեմ բնորդուհին: Բայց ո՞վ է այս աղջիկը, հը՞, — տազնապով հարցրեիր Սկոցոնեն: — Չէ՞ որ ոչ մի կին չի մտել ձեր սենյակը և դուրս չի եկել այստեղից:

Լո՛ր: Լսիր ինձ, սիրելի փոքրիկ, մի՞թե դու եկել ես բանդակի մասին խոսելու:

— Ի՛չ, ուսուցիչ, ես եկել եմ խոսելու մեր Պապոլոյի մասին: Բանն այն է, որ ես կատարեցի ձեր ասածը, Բենվենու-

տո. երեկ երեկոյան, երբ դուք գնացիք, նա սկսեց շատախոսել իր հավերժ սիրո մասին, և ձեր կարգադրութեամբ ես ունկնդրեցի նրան:

— Ահա՛ թե ինչ: Դավաճա՛ն: Իսկ նա ի՞նչ էր ասում քեզ:

— Ախ, անչափ ծիծաղելի էր... Այնպես էի ուզում, որ դուք լսեիք նրան: Եվ նկատի առեք, որ, կասկած չհարուցելու համար, նա այդ ամենն ասում էր աշխատելով ոսկե ճարմանդի վրա, որը հանձնարարել էիք նրան: Եվ խարտոցը արտահայտչականութուն էր տալիս երկերեսանու խոսքերին: Ահա թե ինչ էր ասում նա. «Թանկագին Կատերինա, ես խելագարվում եմ ձեր հանդեպ տաժած սիրուց: Ե՞րբ պիտի խղճաք տառապյալիս: Ես խնդրում եմ ձեզնից մի բառ միայն: Հասկացեք, հանուն ձեզ ես վտանդի եմ ենթարկում կյանքս: Եթե այս ճարմանդը շավարտեմ, ուսուցիչը, թերևս կասկածի տակ կառնի ինձ, իսկ եթե կասկածեց, անգթորեն կսպանի. բայց ես հանուն ձեր սիրունիկ աչիկների պատրաստ եմ ամեն ինչի: Տե՛ր ասոված: Անիծյալ աշխատանքն առաջ չի գնում: Ախր լսեք, Կատերինա, ինչի՞ համար եք սիրում Բենվենուտոյին: Չէ՞ որ նա հատուցում է ձեզ ոչ թե երախտագիտութեամբ, այլ անտարբերութեամբ: Իսկ ես կսիրեի ձեզ այնքան կրակոտ ու այնքան քնքուշ: Ազնիվ խոսք, ոչ ոք ոչինչ չէր նկատի և ձեր պատիվն էլ անբասիր կմնար: Դուք կարող եք վստահել ինձ, ես համեստ եմ, անհարմար դրութեան մեջ չեմ դնի ձեզ: Լսեք,— շարունակեց նա, իմ լռութունից խրախուսված,— ես գտել եմ հուսալի ու մեկուսացված ասպառտարան, մենք կարող ենք առանց վախի գրուցել այնտեղ»: Հա՛-հա՛-հա՛: Դուք ձեր ամբողջ կյանքում, Բենվենուտո, գլխի չեք ընկնի, թե ինչպիսի գաղտնարան է գտել մեր սուսուփուսը: Գրազ կգամ, որ հենց այդպիսի պարկեշտ, այդպիսի խոնարհ մարդիկ միայն կարող են գտնել նման ապահով տեղ: Գիտեք, թե նա որտեղ է ինձ տեսակցութուն նշանակել: Ձեր հսկայական արձանի՝ Մարսի գլխում: Ասում է, որ այնտեղ կարելի է բարձրանալ ձեռնասանդուղքով: Հավատացնում է, թե արձանի գլխում շատ հաճելի խցիկ կա, որտեղ մեզ ոչ ոք չի նկատի, բայց մենք տյնտեղից կտեսնենք գյուղական զմայլելի բնապատկերը:

— Իրոք, փառավոր միտք է,— ծիծաղելով ասաց Բենվենուտոն:— Իսկ դու ի՞նչ պատասխանեցիր նրան, Սկոցոնե:

— Ի պատասխան, ես ծիծաղեցի, ոչ մի կերպ չկարողացա ինձ զսպել, և պարոն Պազոլոյի սպասումները շարդարացան: Այդ ժամանակ նա սկսեց կշտամբել ինձ, որ անսիրտ եմ, որ իր մահն եմ ցանկանում և նման բաներ. գործի էր դնում մուրճն ու խարտոցը և անդադար խոսում էր ու խոսում՝ ամբողջ կես ժամ. ախր նրա լեզուն որ բացվում է, շատախոսությանը վերջ չկա:

— Բայց, ի վերջո, դու ի՞նչ պատասխանեցիր նրան, Սկոցոնե:

— Ինչ պատասխանեցի՞: Այդ ժամանակ դուք բախեցիք դուռը, և նա ճարմանդը դրեց սեղանին,— այնուամենայնիվ, ավարտել էր,— իսկ ես ամենալուրջ տեսքով բռնեցի նրա ձեռքն ու ասացի. «Պազոլո, դուք շատ պերճախոս եք»: Ահա թե ինչու նա այդքան հիմար տեսք ուներ, երբ դուք ներս մտար:

— Հիրավի, Սկոցոնե, զուր ես այդպես պահել քեզ. զուր ես խրատեցնում նրան:

— Դուք կարդադրել էիք ինձ լսել նրա ասածները, և ես լսեցի:

— Հարկավոր էր ո՛չ միայն լսել նրան, սիրելիս, այլև պատասխանել: Այդպես է պետք մտահղացումս իրականացնելու համար: Նախ խոսել նրա հետ առանց բորբոքվելու, սպա՛ն ներողամտորեն, իսկ այնուհետև արդեն, ակնածանրով: Կանես այդ բոլորը, հետո կասեմ, թե ինչպես վարվես: Միայն թե ապավինիր ինձ ու ճշտորեն հետևիր խրատներին: Իսկ հիմա գնա, սիրելի փոքրիկ, և մի խանգարիր ինձ աշխատել:

Կատերինան դուրս վազեց թռչկոտելով, նախապես քրքրյալով կատակի վրա, որ Չելլինին խաղալու էր Պազոլոյի գլխին. թեև նրան այդպես էլ շահաշողվեց կռահել, թե դա ինչ կատակ է լինելու:

Կատերինան գնաց, մինչդեռ Բենվենուտոն չէր էլ մտածում աշխատել. նա նետվեց դեպի լուսամուտը, որը նայում

էր նելի Փոքր ամրոցի այգուն ու քարացավ տեղում, ասես հայեցողութեան մեջ խորասուզված: Դռան բախոցը սթափեցրեց նրան:

— Թո՛ւհ, գրողը տանի,— բարկացած բացականչեց նա:— Էլի ո՞վ է: Մի՞թե չի կարելի ինձ հանգիստ թողնել, գրողը տանի:

— Ներեցեք, խնդրեմ, ուսուցիչ,— լսվեց Ասկանիոյի ձայնը:— Ծս կհեռանամ, եթե խանգարում եմ ձեզ:

— Ախ, այդ դո՞ւ ես, զավակս: Ոչ, ի՞նչ ես ասում, իսկապես դու ինձ երբեք չես խանգարում: Ի՞նչ է պատահել, դո՞րժ ունես ինձ հետ:

Եվ Բենվենուտոն շտապեց բացել դուռը իր սիրած աշակերտի առաջ:

— Ծս խանգարում եմ ձեր մենությունը, ընդհատում եմ աշխատանքը,— ասաց Ասկանիոն:

— Ոչ, Ասկանիո, ես միշտ ուրախ եմ քեզ տեսնել:

— Բանն այն է, ուսուցիչ, որ ես ցանկանում եմ հայտնել ձեզ իմ գաղտնիքը և ձեզանից օգնություն խնդրել:

— Ասա: Ամեն ինչ կտամ քեզ՝ ուժերս, խելքս, փողս...

— Թերևս այդ ամենն էլ ինձ պետք չան, թանկագին ուսուցիչ:

— Հիանալի է: Ծս նվիրված եմ քեզ հոգով ու մարմնով, Ասկանիո: Բացի այդ, ինքս էլ պետք է մի խոստովանություն անեմ: Այո, ես ինձ մեղավոր կզգամ, խիղճս կտանջի ինձ, մինչև թողություն չտաս ակամա մեղքիս: Ի դեպ, խոսիր առաջինը:

— Լավ, ուսուցիչ... Բայց, տեր աստված, ո՞ւմ եք քանդակում,— բացականչեց Ասկանիոն, ընգամիջելով իր խոսքը:

Նա նոր միայն նկատեց Հեբեի կիսավարտ արձանը և նորածնի քանդակից ճանաչեց Կոլոմբային:

— Հեբեին,— պատասխանեց Բենվենուտոն ու նրա աչքերը փայլեցին:— Հավերժ դեռատի աստվածուհուն: Ինչ կասես, Ասկանիո, նա սքանչելի է, չէ՞:

— Օ՛, այո, անչափ գեղեցիկ է: Բայց ինձ ծանոթ են այդ դիմագծերը, դրանք երևակայութեան արգասիք չեն:

— Դու անհամեստ ես: Բայց քանի որ ինքդ բարձրացրիր քողը, ես լրիվ հետ կքաշեմ այն: Ինչ արած, ստիպված եմ առաջինը խոստովանել: Դե լավ, նստիր ահա այստեղ Ասկանիո, և լսիր. իմ սիրտը բաց գիրք կլինի քեզ համար: Քիչ առաջ դու ասացիր, որ քեզ պետք է իմ օգնությունը, իսկ ինձ պետք է, որ դու լսես ինձ: Երբ ամեն ինչ իմանաս, ես մեծ թեթևություն կզգամ:

Ասկանիոն նստեց, գունատվելով ավելի, քան գունատվում է դատապարտյալն իր մահվան դատավճիռը լսելիս:

— Դու Ֆլորենցիացի ես, Ասկանիո, և հարկ չկա հարցնել, թե գիտե՞ս արդյոք Դանթե Ալիգիերիի պատմությունը: Մի անգամ փողոցում նա հանդիպեց մանկամարդ մի աղջրկա, Բեատրիչե անունով և սիրեց նրան: Աղջիկը մահացավ, իսկ Դանթեն շարունակում էր սիրել նրան, քանզի սիրում էր նրա հոգին, իսկ հոգիները շեն մեռնում. նա աստղասպակով զարդարեց Բեատրիչեի գլուխը և բնակեցրեց դրախտում: Դրանից հետո Դանթեն սկսեց ուսումնասիրել, հետազոտել մարդկային կրքերը, պոեզիան ու փիլիսոփայությունը և, երբ տանջանքով ու խորհրդածությամբ մաքրագործված, մոտեցավ երկնային դարպասին, որտեղ Վերգիլիոսը, այսինքն՝ իմաստության մարմնավորումը, ստիպված էր բաժանվել նրանից, Դանթեն ուղեկցող շունենալու պատճառով կանգ շառավ, որովհետև դարպասի մոտ նա վերստին հանդիպեց Բեատրիչեին, այսինքն՝ սիրո մարմնավորմանը, որը սպասում էր նրան...

Ասկանիո, ես էլ ունեմ իմ Բեատրիչեն. նա էլ մահացել է և Դանթեի Բեատրիչեի նման պաշտված է: Մինչև այսօր դա դո՛ւ գտնիք էր նրա, աստծո և իմ միջև: Ես հեշտությամբ եմ ենթադրվում գայթակղության, անարժան կրքերը խաղացել են ինձ հետ, բայց դրանք շարատավորեցին իդեալական սիրունուս: Ես սիրո կանթեղն այնքան բարձր բռնեցի, որ կեղտոտ չկր կարող դիպչել նրան: Մարդը գլխապատառ նեոփոսմ էր հաճույքների պոռուտահողմի մեջ, իսկ նկարիչը հավատարիմ էր մնում իր խորհրդավոր նշանածին: Եվ եթե ես ստեղծել եմ ինչ-որ գեղեցիկ բան, Ասկանիո, եթե անշունչ

նյութը՝ արծաթը, կամ կավը կյանք է առնում մատներին տակ, եթե երբեմն ինձ հաջողվում է գեղեցկություն ներշնչել մարմարին և կենդանություն՝ բրոնզին, ապա այն պատճառով միայն, որ իմ ճաճանչափայլ աստվածուհին քսան տարի է արդեն ղեկավարում է ինձ, սատարում, լուսավորում հոգիս:

Չգիտեմ, արդարև, Ասկանիո, բայց հավանաբար տարբերություն կա բանաստեղծի և ոսկերչի միջև, միտք դրվագողի և ոսկի դրվագողի միջև: Դանթեն անրջում էր, իսկ ինձ անհրաժեշտ է տեսնել: Նա բավարարվում էր Մարիամի անունով միայն, իսկ ես պետք է տեսնեմ տիրամոր դեմքը: Պատկերները ծագում էին նրա մտավոր հայեցողության առաջ, իսկ իմ պատկերները շոշափելի են: Ահա թե ինչու, թերևս, ինձ համար՝ որպես արձանագործի, իմ Բեատրիչեն կլինեք և՛ շատ քիչ, և՛ ամեն ինչ: Հոգեպես ես լի էի նրանով, բայց ստիպված էի փնտրել կենդանի կերպար:

Հրեշտականման կինը՝ ամբողջ կյանքիս ջահը, շատ գեղեցիկ էր անշուշտ, իսկ ամենագեղեցիկը նրա սիրտն էր. բայց ես չէի կարող գտնել նրա մեջ այն անեղծ գեղեցկության մարմնավորումը, որը պատկերում էր երևակայությունս: Ես ստիպված էի փնտրել այն ամենուրեք, հորինել դրա կերպարանքը:

Ի՞նչ ես կարծում, Ասկանիո, եթե այնպես պատահեր, որ ես գտնեի իմ իդեալը՝ արձանագործի իդեալը, այստեղ, երկրի վրա, մարմին առած, եթե ես սկսեի աստվածացնել այդ իդեալը, դա չէ՞ր լինի արդյոք սրբապղծություն և դավաճանություն իմ իդեալի՝ բանաստեղծի իդեալի նկատմամբ: Չե՞ս կարծում, արդյոք, որ երկնային տեսիլքը՝ հրեշտակը, կսկսի խանգել կնոջը: Ի՞նչ ես կարծում: Ես այդ մասին հարցնում եմ քեզ, Ասկանիո, և դու երբևէ կիմանաս, թե ինչու այդ հարցը հենց քեզ եմ տալիս և ոչ մեկ ուրիշի, ինչու սարսուռում եմ, սպասելով պատասխանիդ, ասես ինձ պատասխան է տալու ինքը Բեատրիչեն:

— Ուուցիչ,— լրջորեն ու տխրությամբ ասաց Ասկանիոն,— ես շատ երիտասարդ եմ և այդ վսեմ հարցերն իմ վճռելու բանը չեն. սակայն հոգուս խորքում ես վստահ եմ,

որ դուք այն ընտրյալներից եք, որոնց առաջնորդում է ինքը
աստված, և ամեն բան, ինչ հանդիպում է ձեր ճանապարհին,
պատահականություն չէ, այլ աստծու նախորոշում:

— Դու իրո՞ք վստահ ես դրանում, Ասկանիո: Եվ դու
գտնում ես, որ երկրային հրեշտակը՝ երազանքիս սքանչելի
մարմնավորումը շնորհված է ինձ ի վերուստ և որ երկնային
հրեշտակը չի՞ զայրանա, եթե մոռացություն տամ նրան:
Այդ դեպքում ես կխոստովանեմ քեզ, որ գտել եմ երազածս,
որ նա գոյություն ունի, որ ես տեսնում եմ նրան, համարյա
շոշափում եմ: Լսիր, Ասկանիո, գեղեցկությամբ և մաքրու-
թյամբ լեցուն այս մոգելը, անսահման կատարելության այս
տիպարը, որին մենք՝ նկարիչներս, մշտապես ձգտում ենք,
այստեղ է, ոչ հեռու. նա լի է կյանքով, ու ես կարող եմ
ամեն օր հիանալ նրանով: Ա՛խ, այն ամենը, ինչ ստեղծել եմ
մինչև հիմա, ոչինչ է նրա համեմատությամբ, ինչ կստեղծեմ
սրանից հետո: Դու ինքդ գտար, որ իմ Հերեն սքանչելի է, և
իրոք սա լավագույն ստեղծագործությունս է: Բայց ես դեռևս
դժգոհ եմ. կյանքով լի իմ երազանքը կանգնած է իր պատ-
կերի կողքին ու թվում է հարյուրապատիկ ավելի սքանչելի.
Ոսկայն ես կհասնեմ նրա մարմնավորմանը: Ասկանիո, նրա
նման հազարավոր ճերմակաթույր արձաններ խոնվում են
երևակայությանս մեջ, լցնում մտքերս: Ես տեսնում եմ
դրանք, նախազգում եմ, որ կգա մի օր, և երազանքս իրա-
կանություն կգառնա: Իսկ հիմա, Ասկանիո, եթե ցանկանում
ես, ցույց կտամ ինձ ոգեշնչող սքանչելի հրեշտակին: Նա,
հավանաբար, դեռ այստեղ է, ոչ հեռու: Ամեն առավոտ, երբ
այնտեղ, երկնքում ծագում է արևը, նա լույս է անում ինձ
այստեղ՝ երկրի վրա: Դեհ, նայի՛ր:

Եվ Բենվենուտոն հետ քաշեց վարագույրն ու աշակերտին
մասնացույց արեց Նելի Փոքր ամրոցի այգին:

Ստվերաշատ ծառուղիով դանդաղ քայլվածքով գնում էր
Կոլոմբան:

Ի՞նչ գեղեցիկ է նա: Իրավացի չե՞մ,— հիացմունքով
բացահամուչեց Բենվենուտոն:— Ֆիդիասը և ծերունի Միքելան-
ջելոն շեն ստեղծել ավելի սքանչելի մի բան և միայն կի-
սանդրիները՝ անտիկ վարպետների ստեղծագործությունները

կարող էին համեմատվել այս գեռատի ու նազելի աղջկա հետ: Ի՞նչ գեղեցիկ է նա:

— Օ՛, այո, շատ գեղեցիկ է,— մրմնջաց Ասկանիոն, բայց այդ պահին նրա ծնկները ծալվեցին, և նա կրկին նըստեց ուժասպառ ու մտամոլոր:

Մի րոպե լռութուն տիրեց. Բենվենուտոն արբենում էր ուրախութունից, իսկ նրա աշակերտը շանում էր ըմբռնել իր դժբախտության ամբողջ խորութունը:

— Բայց, ուսուցիչ, ի վերջո ո՞ւր կհասցնի ձեզ այդ անզուսպ սերը՝ նկարչի կիրքը,— սարսափահար սիրտ արեց հարցնել աշակերտը:— Ի՞նչ եք մտածում նախաձեռնել:

— Ասկանիո,— պատասխանեց Չելլինին,— նա՛ հանգուցյալը, շեղավ ու շէր կարող լինել իմը: Աստված միայն մատնանշեց նրան և սրտիս մեջ երկրային սեր չդրեց: Տարօրինակ է... Նա նույնիսկ զգացնել շտվեց, թե այդ աղջիկն էր ինձ համար, մինչև կանչեց նրան իր մոտ: Այդ աղջիկն ապրում է իմ հոգում որպես հիշողություն միայն, ազոտ, փայլկտացող տեսիլք: Բայց եթե դու լավ հասկացար ինձ, Կոլոմբան մուտք է գործել իմ կյանքը, սիրտս: Ես հանդըգնում եմ սիրել նրան, ես հանդգնում եմ մտածել, որ նա իմը կլինի:

— Նա Փարիզի պրեոյի աղջիկն է,— հուզմունքից դողալով ասաց Ասկանիոն:

— Եթե նույնիսկ թագավորի աղջիկը լիներ, Ասկանիո, չէ՞ որ քեզ հայտնի է ցանկությանս ուժը: Ես հասել եմ ամեն բանի, ինչ ցանկացել եմ, իսկ ես երբեք, ոչ մի բան այսքան կրքոտությամբ չեմ ցանկացել: Զգիտեմ, թե ինչպես կհասնեմ նպատակիս, բայց նա իմ կինը կգառնա, հասկանո՞ւմ ես:

— Զեր կի՞նը: Կոլոմբան կգառնա ձեր կի՞նը:

— Ես կղիմեմ ամենազոր հսվանավորիս,— շարունակեց Բենվենուտոն:— Եթե նա կամենա, ես արձաններով կզարդարեմ Լուվրը, Շամբոր ամրացրեմ: Ես նրա սեղանը կժածկեմ կանթեղներով ու սափորներով և, երբ որպես պարգև խնդրեմ Կոլոմբայի ձեռքը ու մերժում ստանամ, ուրեմն նա Ֆրանցիսկ I-ը չէ: Օ՛, ես հույս ունեմ, Ասկանիո, հույս ունեմ: Ես

կգամ նրա մոտ, երբ նա շրջապատված կլինի արքունիքով: Լսիր, երեք օր հետո, մինչև նրա Սեն-Փերմեն մեկնելը, մենք միասին կգնանք նրա մոտ: Մենք նրա համար կտանենք արծաթե աղամանը, որն ավարտել եմ, և Ֆոնտենբլոյի պալատի դռան նախշանկարները: Բոլորը կսկսեն հիանալ, քանզի դրանք սքանչելի են, և նա կհիանա ու կզարմանա բոլորից շատ: Եվ այսպես, ամեն շաբաթ ես կապշեցնեմ նրան նոր ստեղծագործութիւններով: Դեռ երբեք ես ստեղծագործական, շինարարական ուժի այսպիսի հորդում չեմ զգացել: Ուղեղս աշխատում է օր ու գիշեր. սերը, Ասկանիո, բազմապատկել է ուժերս, երիտասարդացրել է ինձ: Եվ երբ Ֆրանցիսկ I-ը տեսնի, որ իր բոլոր մտահղացումներն անմիջապես իրականացվում են, ես չեմ խնդրի, ես կպահանջեմ: Նա կբարձրացնի ինձ, ես կհարստանամ ու, թեև Փարիզի պրևոն մեծազարմ է, շոյված կլինի ինձ հետ բարեկամանալու համար: Այս, Ասկանիո, ես պարզապես խելագարվում եմ: Երբ մտածում եմ այդ ամենի մասին, կորցնում եմ հավասարակշռութիւնս: Նա ի՛մն է: Օ՛, երանելի անուրջներ: Արդյոք հասկանո՞ւմ ես, Ասկանիո: Նա ի՛մն է: Գրկիր ինձ զավակս, քանզի այն բոպեից, որ խոստովանեցի քեզ, ես հանդգնում եմ հուսալ: Ես զգում եմ, որ սիրտս համեմատաբար խաղողվեց: Դու կարծես օրինականացրիր երջանկութիւնս: Կրա մի օր, և դու կհասկանաս այն ամենը, ինչ հայտնեցի քեզ: Իսկ առայժմ ինձ թվում է, թե այդ գաղտնիքը քեզ վրստահելու պահից ես ավելի շատ սիրեցի քեզ: Դու այնքան բարի ես, որ ունկնդրեցիր ինձ: Դե, գրկի՛ր ինձ, թանկագին Ասկանիո:

— Բայց գուցե նա չի՞ սիրում ձեզ, ուսուցիչ: Դուք չե՞ք մտածում այդ մասին:

— Օ՛, լսիր, Ասկանիո: Ես մտածել եմ այդ մասին ու նախանձել քո գեղեցկութեանն ու երիտասարդութեանը: Բայց խոսքերդ աստծու նախասահմանման մասին հանգստացնում են ինձ: Կողմբան ինձ է սպասում: Եվ ո՞ւմ պետք է սիրի նա: Որե՛ք պալատական պճնամուլի՞: Անարժան մեկի՞ն: Ի

դեպ, ով էլ լինի նրա նշանածը, չէ՞ որ ե՛ս էլ ազնվական ծագում ունեմ և, բացի այդ, հանճարեղ նկարիչ եմ:

— Ասում են, նրա փեսացուն կոմս դ'Օրբեկն է:

— Կոմս դ'Օրբեկը: Հիանալի է: Ծս ճանաչում եմ նրան: Նա թագավորի գանձապահն է. ես նրանից պետք է վերցնեմ ոսկի ու արծաթ՝ աշխատանքներիս համար և փողը, որը բարեսրտորեն շնորհում է ինձ թագավորը: Կոմս դ'Օրբեկը ժլատ, մոայլ ծերունի է, նա ի՞նչ մրցակից է. տխմար ախոյանին հաղթելը մեծ պատիվ չէ: Մ՛չ, նա կսիրի ինձ, Ասկանիո, և ոչ թե ինձ համար, այլ իր համար. չէ՞ որ ես կլինեմ նրա գեղեցկության ապացույցը: Եվ նա կտեսնի, որ նրան հասկանում են, աստվածացնում, անմահացնում: Մի խոսքով, ես այդպես եմ կամենում: Կրկնում եմ. բավական է արտասանեմ այդ բառը, և ամեն անգամ ես հասնում եմ նպատակիս: Ամեն ինչ աշխարհում տեղի կտա իմ կամքի, իմ կրքի առաջ: Սովորությանս համաձայն ես անշեղորեն, ճակատագրի պես անողոքաբար կգնամ դեպի նպատակս: Ասում եմ քեզ՝ էա իմը կլինի, եթե նույնիսկ ստիպված լինեմ տակնուվրա անել ամբողջ թագավորությունը: Իսկ եթե ախոյանիս խելքին փշի փակել ճանապարհս, դու ճանաչում ես ինձ, Ասկանիո, թող զգուշանա, Երդվում եմ, ես կսպանեմ նրան ահա այս ձեռքով, որը հիմա սեղմում է ձեռքդ... Ա՛խ, տեր աստված, Ասկանիո, ներիր ինձ: Ինչպիսի՞ հասսերն եմ: Չէ՞ որ ես նույնիսկ մոռացա, որ դու էլ գաղտնիք ունես, որ ուզում էիր ինչ-որ բան հայտնել ինձ, օգնություն խնդրել: Ծս ցմահ պարտապանդ եմ, սիրելի զավակս: Դե՛, վերջապես պատմիր: Բավական է, որ կամենամ, և քեզ համար էլ կանեմ անհնարինը:

— Դուք սխալվում եք, ուսուցիչ: Կան բաներ, որոնք կախված են միայն աստծո կամքից, ու ես հասկացա, որ պետք է ապավինեմ միայն աստծո օգնությանը: Եվ թող գաղտնիքը մնա իմ՝ անզոր մահկանացուիս, և ամենազոր նախախնամության միջև:

Ասկանիոն դուրս եկավ:

Հենց որ պատանու հետևից փակվեց գուռը, Չելլինին ուրախ ու հանգիստ քաշեց վարագույրը և, դազգահը լուսամուտին մոտեցնելով, սկսեց կերտել Հեբեի սրձանը:



ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

Խիղճը վաճառող մարդը

Վրա հասավ այն օրը, երբ Կոլոմբային պետք է ներկայացնեին թագուհուն:

Մտովի տեղափոխվեմք Լուվրի պալատի սրահներից մեկը. այստեղ հավաքվել է ամբողջ արքունիքը, որպեսզի պատարագից անմիջապես հետո գնա Սեն-Փերմեն. սպասում են միայն թագավորի ու թագուհու դուրս գալուն: Մի քանի կին նստած են, պալատականների մեծ մասը կանգնած է կամ նեմում է սրահում, կիսաձայն զրուցելով. խշխշում են մատարտե ու դիպակե շրջազգեստները. հոծ բազմության մեջ սուսերը դիպչում է սուսերին, հանդիպում են քնքշորեն փայլող կամ ատելությունամբ այրվող հայացքներ. սիրահարները շուտով տեսակցություն են նշանակում, ախոյանները մարտի են հրավիրում միմյանց, մեծազարմների փայլուն հորձանքն ասլեցնում է իր պերճաշքությամբ: Վերջին նորաձևության համաձայն կարված զգեստները շքեղ են, կանանց գեմբերը՝ հմայիչ: Այդ ճոխ և ծիծաղելիության աստիճան



խայտարդեա ֆոնի վրա աչքի են ընկնում իտալական կամ իսպանական ոճով հագնված մանկլավիկները՝ սուսերները գոտկատեղից կախած: Նրանք կանգնած են անշարժ, արձանիկների նման, ձեռքներն ազգերին դրած: Ի դեպ, անօգուտ կլիներ փորձ կատարել պատկերելու շրացուցիչ, շողշողուն և վառվառուն գույներով լի թագավորական արքունիքը. որքան էլ ջանանք, կստացվի դրա աղոտ և թույլ պատճենը միայն: Փորձեք կենդանություն տալ նրբակիրթ ու ծաղրասեր կավալերներին, կյանքի կոչել «Հեպտամերոնի»¹ և Բրանտոմի² նրբագեղ ու սրամիտ տիկնանց, խոսեցնել նրանց XVI դարի բուն ֆրանսերենով՝ հյուսիս, գունագեղ, պարզամիտ, և դուք պատկերացում կունենաք Ֆրանցիսկ I-ի սքանչելի արտաքինի մասին, մանավանդ եթե մտաբերելու լինեք այդ միապետի բառերը. «Արքունիքն առանց տիկնանց՝ դա տարի է առանց զարնան, կամ զարուն՝ առանց ծաղիկների»: Եվ իրոք, Ֆրանցիսկ I-ի արքունիքը մարմնավորում էր ամենասքանչելի ու ամենաազնիվ ծաղիկներով զարդարված հավերժ զարուն:

Ընտելանալով այդ ամբողջ իրաբանցմանն ու աղմուկին և ուշադրությամբ զննելով պալատականների բազմությունը, դժվար չէր նկատել, որ այն բաժանված է երկու բանակի: Դքսուհի գ'էտամպի բանակի տարրերիչ հատկանիշը մանուշակագույնն էր. երկնագույնը ցույց էր տալիս պատկանելիությունը Դիանա դե Պուատյեի բանակին: Դքսուհու կողմնակիցները ռեֆորմի պաշտպաններն էին, իսկ նրանց հակառակորդները՝ նախանձախնդիր կաթոլիկներ: Դիանա դե Պուատյեի կողմնակիցների մեջ կարելի էր տեսնել դոֆինին՝ անդույն դեմքով մի մարդու. դքսուհի գ'էտամպի խմբում անյուրհատ փայլատակում էին Կարլոս Օպիանցու՝ Ֆրանսիակի կրտսեր որդու խելոք, աշխույժ դեմքն ու ոսկեփայլ պանդուրները: Համալրեք այդ պատկերը քաղաքական ու

¹ «Հեպտամերոն» (1558) — եռվեյների ժողովածու. հեղինակն է թագուհի Մարգարիտա Անգուլեմցին, որն իր ամուսնու՝ Նավարայի թագավորի տիպոսի համաձայն Մարգարիտա Նավարացի անունն էր կրում:

² Բրանտոմ Պյեռ դե Թուրդեյ (1535—1614) — ֆրանսիացի պատմաբան. «Նշանավոր նավավարների կյանքը» և «Նրբակիրթ տիկնայք» տշխատությունների հեղինակը

կրոնական գժտություններով, տիկնանց խանդով, նկարիչների ու բանաստեղծների մրցակցութեամբ և բավական պարզորոշ պատկերացում կկազմեք Ֆրանցիսկ I-ի արքունիքում տիրող ատելութեան մասին, որը ձեզ կօգնի հասկանալ պատճառը շարանենգ հայացքների ու սպառնալից ժեստների, որոնք անհնարին էր քողարկել քննախույզ հայացքից, շնայած պալատականների ամբողջ երկերեսանիութեանը:

Գլխավոր թշնամիները՝ Դիանա դե Պուատյեն և Աննա դ'Էտամպը, նստած են հսկայական դահլիճի հակառակ ծայրերում և այնուհանդերձ մրցակցուհիներից մեկի ծաղրական խոսքն անհապաղ հստոնում է մյուսի ականջին և նույնպիսի արագութեամբ՝ բազմաթիվ անբան շարախոսների ջանասիրութեան շնորհիվ, գալիս է սպանիչ պատասխանը:

Մետաքս ու թավիչ հագած ազնվականների մեջ, մոտյադեմ, սրախոսությունների ու ամբողջ շրջապատի նկատմամբ անտարբեր, դոկտորական երկարափեշ պատմուճանը հագին շրջում է Հանրի էսյենը, որն անվերապահորեն նվիրված է ուֆորմիստների կուսակցությանը, իսկ նրանից երկու քայլ այն կողմ, սյանը թիկն տված, նույնքան անտարբեր ամեն ինչի նկատմամբ, գունատ ու տխուր կանգնած է Պյետրո Ստրոցին¹, Ֆլորենցիացի վտարանդին. իր անուրջներում նա հավանաբար տեսնում է հեռավոր հայրենիքը, ուր նրան վրճակված էր վերադառնալ որպես գերի և հանգիստ գտնել միայն գերեզմանում: Թերևս ավելորդ է ասել, որ այդ ազնվաբարո վտարանդին (մոր կողմից Սկատերինա Մեդիչիի բարեկամը) ամբողջ հոգով կողմնակից էր կաթոլիկների կուսակցությանը:

¹ Պյետրո Ստրոցի (մահ. 1558 թ.) — ծագումով Ֆլորենցիայի բանկատեր Ստրոցիներից, որոնք թշնամական հարաբերությունների մեջ էին բանկատեր-գուբսերի՝ Մեդիչիների հետ: Ամբողջ կյանքը նա պայքարել է Մեդիչիների գեթ: Մտայութեան մասնելով Ֆրանցիսկ I-ի արքունիքը, մասնակցել է իտալական պատերազմներին (Մեդիչիները կարլոս V-ի դաշնակիցներն էին): 1556 թ. դարձավ Ֆրանսիայի մարշալ:

Ահա, գրուցելով պետական կարևոր դորժերի մասին, ասես իրենց բառերն ավելի ծանրակշիռ դարձնելու համար բոպեն մեկ կանդ առնելով դեմ-դիմաց, անցնում են ծերունի Մոնմորանսին, որին թագավորը երկու տարի առաջ կոնետարլի պաշտոն շնորհեց, որը Բուրբոնների շնորհագրկումից հետո թափուր էր, և կանցլեր Պուլայեն՝ հպարտ վերջերս իր սահմանած վիճակախաղի հարկի և Վիլլեր-Կոտերում¹ սեփական ձեռքով ստորագրած հրամանագրի համար:

Մի կողմ քաշված, ոչ մեկի հետ խոսակցության շրոնվելով, իր շողշողուն ճերմակատամ ժպիտով զինված, անցուդարձ է անում նախկին բենեդիկտական, իսկ այժմ՝ Ֆրանցիսկյան Ֆրանսուա Ռարլեն: Աչքերը շորս արած, ականջները սրած, նա ամեն ինչ տնտղում է ու ամեն ինչ ծաղրում: Իսկ սապատավոր Տրիրուլեն², նորին մեծության սիրելի ծաղրածուն, ընկնում է բոլորի ոտքերի տակ կատակների անհատնում իր պաշարով և, օգտվելով սիրելի գաճաճի իր դիրքից, ծաղրում մե՛րթ մեկին, մե՛րթ մյուսին, ճիշտ է, բավականին բարեսրտորեն, բայց ոչ միշտ՝ անվնաս:

Ինչ վերաբերում է Կլեման Մարոյին, որը սքանչելի է թագավորական սենեկասպասավորի իր նորակար համադրևտի մեջ, ապա նա նույնքան շփոթված տեսք ունի, որ-

¹ Վիլլեր-Կոտերում, Սենի դեպարտամենտի փոքրիկ քաղաքում, որտեղ Ֆրանցիսկ 1-ը ամրոց ունեւր, ստորագրվեց նշանավոր հրամանագիրն այն մասին, որ թագավորական բարձր աալանների որոշումները պետք է գրվեն ոչ թե լատիներեն, ինչպես արվում էր նախկինում, այլ՝ Ֆրանսերեն: Ամրոցը մինչև հիմա էլ կանգուն է, թեև կորցրել է նախկին պերճութունը: Ամրոցի ճարտարապետութունը սկզբնական մտահղացման համեմատությամբ զգալի փոփոխութունների է ենթարկվել: Հիմնադրված լինելով Ֆրանցիսկ 1-ի օրոք, որը զարդարել էր այն սալամանդրների արձաններով, շինարարութունն ավարտվեց հենրիխ II-ի օրոք, որի հրամանով փորագրվեցին նրա և Եկատերինա Մեդիչիի անվանագրերը:

² Տրիրուլեն— Լյուզովիկոս XII և Ֆրանցիսկ 1 թագավորների պալատական ծաղրածուն, որի անունը հիշվում է ժամանակագրութունների մեջ: Տրիրուլեն պատկերված է Վիկտոր Հյուգոյի «Թագավորը զվարճանում է» դրամայում, իսկ Վերգիի հուշակավոր օպերայում, որը գրված է այդ դրամայի մոտիվներով, գործում է Ռիզոլետո անվան տակ:

քան դքսուհի դ'էտամպի ընդունելութեան ժամանակ: Հավանաբար բանաստեղծի գրպանում հիմա էլ նորաթուխ մի ռտանավոր կա, կամ ողբացյալ սոնետ և նա առիթ է սպասում այն մատուցելու համար որպէս հանպատրաստից հորինված: Ավա՛ղ, բոլորին հայտնի է, որ ռգեշնչումը տրվում է վերուստ, և մենք այն տնօրինել չենք կարող: Մարոյի գրված էլ սքանչելի բանաստեղծութունն ծայր առավ՝ հղված տիկին Դիանային: Նա փորձում էր դիմադրել, բայց մուսան սիրուհի չէ, այլ՝ տիրուհի. բանաստեղծութունը հյուսվում էր ինքն իրեն, հանգերն ինչ-որ հրաշքով շարվում էին մեկը մյուսի հետևից, և հիմա շարաբաստիկ գովերգն անտանելիորեն տանջում էր նրան: Եթե Մարոն գլխի տերը լիներ, այդ գովերգն, անշուշտ, կնվիրեր դքսուհի դ'էտամպին կամ Մարգարիտա Նավարացուն. դրանում կասկած չի կարող, քանզի պոետն ամբողջ հոգով հակված էր հենց բողոքականների կուսակցութեանը: Գուցե այդ անիծյալ գովերգը ծայր առավ հենց այն րոպեին, երբ նա ջանում էր էպիգրամ հորինել տիկին Դիանայի հասցեին. ինչևիցե, կաթոլիկուհուն նվիրված սքանչելի բանաստեղծութունը լույս աշխարհ եկավ: Կարելի՞ էր արդյոք դիմանալ և բողոքականների կուսակցութեանը հարելու դեպքում անգամ շարտասանել այդ բանաստեղծութունը հասկացող բարեկամներից որևէ մեկին, թեկուզ կիսաձայն:

Եվ խեղճ Մարոն շղիմացավ: Անհամեստ կարգինալ դե Տուրնոնը, որի առաջ պոետը գեղեց իր բոցաշունչ հոգին, այդ բանաստեղծութունն այնքան սքանչելի, այնքան փայլուն ու հոյակապ գտավ, որ իր հերթին շղիմացավ ու արտասանեց Լորանի դուքսի համար, իսկ վերջինս շհապաղեց հաղորդել տիկին Դիանային: Եվ անմիջապէս «երկնագույնների» խմբում փսփսուք սկսվեց. պոետին մոտ կանչեցին, համողեցին, ստիպեցին կարգալ բանաստեղծութունը: «Մանուշակագույնները» տեսնելով, թե Մարոն ինչպէս է բազմութեան մեջ ճանապարհ բացելով գնում դեպի Դիանան, նույնպէս մոտեցան ու շրջապատեցին վախեցած ու շոյված պոետին: Վերջապէս ինքը՝ տիկին դ'էտամպն էլ ոտքի կանգնեց

ու հետաքրքրութեամբ նայեց «երկնագույնների» կողմը: «Միայն նրա համար, որպեսզի տեսնեմ, թե այդ ճարպիկ Մարոն, որը միշտ անշափ սրամիտ է, կկարողանա՞ արժանավայել կերպով գովերգել տիկին Դիանային»,— ասաց նա:

Դժբախտ պոետը գլուխ տվեց ժպտացող Դիանա դե Պուատյեին և արդեն պատրաստվում էր սկսել բանաստեղծությունը, երբ շրջվելով տեսավ տիկին դ'էտամպին, որը նույնպես ժպտում էր նրան. սակայն եթե Դիանայի ժպիտը լի էր բարյացակամությամբ, տիկին դ'էտամպի ժպիտը սպառնալից էր: Եվ այդպես, մի կողմից ջերմանալով, իսկ մյուս կողմից ցրտաշունչ սառնություն համակվելով, խեղճ Մարոն բեկբեկուն ձայնով մրմնջաց իր բանաստեղծությունը:

Փափագում եմ երբեմն ես Ֆեբոս դառնալ,
Բայց ոչ ցավը վերուստ տրված՝
Սրախս ցավը դարմանելու:
Ցավն այդ տանջող ու շարշարող
Ոչ որ ամոքել չի կարող...
Ոչ էլ նետերով հրավառ
Կանացի սրտերը խոցելու:
Անզոր եմ մրցել թագավորի հետ.
Միակ ցանկությունս է հավետ
Գեղանի Դիանայի սերը վայելել:

Հենց որ հնչեցին նրբագեղ գովերգի վերջին բառերը, «երկնագույնները» սկսեցին ծափահարել. «մանուշակագույնների» մեռելային լռություն էին պահպանում: Գովեստներից խրախուսված և «մանուշակագույնների» թշնամական հայտարարներից խոցված՝ պոետը վճռականորեն մոտեցավ Դիանա դե Պուատյեին ու մատուցեց նրան իր ստեղծագործությունը:

Արտանշելի Դիանային,— ասաց նա կիսաձայն, խոնարհվելով գեղեցկուհու առաջ:— Դուք հասկանո՞ւմ եք ինձ, տիկին: Գեղեցիկներից գեղեցիկին, անզուգական գեղեցկուհուն:

Դիանան պերճախոս հայացքով շնորհակալություն հայտնեց Մարոյին, և վերջինս հեռացավ:

— Ինչո՞ւ գեղանի տիկնոջը մի գովերգ շնվիրել: Չէ՞ որ մինչև հիմա ես բանաստեղծություններս նվիրում էի ամենագեղեցիկին,— մեղա գալով ասաց Մարոն, անցնելով տիկին դ'էտամպի կողքով:— Հիշո՞ւմ եք, տիկին, «Բոլոր սրտերի հպարտ տիրուհուն»:

Պատասխանի փոխարեն Աննան սպառնալից հայացքով խոցեց Մարոյին:

Այդ ամբողջ ժամանակամիջոցում երկու ոչ մեծ խումբ հեռու էին մնում պալատականների բազմությունից: Առաջինը կազմում էին մեզ ծանոթ Ասկանիոն ու Բենվենուտո Չելլինին, որոնք թուլություն ունեին գովերգներից առավել սիրելու «Աստվածային կատակերգությունը»: Երկրորդ խմբի մեջ էին մեզ նույնքան քաջ ծանոթ կոմս դ'Օրբեկը, վիկոնտ դե Մարմանը, մեսսեր դ'էստուրվիլը և Կոլոմբան, որը խնդրել էր հորը շխառնվել պալատականների բազմությանը. նա առաջին անգամ էր այդ մարդկանց շրջապատում, որոնք վախից բացի ուրիշ ոչինչ չէին ներշնչում նրան: Կոմս դ'Օրբեկը, կամենալով նրբակիրթ լինել, շքանկացավ մենակ թողնել հարսնացուին, որին հայրը բերել էր պալատ, պատարագից հետո թագուհուն ներկայացնելու համար:

Ասկանիոն և Կոլոմբան, թեև շատ հուզված էին, անմիջապես նկատեցին իրար ու ըսպեն մեկ ծածուկ հայացքներ էին փոխանակում: Երկուսն էլ անմեղ ու երկշտա, հոգին վսեմացնող միայնության մեջ մեծացած, այդ փայլուն ու դեխազնվականության մեջ մոլորված կզգային իրենց, եթե չհանդիպեին այստեղ և հնարավորություն շունենային քաջալերող հայացքներ փոխանակել:

Նրանք չէին հանդիպել այն օրից, երբ Ասկանիոն իմացավ Կոլոմբայի նկատմամբ Բենվենուտո Չելլինիի տածած սիրո մասին: Ասկանիոն մի տասն անգամ ապարդյուն փորձեր էր կատարել Նելի Փոքր ամրոցն ընկնել: Բայց երբ էլ որ նա հայտնվում էր, տիկին Պերինայի փոխարեն այժմ նրան դիմավորում էր նոր դուենյան, որին կոմս դ'Օրբեկը կարգել էր Կոլոմբային հսկելու, և դուենյան ամեն անգամ անխղճորեն ճանապարհ էր դնում նրան: Իսկ խեղճ Ասկանիոն ոչ այնքան հարուստ էր, ոչ էլ այնքան ձեռներեց այդ կնոջ

բարյացակամութիւնը շահելու համար: Բացի այդ, իր սխալութեամբ աղջկան նա կարող էր հայտնել միայն տխուր լուրեր, իսկ այդ կարելի էր և հետաձգել: Չէ՞ որ Բենվենուտոն ինքը խոստովանեց, որ սիրում է Կոլոմբային: Խեղճ սիրահարներն այլևս չէին կարող հույս դնել նկարչի օգնութեան վրա. ընդհակառակը, նրանք ստիպված էին զգուշանալ նրանից:

Այսուհետև Ասկանիոյին մնում էր միայն, ինչպես արդեն նա ասաց Չելլինիին, հույսը դնել աստծու օգնութեան վրա: Արիտասարդը միամտորեն որոշեց շարժել տիկին դ'էտամպի սիրար: Երբ մարդու ոտքերի տակ հողը երեւում է, նա պատրաստ է ձեռք գցել ծղոտին: Բենվենուտոյի ամենակործան եռանդն այժմ ոչ միայն անօգուտ էր Ասկանիոյի համար, այլ ամեն թոպե կարող էր շրջվել նրա դեմ: Բայց Ասկանիոն երիտասարդ էր և այդ պատճառով հավատում էր, որ իրեն կ'աջողվի տիկին դ'էտամպի հոգում հնչեցնել մեծահոգութեան ու մարդասիրութեան լարերը, նրան կարեկցանք ներշնչել սիրած մարդու նկատմամբ: Իսկ եթե այդ ծղոտն էլ գուրս սլոթնի Ասկանիոյի ձեռքից, նրան կմնա տրվել հոսանքին ու սպասել. չէ՞ որ ինքն անօգնական է ու մենակ: Հենց այդ է պատճառը, որ նա Բենվենուտո Չելլինիի հետ միասին եկել է թագավոր Ֆրանցիսկի արքունիքը:

Տիկին դ'էտամպը վերադարձավ իր տեղը: Ասկանիոն, գրոտնու շքսիմբին միանալով, ընդհուպ մոտեցավ նրա բաղկալիտին: Դքսուհին հետ նայեց և տեսավ նրան:

Ա՛խ, այդ դո՞ւք եք, Ասկանիո,— բավական սառնորեն ասաց անվանի տիկինը:

Այո, դքսուհի: Ես եկել եմ այստեղ ուսուցչիս՝ Բենվենուտո Չելլինիի հետ և համարձակութիւն ունեցա անհանգրոտացնել ձեզ: Ինձ շատ է հուզում շուշանի նկարագիծը, որը բարեկամել էիք ինձ պատվիրել: Օրերս ես նկարագիծը թողելի ձեզ մոտ, պալատում: Գուցե դժգո՞հ եք մնացել:

Ա՛յ, ո՛չ, ընդհակառակը, նկարագիծն ինձ շատ դուր եկավ. ասիկի մեղմորեն պատասխանեց տիկին դ'էտամպը: Աս յուսյո՞ւմ էիք պարտն դե Գիզի նման գնահատողի, և ես յիսո՞վն համաձայնեց ինձ հետ: Բայց կկարողանա՞ք

արդյոք նույնքան լավ պատրաստել ոսկե ծաղիկը: Իսկ եթե վստահ եք ձեր վարպետությանը, ասյա աշխատանքի համար ունե՞ք պետք եղածի շափ թանկարժեք քարեր:

— Օ՛, այո, տիկին, կարծում եմ, որ չի սլակսի... Լավ կլինեք ծաղկեպսակը զարդարել ցողի կաթիլի նման մեծ ադամանդով: Բայց գուցե դա շափազանց թանկ աշխատանյութ է ինձ նման համեստ վարպետի համար:

— Այդպիսի մանրուք լիովին կարող ենք թույլ տալ մեզ:

— Սակայն, տիկին, այդպիսի մեծության ադամանդն արժե ամենաքիչը երկու հարյուր հազար էկյու:

— Լավ, լավ, ես համաձայն եմ:— Եվ ձայնը ցածրացնելով, դքսուհին ավելացրեց.— Ասկանիո, մի փոքր ծառայություն շե՞ք մատուցի ինձ:

— Ես միշտ պատրաստ եմ ծառայել ձեզ, տիկին:

— Հենց հիմա, այդ Մարոյի շատախոսությունը լսելիս, ես նկատեցի այնտեղ, սրահի ծայրում, պարոն դ'Օրբեկին: Եվ խնդրում եմ, մոտեցեք նրան ու ասացեք, որ ես ցանկանում եմ խոսել նրա հետ:

— Կոմսի՞ն...— գունատվելով բացականչեց Ասկանիոն:

— Այո: Մի՞թե դուք շասացիք, որ պատրաստ եք ծառայել ինձ,— գոռոզաբար հարցրեց դքսուհին:— Ես ուզում եմ, որ դուք ներկա լինեք մեր խոսակցությանը և խորհեք որոշ հարցերի մասին, եթե, իհարկե, սիրահարվածներն առհասարակ ընդունակ են մտածելու. դրա համար էլ հենց ձեզ եմ տալիս այդ հանձնարարությունը:

— Ես հնազանդվում եմ, տիկին,— պատասխանեց Ասկանիոն, վախենալով զայրացնել դքսուհուն, որից այժմ կախված էր նրա ճակատագիրը:

— Ուրեմն, հիանալի է: Խոսեք կոմսի հետ միայն խալիբեն, այդպես է պետք, ու վերադարձեք նրա հետ միասին:

Եվ Ասկանիոն, վախենալով կրկին զայրացնել իր վտանգավոր հովանավորուհուն, հնազանդորեն գնաց հանձնարարությունը կատարելու. դիմելով ինչ-որ երիտասարդ ազնվականի, որը հագել էր մանուշակագույն ժապավեններով զարդարված կոստյում, Ասկանիոն հարցրեց, թե նա չի՞ կարող արդյոք մատնանշել կոմս դ'Օրբեկին:

— Ահա՛ կոմսը: Տեսնո՞ւմ եք այն ծեր կապիկին, որը կանգնած է գեղանի աղջկա կողքին ու խոսում է Փարիզի պրևոյի հետ:

Գեղանի աղջիկը Կոլոմբան էր, որին հետաքրքրասիրութեամբ զննում էին պալատական պճնամուլները: Ինչ վերաբերում է ծեր կապիկին, այսինքն՝ կոմսին, նա իրոք որ այնքան զզվելի երևաց Ասկանիոյի աչքին, որքան կարող էր ցանկանալ ախոյանը ախոյանին: Հեռվից մի հայացք նետելով կոմս դ'Օրբեկի վրա, Ասկանիոն, ի մեծ զարմանս Կոլոմբայի, մոտեցավ կոմսին ու իտալերեն հայտնեց նրան տիկին դ'էտամպի հրավերքը: Կոմս դ'Օրբեկը ներողութուն խնդրեց հարսնացուից ու բարեկամներից և շտապեց դքսուհու մոտ: Ասկանիոն գնաց նրա հետևից, քաջալերող մի հայացք նետելով խեղճ Կոլոմբային, որին անհանգստացրել էր այդ տարօրինակ հանձնարարությունը, իսկ գլխավորը՝ պատվիրակի ընտրությունը:

— Ա՛, բարև, կոմս: Ուրախ եմ ձեր գալստյան համար,— բացականչեց տիկին դ'էտամպը: Ես շատ կարևոր ասելիք ունեմ ձեզ: Պարոնա՛յք,— դիմեց նա պալատականներին,— նորին մեծությունները գուրս կգան, հավանաբար, մի տասնըփնգ րոպեից. ձեր թույլտվությամբ ես կօգտվեմ այդ ժամանակից և կզրուցեմ վաղեմի բարեկամիս՝ կոմս դ'Օրբեկի հետ:

Դքսուհու շուրջը խմբված ազնվականները, բրնձի ճամփու դրին այդքան անփափկանկատորեն, շտապեցին հեռանալ և մենակ թողեցին նրան թագավորական գանձապահի հետ, լուսամուտի որմնախորշերից մեկում, որը մեր այժմյան որսահներից սակաս ընդարձակ չէր: Ասկանիոն ցանկանում էր հեռանել նրանց, բայց դքսուհին ձեռքի շարժումով որոնեց նրան:

Ո՞վ է այս պատանին,— հարցրեց կոմսը:

Իմ մանկլավիկն է, իտալացի. նրա ներկայությամբ կարող եք խոսել նույնքան ազատորեն, որքան եթե մենակ լինեիք: Նա ոչ մի բառ չի հասկանում ֆրանսերեն:

Հիսուսյի է,— պատասխանեց կոմսը:— Մինչև հիմա ես կարող եմ հնազանդվել եմ ձեզ, տիկին, չփորձելով թա-

փանցել ձեր հրամանների էության մեջ: Դուք ցանկացաք, որ ապագա կինս ներկայացվի թագուհուն, և ահա Կոլոմբան հոր հետ արդեն այստեղ է: Բայց հիմա, երբ կատարեցի ձեր ցանկությունը, կկամենայի իմանալ՝ ինչո՞ւ եմ այդ արել: Ձե՞ք բարեհաճի գոնե հիմա, տիկին, բացատրել ինձ դործի էությունը:

— Դուք, դ՛Օրբեկ, իմ բարեկամներից ամենանվիրվածն եք. չգիտեմ կկարողանա՞մ արդյոք երբևէ հատուցել ձեր բոլոր ծառայությունները. բարեբախտաբար, ես դեռ շատ բան ունեմ ձեզ տալու: Հուսանք, որ այդ ինձ կհաջողվի. չէ՞ որ գանձապահի պաշտոնը, որ ստացել եք, սկիզբն է միայն, հիմքը, որի վրա ես կբարձրացնեմ ձեր բարեկեցության շենքը, կոմս:

— Օ՛, տիկին,— բացականչեց կոմսը, խոր գլուխ տալով:

— Այդ իսկ պատճառով ես լիովին անկեղծ կլինեմ ձեզ հետ, կոմս: Բայց թույլ տվեք նախ գովել ձեր ընտրությունը: Ես քիչ առաջ տեսա Կոլոմբային: Նա զմայլելի է. թեև, իհարկե, մի քիչ երկշոտ է, բայց դա առանձնահատուկ հմայք է տալիս սղջիկներին: Եվ, այնուամենայնիվ, շնայած ես լավ եմ ճանաչում ձեզ, կոմս, ինչքան էլ ջանացի, ոչ մի կերպ չկարողացա հասկանալ, թե ինչն է ստիպում ձեզ ամուսնանալ նրա հետ. ձեզ նման պատկանելի, ողջախոհ ու ամենայն հավանականությամբ կանացի թարմության ու գեղեցկության նկատմամբ թուլություն չտածող մարդուն: Ի՞նչ է պահված այդ ամենի հետևը. չէ՞ որ դուք այնքան հեռանկատ մարդ եք, կոմս:

— Ինչ ասեմ, տիկին... Վաղ թե ուշ պետք է մեկի հետ ամուսնանալ: Եվ, բացի այդ, ծեր խաբեբան բալականին կարողություն է կտակել իր աղջկան:

— Բայց նա քանի՞ տարեկան է:

— Հիսունհինգ, թե հիսունվեց:

— Իսկ դո՞ւք, կոմս:

— Հըմ... ես էլ համարյա նույն տարիքի եմ, բայց ծերուկը շատ զառամյալ տեսք ունի:

— Դեհ, վերջապես դուք նմանվեցիք ձեզ, կոմս: Թեև առանց այդ էլ վստահ էի, որ դուք բարձր եք գոհակ սենտի-

մենտալութունից և շեք կարող հմայվել այդ աղջկա հրապույրներով:

— Այդ էր պակաս, տիրուհի: Մտքովս էլ չի անցնի այդպիսի դատարկաբանութուն: Եթե աղջիկն այլանդակ էլ լիներ, ինձ համար մեկ է. բայց քանի որ գեղեցիկ է, ավելի չավ:

— Հիանալի է, կոմս: Շատ ուրախ եմ, որ ինձ հուսախաբ չարեցիք:

— Հիմա չէի՞ք բարեհաճի ասել, տիրուհի...

— Ես երազում եմ փայլուն ապագա ստեղծել ձեզ համար, դ'Օրբեկ,— ընդմիջեց նրան դքսուհին:— Ես մեծ ցանկութուն ունեմ տեսնել ձեզ այդ Պուլայեի տեղում: Չկարողացա հաշտվել նրա գոյության հետ:— Եվ դքսուհին ատելությամբ լի մի հայացք նետեց կանցլերի վրա, որը կոնտատարի հետ դեռ անցուղարձ էր անում սրահում:

— Ինչպե՞ս... Դուք հատկացնում եք ինձ պետության բարձրագույն պաշտոններից մե՞կը:

— Իսկ ինչո՞ւ ոչ, կոմս: Դրա համար դուք բալականաչով անվանի եք: Բայց, ավաղ, իմ իշխանութունը թագավորի վրա շատ էլ հաստատուն չէ. այն պարզապես կախված է մազից: Հենց հիմա էլ ես մահացու տափնապի մեջ եմ: Եստե՛ն այն է, որ թագավորը նոր ֆավորիտուհի ունի՝ ինչ-որ գոտական պաշտոնյայի, Ֆերոն անունով հասարակ կոշման տեր մի մարդու կին: Եթե այդ կինը նույնպես փառասեր է, ես և դուք կորած ենք: Ի դեպ, ինքս եմ մեղավորը. հարկավոր էր նախապես միջոցներ ձեռնարկել: Բայց որտեղից դուռնեմ երկրորդ դքսուհի գե Բրիսակ, որին մի ժամանակ բերել էի նորին մեծության համար: Շատ դժվար է հաշտվել նրա կուստի հետ: Թուլակազմ, քնքուշ, նա իսկական երեխա էր և, բացի այդ, բացարձակապես անվտանգ. խեղճ կի՛նն օր ու գիշեր իմ արժանիքներն էր միայն մատնանշում թագավորին: Տարաբախտ Մարի: Նա իր ուսերին առավ իմ դիրքի բոլոր դժվարութունները, ինձ բաժին թողնելով առավելությունները միայն: Եվ ինչ գնով էլ լինի, պետք է շեղել թագավորի աշուղտությունն այդ Ֆերոնուհուց, ինչպես անվա-

նում են նրան արքունիքում: Բայց ես սպառել եմ հմայք-
ներխ սամբողջ զինանոցը և հիմա միակ փրկությունս սովու-
րությունն է:

— Հնարավոր բան է, տիրուհի:

— Ավաղ, այդպես է: Ես իշխում եմ միայն թագավորի
ուղեղի վրա, իսկ նրա սիրտը պատկանում է ուրիշի: Հասկա-
նում եք, կոմս, ինձ պետք է նվիրված ու հավատարիմ օգ-
նականուհի, որին կարողանայի լիովին վստահել: Ես ոչինչ՝
չէի խնայի, կոսկեղօծեի նրան: Բայց որտեղի՞ց գտնեմ այդ-
պիսի մի գանձ, դ՛Օրբեկ: Օգնեցեք ինձ: Ձեր մտքով իսկ չի
անցնի, որ Ֆրանցիսկ I-ի հոգում անդադար պայքար է
գնում միապետի ու մարդու միջև, և որ երբեմն մարդը հաղ-
թում է միապետին: Ախ, եթե մենք երկուսով իշխեինք նրա
վրա ոչ որպես մրցակցուհիներ, այլ որպես դաշնակիցներ,
եթե մենք լինեինք ոչ միայն ֆավորիտուհիներ, այլ ընկերու-
հիներ, եթե մեզնից մեկը կառավարեր թագավոր Ֆրանցիսկ
I-ին, իսկ մյուսը պարզապես Ֆրանցիսկին. Ա՛խ... այդ դեպ-
քում ամբողջ Ֆրանսիան մեր ձեռքում կլիներ: Եվ այն էլ
ինչպիսի՜ ժամանակաշրջանում, կոմս: Երբ Կարլոս V-ը
շտապում է ինքնակամորեն նետվել մեր ցանցի մեջ: Օգտվե-
լով նրա անմտությունից, մենք կարող էինք փայլուն ապա-
գա ապահովել մեզ համար: Ձեմ ծածկի ձեզնից իմ ծրագ-
րերը, դ՛Օրբեկ. ահա այդ Դիանան, որը շատ է գուր գալիս
ձեզ, մի գեղեցիկ օբ կզրկվեր մեր ճակատագրի վրա ազդե-
լու ամեն մի հնարավորությունից և ոմն կոմս կարող էր
դառնալ... Ահավասիկ և թագավորը:

Այդպես էր գործում տիկին դ՛էտամպը. նա հազվադեպ
էր որևէ բան բացատրում, գերադասելով ակնարկների լե-
զուն. նա մտքեր ու զգացմունքներ էր ներշնչում մարդուն,
բորբոքում էր նրա փառասիրությունը, ազահությունը, վատ
հակումները, և ժամանակին լուում: Անգերազանցելի հմտու-
թյուն, որին տիրապետելը չէր խանգարի սիրահարվածների
ու բանաստեղծների մեծ մասին:

Կոմս դ՛Օրբեկը՝ անբարոյական, փողի ու մեծարանքների
գերի, հիանալիորեն հասկացավ դքսուհուն, նամանավանդ

խոսակցութեան ընթացքում վերջինիս հայացքը հաճախ ուղղու-
մում էր Կոլումբայի կողմը: Իսկ Ասկանիոն այնքան ուղղա-
միտ ու ազնիվ բնութեան տեր էր, որ հասկանալ իսկ չէր
կարող այդ ձեռնարկի ամբողջ ստորութիւնը, ամբողջ նեն-
դութիւնը, սակայն դքսուհու մոայլ ու տարօրինակ բառերից
ազոտ կերպով զգաց, որ իր սիրելի Կոլումբայի գլխին ինչ-որ
սպառնալից պմպեր են կուտակվում, և սարսափահար նա-
յում էր տիկին դ'էտամպին:

Սպասավորը հայտարարեց թագավորի ու թագուհու գա-
լլը: Պալատականներն անմիջապէս ոտքի ելան, ու գլխարկ-
ները հանելով, քարացան տեղներում:

— Աստված ձեզ պահապան, պարոնա՛յք,— ներս մտնե-
լով, ասաց Ֆրանցիսկ I-ը:— Պետք է կարևոր նորութիւն
հայտնեմ ձեզ. մեր շատ սիրելի եղբայրը, կայսր Կարլոս
V-ը այժմ գտնվում է Ֆրանսիա բերող ճանապարհին, իսկ
զուցե արդեն ոտք է դրել Ֆրանսիական հողը. ուրեմն պատ-
րաստվենք արժանավայել կերպով դիմավորել կայսր Կար-
լոսին: Կարծում եմ հարկ չկա հիշեցնել հավատարիմ ազնւ-
րականութեանս, թե հյուրընկալութեան օրենքներն ինչի են
պարտավորեցնում: Ոսկե Դիպակի ճամբարում՝, մենք ար-
դեն ապացուցեցինք, որ կարողանում ենք թագավորներ ըն-
դունել: Մի ամիս էլ չի անցնի, և Կարլոս V-ը կլինի Հուվրում:

— Իսկ ես, պարոնայք, նախապէս շնորհակալութիւնս
եմ հայտնում ընդունելութեան համար, որը ցուցց եք տալու
որքաւ եղբորս,— քնքուշ ձայնով ավելացրեց թագուհի էլիո-
նորան:

Ի պատասխան հնչեցին բարձրաձայն բացականչութիւն-
ներ.

Կեցցե՛ թագավորը:

Սակե Դիպակի ճամբար— այդ անունն է ստացել 1520 թ. ֆրան-
սիական թագավոր Ֆրանցիսկ I-ի և անգլիական թագավոր Հենրիխ VIII-ի
հասնելու փոխքը, որի ժամանակ նրանց միջև կնքվեց քաղաքական և
տնտեսական դաշինք (որը հետագայում խախտվեց): Երկու միապետն էլ
վերջնական կերպով անսահման շքեղութեամբ: Ֆրանցիսկ I-ի վրանը ոսկե դի-
պլոմներ էր և նկարի ունեւոր՝ ոսկե արձան:

— Կեցցե՛ք թագուհին:

— Կեցցե՛ք կայսրը:

Այդ պահին, պալատականների բազմութեան մեջ ճանապարհ բացելով, վազեվազ թագավորին մոտեցավ ծաղրածու Տրիբուլեն:

— Ձե՛րդ մեծութուն, — բացականչեց նա, — թույլ տվեք նվիրել ձեզ իմ աշխատութունը, որը պատրաստվում էմ տպագրել:

— Հաճույքով, ծաղրածու. բայց նախ ասա, թե ինչպես ես անվանելու աշխատութունդ և ինչի մասին է այն:

— Աշխատութունս կանվանեմ «Հիմարների օրացույց», սիր, քանզի այն պարունակելու է աշխարհում եղած բոլոր մեծագույն հիմարների ցանկը: Իսկ առաջին էջի վրա արդեն գրել եմ նախկին և ապագա հիմարների արքայի անունը:

— Հետաքրքիր է իմանալ, ո՞վ է այդ արժանավոր եղբայրակիցս, որին գահ ես բարձրացրել, — ժպտալով հարցրեց թագավորը:

— Կարլոս Հինգերորդը, — պատասխանեց Տրիբուլեն:

— Կարլոս Հինգերո՞րդը, — բացականչեց թագավորը: — Բայց ինչո՞ւ հատկապես նա:

— Որովհետև նրանից բացի ուրիշ ոչ ոքի մտքով չէր անցնի գալ ձերդ բարձրութեան երկիրը այն բանից հետո, երբ նա գերի էր պահում ձեզ Մադրիդում, — պատասխանեց ծաղրածուն:

— Իսկ եթե նա բարեհաջողությամբ անցնի ամբողջ թագավորութունս մի ծայրից մյո՞ւսը, — հարցրեց Ֆրանցիսկը:

— Օ՛, այդ դեպքում հանդիսավոր խոստում եմ տալիս չնչել նրա անունը և փոխարինել ուրիշ անվամբ:

— Հետաքրքիր է, ո՞ւմ անվամբ:

— Ձեր, սիր: Որովհետև, այդ դեպքում դուք նրանից ավելի հիմար կլինեք:

Թագավորը ծիծաղեց, պալատականները հետևեցին նրա օրինակին: Միայն դժբախտ էլեռնորան գունատվեց, լսելով այդ կատակը:

— Ի՞նչ արած, — ասաց Ֆրանցիսկը: — Կարող ես հենց հիմա Կարլոսի անունը փոխարինել իմ անվամբ: Ես ազնվա-

կանի խոսք եմ տվել կայսրին ու խոսքիս տերը կլինեմ: Իսկ ձոնդ ընդունում եմ և ահա քեզ առաջին օրինակի արժեքը:

Եվ գրպանից հանելով լիքը դրամապանակը, թագավորը նետեց ծաղրածուին: Տրիբուլեն ատամներով բռնեց ընծան ու շորեքթաթ, գոմալով փախավ, ինչպես շունը տանում է իրեն գցած ոսկորը:

Փարիզի պրևոն Կոլոմբայի հետ մոտեցավ թագուհուն:

— Ձե՛րդ մեծություն, — ասաց նա, — թույլ տվեք այս ուրախալի օրը ներկայացնել ձեզ աղջկա՝ Կոլոմբային, որին ձերդ մեծությունը բարեհաճել է ընդունել իր պալատական տիկնանց շարքը:

Թագուհին, որը բարի սիրտ ուներ, շոյեց ու քաջալերեց հուզված աղջկան, մինչդեռ թագավորը հիացմունքով լի հայացքը շէր կտրում Կոլոմբայից:

— Աղնվականի խոսք, մեսսեր պրևո, — ժպտալով բացականչեց Ֆրանցիսկ I-ը: — Դուք պարզապես պետական հանցագործ եք. մինչև հիմա մեզնից թաքցրել եք այս գոհարը: Չէ՞ որ ձեր աղջիկը կարող է զարդարել նորին մեծությանը շրջապատող սքանչելագույն տիկնանց պսակը: Եվ եթե ես ներում եմ ձեր նենգությունը, պարոն, ապա միայն այս հաճելիորեն խոնարհված աչքերի համր պաշտպանության համար:

Թագավորը նրբագեղ շարժումով ողջունեց գեղանի աղջրկան և ամբողջ արքունիքի ուղեկցությամբ գնաց դեպի մատուռը:

— Տիկին, — ասաց դուքս դե Մեդինա Սիլվանիան, ձեռքը մեկնելով դքսուհի դ'էտամպին, — եկեք առաջ թողնենք այս բոլոր պալատականներին: Ես շատ կարևոր ու գաղտնի ասելիք ունեմ ձեզ և կարծում եմ, որ դրա համար սա ամենալարմար տեղն է:

Ես ձեր տրամադրության տակ եմ, պարոն դեսպան, — պատասխանեց դքսուհին: — Ո՛չ, ո՛չ, դ'Օրբեկ, մնացեք... Պարոն դե Մեդինա, դուք համարձակորեն կարող եք խոսել վազկամի բարեկամիս ներկայությամբ. ես վստահում եմ նրան. ինչպես ինքս ինձ: Իսկ այս պատանի իտալացին ֆրանսուսերեն ոչ մի բառ չի հասկանում:

— Լա՛վ, տիկին, բայց շմոռանաք, որ ձեզ համար նույն-
քան կարևոր է գաղտնի պահել այս խոսակցութիւնը, որքան
և ինձ: Եվ քանի որ մենակ ենք, ես կխոսեմ պարզ, առանց
երկարաբանութիւնների: Դուք գիտեք, որ նորին մեծութիւն
կայսր Կարլոս Հինգերորդը որոշել է անցնել Ֆրանսիայով և
դուցե արդեն գտնվում է ձեր երկրում: Կայսրը գիտի, որ գա-
լիս է թշնամու բանակը, բայց ձեր խորհրդով հույս է դնում
թագաւորի ասպետական զգացմունքների վրա: Անկեղծորեն
ասած, տիկին, ձեր ազդեցութիւնը Ֆրանցիսկ I-ի վրա շատ
ավելի է, քան նրա մինիստրներից որևէ մեկինը: Այդ իսկ
պատճառով միմիայն ձեզնից է կախված, թե ինչպիսին կլի-
նի այդ խորհուրդը՝ վատ կամ լավ, ժողով՞ կ կդառնա կայսրի
համար, թե ժառայութիւն կմատուցի նրան: Բայց ձեր ին-
չի՞ն է պետք, դքսուհի, մեր դեմ գործելը: Չէ՞ որ դա ոչ մի
օգուտ չի բերի ո՛չ ձեզ, ո՛չ Ֆրանսիական պետութեանը:

— Շարունակե՛ք, մոնսեհյոր, շարունակե՛ք: Ավարտեք
ձեր միտքը:

— Լավ, տիկին: Կարլոս Հինգերորդն արժանի ժառան-
գորդն է Կարլոս Մեծի. այդ իսկ պատճառով շատ հնարավոր
է, որ Ֆրանսիային ընծա տա այն, ինչ ուխտագրուծ դաշնա-
կիցը կարող էր պահանջել նրանից որպէս փրկագին: Եվ
բայց այդ, կայսրը կկարողանա առատաձեռնորեն վարձա-
հատույց լինել թե՛ հյուրընկալութեան և թե՛ խորհրդի համար:

— Հիանալի է: Ուրեմն, նա կվարվի մեծահոգաբար և
խելամտորեն:

— Ֆրանցիսկ I թագաւորը վաղուց է երազում Միլանի
դքսութեան մասին, այնպէս չէ՞: Եվ Կարլոս Հինգերորդը հա-
մաձայն է զիջել նրան այդ պրովինցիան, որը վաղուց ի վեր
գծաութիւնների պատճառ է Իսպանիայի ու Ֆրանսիայի
միջև, բայց, իհարկե, տարեկան որոշակի վճարով...

— Հասկանում եմ, հասկանում եմ,— ընգմիջեց դքսու-
հին:— Ինչպէս հայտնի է, կայսրի Ֆինանսներն անմխիթա-
րական վիճակում են, իսկ Միլանի դքսութիւնը քայքայված
է անդադար պատերազմներից: Դրա համար էլ նորին մեծու-
թիւնը դեմ չէ իր պարտքերի մի մասը դնել ավելի ունևոր

պարտապանի վրա: Ո՛չ, պարոն դե Մեդինա, ես հրաժարվում եմ այդ առաջարկությունից: Դուք ինքներդ էլ հասկանում եք, որ դա անընդունելի է:

— Սակայն, տիկին, բանակցություններն արդեն սկսվել են և, եթե չեմ սխալվում, թագավորին հիացրել է այդ առաջարկը:

— Ինչ արած, իսկ ես հրաժարվում եմ դրանից: Եվ եթե դուք կարող եք այդ գործը գլուխ բերել առանց ինձ, ալլելի լավ ձեզ համար:

— Հավատացեք, տիկին, կայսրն անսահմանորեն թանկ է դնահատում ձեր աջակցությունը: Եվ ամեն բան, ինչ կամենաք...

— Ես չեմ վաճառում թագավորի վրա ունեցած ազդեցությունս, պարոն դեսպան...

— Օ՛, տիկին: Ոչ ոք չի համարձակվի մտածել իսկ այդ մասին:

— Լսեցեք, դուք հավատացնում եք, որ ձեր տերը ցանկանում է նախապես ձեռք բերել իմ աջակցությունը, և, մեր մեջ տասժ, նա իրավացի է: Ես կաջակցեմ նրան, և դրա համար խնդրում եմ շատ ավելի քիչ, քան նա է առաջարկում: Բայց ուշադրությամբ լսեք, թե ինչ պետք է արվի. նա Ֆրանսիական կիսոստանա ընծայել Միլանի դքսությունը, սակայն Ֆրանսիայի սահմաններից դուրս գալուն պես կմտարերի, որ խախտել է Մադրիդի պայմանագիրը և կմոռանա իր խոստման մասին:

— Բայց չէ՞ որ դա պատերազմի առիթ կտա, տիկին:

— Համբերություն, պարոն դե Մեդինա: Նորին մեծությունն, իրոք, կզայրանա, կայսրին կսպառնա պատերազմ սկսել: Այդ ժամանակ Կարլոս Հինգերորդը կհամաձայնի անկախ գործնել Միլանի դքսությունը և առանց պարտքի հանձնառությունների կտա Կարլոս Օուլեանցուն՝ Ֆրանցիսկո I-ի երկրորդ զավակին: Այդպիսով կայսրը և՛ իր խոստումը կստարած կլինի, և՛ չի ավելացնի իր ախոյանի հզորությունը: Կարծում եմ, խորհուրդս որևէ բան արժե և հուսով եմ, պարոն դեսպան, դուք ոչ մի առարկություն չունեք դրա դեմ:

Ինչ վերաբերում է անձնական ցանկություններին, որոնց մասին քիչ առաջ հիշատակեցիք, ապա եթե նորին մեծությանը դուր գա իմ ծրագիրը, թող մեր առաջին հանդիպման ժամանակ ցած գցի որևէ փայլուն քար: Եվ եթե քարը արժանի լինի ուշադրության, ես կբարձրացնեմ այն ու կպահեմ որպես հիշատակ հուժեական կեսարների ժառանգի՝ Իսպանիայի ու Հնդկաստանի մեծ թագավորի հետ ունեցած փառապանծ դաշինքի:

Այդ բառերն արտասանելիս դքսուհի դ՛էտամպը խոնարհվեց դեպի Ասկանիոն, որին խորհրդավոր ու մռայլ այգ ծրագրերը վախեցրել էին նույնքան, որքան անհանգստացրել էին դուքս դե Մեդինային ու հիացրել կոմս դ'Օրբեկին:

— Այս ամենը քեզ համար է, Ասկանիո,— շնչաց նա:— Քո սերը նվաճելու համար ես պատրաստ եմ կործանել Ֆրանսիան:— Եվ արդեն բարձրաձայն ավելացրեց.— Դեհ, ի՞նչ կստեք, պարոն դեսպան:

— Այլպիսի կարևոր հարցերը լուծել կարող է միայն ինքը՝ կայսրը, բայց ես համարյա վստահ եմ, որ նա կընդունի ձեր առաջարկը. դրա շահավետությունը մեզ համար այնքան ակնհայտ է, որ պարզապես վախեցնում է ինձ:

— Հավատացեք, պարոն դեսպան, որ հանձն առնելով ազդել թագավորի վրա, ես պաշտպանում եմ և իմ շահը: Չէ՞ որ մենք՝ կանայքս, ունենք մեր դիվանագիտությունը, երբեմն ավելի նուրբ, քան քաղաքագետներինը: Բայց, երգվում եմ, իմ ծրագրում փոքրագույն վտանգ անգամ չի պահված ձեզ համար. դեհ մտածեք, ի՞նչ վտանգ կարող է լինել: Ի դեպ, Կարլոս Հինգերորդի որոշմանը սպասելու ընթացքում ես կաշխատեմ նրա դեմ զինել Ֆրանսիայի թագավորին և ամեն կերպ կհամոզեմ նորին մեծությանը գերի վերցնել իր հյուրին:

— Ինչպե՞ս, տիկին, և դուք համարում եք, որ դա կլինի դաշինքի արժանավայել սկի՞զբ:

— Դե՛հ, պարոն դեսպան, դուք այդքան փայլուն պետական գործիչ եք, բայց չեք հասկանում, որ հիմա ինձ համար կարևորը կասկածներից զերծ մնալն է: Բացահայտորեն ձեր

կողմն անցնել՝ նշանակում է կործանել ամբողջ գործը: Չեմ կործում, սակայն, որ մեկն ու մեկն ի վիճակի լինի մատնել ինձ: Ուրեմն, թույլ տվեք ձեր թշնամին լինել, դուքս, թույլ տվեք խոսել ձեր դեմ: Եվ մի՞թե դա կարող է հուզել ձեզ: Տե՛ր աստված: Մի՞թե դուք չգիտեք, դուքս, ինչպես կարելի է խաղալ-բառերի հետ: Եթե, օրինակ, Կարլոս Հինգերսբերգը մերժի առաջարկությունս, ես կասեմ թագավորին. «Սիր, հավատացե՛ք կանացի հոտառությունս, դուք պետք է հանուն տրդարության, առանց վարանելու պատժեք հանցագործին»: Դե՛հ, իսկ եթե նորին մեծությունը համաձայնի, ես կասեմ Ֆրանցիսկին. «Սիր, վստահեք կանացի խորամանկությանս, մենք՝ կանայքս, կատուների նման խորամանկ ու ճարպիկ ենք: Դուք պետք է վճռականություն ունենաք ոչ մեծ մի գործարքի դիմելու»:

— Օ՛, տիկին, շատ ափսոս, որ դուք մի թագավորության տիրուհի եք: Դուք սքանչելի դիվանագետ կլինեիք,— խոնարհ-վելով տիկին դ'էտամպի առաջ, բացականչեց դուքս դե Մեդինան:

Եվ նա հեռացավ, հիացած անսպասելի ընթացքից, որ սուսցան իր բանակցությունները դքսուհու հետ:

— Դե՛հ, իսկ հիմա, բարեկամս, ես կխոսեմ ձեզ հետ անկեղծորեն, առանց երկարաբանությունների,— ասաց զրքսուհին, մենակ մնալով կոմս դ'Օրբեկի և Ասկանիոյի հետ:

— Մեր խոսակցությունից, կոմս, դուք իմացաք երեք բան, նախ՝ ինչպես ինձ, այնպես էլ բարեկամներիս համար անհյաժեշտ է, որ թագավորի վրա ունեցած իշխանությունս վերջնականապես ամրապնդվի. երկրորդ՝ այդ գործի հաջող ավարտից հետո մենք արդեն կարող ենք շվախենալ վաղվա օրից. չե՞ որ թագավորին կփոխարինի նրա տղան, իսկ Միլանի դուքսը, որին ես կբարձրացնեմ, շատ ավելի պատճառներ կունենա ինձ երախտապարտ լինելու, քան Ֆրանցիսկ Առաջինը, որը բարձրացրել է ինձ: Եվ, ի վերջո, երրորդ՝ նորին մեծությունը հմայված է ձեր գեղանի Կոլոմբայով: Ահա թե ինչու ես դիմում եմ ձեզ, կոմս, որպես մի մարդու, որը վեր է կանգնած բոլոր գոեհիկ նախապաշարումներից: Չեք

Ճակատու չիրը հիմա ձեր ձեռքում է: Ասացեք, կցանկանա-
յի՞ք արդյոք, որ թագավորական գանձապահ Չ'Օրբեկը գրա-
վեր թագավորական վարչապետ Պուայեի տեղը, կամ ավելի
ճիշտ՝ կցանկանայի՞ք, որ Կոլոմբա Չ'Օրբեկը գրավեր Մարի
դե Բրիտանի տեղը:

Ասկանիոն սարսափից ցնցվեց: Բարեբախտաբար Չ'Օր-
բեկը շնկատեց այդ. նրա խորամանկ աչքերը գամված էին
դքսուհուն, որը նայում էր նրան բազմանշանակալից, խո-
րիմաստ հայացքով:

— Ես ուզում եմ վարչապետ դառնալ, — հետևեց նրա
հակիրճ պատասխանը:

— Հիանալի է: Մենք փրկված ենք: Իսկ պրևստ^ն ինչ կա-
սի...

— Նրա համար որևէ տաքուկ տեղ գտեք, որ շատ ավելի
եկամտաբեր լինի: Նրա ինչի՞ն է պետք մեծարանքը: Չէ՞ որ
երբ այդ հոգացավով տառապող ծերուկն այն աշխարհը գնա,
նրա ամբողջ հարստությունն ինձ է մնալու:

Ասկանիոն այլևս չկարողացավ իրեն դսպել:

— Տիկի՛ն... — բացականչեց նա զայրույթից բեկբեկվող
ձայնով:

Բայց նա այգուես էլ չհասցրեց խոսքն ավարտել, իսկ
կոմսը չհասցրեց զարմանալ նրա հանդգնության վրա. դրո-
ները լայնորեն բացվեցին, և հայտնվեց թագավորն ամբողջ
արքունիքի ուղեկցությամբ:

Տիկին դ'էտամպն ամուր բռնեց Ասկանիոյի ձեռքը, մի
կողմ տարավ նրան և, հազիվ զսպելով հուզմունքը, ցածրա-
ձայն ասաց.

— Հիմա հասկանո՞ւմ ես, երիտասարդ, թե մեզ՝ կա-
նանցս, ինչպես է կոտրում կյանքը: Աղջիկը կարող է դառ-
նալ թագավորի ֆավորիտուհի՝ նույնիսկ իր կամքին հակառակ:

Նրա բառերը խլացան սրախոսությունների և զվարթ կա-
տակների մեջ, որ փոխանակում էին թագավորն ու պալա-
տականները:

Ֆրանցիսկ I-ը փայլում էր ուրախությունից: Շուտով
կծամանի Կարլոս V-ը և կսկսվեն հանդիսավոր ընդունելու-

թյուններ, խրախճանքներ, ուրախ զբոսանքներ ու նրան բաժին կրնկնի ամենաշնորհակալ գերը: Ամբողջ աշխարհի ուշադրությունը կկենտրոնանա Փարիզի և Ֆրանսիական թագավորի վրա: Այդ ուշագրավ ներկայացման մասին մտածելիս, որի թելերն իր ձեռքում էին, Ֆրանցիսկ 1-ը ուրախանում էր երեխայի նման: Նա ամեն ինչից բարձր էր գասում արտաքին փայլը և ոչ մի բանի նկատմամբ լուրջ վերաբերմունք չուներ: Պատերազմները նրա համար զինավարժություններ էին, իսկ պետութուն ղեկավարելը՝ հմուտ խաղ: Այդ միապետը, որն օժտված էր փայլուն խելքով, տարվում էր ամենատարօրինակ, վտանգավոր և պոետիկ մտահղացումներով, իսկ իր թագավորութունը գարձել էր թատերական ներկայացում, որին պետք է ծափահարեր ամբողջ աշխարհը:

Եվ ահա այժմ նրան առիթ էր ներկայացնում շլացնել իր ախոյանին ու ամբողջ Եվրոպան: Դրա համար էլ նա այսօր արտակարգ սիրալիր էր ու ողորմած: Թագավորի բարեհոգությունից քաջալերված ձևանալով, Տրիբուլեն Ֆրանցիսկի ներս մտնելուն պես մոտ վազեց նրան:

— Օ՛, սիր,— ողբաձայն բացականչեց խեղկատակը,— մնաք բարով: Ձերդ մեծությունը շուտով կզրկվի իր հավատարիմ ծառայից: Բայց ես ավելի շատ մորմոքում եմ ձեզ համար, քան՝ ինձ, ձերդ մեծություն: Ի՞նչ պետք է անեք սուանց ձեր խղճուկ ծաղրածուի՝ Տրիբուլենի, չէ՞ որ դուք այնրան սիրում եք նրան:

— Ինչպե՛ս: Դու ուզում ես հեռանալ ինձնից և այն էլ հիմա, երբ երկու թագավորի համար ես ունեմ ընդամենը մի խեղկատա՞կ:

— Այո՛, սիր, հատկապես հիմա, երբ մի ծաղրածուի հասնում է երկու թագավոր:

Հիմարություններ գուրս մի տա: Ես քեզ հրամայում եմ մնալ:

Նստասեղանում եմ, ձերդ մեծություն: Այդ դեպքում թագավորական հրամանագիր հրապարակեք, որն արգելի պարսն գե՛վելվիլին հետապնդել ինձ: Ես միայն հայտնեցի

նրան այն, ինչ ասում են նրա կնոջ մասին, և այդպիսի դատարկ բանի համար նա երդվել է ականջներս պոկել ու հոգիս հանել: «Եթե հոգի ունես», — ավելացրեց այդ անօրենը: Ձերդ մեծութուն, ախր այդպիսի սրբապղծության համար պետք է նրա լեզուն կտրել:

— Դե՛հ, հանգստացի՛ր, իմ խեղճ ծաղրածու, նա, ով կյանքից կզրկի քեզ, մեռնելուցդ ճիշտ քառորդ ժամ հետո ինքը կախաղան կբարձրացվի:

— Ա՛խ, ձերդ մեծութուն, իսկ չի՞ կարելի ընդհակառակն անել:

— Այսինքն, ինչպե՞ս հասկանալ այդ «ընդհակառակը»:

— Շատ պարզ՝ կախաղան բարձրացնել նրան ինձ սպանելուց քառորդ ժամ առաջ: Այդպես ավելի լավ կլինի:

Բոլորը ծիծաղեցին և ամենից բարձրաձայն՝ Ֆրանցիսկ I-ը: Թագավորն առաջ շարժվեց և նրա հայացքը պատահաբար կանգ առավ իտալացի վտարանդի Պյետրո Ստրոցիի վրա:

— Ա՛, սենյոբ Ստրոցի, — բացականչեց նա: — Կարծեմ վաղուց արդեն դուք խնդրագիր եք ներկայացրել ձեզ Ֆրանսիական հպատակություն շնորհելու համար: Մեզ ամենևին պատիվ չի բերում, որ Պյեմոնտում հանուն ձեզ այդքան խիզախորեն մարտնչող և այդ իսկ պատճառով իր հայրենիքից վտարված մարդը մինչև հիմա իր երկրորդ հայրենիքի՝ Ֆրանսիայի հպատակների թվում չէ, քանզի քաջությամբ դուք իսկական Ֆրանսիացի եք: Հենց այսօր երեկոյան, սենյոբ Ստրոցի, իմ քարտուղարը՝ Լե Մասոնը, հպատակության շնորհագիր կուղարկի ձեզ... Շնորհակալություն չհայտնեք. ես այդ անում եմ ոչ միայն ձեր, այլև իմ սեփական շահերից ելնելով. անհրաժեշտ է, որ Կարլոս Հինգերորդը տեսնի ձեզ արդեն Ֆրանսիացի դարձած... Ա-ա՛, այդ դո՞ւք եք, Չելլի-նի, — նկարչին դիմելով, շարունակեց թագավորը: — Եվ ինչպես միշտ՝ ոչ դաաարկաձենոն: Այդ ի՞նչ է ձեր թևատակին: Բայց երգվում եմ պատվովս, բարեկամ, ես գիտեմ ինչպես վարձահասուլյց լինել ձեզ: Թող շասեն, թե որևէ մեկն առատաձեռնություն գերազանցել է Ֆրանցիսկ I-ին... Մեսսեր

Անտուան Լե Մասոն, Պլեարո Ստրոցիի հպատակագրի հետ
երկրորդն էլ պատրաստեք՝ իմ բարեկամ Բենվենուտո Չելլի-
նիի համար, ըստ որում առանց վճարի. աղքատ դրվագիչի
համար ավելի դժվար է հինգ հարյուր դուկատ գտնելը, քան
մեծատոհմիկ Ստրոցիի:

— Ի սրտե շնորհակալ եմ ձեզնից, սիր,— ասաց Բենվե-
նուտոն:— Բայց ներեցեք տգիտությանս համար, ի՞նչ բան է
հպատակագիրը:

— Ինչպես, դուք չգիտե՞ք,— կշտամբանքով բացական-
չեց Անտուան Լե Մասոնը, իսկ թագավորը քահ-քահ ծիծա-
ղեց այդպիսի միամիտ հարցի վրա:— Հպատակագիրը բարձ-
րագույն ողորմածություն է, որ նորին մեծությունը կարող
է շնորհել օտարերկրացուն: Այդ հպատակագրով դուք կզառ-
նաք Ֆրանսիացի:

— Օ՛, հիմա հասկացա, սիր, և անշափ շնորհակալ եմ:
Բայց ինչի՞ս է պետք այդ հպատակագիրը: Ես առանց այդ
էլ ամբողջ հոգով նվիրված եմ ձերդ մեծությունը:

— Ինչպե՞ս թե ինչիդ է պետք,— բացականչեց Ֆրան-
ցիսկը, նույն սքանչելի տրամադրության մեջ:— Հենց թե-
կուդ նրա համար, Բենվենուտո, որ հիմա, երբ դուք Ֆրան-
սիական հպատակ դարձաք, ես կարող եմ նվիրել ձեզ ների
Մեծ ամբողջը, իսկ օտարերկրացու համար այդ անել չէի
կարող... Մեզսեր Լե Մասոն, հպատակագրին կավելացնեք
նաև բնծայագիրը: Դեհ, Բենվենուտո, հիմա հասկացա՞ք,
իև մարդուն ինչ օգուտ կարող է բերել հպատակագիրը:

— Օ՛, այո՛, սիր, և թույլ տվեք շնորհակալություն
հայտնել ոչ թե մեկ, այլ հազար անգամ: Մեր սրտերն ան-
խոս հասկանում են միմյանց. ողորմածությունը, որ հիմա
դուրսարկրեցիք իմ նկատմամբ, թույլ է տալիս ինձ հուսալ,
որ կարժանանամ մի այլ, մեծ ողորմածության, որի մասին,
թերե՛ս. կրթե՛ սիրտ անեմ խնդրել ձերդ մեծությունը:

Ես խոստումս չեմ մոռացել, Բենվենուտո: Շուտ
ավարտիր Եուպիտերը, և այն ժամանակ խնդրիք ինչ ուզում
ես:

— Ձերդ մեծութիւնը սքանչելի հիշողութիւնն ունի և, համարձակվում եմ հուսալ, որ կկատարի իր խոստումը: Այո, ևս խնդրելու եմ, աղերսելու եմ ձերդ մեծութեանը կատարել մի ցանկութիւն, որից կախված է ամբողջ կյանքիս երջանկութիւնը: Եվ այն, ինչ հիմա արեցիք ինձ համար, անիմանալի հրաշքով կոահելով նվիրական մտքերս, հույս է ներշնչում ինձ, որ երազանքս շուտով կիրակահասցվի:

— Ուրեմն, ամեն ինչ լավ է, մեծ վարպետ: Իսկ հիմա, այնուամենայնիվ, բավարարեք մեր հետաքրքրասիրութիւնը և, վերջապես, ցույց տվեք, թե ի՞նչ կա ձեր թևատակին:

— Սա արծաթե աղաման է, սիր, ի լրումն սկահակի ու թասի:

— Աա՛ա. ցույց տվեք, շո՛ւտ:

Թագավորն, ինչպես միշտ, մեծագույն ուշադրութեամբ, լուռ, որոշ ժամանակ զննում էր Չելլինիի զմայլելի ստեղծագործութիւնը և, վերջապես, բացականչեց.

— Ի՛նչ անմտութիւն: Ինչպիսի՛ հիմարութիւն:

— Ինչպե՛ս, սիր,— հուսաբեկ բացականչեց Բենվենուտոն,— դուք դժգո՛հ եք իմ աշխատանքից:

— Իհարկե, պարոն, ես դժգոհ եմ ձեզնից ու բարկացած եմ ձեզ վրա: Մի՞թե կարելի էր փշացնել այսպիսի սքանչելի մտահղացումը, մարմնավորելով այն արծաթի մեջ: Ոսկուց սլետք է սլատրաստեիք, Չելլինի, ոսկուց, և դուք կանեք այգ:

— Ավա՛ղ, սիր,— տխրորեն ասաց Բենվենուտոն,— իմ համեստ ստեղծագործութիւններն արժանի չեն այդքան մեծ գովեստի: Վախենում եմ, որ նյութի արժեքավորութիւնը կործանի երևակայութեանս գանձերը: Կյանքը դաժան է, սիր, իսկ մարդիկ ագահ են ու հիմար. ո՛վ գիտե, գուցե որևէ սկահակ, որի համար ձերդ մեծութիւնը հաճույքով կվճարեր տասը հազար դուկատ, երբեք կձուլեն ու կհատեն տասը էկյու Մ՛շ, կավն ավելի հաստատուն փառք է տալիս, քան ոսկին, ահա թե ինչու ոսկերիչների անունները նրանց մահից հետո չեն ապրում:

— Լսեցեք, մի՞թե ձեր մտքով կարող է անցնել, որ Ֆրանսիայի թագավորը գրավ կդնի իր սեղանի աղամանը:

— Ձերդ մեծություն, չէ՞ որ Կոստանդնուպոլսի կայսրը վենետիկցիներին տվեց Հիսուս Քրիստոսի փշե պսակը:

— Այո, բայց Ֆրանսիայի թագավորը փրկագնեց այն, պարոն:

— Ճիշտ է, ձերդ մեծություն, բայց մտածեք բազմապիսի վտանգների մասին, որոնց ենթարկվում են թագավորները. հեղափոխությունների մասին, աքսորների... Իմ հայրենիքում, օրինակ, մեղիչիները երեք անգամ արտաքսվեցին և երեք անգամ վերադարձան: Հազիվ թե աշխարհում կա ուրիշ մի թագավոր, որի փառքը և գանձարանն այնքան հաստատուն լինեն, որքան ձերդ մեծությանը:

— Լա՛վ, լա՛վ, Բենվենուտո: Բայց, այնուհանդերձ, ես ցանկանում եմ, որ դուք ինձ համար ոսկե աղաման պատրաստեք: Իմ գանձապահն այսօր իսկ կտա ձեզ հաղար ոսկե լիակշիռ, հին դրամահատման էկյու... Լսո՞ւմ եք, դ'Օրբեկ, հե՛նց այսօր: Ես չեմ ուզում, որ Չելլինիի մի բոպեն իսկ պարապ անցնի... Գնաք բարով, Բենվենուտո, հաջողություն եմ ցանկանում: Չմոռանաք, Ֆրանսիական թագավորը սուսոււմ է Յուլիաներին... Մնաք բարով, պարոնայք: Պատրաստվեցեք դիմավորել Կարլոս Հինգերորդին:

Մինչդեռ Ֆրանցիսկ I-ը իջնում էր աստիճաններով, որսպեսզի ձի նստի և ուղեկցի թաղուհուն, որն արդեն կառելիում էր, սրահում տեղի էին ունենում հետաքրքրական խոսակցություններ: Լսենք այդ խոսակցությունները:

Բենվենուտոն մոտեցավ կոմս դ'Օրբեկին ու ասաց.

— Ես պետք է հնազանդվեմ նորին մեծությանը, պարոն գանձապահ: Չանացեք, խնդրեմ, պատրաստել ոսկին, իսկ ես մինչ այդ կգնամ պարկ բերելու և կես ժամ հետո կլինեմ ձեզ մոտ:

Կոմսը, համաձայնություն հայտնելով, լուռ գլուխ տվեց, իսկ Չելլինին աչք ածեց սրահը, փնտրելով Ասկանիոյին և, չգտնելով, մեռակ դուրս եկավ Լուվրից:

Այդ ընտյն ժամանակ Մարմանը, դիմելով պրևոյին, որը գեո բայ չէր թողել Կոլոմբայի ձեռքը, կամացուկ ասաց.

Նխանայի առիթ է. վազեմ նախազգուշացնելու իմ

մարդկանց, իսկ դուք ասացեք դ'Օրբեկին, որ հնարավորին շափ շատ պահի իր մոտ Քենվենուտոյին:

Եվ նա անհետացավ. իսկ մեսսեր դ'էստրուվիլը, կոմս դ'Օրբեկին մոտենալով, ինչ-որ բան շնչաց նրա ականջին և անմիջապես բարձրաձայն ավելացրեց.

— Իսկ մինչ այդ, կոմս, ես Կոլոմբային կտանեմ Նելի ամրոցը:

— Լավ,— պատասխանեց դ'Օրբեկը,— և այսօր երեկոյան իսկ հայտնեցեք ինձ, թե այս ամենը ինչով ավարտվեց:

Նրանք բաժանվեցին. պրևոն աղջկա հետ առանց շտապելու գնաց դեպի Նելի Փոքր ամրոցը: Ասկանիոն, աննկատ մնալով, գնում էր նրանց հետևից, հեռվից հիանալով Կոլոմբայի նրբագեղ քայլվածքով:

Իսկ թագավորը հեծավ իր սիրելի ձին՝ սքանչելի աշխետ նժույգը, որ նվիրել էր նրան Հենրիխ VIII-ը, և ոտքն ասպանդակին դնելով, ասաց.

— Ես ու դու, բարեկամս, այսօր երկար ճանապարհ ունենք անցնելու.

*Թեև պասլիկ ես, աշխետս, գեղանի,
Բայց զոհ ենք մենք անշափ իրարից...*

Ահա, առաջին երկու տողերը պատրաստ են,— ավելացրեց նա:— Ապա, Մարո, փորձեք ավարտել քառյակը: Կամ դուք, Մելեն դե Սեն-ժելե:

Մարոն, ծոծրակը քորելով, դանդաղում էր. Սեն-ժելեն առաջ ընկավ, արտակարգ արագությամբ հորինելով հաջող վերջավորությունը.

*Թեև Բուցեֆալ¹ չես, բայց հեծյալդ
Բարձր է մակեղոնական հերոսից:*

Բանաստեղծությունն ընդունվեց բուռն ծափահարություններով, և թագավորը, թամբին նստած, նրբակիրթ խոնար-

¹ Բուցեֆալ— Ալեքսանդր Մակեղոնացու առասպելական ձին

հությամբ շնորհակալություն հայտնեց րանաստեղծին այդ-
րան արագորեն ու հաջող հորինված էքսպրոմտի համար:

Ինչ վերաբերում է Մարոյին, նա տուն վերադարձավ շատ
վատ տրամադրության մեջ:

— Չեմ հասկանում, այսօր ինչ էր պատահել պալատա-
կաններին,— փնթփնթում էր նա,— բայց բոլորն էլ սոսկալի
հիմար էին:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

Չորս հարյուր ավագակներ

Անցնելով Սենի մյուս ափը, Բենվենուտոն շտապեց տուն,
սակայն ո՛չ պարկեր բերելու, ինչպես ասաց կոմս դ'Օրբե-
կին, այլ ոչ մեծ մի դամբյուղ, որը Ֆլորենցիայում նվիրել
էր նրան հորաբրոջ աղջիկներից մեկը՝ մի միանձնուհի: Ար-
դեն ժամը երկուսն էր, իսկ Բենվենուտոն ցանկանում էր այդ
դործն անպայման ավարտել այսօր, ուստի տանը շտապե-
լով Ասկանիոյին և մյուս աշակերտներին, որոնք այդ ժամին
նաշում էին, ոսկերիչը մենակ գնաց Ֆրուա-Մանտո փողոցը,
որտեղ ապրում էր կոմս դ'Օրբեկը. ճանապարհին նա ուշադ-
րությամբ աչք էր ածում չորս կողմը, սակայն կասկածելի
ոչինչ չնկատեց:

Երբ Չելլինին եկավ կոմսի մոտ, վերջինս հայտարարեց,
որ չի կարող անմիջապես ոսկին հանձնել. իբր անհրաժեշտ
է նախ որոշ ձևականություններ կատարել՝ նոտար հրավի-
րել. պայմանագիր կնքել: Մանոթ լինելով Բենվենուտոյի
անսաստ բնավորությանը, կոմսն անընդհատ ներողություն
էր խնդրում և խոսում էր այնքան համոզիչ, որ Չելլինին հա-
վատաց գոյություն շունեցող խոչընդոտներին և համաձայ-
նեց համլիերատարությամբ սպասել:

Սույն նա որոշեց գոնե օգտվել այդ հապաղումից և մարդ
ուպարկել իր ենթավարպետներին կանչելու, որպեսզի ուղեկ-
յուն իրեն և օգնեն ոսկին տեղ հասցնել: Դ'Օրբեկն իր ծա-

ոային անմիջապես ուղարկեց Նելի ամրոց և սկսեց զրուցել Չելլինիի հետ նրա աշխատանքի, նրա նկատմամբ թագավորի ողորմած վերաբերմունքի, մի խոսքով, այն ամենի մասին, ինչ կարող էր զբաղեցնել հյուրին: Ի դեպ, Բենվենուտոն ոչ մի պատճառ չուներ որևէ բանում կատկածելու կոմսին. չէ՞ որ Կոլոմբայի նկատմամբ իր սիրո մասին գիտեին միայն ինքը և Ասկանիոն: Այդ պատճառով նա բավականին սիրալիր էր սլատասխանում գանձապահի բոլոր շողսքորթ բառերին:

Հետո ժամանակ պահանջվեց, որպեսզի ընտրեն ճիշտ այնպիսի դրամներ, որոնց մասին ասում էր թագավորը: Իսկ նոստարը դեռ չէր հայտնվում: Վերջապես նա, այնժամենայնիվ, եկավ, բայց շատ երկար զբաղվեց պայմանագիր կազմելով: Կարճ ասած, երբ Բենվենուտոն, վերջին հաճոյախոսությունները փոխանակելով տանտիրոջ հետ, պատրաստվեց գնալ, արդեն մութն ընկել էր: Բենվենուտո Չելլինին կանչեց ծառային, որին ուղարկել էր Նելի ամրոց, և վերջինս ասաց, որ ենթավարպետներից ոչ մեկը գալ չկարողացավ, սակայն ինքը հաճույքով կօգնի սենյոր ոսկերչին ոսկին տանելու: Այդ պահին միայն Բենվենուտոյի սրտում կասկած ծաղեց, և նա հրաժարվեց օգնությունից, որքան էլ այն սիրալիր էր առաջարկված: Նա զամբյուղի մեջ լցրեց ոսկին ու, թևի տակ առնելով, ձեռքն անցկացրեց բռնակների միջով, այնպես որ կափարիչն ամուր փակեց զամբյուղը: Եվ, իհարկե, ոսկին այդպես տանելը շատ ավելի հարմար էր, քան պարկով:

Բենվենուտոն հագուստի տակ ուներ սքանչելի բազկակալներով օղադրահ, կողքից՝ կարճ սուսեր, իսկ գոտկատակից երևում էր սուրսայր դաշույնը: Նա արագ, բայց հաստատուն քայլքով ճանապարհ ընկավ: Երբ դուրս էր գալիս դ'Օրբեկի տնից, նրան թվաց, թե կոմսի ծառաները ցածրաձայն պայմանավորվում են ինչ-որ բանի մասին, իսկ հետո մեկը մյուսի հետևից դուրս վազեցին տնից, ձևացնելով, թե գնում են հակառակ ուղղությամբ:

Այժմ Սենի մի ափը մյուսի հետ միացնող Արվեստների կամրջի շնորհիվ Լուվրից մինչև Ակադեմիա մի բանի քայլ

է, իսկ Բենվենուտոյի ժամանակներում դա երկար ճանապարհորդութիւնն էր: Եվ իրոք, Ֆրուա-Մանտո փողոցից պետք էր բարձրանալ գետափով մինչև Շատլե, անցնել Զրուզացի կամրջով, կտրել Սիտին, այնուհետև գնալ Սուրբ Բարդուղիմէոսի փողոցով, Սուրբ Միքայելի կամրջով անցնել գետի ձախ ափը ու այստեղից վերստին ցած իջնել գետափով մինչև Նելի Մեծ ամրոցը: Եվ թող շարմանա ընթերցողը, որ գողերի ու ավազակների այն ժամանակներում քաջ Բենվենուտոն մի քիչ անհանգստանում էր. նա վախենում էր հսկայական գումարի համար, որը տանում էր թևատակին: Եվ եթե ընթերցողը դեմ չէ մեզ հետ միասին մի քանի հարյուր քայլ առաջ անցնել Բենվենուտոյից, նա կհամոզվի, որ այդ երկյուղն այնքան էլ անհիմն չէր:

Մի ժամ առաջ, երբ դեռ նոր էր սկսում մթնել, Օգոստինոսականների գետափին, եկեղեցու մոտ կանգ առան շուք կտրիձ, բավականին շարագուշակ տեսքով, ոտից գլուխ երկար թիկնոցների մեջ փաթաթված: Գետափն այստեղ բաժանված էր գետից ոչ բարձր քարե պարսպով միայն և երեկոները բոլորովին ամայի էր: Այդ մի ժամվա ընթացքում անծանոթների մոտով անցավ միայն պրևոն, որը ճանապարհ էր դրել Կոլոմբային Նելի Փոքր ամրոցը և հիմա հետ էր դառնում: Զորսն էլ հարկ եղած պատկառանքով ողջունելիս իշխանութեան այդ հարգարժան ներկայացուցչին:

Նրանք կանգնել էին եկեղեցու պատի մոտ ու կիսաձայն զրուցում էին՝ գլխարկները մինչև ականջները քաշած: Նրանցից երկուսը մեզ արդեն ծանոթ են. դրանք Նելի Մեծ ամրոցի պաշարման համար Վիկոնտ դե Մարմանի վարձած մարդիկ էին, մեկի անունը Ֆերանտե էր, մյուսինը՝ Ֆրակուս: Մյուս երկուսը զբաղվում էին նույն արժանավոր արհեստով և կոչվում էին Պրոկոպ և Մալեդան: Բայց սրպեսզի մեր ճանորդները չվիճեն, թե որն է այդ ավազակների հայրենիքը, ինչպես ահա երեք հարյուր տարի վիճում են Հոմերոսի հայրենիքի մասին, ավելացնենք, որ Մալեդանը Պիկարդիայից էր, Պրոկոպը՝ գնչու, իսկ Ֆերանտեն և Ֆրակուսն իսպառաջ աշխարհ էին եկել Իտալիայի օրհնյալ երկնքի

տակ: Ինչ վերաբերում է նրանց տարբերիչ հատկանիշներին, ապա Պրոկոպը իրավաբան էր, Ֆերանտեն՝ մանրախնդիր մարդ, Ֆրակասոն՝ երազող, իսկ Մալեզանը՝ պարզապես հիմար: Ինչպես տեսնում է ընթերցողը, շնայած մեր պատկանելությանը Ֆրանսիական ազգին, մենք ամենևին մոլորության մեջ չենք մեր հայրենակցի ինչ լինելու հարցում: Բայց պատերազմում, ավելի ճիշտ՝ գործի մեջ նրանք բոլորն էլ իսկական սատանաներ էին:

Իսկ հիմա, երբ ծանոթացանք նրանց հետ, ականջ դնենք բարեկամական և բավականին ուսանելի զրույցին, որից կիմանանք ինչ մարդիկ էին նրանք, և ինչ վտանգ էր սպառնում մեր բարեկամ Բենվենուտո Չելլինիին:

— Ինչ լավ է, որ այսօր շեկ հիմարազլուխ վիկոնսան արգելք չի լինի մեր գործին,— դիմելով Ֆրակասոյին, ասաց Ֆերանտեն:— Վերջապես կմերկացնենք մեր սուսերմերը, և այդ անիծյալ վախկոտը հետ չի պահի մեզ ու չի ստիպի փախուստի դիմել:

— Իրավացի ես,— պատասխանեց Ֆրակասոն:— Բայց քանի որ նա մեզ է թողել այդ գործի ամբողջ ծանրությունը, որի համար շատ երախտասպարտ եմ նրան, պետք է նաև մեզ թողնի ամբողջ ավարը: Իսկապես, շիկամազ սատանան ի՞նչ իրավունք ունի յուրացնելու հինգ հարյուր ոսկի՝ ավարի ուղիղ կեսը: Ճիշտ է, մեզ հասանելիք հինգ հարյուրն էլ վատ վճար չէ: Ախր ամեն մեկիս կհասնի հարյուր քսանհինգ էկյու. զգալի գումար է, խոսք չունեմ: Ծանր օրերիս պատահել է, որ երկու էկյուով էլ մարդ եմ սպանել:

— «Երկու էկյուով»: Սուրբ աստվածածին: Ախր դա նշանակում է խայտառակ անել մեր արհեստը,— բացականչեց Մալեզանը:— Գիտե՞ս ինչ, բարեկամ, ավելի լավ է իմ ներկայությամբ այդպիսի բաներ շասես, թե չէ հանկարծ մեկը կլսի, ու ինձ էլ քեզ նման ապուշի տեղ կդնի:

— Ի՞նչ արած, Մալեզան: Կյանքում ամեն ինչ պատահում է,— տխրությամբ ասաց Ֆրակասոն:— Երբեմն կարող ես մարդ սպանել նույնիսկ մի կտոր շոր հացի համար: Բայց դառնանք գործին: Իմ կարծիքով, բարեկամներս, երկու հար-

յուր հիսուն էկյուն կրկնակի լավ է, քան հարյուր քսանհինգը: Ինչ կլինի, եթե մարդուն սպանելուց հետո ոչ մի կոպեկ շտանք այդ խաբեբա Մարմանին ու ամբողջ փողը մեզ պահենք:

— Եղբայրս,— խրատական տոնով ասաց Պրոկոպը,— այդ կնշանակի խաբել հաճախորդին, իսկ ամեն մի գործում նախ և առաջ պետք է ազնվություն: Ես կարծում եմ, մենք պետք է վարվենք այնպես, ինչպես պայմանավորվել ենք և պետք է տանք վիկոնտին հինգ հարյուր էկյուն ամբողջապես: Բայց *distinguamus!*¹, երբ նա ստանա փողը ու համոզվի, որ մենք ազնիվ մարդիկ ենք. ես պատճառներ չեմ տեսնում, թե ինչու չհարձակվենք նրա վրա ու շխլենք այդ փողը:

— Ա՛յ դա լավ է,— հավանություն տալով, բացականչեց Ֆերանտեն:— Մեր Պրոկոպը, ազնիվ լինելով հանդերձ, միշտ զարմանալիորեն հնարամիտ է:

— Պարզապես այն պատճառով, որ մի ժամանակ ուսումնասիրել եմ իրավագիտությունը,— համեստորեն նկատեց Պրոկոպը:

— Բարեկամներս, շնորհակցե՛ք գործից,— իր սովորական խրատական տոնով նկատեց Ֆերանտեն...— *Recte ad terminum eamus*²: Թող վիկոնտը խաղաղ ննջի իր փափուկ անկողնում: Նրա ժամը չի հասել: Հիմա մենք պետք է զբաղվենք ֆլորենցիացի ոսկերիչով: Գործի հաջողության համար տերը ցանկանում է, որպեսզի ոսկերչի գլուխը չորսով թոցընենք: Ճիշտն ասած, մարդուն այն աշխարհն ուղարկել և նրա փողի քսակը խլել կարող է մեզնից ամեն մեկը, բայց ասում են, թե հարստությունը սոսկալի հասարակական շարիք է և դրա համար գերադասելի է, որ եկամուտն իրար մեջ բաժանեն մի քանի լավ ընկեր: Միայն թե, տեսեք, պետք է աստանց դանդաղելու նրա հախից գալ. ախր այդ մարդը նահանջողներից չէ: Ես ու Ֆրակասոն արդեն համոզվել ենք

¹ Վերապահություն անենք (լատ.):

² Գնանք ուղիղ դեպի նպատակահետք (լատ.):

գրանում: Զվրիպելու համար պետք է բոլորս միասին հարձակվենք: Այսպես, ուրեմն, ուշագրությո՞ւն: Ավելի շատ սառնասրտություն, ականջներդ սրեք, աչքներդ շորս արեք և զգուշացեք նրա սուսերից: Նա, ինչպես բոլոր իտալացիները, հիանալի սուսերամարտիկ է ու անմիջապես ձեզ այդ կայացուցի:

— Դե՛հ, դրա համար կարող ես շանհանգստանալ,— արհամարհանքով փնթփնթաց Մալեդանը:— Ես սովոր եմ ամեն տեսակ հարվածների՝ կարող և խոցող: Սեփական մաշկիս վրա փորձել եմ դրանք: Մի անգամ այնպես պատահեց, որ գիշերը անձնական գործով եղա Բուրբոնյան պալատում: Զհասցրի գործս ավարտել մինչև լուսաբաց ու որոշեցի մի առանձնացած անկյունում սպասել հետևյալ գիշերվան: Մտածեցի, որ դրա համար ամենահարմար տեղը զինանոցն է: Այնտեղ կար ամեն տեսակի ասպետական հանդերձանք ու ռազմավար. զրահներ, սաղավարտներ, երեսակալներ, բազկակալներ, վահաններ: Եվ այդ ամենը իրար հարմարեցված, շարված էր զրոցներիս: Ասես իսկական զինված ասպետներ լինեին: Վրաս քաշեցի զենքն ու զրահը, իջեցրի երեսակալն ու կանգնեցի զրոցին...

— Այ թե վարձալի է: Հետո՞ ինչ եղավ...— անհամբերովյամբ ընդհատեց Ֆերանտեն:— Ախր երբ պատրաստվում ես հերոսական գործ կատարել, ամենալավն ուրիշների քո շագործությունների մասին լսելն է: Դե՛հ, շարունակի՛ր, շարունակի՛ր:

— Հա, թաքնվել էի, բայց չգիտեի, որ այդ անիծյալ ասպետական զենք ու զրահի վրա վարժություններ են անում թագավորի տղաները՝ սառը զենքին հմտորեն օիրապետելու համար: Շուտով սենյակ մտան երկու ածղահա, մոտ քսան տարեկան պատանիներ, վերցրին մեկական նիզակ ու մեկական սուսեր և սկսեցին հարվածներ հասցնել զենք ու զրահիս: Գուցե չհավատաք, բայց ես այդպես էլ մինչև վերջ դիմացա: Կանգնել էի, ասես իրոք փայտից լինեի, մեխված այդ անպետք զրոցին: Բախտս բերեց, որ պատանիներն այնքան էլ ուժեղ չէին: Բայց ահա հայտնվեց հայրիկն ու սկսեց բորբոքել նրանց: Սակայն սուրբ Մալեդանը, իմ պա-

հապանը, որին անընդհատ լուռ ազոթում էի, փրկում էր ինձ ամենավտանգավոր հարվածներից. բայց հանկարծ այդ գլուղի տարած հայրիկն իբր տղաներից մեկի ձեռքից վերցրեց նիզակը, որպեսզի ցույց տա, թե մի հարվածով ինչպես են ցած գցում երեսակալը. և իրոք, երեսակալս ցած ընկավ, ու բոլորը տեսան իմ գունատ, վախից սփրթնած դեմքը: «Կուրա», — մտածեցի ես:

— Խեղճ տղա, — տխրությամբ ասաց Ֆրակասոն: — Դու կարող էիր անտեղի գոհ գնալ:

— Բայց գործն ուրիշ ընթացք ստացավ: Տեսնելով իմ կապտած դեմքն ու վախից դուրս պրծած աչքերը, նրանք կարծեցին, թե իրենց նախահոր ուրվակունն են ու փախան. և այնքան արագորեն, ասես սաստանան դադում էր նրանց կրունկները: Դե՛հ, իսկ ե՞ս... ո՞նց բացատրեմ, որ հասկանաք... Ես մեղքս նրանց կողմն արի ու նույնպես փախա: Բայց կարևորն ախր այդ չէ: Հուսով եմ, դուք համոզվեցիք, որ ես բավականին դիմացկուն եմ:

— Չեմ առարկում, բայց մեր գործի մեջ զլխավորը հարվածներ ընդունելը չէ, այլ հարվածներ հասցնելը, բարեկամս, — հայտարարեց Պրոկոպը: — Իսկ լավը այն հարվածն է, որից զոհը ցած է տապալվում, չհասցնելով ձայն-ծրպատուն հանել: Այ, մի բան պատմեմ, լսեցեք. իմ ճանապարհորդություններից մեկի ժամանակ, Ֆլանդրիայում պետք եղավ հաճախորդներիցս մեկին, ազատել շորս ընկերոջից, որոնք ճանապարհորդում էին միասին: Ինձ առաջարկեցին երեք օգնական, բայց ես հայտարարեցի, որ կամ ամեն ինչ մեկուկ կանեմ, կամ բոլորովին հրաժարվում եմ գործից: Պայմանս ընդունվեց և խոստացան հաջողություն դեպքում վճարել շորսի վարձը: Ես գիտեի, թե ինչ ճանապարհով են գնալու ընկերները և սպասում էի նրանց այն իջևանատանը, որտեղ նրանք պետք է կանգ առնեին: Իջևանատան տերը մի մտամուտկ նույնպես շափշփել էր մեծ ճանապարհները, իսկ հիմա, երբ փոխել էր արհեստը, նրա համար ավելի դյուրին ու անփասանդ էր դարձել ճանապարհորդներին թալանելը. բայց օգտք է ասեմ, որ պանդոկապանի հոգում դեռ չէին մարել բարձր պատգամները, և ինձ համար դժվար եղավ

ապահովել նրա աջակցութիւնը, խոստանալով վարձատրությանս մեկ տասներորդը: Ամեն ինչի մասին պայմանավորվելով, սկսեցինք սպասել մեր քաջերին և մի քիչ անց տեսանք նրանց ճանապարհի ուղրանում: Զիավորները հապշտապ ցած իջան ձիերից իջևանատան մոտ, որպեսզի մի բան ուտեն և հանգիստ տան ձիերին: Բայց պանդոկապանը հայտարարեց, որ իր ախոռը շատ փոքր է և բոլորը միասին պարզապես չեն տեղավորվի այնտեղ. պետք է հերթով ներս տանել ձիերը: Ահա ներս մտավ առաջինն ու անհետացավ. ստիպված եղավ գալ երկրորդը, իմանալու, թե ինչ պատահեց: Բայց նա էլ չվերադարձավ: Այդ ժամանակ, ընկերներին սպասելուց հոգնելով, գնաց երրորդը և նույնպես անհետացավ: «Ա՛, հասկանում եմ,— բացականչեց պանդոկապանը, տեսնելով, որ նրանց ուշացումն անհանգստացրել է շորրորդին,— նրանք դուրս են եկել հետևի դռնից»: Այդ բառերը հանգստացրին շորրորդին. նա որոշեց միանալ ընկերներին և գտավ ինձ, որովհետև, ինչպես հավանաբար գլխի եք ընկել, ախոռում ես էի: Դե՛հ, շորրորդին ես հնարավորութիւն տվի շունչը փչելիս մի անգամ գոռալ. չէ՞ որ այդ արգեն ոչ ոքի վախեցնել չէր կարող... Ֆերանտե, ի՞նչ ես կարծում, չի՞ կարելի հոռոմեական իրավունքի համաձայն դա անվանել *trucidatio per divisionem necis*¹... Իսկ մեր իտալացին չկա ու չկա,— շարունակեց Պրոկոպը— Հանկարծ մի բան պատահած չլինի՞: Շուտով բոլորովին կմթնի...

— *Suadentque cadentia sidera somnos*²,— բարբառեց Ֆրակասոն:— Ի դեպ, բարեկամներս, հանկարծ մթան մեջ այդ Բենվենուտոն նույն խաղը չխաղա՞ մեր գլխին, ինչ որ մի անգամ ես արեցի: Դա թափառումներիս ժամանակ էր, Հոենոսի ափերին: Ես միշտ էլ սիրել եմ այդ վայրերն իրենց գեղատեսիլ ու թախծոտ բնությամբ: Հոենոսը երազողների գետ է: Երազում էի և ես: Բանն այն է, որ շատ էի ցանկա-

¹ Հաջորդաբար մահապատժի ենթարկել (լատ.):

² Եվ քնելու են կոչում մայր մտնող աստղերը (Վերգիլիոս, «էնեական», 11, 9, լատ.):

նում այն աշխարհն ուղարկել ոմն մեծատոհմիկի, որի ազգանունը, եթե չեմ սխալվում, Շրեկենշտեյն էր: Դա հեշտ գործ չէր, որովհետև այդ պարոնն առանց հուսալի պահակախմբի երբեք տնից դուրս չէր գալիս: Բայց ահա թե ինչ հորինեցի: Ընտրելով մի մութ գիշեր, հագա ճիշտ նույնպիսի զգեստ, ինչպիսին հագնում էր նա, և սկսեցի սպասել փողոցում: Խավարի մեջ տեսնելով, *obscuri sub nocte*¹, Շրեկենշտեյնին և նրա թիկնապահների սև կերպարանքները, որոնք մի քանի քայլ հեռավորության վրա հետևում էին նրան, ես մրրիկի պես հարձակվեցի ազնվականի վրա, ճանկեցի նրա փետրավոր գլխարկը, քաշեցի գլխիս, ճարպկորեն դրավեցի նրա տեղը, այնպես-որ մենք հայտնվեցինք դեմդիմաց: Զթողնելով ուշքի գալ, ես շշմեցրի նրան, սուսերի երախակալով ուժգին մի հարված հասցնելով գլխին և, առաջ եկած իրարանցման, սայրերի զրնգոցի ու վայնասունի մեջ սկսեցի բարձրաձայն աղաղակել: «Օգնեցե՛ք: Թալանում եմ, սպանում եմ»: Այդ ռազմական խորամանկությունն անշափ լավ հաջողվեց. Շրեկենշտեյնի մարդիկ կատաղորեն հարձակվեցին նրա վրա և տեղն ու տեղը սպանեցին, իսկ ես, մինչ այդ, անհետացա մոտակա անտառում: Պատկառելի սենյորը մահվանից առաջ կարող էր մխիթարվել նրանով, որ իրեն հարվածողը բարեկամի ձեռք է:

— Ի՞նչ ասեմ, ճիշտ որ քաջ մարդու գործ է,— նկատեց Ֆիրանտեն:— Բայց եթե մտաբերելու լինեմ հեռավոր երիտասարդությունս, ապա դրանից ավելի թունդ պատմություններ կգտնեմ: Ես էլ քեզ նման, Ֆրակասո, գործ ունեցա մի ազնվականի հետ, որն առանց զինված պահակախմբի ոչ մի տեղ չէր գնում: Դեպքը տեղի ունեցավ Աբրուջյան անտառում: Ես բարձրացա հսկա կաղնու վրա ու նստեցի հաստ ճյուղին, որը ձգվում էր ճանապարհին. հենց դրա տակով պետք է անցներ այն անձնավորությունը, որին սպասում էի: Լուսանում էր. փչում էր վաղորդյան զով քամին և ծագող արևի շեղ ճառագայթները լուսավորում էին ծառերի մամ-

¹ Կրիկոս մեջ պահված (Վերգիլոս, «էնեական», VI, 26, լատ.):

ուակալած բները. օղը վրնգում էր թռչունների ծլվլոցից: Իմ ճյուղին նստած, ես տարվեցի եղազներով, եհր հանկարծ...

— Սո՛ւս,— ընդմիջեց նրան Պրոկոպը:— Քայլերի ձա՛յն: Այդ նա՛ է:

— Հիանալի է,— մոթմոթաց Մալեդանը, ուշադրութեամբ աչք ածելով շուրջը:— Մոտակայքում մարդ չկա, մեր բախտը բերում է:

Մարդասպանները լռեցին ու քարացան տեղերում: Մթության մեջ անտեսանելի էին նրանց արևակեզ, սարսափելի դեմքերը. նշմարվում էին միայն բոցկլտուն աչքերը, սուսերների երախակալները ջղաձգորեն բռնած ձեռքերը և լարված սպասումի մեջ անշարժացած կերպարանքները: Կիսախավարի մեջ ծվարած գեղատեսիլ այդ խումբը Սալվատոր Լեոզայի՝ վրձնին արժանի մի պատկեր էր: Ավազակները ճիշտ էին կռահել. դա իրոք Բենվենուտոն էր, որը գալիս էր արագ, առույզ քայլքով: Ինչպես արգեն ասացինք, նա ինչ-որ բան էր կասկածել և այդ պատճառով աշալրջորեն դիտում էր շորս կողմը: Ի դեպ, նրա աչքերը վարժված էին մթությանը և նու, զեռ քսան քայլ հեռավորութունից, նկատեց թուրստոցից դուրս եկած շորս ավազակի կերպարանքը: Բայց մինչև վերջիններս կհարձակվեին նրա վրա, Բենվենուտոն, իրեն հատուկ սառնասրտութեամբ, թիկնոցով ծածկեց սակու՛լի զամբյուղը, մերկացրեց սուսերը և մեջքը դեմ տվեց եկեղեցու պատին: Այդպիսով նրա թիկունքը պաշտպանված էր:

Չորս ավազակները միանգամից հարձակվեցին նրա վրա: Դրությունը թվում էր անհուսալի. փախչելն անհնարին էր, գրոսլն անօգուտ՝ մինչև ամբողջ առնվազն հինգ հարյուր քայլ էր: Բայց Բենվենուտոն զենք բանեցնելու արվեստի մեջ սկսնակ չէր և ճարպկորեն հետ էր մղում բոլոր գրոհները: Աջ ու ձախ հարվածներ հասցնելով, նա չէր կորցնում խորհելու ընդունակութունը: Հանկարծ նրա գլխում մի միտք

¹ Սալվատոր Լեոզա (1615—1673)— իտալացի նկարիչ. որոշ ժամանակ աշխատել է Կյուդովիկոս XIV-ի սպալատում: Այս վեպում նրա անվան հիշատակումը պատմական անճշտություն է:

ծագեց. սա, անկասկած, ծուղակ է և այս ծուղակը սարք-ված է հենց իր՝ Չելլինիի համար: Դե՛, իսկ եթե ինքը կարողանա համոզել ավազակներին, որ նրանք սխալվե՞լ են: Այդ դեպքում փրկված կլինի: Եվ ահա իր վրա տեղացող հարվածների տարափի տակ Չելլինին սկսեց ծաղրել ավազակներին նրանց երեակայական սխալի համար.

— Գժվե՞լ եք, տղերք: Ձեզ ի՞նչ է պատահել: Ախր աղբատ զինվորից ի՞նչ պիտի ստանաք: Աչք եք դրել թիկնոցի՞ս վրա, կամ գուցե սուսերի՞ս: Հե՛յ, հե՛յ, տղաս, ականջներդ պաշտպանիր: Եթե ուզում եք սուսերս ստանալ, նախ սլետք է կարողանաք ձեռքիցս խլել: Ազնիվ խոսք, թալանչիների համար և այն էլ իրենց գործի մեջ ոչ սկսնակների, դուք բոլորովին զուրկ եք հոտառությունից:

Այդ ասելով, Բենվենուտոն շէր էլ մտածում փախչել, այլ ինքն էր նեղում հակառակորդներին: Սակայն նա պատից հեռանում էր ամենաշատը մեկ-երկու քայլ ու նորից անմիջապես մեջքը դեմ տալիս պատին, անընդհատ հարվածներ հասցնելով: Մի քանի անգամ նա դիտավորյալ կիսաբաց արևց թիկնոցը, ցույց տալով, որ իր մոտ ամենևին ոսկի չկա: Բենվենուտոն այդ անում էր նրա համար, որ կոմս դ'Օրրեկի ծառան՝ կարող էր արդեն նախազգուշացրած լինել ավազակներին. չէ՞ որ սրիկան ինչ-որ տեղ անհետացավ ինչ իր դուրս գալու ժամանակ: Հնարքը շատ լավ հաջողվեց: Տեսնելով Բենվենուտոյի խաղաղ ինքնավստահությունը և այն, թե ինչպիսի ճարպկությամբ է նա սուսեր բանեցնում, որն անհնաբ էր հազար լիակշիռ էկյուով ծանրաբեռնված մարդու համար, վարձկանները մտահոգվեցին:

Իսկ գուցե մենք իրո՞ք սխալվել ենք, Ֆերանտե,— լրտեսության հարցրեց Ֆրակասոն:

Վախենում եմ, որ այդպես է: Նա կարծես ավելի լրտեսատակ էր: Իսկ եթե սա նա է, ապա ոչ մի ոսկի չկա մոտք անմիջալ վիկոնտը խաբել է մեզ:

Սակի՞: Եվ այն էլ ինձ մո՞տ,— բացականչեց Բենվենուտոն, սուսերի մի փայլուն հարված հասցնելով:— Բայց գրպանումս բնգամենը մեկ-երկու մաշված պղնձադրամ կա: Սակայն եթե ձեր խելքին փչի, տղերք, բռնագրավել այդ

պղնձադրամները, ձեզ վրա դրանք գուտ հսկուց էլ թանկ կնստեն և այն էլ՝ ուրիշի ոսկուց, իմացած եղեք:

— Գրո՛ղը տանի,— բացականչեց Պրոկոպը:— Նա ճիշտ որ զինվորական է: Որտեղ է տեսնված, որ ոսկերիչն այսպես սուսեր բանեցնի: Գլուխ դրեք նրա հետ, ինչքան ուզում եք, իսկ ես այդքան հիմար չեմ, որ կովեմ միայն հանուն փառքի:

Եվ Պրոկոպը, փնթփնթալով, հեռացավ կովի դաշտից: Մյուս ավազակների գրոհն էլ թուլացավ, որովհետև նրանք մոլորվել էին, զրկվելով ընկերոջ օգնությունից: Բենվենուտոն առիթը բաց չթողեց, հեռացավ պատից և գնաց դեպի ամրոցը. սակայն ամբողջ ժամանակ երեսը դեպի ավազակները՝ հետ մղելով նրանց վայրի վարազի նման, որին հետապնդում են որսորդական շները:

— Գնանք, գնանք ինձ հետ, քաջերս,— ասում էր նա:— Ճանապարհ դրեք ինձ մինչև Պրե-Օ-Կլեր: Այնտեղ, Մեզոն-Լեուժում տպրում է իմ սիրածը: Նրա հայրը գինեվաճառ է. խեղճ ազջիկը հիմա հալումաշ է լինում ինձ սպասելով: Եթե հալժատանք ասեկոսեներին, այս ճանապարհն անվտանգ չէ, և ձեզ նման պահակախումբ ունենալուց ես չեմ հրաժարվում:

Այդ կատակից հետո Ֆրակասոն էլ հրաժարվեց հետապնդումից ու միացավ Պրոկոպին:

— Նո ու դու հիմար ենք, Ֆերանտե,— ասաց Մալեդանը,— սա ամենեին էլ Բենվենուտոն չէ:

— Ընդհակառակը, հենց նա է որ կա,— բացականչեց Ֆերանտեն, պատահաբար թիկնոցը բացած Բենվենուտոյի կոնատակին նկատելով ոսկով լի զամբյուղը:

Սակայն արդեն շատ ուշ էր. մինչև ամրոց մնում էր հիսուն քայլից ոչ ավելի, և Բենվենուտոն սկսեց գոռալ իր հընչեղ ձայնով, որը թնդում էր գիշերային լուսթյան մեջ.

— Օգնեցե՛ք: Հե՛յ, ո՞վ կա Նելի ամրոցում, շուտ այստեղ եկեք: օգնեցե՛ք:

Մինչև Ֆրակասոն ու Պրոկոպը օգնության կհասնեին ընկերներին, իսկ Ֆերանտեն ու Մալեդանը վերստին հարձակ-

ման կանցնեին, ամբողջի դարպասը բացվեց և այնտեղից, նիզակները հորիզոնադիր բռնած, դուրս թռան Հերմանը, Ժան-Ճաստիկը, Չախլիկ-Սիմոնը և Ժակ Օբրին, որոնք վաղուց արդեն անհանգստությամբ սպասում էին ուսուցչին՝ նրանց տեսնելով, ավազակները փախուստի դիմեցին:

— Այդ ո՞ւր, բարեկամներս: Գոնե մի քանի քայլ էլ ուղեկցեիք ինձ: էհ, դո՛ւր, անճարակներ: Չորսով չկարողացաք միայնակ անցորդից խլել հազար էկյուն, որի ծանրությունը կաշկանդել էր նրա մի ձեռքը:

Եվ իրոք, ավազակները ոչ մի վնասվածք չէին հասցրել Բենվենուտո Չելլինիին, եթե հաշվելու չլինենք ձեռքի թեթև քերծվածքը, իսկ հիմա ամոթահար փախչում էին, ըստ որում, Ֆրակասոն անասելի վայնասուն էր բարձրացրել, բանն այն է, որ կովի վերջին պահին նա զրկվեց աջ աչքից և ամբողջ կյանքի ընթացքում պետք է միաշքանի մնար ու դրանից խեղճ մարդու առանց այդ էլ տխուր կերպարանքն է՛լ ավելի տրտում էր դարձել:

— Իսկ հիմա, բարեկամներս, — ենթավարպետներին դիմելով ասաց Բենվենուտոն, երբ մարդասպանների քայլերի ձայնը մարեց հեռվում, — այսպիսի փառավոր գործից հետո վատ չէր լինի ընթրել: Եկեք խմենք իմ փրկության կենացը... Բայց ո՞ւր է Ասկանիոն: Ինչո՞ւ նա ձեզ հետ չէ:

Ընթերցողը հավանաբար հիշում է, որ Ասկանիոն դուրս եկավ Լուվրից, այդպես էլ չգտնելով իր ուսուցչին:

— Իսկ ես գիտեմ, թե որտեղ է նա, — բացականչեց Ժան-Ճաստիկը:

— Որտե՞ղ է, զավակս, — հարցրեց Բենվենուտոն:

— Արդեն կես ժամ կլինի, որ նա թափառում է ներս պարտակում: Մենք, այսինքն՝ գրագիրն ու ես, ուզում էինք խոսել նրա հետ, բայց Ասկանիոն խնդրեց մենակ թողնել իրեն:

«Տարօրինակ է, — մտածեց Բենվենուտոն: — Այդ դեպքում ինչո՞ւ նա մյուսների հետ օգնության շվազեց ինձ: Մի՞թե յսեց իմ աղաղակը»: Եվ արդեն բարձրաձայն ավերակները

— Ընթրեք առանց ինձ, բարեկամներս... Ա՛, այդ գո՞ւ
ես; Սկոցոնե:

— Օ՛, տեր աստված, ձեզ ուզում էին սպանե՞լ, պարոն:
Մի՞թե այդ ճիշտ է:

— Այո, այո, նման մի բան տեղի ունեցավ:

— Հիսո՞ւ Քրիստոս:

— Ամեն ինչ կարգին է, ամեն ինչ կարգին է, սիրելիս,—
կրկնում էր Բենվենուտոն, վախից գունատված Կատերինա-
յին հանգստացնելու համար:— Հիմա պետք է միայն գինի
բերել իմ հիանալի փրկարարների համար, այն էլ լավագույն
տեսակի: Զբաղվիր դրանով, Սկոցոնե: Տիկին Ռուպերտայից
վերցրու բանալիներն ու ինքդ ամեն ինչ կարգավորիր:

— Իսկ դուք այլևս չե՞ք գնա,— հարցրեց Սկոցոնեն:

— Ո՛չ, ո՛չ: Հանգի՛ստ եղիր: Ես միայն պուրակում
կփնտրեմ Ասկանիոյին. նրա հետ խոսելու բան ունեմ:

Ենթավարպետները Կատերինայի հետ վերադարձան ար-
վեստանոց, իսկ Բենվենուտոն գնաց պուրակ:

Հենց այդ ժամանակ դուրս եկավ լիալուսինը, և նա պար-
զորոշ տեսավ Ասկանիոյին: Սակայն պատանին ամենևին էլ
չէր զբոսնում, այլ նեղի Փոքր ամրոցի պարսպին մի սան-
դուղք դեմ տված, բարձրանում էր վեր: Հայտնվելով պա-
րսպի վրա, նա վեր քաշեց սանդուղքը ու անհետացավ պա-
րսպի մյուս կողմում:

Բենվենուտոն ձեռքով շփեց աչքերը՝ ասես չհավատալով
իր տեսածին և, անմիջապես ինչ-որ որոշում ընդունելով,
վազեց արվեստանոց, բարձրացավ վերնասենյակը, լուսա-
մուտից դուրս եկավ տանիք և ճարակորեն ցուտկեց նեղի
Փոքր ամրոցի պարսպի վրա: Հետո կառչելով խաղողի խլա-
վոր վազերից, անաղմուկ ցած թռավ Կոլումբայի սյգին:
Առավոտյան անձրև էր եկել, և խոնավ հողը խլացնում էր
քայլերի ձայնը:

Ականջը հողին հպելով, Բենվենուտոն լարեց լսողությու-
նը: Սկզբում լուռություն էր տիրում. հետո հեռվում շնչոց
լավեց: Բենվենուտոն վեր թռավ և սկսեց զգուշորեն, խար-
խափելով, առաջ գնալ՝ բոպեն մեկ կանգ առնելով: Զայները

գնալով ավելի պարզորոշ էին դառնում, և Բենվենուտոն վստահորեն շարժվեց այն ուղղությամբ, որտեղից դրանք լսվում էին: Եվ ահա, պուրակը հատող ծառուղուն հասնելով նա տեսավ Կոլոմբային, կամ, ավելի ճիշտ, կոսահեց, որ նա է:

Աղջիկը սպիտակ շրջագգեստով էր ու նստել էր Ասկանիոյի կողքին, մեզ լավ ծանոթ նստարանին: Սիրահարները խոսում էին շատ ցածրաձայն, հուզված, բայց նրանց ամեն մի բառը պարզորոշ հնչում էր գիշերային լուսյան մեջ:

Բենվենուտոն թաքնվեց ծառերի հետևում, հենց նստարանի մոտ, և սկսեց ականջ դնել:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

Աշնանային գիշերվա երագը

Աշնանային երեկոն խաղաղ էր ու ջինջ: Կուսիներ շողում էր հատուկենտ ամպակտորների մեջ, որոնք լողում էին պայծառ աստղերով ծածկված արծաթալազուր երկնակամարում: Անխռով հանգստություն էր փոխված երեք մարդկանց շուրջը, որոնք թաքնվել էին նեյի պուրակում, բայց նրանց հողիները համակված էին շփոթությամբ ու տագնապով:

— Սիրելի Կոլոմբա,— ասում էր Ասկանիոն: (Իսկ Բենվենուտոն կանգնած էր նրանց հետևում լուռ, գունատ և թվում էր, թե այդ բառերն ընկալում է ոչ թե լսողությամբ, այլ իր ծվատված սրտով:)— Սիրելի հարսնացու, ինչքան վիշտ պատճառեցի ձեզ: Ինչո՞ւ ներխուժեցի ձեր խաղաղ կյանքը: Երբ իմանաք սոսկալի լուրը, որ բերել եմ, կանի՞ծ էր ինձ:

Սխալվում եք, բարեկամս,— պատասխանեց Կոլոմբան: Ի՞նչ էլ որ ասելու լինեք, ես միշտ կօրհնեմ ձեզ, բանցի պիտեմ, որ ձեզ աստված է ուղարկել ինձ համար: Ես հրրեք չեմ լսել մորս ձայնը, բայց երբ դուք խոսում եք ինձ հետ: Թվում է, թե նրա ձայնն եմ լսում: Խոսեք, խոսեք, Ասկանի-

նիտ: Եվ ինչպիսի սոսկալի բաներ էլ ասելու լինեք, ի՞նչ արած, ինձ մխիթարանք կլինի գոնե այն, որ ձեզնից եմ լսում այդ ամենը:

— Օգնութեան կանչեք ձեր ամբողջ արիութեանը, ձեր բոլոր ուժերը, Կոլոմբա:

Եվ Ասկանիոն պատմեց նրան այն ամենը, ինչ իմացել էր պալատում. տիկին դ'էտամպի և կոմս դ'Օրբեկի սոսկալի դավադրութեան մասին, թագավորութեան շահերը ոտնատակ տալու և Կոլոմբային պատվագրելու նրանց դիտավորութեան մասին: Ասկանիոյի համար պարզապես տանջանք էր, երբ ստիպված եղավ մարդկային ստորութեանն անձանոթ այդ անմեղ աղջկան բացատրել գանձասպահի դավաճանութեան ամբողջ գարշելիութեանը, պատմել նրան թագավորի ֆավորիտուհու նրբին դաժանութեան, խանդից դրված խարդավանքի մասին:

Բայց Ասկանիոն մինչև վերջ դիմայալ այդ տառապանքին, իսկ Կոլոմբան նույնիսկ շշիկնեց՝ այնքան անսահման էր նրա անմեղությունն ու հոգու մաքրութեանը: Նա հասկացավ միայն, որ իր սիրելին վշտացած է, վախեցած: Եվ Ասկանիոյի նման ինքն էլ դողաց, ինչպես մատղաշ ծառին փաթաթված մի շյուղ, որը ծառի հետ երերում է փոթորկի ժամանակ:

— Բարեկամս, անհրաժեշտ է հայտնել հորս իմ պատվի դեմ ուղղված այդ գարշելի դավադրութեան մասին, — ասաց նա: — Հայրս չգիտի, որ մենք սիրում ենք միմյանց: Նա իր կյանքով պարտական է ձեզ և անպայման կլսի ձեր խոսքը: Հանգստացեք, բարեկամս: Նա կաղատի ինձ կոմսի ձեռքից:

— Ավա՛ղ, — հառաչեց Ասկանիոն:

— Ի՞նչ եք ուզում ասել, բարեկամս: Մի՞թե կասկածում եք, որ հայրս էլ համագործակից է այդ ստոր մարդկանց, — բացականչեց Կոլոմբան, սիրելի պատանու ձայնի երանգից զգալով նրա կասկածները: — Բայց դա անչափ սոսկալի կլիներ, Ասկանիո, ո՛չ, ո՛չ: Ես վստահ եմ. հայրս ոչինչ չգիտի, ոչինչ չգիտի, ոչինչ չի կոահում ու, թեև երբեք քնքշորեն չի վարվել ինձ հետ, բայց չի կարող սեփական ձեռքով ան-

դատութեան ու հուսահատութեան անդունդը գլորել ինձ: —
— Ներեցե՛ք, Կոլոմբա, — շարունակեց Ասկանիոն, —
բայց ձեր հայրն ուրիշ կերպ է հասկանում երջանկութիւնը՝
բարձր տիտղոսը նրա համար պատվից էլ թանկ է, նա փա-
ռասեր է, ինչպես բոլոր պալատականները և գտնում է, որ
ձեզ համար թագավորի ֆալորիտուհի դառնալն ավելի մեծ
երջանկութիւն է, քան հասարակ նկարչի հետ ամուսնանալը:
Կոլոմբա, ես չեմ ուզում որևէ բան թաքցնել ձեզնից, կոմս
դ՛երբեկն ասաց դքսուհի դ'էտամպին, որ վստահ է ձեր հոր
համաձայնութեան մեջ:

— Տե՛ր աստված, հնարավո՞ր է արդյոք, — աղաղակեց
Կոլոմբան: — Որտե՞ղ է տեսնված, Ասկանիո, որ հայրը վա-
ճառի իր զավակին:

— Այդպիսի դեպքեր եղել են բոլոր երկրներում ու բո-
լոր ժամանակներում, խեղճ հրեշտակս, և առանձնապէս
հոմախակի կրկնվում են մեր օրերում, մեր երկրում: Մի
կործեք, որ աշխարհը նման է ձեր սքանչելի հոգուն, իսկ
նոսարակութիւնը նույնքան առաքինի է, որքան գուբ: Այո՛,
Կոլոմբա, Փրանսիայի ամենաանվանի մարդիկ անխղճորեն
ուսնամոթաբար զոհաբերում են իրենց աղջիկներին, իրենց
կանանց երիտասարդութիւնն ու գեղեցկութիւնը թագավո-
րական քմահաճույքներին: Արքունիքում դա ամենասովորա-
կան բանն է, և ձեր հայրն արդարանալու համար կարող է
մտտնանշել բազմաթիվ հանրահայտ օրինակներ: Ների՛ր,
սիրելիս, որ այդ բիրտ, անհրապույր իրականութեամբ վրդո-
վեցի անաղարտ, քնքուշ հոգիդ: Թայց ես ցանկանում էի
յուրջ տալ, թե ինչպիսի խորխորատի մեջ կարող են գլորել
բնդ:

Ասկա՛նիո... Ասկա՛նիո... — նրա կրծքին սեղմվելով,
նոսարեկ բացականչեց Կոլոմբան: — Մի՞թե հայրս էլ է դեմ
կանգնել ինձ: Ես ամաչում եմ նրա փոխարեն: Որտե՞ղ
միայնօրոպանութիւն փնտրեմ: Ձեզնից բացի ես ոչ ոք չունեմ:
Փրկե՛ր ինձ, Ասկանիո: Դուք չե՞ք խորհրդակցել ձեր ուսուց-
չի՝ ձեռ. Գլ՝ որ տեսնում էիք, որ նա մեծահագի է, բարի, ուժեղ:
Ես երբևէ սիրելիք, որովհետև դուք սիրում եք նրան:

— Մի՛ սիրիր նրան, Կոլոմբա՛ մի՛ սիրիր:

— Բայց ինչո՞ւ— թոթովեց աղջիկը:

— Որովհետև նա սիրում է քեզ: Նա ամենևին էլ մեր բարեկամը չէ, որը կարող է օգնել մեզ դժբախտության մեջ, նա մեր ոխերիմ թշնամին է: Հասկանո՞ւմ ես, Կոլոմբա, ոխերիմ թշնամին: Լո՛ի՛ր ինձ:

Եվ Ասկանիոն պատմեց, թե ինչպես հենց այն պահին, երբ պատրաստվում էր ամեն ինչ պատմել Բենվենուտոյին, ուռուցիչն ինքը խոստովանեց, որ անհունորեն սիրում է Կոլոմբային և որ մտադիր է որպես առանձնահատուկ ողորմածություն խնդրել թագավորից նրա ձեռքը: Եվ Բենվենուտոն լիովին կարող է հույս դնել այդ ողորմածության վրա, քանզի թագավորը խոստացել է Յուպիտերի արձանն ավարտելուց հետո կատարել նրա ցանկացած խնդիրքը: Իսկ բուլորին հայտնի է, որ Փրանցիսկ I-ը միշտ իր խոսքի տերն է:

— Ողորմած տեր,— բացականչեց Կոլոմբան, իր գեղեցիկ աչքերը դեպի երկինք բարձրացնելով և ձերմակաթույր ձեռքերը կարկառելով:— Հիմա դու մեր միակ պահապանն ես: Բոլոր բարեկամները դավաճանել են մեզ, և խաղաղ նավահանգստի փոխարեն մեր առաջ բացվում է փոթորկալից ծովը: Բայց դուք լիովին վստահ եք, Ասկանիո, որ մենք բացարձակապես մենակ ենք:

— Լիովին վստահ եմ: Իմ ուռուցիչը հիմա նույնքան վտանգավոր է մեզ համար, որքան ձեր հայրը: Եվ պատկերացնո՞ւմ եք, ես պետք է վախենամ Բենվենուտոյից և ատեմ նրան՝ լավագույն բարեկամիս, ոիրելի ուռուցչիս, պաշտպանիս, հորս, իմ աստծուն,— ձեռքերը կոտրատելով բացականչեց Ասկանիոն:— Եվ հանուն ինչի՞: Միայն նրա համար, որ ձեզ տեսնելով, նա համակվել է սքանչելի զգացմունքով, որը դուք ներշնչում եք վե՛հ հոգու տեր բուլոր մարդկանց: Որովհետև նա սիրում է ձեզ: Բայց չէ՞ որ ես էլ եմ սիրում: Ուրեմըն երկուսս էլ հավասարաչափ մեղավոր ենք իրար առաջ: Այո՛, բայց դուք, Կոլոմբա, սիրում եք ինձ, և դա է իմ արդարացումը: Տե՛ր աստված: Ի՞նչ անեմ: Արդեն երկու օր է ինձ տանջում են ամենահակասական զգացմունքները. մերթ

ինձ թվում է, թե եո սկսում եմ ատել ուսուցչիո, մերթ զգում եմ, որ առաջվա պես սիրում եմ նրան: Բենվենուտոն սիրում է ձեզ, այդ ճիշտ է, բայց չէ՞ որ սիրում էր և ինձ: Ես գլուխս կորցնում եմ, հոգիս զոզոզում է ինչպես եղեգնը փոթորկի շնչից: Ի՞նչ կանի Բենվենուտոն, երբ ամեն ինչ իմանա: Նախ և առաջ ես կպատմեմ նրան կոմս դ'Օրբեկի դիտավորության մասին և հուսով եմ, որ ուսուցիչս կազատի մեզ նրանից: Բայց հետո, երբ պարզվի, որ մենք հակառակորդներ ենք, լիշնամիներ, վախենում եմ, որ նրա զայրույթը կլինի անողորմ, ճակատագրի պես կույր: Եվ այն ժամանակ նա կմոռունա մեր բարեկամությունը, որպեսզի ամբողջ հոգով տրվի սիրելի Կոլոմբային: Ես ինքս էլ, առանց ափսոսանքի, կզոհաբերելի վաղեմի բարեկամությունս հանուն նորաբողբոջ սիրո. այլ կերպ ասած՝ երկրի փոխարեն կընտրելի երկինքը: Ինչո՞ւ նա էլ այդպես չվարվի: Ի վերջո, նա մարդ է, իսկ սերը զոհաբերելը վեր է մարդկային ուժերից: Հետևաբար, մենք գոտեմարտի կբռնվենք. բայց կարո՞ղ եմ ես, անօգնական ու միայնակ, դեմ կանգնել Բենվենուտո Չելլինիին: Եվ, ոչնչամեկնայնիվ, ինչքան էլ ատելու լինեմ ուսուցչիս (իսկ ես վաղուց ի վեր ամբողջ հոգով սիրում եմ նրան), ոչ մի դեպքում այնպիսի տառապանքների շեմ ենթարկի նրան, ինչպիսիք կրեցի ինքս, երբ նա պատմում էր ինձ իր սիրո մասին:

Բենվենուտոն, որն ամբողջ ժամանակ արձանացած կանգնել էր ծառի հետևում, զգաց, որ ճակատը ծածկվում է սուր քրտինքի կաթիլներով և ձեռքը շղաձգորեն սեղմեց պանին:

Են՞դճ Ասկանիո,— տխրորեն ասաց Կոլոմբան:— Ինչքան և եր տանջվել և դեռ ինչքան պետք է տանջվեք: Այնուամենայնիվ, հուսանք, բարեկամս: Չշափազանցնենք մեր վրեժը ու շհուսահատվենք: Դժբախտաբար, դառը ճակատագրի դեմ մղած պայքարում մենք մենակ չենք: Չէ՞ որ աստիճան մեզ հետ է: Դուք, հավանաբար, կզերազասեիք, որ ժողովուրդը գեղարում ես պատկանեմ Բենվենուտոյին, բայց ոչ Երբեք կոմս դ'Օրբեկին, կամ ավելի լավ կլինեք, որ ընդմիջապես կփրկի ինձ աստծուն: Ճի՞շտ է, Ասկանիո: Ուրեմն

խոստանում եմ, որ եթե այս աշխարհում ձեր կինը չդառնամ, ապա ընդմիշտ կմնամ ձեր հարսնացուն: Լսո՞ւմ եք, Ասկանիո: Հանգստացե՛ք, սիրելիս:

— Շնորհակալ եմ, հոգիս,— պատասխանեց Ասկանիոն:— Մոռանանք մեզ շրջապատող ահռելի աշխարհը, հիմա մեզ համար այնքան լավ է այս փոքրիկ այգում: Բայց դուք դեռ ոչ մի անգամ չասացիք, որ սիրում եք ինձ, Կոլոմբա: Ավաղ, հաճախ ինձ թվում է, որ ձեզ համար պարտքի զգացումը սիրուց էլ բարձր է:

— Լո՛ր, լո՛ր, Ասկանիո,— բացականչեց Կոլոմբան:— Մի՞թե չես հասկանում, որ ես ցանկանում եմ սրբագործել երջանկությունս՝ կինդ դառնալով: Օ՛, ես սիրում եմ, սիրում եմ քեզ, Ասկանիո:

Բենվենուտոն այլևս ոտքի վրա կանգնել չէր կարող: Նա ծունկի եկավ, գլուխը սեղմեց ծառաբնին ու նայում էր առաջ՝ ցրված հայացքով. սիրահարների մմեն մի բառը ցավալիություն ցնցում էր նրա ամբողջ Լուիլյունը:

— Կոլոմբա, ես սիրում եմ քեզ,— կրկնում էր Ասկանիոն:— Եվ սիրտս թելադրում է, որ մենք երջանիկ ենք լինելու: Աստված անօգնական չի թողնի իր հրեշտակներից լավագույնին: Քո շուրջն ամեն ինչ, Կոլոմբա, համակված է այնպիսի խաղաղությամբ, այնպիսի ուրախությամբ, որ ես մոռանում եմ վշտերի աշխարհը, ուր վերադառնալու եմ քեզնից բաժանվելուց հետո:

— Պետք է մտածել վաղվա մասին,— առարկեց Կոլոմբան:— Եթե ձեռքերս ծալած չնստենք, աստված օգնության կհասնի մեզ: Նախ և առաջ, ես կարծում եմ, որ մենք պետք է շփոթվենք մեր սերը ուսուցչից՝ Բենվենուտոյից: Չէ՞ որ պայքարի մեջ մտնելով դքսուհի դ'էտամպի և կոմս դ'Օրբեկի հետ, նա վտանգի կենթարկի իր կյանքը: Մենք պարտավոր ենք ամեն ինչ պատմել նրան: Այլ կերպ վարվելն անազնվություն կլիներ:

— Հնազանդվում եմ, թանկագին Կոլոմբա: Ձեր ամեն մի բառն ինձ համար օրենք է: Եվ սիրտս էլ վկայում է, որ դուք իրավացի եք: Դուք միշտ իրավացի եք, Կոլոմբա: Բայց

եթե իմանայիք, թե իմ խոստովանությամբ ինչ սարսափելի հարված եմ հասցնելու նրան: Ավա՛ղ, այդ հարվածի ծանրությունը ես ինքս էլ զգացել եմ: Եվ ո՞վ գիտի, գուցե իմանալով մեր սիրո մասին, նա կատի ինձ և նույնիսկ կվռնդի... Այն ժամանակ ի՞նչ անեմ ես. մենակ, օտարության մեջ, անօթեան, առանց բարեկամների, շրջապատված այնպիսի ուժեղ թշնամիներով, ինչպիսիք դքսուհի դ'էտամպը և թագավորական գանձապահն են: Ո՞վ կօգնի ինձ տապալելու նրանց դիվային ծրագրերը: Ո՞վ կսատարի այդ անհավասար պայքարում: Ո՞վ ինձ օգնության ձեռք կմեկնի:

— Ես,— նրա հետևից լավեց հնչեղ ու թավ մի ձայն:

— Բենվենուտո,— բացականչեց աշակերտը, որը ձայնից արդեն ճանաչել էր ուսուցչին:

Կոլումբան բարձրաձայն ճշաց ու վեր թռավ սեղից: Ասկանիոն, շփոթված, նայում էր ուսուցչին, շիմանալով՝ բարեկամ է կանգնած իր առաջ, թե թշնամի:

— Այո՛, այդ ես եմ, Բենվենուտո Չելլինին,— շարունակեց ոսկերիչը:— Դուք, օրիորդ, շեք սիրում ինձ, իսկ դու, Ասկանիո, դադարել ես սիրելուց, և այնուհանդերձ ես եկել եմ, որպեսզի փրկեմ ձեզ:

— Ի՞նչ եք ուզում ասել,— բացականչեց Ասկանիոն:

— Ահա թե ինչ. նստենք կողք կողքի և խոսենք, որովհետև մենք պետք է հասկանանք միմյանց: Ինձ ոչ մի բան չպատմեք. ես սկզբից մինչև վերջ լսեցի ձեր ամբողջ զրույցը: Ներեցեք, որ պատահաբար ականջ դրի, բայց ինքներդ էլ հասկանում եք, որ ավելի լավ է, եթե ես ամեն ինչ իմանամ: Իսկ ստիպված եղա լսել ինձ համար շատ տխուր ու սոսկալի, բայց և շատ օգտակար բաներ: Որոշ հարցերում Ասկանիոն իրավացի է, իսկ որոշ հարցերում՝ ոչ: Հանուն ձեզ, օրիորդ, ես խսկապես կովի կբռնվեի նրա հետ. բայց քանի որ դուք սիրում եք նրան, հարցը լուծված է: Երջանիկ եղեք: Ասկանիոն ձեզ արգելեց սիրել ինձ, բայց ես, տնօրինելով ձեր հակասափորը, կստիպեմ որ նորից սիրեք:

Ուսուցի՛չ,— բացականչեց Ասկանիոն:

Ո՛ր պարոն, դուք շատ եք տանջվում,— ձեռքերը թախանձազին ծաղկով, ասաց Կոլումբան:

— Շնորհակալութիւն, օրիորդ,— պատասխանեց Բենվենուտոն, որի աչքերն արցունքով լցվեցին: Բայց նա իսկույն զսպեց իրեն:— Դուք նկատեցի՞ք այդ, օրիորդ: Իսկ ահա նա, անշնորհակալը, ոչինչ չի տեսնում: Օ՛, կանայք այնքան նրբազգաց են: Ինչո՞ւ ստել: Ես իրոք շատ եմ տանջվում: Եվ դա հասկանալի է. չէ՞ որ կորցրի ձեզ: Եվ չնայած դրան, երջանիկ եմ, որ կարող եմ ծառայել ձեզ. ձեր երջանկութեամբ դուք պարտական կլինեք ինձ, և դա մի քիչ սփոփում է հոգիս: Դու սխալվեցիր, Ասկանիո, իմ Բեատրիչեն խանդոտ է, նա մրցակցուհիներ չի հանդուրժում: Հերեի արձանը պետք է ավարտես դու: Գնաս բարով, իմ սքանչելի անուրջ: Վերջին անուրջ...

Բենվենուտոն խոսում էր կցկտուր, գծվարութեամբ, խրոպուտ ձայնով: Կոլոմբան խոնարհվեց դեպի նա, կարեկրօնաբով բռնեց ձեռքը և ցածրաձայն սասաց.

— Լաց եղեք, բարեկամս, կթեթևանաք:

— Այո՛, այո՛, դուք իրավայի եք,— պատասխանեց Չելլինին, և արցունքները հորդեցին նրա աչքերից:

Նա կանգնել էր լուռ ու անձայն. հեկեկոցից ցնցվում էր ամբողջ մարմնով: Եվ երկար զսպված արցունքները թեթևացրին նրա հոգին:

Կոլոմբան և Ասկանիոն հարգանքով նայում էին ուսուցչի խոր վշտին:

— Քսան տարի է արդեն, որ լաց չեմ եղել,— խաղաղվելով սասաց նա,— եթե հաշվելու շինենք այն պատահարը, երբ, հիշո՞ւմ ես, Ասկանիո, ես վիրավորեցի քեզ ու տեսա արյունդ: Բայց հիմա հարվածը շափազանց դաժան էր: Այստեղ՝ ծառի հետևը կանգնած, ես սյնպես էի տանջվում, որ քիչ մնաց դաշույնը կուրծքս մխեմ: Եվ սյն միտքը միայն, որ երկուսիդ էլ պետք եմ, հետ պահեց ինձ: Ուրեմն, դուք յիրկեցիք կյանքս: Մի խոսքով, ամեն ինչ բարեհաջող է: Ասկանիոն ինձնից քսան տարով ավելի երջանկություն կտա ձեզ: Եվ բացի այդ, նա համարյա իմ որդին է. ինչպես ամեն մի հայր, ես կուրախանամ ձեր երջանկութեամբ: Բենվենու-

առ Չելլինին կհաղթի թե՛ ինքն իրեն և թե՛ ձեր թշնամիներին։ Տառապանքը բոլոր ստեղծագործող նկարիչների բաժինն է։ Եւ՛ ըն՛ վ գիտի, գուցե արցունքիս ամեն մի կաթիլից կծնվի սքանչելի մի արձան, ինչպես մեծ Դանթեի արցունքի կաթիլներից ծնվում էին աստվածային տողեր։ Տեսնո՞ւմ եք, Կոլումբա, ես արդեն վերագարձա նախկին սիրուհուս՝ արձանագործությանը, որը երբեք ինձ չի դավաճանի։ Արցունքները քշեցին-տարան հոգուս ամբողջ դառնությունը։ Ես տխուր եմ, բայց սիրտս կակղել է և, ձեզ օգնելով, ես կմոռանամ իմ վիշտը։

Ասկանիոն երկու ձեռքով սեղմեց ուսուցչի ձեռքը։ Կոլումբան բռնեց նրա մյուս ձեռքը և մոտեցրեց իր շուրթերին։ Բենվենուտոն խոր շունչ քաշեց և ժպտալով ասաց.

— Բավական է, զավակներս, թողնենք քնքշությունները, թե չէ ես շատ կզգացվեմ ու թևաթափ կլինեմ։ Ավելի լավ է երբեք չհիշենք այս ամենի մասին։ Այսուհետև, Կոլումբա, ես ձեր բարեկամն եմ, ձեր հայրը, և միայն այդքանը։ Իսկ այն բոլորը, ինչ եղել է, պարզապես վատ երազ էր։ Եկեք խոսենք ձեզ սպառնացող վտանգի մասին և մտածենք, թե ինչպես կարելի է կանխել այն։ Քիչ առաջ ես լսեցի, թե ինչ դիտավորություններ ու ծրագրեր ունեք։ Դուք դեռ իսկական երեխա եք. ամենևին չճանաչելով կյանքը, ճակատագրի հորվածների տակ եք դնում ձեզ, հուսալով ձեր բարությունը, ձեր ժպիտով հաղթահարել ազահությունը, շարությունը և մարդկային ստոր կրքերը։ Իմ լա՛վ խենթուկներ, Ձեր փոխարեն ես կլինեի խորամանկ, դաժան, չար։ Բայց իմ գործն ուրիշ է. կյանքը շատ բան է սովորեցրել ինձ։ Իսկ դուք, թանկագիններս, ստեղծված եք խաղաղության ու երջանկության համար, և ես կշանամ, որպեսզի կյանքը չխաբի ձեզ... Ոխակալությունը չի մթազնի սլայծառ հայացքդ, Ասկանիո, և տանջանքը չի աղավաղի սքանչելի գեմքիդ անագորտ ձվածիքը, Կոլումբա։ Ես գիրկս կառնեմ երկուսիդ էլ և պարտադրեմ կտանեմ կյանքի ճախորդությունների ու կեղտի միջով։ Ես ձեզ ցած կդնեմ այն ժամանակ միայն, երբ համոզվեմ, որ լիովին երջանիկ եք, և ինքս էլ կուրախանամ

ձեզ հետ: Բայց նախագգուշացնում եմ, պետք է կուրորեն վստահեք ինձ: Իմ արարքները կարող են տարօրինակ թվալ ձեզ ու կոպիտ... Գուցե նույնիսկ վախեցնեն ձեզ, Կոլոմբա: Ես գործում եմ շեշտակի, զինվորականի պես և, առանց աշ ու ձախ նայելու, գնում եմ ուղիղ դեպի նսլատակակետ: Այո, ես ավելի հոգ եմ տանում դիտավորությունների մաքրության մասին, քան՝ գործադրածս միջոցների: Ինչպես սքանչելի մի արձան կերտելիս, ամենևին չեմ մտածում, որ ձեռքերս կավոտ են: Երբ արձանը պատրաստ է, լվանում եմ ձեռքերս ու վերջ: Թող ձեր քնքուշ, նրբազգաց հոգին, օրիորդ, շարսափի, որ մեղանշում եմ աստծո առաջ. ես և աստված հիանալի հասկանում ենք միմյանց: Ես գործ եմ ունենալու ուժեղ հակառակորդների հետ, բայց գիտեմ նրանց թուլությունները. կոմսը փառասեր է, պրևոն՝ ժլատ, դքսուհին՝ նենգ: Երեքն էլ զորեղ են: Դուք նրանց իշխանության տակ եք, և նրանցից երկուսն օրինական իրավունք ունեն ձեզ վրա: Պետք է գործադրել խորամանկություն, բռնություն, բայց ձեզ, զավակներս, դա չի պիպչի, դուք անարժան պայքարից դուրս կգաք անբիծ: Ի՞նչ կասեք, Կոլոմբա, համաձայն եք փակ աչքերով հետևել ինձ: Համաձայն եք առանց վարանելու հնազանդվել, երբ ասեմ. «Այսպե՛ս արեք», «Այնտե՛ղ գնացեք»:

— Ինչպես որ կասի Ասկանիոն,— թոթովեց Կոլոմբան:

— Բենվենուտոն մեծահոգի է ու բարի,— պատասխանեց Ասկանիոն:— Նա սիրում է մեզ և ներում է: Աղաչում եմ, Կոլոմբա, ամեն ինչում հնազանդվենք նրան:

— Հրամայե՛ք, պարոն, ես կենթարկվեմ ձեզ, ինչպես աստծու պատգամաբերին:

— Հիանալի է, զավակս: Ես միայն մի խնդիրք ունեմ, թեև ձեզ համար, հավանաբար, դժվար կլինի այն կատարելը, բայց այնուամենայնիվ, դա անհրաժեշտություն է: Իսկ այնուհետև ձեզ կմնա միայն սպասել դեպքերի բնական ընթացքին և թողնել, որ ես գործեմ: Իսկ որպեսզի երկուսդ էլ լիովին վստահեք մի մարդու, որի կյանքը դուցե անաղարտ չէ, բայց խիղճը մարուր է, ես կպատմեմ ձեզ իմ պատանե-

կուսթյունը: Ավա՛ղ, այդ բոլոր պատմութիւնները նման են իրար ու ամեն մեկի մեջ կա իր ցավը: Ես կպատմեմ ձեզ այն մասին, թե ինչպէս ծանոթացա Բեատրիչէիս՝ այդ հրեշտակի հետ, որի մասին, Ասկանիո, ես արդեն ասել եմ քեզ: Գու կհասկանաս, թե այդ աղջիկն ինչ էր ինձ համար և այլևս չես զարմանա, որ ես անտրտունջ գիջում եմ քեզ Կոլոմբային: Բայց այդ զոհաբերութեամբ ես միայն փորձում եմ քաւիլ մորդ թափած արցունքները, Ասկանիո: Նա իսկական սուրբ էր: Բեատրիչէ՛ նշանակում է երանելի, իսկ Ստեֆանա՛ պսակադրված:

— Գուք վաղուց արդեն խոստացել եք պատմել ինձ այդ մասին, ուսուցիչ:

— Այո,— շարունակեց Զելլինին,— և հիմա հասել է ժամը: Կսեք պատմութիւնս, Կոլոմբա: Գուք կհասկանաք, թե ինչո՞ւ եմ այդքան սիրում մեր Ասկանիային, ու ձեր բոլոր կանկաժները կփարատվեն:

Եվ այդ բուրումնավետ, խաղաղ գիշերով, երկնքում շողացող աստղերի տակ, սիրահարների ձեռքերը բռնած, ահա ինչ ինչ պատմեց Բենվենուտո Զելլինին իր մեղմահայտն, խալ ձայնով:

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

Ստեֆանա

Այն օրից անցել է արդեն քսան տարի: Ես էլ քեզ նման, Ասկանիո, քսանամյա պատանի էի և աշխատում էի որպէս ենթավարպետ Ռաֆայել դել Մորո անունով մի ոսկերչի մոտ: Նա հիանալի վարպետ էր, մեծ ճաշակի տեր, բայց գերադասում էր ժամանակն անցկացնել կերուխումի մեջ, հեշտութեամբ ենթարկվում էր գայթակղութիւններին, ունեցած վերջին փողը ծախսելով զվարճութիւնների վրա, որոնց մասնակից էր դարձնում և իր աշակերտներին: Հաճախ էր պատահում, որ արվեստանոցում ես մենակ էի մնում և, քթիս տակ

մի երգ մոմալով, աշխատում էի որևէ անավարտ գործի վրա: Այն ժամանակ ես անընդհատ երգում էի, ինչպես Սկոցոնեն: Վարպետ Ռաֆայելը հայտնի էր իր անհաստատակամությամբ: Նա մարդկանց մերժել չէր կարողանում, և Ֆլորենցիայի բոլոր դատարկապորտները հավաքվում էին նրա գլխին, աշխատանք գտնելու, կամ ավելի ճիշտ՝ զվարճանալու համար: Այդպիսի ապրելակերպի մարդը, անշուշտ, չէր հարստանա: Եվ իրոք, նա երբեք փող չէր ունենում ու շուտով քաղաքում անվստահելի վարպետի անուն ձեռք բերեց: Սակայն պետք է ասեմ, որ Ֆլորենցիայում կար ուսուցչիցս ավելի քիչ հարգված մի ոսկերիչ, թեև նա նկարիչների աղնը վական տոհմից էր սերում: Ես նկատի ունեմ Զիզմոնդո Գադդիին: Միայն թե նա ֆլորենցիացիների աչքից ընկավ ոչ թե պարտքերը չվճարելու համար, ինչպես Ռաֆայել դել Մորոն, այլ իր գործի մեջ անկարող լինելու և գլխավորը՝ իր նողկալի ժլատության համար: Ի վերջո, նա կորցրեց բոլոր սլատվիրատուներին և նրա տրհեստանոցը համարձակվում էր ոսք դնել միայն որևէ անփորձ օտարերկրացի: Այդ պատճառով Զիզմոնդոն սկսեց զրադվել վաշխառությամբ, շատ մեծ տոկոսով պարտք տալով հարուստների զավակներին, որոնք մտխում էին իրենց ապագա ժառանգությունը: Այդ գործն անհամեմատ ավելի լավ արդյունք տվեց, որովհետև Գադդին միշտ մեծարժեք գրավ էր վերցնում և երբեք կասկածելի գործ չէր բռնում: Բացի այդ, իր խիստ ասելով, Զիզմոնդոն բավականին շրջահայաց էր ու հանդուրժող: Նա փոխ էր տալիս բացարձակապես բոլորին՝ հայրենակիցներին և օտարերկրացիներին, քրիստոնյաներին ու հրեաներին. նա հաճույքով պարտք կտար նույնիսկ սուրբ Պետրոսին, գրավ ստնելով նրա բանալիները, և սուտանային, և թե վերջինս գրավ դներ դժոխքի գանձերը:

Պե՞տք է արդյոք ասել, որ նա փող էր տալիս նաև դրժբախտ տիրոջս, Ռաֆայել դել Մորոյին, որն օրեցօր ավելի էր խճճվում պարտքերի մեջ, թեև առաջվա պես մնում էր ազնիվ մարդ: Երկու արհեստակիցների մշտական համարձակցությունը, հարևանությամբ ապրելը և, վերջապես,

համաքաղաքացիների արհամարհական վերաբերմունքը երկուսի նկատմամբ, մտերմացրին նրանց: Դեյ Մորոն լի էր երախտագիտությամբ Զիզմոնդո Գադգիի նկատմամբ, պարտք տալու նրա անսահման պատրաստակամության համար: Գադգին, իր հերթին, խորին հարգանք էր տածում իր աղնիվ ու համեստ պարտապանի նկատմամբ: Մի խոսքով, շուտով նրանք սրտակից ընկերներ դարձան, և Զիզմոնդոն հրբեք, ինչ էլ լիներ, բաց չէր թողնում ոչ մի կերուխում, որոնց նրան միշտ հրավիրում էր Ռաֆայել դեյ Մորոն:

Դեյ Մորոն ամուրի էր և ուներ տասնվեցամյա մի աղջիկ, Ստեֆանա անունով:

Ստեֆանան գեղեցկուհի չէր բառիս խստագույն իմաստով, բայց առաջին հայացքից հմայում էր բոլորին: Կնոջ համար շափազանց լայն և շեշտակի ընդգծված ճակատի տակ զգացվում էր մտքի աշխատանքը, իսկ մեծ, կրակոտ, սև, թավշյա աչքերի հայացքը թափանցում էր մարդու հոգին ու ակամա համակում ակնածալից քնքշությամբ: Մեղմ, թախծոտ ժպիտը աշնանային արևի պես լուսավորում էր նրա գունատ, թուխ դեմքը: Ծս մոռացալ ասել, որ աղջիկն աստվածայնորեն գեղեցիկ ձևքեր ուներ, իսկ նրա գլուխը սլակված էր սև, փարթամ մազերով:

Ստեֆանան սովորություն ուներ թեթևակիորեն խոնարհել գլուխը՝ փոթորկից կտտրված շուշանի նման: Մեկամաղձոտության կենդանի մարմնացում էր նա: Բայց երբ սրեկ կարգադրություն էր անում ձեռքը հրամայաբար բարձրացնելով, իրանը հպարտորեն ձգվում էր, սքանչելի աչքերը բուրբախում էին, ունգները թրթռում, և դուք պատրաստ էիք ծանկի գալ նրա առաջ, ինչպես Գաբրիել հրեշտակապետի: Դու շատ նման ես նրան, Ասկանիո, բայց շունես նրա հիմանդագին թուլությունը և դեմքի տանջալից արտահայտությունը: Դեռ երբեք անմահ հոգին չի հայտնվել ինձ այդքան սպարկորոշ, որքան այդ փխրուն, կանացիորեն նրբագեղ մարմնի մեջ: Դեյ Մորոն, որը սիրում էր իր աղջկան և միամտանակ վախենում նրանից, շատ անգամ ասում էր, որ թեև իր կիներ գերեզմանում է, բայց նրա հոգին շարունակում է սպրել Ստեֆանայի մեջ:

Այն ժամանակ ես թեթևամիտ, անզուսպ և խիզախ պատանի էի և աշխարհում ամենից շատ գնահատում էի ազատությունը: Երիտասարդությունն աղբյուրի նման հորդում էր երակներումս և ես վատնում էի այն կատաղի կռիվների և բուռն սիրո մեջ: Բայց աշխատում էի այնպես, ինչպես զվարճանում էի՝ պատանեկան անզուսպ ավյունով և, շնայած խենթություններիս, Ռաֆայելի լավագույն հեթավարպետն էի: Մեր տունը մի կերպ դեռ պահվում էր միմիայն իմ վաստակով: Սակայն բոլոր լավ արարքներս պատահական բնույթ էին կրում, կանխամտածված չէին: Ես ջանասիրաբար ուսումնասիրում էի անտիկ արվեստը, ժամեր շարունակ ընդօրինակելով հունական ու հռոմեական վարպետների քանդակներն ու խորաքանդակները, և այդ ծանոթությունը հին շրջանի մեծագույն արձանագործների հետ սվեց ինձ գծերի ճշգրտություն ու ձևի անաղարտություն: Բայց այն ժամանակ ես լավ ընդօրինակող էի միայն, ո՛չ ստեղծագործող: Եվ, այնուամենայնիվ, նորից եմ տսում, որ համարվում էի դեռ Մորոզի ամենահմուտ ու աշխատասեր աշակերտը: Ահա թե ինչու ուսուցիչս, ինչպես հետագայում իմացա, երազում էր իր աղջկան ամուսնացնել ինձ հետ:

Բայց հավատացեք, ես չէի էլ մտածում ամուսնության մասին: Ես ծարավի էի զվարճությունների, ազատության, անկախության: Ամբողջ օրերով կորչում էի տնից, իսկ երեկոները վերադառնում հոգնածությունից ու ժասպառ և, այնուամենայնիվ, հասցնում էի մի քանի ժամում ավելի շատ դործ անել, քան օրվա ընթացքում արել էին Ռաֆայելի մյուս հեթավարպետները: Անտեղի ասված մի բառի համար ես մենամարտում էի, ինձ ուղղված մի հայացքի համար՝ սիրահարվում: Հիրավի, ես անշափ անընդունելի ամուսին կլինեի:

Ստեֆանայի նկատմամբ ունեցած զգացմունքս ամենևին նման չէր սիրահարություններիս Պորտս-դել-Պրատոյի կամ Բորգո-Պինտիի գեղեցկուհիներին: Ես երկյուղ էի կրում նրանից և, եթե որևէ մեկն այն ժամանակ ինձ ասեր, թե սիրում եմ նրան ոչ եղբայրական սիրով, կծիծաղեի այդ

մարդու երեսին: Միրային արկածներից հետո տուն վերադառնալով, ես սիրտ չէի անում նայել Ստեֆանայի դեմքին: Այդ ժամանակ նա խիստ չէր լինում, ո՛չ, այլ տխուր: Եվ լնդհակառակը, երբ զվարճություններից հոգնելով, կամ աշխատելու բարեբեր ձգտում զգալով, մնում էի տանը, ուրախալի էր տեսնել այն ջինջ հայացքը, որով Ստեֆանան նայում էր ինձ, լսել նրա քնքուշ ձայնը: Իմ սերը նրա նկատմամբ խորն էր, համարյա ակնածալից: Ինքս էլ չէի հասկանում, թե ինչ զգացում է դա, բայց սիրոս հաճելիորեն նվազում էր... Հաճախ աղմկալից զվարճությունների ժամանակ հանկարծ մտաբերում էի Ստեֆանային, և այդ պահերին սսկվում էի ու տխրում: Իսկ եթե սուսերս կամ դաշույնս մերկացնելիս արտաստնում էի նրա անունը, ապա միշտ հաղթող էի դուրս գալիս և այն էլ առանց մի քերծվածքի: Բայց գեղանի, քնքուշ ու անմեղ աղջկա նկատմամբ ունեցած այդ զգացմունքս որպես սրբություն պահված էր հույսս խորքում:

Ստեֆանան, որը հպարտ ու սառն էր թեթևաբարո ընկերներիս հետ, իմ նկատմամբ անսահմանորեն բարի էր ու համբերատար: Երբեմն նա գալիս էր արվեստանոց ու նրստում հոր կողքին: Աշխատանքիս վրա խոնարհված, ես միշտ զգում էի ինձ ուղղված նրա հայացքը: Ես հպարտ ու երջանիկ էի այդ նախապատվությունից, թեև չէի փորձում հասկանալ ի՞նչն է դրդապատճառը: Իսկ երբ ենթավարպետներից որեէ մեկը, ցանկանալով անտաշորեն շողոքորթել, ասում էր, թե տանտիրոջ աղջիկը սիրահարվել է ինձ, այնպիսի պատասխան էր ստանում, որ այլևս երբեք սիրտ չէր անում կրկնել իր բառերը: Եվ միայն Ստեֆանային պատուհած գժրախտությունն ակնհայտ գարձրեց, թե ինչքան հաստատան է նրա իշխանությունը սրտիս վրա:

Մի անգամ, արվեստանոցում եղած ժամանակ, նա շատորրրեց հետ քաշել ձեռքը, և ծանրաշարժ ենթավարպետը (կարծում եմ, որ նա հարբած էր) հատիչով վիրավորեց նրա այ ձեռքի երկու մատը: Խեղճ աղջիկը սոսկալի ճիշ արձակեց, բայց խսկույն ուղքի եկավ և մեզ հանգստացնելու հա-

մար ժպտաց, թեև ամբողջ ձեռքն արնաթաթախ էր: Ինձ թվաց, թե կսպանեմ այդ պատանուն: Զիզմոնդո Գադդին էլ արվեստանոցում էր. նա ասաց, որ մոտերքում մի վիրաբույժ է ապրում և անմիջապես վազեց նրան բերելու: Վիրարույժն անպետք բուժակ դուրս եկավ. ճիշտ է, նա ամեն օր այցելում էր Ստեֆանային, բայց այնքան տգետ էր, որ աղջիկն արշան վարակում ստացավ: Դրանից հետո այդ ավանակը բարձրամտորեն հայտարարեց, որ իր բոլոր ջանքերն ապարդյուն անցան և հավանաբար ստիպված է լինելու կտրել աղջկա ձեռքը: Ռաֆայել դել Մորոն այդ ժամանակ արդեն համարյա սնանկացել էր և փող շուներ ուրիշ բժիշկ կանչելու: Իսկ ես, սոսկալի որոշումը լսելով, նետվեցի խցիկըս, դատարկեցի դրամապանակումս եղած ամբողջ խնայողությունս ու սլացա Իտալիայի լավագույն վիրաբույժ Ջակոմսո Ռաստելլի դե Պերուզայի մոտ, որը բուժում էր Հոսմի սլասլին: Հուսակտուր աղերսանքս լսելով, և գլխավորը՝ շատ փող տեսնելով, նա անմիջապես եկավ հիվանդի մոտ, փրկեցի մե՛նք: «Օհ, այդ սիրահարները...»: Վերքը զննելով, բժիշկը հայտարարեց, որ հանձն է առնում բուժել և որ երկու շաբաթ հետո Ստեֆանան լիովին առողջ կլինի: Ես ուզում էի համբուրել այդ հարգարժան մարդուն: Նա վիրակապ դրեց հիվանդի մատներին, և Ստեֆանան իսկույն թեթևություն զգաց: Բայց մի քանի օր հետո հայտնաբերվեց ոսկրափուտ, և բժիշկն ստիպված եղավ դիմել վիրահատության:

Ստեֆանան խնդրեց ինձ ներկա լինել վիրահատությանը. «Դուք ինձ համարձակություն կներշնչեք», — ասաց նա: Բայց սիրտս ճմլվում էր վախից: Վիրաբույժ Ջակոմսոն աշխատում էր կոպիտ գործիքներով, սոսկալի ցավ պատճառելով աղջրկան: Ստեֆանան չէր կարողանում զսպել հառաչանքները, որոնք մորմոքում էին սիրտս: Ծակատս սառը քրտինք պատեց:

Վերջ ի վերջո շղիմացա. ես չէի կարող տեսնել, թե ինչպես է այդ սոսկալի գործիքը ծվատում նրբին, քնքուշ մատները: Թվում էր, թե ինձ են խոշտանգում: Ես վեր թուա տե-

դիցս, աղերսելով ուսուցիչ Զակոմոյին մի քանի բոպե հետաձգել վիրահատութիւնը:

Կարծես ինչ-որ բարի ոգու ներշնչանքով ես վազեցի արհեստանոց և արագորեն պատրաստեցի պողպատե մի դանակ՝ բարակ ածելիի պես սուր: Վերադառնալով, ես այն սովեցի բժշկին, և վիրահատութիւնն այնքան թեթևորեն կատարվեց, որ Ստեֆանան համարյա ցավ չզգաց: Հինգ բոպե հետո ամեն ինչ ավարտված էր, իսկ երկու շաբաթ անց նա արդեն իր ձեռքը (որը, ինչպես ասաց, ես էի փրկել) ինձ մեկնեց համբույրի համար:

Չեմ կարող նկարագրել ինչ տառապանքներ կրեցի, տեսնելով, թե ինչպես է տանջվում խեղճ «խոնարհ աղջիկը» (ինչպես երբեմն անվանում էի Ստեֆանային):

Եվ իրոք, հնազանդութիւնը նրա հոգու անխղիչ, բնածին հատկութիւնն էր: Ստեֆանան երջանիկ չէր. հոր թեթեւամտութիւնն ու ցոփ կյանքը հուսահատության էին հասարնում նրան. կրօնը դարձավ նրա միակ մխիթարութիւնը: Բոլոր դժբախտների նման նա էլ բարեպաշտ էր: Եկեղեցի մտնելով (եւ միշտ սիրել եմ աստժուն) հաճախ հանդիպում էի այնտեղ Ստեֆանային, որը մի կողմ քաշված, ջերմեռանդ աղոթում էր ու լաց լինում:

Դժվար բոպեներին, որոնք հաճախ բաժին էին ընկնում նրան Ռաֆայել դել Մորոյի անհոգության հետևանքով, նա օգնութիւն էր խնդրում ինձնից այնպիսի դյուրահավատութեամբ ու աղնվութեամբ, որ ես հիանում էի:

«Բենվենուտո,— ասում էր նա ինձ այն հաճելի պարզութեամբ, որը հատուկ է միայն վեհ հոգիներին,— խնդրում եմ օգտօր մի քիչ ավելի աշխատեք և ավարտեք այս սլատվերը: Մեր տանն ամենեին փող չկա»:

Շատով ես սովորութիւն դարձրի հարցնել նրա կարծիքը լուրջ ու շիտտանքների մասին. նա կարողանում էր զգաստորեն նկատել թերութիւնները և հիանալի խորհուրդներ էր տալիս: Մի օգնութիւնն ու վիշտը զարգացրել էին նրա միտքը և փոխօգրել հոգին: Նրա պարզամիտ, բայց և խոր դատողութեանն օգնեցին ինձ հասկանալ արվեստի շատ դադանիքներ և հաճախ նոր ուղիներ էին բացում իմ առաջ:

Հիշում եմ, մի անգամ ես ցույց տվի նրան կարգինալի պատվիրած հուշամեդալի մոդելը. մի երեսին պատկերված էր ինքը՝ կարգինալը, իսկ մյուս երեսին՝ Հիսուս Քրիստոսը, որը գալիս էր ալիքների վրայով՝ ձեռքը մեկնած Պետրոս Առաքյալին: Իսկ ցածում մակագրություն կար. «Quare dubitasti?»— «Ինչո՞ւ կասկածեցիր»:

Ստեֆանան գովեց կարգինալի դիմապատկերը, որը հաջողվել էր ինձ և բավական նման էր նախօրինակին:

Հետո երկար ժամանակ լուռ նայում էր փրկիչին և, վերջապես, ասաց.

«Գեմքը գեղեցիկ է, և եթե պատկերած լինեիք Ապոլոնին, կամ Յուպիտերին, չէի առարկի: Բայց չէ՞ որ փրկիչը ո՛չ միայն գեղեցիկ է, այլև՝ աստվածային: Այս դեմքի գծերն անբասիր են, բայց ո՞ւր է հոգին: Ես հիանում եմ մարդ արարածով, բայց չեմ տեսնում ասածուն: Հիշեք, Բենվենուտո, դուք ոչ միայն նկարիչ եք, դուք քրիստոնյա եք: Իմացեք, որ երբեմն ես էլ հուսալքվել եմ, կասկածել և տեսել եմ Քրիստոսին, որը ձեռքն ինձ մեկնելով, ասում էր. «Ինչո՞ւ կասկածեցիր»: Ախ, Բենվենուտո, նրա երկնային դեմքն ավելի գեղեցիկ էր, քան ձեր ստեղծածը: Այդ դեմքի վրա կար ե՛ հայրասիան վիշտ, և՛ ամենաներսդ ողորմածություն. ճակատը շողում էր, իսկ շուրթերը՝ ժպտում: Նա ոչ միայն մեծ էր, այլև բարի»:

«Սպասեցե՛ք, սպասեցե՛ք, Ստեֆանա»:

Ես արագորեն ջնջեցի ճեպանկարն ու քառորդ ժամում, նրա աչքի առաջ, այլ կերպ նկարեցի Քրիստոսի դեմքը:

«Ճի՞շտ եմ հասկացել ձեզ, Ստեֆանա»:

«Օ՛, այո, այո, — արցունքն աչքերին բացականչեց նա: — Հենց այդպիսին հայտնվեց ինձ փրկիչը հուսահատության պահին: Ես իսկույն ճանաչեցի նրա վեհ ու բարեգութ դեմքը: Եվ խորհուրդ եմ տալիս ձեզ, Բենվենուտո, նախքան որևէ աշխատանք սկսելը, մտածեք այն մասին, թե ինչ եք ուղում ստեղծել: Դուք ձեռք եք բերել հմտություն, ձգտեք հասնել արտահայտչականության: Դուք ունեք նյութ, ոգիշնչեցեք այն: Թող ձեռքերը կատարեն ձեր բունականության հրամանները»:

Ահա ինչպիսի խորհուրդներ էր տալիս ինձ այդ տասնվեցամյա աղջիկը, որն ի վերուստ օժտված էր գեղարվեստական նուրբ ճաշակով: Երբ մենակ էի մնում, հաճախ մտածում էի նրա ասածների մասին ու հասկանում, որ նա իրավացի է: Այդպես Ստեֆանան կրթում էր ինձ և ուղղություն տալիս: Ձևին տիրապետելով, ես փորձում էի միտք ներշնչել ավյալ ձևին, որպեսզի ոգին ու նյութը ձեռքիս տակից դուրս գան միաձուլված, ինչպես Միներվան Յուպիտերի գլխից:

Տե՛ր աստված, ինչքան հարատև են պատանեկության յիշողությունները և ինչքան հմայք կա դրանց մեջ: Կոլումբոս, Ասկանիո, այս սքանչելի երեկոն որոշակի հիշեցնում է ինձ Ստեֆանայի հետ մեն-մենակ անցկացրած երեկոները, նրա հոր տան մոտ, նստարանին նստած: Ստեֆանան նայում էր աստղերին, իսկ ես նայում էի միայն նրան: Այդ ժամանակներից անցել է քսան տարի, բայց ինձ թվում է, թե դա երեկ էր: Հիմա էլ այնպիսի զգացում ունեմ, ասես սեղմում եմ նրա ձեռքերը, թեև ձեր ձեռքերն են, զավակներս: Այո... ինչ էլ անում է աստված, բարօրություն է:

Հենց որ տեսնում էի Ստեֆանայի գունատ դեմքն ու սպիտակ զգեստը, հոգիս լցվում էր երանելի խաղաղությամբ: Երբեմն կողք կողքի նստած, մենք ամբողջ երեկո ոչ մի բան չէինք արտասանում. բայց այդ լուռ խոսակցությունը հարուցում էր վե՛հ մտքեր ու զգացմունքներ, գարձնելով ինձ ավելի մաքուր, ավելի լավ:

Սակայն ամեն ինչ վերջ ունի. մեր երջանկության վերջն էլ եկավ:

Ռաֆայել դել Մորոն վերջնականապես սնանկացավ: Նա իր բարի հարևանից պարտք էր արել երկու հազար դուկատ և չգիտեր ինչպես վերադարձնի: Խեղճ մարդը պարզապես հաստատություն մեջ էր: Նա ուզում էր փրկել գոնե աղջրկուն. ամուսնացնելով նրան ինձ հետ, և այդ մտադրությունը արածել էր իր ենթավարպետներից մեկին, որպեսզի, հավանաբար, վերջինս տեղեկացնի ինձ: Այդ ենթավարպետը սրիկավի մեկն էր և մի անգամ ջարդ էր կերել ինձնից, երբ խելրին փչեց կոպտարար ծաղրել եղբայրական սերս Ստեֆանայի և կոստամբր:

«Հրաժարվեք այդ մտքից, վարպետ դեյ Մորո, — ընդմիջել էր նա, շփոզնելով, որ ուսուցիչն ավարտի իր խոսքը: — Հավատացեք, այդ գործը գլուխ չի գա»:

Ռաֆայել դեյ Մորոն հպարտ մարդ էր և, որոշելով, որ ես արհամարհում եմ նրան աղքատութեան համար, ոչ մի խոսք չուսաց ինձ:

Շուտով Զիզմոնդո Գադդին պահանջեց վերադարձնել պարտքը: Ռաֆայելը թախանձագին խնդրում էր նրան մի քիչ սպասել: Այդ ժամանակ Գադդին ասաց.

«Լսեք, ձեր աղջկան կնութեան տվեք ինձ. նա խելոք է, տնտեսող, և մեր հաշիվը փակված կլինի»:

Դեյ Մորոն անշափ ուրախացավ: Գադդին կոպիտ ու խանդոտ մարդու համբավ էր վայելում, բայց հարուստ էր, իսկ աղքատները մարդուն ամենից շատ հարգում ու դնահատում են հենց հարստութեան համար:

Երբ Ռաֆայելն ասաց աղջկան այդ առաջարկության մասին, Ստեֆանան ոչինչ չպատասխանեց. միայն երեկոյան, երբ մեր անսակցությունից հետո պատրաստվում էր տուն վերադառնալ, ասաց.

«Բննվենուտո, Զիզմոնդո Գադդին խնդրել է իմ ձեռքը, և հայրս համաձայնություն է տվել»:

Այլևս ոչ մի բառ չավելացնելով, նա հեռացավ: Ես խայթվածի պես վեր թռա նստարանից, սաստիկ հուզված դուրս վազեցի քաղաքից և սկսեցի թափառել դաշտերում:

Ամբողջ գիշեր մերթ խելագարի նման դեսուդեն էի ընկնում, մերթ հեկեկալով փոփում թաց խոտերին, և իմ բորբոքված ուղեղում խոնվում էին հազարավոր հանդուզն, խելահեղ ու անհեթեթ մտքեր: «Ստեֆանան Զիզմոնդոյի կինն է դառնալու», — ասում էի ինքս ինձ, փորձելով ուշքի գալ: Եվ եթե ես սարսափահար եմ լինում այդ մտքից, ապա ի՞նչ է զգում խեղճ աղջիկը: Ստեֆանան, բնականաբար, կգերագասեր ամուսնանալ ինձ հետ: Նա ոչինչ չի ասում, բայց լուռ կոչ է անում բարեկամությանս, աշխատում է խանդ առաջացնել իմ հոգում: Օ՛, իրոք, ես խանդում եմ: Ես կատաղորեն խանդում եմ: Բայց իրավունք ունե՞մ արդյոք

խանդելու: Գաղղին, իհարկե, մռայլ է ու կոպիտ, բայց
ունաշատ լինենք. կարո՞ղ եմ ես երջանկություն տալ կնոջը:
Չէ՞ որ դաժան եմ, քմահաճ, անհանդուրժող, միշտ պատ-
րաստ մենամարտելու, առաջին պատահած կնոջը սիրահե-
տելու: Կկարողանա՞մ արդյոք հաղթահարել այդ ամենը: Ո՛չ,
երբե՛ք: Քանի արյունը եռում է երակներումս, ձեռքս բաց չի
իողնի սուսերը, և անկախ իմ կամքից ոտքերս կտանեն ինձ
տնից:

Խեղճ Ստեֆանա: Նա այնքա՛ն կտառապի ու լաց կլինի:
Նա կթոշնի աչքիս առաջ, մշտական նախատինք կլինի ինձ
համար, և ես կատեմ թե՛ նրան, թե՛ ինձ: Ի վերջո, նա կմեռ-
նի վշտից, և ես կլինեմ նրա մահվան պատճառը: Ավա՛ղ,
ևս ստեղծված չեմ ընտանեկան օջախի խաղաղ ու անաղարտ
ուրախությունների համար: Ինձ պետք են լայնարձակու-
թյուն, ազատություն, փոթորիկներ, ամեն ինչ, միայն ոչ ըն-
տանեկան երջանկության միապաղաղ հանգիստ: Իմ կոպիտ
ձեռքերով ես կկտրեմ այդ քնքուշ ու դյուրաբեկ ծաղիկը, իմ
անստակությամբ կտանջեմ ինձ համար անսահմանորեն
խանկ այդ էակին, զգայուն ու սիրող այդ սղջկան, և ինձ էլ
որ ու գիշեր հանգիստ չի տա խղճի խայթը: Այո՛, բայց մի՞-
թե նրա համար ավելի լավ կլինի Զիզմոնդո Գաղղիի տանը:
Եվ ինչու, իսկապես ասած, նա պետք է ամուսնանա Զիզ-
մոնդոյի հետ: Չէ՞ որ մենք երկուսով այնքան լավ էինք
կրթում մեզ: Ստեֆանան հասկանում է, որ նկարչի ոգին ու
արվեստագիրը չի կարելի կաշկանդել ոչ մի շղթայով, են-
թարկել ընտանեկան կյանքի քաղքենիական պահանջներին:
Ու աստիճանով կլինեի ընդմիշտ հրաժեշտ տալ փառքի հաս-
նելու ձգտումներին, խաչ քաշել ապագայի վրա, հրաժարվել
արվեստից, որը չի կարող գոյություն ունենալ առանց ազա-
տաթյան, առանց ինքնուրույնության: Տեսնվա՞ծ բան է՝ մեծ
ստեղծագործույթ, հանճարը սենյակի մի անկյունում անգործ
ևստա՞ծ: Ո՛չ, անմահ Գանթե Ալիգլիերի և իմ ուսուցիչ Միքե-
լանդիս, ինչպե՛ս կծիծաղեիք, տեսնելով, որ ձեր հետևորդը
երեխաներին օրոր է ասում ու դողում է կնոջ առաջ: Ո՛չ, այդ

երբեք չի լինի: Արիացի՛ր, Բենվենուտո, և խնայիր Ստեֆանային: Մնա միայնակ ու հավատարիմ քո երազանքին:

Ինչպես տեսնում եք, գավակներս, ես չեմ ձգտում գունազարդել անմիտ արարքս: Իմ ընդունած որոշումը մասամբ եսասիրական էր. սակայն ես ղեկավարվում էի ամենաանկեղծ ու խորին սիրով դեպի Ստեֆանան և այդ իսկ պատճառով կարծում էի, թե իրավացի եմ:

Հետևյալ օրը արհեստանոց վերադարձա՝ բավականին խաղաղ տրամադրությամբ: Ստեֆանան էլ կարծես հանգիստ էր, միայն սովորականից ավելի գունատ:

Անցավ մի ամիս: Եվ ահա մի անգամ, երեկոյան, ինձ հրաժեշտ տալիս նա ասաց.

«Բենվենուտո, մի շաբաթ հետո ես կդառնամ Զիզմոնդո Գադգիի կինը»:

Բայց այս անգամ նա դանդաղում էր հեռանալ, և իմ հոգում անշնչելիորեն դրոշմվեց նրա կերպարը. աղջիկը կանգնած էր իմ առաջ տխուր, լուլյայն, ձեռքը սրտին սեղմած ու տառապանքի ծանրության տակ կորացած: Եվ նրա դուրեկան, ըստհամարույր ժպիտն այնքան թախծուտ էր, որ նայելիս մարդու լացը գալիս էր: Ստեֆանան նայում էր ինձ տխրությամբ, բայց առանց կշտամբանքի: Թվում էր, թե անմեղ հրեշտակը, երկիրը թողնելով, ընդմիջտ հրաժեշտ է տալիս ինձ: Մի րոպե լուռ կանգնելուց հետո նա մտավ տուն, և այլևս ինձ չվիճակվեց տեսնել նրան:

Եվ նորից ես գլխարաց փախա քաղաքից, և ո՛չ այդ օրը, ո՛չ էլ հետևյալ, այլևս չվերադարձա տուն. գնում էի ու գնում, հոգնածություն չզգալով, մինչև հայտնվեցի Հռոմում:

Այնտեղ մնացի հինգ տարի: Իմ անունը հայտնի դարձավ, ես արժանացա պապի բարեհաճությանը, մենամարտում էի, սիրահարվում, հաջողությունների հասնում արհեստիս մեջ: Բայց երջանիկ չէի, անընդհատ ինչ-որ բան էր պակասում ինձ ու, կյանքի հորձանքի մեջ պտույտ գալով, ամեն օր մտաբերում էի Ֆլորենցիան: Եվ ամեն գիշեր երազումս տեսնում էի Ստեֆանային. նա կանգնած էր իր տան շեմքին գունատ ու տխուր և նայում էր ինձ:

Հինգ տարի հետո Ֆլորենցիայից նամակ ստացա սգո

կնիքով: Ես այնքան եմ կարդացել այդ նամակը, որ անգիր գիտեմ: Ահա այն.

«Բենվենուտո, ես մեռնում եմ: Բենվենուտո, ես սիրում էի ձեզ: Եվ ահա ինչի մասին էի երազում. ես ճանաչում էի ձեզ, ինչպես ինքս ինձ. ես նախագուշակեցի ձեր հոգում պահված տաղանդը և վստահ էի, որ մեծ մարդ կդառնար: Լայն ճակատը, կրակոտ հայացքը, անզուսպ հոանդը, ամեն ինչ խոսում էր ձեր հանճարի մասին, և ծանր փորձությունների էր ենթարկելու այն աղջկան, որը կդառնար ձեր կինը: Ես պատրաստ էի ամեն ինչի: Իմ երջանկությունը կլիներ ինձ բաժին ընկած առաքելության վեհության մեջ: Ես ոչ միայն ձեր կինը կդառնայի, Բենվենուտո, այլև մայրը, ընկերը, բույրը: Ես հասկանում էի, որ ձեր ազնիվ կյանքը պատկանում է աշխարհին, և կբավարարվի նրանով, որ կզվարճացնեի ձեզ տխրության բուրբերին ու կմխիթարեի դժբախտության մեջ: Դուք միշտ և ամեն ինչում ազատ կմնայիք: Ավա՛ղ, ես վաղուց արդեն սովոր եմ տանջալից միայնության, ձեր դյուրբարբոք բնավորության անհավասարակշռությանը, ձեր հախուռն էության քմահաճություններին:

Արտասովոր մարդիկ արտասովոր ձգտումներ ունեն: Որքան բարձր է ճախրում երկնքում հզոր արծիվը, այնքան ավելի երկար պիտի հանգստանա երկրի վրա: Մթափվելով ձեր տենդային ու վսեմ անուրջներից, դուք կրկին կպատկանեիք միմիայն ինձ, իմ մեծ Բենվենուտո, իմ սքանչելի սեր: Ես երբեք չէի կշտամբի ձեզ մոռացության երկարատև ժամերի համար. չէ՞ որ դրանց մեջ վիրավորական ոչինչ չէր լինի: Իսկ ինչ վերաբերում է ինձ, ապա, իմանալով, որ դուք խանդոտ եք, ինչպես բոլոր ազնիվ հոգիները, ինչպես խանդոտ էր ինքը՝ բանաստեղծների աստվածը, ես ձեր բացակայություն ժամանակ հեռու կմնայի մարդկանց աչքից ու կսպասեի ձեզ միայնության մեջ, աղոթելով աստծուն ձեր բարորություն համար:

Ահա ինչպես էի պատկերացնում իմ կյանքը:

Սայր երբ ինձ լքեցիք, ես (ենթարկվեցի նախախնամության և ձեր կամքին ու, հրաժարվելով երջանկությունից,

վարվեցի այնպես, ինչպես թելադրում էր դատեր պարտքը: Հայրս ցանկանում էր, որ փրկեմ նրան անպատվությունից, ամուսնանալով նրա պարտատիրոջ հետ. ես հնազանդվեցի:

Ամուսինս անհոգի, անխիղճ ու դաժան մարդ դուրս եկավ: Նա չէր բավարարվում իմ հնազանդությամբ և պահանջում էր, որ սիրեմ իրեն. բայց դա ուժերիցս վեր էր: Տեսնելով ակամա տխրությունս, նա կոպտությամբ էր վարվում ինձ հետ: Ես չէի դժգոհում: Հուսով եմ, որ հավատարիմ ու արժանավոր կին եմ եղել նրա համար, բայց միշտ այնքա՛ն տխուր, Բենվենուտո: Աստված, ի հատուցումն տառապանքներիս, մի արու զավակ պարգևեց ինձ: Չորս տարի երեխայի քնքուշ շոյանքները մոռացնել տվին վիրավորանքները, ծեծը, իսկ հետո՝ նաև աղքատությունը, որովհետև շահի հետևից ընկնելով, ամուսինս սնանկացավ և մի ամիս առաջ մեռավ վշտից ու հյուծվածությունից: Թող աստված թողություն տա նրա բոլոր մեղքերին, ինչպես ես եմ ներում:

Հիմա մեռնում եմ: Այսօր կկտրվի կյանքիս թելը: Ես կտակում եմ ձեզ, Բենվենուտո, իմ սրդուն:

Գուցե լավը հենց այս էր. ով գիտի, կկարողանայի՞ արդյոք ես՝ մի թույլ կին, մինչև վերջ կատարել այն ծանր առաքելությունը, որի մասին երազում էի... Տղաս, Ասկանիոն, (նա նման է ինձ) ձեզ համար ավելի արժանի ու հնազանդ կյանքի ընկեր կլինի. նա կկարողանա սիրել ձեզ եթե ոչ ինձնից շատ, ապա, զոնե ավելի ընդունելի: Եվ ես նրան շեմ խանդում:

Բենվենուտո, եղեք որդուս համար այն, ինչ ես ուզում էի լինել ձեզ համար. եղեք նրա ընկերը:

Մնաք բարո՛վ, Բենվենուտո: Այո՛, ես սիրել եմ ու սիրում եմ ձեզ և, հավերժության շեմին կանգնած, շեմ ամաշում խոստովանել: Դա սուրբ սեր էր: Մնաք բարով: Եղեք մեծ նկարիչ, իսկ ես վերջապես հավիտենական հանգստություն ու երջանկություն կգտնեմ: Գոնե երբեմն նայեք երկրնքին, որպեսզի կարողանամ այնտեղից տեսնել ձեզ:

Ձեր Ստեֆանա»:

— Դե՛հ, հիմա հավատո՞ւմ եք ինձ, Կոլոմբա, Ասկանիո: Համաձա՞յն եք անսալ խորհուրդներին:

— Այո՛, — միաբերան բացականչեցին սիրահարները:

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԳ

Խուզարկություն

Նեւի Փոքր ամրոցի պուրակում, աստղերի աղուտ լույսի տակ այդ պատմութիւնը լսելուց հետո, հետեյալ առաջնութենովնուտոյի արվեստանոցը սովորական տեսք ունէր. վարպետն ինքը աշխատում էր աղամանի վրա, որի համար հատկացված ոսկին այնպիսի արիությամբ նախօրէ՛ն պաշտպանեց շորս վարձկաններից, որոնք այդ ազնիվ մետաղը (ի դեպ և նրա կյանքը) խելու շարամիտ փորձ էին անում: Ասկանիոն դրվագում էր տիկին դ'էտամպի շուշանը, ժակ Օբրին, ծուլորեն մեկնված բազկաթոռին, հարցերի տարափ էր տեղում Չելլինիի գլխին և տեղն ու տեղը ինքն էլ պատասխանում էր այդ հարցերին, որովհետև Բենվենուտոն բերանը չէր բացում. Պագուոն աչքի տակով նայում էր Կատերինային, որը զբաղված էր ինչ-որ ձեռագործով: Հերմանը և մյուս ենթավարպետները ողորկում էին, զոզում, սղոցում, հատում, և այդ խաղաղ աշխատանքն աշխուժանում էր Սկոցոնեի ուրախ երգով:

Սակայն Նեւի Փոքր ամրոցում նույնպիսի խաղաղութիւն չէր տիրում. անհետացել էր Կոլոմբան: Սոսկալի իրարանցում էր բարձրացել: Աղջկան փնտրում էին, ձայն տալիս: Տիկին Պերինան աղեկտուր լացուկոժ էր բարձրացրել, իսկ պրեոն (դժբախտ հորը շտապել էին տեղեկացնել պատահարի մասին) գուր էր ջանում գեթ մի խելամիտ խոսք լսել գուեհնայից առևանգված, գուցե և փախած աղջկա հետքը գտնելու համար:

— Ուրեմն, տիկին Պերինա,— հարցնում էր նա,— դուք ասուցիք, որ վերջին անգամ տեսել եք նրան երեկ երեկոյան, իմ գնալուց անմիջապէս հետո՞:

— Ավա՛ղ, պարոն, հենց այդպէս էր... Հիսո՛ւս Քրիստոս... Ա՛յ քեզ դժբախտութիւն... Խեղճ աղջիկը մի քիչ տխուր տեսք ուներ: Նա հանեց շքեղ շրջազգեստը, որով պարտա էր գնացել, ու թանկարժեք զարդերը և հագավ համեստ, սպիտակ յոյր... Երկնային թաղալոր, գթա մեզ... Հետո նա

չարձագանքեց. ստիպված եղա ներս մտնել: Ոչ ոք չկար: Նույնիսկ անկողինը բացված չէր: Այդ տեսնելով, ես սկսեցի դռալ, օգնութեան կանչել: Բոլորովին գլուխս կորցրել էի: Իսկ դուք դեռ կամենում եք, պարոն, որ ես լաց չլինեմ:

— Իմ բացակայութեամբ որևէ մեկին ներս թողե՞լ եք, տիկին Պերինա, — խստորեն հարցրեց պրևոն:

— Ե՛ս... Ձեր բացակայութեամբ: Ասացեք, խնդրեմ, ո՞ւմ կարող էի ներս թողնել, պարոն, — ակնհայտ զայրույթով բացականչեց հարգարժան դուհեյան, որի խիղճն այնքան էլ մաքուր չէր: — Մի՞թե ինձ արգելված չէ այդպիսի բան անել: Պատահե՞լ է արդյոք զեթ մի անգամ, որ շկատարեմ ձեր խոսքը, պարոն: Որևէ մեկին նե՞րս թողնել: Ա՛յդ էր պակաս:

— Դե՛հ, օրինակ, այդ Բենվենուտոն, որը համարձակվեց ասել, թե աղջիկս գեղեցկուհի է: Նա չի՞ փորձել կաշանել ձեզ:

— Բենվենո՞ւտոն: Թող փորձեր միայն աչքիս երևալ: Ավելի հեշտութեամբ նա ոտք կդներ լուսնի վրա: Ես փառափորապես կընդունեի նրան, հավատացեք:

— Ուրեմն այստեղ, ձեզ մոտ, երբեք տղամարդիկ երիտասարդներ չե՞ն եղել:

— Երիտասարդներ: Ավելի լավ է հարցնեք, պարոն, թե չի՞ եկել ինքը՝ սատանան:

— Այդ դեպքում ո՞վ է այն սիրունատես պատանին, որն այստեղ աշխատելու օրից մի տասն անգամ բախել է մեր գոտը, — հարցրեց Պուլչերին: — Եվ դեռ ամեն անգամ ես փակում էի դռուր նրա երեսին:

— Սիրունատես պատանի՞: Մխալվում եք, հոգյակս, դա երեի կոմս դ'Օրբեկն էր: Ա՛խ, այո, հասկանում եմ, դուք համարաբար նկատի ունեք Ասկանիոյին: Հիշո՞ւմ եք Ասկանիոյին. ձերդ ողորմածութեան: Այն տղան, որը փրկեց ձեր կյանքը: Այո, իսկապես... Ես նրան նորոգելու էի տվել կոչիկներին արժաթյա ճարմանդները: Ուրեմն, այդ նրա՞ն եք համարում երիտասարդ, այդ փսլնքոտ աշակերտի՞ն: Ուշքի եկեք, սիրելիս: Նույնիսկ տան պատերն ու բակի սալաքա-

րերը կարող են վկայել, որ նրա ոտքը երբեք այստեղ չի եղել:

— Բավական է,— խստորեն ընդմիջեց նրան պրևոն:— Բայց իմացած եղեք, տիկին Պերինա, որ եթե շարաշահել էք վստահութիւնս, վայ ձեզ: Իսկ հիմա գնամ Բենվենուտոյի մոտ: Չգիտեմ այդ անտաշն ինչպես կդիմավորի ինձ, բայց պետք է գնալ:

Բոլոր սպասումներին հակառակ, Բենվենուտո Չելլինին գրկաբաց ընդունեց դ'էստուրվիլին: Նկարիչն այնքան անվերջով էր ու անբռնազբոսիկ սիրալիր, որ պրևոն սիրտ չարեց հայտնել նրան իր կասկածները: Նա ասաց միայն, որ էրեկ Կոլումբան, շղիտես ինչու, վախեցել է ու խելագարի նման փախել տնից: Եվ ահա ինքը մտածում է, թե գուցե աղջիկը թաքնվել է (անշուշտ առանց Չելլինիի գիտութեան), Նելի Մեծ ամբոցում, կամ էլ այստեղ գալիս նույնիսկ ուշաթափվել է ու հիմա անօդնական սլափած է որևէ տեղ: Մի խոսքով, դ'էստուրվիլն անամոթաբար ստում էր:

Բայց Չելլինին լսեց ձերուհուն և ասես հավատաց նրա բոլոր հեքիաթներին: Գնռ ավելին, նա ցավակցութիւն հայտնեց հյուրին, ասելով, որ երջանիկ կլինեն վերադարձնել աղջկան այսպիսի սիրասուն հորը, որն իր մանկանը շըրջադատել է ամենասրտառուչ հոգատարութեամբ և ուշադրութեամբ: Նա ավելացրեց, որ աղջիկը մեծագույն սխալ է դործել, բայց շուտով կհասկանա ու չի հապաղի վերադառնալ հայրական տունը՝ իր միակ ապահով ապաստարանը: Եվ, վերջապես, ի ապացույց մեասեր դ'էստուրվիլի նկատմամբ ունեցած իր անկեղծ կարեկցանքի, Բենվենուտոն առաջարկեց ուղեկցել նրան ոչ միայն Նելի Մեծ ամբոցում աղջկան փնտրելիս, այլև ամենուրեք, որտեղ հարկն է:

Պրևոն, գրեթե հավատալով Բենվենուտոյին և առավել շոյված նրա գովեստներից, քանզի հողու խորքում զգում էր, որ ամենևին արժանի չէ այդպիսի մեծարանքի, սկսեց մանրազնին հետախուզել իր նախկին տիրութիւնները, որտեղ բոլոր գաղտնարաններ՝ ու ծակուծուկերը հայտնի էին նրան: Նա ներս էր մտնում բոլոր դռներից, բացում բոլոր պահա-

բանները, ասես ի միջի այլոց ստուգում ամեն մի սնդուկի պարունակութիւնը: Հետո շրջանցեց ամբողջ այգին, և դավ պինանոցում, ձուլարանում, ախոռում ու մառանում, մեծպուլն ուղադրութեամբ գննելով ամեն ինչ: Բենվենուտոն, իր խոստմանը հավատարիմ, ջանք չէր խնայում նրան օգնելու համար. առաջարկում էր այս կամ այն դրան բանալին, հիշեցնում էր, որ մեասերը մոռացել է աչքի անցկացնել այսինչ միջանցքը, կամ նկուղը: Վերջապես նա խորհուրդ տվեց սրբուցին ամենուրեք պահակներ կանգնեցնել, որպեսզի Կուլմբան (եթե նա այստեղ է) չկարողանա աննկատելիորեն մի շենքից մյուսն անցնել:

Երկժամյա ապարդյուն որոնումներից հետո մեասեր դ՛էստուրվիլը համոզվեց, որ աղջիկը չկա և հեռացավ Նելի Մեծ ամրոցից, տանտիրոջ սիրալիրութիւնից շփոթված, որին նա մերթ շնորհակալութիւն էր հայտնում, մերթ խընդրում ներել պատճառած անհանգստութեան համար:

— Երբ էլ ձեր մտքով անցնի շարունակել որոնումները, տունս ձեր տրամադրութեան տակ է,— պատասխանեց նկարիչը:— Կարող եք գալ օրվա ու գիշերվա ցանկացած ժամին, որպես տանտեր: Դա ձեր իրավունքն է, պարոն: Չէ՞ որ ես և դուք պայմանագիր ենք ստորագրել, պարտավորվելով ապրել ինչպես բարի դրացիներ:

Պրիտն, մի անգամ էլ շնորհակալութիւն հայտնելով և զմեկանալով սիրալիրութեանը պատասխանել սիրալիրութեամբ, սկսեց դովարանել Մարսի հսկայական արձանը, որի վրա, ինչպես գիտեք, այդ ժամանակ աշխատում էր արձանագործը: Բենվենուտոն հյուրին պտտեցրեց արձանի շուրջը, համոզրով նշելով դրա զարմանալի շափերը: Եվ իրոք, արձանը վախճան ոտնաշափից ավելի բարձրութիւն ուներ և պետք էր բոսն քայլ անել պատվանդանը շրջանցելու համար:

Մեասեր դ՛էստուրվիլը գնաց վերջնականապես հուսալուստով: Եւ ի Մեծ ամրոցում աղջկան չգտնելով, նա որդեգրեց, որ Կուլմբան թաքնվում է ուրիշ մի տեղ՝ քաղաքում: Իսկ Փարիզի այդ ժամանակներում այնքան մեծ քաղաք էր արդեն, որ անհետացած աղջկա որոնումները դյուրին չէին

նույնիսկ ոստիկանապետի համար: Եվ, բացի այդ, ինչպե՞ս իմանալ՝ առևանգե՞լ են Կոլոմբրային, թե նա ինքն է փախել: Բռնության գո՞հ է դարձել, թե գործել է սեփական կամքով: Ոչինչ հայտնի չէ, և օգնության հասնող էլ չկա: Պրևոն սկսեց հուսալ, որ առաջին դեպքում աղջիկը դուրս կարժնի առևանգողների ձեռքից, իսկ երկրորդ դեպքում ինքը կվերագառնա հայրական տունը: Նա համբերատարությամբ սպասում էր, այնուհանդերձ, օրը քսան անգամ հարցաքննելով տիկին Պերինային, որը աստված էր կանչում ու վկայակոչում բոլոր սրբերին, պնդելով, որ Ասկանիոյից բացի ոչ ոքի ամրոց չի թողել, իսկ նրան տիկին Պերինան կասկածում էր ոչ ավելի, քան ինքը՝ մեսսեր դ'էստուրվիլը:

Անցավ երկու օր, Կոլոմբան չէր հայտնվում: Պրևոն որոշեց դիմել իր գործակալների օգնությանը: Մինչև հիմա նա այդ քայլին չէր դիմում, վախենալով տարփողումից, որը կարող էր արատավորել իր բարի անունը: Եվ հիմա էլ նա գործակալներին ավեց միայն փնտրվող աղջկա տարբերիչ նշանները, շանվանելով նրան և հրամայեց որոնումներ կատարել բոլորովին այլ, իսկությունից շատ հեռու պատրվակով, բայց ամեն ինչ ապարդյուն էր:

Ճիշտ է, պարոն դ'էստուրվիլը երբեք սիրող, քնքուշ հայր չէր եղել և այնքան էլ մտահոգված չէր աղջկա համար, բայց այս դեպքում շոշափվել էր նրա պատիվը, նա խոցված ինքնասիրության տառապանք էր ապրում: Պրևոն ղայրույթով մտածում էր, որ այդ հիմար աղջիկը թերևս ձեռքից բաց թողեց շատ փայլուն ամուսնություն ու կատաղում էր, նախապես պատկերացնելով, թե արքունիքում ինչպիսի շարախընդությունամբ ու ծաղրանքով կընդունեն իր դժբախտության լուրը:

Բայց փեսացուին, այնուամենայնիվ, ստիպված եղան ասել ճշմարտությունը: Այդ տեղեկությունը, սակայն, կոմս դ'Օրբեկին վշտացրեց ոչ ավելի, քան վաճառականին կվըշտացնեք ապրանքի կորուստը: Մեր սիրելի կոմսը փիլիսոփա էր և դրա համար իր արժանավոր ընկերոջը խոստացավ, որ եթե գործն ազմկալից ընթացք չստանա, ինքն անպայ-

ման կամուսնանա աղջկա հետ և իսկույն, ինչպես հանգամանքներից օգտվել իմացող մարդ, ակնարկեց Կոլոմբայի նկատմամբ տիկին դ'էտամպի ունեցած դիտավորությունները:

Դժբախտ պրևոյին բոլորովին շլացրեց այն պատիվը, որին կարող էր արժանանալ: Նրա տառապանքները սաստկացան. հոգու խորքում նա անիծում էր անշնորհակալ աղջրկան, որը սեփական մեղքով ձեռքից բաց է թողել այդ բարձրագույն հրջանկությունը:

Ընթերցողին ազատենք պալատական երկու ժերունիների խոսակցությունից, որը հետևեց կոմս դ'Օրբեկի հաղորդման: Միայն նշենք, որ վիշտն ու հույսը նրանք արտահայտում էին խիստ սրտաշարժ կերպով: Իսկ քանի որ դժբախտությունները մտերմացնում են մարդկանց, ապագա բարեկամները բաժանվեցին որպես սրտակից ընկերներ, որոնք պարզուպես չէին կարող հրաժարվել իրենց առաջ փայլկտացող շխույուցիչ հեռանկարից:

Որոշված էր դքսուհի դ'էտամպից բացի ոչ ոքի շասել պատահարի մասին. դքսուհին նրանց բարեկամն ու հավատարիմ գործակցուհին էր և նրան հարկ էր հայտնել գաղտնիքը:

Պարզվեց, որ չեն սխալվել: Տիկին դ'էտամպը փախած աղջկա հորից ու փեսացուից ավելի սրտամոտ ընդունեց պատահարը և աղջկան գտնելու համար շատ ավելի բան արեց, քան բոլոր ուստիկանները միասին վերցրած:

Եվ իրոք, նա գիտեր Ասկանիոյի սիրո մասին դեպի Կոլոմբան, գիտեր, որ պատանին իր պահանջով ներկա էր դավադրության տեսարանին: «Գուցե հասկանալով սիրած աղջրկա սրտովին սպառնացող վտանգը,— մտածում էր դքսուհին. Ասկանիոն դիմել է այդ հանդուգն քայլի՞ն: Բայց չէ՞ որ նա ինքն էր ասում, որ Կոլոմբան չի սիրում իրեն: Իսկ եթե այդպես է, աղջիկը հազիվ թե համաձայներ փախչել նրա հետ: Դքսուհի դ'էտամպը լավ գիտեր Ասկանիոյին և անձնարիմ էր համարում, որ նա կարող է բռնությամբ կին տեսնուդել: Բայց, այնուամենայնիվ, շնայած այդ փաստարկ-

ներին և Ասկանիոյի կարծես ակնհայտ անմեղութեանը, կանացի խանդը թելադրում էր նրան, որ Կոլումբային պետք է փնտրել Նելի ամբոցում և որ անհրաժեշտ է նախ կալանավորել Ասկանիոյին:

Բայց տիկին դէ՛տամպը, անշուշտ, իր բարեկամներին չէր կարող բացատրել այդ կասկածների պատճառը. չէ՞ որ այդ դեպքում ստիպված կլինէր խոստովանել, որ սիրում է Ասկանիոյին և որ կրթից կուրացած հայտնել է նրան իր դիտավորութունները Կոլումբայի վերաբերյալ: Այդ իսկ պատճառով դքսուհին նրանց ասաց միայն, որ իր կարծիքով աղջկան առևանգողը Բենվենուտոն է, նրա գործակիցը՝ Ասկանիոն, իսկ փախած աղջկա ապաստարանը՝ Նելի Մեծ ամբոցը: Եվ ինչքան էլ առարկում էր պրևոն, հավատացնելով, որ խուզարկել է բոլոր ծակուծուկերը, դքսուհի դէ՛տամպը չէր հանձնվում. նա իր պատճառներն ուներ դրա համար: Վերջ ի վերջո նրան, այնուամենայնիվ, հաջողվեց կասկած սերմանել դէստուրվիլի հոգում:

— Բայց ես, — նկատեց դքսուհին, — կկանչեմ Ասկանիոյին և ինքս, ինչպես հարկն է, կհարցաքննեմ, հանգիստ եղեք:

— Օ՛, տիկին, դուք այնքան բարի եք, — րացականչեց պրևոն:

— Իսկ դուք՝ շափազանց հիմար, — ատամների արանքից շշնջաց դքսուհին:

Եվ, ճանապարհ դնելով երկու պալատականներին, նա սկսեց մտածել, թե ինչ պատրվակով կանչի պատանուն: Զհասցրեց դքսուհին որևէ ելք գտնել, երբ նրան զեկուցեցին Ասկանիոյի գալստյան մասին: Այսպես, ուրեմն, Ասկանիոն ինքն էր ընդառաջ գնում նրա ցանկութուններին:

Տիկին դէ՛տամպը նայեց պատանուն այնպիսի քննախույզ հայացքով, ասես ցանկանում էր թափանցել նրա հոգու գաղտնարանները: Բայց Ասկանիոն, ըստ երևույթին, ոչինչ չնկատեց, նա հանգիստ էր ու անտարբեր:

— Տիկին՛ն, — խոնարհվելով ասաց նա, — ես բերել եմ շուշանը, որը համարյա պատրաստ է. պակասում է միայն ցողի կաթիլը, բայց դրա համար պետք է երկու հարյուր հազարանոց ադամանդ, որը դուք խոստացել եք տալ:

— Իսկ ինչպե՞ս է քո Կոլոմբրան,— պատասխանի փոխարին հարցրեց տիկին դ'էտամար:

— Եթե բարեհաճում եք խոսել մադամուզել դ'էտուրվիլի մասին, տիկին, ես պատրաստ եմ ծնկաչոք աղաչել, որ իմ ներկայութեամբ այլևս չտաք նրա անունը,— մոռացրե՞ն այստասխանեց Ասկանիոն:— Թախանձագին խնդրում եմ, տիկին, շխոսենք այլևս նրա մասին:

— Ինչ է, դուք կարծես սրտնեղա՞ծ եք,— բացականչեց դքսուհին, իր խորաթափանց հայացքը շկտրելով Ասկանիոյից:

— Ինչպիսին էլ լինեն զգացմունքներս, տիկին, ես հրաժարվում եմ խոսել ձեզ հետ այդ մասին, նույնիսկ շնորհազրրկման սպառնալիքի տակ: Ես ինձ երդում եմ սովել, որ բոլոր հիշողութիւններն այդ օրիորդի մասին ընդմիշտ թաղված կմնա հոգումս:

«Մի՞թե սխալվել եմ, և Ասկանիոն մասնակից չէ այդ պատմութեանը,— մտածեց դքսուհին:— Մի՞թե աղջիկը փախել է ուրիշ մեկի հետ (իր ցանկութեամբ, թե՞ ոչ, դա կարևոր չէ) ու, խափանելով փառասիրական ծրագրերս, ահամա ծառայութուն է մատուցել իմ սիրուն»:

Եվ դքսուհին բարձրաձայն ավելացրեց.

— Կա՛մ, Ասկանիո, դուք խնդրում եք շխոսել Կոլոմբրայի մասին, բայց իմ մասին կարո՞ղ եմ խոսել: Տեսնում եք, ես համաձայնում եմ կատարել ձեր խնդիրքը, բայց գուցե խոսակցութիւնն իմ մասին առավել անախորժ կլինի ձեզ համար: Գուցե...

— Ներեցե՛ք, տիկին, որ ընդմիջում եմ,— ասաց Ասկանիոն,— բայց բարութիւնը, որով համաձայնեցիք կատարել առաջին խնդիրքս, համարձակութիւն է տալիս դիմելու ձեզ երկրորդ խնդիրքով: Բանն այն է, որ թեև իմ ծնողներն ազնվական մարդիկ են, բայց մենավոր ու տխուր մանկութիւնս ես անց եմ կացրել ոսկերչի համեստ արվեստանոցում: Այդ մենութիւնից ես անսպասելիորեն ընկա պալատական հասարակութեան փայլուն ոլորտը, մասնակից դարձա թագաւորութեան ճակատագրերը տնօրինող մարդկանց դավադ-

րությանը, այս աշխարհի հզորների շրջանում թշնամիներ ձեռք բերեցի ու դարձա թագավորի մրցակիցը և այն էլ ինչպիսի՜ կեդաւորի, տիկին, Ֆրանցիսկ I-ի՝ ամբողջ քրիստոնեական աշխարհի տիրակալներից հզորագույնի: Ես իսկույն հայտնվեցի Ֆրանսիայի անվանի մարդկանց շրջապատում: Ես առանց փոխադարձության սիրեցի մի լավ աղջիկ, բայց սեր արթնացրի մեծազարմ տիկնոջ սրտում, որին պատասխանել չեմ կարող: Եվ ո՞վ սիրեց ինձ, պատկերացնո՞ւմ եք, աշխարհի սքանչելագույն, ազնվագույն կինը: Այդ ամենը խռովեց հոգես, տակնուվրա արեց պատկերացումներս աշխարհի մասին, ճնշեց, շճեցրեց, ոչնչացրեց ինձ... Իս պայքարում եմ, ինչպես հսկանների թագավորությունն ընկած գաճաճը: Մտքերս ու զգացմունքներս խճճվում են, ես ոչինչ չեմ հասկանում ու դեգերում եմ մոլորվածի պես, սարսափելով ինձ շրջապատող դաժան ատելությունից, անզուժ սիրուց, գոռոզամիտ փառասիրությունից: Տիկին, աղաչո՞ւմ եմ, դժացեք: Թույլ տվեք ուշքի գալ, թույլ տվեք խեղդվողին շունչ առնել, հիվանդին՝ ապարհնովել ծանր ղեցումից հետո: Հուսով եմ, ժամանակը կրուժի սիրտս, հանգստություն կբերի հոգուս ժամանակ, միայն ժամանակ, տիկին: Աղաչում եմ, սպասեցեք, և առայժմ թող ձեզ համար ես լինեմ սոսկ սակերիչ, որը եկել է հարցնելու, թե իր աշխատանքը գոհացնո՞ւմ է ձեզ:

Դքսուհին զարմացած ու կասկածանքով նայում էր Ասկանիոյին: Նա ամենևին չէր սպասում, որ այդ պատանին, համարյա երեսան, կարող է այդքան բանաստեղծորեն և միաժամանակ լրջորեն ու պարզ արտահայտել իր մտքերը: Նա ստիպված եղավ հնազանդվել ու սկսեց խոսել շուշանի մասին. գովեց Ասկանիոյին, որոշ խորհուրդներ տվեց նրան և խոստացավ հնարավորին չափ շուտ ուղարկել մեծ աղամանդը: Պատանին շնորհակալություն հայտնեց դքսուհուն և հրաժեշտ տալիս ամեն կերպ աշխատում էր արտահայտել իր երախտագիտությունն ու հարգանքը:

«Մի՞թե սա Ասկանիոն է,— նրա հետևից նայելով, մտածում էր տիկին դ'էտամպը:— Նա կարծես տառը տարով ծեփադած լինի»:

Ինչպիսի՞ լրջութիւն, ծանրակշռութիւն: Տանջա՞նքն է գրա պատճառը, թե՞ երջանկութիւնը: Անկե՞ղծ է, թե այդ անխօսյալ Բենվենուտոն է գրդել նրան: Լավ սերտած դե՞ր է խաղում, թե՞ գործում է սրտի թելադրանքով:

Եվ Աննա դ'էտամպը շղիմացավ: Չնայած իր ամբողջ խելքին, նա տենդագին հուզմունքի մեջ ընկավ բոլոր նրանց նման, ովքեր ստիպված էին կովի բռնվել Բենվենուտո Չելլի-նիի հետ: Նա Ասկանիոյի գլխին լրտեսներ կարգեց, որոնք պետք է հետևեին նրա ամեն քայլափոխին, բայց ոչ մի արդյունքի չհասավ: Այդ ժամանակ խորհուրդ արվեց կոմս դ'Օրբեկին ու պրևոյին մի անգամ ևս անակնկալ խուզարկութեան դնալ Նելի ամրոցը:

Բարեկամները հնազանդեցին: Սակայն Բենվենուտոն, թեև խանգարել էին նրան աշխատել, այցելուներին ընդունեց շատ ավելի լավ, քան առաջին անգամ պարոն դ'էտամպովիին: Տեսնելով ինչքան բարեկիրթ ու ինքնավստահ է պահում նա իրեն, կարելի էր կարծել, թե այդ խուզարկութեան մեջ նրա համար վիրավորական ոչինչ չկա: Նա բարեկամաբար պատմեց կոմս դ'Օրբեկին դարանի մասին, որի մեջ ընկել էր մի քանի օր առաջ, երբ ոսկով ծանրաբեռնված վերադառնում էր դանձաւանից. հենց այդ օրն էլ անհետացավ մադոուազել դ'էտամպովիլը, ընդդժեց նկարիչը: Այս անգամ էլ նա այցելուներին առաջարկեց իր ուղեկցութիւնը աղջկան որոնելու համար, որպեսզի վերականգնվեն դ'էտամպովիի հայրական իրավունքները, որոնք Բենվենուտոն սրբորեն հարգում էր: Սրտաբաց տանտերը շատ ուրախ էր, որ հյուրերը եկել են այն ժամանակ, երբ ինքը տանն է և կարող է արժանի կերպով ընդունել նրանց: Եթե երկու ժամ ուշ եկած լինեին, ինքն արդեն մեկնած կլիներ Ռոմորանտեն, ուր բարեհաճորեն հրավիրված է Ֆրանցիսկ I-ի կողմից, որպեսզի մյուս նկարիչների հետ միասին դիմավորելու գնա Կարլոս V-ին:

Եվ իրոք, քաղաքական իրադարձութիւնները ծավալվում էին նույնքան արագ, որքան մեր համեստ պատմութիւնը:

Իր հակառակորդի պաշտոնական խոստումից և տիկին դ'էտամսի գաղտնի խորհուրդից խաղաղված, Կարլոս V-ն արդեն Փարիզից մի քանի օրվա ճանապարհի վրա էր: Նրան դիմավորելու համար պատգամավորություն էր նշանակված և, Նելի ամրոց գալով, պրևոն և դ'Օրբեկն, իրոք, Բենվենուտոյին տեսան ճամփորդական հագուստով:

— Քանի որ նա մեկնում է ուղեկցորդների հետ, ապա, ըստ երևույթին, Կոլոմբային առեանգողը նա չէ, և մենք այստեղ անելիք չունենք,— շշնջաց դ'Օրբեկը:

— Ես այդ ասացի դեռ այստեղ գալիս,— պատասխանեց պրևոն:

Եվ, այնուամենայնիվ, ցանկանալով մեկընդմիջտ վերջացնել այս գործը, նրանք ամենայն ջանասիրությամբ խուզարկեցին ամրոցը: Սկզբում Բենվենուտոն ուղեկցում էր նրանց, բայց տեսնելով, որ գործը ձգձգվում է, թույլտվություն խնդրեց գնալու. բանն այն է, որ կես ժամ հետո ինքը պետք է մեկնի, իսկ մինչ այդ անհրաժեշտ է որոշ կարգադրություններ անել ենթավարպետներին, որպեսզի վերադարձին ամեն ինչ պատրաստ լինի Յուսիտերը ձուլելու համար:

Եվ իրոք, Բենվենուտոն զնաց արվեստանոց, պատվերներ տվեց ենթավարպետներին ու խնդրեց նրանց ամեն ինչում լսել Ասկանիոյին, հետո իտալերեն ինչ-որ բան շշնջաց Ասկանիոյի ականջին, հրաժեշտ տվեց բոլորին ու պատրաստվեց դուրս գալ բակ, ձին հեծնելու, որի սանձը բռնել էր ժան-Ճատիկը:

Բայց այդ ժամանակ վազելագ նկարչին մոտեցավ Սկոցոնեն և, նրան մի կողմ տանելով, լրջորեն ասաց.

— Գիտե՞ք, պարոն, ձեր մեկնումը ինձ շատ ծանր դրության մեջ է դնում:

— Ինչո՞ւ, մանկիկս:

— Պագուլոն գնալով ավելի ու ավելի է սիրահարվում ինձ...

— Իսկապե՞ս:

— Նա անընդհատ խոսում է իր զգացմունքների մասին:

— Իսկ դո՞ւ...

— Ես վարվում եմ այնպես, ինչպես պատվիրել եք. պատասխանում եմ, որ պետք է սպասել, և ամեն ինչ դեռ կարող է կարգի ընկնել:

— Սքանչելի է:

— Ինչպե՞ս թե սքանչելի է: Մի՞թե չեք հասկանում, որ նա իմ ասածները լուրջ է ընդունում, և դա ակամա ինձ կայում է նրա հետ: Արդեն երկու շաբաթ կլինի, ինչ հրամայել եք, որ ինձ այդպես պահեմ, ճի՞շտ է:

— Այո... թերևս... ստույգ չեմ հիշում:

— Բայց ես շատ լավ եմ հիշում: Առաջին հինգ օրը ես մեղմորեն համոզում էի Պագոլոյին շտիրել ինձ. հետևյալ հինգ օրը լուռ լսում էի նրան: Սակայն, ըստ էության, դա արդեն պատասխան էր և բավականին պարզ պատասխան. բայց դուք ինձ այդպես էիք կարգադրել, և ես հնազանդեցի, իսկ վերջին հինգ օրվա ընթացքում ստիպված էի ասել նրան ձեր նկատմամբ ունեցած պարտականություններիս մասին. երեկ, պարոն, ես խնդրեցի նրան ներողամիտ լինել իմ թուլության նկատմամբ, իսկ նա տեղն ու տեղը խնդրեց դառնալ իր կինը:

— Ա՛խ, այդպե՞ս: Այդ դեպքում գործն ուրիշ ընթացք է ստանում:

— Վերջապե՞ս, — բացականչեց Սկոցոնեն:

— Այո: Իսկ հիմա, սիրելիս, լսիր ինձ ուշադրությամբ: Իմ մեկնելուց հետո, առաջին երեք օրը, դու կակնարկես Պագոլոյին, որ սիրում ես նրան, իսկ հաջորդ երեք օրը սեր կիռսատովանես:

— Ի՞նչ: Եվ այդ բանը դո՞ւք եք առաջարկում, Բենվենուտո, — բացականչեց Սկոցոնեն, իր տիրոջ անշափ վստահությունից խայթված:

— Հանգստացի՛ր, Սկոցոնե: Դու մեղք գործած չես լինի. չէ՞ որ ես ինքս եմ թույլատրում քեզ:

— Անշուշտ, մեղքն իմը չի լինի, — ասաց Սկոցոնեն: — Ես հասկանում եմ: Եվ, այնուամենայնիվ, ձեր անտարբերությունից նեղացած, ես կարող եմ պատասխանել Պագոլոյի սիրուն, կարող եմ, ի վերջո, իսկապես սիրել նրան:

— Վեց օրո՞ւմ: Եվ դու շեռ կարող զսպել քեզ ու անդրդովելի մնալ գայթակղության հանդեպ ընդամենը վեց օ՞ր:

— Դե լա՛վ, վեց օր խոստանում եմ, միայն թե յսթերորդի համար երաշխավորել չեմ կարող:

— Հանդիստ եղիր, մանկիկս, ես ժամանակին կվերադառնամ: Մնաս բարո՛վ, Սկոցոնե:

— Գնաք բարո՛վ, ուսուցիչ,— պատասխանեց Կատերինան, բարկանալով, ժպտալով ու լաց լինելով:

Այդ րոպեին հայտնվեցին պրևոն և կոմս դ'Օրբեկը:

Չելլինիի գնալուց հետո նրանք, առանց քաշվելու, եռանդուն որոնումներ սկսեցին. խուզարկեցին բոլոր ձեղնահարկերը, մառանները, թխկթխկացնելով ստուգեցին բոլոր պատերը, ամեն ինչ տակնուվրա արին և ամենուրեք պահակ կանգնեցրին իրենց ծառաներին՝ պարտատերերի պես անողոր, որսորդների նման անհամբեր: Երկու բարեկամները հարյուր տնգամ վերադառնում էին նույն տեղը, հարյուր տնգամ խուզարկում միևնույն շինությունը և այդ ամենը՝ հանցադատին ձերբակալելու եկած դատական կատարածուների տնտանձ ջանասիրությամբ: Եվ հիմա, խուզարկությունը վերջացնելով, այդպես էլ ոչինչ չհայտնաբերելով, նրանք դուրս եկան ամրոցի քակը, հուզմունքից կարմրատակած:

— Ի՞նչ է, պարոնայք,— նրանց տեսնելով հարցրեց Չելլինին՝ ձի նստելով,— այդպես էլ ոչինչ չգտա՞ք: Ցավալի է: Շատ ցավալի է: Ես հասկանում եմ, որ ծանր է ձեզ համար. չէ՞ որ երկուսիդ հոգին էլ այնքան քնքուշ է, զգայուն: Սակայն, չնայած իմ ամբողջ կարեկցանքին և ձեզ օգնելու ցանկությունը, ես ստիպված եմ մեկնել: Թույլ տվեք մնաք բարով ասել ձեզ, պարոնայք: Եվ եթե բացակայությունս ընթացքում ձեզ պետք լինի մի անգամ ևս աչքի անցկացնել ամրոցը, եկեք այստեղ առանց քաշվելու, ինչպես ձեր տունը: Ես կարգադրել եմ, որ ամրոցի դռները միշտ բաց լինեն ձեր առաջ: Հավատացեք, ձեր անհաջողությունից հետո ինձ մխիթարում է այն հույսը միայն, որ վերադառնալուս պես, պարոն պրևո, կտեղեկանամ, որ գտել եք ձեր

սիրելի աղջկան, իսկ դուք, պարոն դ'Օրբեկ, ձեր սքանչելի հարսնացուին: Մնաք բարով, պարոնայք:— Այնուհետև, դիմելով արտասանողդքին խմբված ենթավարպետներին (բուլորն այնտեղ էին, բացի Ասկանիոյից, որը, ըստ երևույթին, չէր ցանկանում հանդիպել իր հակառակորդին), Բենվենուտոն ավելացրեց.— Յտեսություն, դավակներս: Եթե պարոն պրևոն կամենա երրորդ անգամ աչքի անցկացնել ամբողջը, շնորհաբար ընդունել նրան որպես այս տան նախկին տիրոջ:

Այդ ասելով, նա խթանեց ձին ու դուրս եկավ դարպասից:

— Դեհ, իսկ հիմա, հարգելիս, դուք համոզվեցի՞ք, թե ինչ տխմար մարդիկ ենք,— պրևոյին դիմելով, հարցրեց կոմս դ'Օրբեկը:— Աղջիկ առևանգողը թագավորական արքունիքի հետ Ռոմորանտեն չէր գնա:

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

Կարլոս V-ը Ֆրանսերոյում

Կարլոս V-ը սաք դրեց Ֆրանսիայի հողը ոչ առանց լուրջ վարանումների ու տանջալից կասկածների: Թվում էր, թե այստեղ օդն ու հողը թշնամի են նրան: Եվ դարձանալի էլ չէր. չէ՞ որ գերի վերցնելով ֆրանսիական թագավորին, նա Մադրիդում անվայել էր վարվել նրա հետ և, բացի այդ, ինչպես ասում են, թունավորել էր դոֆինին: Ամբողջ Եվրոպան սպասում էր, որ Ֆրանցիսկ I-ը սոսկալի վրեժ կլուծի իր հակառակորդից, մանավանդ որ վերջինս պատրաստ էր հոծարակամ նրա ձեռքը հանձնվել: Սակայն Կարլոսը, այդ մեծ խաղամուրը, որը հանդգնորեն բախտախաղի էր դնում ամբողջ կայսրություններ, շցանկացավ նահանջել և, նախապես հող նախապատրաստելով, անվախորեն անցավ Պիրենյան լեռները:

Ճիշտ է Ֆրանցիսկ I-ի արքունիքում նա հավատարիմ դաշնակիցներ ուներ. կայսրը գտնում էր, որ լիովին կարող է հույս դնել տիկին դ'Էտամպի փառասիրության, կոնետաբլ

Մոնմորանսիի ինքնավստահության և թագավորի ասպետական զգացմունքների վրա:

Թե դքսուհի դ'էտամպը ինչ կերպ էր պատրաստվում օգնել նրան, մենք արդեն գիտենք. ինչ վերաբերում է կոնետաբլին, ապա նրա գործն ուրիշ է: Դաշինքների հարցը գայթակղության քար է եղել պետական գործիչների համար բոլոր ժամանակներում և բոլոր երկրներում: Այդ տեսակետից, ինչպես և շատ ուրիշ տեսակետներից, քաղաքականությունը նման է բժշկության. այն ելնում է ենթադրություններից և, ավա՞ղ, հաճախ սխալվում է, ուսումնասիրելով ժողովուրդների ազգակցության հատկանիշները և դեղ դուրս գրելով ազգային թշնամության դեմ: Իսպանիայի հետ դաշինք կնքելու միտքը, օրինակ, հանգիստ չէր տալիս մեր կոնետաբլին: Նա այդ դաշինքի մեջ տեսնում էր Ֆրանսիայի փրկությունը և վախենում էր մի բանից միայն՝ զայրացնել Կարլոս V-ին, որը քսանհինգ տարվա թագավորության ընթացքում քսան տարի կովում էր Ֆրանցիսկ I-ի դեմ: Իսկ մյուս դաշնակիցների թուրքերի ու թողոքականների հետ կոնետաբլ դե Մոնմորանսին սյարպասես գործ շուներ, ինչպես, ի դեպ, և քաղաքական փայլուն հնարավորությունների հետ (օրինակ, Ֆլանդրիայի միացումը ֆրանսիական թագավորությանը):

Ֆրանցիսկ I-ը կուրորեն հավատում էր կոնետաբլին: Եվ իրոք, վերջին պատերազմի ժամանակ կոնետաբլը շտեմնված վճռականություն ցուցաբերեց ու կանգնեցրեց թշնամուն: Բայց սկետք է խոստովանել, որ այդ հաղթանակը էժան շնորհատե՛ց. մի ամբողջ նահանգ ամայացավ, հողն այրվում էր թշնամու ոտքի տակ, և Ֆրանսիայի մեկ տասներորդը ավերածության էր ենթարկվել: Կոնետաբլը դուր էր գալիս Ֆրանցիսկ I-ին իր գոռոզամտությամբ, կոպտությամբ ու անհաղթահարելի համառությամբ, որոնք անխորաթափանց մարդը կարող է հպարտության, անկաշառության ու հաստատակամության տեղ դնել: Եվ Ֆրանցիսկ I-ը նայում էր բարի մարդկանց այդ մեծ մոլորեցնողին, ինչպես Բրանտոմն անվանում էր կոնետաբլին, ակնածալից վախի նմանվող պատկառանքով, որ աղոթք ու մահապատիժ փոխնիփոխ գործադրող այդ կեղծ բարեպաշտը ներշնչում էր թույլ հոգիներին:

Եվ այդպես, Կայսր Կարլոս V-ը կարող էր համարձակորեն հույս դնել կոնետաբլ դե Մոնմորանսիի անդավաճան բարեկամության վրա:

Սակայն առավել մեծ հույսեր նա դնում էր իր թշնամու մեծահոգության վրա: Ֆրանցիսկի այդ առաքինությունը հասնում էր ծայրահեղության: «Իմ թագավորությունը կամուրջ չէ, որի վրայով անցնելու համար պետք է վճարել,— հայտարարել էր նա մի անգամ:— Ես չեմ վաճառում հյուրընկալությունս»: Եվ նենգ Կարլոս V-ը շատ լավ գիտեր, որ լիովին կարող է հույս դնել ասպետ-թագավորի վրա:

Բայց, այնուամենայնիվ, երբ կայսրը ոտք դրեց Ֆրանսիայի հողը, չէր կարողանում հաղթահարել իր կասկածներն ու վախը: Սահմանի մոտ նրան դիմավորեցին Ֆրանցիսկ I-ի երկու տղաները, իսկ ամբողջ ճանապարհին Ֆրանսիացիները հարգանք ու պատիվ էին ցույց տալիս Կարլոս V-ին: Բայց խորամանկ միապետը դողում էր այն մտքից, որ այդ ամբողջ սրտաբացությունը ցուցամոլություն է միայն, որի տակ, գուցե, թակարդ է լարված: «Այո, օտար երկրում քուն չի գալիս մարդու աչքին»,— ասաց նա մի անգամ: Տոնակատարություններին, որոնք կազմակերպում էին նրա պատվին, նա հայտնվում էր մտահոգ ու տխուր. և ինչքան ավելի հեռանում էին սահմանից, նրա դեմքի արտահայտությունը դառնում էր ավելի զգաստ, ավելի մռայլ:

Լսելով ողջույնի ճառերը, որոնցով դիմավորում էին նրան ամեն մի քաղաքում, կամ անցնելով հաղթական կամարների տակով, նա անդադար հարց էր տալիս ինքն իրեն՝ այս քաղաքը չէ՞ արդյոք, որ իր բանտն է դառնալու, և տեղնուտեղը պատասխանում էր իր հարցին. «Ո՛չ այս քաղաքը, ո՛չ ուրիշ... Ամբողջ Ֆրանսիան իմ բանտն է, իսկ այս բոլոր շողորորթ պալատականները՝ իմ բանտապանները»: Եվ գնալով մեծունում էր այդ վագրի անզուսպ սարսափը. նրան թվում էր, թե ինքը վանդակում է, և շրջապատի բոլոր մարդիկ իր թշնամիներն են:

Մի անգամ, զրոսանքի ժամանակ, Կարլոս Օուլեանցին, այդ սիրելի շարաճճին, որն շտապում էր խիզախ, նրբա-

կիրթ կավալեր դառնալ, ինչպես վայել է Ֆրանսիայի կատարյալ զավակին, ճարպկորեն թռավ կայսեր ձիու զավակին, և նրա ուսերը գրկելով, կրակոտ տղայամտությամբ գոռաց. «Դուք իմ գերին եք»: Կարլոս V-ը սոսկալի գունատվեց ու քիչ մնաց ուշադնաց լինեք:

Շատելություն կարծեցյալ գերուն իսկական եղբայրական սիրալիրությամբ դիմավորեց Ֆրանցիսկ I-ը և հետևյալ օրը Ռոմորանտենում ամբողջ արքունիքը ներկայացրեց նրան. բարձր ազնվականության հուշակավոր ու նրբակիրթ զավակներին՝ հայրենիքի պարծանքը, գիտնականներին ու արվեստի մարդկանց՝ թագավորի պարծանքը: Ճոխ առնակատարություններն ու զվարճալից զբոսանքները վերսկսվեցին. կայսրը սիրալիր ժպիտներ էր շռայլում, բայց հագու խորքում սարսուռն էր և անդադար կշտամբում ինքն իրեն շմրտածված քայլի համար: Երբեմն, ցանկանալով համոզվել, թե ինքն ազատ է իրոք, Կարլոս V-ը լուսարային գուրս էր դալիս ամբողջից, սրտեղ գիշերել էր, և ուրախությամբ համոզվում, որ ելի հաշվելու շիններ պաշտոնական ծիսակատարությունները, ինքն անսահման ազատություն է վայելում: Եվ, այնուամենայնիվ, ի՞նչ իմանաս, հեռվից շնհ հեռուում իրեն: Երբեմն, ի մեծ գժգոհություն Ֆրանցիսկ I-ի, կայսրն անսպասելիորեն փոխում էր նախապես նշված ուղին ու դրանով փշացնում հատկապես նախապատրաստված մեծարումը:

Փարիզ հասնելուց երկու օր առաջ Կարլոս V-ը հանկարծ սարսափով մտաբերեց, թե ժամանակին ինչ դարձավ Մագրիզը Ֆրանսիական թագավորի համար: Չէ՞ որ մայրաքաղաքն ումենապատվաբեր և ամենահուսալի բանտն է կայսեր համար: Այդ մտածելով, Կարլոս V-ը ձին կանգնեցրեց ու խնդրեց անմիջապես տանել իրեն Ֆոնտենբլո, որի մասին ինքը հեքիաթային բաներ է լսել: Ֆրանցիսկ I-ը այնքան հյուրընկալ էր, որ շէր կարող սրկէ բանով իր սրտնեղությունն արտահայտել, և շնայած նրա բոլոր ծրագրերը խախտվում էին, շտապեց Ֆոնտենբլո ուղարկել թագուհուն և պաշտական տիկնանց:

Կարլոս V-ին մի քիչ քաջալերում էր միայն քրոջ՝ էլեոնորայի, ներկայութիւնը և այն վստահութիւնը, որը վերջինս տածում էր իր ուղղամիտ ամուսնու նկատմամբ. բայց, նույնիսկ ժամանակավորապես խաղաղվելով, նա իրեն անհարմարավետ էր զգում Ֆրանցիսկ I-ի արքունիքում: Բանն այն է, որ թագավոր Ֆրանցիսկ I-ը՝ անցյալի հայելին էր, իսկ Կարլոս V-ը՝ ապագայի նախակերպարը: Ժամանակակից միապետը չէր հասկանում միջնադարյան հերոսի զգացմունքները. համակրանքի մասին խոսք լինել չէր կարող ասպետականութեան վերջին ներկայացուցչի և ծնունդ առնող դիվանագիտութեան առաջին ներկայացուցչի միջև:

Ճիշտ է, Լյուդովիկոս XI-ը, որոշ վերապահութեամբ, իրավունք ուներ դիվանագետ կոչվելու, բայց մենք հակված ենք կարծելու, որ այդ թագավորն ավելի շուտ անկշտում կատակող էր, քան խորամանկ դիվանագետ:

Կայսեր ժամանման օրը Ֆոնտենբլոյի անտառում որս կազմակերպվեց՝ Ֆրանցիսկ I-ի սիրած զվարճութիւնը: Կարլոս V-ին որսը հոգնեցնում էր. այնուամենայնիվ, նա կառչեց այդ նոր հնարավորութիւնից ստուգելու համար, թե ինքն աղա՞տ է արդյոք: Որսի թեժ պահին նա կտրվեց բլրից և արշավում էր այնքան ժամանակ, մինչև հայտնվեց անտառի խորքում՝ մենմենակ, և իրեն աղատ զգաց ինչպէս քամին դաշտում, թռչնակը՝ երկնքում: Նա համարյա խաղաղվեց ու կրկին լավ տրամադրութեան մեջ ընկավ: Սակայն, այնուամենայնիվ, Կարլոսը մի անգամ ևս անհանգրստութիւն զգաց. հավաքատեղին մոտենալով, նա տեսավ որսից բորբոքված Ֆրանցիսկ I-ին, որն ընդառաջ էր շտապում նրան՝ արնաթաթախ նիզակը ձեռքին: Նույնիսկ թագավորական զվարճութիւնների ժամանակ զգացվում էր, որ նա Մարինյանոյի և Պավիայի հաղթանակողն է:

— Բավական է, սիրելի եղբայրս, զվարճացեք, — բացականչեց թագավորը, երբ սլալատի մոտ երկու միապետը ցած իջան ձիերից, և բարեկամաբար բռնեց Կարլոսի ձեռքը, որպեսզի ցույց տա նրան Դիանայի սրահը, որը փայլում էր Ռոսսոյի ու Պրիմատիչոյի սքանչելի որմնանկարներով:—

Տե՛ր աստված, դուք կարծես մտահոգ եք ոչ պակաս, քան ես՝ Մադրիդում: Բայց համաձայնեք, թանկագին եղբայրս, ես ծանրակշիռ պատճառներ ունեի դրա համար: Չէ՞ որ ես ձեր գերին էի: Իսկ դուք իմ հյուրն եք. դուք ազատ եք, շրջտպատված մեծարանքով և ձեզ սպասում է հաջողութուն: Դե՛, ուրախացեք մեզ հետ, եթե ոչ այս զվարճություններով, որոնք շափազանց աննշան են ձեզ նման փայլուն քաղաքագետի համար, ապա գոնե Ֆլանդրիայի հաստափոր գարեջրագործներին մի լավ խրատելու նոր հնարավորությամբ. չէ՞ որ այդ մարդիկ մտադրվել են վերականգնել իրենց կոմունաները... Իսկ ավելի լավ կլինի ժամանակավորապես մոռանաք խոռվարարների մասին ու հանձնվեք ընդհանուր յուրախությունը: Բայց գուցե մեր արքունիքը ձեր սրտով չէ՞:

— Ձեր արքունիքը սքանչելի է,— պատասխանեց Կարլոս V-ը,— ես նախանձում եմ ձեզ, եղբայրս: Դուք եղել եք իմ արքունիքում և դիտեք, թե ինչքան խստաշունչ է այն ու մռայլ. պետական այրերի ու գեներալների ախուր ժողովածու՝ Լաննուա՝, Պեսկեր, Անտոնիո դե Լեյրա. իսկ դուք ուղմիկներից ու վաճառականներից բացի, Մոնմորանսիից և Դյուրելլեից² բացի, ունեք գիտնականներ՝ Բյուդե³, Դյուշատել⁴, Լասկարի⁵, մեծ բանաստեղծներ ու նկարիչներ՝ Մարո

¹ Լաննուա Շարլ (1487—1527)— իսպանական բանակի գործադետ. եղել է նեապոլի փոխարքան: Պավիայի ճակատամարտում նա շախչախեց ֆրանսիացիներին ու գերեց Ցրանցիակ I-ին:

² Դյուբլյե Գիլյոմ (1491—1553)— Ցրանցիակ I-ի լավագույն զորապետներից մեկը և հմուտ դիվանագետ:

³ Բյուդե Գիլյոմ (1468—1540)— գիտնական-հումանիստ, հունարեն լեզվի գիտակ, որը մի շարք պաշտաններ է գրավել Ցրանցիակ I-ի արքունիքում. եղել է թագավորական գրադարանի վարիչ, պայքարել է եկեղեցու դեմ, նրա ջանքերով է բացվել ֆրանսիական կոլեջը:

⁴ Դյուշատել Պյեր (1480—1552)— Ցրանցիակ I-ի պալատական ընթերցողը, որը հռչակված էր իր գիտունությամբ: Տասնվեց տարեկան հասակում նա արդեն քաջ տիրապետում էր լատիներենին ու հունարենին: Ցրանսիական կոլեջի կազմակերպիչներից մեկը:

⁵ Լասկարի Ժան (մահացել է 1535 թ.)— ազգությամբ հույն, գիտնական-հելլենիստ. ապրել է դուքս Մեդիլիների արքունիքում, Ֆլորենցիայում, իսկ 1494 թվից՝ Ցրանսիայում: Բյուդեի հետ միասին կարգավորեց Ցրանցիակ I-ի գրադարանը:

Ժան Գուժոն¹, Պրիմատիշո, Բենվենուտո Չելլինի և զլխավորը՝ ձեր արքունիքը զարդարում են սքանչելի կանայք՝ Դիանա դե Պուատյե, Մարգարիտա Նավարացի, Եկատերինա Մեդիչի և շատ ուրիշներ։ Հիրավի, Եղբայրս, ես սկսում եմ մտածել, որ հաճույքով կփոխեի ոսկու հանքերս ձեր ծաղկազարդ դաշտերի հետ։

— Օ՛, դուք դեռ չեք տեսել մեր սքանչելագույն ծաղիկը,— միամտորեն բացականչեց Ֆրանցիսկը, մոռանալով, որ խոսում է էլենորայի եղբոր հետ։

— Իսկուպե՞ս։ Այրվում եմ անհամբերությունից՝ բուսե առաջ զմայլվելու այդ ադամանդով,— արձագանքեց կայսրը, հասկանալով, որ Ֆրանցիսկ I-ը ակնարկում է տիկին դ'էտամպին։— Բայց նախապես կարող եմ ասել, որ իրավացի են մարդիկ, որոնք հավաստիացնում են, թե աշխարհի լավագույն թագավորությունը ձեզ է պատկանում։

— Իսկ ձեզ՝ աշխարհի լավագույն կոմսությունը՝ Ֆլանդրիան և լավագույն դքսությունը՝ Միլանի դքսությունը։

— Այդ գանձերից առաջինը դուք ինքներդ մերժեցիք մի ամիս առաջ,— ժպտալով առարկեց կայսրը,— և ես խորապես երախտապարտ եմ ձեզ դրա համար. իսկ երկրորդը շատ եք ցանկանում ստանալ, այնպես չէ՞,— հառաչելով հարցրեց նա։

— Այսօր շխոտենք լուրջ հարցերի մասին, սիրելի եղբայրս,— աղերսեց Ֆրանցիսկ I-ը։— Արդարև, չեմ սիրում մթազնել խրախճանքներն ու ռազմախաղերը։

— Ճիշտն ասած...— շարունակեց Կարլոս V-ը ժլատ մարդու ժամածուրթյամբ, որը գիտակցում է իր պարտքը վճարելու անհրաժեշտությունը,— ճիշտն ասած, Միլանի դքսությունն ինձ համար անսահմանորեն թանկ է և պարզապես սրտիցս արյուն է կաթում, երբ մտածում եմ, որ ստիպված եմ լինելու ձեզ հանձնել այն։

— Ավելի լավ է ասեք վերադարձնել, եղբայրս, դա շատ ավելի ճիշտ կլինի ու թերևս արդարացի արարքը մի քիչ

¹ Գուժոն Ժան (1510—1566)— Վերածննդի շրջանի ֆրանսիական սկանավոր արձանագործ

կփարատի ձեր ախրութիւնը: Եվ, բացի այդ, հիմա Միլանի մասին մտածելու ժամանակը չէ: Եկեք ուրախանանք, իսկ գործերի մասին կխոսենք հետո:

— Նվիրել, թե վերադարձնել՝ նույն բանն է,— առարկեց կայսրը:— Գլխավորը, եղբայրս, այն է, որ դուք կտիրանաք աշխարհի լավագույն դքսութեանը: Բայց դա որոշված է, և հավատացեք, ես պարտավորութիւններս կատարում եմ նույնքան սրբորեն, որքան և դուք:

— Օ՛, տեր աստված,— բացականչեց Ֆրանցիսկը, որին սկսում էր համբերութիւնից հանել այդ անվերջանալի խոսակցութիւնը:— Եվ ամսոսելու ի՞նչ ունեք, սիրելի եղբայրս: Դուք Իսպանիայի թագավորն եք, Գերմանիայի կայսրը, Ֆլանդրիայի կոմսը, դուք ուժով կամ ազդեցութեամբ հպատակեցրել եք ամբողջ Իտալիան՝ Ալպերից մինչև Կալաբրիա:

— Բայց ձեզ է պատկանում ամբողջ Ֆրանսիան,— հառաչեց Կարլոսը:

— Իսկ դուք տիրում եք Հնդկաստանին ու նրա բոլոր գանձերին: Ձերն է Պերուն՝ իր հանրերով:

— Բայց ձեզ է պատկանում Ֆրանսիան:

— Ձեր կայսրութիւնն այնքան ընդարձակ է, որ արևն այնտեղ երբեք մայր չի մտնում:

— Բայց Ֆրանսիան, այնուամենայնիւ, ձերն է... Եվ ինչ կասեր ձերդ մեծութիւնը, եթե ես նույնպիսի կրքոտութեամբ երազեի թագավորութիւնների մեջ լավագույն այդ մարգարտի մասին, ինչպես դուք՝ Միլանի դքսութեան:

— Լսեք, եղբայրս,— խստորեն արտասանեց Ֆրանցիսկ I-ը,— բոլոր կարևորագույն գործերում ես ղեկավարվում եմ ավելի շուտ զգացմունքներով, քան՝ բանականութեամբ. բայց, ինչպես ասում են ձեզ մոտ՝ Իսպանիայում. «Թագուհու անձնավորութիւնն անձեռնմխելի է», այդպես էլ ես կասեմ ձեզ. «Ֆրանսիայի հողն անձեռնմխելի է»:

— Տե՛ր աստված: Չէ՞ որ մենք եղբայրներ ենք, դաշնակիցներ,— բացականչեց Կարլոս V-ը:

— Անշուշտ,— արձագանքեց Ֆրանցիսկ I-ը,— և հուսով

եմ, որ այսուհետև ոչ մի բան չի խախտի մեր բարեկամությունն ու դաշինքը:

— Ես էլ եմ հուսով,— ասաց կայսրը:— Բայց կարե՞նք է արդյոք երաշխավորել ապագայի համար,— շարունակեց նա, իրեն հաստակ ամբարտավան ժպիտով ու ոչ անկեղծ հայացքով:— Կարո՞ղ եմ արդյոք կանխել որդուս՝ Ֆիլիպի գժտությունը ձեր Հենրիխի հետ:

— Դե՛հ, եթե Օգոստոս կայսեր հաջորդի Տիրեբրիոսը¹, այդ գժտությունը մեզ համար վտանգավոր չի լինի:

— Կարևորը կառավարողը չէ,— բորբոքվելով շարունակեց Կարլոս V-ը:— Կայսրությունը միշտ կմնա կայսրություն. մեծ կեսարների Հոռմը միշտ եղել է Հոռմ, նույնիսկ այն ժամանակ, երբ կեսարների ամբողջ մեծությունը պարփակվում էր միայն նրանց անվան մեջ:

— Ծիշտ է: Սակայն Կարլոս V-ի կայսրությունն ամենին չի կարող համեմատվել Օկտավիանոսի կայսրության հետ, սիրելի եղբայրս,— խորապես խոցված առուրկեց Ֆրանցիսկ I-ը:— Իսկ Պավիայի ճակատամարտը թեև հոյակապ էր, սակայն չի հասնի Ակցիումի² ճակատամարտին: Բացի այդ, Օկտավիանոսը հարուստ էր, իսկ դուք, ասում են, չնայած Հնդկաստանի բոլոր գանձերին ու Պերուի հանրերին, այնքան էլ ունևոր չեք. ոչ մի դրամատուն այլևս չի լցանկանում պարտք տալ ձեզ ոչ ստաներեք, ոչ էլ տասնչորս սովոսի հաշվով: Ձեր զորքերը վարձ չեն ստանում և զին-

¹ Օկտավիանոսը 30 թ. (մ. թ. ա.), վերջնափոխապես չախաբախելով Հին Հոռմի արիստոկրատական-հանրապետական հիմնարկությունները, պետության գլուխ կանգնեց և Օգոստոս անվան տակ («Աստվածային») փաստորեն դարձավ հռոմեական առաջին կայսրը: Եթե Օգոստոսը պետական մեծ գործիչ էր, ապա նրա ժառանգորդը՝ Օգոստոսի խորթ զավակ Տիրեբրիոսը (կառավարել է 37—14 թիվը մ. թ. ա.), իշխանությունն օգտագործեց միայն անձնական նպատակներով: Նա աչքի էր ընկնում ժայրահեղ կասկածամտությամբ ու դաժանությամբ և ժողովրդի ատելությունը հրահրեց իր դեմ: Խոսելով Տիրեբրիոսի մասին, Ֆրանցիսկ I-ը ակնարկում է Կարլոս V-ի ժառանգին, ապագա թագավոր Ֆիլիպ II-ին:

² Ակցիումի ճակատամարտ (31 թ. մ. թ. ա.)— ծովային վճռական ճակատամարտ, որտեղ Օկտավիանոսը չախաբախեց իր հակառակորդ Անտոնիոսին, որին սատարում էր Եգիպտոսի թագուհի Կլեոպատրան:

վորները, մի կերպ կերակրվելու համար, ստիպված էին թա-
լանել Հոռմը, իսկ հիմա, երբ այն կողոպտված է ու այլևս
տանելու ոչինչ չկա, նրանք ապստամբում են:

— Իսկ դուք, սիրելի եղբայրս,— բացականչեց Կարլոս
V-ը,— կարծեմ վաճառել եք թագավորական հողերը և ամեն
կերպ սիրաշահում եք Լյութերին¹, գերմանական իշխաննե-
րից փող ստանալու համար:

— Եվ, բացի այդ,— շարունակեց Ֆրանցիսկ I-ը,— ձեր
կորտեսներն այնքան էլ գիշող չեն, որքան սենատը: Իսկ ես
կարող եմ պարծենալ, որ ընդմիշտ անկախ եմ դարձրել թա-
գավորներին:

— Զգուշացե՛ք, որ մի գեղեցիկ օր ձեր գովերգած պառ-
լամենտը խնամակալություն շահմանի ձեզ վրա,— հակա-
հարված տվեց Կարլոս V-ը:

Զրուցակիցները գնալով բորբոքվում էին. վեճն ավելի ու
ավելի անողոք էր դառնում. գլուխ էր բարձրացնում հին
թշնամությունը: Ֆրանցիսկ I-ը քիչ մնաց մոռանա հյուրըն-
կալության մասին, իսկ Կարլոս V-ը՝ ողջամտության, Ֆրան-
սիական թագավորն առաջինը ուշքի եկավ:

— Երդվում եմ պատվովս, սիրելի եղբայր,— ծիծաղե-
լով բացականչեց նա,— ևս մի քիչ, ու մենք կգժտվենք: Զէ՞
որ ես ձեզ զգուշացրի, որ շարժե խոսել կարևոր գործերի
մասին. թողնենք այդ ամենը մեր մինիստրներին և պարզա-
պես բարեկամներ լինենք: Պայմանավորվենք մեկընդ-
միշտ, որ դուք կարող եք ձերը համարել ամբողջ աշխարհը,
բացառությամբ՝ Ֆրանսիայի, և այլևս այդ հարցին չվերա-
դառնանք:

— Բացառությամբ նաև Միլանի դքսության, եղբայրս,—
ավելացրեց Կարլոսը, իր սխալը հասկանալով և շտապելով
ուղղել այն,— քանզի Միլանի դքսությունը ձերն է. ես ձեզ
խոստացել եմ այն և հաստատում եմ խոստումս:

Բայց հաճոյախոսությունների այդ փոխանակումն ան-
սպասելիորեն ընդհատվեց. բացվեց դուռը, և սրահ մտավ

¹ Լյութեր Մարտին (1483—1546)— գերմանական կրոնավոր ու աստ-
վածաբան, Կաթոլիկական եկեղեցուն թշնամի բողոքականության շարժման
հիմնադիրը:

դքսուհի դ'էտամար: Թագավորն ընդառաջ շտամից ու նրա ձեռքից բռնած մոտեցրեց իր թագակիր հղբորը:

Կայսրն առաջին անգամ էր տեսնում Ֆավորիտուհուն և, տեղյակ լինելով դքսուհու խոսակցութեանը պարոն դե Մեդինայի հետ, զննողաբար նայում էր նրան:

— Տեսնո՞ւմ եք այս սքանչելի տիկնոջը, եղբայրս, — հարցրեց Ֆրանցիսկը:

— Ոչ միայն տեսնում եմ, այլև զմայլվում եմ նրանով:

— Սքանչելի է: Իսկ գիտե՞ք, թե նա ինչ է ուզում ձեզնից:

— Գուցե իսպանական նահանգներիցս մե՞կը: Հաճույքով կտամ:

— Ոչ, ոչ, չկոհեցիք, եղբայրս:

— Ուրեմն ի՞նչ է նրա ցանկացածը:

— Նա կամենում է, որ ես ձեզ պահեմ Փարիզում այնքան ժամանակ, մինչև դուք պատուեք Մադրիդյան պալատնազիրը և փաստաթղթով հաստատեք քիչ առաջ տված խոստումը:

— Ի՞նչ արած, պետք է լսել բարի խորհուրդները, — պատասխանեց Կարլոս V-ը, խոնարհ դուլխ տալով դքսուհուն, ոչ այնքան քաղաքավարութունից զրոյված, որքան թագավորի բառերի հետևանքով հանկարծակիորեն զուենաւոված իր գեմքը ծածկելու համար:

Նա շատցրեց ոչինչ ավելացնել, երբ դուռը կրկին բացվեց, և սրահ խուժեց պալատականների բազմութունը: Ֆրանցիսկ I-ը այդպես էլ շնկատեց, որ կայսրը, սովորութեան համաձայն, իր կատակը լուրջ է ընդունել:

Խնջույքից առաջ սրահում հավաքված նրբակիրթ, սրամիտ ու ցոփ պալատականների աղմկայից հասարակութունը հիշեցնում էր վերը նկարագրված տեսարանը Լուվրում: Նույն կավալերներն ու դամաները, նույն ազնվականներն ու մանկավիհիները: Այստեղ էլ հանդիպում էին սիրահարների քնքուշ նայվածքներ ու թշնամիների ատելութեամբ լի հայացքներ. լսվում էին նույն շողոքորթ բառերն ու կատակները:

Կարլոս V-ը, նկատելով ներս մտնող կոնետաբլ դե Մոն-մորանսիին, որին իրավամբ իր դաշնակիցն էր համարում, բնդառաջ դնաց նրան և մի կողմ տանելով, աշխույժ խոսակցութեան բռնվեց նրա հետ իր դեսպանի՝ դուքս դե Մեդինայի մասնակցութեամբ:

— Ես կստորագրեմ ինչ կամենաք, կոնետաբլ,— ասաց կաչարը, իմանալով տարեց ռազմիկի ազնվութիւնը:— Արձանագրութիւն պատրաստեք Միլանի դքսութիւնը Ֆրանսիային հանձնելու մասին և, երդվում եմ սուրբ Հակոբի անունով, ես առանց այլևայլութեան ամբողջութեամբ կզիջեմ ձեզ, թեև դա իմ թագի լավագույն ծաղիկն է:

— Արձանագրութիւն,— բացականչեց կոնետաբլը ձեռքի գաչրալից շարժումով, ասես կամենալով ջնջել անվստահութեան նմանվող այդ նախազգուշական միջոցի միտքն անգամ:— Մի՞թե, սիր, դուք պետք է արձանագրութիւններ ստորագրեք: Ինչե՞ր եք ասում, ձերդ մեծութիւն: Ոչ մի արձանագրութիւն պետք չէ, սիր, ոչ մի փաստաթուղթ: Ձեր խոսքը բավական է: Մի՞թե ձերդ մեծութիւնը Ֆրանսիա է եկել նախապես որևէ ապահովագիր ստանալով: Եվ մի՞թե բարեհաճում եք մտածել, որ մենք ավելի քիչ ենք վստահում ձեր խոսքին, քան դուք՝ մեր:

— Իրավացի եք, պարոն դե Մոնմորանսի,— պատասխանեց կաչարը, ձեռքը կոնետաբլին մեկնելով,— իրավացի եք:

Կոնետաբլը դնաց:

— Անխե՛լք թշվառական,— բացականչեց Կարլոս V-ը:— Գլտե՞ք, Մեդինա, նա զբաղվում է քաղաքականութեամբ կուրորեն, խլուրդի նման:

— Իսկ թագավո՞րը, սիր,— հարցրեց Մեդինան:

— Օ՛, նա այնքան է պարծենում իր մեծահոգութեամբ, որ կասկածի տակ չի առնի մեր ազնվութիւնը: Նա անմտորեն բաց կթողնի մեզ, իսկ մենք ողջամտորեն կստիպենք նրան սպասել: Սպասեցնելը դեռ չի նշանակում խախտել տված խոսքը, պարոն,— շարունակեց Կարլոս V-ը,— այլ պարզապես ժամանակին չկատարել խոստումը և ուրիշ ոչինչ:

— Իսկ տիկին գ'էտամայր,— կրկին հարցրեց Մեգինան:

— Գե՛հ, նրա հետ մենք լեզու կգտնենք,— պատասխանեց կայսրը, մատի վրա խաղացնելով անգին ադամանդով սրանչելի մատանին, որը կրում էր ձախ ձեռքի բուժ մատին:— Այո, ես պետք է զրուցեմ նրա հետ առանց վկաների:

Մինչդեռ կայսրը և նրա գեսպանը կիսաձայն փոխանակում էին այս գիտողությունները, դքսուհի գ'էտամայր մեսսեր գ'էստուրվիլի ներկայութեամբ շարաշար ծաղրում էր պարոն դե Մարմանին, նրա գիշերային անհաշող արկածի համար:

— Գուցե Բենվենուտոն այդ զվարճալի պատմությունը ձեր մարդկանց մասին է պատմում բոլորին ու ամենուրեք, պարոն դե Մարման: Պարզվում է, որ նրա վրա հարձակվել են շորս ավազակ, և նա, պաշտպանվելով մի ձեռքով միայն, ստիպել է նրանց ուղեկցել իրեն մինչև տուն: Գուցե այդ բարեկիրթ ռազմիկներից մեկը գո՞ւք եք եղել, վիկոնտ:

— Տիկին,— վերջնականապես շփոթված, պատասխանեց տարաբախտ Մարմանը,— այդ ամենը մի քիչ այլ կերպ է եղել, և անարգ Բենվենուտոն պարզապես գլուխ է գովում:

— Այո՛, այո՛, ես չեմ կասկածում, որ նա որոշ բան հորինել է ու ծաղկեցրել, բայց չէ որ, ըստ էութեան, դա ճշմարտություն է, վիկոնտ, գո՞ւտ ճշմարտություն: Իսկ այդպիսի գործի մեջ գլխավորը էությունն է:

— Տիկին,— առարկեց Մարմանը,— դա էժան չի նստի նրան: Ես վրեժ կլուծեմ: Եվ հուսով եմ, որ այս անգամ բախտը կժպտա ինձ:

— Սպասեցե՛ք, սպասեցե՛ք, վիկոնտ: Ի՞նչ վրիժառության մասին է խոսքը: Իմ կարծիքով դուք պետք է նոր ճակատամարտ սկսեք. եթե չեմ սխալվում, առաջին երկուսը Չելլինին շահել է:

Մ. տիկին, պատճառն այն է, որ ես ներկա չեմ եղել. մըմնչաց Մարմանը, ավելի ու ավելի շփոթվելով:— Արիկա վարձկաններն օգտվել են իմ բացակայությունից ու փախել են:

Իսկ ես խորհուրդ կտամ, Մարման, պարտված ճանաչել ձեզ ու գլուխ չդնել Չելլինիի հետ,— խոսակցությունը

խառնվեց պրևոնս:— Չելլինին միշտ ձախորդության է մատնում ձեզ:

— Դե՛հ, ձախորդության հարցում, հարգելի պրևո, դուք ինձ չեք զիջում,— նենգաբար պատասխանեց Մարմանը:— Եթե հավատալու լինենք որոշ լուրերի (ի դեպ դրանք հաստատվում են այնպիսի անվիճելի փաստերով, ինչպես Նելի Մեծ ամրոցի գրավումը և այդ ամրոցի բնակչուհիներից մեկի անհետացումը), ապա ձեզ էլ, թանկագին մեսսեր դ'էստուրվիլ, Չելլինին ձախորդության է մատնում: Թեև ասում են, որ շատ էլ շատածելով ձեր բարօրության մասին, նա հոգ է տանում ձեր ընտանիքի երջանկության համար:

— Պարոն դե Մարման,— բացականչեց պրևոն, սաստիկ զայրացած այն բանից, որ իր ընտանեկան անախորժություններն ասեկոսեի առարկա են դարձել,— հետո դուք ինձ բացատրություն կտաք այդ բռնների համար:

— Ա՛խ, պարոնա՛յք, պարոնա՛յք,— բացականչեց դրբասուհին:— Խնդրում եմ շնորհակալ լինեմ ներկայության մասին: Երկուսդ էլ իրավացի չեք: Եթե մարդ չի կարողանում փրկարել, պարոն պրևո, նա ուրիշին էլ պետք է չկշտամբի չպտեհելու համար... Հարկավոր է միանալ ընդդեմ ընդհանուր թրջանամու, ոչ թե ուրախացնել նրան պարտվածների երևույթով, որոնք ջանում են միմյանց կոկորդ կրծել, պարոն դե Մարման: Բայց բոլորն արդեն սեղան են նստում: Ձեր ձեռքը, վիկոնտ: Ինչ արած, եթե ուժեղ տղամարդիկ տեղի են տալիս Չելլինիի առաջ, տեսնենք թույլ կանայք իրենց հատուկ խորամանկությամբ ավելի հաջողակ չե՞ն լինի: Ես դաշնակիցներին միշտ համարել եմ ավելորդ բեռ և դերադասել եմ մենակ պայքարելու: Դա, իհարկե, ավելի վտանգավոր է, սակայն հաղթանակի պատիվն էլ ոչ մեկի հետ չես կիսում...

— Ա՛յ թե անպատկառն է այդ Բենվենուտոն,— ընդմիջեց դրբասուհուն վիկոնտ դե Մարմանը:— Տեսեք ինչքան անպարկեշտ է պահում իրեն մեր թագավորի հետ: Հիրավի, կարելի է կարծել, թե այդ մարդն արիստոկրատ է, իսկ իրականում նա ընդամենը մի ողորմելի գրվազիչ է:

— Ի՛նչ եք ասում, ի՛նչ եք ասում, վիկոնտ, Չելլինին

իսկական արիստոկրատ է,— ծիծաղելով բացականչեց զրբ-
սուհին:— Մի՞թե մեր հին ազնվական ընտանիքների մեջ
դուք շատ կգտնեք այնպիսիք, որոնք սերելիս լինեն Հուլիոս
Կեսարի փոխանորդից: Դա նույնքան հազվադեպ է, որքան
երեք սպիտակ շուշանով և Անժուի թագավորական տան՝
դրոշմակապով գինանշան ունենալը: Դուք կարծում եք, պա-
րոնայք, որ այդ դրվագչի հետ զրուցելով թագավորը պա-
տի՞վ է անում նրան: Սխալվում եք: Ընդհակառակը, դրվա-
գիչն է պատիվ անում Ֆրանցիսկ առաջինին, պատասխանե-
լով նրան:

Եվ իրոք, Բենվենուտոն խոսում էր թագավորի հետ այն-
պես անկաշկանդ, ինչպես աշխարհիս զորավորները վար-
ժեցրել էին արվեստագետին՝ աստվածների ընտրյալին:

— Դե՛հ, ինչպե՞ս է առաջ գնում Յուպիտերի գործը,
Բենվենուտո,— հարցրեց թագավորը:

— Պատրաստվում եմ ձուլել, սիր:

— Եվ ե՞րբ է տեղի ունենալու այդ իրադարձությունը:

— Հենց որ վերադառնամ Փարիզ, սիր:

— Վերցրեք մեր լավագույն ձուլողներին, Չելլինի, և
ոչինչ չխնայեք ձուլման հաջողության համար: Եթե փող պետք
լինի, դիտեք, որ չեմ խնայի:

— Գիտեմ, ձեր գ մեծություն, որ ամենաառատաձեռն,
ամենամեծ ու ազնիվ թագավորն եք աշխարհում,— պա-
տասխանեց Բենվենուտոն,— և ձեր նշանակած աշխատա-
վարձի շնորհիվ ես հիմա հարուստ եմ: Ինչ վերաբերում է
ձուլմանը, որի համար բարեհաճում եք անհանգստանալ,
սիր, ապա ձեր թույլտվությամբ կկամենայի ամեն ինչ ինքս
անել: Անկեղծ ասած, ես այնքան էլ չեմ վստահում Ֆրան-
սիական ձուլողներին: Իհարկե, նրանք ընդունակ մարդիկ
են, բայց պարզապես վախենում եմ, որ հանկարծ ի սեր
հույսը խլի, նրանց խելքին փչի աղավաղել օտարերկրացի
նկարչի աշխատանքը: Խոստովանում եմ, սիր, ինձ համար
չափազանց կարևոր է հաջողության հասնել Յուպիտերի

— Ահ, ե՛հ սպիտակ շուշան— գինանշանն էր Վալուաների գինաստիայի,
որին պատկանում էր Ֆրանցիսկ I-ը, իսկ հետագայում՝ Բուրբոնների գի-
նաստիայի գինանշանը: Անժու կոմսությունը XIII դ. պատկանում էր Վա-
լուաներին:

սովարտման գործում, և ես չեմ կարող կողմնակի մարդկանց վստահել արձանի ձուլումը:

— Բրավո՛, Չելլինի,— բացականչեց թագավորը:— Դուք խոսում եք ինչպես կատարյալ արվեստագետ:

— Եվ, բացի այդ, ես ուզում եմ արժանանալ ձերդ մեծության խոստացած պարգևին:

— Շատ ճիշտ է, իմ հավատարիմ Բենվենուտո: Մենք չենք մոռացել մեր խոստումը և, եթե աշխատանքը դժհացնի մեզ, առատաձեռն կպարգևատրենք: Մի անգամ ևս կրկնում ենք վկաների ներկայությամբ՝ կոնետարլի ու կանցլերի: Եվ մեր մոռացկոտության դեպքում նրանք կհիշեցնեն մեզ խոստման մասին: Այնպես չէ՞, Մոնմորանսի... Այնպես չէ՞, Պուայե:

— Օ՛, ձերդ մեծություն, ձեզ համար դժվար է պատկերացնել, թե այդ խոստումն ինչքան կարևոր է ինձ համար հատկապես հիմա:

— Մրանչելի է: Եվ մենք անպայման կկատարենք այն, պարոն... Բայց սրահի դռներն արդեն բաց են: Սեղան նըստենք, պարոնայք, սեղան նստենք:

Մտանալով կայսերին ու թեանցուկ անելով, Ֆրանցիսկ I-ը նրա հետ միասին գլխավորեց պատվարժան հյուրերի, Լրկար շարանը: Երկու թագավորները միաժամանակ ներս մտան լայն բացված երկփեղկ դռնից ու սեղան նստեցին դիմդիմաց. Կարլոս V-ը՝ էլեոնորայի և տիկին դ'էտամպի միջև, Ֆրանցիսկ I-ը՝ Եկատերինա Մեդիչիի և Մարգարիտա Նավարացու միջև:

Ուտելիքներն ու դինինները սքանչելի էին, սեղանի շուրջը տիրում էր անրոնագրոսիկ ուրախություն: Ֆրանցիսկ I-ը խնջույքների, սոնակատարությունների, խրախճանքների, ժամանակ իրեն զգում էր ինչպես ձուկը ջրում. նա զվարճանում էր իսկական թագավորի նման ու ծիծաղում ոամիկի պես Մարգարիտա Նավաբացու պատմությունների և կատակների վրա: Կարլոս V-ը, իր հերթին, հաճոյախոսություններ էր շոռայում իր կողքին նստած տիկին դ'էտամպին: Հյուրերը զրուցում էին արվեստի ու քաղաքականության մասին: Հացկերույթը մոտենում էր ավարտին:

Անուշեղենը մատուցելիս մանկավիհները, ըստ սովորու-
թյան, սկսեցին ջրով լի թասեր ներս բերել՝ ձեռքերը լվանա-
լու համար: Տիկին դ'էտամպը մանկավիհի ձեռքից վերցրեց
Կարլոս V-ի համար բերված ոսկե սափորը, թասի մեջ ջուր
լցրեց և, իսպանական արքունիքի վարվելակարգի համա-
ձայն ծունկի գալով, թասը մեկնեց կայսեր: Նույն բանը
արեց Մարգարիտա Նավարացին Ֆրանցիսկ I-ի համար:
Կարլոս V-ը մատների ծայրերն ընկղմեց ջրի մեջ ու հա-
յացքը շիտրելով իր անվանի ու գեղեցիկ սպասուհուց, ժրպ-
տալով, թասի մեջ գցեց թանկարժեք մատանին, որի մասին
արգեն նշել ենք վերը:

— Ձերդ մեծություն, մատանին գցեցիք,— ասաց դքսու-
հին և իր մանրիկ, սքանչելի մատներով հանեց մատանին ու
մեկնեց կայսեր:

— Տիկին, թող ձեզ մնա,— կամացուկ պատասխանեց
Կարլոսը:— Մատանին հիմա այնպիսի ազնիվ ու սքանչելի
ձեռքերում է, որ ես պարզապես չեմ կարող հետ վերցնել:—
Եվ կայսրն ավելի ցածրաձայն ավելացրեց.— Սա Միլանի
դքսության կանխավճարն է:

Դքսուհին լուռ ժպտաց. չէ՞ որ նրան բաժին էր ընկել մեկ
միլիոն արժողությամբ ադամանդ:

Երբ ճաշից հետո հյուրերը դնացին հյուրասենյակ, իսկ
այնտեղից՝ պարասրահ, տիկին դ'էտամպը կանգնեցրեց
պատահաբար իր կողքին հայտնված Չելլինին:

— Մեսսեր Չելլինի,— ասաց դքսուհին, նկարչին տալով
մատանին՝ Կարլոս կայսեր հետ ունեցած գաշինքի երաշխի-
րը.— բարի եղեք այս ադամանդը հանձնել ձեր աշակերտին՝
Ասկանիոյին. նա պետք է սրանից ցողի կաթիլ պատրաստի
ոսկե շաշանիս համար:

Արդարև, տիկին, հենց այս կաթիլն է ընկել Ավրորա-
յի՝ ձեռքից,— ծաղրական քմծիծաղով ու կեղծ քաղաքավա-
րությամբ պատասխանեց նկարիչը:

¹ Ավրուա (հոմ. դիցաբ.) — արշալույսի աստվածուհին

Բայց հանկարծ մատանուն նայելով, Բենվենուտոն ցրնցվեց ուրախալի հուզմունքից. նա ճանաչեց ազամանդն ու մատանին, որ մի ժամանակ ինքը պատրաստել էր Կլիմենտ VII պապի պատվերով: Դա նորին սրբազնագույնի ընծան էր մեծն կայսեր. այն ժամանակ Բենվենուտոն անձամբ տարավ մատանին Կարլոս V-ին:

Հիրավի, եթե կայսրը հարկ է համարել բաժանվել այսպիսի թանկարժեք մատանուց և տալ մի կնոջ, ուրեմն կարեւոր սլատճառներ է ունեցել դրա համար. որեւէ ծածուկ համաձայնություն, դազտնի գործարք տիկին դ'էտամպի հետ:

Քանի դեռ Կարլոս կայսրը ապրում էր Ֆոնտենբլոյում, օրեր շարունակ (իսկ գլխավորը՝ գիշերներ) անցկացնելով տազնապի, կասկածների մեջ, քանի դեռ նրա հոգում պայքարում են հույսն ու վախը, ինչպես պատկերված է վերը, քանի դեռ նա խորամանկում է, բանսարկություն անում, դավեր նյութում, խարդավանում, խոստումներ տալիս, հրաժարվում դրանցից և տեղն ու տեղը կրկին խոստանում. գնանք Նելի Մեծ ամրոցը, իմանալու, թե ուրիշ որեւէ բան չի՞ պատահել այնտեղի բնակիչներին:

ԳԼՈՒԽ ՅՈՒԵՐՈՐԳ

Մոսչ վանականի առաապելը

Նելի ամբողջ ամրոցը խուճապի մեջ էր. երեք-չորս օր առաջ այստեղ հայտնվել էր մոսչլ վանականի ուրվականը. նա մի ժամանակ այցելում էր մենաստանը, որի ավերակների վրա կառուցվել է Ամորի ամրոցը: Տիկին Պերինան սեփական աչքերով տեսել էր, թե նա ինչպես էր գիշերով թափառում Նելի Մեծ պուրակի ծառուղիներում, սպիտակ զգեստ հագած. ուրվականը շարժվում էր անաղմուկ, հետքեր չթողնելով ծառուղիների ավազի վրա:

Բայց տիկին Պերինան, որ ապրում էր Նելի Փոքր ամրոցում, ինչպե՞ս կարող էր տեսնել առավոտյան ժամը երե-

քին Մեծ ամբողջի պուրակում զբոսնող մուսլ վանականին: Այդ հարցին պատասխանելու համար մենք ստիպված ենք մատնել ուրիշի գաղտնիքը: Մակայն պատմիչի համար ճշմարտությունն ամեն ինչից թանկ է, և ընթերցողներն իրավունք ունեն իմանալու մեր պատկերած հերոսների կյանքի բոլոր մանրամասնությունները, մանավանդ, եթե այդ մանրամասնությունները կարող են լույս սփռել իրադարձությունների զարգացման վրա:

Կոլոմբայի անհայտանալուց, անգործ մնացած Պուլչերիի հեռանալուց և պրևոյի մեկնելուց հետո տիկին Պերինան դարձավ Նելի Փոքր ամբողջի լիիշխան տիրուհին, քանզի, ինչպես արդեն ասել ենք, խնայողության նկատառումներից ելնելով, այգեպան Ռեմբոն ու նրա օգնականները վարձված էին միայն օրահաշվով: Այդպիսով տիկին Պերինան ոչ միայն Փոքր ամբողջի լիիշխան տիրուհին էր, այլև՝ միակ բնակչուհին. օրերով նա տանջվում էր ձանձրությից, իսկ գիշերները՝ վախից:

Շուտով տիկին Պերինան, այնուամենայնիվ, սքանչելի դեղ գտավ ձանձրույթը փարատելու. նա մտերմացավ տիկին Ռուպերտայի հետ, և այդ բարեկամությունը նրա առաջ բացեց Նելի Մեծ ամբողջի դռները: Դուենյան թույլտվություն խնդրեց իր հարևանուհիներին այցելելու և, իհարկե, անմիջապես ստացավ այդ իրավունքը:

Իսկ հարևանուհիներին այցելելով, նա անշուշտ ծանոթացավ և հարևանների հետ: Տիկին Պերինան ոչ երիտասարդ, բայց դեռևս գրավիչ կին էր. շթոշնած, վայելչակազմ, մարմընեղ ու ժպտազեմ, որն աշխարհում ապրելով երեսունվեց տարի, հավատացնում էր, թե ընդամենը քսանինը տարեկան է: Բնական է, որ նրա հայտնվելը արհեստանոցում, որտեղ կռում, երեսակալում, սղոցում, հատում ու հղկում էին տասներկու զվարճասեր ենթավարպետ, որոնք սիրում էին կիրակի ու տոնական օրերը ուտել, խմել, ուրախանալ և միշտ պատրաստ էին սիրահետել կանանց, չէր կարող անկատելի մնալ: Եվ ահա երեք-չորս օր հետո մեր վաղեմի ծանոթներից երեքն արդեն խոցված էին Ամուրի նետով:

Նրանց անուններն էին՝

Ժան-Ճաստիկ,

Ջախլիկ-Սիմոն,

Գերմանացի Հերման,

Ասկանիոն, Ժակ Օբրին և Պապուսն անդրդվելի մնացին գեղուհու հմայքների հանդեպ այն պատճառով միայն, որ արդեն սիրահարված էին:

Մյուս աշակերտներն էլ, գուցե, նույնպես համակվեցին սիրո կրակով, բայց հասկանալով, որ իրենք փոխադարձության ոչ մի հույս ունենալ չեն կարող, հանգցրին այդ կրակը, շթողնելով, որ այն դառնա ամենակուլ հրդեհ:

Ժան-Ճաստիկը սիրահարվեց Քերուբինոյի նման, այսինքն՝ սիրահարված լինելու համար: Տիկին Պերինան, իհարկե, չափազանց ողջամիտ կին էր նման բարբաջանքին փոխադարձությամբ պատասխանելու համար:

Ջախլիկ-Սիմոնն ավելի լուրջ մարդ էր թվում, հետևաբար կարելի էր հույս գնել նրա սիրո վրա: Բայց տիկին Պերինան շատ սնտհավատ էր: Մի անգամ ականատես լինելով, թե ինչպես Սիմոնը խաշակնքում է դեմքը ձախ ձեռքով, նա մտածեց, որ ամուսնական պայմանագրության տակ էլ նա ստիպված կլինի ձախ ձեռքով ստորագրել:

Դուենյան հաստատ համոզված էր, որ ձախ ձեռքով խաշ հանելը ոչ միայն չի փրկում հոգին, այլ, ընդհակառակը, սատանայի բաժին է դարձնում և որ ձախ ձեռքով ստորագրած ամուսնական պայմանագիրը երջանկություն չի բերի ամուսիններին: Նրա համոզմունքը փոխել անհնար էր: Այդ սրտաճառով, երբ Սիմոնը փորձ կատարեց սիրահետել նրան, տիկին Պերինան այնպիսի վերաբերմունք ցույց տվեց, որ դժբախտ մարդն իսկույն կորցրեց ամեն մի հույս:

Մնում էր Հերմանը: Օ՛, Հերմանն ուրիշ էր: Հերմանը Ժան-Ճաստիկի նման կաթնակեր չէր և բնությունը չէր պատժել նրան, ինչպես Սիմոն-Ջախլիկին: Հերմանի ամբողջ կերպարանքը խոսում էր օրինավորության մասին, և դա անշուփ դուր էր գալիս տիկին Պերինային: Գլխավորն այն է, որ Հերմանի աջ ձեռքը ձախի տեղում չէր և ձախը՝ աջի, ինչ-

պես Սիմոնինը: Նա երկու ձեռքն էլ այնքան ճարպկորեն էր գործի դնում, որ թվում էր, թե երկուսն էլ աջ ձեռք են: Եվ, բացի այդ, բոլորի կարծիքով, Հերմանը պարզապես գեղեցիկ տղամարդ էր: Դրա համար տիկին Պերինան նրա վրա կենտրոնացրեց ուշադրությունը:

Բայց, ինչպես հայտնի է, Հերմանը երեխայի պես միամիտ էր: Այդ պատճառով Պերինայի առաջին գրոհները՝ կուկետ ծամածուծությունները, վարդակապ շրթունքները, կրակոտ հայացքները լիակատար անհաջողության մատնվեցին՝ դեմ առնելով ազնիվ գերմանացու բնածին երկչոտությունը: Նա նայում էր Պերինային հիացական հայացքով, բայց ավետարանի կույրերի նման՝ oculos habebat et non videbat¹, իսկ եթե նույնիսկ տեսնում էր հարգարժան դուենային, ապա չէր նկատում նրա խորամանկությունները: Այն ժամանակ տիկին Պերինան առաջարկեց Հերմանին ուղեկցել իրեն, երբ ինքը դրոսանքի է գնում Օգոստինոսականների գետափը, կամ Նելի ամրոցի պուրակը, անասելի ուրախություն պատճառելով սիրահարին: Եվ երբ գեղուհին կոթնում էր նրա ձեռքին, գերմանացու կոպտավուն սիրտը բաբախում էր սովորականից ավելի արագ. բայց կամ այն է ֆրանսերեն լալլ շիմանալով, կամ այն է դերադասելով լսել իր գազտնի հասուշանքների առարկայի շաղակրատանքը, տիկին Պերինային հազվադեպ էր հաջողվում որևէ բառ կորզել նրանից, բացի՝ «Փարի օր, մատեմուալել», և «Յտեսություն, մատեմուալել»-ից: Առաջինը նա արտասանում էր դուենային հանդիպելիս, նրան թևանցուկ անելով, երկրորդը՝ երկու ժամ հետո, նրան հրաժեշտ տալիս: Եվ շնայած տիկին Պերինայի համար շատ հաճելի էր, որ իրեն անվանում են «մատեմուալել» և արտակարգ հաճելի էր երկու ժամ անդադուր մենակ շատախոսելը, շվախենալով, որ իրեն կընդմիջեն, հարգարժան տիկինն, այնուհանդերձ, ցանկանում էր լսել գեթ որևէ ձայնարկություն, որը վկայեր նրա լուսկյաց կալվալերի զգացմունքների մասին:

¹ Աչք ուներ և չէր տեսնում (լատ.):

Մինչդեռ Հերմանի սերը գնալով բորբոքվում էր, թեև նրա ոչ մի բառը, ոչ մի շարժումը գեռևս չէին մատնում այդ։ Ազնիվ գերմանացու սրտում սիրո մի խարույկ էր բոցավառվում, որը Պերինայի մերձավորութունից սպառնում էր բոցաշունչ հրաբուխ դառնալ։ Վերջապես Հերմանը նկատեց, որ սքանչելի դաման նախապատվութունը տալիս է իրեն և սպասում էր միայն լիակատար համոզվածության, որպեսզի իր սերը խոստովանի։ Տիկին Պերինան հասկացավ նրա անվճռականութունը և մի անգամ երեկոյան, Նելի Փոքր ամրոցի դարպասի մոտ Հերմանին հրաժեշտ տալիս մտածեց, որ բարի գործ կատարած կլինի, եթե սեղմի նրա ձեռքը։ համակրելի երիտասարդն այնքա՛ն հուզված էր երեկում։ Ուրախութունից գլուխը կորցրած, Հերմանը սլատասխանեց նրա ձեռքի սեղմումին և շատ զարմացավ, երբ տիկին Պերինան բարձրաձայն ճշաց։ Բանն այն է, որ սիրո պոռթկման սլահին նա մոռացավ, որ արտակարգ ուժի տեր է և, ցանկանալով արտահայտել իր զգացմունքները, քիչ մնաց ջարդուփշուր աներ խեղճ դուենյայի ձեռքը։

Ցավի այդ ճիշը լսելով, Հերմանը շփոթվեց, բայց տիկին Պերինան ամենևին չէր ցանկանում վհատեցնել իր ապետին և այն էլ նրա առաջին իսկ երկշտ փորձի դեպքում։ Ահա թե ինչու դուենյան ժպտաց և նրա հուժկու ձեռքի սեղմումից ճզմված մատները տրորելով, թոթովեց։

— Օ՛, ոչինչ, ոչինչ, սիրելի պարոն Հերման։ Հավատացե՛ք, ցավն արդեն անցավ...

— Ներեցե՛ք ինց, մատեմուազել Պերրին,— բացականչեց գերմանացին։— Բայց ես ցեզ սիրում շատ ուժեղ, ուժեղ։ Եվ ցեր ձեռք ուզեցի սիրելու շափ սեղմեմ։ Ներեցե՛ք, մատեմուազել։

— Դատարկ բան է, պարոն Հերման, դատարկ բան է։ Հուսով եմ, որ ձեր սիրո մեջ վիրավորական ոչինչ չկա կնոջ համար և ես ստիպված չեմ լինի կարմրել։

— Օ՛, աստված,— բացականչեց Հերմանը։— Ես կարցում եմ, մատեմուազել Պերրին, որ իմ սերը ասնիվ, բայց ես վախ ունեի ցեզ սուսել այդ մասին։ Հիմա քանի որ այս-

պես պատահեց ու խոսքը գուրս թռավ, ես կասեմ ամեն բան. ես սիրում եմ ցեզ, սիրում եմ ցեզ, սիրում եմ ցեզ շատ-շատ, մատեմուազել Պերրին:

— Պարոն Հերման, դուք ազնիվ երիտասարդ եք և ընդունակ չեք խաբել խեղճ կնոջը. ես էլ ուզում էի ձեզ ասել... Օ՛, տեր աստված, բայց ինչպես արտասանեմ այդ բառը, — կոտրատվելով թոթովեց Պերրինան:

— Օ՛, ասեք, ասեք, — բացականչեց Հերմանը:

— Դեհ, ուրեմն, ես... Վա՛յ, չեմ կարող:

— Nein, nein. Կարող եք, կարող եք, խնդրում եմ:

— Դե լավ, խոստովանում եմ, որ ես էլ բոլորովին անտարբեր չեմ ձեր նկատմամբ:

— Օ՛, աստված, — բացականչեց գերմանացին, երանության գագաթնակետին զգալով իրեն:

Եվ ահա, մի անգամ երեկոյան, երբ նորահայտ Զուլիետը, ուղեկցելով իր Ռոմեոյին մինչև Նելի Մեծ ամրոցի դարպասը՝ վերադառնում էր տուն, այգու դռնակի մոտով անցնելիս տեսավ սպիտակ ուրվականը, որի մասին վերն ասացինք: Հարգարժան դուենյայի կարծիքով, դա ոչ այլ ոք էր, եթե ոչ մոայլ վանականը: Հարկ չկա ասելու, որ տիկին Պերրինան ամրոց վերադարձավ վախից կիսամեռ ու շտապեց փակվել իր սենյակում:

Հետևյալ առավոտ ուրվականի մասին գիտեր արդեն ամբողջ արվեստանոցը: Բայց տիկին Պերրինան այդ կարևոր իրադարձության մասին պատմում էր շատ հակիրճ, մանրամասնությունների մեջ շմտնելով. տեսել է մոայլ վանականին և ուրիշ ոչինչ: Եվ որքան էլ խնդրում էին դուենյային, անհնար էր այլևս նրանից մի խոսք կորզել:

Այդ ամբողջ օրը Նելի Մեծ ամրոցում բոլոր խոսակցությունները պատվում էին մոայլ վանականի շուրջը. ոմանք հավատում էին տիկին Պերրինային, մյուսները ծիծաղում էին նրա վրա: Ասկանիոն գլխավորեց թերահավատների խումբը, որի մեջ նրանից բացի մտնում էին Ժան-Ճատիկը, Սիմոն-Չախլիկը և Ժակ Օբրին: Ուրվականի գոյությանը հավատացողների խումբը բաղկացած էր տիկին Ռուայերտայից, Սկոյոնեից, Պագոլոյից և Հերմանից:

Յրեկոյան բոլորը հավաքվեցին Նելի Փոքր ամրոցի ետ-
նորակում: Տիկին Պերինային դեռ առավոտյան խնդրել էին
ուրաւմել մնալ վանականի առասպելը, բայց ժամանակակից
ուժիւորները նման ցանկանալով ապահովել իր ելուցթի հա-
ջողութիւնը, նա հայտարարեց, որ այդ սոսկալի պատմու-
թիւնը կմտաբերի, թերևս, հրեկոյան դեմ. տիկին Պերինան
շատ լավ հասկանում էր, որ պատմութիւններն ուրվական-
ների մասին կորցնում են ամբողջ իմաստը, եթէ պատմվում
են օրը ցերեկով և, ընդհակառակը, կրկնակի հետաքրքիր են
թվում մթնշաղին:

Տիկին Պերինայի ունկնդիրներն էին Հերմանը, որը տե-
ղավորվել էր նրա աջ կողմում, տիկին Ռուպերտան՝ ձախ
կողմում, Պագոլոն և Սկոյոնեն՝ կողք կողքի նստած, և Փակ
Օրրին, որը պառկած էր խոտի վրա, իր երկու ընկերների՝
Ժան-Ճաստիկի և Սիմոն-Չախլիկի մեջտեղում:

Ինչ վերաբերում է Ասկանիոյին, ապա նա հայտարարեց,
որ տանել չի կարողանում և չի ցանկանում զանազան ան-
միտ պատմութիւններ լսել:

— Ուրեմն, մատեմուազել Պերրին պատմի մեզ վանա-
կանի պատմութիւն, — մի բոպե լուութիւնից հետո, որի ըն-
թացքում բոլորն ավելի հարմար էին տեղավորվում, ասաց
Հերմանը:

— Այո, — պատասխանեց տիկին Պերինան, ես կպատ-
մեմ ձեզ, բայց նախազգուշացնում եմ, որ դա սոսկալի
պատմութիւն է և թերևս ավելի լավ կլիներ այս ուշ ժամին
չմտաբերել: Բայց ես գիտեմ, որ բոլորդ էլ բարեպաշտ մար-
դիկ եք, թեև ձեզնից ոմանք չեն հավատում տեսիլքների գո-
յությանը և, բացի այդ, պարոն Հերմանը բավականին ուժեղ
է նույնիսկ սատանային փախուստի մատնելու համար, եթէ
վերջինիս խելքին փչի հայտնվել այստեղ: Ուստի լսեցեք:

— Ներեցեք, մատեմուազել Պերրին, բայց ես ուզում եմ
ասել, որ եթէ սատանա դա, ինձ վրա հույս չդնեք, ես ինչ-
քան ուզեք կովեմ մարդկանց հետ, բայց ոչ սատանայի:

— Դե լավ, որ այդպես է, ե՛ս կկովեմ, — խոսակցութիւն-
ընթացքում փակ-Օրրին: — Ոչ մի բանից չվախենաք, տիկին
Պերինա, պատմեք:

— Մատեմուազել Պերրին, իսկ ցեր պատմության մեջ
ածխահատ չկա՞, — հարցրեց գերմանացին:

— Ածխահատ: Ոչ, պարոն Հերման, ածխահատ չկա:

— Լաֆ, լաֆ, դա շունի նշանակություն:

— Բայց ինչո՞ւ հարցրիք ածխահատի մասին:

— Որովհետև գերմանական պատմությունների մեջ
միշտ կա ածխահատ: Բայց դա ամենեին, ամենեին շունի
նշանակություն: Ցեր պատմությունը կլինի շատ հետաքրքիր-
սլատմեք, մատեմուազել Պերրին:

— Այսպես էր ուրեմն, — սկսեց տիկին Պերինան: — Մի
ժամանակ այստեղ նեղի ամրոց չկար, այլ կանգնած էր մի
մենաստան: Բոլոր վանականներն ասես ընտրովի լինեին՝
պարոն Հերմանի նման ուժեղ, բարձրահասակ:

— Այ քեզ մենաստա՞ն, — շղիմացյալ ժակ Օբրին:

— Լո՞ւր, շատախոս, — արձագանքեց Հերմանը:

— Լավ, լավ, լու՞ւմ եմ: Շարունակեք, տիկին Պերինա:

— Այդ միաբանության վանականներն ունեին սև, թա-
վամազ մորուքներ ու շողշողուն աչքեր. բայց նրանցից ամե-
նուղեղեցիկը մենաստանի վանահայրն էր՝ դոն էնգերանդը.
նա ուներ շափազանց սև մորուք և աչքերն առանձնապես
մուս էին շողում: Բացի այդ, պատվարժան վանեղբայրներն
աչքի էին ընկնում արտակարգ բարեպաշտությամբ և բար-
բերի խստությամբ, իսկ նրանց ձայնն այնքան քաղցրահար-
չուն էր, որ երեկոյան ժամասացությանը նրանց երգը լսելու
էին դալիս շրջակայքի բնակիչները: Համենայն դեպս, ինձ
այդպես են պատմել:

— Վայ, իե՞ղճ վանականներ, — հառաչեց տիկին Ռու-
սկերտան:

— Ախ, ի՞նչ հետաքրքիր է, — բացականչեց ժակ Օբրին:

— Ախ, ի՞նչ հիանալի պատմություն, — ասաց Հերմանը:

— Եվ ահա մի անգամ, — շարունակեց տիկին Պերինան,
հավանության բացականչություններից ակնհայտորեն շոյ-
ված. — վանահոր մոտ բերին գեղեցիկ մի պատանու, որը
ցանկանում էր վանական դառնալ: Նա դեռ անմորուս էր,
բայց աչքերը ազաթի նման էին, իսկ երկար, մետաքսե խո-

պոպները՝ սեաթույր: Նրան ընդունեցին անմիջապես, առանց դժվարութիւնների: Պատանին ասաց, որ իր անունը Անտոնիո է և որ ինքը կամենում է ծառայել վանահորը. դոն էնգերանդը հաճույքով համաձայնեց: Ես արդէն ասացի, որ այդ համայնքի վանականները սքանչելի երգում էին: Անտոնիոն էլ հնչեղ, հաճելի ձայն ուներ և երբ հետևյալ կիրակի երգեց եկեղեցում, հիացմունք պատճառեց բոլոր ժխականներին: Բայց այդ հմայիչ ձայնը հնչում էր շատ տարօրինակ և ունկնդիրների հոգում արթնացնում ավելի շատ մեղսալից, քան վսեմ մտքեր: Իրենք՝ վանականները, շափազանց անմեղ էին, և պատանի երգիչը շէր կարող խոռվել նրանց հանգիստը. այդ նկատեցին միայն ժխականները: Վանահայրն այնքան հմայված էր. Անտոնիոյի ձայնով, որ հանձնարարեց նրան երգեհոնի նվագակցութեամբ երգել բոլոր անտիֆոնները¹:

Պատանի մոնթի վարքագիծն անբասիր էր, իսկ վանահորը նա ծառայում էր սլարգատեո աննկարագրելի ջանասիրութեամբ ու եռանդով: Միայն մի բանում կարելի էր կրշտամբել նրան՝ մշտական ցրվածութեան: Նրա բացավառ հայացքն անդողտը հետևում էր վանահոր ամեն մի շարժումին:

«Այդ ո՞ւմ եք նայում, Անտոնիո», — հաճախ հարցնում էր նրան դոն էնգերանդը:

«Ձեզ, հայր իմ», — հոգոց հանելով պատասխանում էր պատանի վանականը:

«Ավելի լավ կլինի նայեք ձեր աղոթարանին, զավակս... Դե՛հ, իսկ հիմա՞ ինչն է գրավել ձեր ուշադրութիւնը»:

«Դուք, հայր իմ»:

«Ավելի լավ կլինի նայեք աստվածածնի սրբապատկերին, Անտոնիո: Իսկ հիմա՞ ուր եք հռուել ձեր հայացքը»:

«Ձեզ վրա, հայր իմ»:

«Անտոնիո, ավելի լավ է նայեք սուրբ խաչելութեանը»:

¹ Անտիֆոն — եկեղեցական օրհներգութիւն, որը կատարում են երկու երգչախմբի հերթափոխութեամբ, կամ՝ մենակաաարը երգչախմբի հետ

Բացի այդ, դոն էնգերանդը սկսեց նկատել, որ այն ժամանակից, ինչ Անտոնիոն ոտք էր դրել համայնք, իրեն՝ այսինքն դոն էնգերանդին, ավելի հաճախ են տանջում մեղսալից մտքերը: Նախկինում նա օրվա ընթացքում մեղանշում էր յոթ անգամից ոչ ավելի, որը, ինչպես հայտնի է, մատչելի է միայն սրբերին, իսկ երբեմն, թեև անհավատալի է, ինչքան էլ փորփրում էր հիշողութունը, հինգ-վեց մեղքից ավելի մտաբերել չէր կարողանում: Իսկ հիմա վանահայրը մեղանշում էր տասը, տասնհրկու և նույնիսկ տասնհինգ անգամ: Դոն էնգերանդը փորձում էր բավել իր մեղքն ասածու առաջ: Ծոմ էր պահում, աղոթում, ոչինչ չէր օգնում. ինչքան ավելի խիստ էր սլատծում նա իրեն, այնքան ավելի էր մեղանշում: Շուտով մեղքերի թիվը հասավ քսանի: Դրժբախտ վանահայրը բոլորովին զուխը կորցրեց: Նա ակնհայտորեն զգում էր, որ կործանվում է ու շգիտեր ինչպես փորձանքից աղատվի: Բացի այդ, նա նկատեց (ուրիշին դա կարող էր հանգստացնել, իսկ նրան՝ վախեցրեց), որ նույն բանը կատարվում է իր ոմեհնաառաքինի վանականների հետ. նրանք բոլորը գտնվում էին ինչ-որ անհասկանալի, անհայտ, տարօրինակ ու անհաղթահարելի ուժի ազդեցության տակ: Եվ եթե մինչև հիմա նրանց խոստովանութունը տևում էր բան րոպեից, կես ժամից ոչ ավելի, հիմա ամբողջ ժամեր էին պետք լինում: Ստիպված եղան նույնիսկ փոխել ընթրիքի ժամը:

Մինչդեռ մենաստան հասան տագնապալից լուրեր, որոնք ամբողջ մի ամիս անհանգստացնում էին մերձակայքի բնակիչներին. հարևան ամրոցի տիրոջ աղջիկը՝ Անտոնիան, կորել էր. նա անհետացավ մի երեկո ճիշտ այնպես, ինչպես դժբախտ Կոլոմբան. միայն ես հավատացած եմ, որ մեր Կոլոմբան իսկական հրեշտակ է, իսկ այդ աղջիկը, հավանորար, դիվահար էր: Որտեղ ասես փնտրեց նրան դժբախտ հայրը՝ ճիշտ այնպես, ինչպես պարոն պրևոն փնտրում էր մեր Կոլոմբային: Մնում էր միայն խուզարկել մենաստանը: Իմանալով, որ շաբ ոգին խորամանկ է ու երբեմն պահվում է նույնիսկ սուրբ վանքում, ամրոցի տերն էր խոստովանա-

հոր միջոցով դիմեց դոն էնգերանդին, և վանահայրը հաճույքով թույլատրեց նրան այցելել մենաստանը: Գուցե նա հույս ուներ, որ խուզարկութիւնը կօգնի գտնել գազտնի ուժը, որն ահա մի ամիս էր արդեն, ինչ ճնշում էր նրան ու նրա վանականներին: Բայց ավա՛ղ: Բոլոր որոնումներն ապարդշուն անցան, և ամբոցի տերը, արդեն վերջին հույսը կորցրած, պատրաստվում էր հեռանալ մենաստանից: Բակում վանահորը հրաժեշտ տալիս, նա մտամոլոր աչք էր ածում վանականներին, որոնք գնում էին երեկոյան ժամերգութեան:

Եվ հանկարծ, երբ անցնում էր վերջին վանականը, ամբոցի տերը բարձրաձայն ճիշ արձակեց.

«Տեր աստված, ախր սա Անտոնիան է: Աղջի՛կս»:

Անտոնիան, որովհետև այդ իրոք նա էր, շուշանի պես ճերմակեց:

«Ի՞նչ ես անում այստեղ, աղջիկս, և այն էլ վանականի հագուստով»,— շարունակեց ծերունին:

«Ինչ եմ անե՞ւմ, հայրիկ,— ասաց Անտոնիան:— Ես խելահեղորին սիրում եմ դոն էնգերանդին»:

«Անմիջապես դուրս կորի՛ր մենաստանից, թշվառակա՛ն»,— գոչեց զայրացած հայրը:

«Քանի ես ողջ եմ, հայրիկ, այստեղից ոչ մի տեղ չեմ գնա»,— հանգիստ պատասխանեց Անտոնիան:

Եվ ուշադրութիւն շփարձնելով ամբոցի տիրոջ բողոքի կանչերին, նա վանականների հետևից նետվեց մատուռ, կանգնեց իր սովորական տեղը: Վանահայրը մի վայրկյան ասես քարացավ տեղում: Կատաղած հայրն ուզում էր նետվել աղջկա հետևից, բայց դոն էնգերանդը համոզեց նրան իր զայրույթով շարբապղծել սուրբ վանքն ու սպասել մինչև ժամասացութիւնը վերջանաւ: Հայրը համաձայնեց, և նրա հետ դնաց մատուռ: Հենց այդ ժամանակ կատարում էին օրհներգեր, և երգահոնի հանդիսավոր հնչյունները նման էին աստծո ձայնին: Սքանչելի էր հնչում մոնթի ձայնը, բայց ինչքան դառնութիւն, ինչքան ծաղր, ինչքան զայրույթ կար այդ ձայնի մեջ: Դա երգում էր Անտոնիան, և բոլոր

աղոթողների սրտերը թրթռացին: Իսկ երբ նա լռեց, և հնչեցին երգեհոնի զորեղ, խաղաղ ու վեհապանծ հնչյունները, բոլորին թվաց, թե իր երաժշտության ոչ երկրային պերճությունը նա ցանկանում է խլացնել երկրի խղճուկ երգչի վրշտալից աղաղակը: Եվ ասես մարտահրավեր նետելով երգեհոնին, ավելի մոլեգին, ավելի վշտալից, ավելի աստվածամերժ հնչեց Անտոնիայի ձայնը:

Աղոթողներն անհանգիստ սպասում էին, թե ինչով կավարտվի այդ հրեշավոր մենամարտը, աստվածուրացության ու աղոթքների այդ հերթափոխությունը, աստժո ու սատանայի այդ տարօրինակ գոտեմարտը: Եվ ահա լարված լուծության մեջ, երգն ավարտվելուց հետո, ամպրոպի հոնդյունի նման թնդաց աստվածային երաժշտությունը, և հեզորեն խոնարհված գլուխների վրա փուլ եկան սուրբ զայրույթի հեղեղներ: Երգեհոնը զղրղում էր, ինչպես փողի ձայնն ահեղ դատաստանի օրը: Միայն Անտոնիան շխոնարհեց գլուխը. նա դեռ փորձում էր պայքարել, բայց երգի փոխարեն նրա կոկորդից թռավ հուսահատության աղեկտուր, սրտաճմլիկ ճիշ, որը նման էր վշտից խելագարված մարդու ծիծաղի. հետո նա ընկավ քարե հատակին, գունատ ու անշարժ: Իսկ երբ մոտ վազեցին նրան ու ցանկանում էին բարձրացնել, տեսան, որ նա մեռած է...

— Հիսո՛ւս Քրիստոս,— բացականչեց տիկին Ռուպերտան:

— Խե՛ղճ Անտոնիա,— միամտորեն ասաց Հերմանը:

— Անօրե՛ն,— մոթմոթաց ժակ Օբրին:

Մյուսները նստած էին լուռ: Նույնիսկ ունկնդիրներից, ամենաանհավատները ցնցված էին տիկին Պերինայի սոսուկայի պատմությունից: Սկոցոնեն սրբեց արցունքը, Պագոսյան աստվածավախորեն խաշակնքեց դեմքը:

— Իսկ դո՞ն էնգերանդը,— շարունակեց տիկին Պերինան. — որոշեց, որ աստժո զայրույթը ջախջախել է թշնաման և կարծեց, թե ընդմիշտ ազատվել է գայթակղություններից: Բայց խեղճ մարդը սխալվել էր, քանզի բոլորովին մոտացել էր, որ ապաստան է տվել շար ոգով բռնված աղջը-

կան: Եվ ահա հետևյալ գիշեր դեռ նոր էր աչքը փակել, երբ նրան արթնացրեց շղթաների զրնգոցը: Նա բացեց աչքերն ու, ակամա նայելով դռան կողմը, տեսավ, որ գուռն ինքն իրեն բացվեց, սենյակ մտավ կույսի սպիտակ զգեստ հագած մի կին: Տեսիլքը մոտեցավ դոն էնգերանդի անկողնուն, բռնեց նրա ձեռքն ու գոռաց. «Այդ ես եմ, Անտոնիան: Այն նույն Անտոնիան, որը սիրում է քեզ: Աստված ինձ լիակատար իշխանութուն է տվել քեզ վրա, քանզի դու շափազանց շատ ես մեղանշել, եթե ոչ գործով, ապա մտքով»:

Եվ ուրվականը սկսեց հայտնվել նրան մշտապես, ուղիղ կեսգիշերին, անողոք ու հավատարիմ իր սիրուն, այնպես որ, ի վերջո, դոն էնգերանդը շղիմացավ ու ճամփա ընկավ աստծո տապանակին երկրպագելու, ուր և ծնկաչոք սողոթելիս աստծու ողորմածությամբ մեռավ:

Բայց Անտոնիան այդ ժամանակ էլ չխաղաղվեց: Ճիշտն ասած, շատ քիչ վանականներ ավելի քիչ մեղավոր գտնվեցին, քան իրենց տարաբախտ վանահայրը: Եվ ուրվականը սովորութուն դարձրեց այցելել բոլորին հերթով, գիշերները վախեցնելով նրանց իր սոսկալի ձայնով. «Այդ ես եմ, Անտոնիան: Այն նույն Անտոնիան, որը սիրում է քեզ»:

Դրա համար էլ ուրվականին անվանեցին մռայլ վանական:

Եվ եթե երբևէ, երեկոյան, փողոցում տեսնեք, որ ձեր հետևից գալիս է գորշագույն կամ սպիտակ կնգուղով մեկը, անմիջապես փախեք տուն, որովհետև այդ մռայլ վանականն է, որը նոր զոհ է փնտրում:

Երբ քանդեցին մենաստանը և դրա տեղում կառուցեցին ամրոցը, բոլորը հավատացած էին, որ մռայլ վանականը կչքվի: Բայց ոչ... Թերևս այս տեղը շատ սիրելի է նրա համար և ժամանակ առ ժամանակ նա դեռ հայտնվում է: Ահա այժմ էլ, փրկիր ու ազատիր մեզ, տեր աստված, այդ դրժբախտ, խռովահույզ հոգին նորից թափառում է ամրոցում... Թող աստված պահպանի մեզ նրա սատանայական շարությունից:

— Ամե՛ն,— դեմքը խաշակնքելով, ասաց տիկին Ռուպերտան:

- Ամե՛ն,— ցնցվելով շնչաց Հերմանը:
- Ամե՛ն,— ծիծաղելով բացականչեց ժակ Օբրին:
- Ամե՛ն,— կրկնեցին և մյուսները, ամեն մեկն իր ձևով, նայած այն զգացմունքին, որ նրանց սրտում հարուցել էր այդ առասպելը:

ՔԼՈՒՍ ՈՒԹԵՐՈՐԴ

Իճշ կարելի է տեսնել գիշերը բարդու կատարից

Հետևյալ առավոտ, այն նույն օրը, երբ թագավորական արքունիքը պետք է վերադառնար Ֆոնտենրլո, տիկին Ռուպերտան հայտարարեց բոլորին, ովքեր նախօրոք լսել էին մոռյու վանականի պատմությունը, որ ինքն էլ կարող է պատմել արտակարգ մի բան:

Այդբան գրավիչ խոստում լսելով, տիկին Պերինայի երեկվա ունկնդիրները բնականաբար շտապեցին հավաքվել երեկոյան նույն ժամին, նույն տեղում:

Բոլորն իրենց զգում էին անկաշկանդ: Նախօրեին Բենվենուտոն գրել էր Ասկանիոյին, որ երկու-երեք օր կուշանա, որովհետև կարգի է բերելու սրահը, որտեղ մտադիր է դնել Յուպիտերը և վերադառնալուն պես կսկսի արձանի ձուլումը:

Ինչ վերաբերում է պրևոյին, նա մի անգամ միայն հայտնրվեց Նելի ամրոցում, իմանալու համար, թե Կոլոմբայի մասին տեղեկություններ չկա՞ն արդյոք և, պատասխան ստանալով տիկին Պերինայից, որ ամեն ինչ առաջվա պես է, անմիջապես վերադարձավ Շատլե:

Այդպիսով, Նելի Մեծ և Փոքր ամրոցի բնակիչները, օգտավելով տերերի բացակայությունից, լիակատար ազատություն էին վայելում:

Ժակ Օբրին այդ երեկո տեսակցություն ուներ ժերվեզայի հետ, բայց հետաքրքրասիրությունը հաղթանակեց: Եվ բացի այդ, նա հույս ուներ, որ Ռուպերտայի պատմությունն

ավելի կարճատև կլինի, քան Պերինայինը, և իրեն կհաշոգ-
վի ոչ միայն լսել պատմութիւնը, այլև՝ հասնել տեսակցու-
թյան:

Ահա թե ինչ պատմեց հավաքվածներին տիկին Ռուպեր-
տան:

Տիկին Պերինայի պատմութիւնից հետո մոայլ վանակա-
նի մասին մտքերը հանգիստ չէին տալիս նրան: Վերադառ-
նալով իր սենյակը, նա ավելի շատ վախեցավ. չէ՞ որ Ան-
տոնիայի ուրվականը կարող էր այցելել իրեն, շնայած մահ-
ճակալի գլխավերեւում գտնվող սուրբ մասունքին:

Նախ և առաջ Ռուպերտան ամուր փակեց դուռը, բայց
դա ամենևին չնվազեցրեց ծեր կառավարչուհու վախը. նա
շատ լավ գիտեր տեսիլքների սովորութիւնները և հիանալի
հասկանում էր, որ նրանց համար փականներ գոյութիւն
չունեն: Նա հաճույքով պինդ կփակեր Նելի Ամրոցի այգուն
նայող լուսամուտը, բայց նախկին տերը հոգ չէր տարել
փեղկերի մասին, իսկ այժմյան տերն ավելորդ էր համարում
փող ծախսել այդպիսի մանրութիւնների վրա:

Սովորաբար լուսամուտը փակվում էր վարագույրներով.
այսօր, հակառակի նման, դրանք լվացքի մեջ էին: Այնպես
որ, սենյակն արտաքին աշխարհից բաժանում էր, սոսկ օդի
նման թափանցիկ մի ապակի:

Այնուհետև Ռուպերտան նայեց մահճակալի տակ, պրպը-
տեց պահարանները, մանրազնին աչքի անցկացրեց սենյակ-
կի բոլոր անկյունները: Նա գիտեր, թե ինչքան քիչ տեղ է
հարկավոր շար ոգու համար, մանավանդ, եթե նա պոչը քու-
շի և պոզերն ու ճանկերը հավաքի: Չէ՞ որ Ասմոդէյը՝ եր-
կար տարիներ կծկված պառկած էր շշի հատակին: Սենյա-
կում ոչ ոք չկար. Ռուպերտան ուրվակունի ոչ մի հետք
չհայտնաբերեց:

¹ Ասմոդէյ— ֆրանսիական գրող Ռենե Կեսսի «Կաղ սատանա»
(1707) վեպի գործող անձ: Համաձայն այդ վեպի Ասմոդէյ սատանան,
որին գիտնական-աստղագուշակը ամփոփել էր շշի մեջ, ազատ արձակվեց
ուսանող Կլեոֆասի ձեռքով և ի շնորհակալութիւն ցույց տվեց նրան մարդ-
կանց կյանքի գաղանի կողմերը:

Եվ այդպես, կառավարչուհին պառկեց քնելու համարյա խաղաղված, բայց ճրագն, այնուամենայնիվ, շմարեց: Վերմակը վրան քաշելով, նա նայեց լուսամուտին և գիշերային երկնքի ֆոնի վրա տեսավ մարդկային հսկա մի կերպարանք, որը ծածկում էր աստղերը: Դե՛հ, իսկ ինչ վերաբերում է լուսնին, ապա առանց այդ էլ այն շէր կարելի տեսնել, որովհետև վերջին քառորդում էր:

Դժբախտ Ռուպերտան ցնցվեց ու վախից աչքերը փակեց. նա արդեն ուզում էր գոռալ, կամ պատը թակել, բայց ժամօնակին մտաբերեց, որ հենց իր լուսամուտի առաջ կանգնած էր Մարսի հսկայական արձանը: Այդ ժամանակ նա սիրտ արեց բացել աչքերը և, մի անգամ էլ կարծեցյալ ուրվականին նայելով համոզվեց, որ դա պատերազմի աստվածն էր: Վայրկենաբար խաղաղվելով, Ռուպերտան հաստատ որոշում ընդունեց՝ հնարավորին չափ շուտ քնել:

Սակայն քունը, աղքատների այդ հարստությունը, որին հաճախ նախանձում են հարուստները, ենթակա չէ մարդու կամքին: Երեկոները, երբ աստված երկնային դարպասից բաց է թողնում դեպի երկիր այդ քմահաճ երեխային, վերջինս շտապում է ուր խելքին փչի, ուշադրութուն չդարձնելով ջերմագին աղաչանքներին, ու ներս խուժելով հենց այնտեղ, որտեղ նրան ամենևին չեն սպասում: Ինչքան էլ Ռուպերտան քուն էր աղերսում, երկար ժամանակ քունը մոտ չէր դալիս նրա աչքին:

Վերջապես, արդեն կեսգիշերին մոտ, հոգնածությունն իր գործը կատարեց. Ռուպերտայի առանց այդ էլ անորոշ մըտքերն սկսեցին խառնվել և, խախտելով իրենց միացնող բարակ թելը, ցրիվ եկան կտրված համրիչի հատիկների նման: Հարգարժան կառավարչուհու գիտակցությունը մթազնեց. միայն տազնապահար սիրտն էր շարունակում ուժեղ բարախել. հետո այն էլ խաղաղվեց: Ամեն ինչ քուն մտավ, միայն կայծկլտալով վառվում էր կանթեղի պատրույգը:

Բայց, ինչպես հայտնի է, ամեն ինչ այս աշխարհում իր վերջն ունի. կանթեղի յուղն էլ վերջացավ: Դու պատահեց Ռուպերտայի խոր քուն մտնելուց երկու ժամ հետո: Կանթե-

դի ամբողջ վառելանյութը վերջացավ, ճրագն սկսեց աղոտանալ, թրթռալ, հետո ընկվեց պայծառ բոցով ու հանգավ:

Այդ նույն պահին Ռուպերտան սոսկալի երազ էր տեսնում: Իբրև թե ինքը ուշ երեկոյան վերադառնում է տիկին Պերինայի տնից, ու նրան հետապնդում է մոայլ վանականը: Սակայն Ռուպերտան, բարեբախտաբար, հակառակ երազներում հաճախակի կրկնվող իրադրություն, տասնհինգամյա աղջկա պես արագավազ դարձավ և, շնայած մոայլ վանականը ոչ թե քայլում, այլ ասես սահում էր գետնի վրայով, նա կառավարչուհուն հասավ միայն ամբողջի դարպասի մոտ, որը փակվեց հենց նրա քթի առաջ: Ռուպերտան լսում էր, թե ինչպես վանականն ազիտողորմ տնքում է ու բախում դարպասը, սակայն ընտկանաբար ամենևին չէր պատրաստվում ներս թողնել նրան: Կառավարչուհին վերցրեց լամպը, սանդուղքով վեր բարձրացավ, ցատկելով երկու-երկու աստիճան, նետվեց իր սենյակը, պառկեց անկողնում ու հանգցրեց լույսը:

Եվ ահա, հենց որ լույսը մարեց, Ռուպերտան լուսամուտից տեսավ մոայլ վանականի գլուխը: Մոզեսի նման պատի վրա մագլցելով, նա փորձում էր սենյակ մտնել: Ռուպերտան լսում էր, թե նա ինչպես է ճանկոտտում ապակին:

Դե՛հ, այդպիսի երազ տեսնողը կարո՞ղ էր առաջվա պես քնել: Իհարկե, ոչ. և Ռուպերտան արթնացավ: Նա ոտից գլուխ սառը քրտնքի մեջ էր. մազերը բիզ-բիզ էին կանգնել, վախեցած, թստիառող հայացքն ակամա ուղղվեց լուսամուտին, և նա աղեկատուր ճիշ արձակեց, որովհետև տեսավ սոսկալի մի պատկեր. Մարսի հսկայական գլուխը լույս էր արձակում, իսկ բերանից, քթից, ականջներից բոց էր ժայթքում:

Սկզբում Ռուպերտան մտածեց, թե դա երազ է: Ցանկանալով համոզվել, որ քնած չէ, արնոսելու աստիճան կսմթեց ձեռքը. հետո դեմքը խաշակնքեց, երեք անգամ «Հայր մեր» կարդաց ու երկու անգամ՝ «Սուրբ, սուրբ», բայց սոսկալի տեսիլքը չէր շքվում: Ուժերը հավաքելով, Ռուպերտան վերցրեց ավելն ու դրա կոթով սկսեց ուժգնորեն թակել առաս-

տաղը, հուսալով արթնացնել հաղթանդամ գերմանացուն, որի սենյակը գտնվում էր իր սենյակի վերևում. բայց ինչ-րան էլ թխկթխկացնում էր, Հերմանը կենդանության նշաններ ցույց չէր տալիս:

Այդ ժամանակ Ռուպերտան սկսեց բախել հատակը, Պագոլոյին արթնացնելու համար, որի ննջասենյակը հենց նրա սենյակի տակ էր: Բայց, ավա՞ղ, Պագոլոն էլ Հերմանի նման անպատասխան թողեց նրա կանչը: Ռուպերտան կարող էր բախել ուզածի շափ. ոչ ոք չէր արձագանքում:

Այնժամ նա մտածեց իր երրորդ հարևանի՝ Ասկանիոյի մասին և սկսեց բախել պատը: Բայց այստեղ էլ նրան անհասկացողություն էր սպասում: Ըստ երևույթին, երեք ենթավարպետներն էլ ինչ-որ տեղ էին գնացել: Կառավարչուհու գրված միտք առկայծեց. գուցե մոռալ վանականը տարե՞լ է նրանց, բայց այդ մտքից նրա սիրտը շփեթեացավ. ընդհակառակը, ավելի մեծ սոսկում պատեց նրան: Վերջապես համոզվելով, որ իրեն ոչ ոք օգնության չի գա, Ռուպերտան վերմակը քաշեց գլխին ու սկսեց սպասել:

Սպասելով մեկ, մեկուկես, իսկ գուցե և երկու ժամ ու չլսելով ոչ մի շրջյուն, նա սիրտ առավ, բարձրացրեց վերջակի ծայրը և աչքի պոչով նայեց լուսամուտին. Մարսի զուտին արգեն բոց չէր արձակում, ամեն ինչ նորից թաղվել էր խավարի մեջ:

Բայց որքան էլ հանգստացնող ներգործություն ունեին խավարն ու լուծությունը, խեղճ կնոջ քունը չէր տանում: Ռուպերտան պառկել էր լսողությունը լարած և լայն բացած աչքերը հառած մթության մեջ, մինչև ծագող արևի առաջին շողերն ազդարարեցին, որ տեսիլքների ժամն անցել է:

Այսպիսին էր Ռուպերտայի պատմությունը, որը, պետք է ասել, ավելի մեծ հաջողություն ունեցավ, քան երեկվանը: Այդ պատմությունն առանձնապես մեծ տպավորություն գործեց Հերմանի, տիկին Պերինայի, Պագոլոյի և Մկոցոնեի վրա: Տղամարդիկ երդվում էին, որ ոչինչ չեն լսել, բայց աչքերն չիոթված ու այնպիսի անվստահ ձայնով, որ ժակ Օրրին բարձրաձայն ծիծաղեց: Իսկ տիկին Պերինան և Մկո-

ցոնեն ականջ էին դնում լուռ, շունչները պահած: Նրանք մերթ կարմրում էին, մերթ գունատվում և, եթե այդքան մութ շիներ, հողեկան պայքարի այդ արտացոլումը դիտող կողմնակի մարդուն կարող էր թվալ, թե երկու կանայք կամ կաթվածահար կլինեն, կամ կմեռնեն սակավարյունությունից:

— Ուրեմն, դուք վստահ եք, տիկին Պերինա, որ Նելի Մեծ ամրոցի այգում տեսել եք մռայլ վանականին,— առաջինը ուշքի գալով, հարցրեց Սկոցոնեն:

— Ես այնպես պարզ տեսա նրան, ինչպես հիմա տեսնում եմ ձեզ, սիրելիս:

— Իսկ դուք, տիկին Ռուպերտա, տեսաք, որ Մարսի գլուխը լո՛ւյս էր արձակում:

— Այո, այդ անիծյալ գլուխը մինչև հիմա էլ կանգնած է աչքիս առաջ,— բացականչեց Ռուպերտան:

— Այդ է որ կա,— ասաց տիկին Պերինան:— Ուրվականն իր համար բույն է հյուսել հեթանոս աստծու գլխում: Բայց չէ՞ որ ուրվականն էլ կարիք ունի զրոսնելու, ինչպես ողջ մարդը: Ահա նա էլ գիշերներն իջնում է այնտեղից, ման է գալիս, թափառում ամենուրեք, իսկ երբ հոգնում է, նորից վերագառնում է այդ գլխի մեջ ապաստանելու: Կուռքերն ու ոգիները միշտ միաբան են: Ինչ էլ ասելու լինեն, դրանք բոլորն էլ դժոխքի ծնունդ են: Եվ այդ սոսկալի սուտ աստված Մարսը պարզապես ապաստան է տվել մռայլ վանականին:

— Դուք այդպե՞ս կարծում, տիկին Պերրին,— հարցրեց միամիտ դերմանացին:

— Ես վստահ եմ դրանում, պարոն Հերման, հաստատ վստահ եմ:

— Մարմինս փշաքաղվում, աղնիվ խոսք,— սարսռալով թոթովեց Հերմանը:

— Ուրեմն, դուք է՞լ եք հավատում տեսիլքներին,— հարցրեց ժակ Օբրին:

— Օ՛հ, այո, հաճատում:

Ժակ Օբրին թոթովեց ուսերը, բայց, այնուամենայնիվ, ինքն իրեն որոշեց ներթափանցել ուրվականների գաղտնի-

քի մեջ, մանավանդ, որ նրա համար դա այնքան էլ դժվար չէր. ամբողջում նա հարազատ մարդ էր, գալիս ու գնում էր, երբ կամենար: Եվ ահա նա մտածեց, որ ժերվեզային տես- նելու կարող է գնալ և վաղը, իսկ այս գիշեր կանցկացնի՝ նելի Մեծ ամբողջում: Երեկոյան նա հրածեշտ կտա բոլորին, ձևացնելով, թե գնում է, իսկ իրականում կմնա այգում և, թաքնվելով սաղարթախիտ բարդու ճյուղերի մեջ, կծանոթա- նա ոգու հետ:

Նա այդպես էլ արեց. գնաց արվեստանոցից, ինչպես միշտ, առանց ուղեկցողների, ամուր շրխկացրեց գետափ տա- նող դուռը, որպեսզի բոլորը կարծեն, թե ինքն արդեն ամ- րացում չէ և, արագորեն մոտ վազելով արձանի կողքին աճող բարդուն, ցատկելով կառչեց դրա ցածի ճյուղից, վեր մտ- դրլցեց ու մի ակնթարթում հայտնվեց ծառի կատարին, հենց ուղիղ Մարսի գլխի դիմաց: Այնտեղից նա շատ լավ տես- նում էր երկու ամբողջի բակերն ու պուրակները:

Մինչ ժակ Օբրին հարմար կտեղավորվեր իր թառին, կուվրը շողշողաց լույսերով. այնտեղ պետք է տեղի ունենար հոյակապ տոնախմբություն: Կարլոս V-ը վերջապես սիրտ էր արել Ֆոնտենբլոյից տեղափոխվել Փարիզ, ուր երկու միապետները ժամանեցին հենց նույն երեկո, որի մասին պատմում ենք:

Ամեն ինչ պատրաստ էր կայսրին ընդունելու համար: Ինչույ՞ք, խաղեր, պարահանդես: Սենի վրայով լողում էին բաղմազույն լապտերներով զարդարված գոնդոլներ, որոնք սահունորեն կանգ էին առնում նշանավոր պատշգամբի առաջ, որտեղից երեսուն տարի անց Կարլոս IX-ը հրամա- յեց գնդակոծել իր ժողովրդին. իսկ ամից ամի գնում-գալիմ էին ծաղկազարդ մակույկներ, որոնք հրավիրվածներին Սեն- ժերմենի արվարձանից բերում էին կուվր:

Հյուրերի թվում էր, անկասկած, և վիկոնտ դե Մարմանը

Ինչպես արդեն ասել ենք, վիկոնտը բարձրահասակ, ան- ղույն մարդ էր, բայց իրեն համարում էր կանանց սիրելին՝ Եվ այսօր էլ նրան թվաց, թե երիտասարդ, սիրունատես կոմսուհին, որի ամուսինը սավոյական բանակում էր, ինչ-

որ առանձնահատուկ հայացքով է նայում իրեն: Մարմանը շատ պարեց կոմսուհու հետ ու որոշեց, որ դաման անտարբերությամբ շի ընդունում իր բազմանշանակալից ձեռքի սեղմումները: Եվ, վերջապես, երբ կոմսուհին մեկնում էր տուն, դե Մարմանը նրա հրաժեշտի հայացքից ենթադրեց, որ Գալաթեայի նման նա էլ փախուստի է դիմում միայն հետապնդված լինելու համար: Եվ Մարմանը գնաց նրա հետևից: Վիկոնտի գեղուհին ապրում էր Օտֆելյ փողոցի ծայրին, այդ պատճառով, Լուվրից դուրս գալով, նա գնաց գետափով, անցավ Նելի ամրոցը ու Օգոստինոսականների փողոցով դուրս եկավ Սուրբ Անդրեյի փողոցը: Այդ ժամանակ նա իր հետևում անսպասելիորեն քայլերի ձայն լսեց:

Բավական մութ գիշեր էր, լուսինը, ինչպես արդեն ասել ենք, վերջին քառորդում էր, իսկ ժամանակը՝ գիշերվա ժամը մեկը: Բացի այդ, եթե ընթերցողը շի մոռացել, քաջությունն ամենևին Մարմանի հիմնական առաքինությունը չէր: Այդպես, ուրեմն, ինչ-որ մեկի քայլերի ձայնը, որն ասես նրա քայլերի արձագանքը լիներ, անհանգստացնում էր վիկոնտին ավելի ու ավելի: Նա պինդ փաթաթվեց թիկնոցի մեջ, մեքենայաբար ձեռքը դրեց սուսերի երախակալին ու քայլերն արագացրեց:

Բայց դրանից ոչինչ չփոխվեց, նրան հետապնդող մարդը նույնպես արագացրեց քայլերը, և երբ Մարմանը շրջանցում էր Օգոստինոսականների եկեղեցու գավիթը, նրան թվաց, որ եթե ինքը հիմա արագ քայլերից շանցնի վազքի, անծանոթն անպայման կհասնի իրեն: Մարմանն արդեն պատրաստ էր դիմել այդ ծայրահեղ միջոցին, երբ հանկարծ հետապնդող քայլերի ձայնին ավելացան մարդկային ձայնի հնչյուններ:

— Գրողը տանի, պարոն,— բացականչեց անծանոթը:— Իսկ դուք, թերևս, ճիշտ եք անում, որ այդպես շտապում եք. սա վտանգավոր տեղ է, մանավանդ այս ուշ ժամին. չէ՞ որ հենց այստեղ, ինչպես դուք անկասկած գիտեք, մարդասպանները հարձակվել են հարգարժան ընդհանրապես՝ ականավոր վարպետ Բենվենուտո Զելլինիի վրա, որը հիմա գտնը:

վում է Ֆոնտենբլոյում և շգիտի, թե ինչ է կատարվում իր տանը: Ըստ երևույթին, պարոն, մեր ճանապարհը նույնն է և, եթե մենք գնանք միասին, ավազակները շատ կխորհեն մինչև մեզ վրա հարձակվելը: Առաջարկում եմ ձեզ, պարոն, իմ պաշտպանութունը ի փոխարեն ձեր ուղեկիցը լինելու պատվին:

Հենց որ անձանոթն արտասանեց առաջին իսկ բառերը, Մարմանին թվաց, թե ինքն արդեն ինչ-որ տեղ լսել է այդ ձայնը, իսկ երբ ժակ Օբրին հիշատակեց Բենվենուտո Չելլինիի անունը, վիկոնտը մտաբերեց շատախոսին, որն առաջին հանդիպման ժամանակ այնքան արժեքավոր տեղեկություններ էր տվել նրան նելի Մեծ ամբոցի բնակիչների կյանքի վերաբերյալ: Վիկոնտը կանդ առավ, գլխի ընկնելով, որ ժակ Օբրիի ընկերակցությունը կարող է կրկնակի օգուտ բերել իրեն. նախ և առաջ ուսանողը հուսալի պաշտպան կլինի իր համար, իսկ երկրորդ՝ կարող է որևէ նոր բան պատմել ատելի Բենվենուտոյի մասին: Եվ հավատացեք, վիկոնտը առիթը բաց չէր թողնի այդ տեղեկությունները հօգուտ իրեն օգտադործելու: Ահա թե ինչու Մարմանն այս անգամ ուսանողին ողջունեց ավելի քան սիրալիր:

— Ա-ա-ա՛, բարի երեկո, բարի երեկո, պատանի բարեկամս,— արտասանեց նա ի պատասխան ժակ Օբրիի բարեկամական, ընտանեվարի ճոռոմարանության:— Այդ ի՞նչ է իր ասում մեր լավ Բենվենուտոյի մասին: Ես հույս ունեի յանդիպել նրան Լուվրում, իսկ նա, խորամանկը, մնացել է Ֆոնտենբլոյում:

— Գրողը տանի, մի՞թե այդ դուք եք, թանկագին վիկոնտ... Այ քեզ հաջողություն,— բացականչեց ժակ Օբրին:— Վիկոնտ դե... չեմ կարողանում մտաբերել ձեր անունը, պարոն: Կամ դուք մոռացել եք ասել ինձ, կամ գլխիցս թոկ է: Բայց դա կարևոր չէ: Այդպես, ուրեմն, դուք Լուվրի՞ց եք գալիս: Եվ, իհարկե, այնտեղ շատ լավ էր, շատ շքեղ, շատ ուրախ և շատ գեղեցիկ կանայք կային: Եվ, անկասկած, մենք հիմա շտապում ենք տեսակցության, այնպես չէ՞: Ա՛խ դուր, անպարկե՛շտ:

— Բայց դուք պարզապես կախարդ եք, սիրելիս,— կոտորաւ: լելով բացականչեց Մարմանը:— Եվ այդ ինչպե՞ս կռահեցիք: Ճիշտ է, ես հիմա գալիս եմ Լուվրից, և թագաւորն ինձ հետ շատ սիրալիր էր... Ի դեպ, ես հիմա էլ այնտեղ կլինեի, եթե մի հմայիչ կոմսուհի չակնարկեր, որ գերազասում է տեսնել ինձ մեն-մենակ և ոչ այդ իրարանցման մեջ: Իսկ դո՞ւք որտեղից եք գալիս:

— Ե՞ս,— քրքջալով բացականչեց ժակը:— Ա՛խ, քիչ մնաց մտնանայի: Հետաքրքիր բաներ են կատարվում: Խեղճ Բենվենուտո: Ազնիվ խոսք, նա արժանի չէ դրան:

— Բայց ի՞նչ է պատահել մեր թանկագին բարեկամին:

— Բանն այն է, որ եթե դուք քիչ առաջ դուրս եք եկել Լուվրից, ապա ես դուրս եմ եկել Նելի Մեծ ամրոցից, որտեղ երկու ժամ թութակի նման նստած էի մեծ ծառի ճյուղին:

— Գրողը տանի, բավականին անախորժ գրության մեջ եք եղել:

— Ոչինչ, ես չեմ ամսոսում, որ ծառը մագլցեցի: Ես այնպիսի բաներ տեսա, որ մտաբերելիս անգամ կարելի է ծիծաղից թուլանալ:

Եվ ժակ Օբրին այնպես սրտաբուխ ու զվարթ քրքջաց, որ Մարմանը, չիմանալով ծիծաղի պատճառն իսկ, շփմացավ ու սկսեց արձագանքել նրան: Բայց քանի որ վիկոնտը, իսկապես ասած, ծիծաղելու ոչինչ չուներ, շուտով լռեց:

— Իսկ հիմա, պատանի բարեկամս,— ասաց Մարմանը,— քանի որ ձեզ հաջողվեց ծիծաղեցնել ինձ ոչինչ չպատմելով, դուցե, այնուամենայնիվ, կպատմեք, թե այդ ի՞նչ զվարճալի իրադարձություններ են այդքան ուրախացրել ձեզ: Դուք կարծեմ գիտեք, որ ես Բենվենուտոյի լավագույն բարեկամներից եմ, թեև ոչ մի անգամ ձեզ չեմ հանդիպել նրա տանը: Բանն այն է, որ ես շատ քիչ եմ ազատ ժամանակ ունենում: Բայց հավատացեք, ինձ հուզում է այն ամենը, ինչ վերաբերում է մեր ընդհանուր բարեկամին: Սիրելի Բենվենուտո: Դե պատմեք, պատմեք, թե նրա բացակայությամբ ի՞նչ է կատարվում Նելի Մեծ ամրոցում: Երդվում եմ պատվովս, դա ինձ անշափ հետաքրքրում է:

— Ինչ է կատարվո՞ւմ: Օ՛, ո՛չ: Այդ իմ գաղտնիքն է,—
սլատասխանեց Օրրին:

— Գաղտնի՞ք: Ինձնի՞ց: Բենվենուտո Չելլինիի լավագույն բարեկամի՞ց,— գոչեց Մարմանը:— Չէ՞ որ ևս քիչ առաջ արձագանքում էի թագավորին, երբ նա գովասանքներ էր շոայլում նկարչին: Լավ չեք անում, լավ չեք անում, պարոն,— նեղացած ասաց Մարմանը:

— Եթե հավատացած լինեի, որ դուք ոչ ոքի չեք ասի, հարգելի... դե, ձեր անունն ի՞նչ է, գրողը տանի... ևս, թերևս, դեմ չէի լինի պատմել ձեզ: Ճիշտն ասած, հազիվ եմ զսպում ինձ, այնքան մեծ է այդ զվարճալի պատմությունը ձեզ հայտնելու ցանկությունս. կարծես Միդաս¹ թագավորի եղեգներ լինեմ:

— Դե պատմե՛ք, պատմե՛ք,— բացականչեց Մարմանը:

— Իսկ դուք ոչ ոքի չե՞ք ասի:

— Ոչ ոքի:

— Ազնիվ խո՞սք:

— Երդվո՞ւմ եմ պատվովս:

— Պատկերացնում եք, որ... Բայց նախ, հարգելի... հարգելի բարեկամս, ասացեք, հայտնի՞ է ձեզ արդյոք մուսլ վանականի առասպելը:

— Այո, ինչ-որ բան լսել եմ. ասում են, իբրև թե ների Մեծ ամբոցում ոգի է հայտնվել:

— Հենց այդպես է: Շատ լավ... Եթե արդեն գիտեք այդ մասին, ինձ մնում է միայն որոշ բան ավելացնել: Ուրեմն, պատկերացնո՞ւմ եք, որ տիկին Պերինան...

— Կոյոմբայի դուև՞նյան:

— Այո, այո: Իսկույն երևում է, որ դուք այդ ընտանիքի,

¹ Անտիկ առասպելի համաձայն փոուգիական թագավոր Միդասը ավանտկի ականջներ ուներ, որոնք խնամքով ծածկում էր: Բայց նրա լացրերտան սափրիչը, անդոր լինելով սրահել այդ գաղտնիքը և միաժամանակ սիրա շանելով հայտնել մարդկանց, գետափին մի փոս փորեց և դրա մեջ շնչաց, որ «Միդաս թագավորը ավանտկի ականջներ ունի»: Հետո հողով լցրեց փոսը: Այդ տեղում եղեգն անեց, որը քամու փչելուն պես կրկնում էր սափրիչի խոսքերը:

բարեկամն եք: Ուրեմն, տիկին Պերինան գիշերային զբոսանքի ժամանակ (բանն այն է, որ առողջության համար նա գիշերները զբոսնում է) իբրև թե տեսել է Նելի Մեծ ամբողջի այգու ծառուղիներում թափառող մուսլ վանականին, իսկ տիկին Ռուպերտան... Դուք ճանաչո՞ւմ եք նրան:

— Զելլինիի տարեց սպասուհի՞ն:

— Ծիշտ այդպես: Ուրեմն, մի անգամ, երբ տիկին Ռուպերտան տառապում էր անքնությամբ, տեսել է, որ Մարսի հսկայական արձանի բերանից, քթանցքներից ու ականջներից բոց է ժայթքում: Գիտե՞ք, այն Մարսի, որ գրված է այգում...

— Այո, այո, այդ արձանն իսկական գլուխգործոց է,— բացականչեց Մարմանը:

— Կավ է ասված: Իրոք, գլուխգործոց է, ինչպես Զելլինիի բոլոր գործերը: Եվ ահա, հարգարժան դամաները, այսինքն՝ տիկին Պերինան և տիկին Ռուպերտան որոշեցին, որ երկուսն էլ տեսել են ուրվականին և որ սպիտակազգեստ մուսլ վանականն ամբողջ գիշեր թափառելուց հոգնած, արյուրականչին բարձրանում է Մարսի գլուխը (աստուց նզովված հոգու համար շատ հարմար ապաստարան է, այնպես չէ՞) և վառվում է այնտեղ դժոխային կրակի մեջ, որը դուրս է ժայթքում արձանի աչքերից, ականջներից, բերանից:

— Ի՞նչ անհեթեթություններ եք ասում, հարգելիս,— բացականչեց Մարմանը, չհասկանալով՝ լրջորե՞ն է խոսում գպրոցականը, թե ծաղրում է իրեն:

— Բայց դա շատ սովորական պատմություն է ոգիների մասին, սիրելի բարեկամ:

— Մի՞թե ձեզ նման խելամիտ մարդը, սիրելիս, կարող է հավատալ նման ցնդաբանությանը:

— Իսկ ես չեմ էլ հավատում,— պատասխանեց ժակ Օբրին:— Հենց դրա համար էլ ամբողջ գիշեր նստեցի ծառի վրա, ցանկանալով ամեն ինչ ջրի երեսը դուրս բերել ու իմանալ, թե ո՞վ է Նելի Մեծ ամբողջում տիրող իրարանցման պատճառը: Ես ձևացրի, թե գնում եմ, բայց այգու դռնակն իմ հետևից շրխկոցով փակելու փոխարեն, աղմուկով ծած-

կեցի իմ առաջ ու մթութեան մեջ աննկատելիորեն շարժվեցի դեպի ընտրածս ծառը: Մի քանի բույս հետո ես արդեն պահվել էի այդ ծառի սաղարթի մեջ, հենց ուղիղ Մարսի պլանի դիմաց: Եվ ի՞նչ եք կարծում, ի՞նչ տեսա:

— Ի՞նչ իմանամ,— պատասխանեց Մարմանը:

— Այդ էլ ճիշտ է: Կուհել կարող է, թերևս, միայն կախարդը: Սկզբում ես տեսա, թե ինչպես կիսաբաց եղավ ամբողջի դուռը... շքամուտքը գիտե՞ք...

— Այո, իհարկե, գիտեմ: Շարունակեք:

— Ուրեմն դուռը կիսաբաց եղավ և դուրս նայեց ինչ-որ մեկը, որը հավանաբար ցանկանում էր հավաստիանալ, թե բակում մարդ կա՞ արդյոք: Դա ոչ այլ ոք էր, եթե ոչ Հերմանը՝ հասարակ գերմանացին:

— Այդպես, այդպես, Հերմանը, հասարակ գերմանացին,— կրկնեց Մարմանը:

— Համոզվելով, որ բակը դատարկ է, նա աչք ածեց շուրջը, միայն իմ ծառին շնայեց, որովհետև, ինքներդ էլ հասկանում եք, նրա մտքով էլ շանցավ, թե ծառին կարող է մարդ նստած լինել. հետո նա դուրս եկավ, զգուշորեն փակեց դուռը, ցած իջավ արտասանդուղքից և գնաց ուղիղ դեպի Նելի Փոքր ամբողջի բակը: Այնտեղ նա երեք անգամ բախեց դուռը. հավանաբար դա սլայմանանշան էր. Փոքր ամբողջի դուռը բացվեց, դուրս նայեց ինչ-որ կին ու ներս թողեց գերմանացուն: Այդ կինը հարդարժան տիկին Պերի-նան էր, որը շատ է սիրում գիշերները զբոսնել մեր Գողթալի ընկերակցութեամբ:

— Այ քեզ բա՛ն, ե՛ն՛դձ պրևո:

— Սպասեցեք, սպասեցեք, այդ դեռ բոլորը չէր: Ես հետևում էի նրանց, մինչև որ մտան Փոքր ամբողջը. և հանկարծ ձախ կողմում լուսամուտի փեղկը ճռուաց: Ես արագորեն շրջվեցի ու տեսա այդ անպիտան Պագուլոյին: Դե, ո՞ւմ մտքով կանցներ, որ այդ սուսիկ-փուսիկ Պագուլոն, որն անբնդհատ «Հայր մեր» ու «Մուրբ սուրբ» է ասում, ընդունակ է գիշերները դուրս սողոսկել լուսամուտից: Զգուշորեն շուրջը նայելով, ճիշտ այնպես, ինչպես Հերմանը, նա դուրս

եկավ, ցած սահեց ջրհորդանով և, պատշգամբից պատշգամբ անցնելով, հասավ մյուս սենյակի լուսամուտին... Գիտե՞ք ում լուսամուտին, վիկոնտ:

— Բայց ի՞նչ իմանամ: Գուցե տիկին Ռուպե՞րտայի:

— Ա՛յդ էր պակաս: Նրա ինչի՞ն է պետք տիկին Ռուպերտան: Սկոցոնեի լուսամուտին, պարոնս: Ոչ ավել, ոչ պակաս՝ Սկոցոնեի լուսամուտին, Բենվենուտոյի սիրելի բնորդուհու, այդ հմայիչ, սևուլիկ աղջկա: Ինչ խարդախն է, հը՞: Ի՞նչ կասեք դրան:

— Իրոք, զվարճալի պատմութիւնն է,— համաձայնեց Մարմանը:— էլ ուրիշ ոչինչ չտեսա՞ք:

— Համբերութիւն, թանկագին վիկոնտ: Ամենահամեղ պատառը ես պահել եմ եզրափակման համար, այսպես ասած՝ բերանը քաղցրացնելու: Մենք դեռ շենք հասել վերջաբանին, բայց հանգիստ եղեք, կհասնենք:

— Դե լավ, լավ, շարունակեք: Ազնիվ խոսք, հարգելիս, շատ զվարճալի պատմութիւնն է:

— Սպասեցեք, դեռ տեսեք, թե ինչեր եմ պատմելու: Ուրեմն, այդպես, հետևում եմ Պագոլոյին, որը վիզը կոտրելու վտանգի ենթարկվելով անցնում է պատշգամբից պատշգամբ, ու նորից լսում եմ ինչ-որ աղմուկ, այս անգամ հենց ծառի տակ: Նայում եմ ցած ու տեսնում Ասկանիոյին, որը գաղտագողի դուրս է գալիս ձուլարանից:

— Բենվենուտոյի սիրելի աշակերտի՞ն:

— Հենց նրան, պարոն, այդ սուտ ճգնաժողովին, որը նման է եկեղեցական երգչախմբի տղայի և արտաքուսու աղջկա պես համեստ է: Զուր չի ասվում, որ արտաքինը խարուսիկ է:

— Շատ հետաքրքիր է: Ուրեմն Ասկանիոն դուրս եկավ տնից: Բայց ինչո՞ւ:

— Բանն էլ հենց այդ է՝ ինչո՞ւ: Այդ հարցը ես ինքս էլ տալիս էի ինձ: Բայց շուտով ամեն ինչ պարզվեց: Հերմանի և Պագոլոյի նման շուրջը նայելով ու համոզվելով, որ մոտակայքում ոչ ոք չկա, նա ձուլարանից քարշ տալով բերեց մի սանդուղք և, հենվելով Մարսի ուսերին, սկսեց վեր բարձ-

րանալ: Սանդուղքը գտնվում էր արձանի մյուս կողմում, այնպես որ ես աչքից կորցրի Ասկանիոյին ու արդեն սկսեցի մտածել, թե ուր չքացավ, երբ հանկարծ Մարսի աչքերը վառվեցին:

— Դե, այս անգամ դուք պարզապես փչում եք, հարգելիս,— բացականչեց Մարմանը:

— Ի՞նչ եք ասում, զուտ ճշմարտությունն է, վիկոնտ: Եվ եթե ես չիմանայի, թե րանն ինչում է, խոստովանում եմ, որ շատ վատ կզգայի ինձ: Բայց ես տեսա, թե Ասկանիոն ինչպես բարձրացավ արձանի վրա ու վստահ էի, որ նա էլ վառել է լույսը:

— Բայց Ասկանիոն գիշերով ի՞նչ գործ ուներ Մարսի դիտում:

— Այդ նույն հարցը ես տվեցի ինքս ինձ: Եվ րանի որ ոչ ոք չէր կարող պատասխանել իմ հարցին, որոշեցի ամեն ինչ ինքս պարզարանել: Աչքերս շորս արի և վերջապես ինձ թվաց, թե Մարսի ակնակապիճների միջից ինչ-որ ուրվական եմ տեսնում: Ազնիվ խոսք: Արձանի դիտում սպիտակազգեստ կնոջ տեսիլ կար, որի առաջ, ինչպես սուրբ աստվածածնի, ծունկի էր եկել մեր Ասկանիոն: Ցավոք սրտի տեսիլքը նստած էր մեջքն ինձ արած, և ես չէի տեսնում նրա զեմքը, րայց պարանոցն աչքիս առաջ էր: Օ՛, ի՞նչ սքանչելի պարանոց են ունենում ուրվականները, վիկոնտ, ձյան պես ճերմա՛կ, ճերմակ, պարզապես՝ կարապի վիզ: Եվ ինչպիսի՞ պաշտամունքով էր նայում Ասկանիոն այդ տեսիլքին: Անօրե՛ն պատանի: Ես իսկույն հասկացա, որ դա տեսիլք չէ, այլ ամենասովորական կին: Պատկերացնո՞ւմ եք, սիրած սուղիկան թաքցնել Մարսի դիտում: Ի՞նչ կատեք դրան հարգելիս:

— Հը՛մ, հը՛մ... այդ ամենն, իրոք, շատ տարօրինակ է,— ծիծաղելով և միաժամանակ ինչ-որ բան կշռադատելով, մրմնջաց Մարմանը:— Բավական տարօրինակ է: Եվ դուք դիտի շքեկա՞ք, թե ո՞վ է այդ կինը:

— Պարզապես խելքս չի կտրում: Իսկ դո՞ւք:

— Ես նույնպես... Դե՛, իսկ հետո՞: Ի՞նչ եղավ հետո:

— Հետո՞: Ես այնպես քրքշացի, որ կորցրի հավասարակշռութիւնս ու ցած ընկա ծառից և, եթե ժամանակին չկառչեի մի ուրիշ ճյուղից, ապա անպայման վիզս կկտրեի: Այդ ժամանակ որոշեցի, քանի որ ամեն ինչ տեսել եմ և բացի այդ անցել եմ ճանապարհի կեսը, ավելի լավ է թողնեմ գնամ: Այդպես էլ վարվեցի. կամացուկ դուրս եկա այգուց ու դեռ շարունակելով ծիծաղել, քայլերս ուղղեցի դեպի տուն, իսկ ճանապարհին հանդիպեցի ձեզ, և գուք ստիպեցիք ինձ պատմել այս պատմութիւնը: Եվ եթե դուք Բենվենուտոյի բարեկամն եք, խորհուրդ տվեք, թե ի՞նչ անեմ: Ինչ վերաբերում է տիկին Պերինային, ապա դա նրա անձնական գործն է. հարգարժան տիկինը շափահաս է, ուրեմն իրավունք ունի իր կյանքը տնօրինել: Բայց ինչպե՞ս վարվել Սկոցոնեի հետ: Ինչպե՞ս վարվել գեղանի Վենետիայի հետ, որը բնակութիւն է հաստատել Մարսի գլխում:

— Դուք ուզում եք, որ ես ձեզ խորհուրդ տամ:

— Այո, որպէս ազնիվ մտրդ: Տեսնում եք, որ բավականին ծանր դրութեան մեջ եմ ընկել, թանկագին... թանկագին... է՛հ... միշտ մոռանում եմ ձեր անունը:

— Իմ խորհուրդն է՝ լռել: Ավելի վատ ցանցառ մարդկանց համար, որոնք թույլ են տալիս իրենց քթից բռնած ման ածել: Իսկ հիմա, հարգելի ժակ Օբրի, թույլ տվէք շնորհակալութիւն հայտնել ձեզ հաճելի ընկերակցութեան համար և հետաքրքիր սպասմութեան, որովհետև ստիպված եմ բաժանվել ձեզանից: Ձեր վստահութեանը պատասխանատու եմ վստահութեամբ, բարեկամս. մենք Օտֆելյ փողոցում ենք, իսկ այստեղ ապրում է սրտիս տիրուհին:

— Գնաք բարով, իմ լավ, իմ թանկագին, իմ սքանչելի բարեկամ,— բացականչեց ժակ Օբրին, սեղմելով վիկոնտի ձեռքը:— Դուք ինձ իմաստուն խորհուրդ տվիք, և ես անպայման կհետևեմ այդ խորհրդին: Հաջողութիւն եմ ցանկանում, թող Կուպիդոնը ձեզ սլահապան լինի:

Եվ ուղեկիցները բաժանվեցին: Մարմանը շարունակեց իր ճանապարհը Օտֆելյ փողոցով, իսկ ժակ Օբրին թեքվեց Տրինիկի փողոցը, որպեսզի այնտեղից Քնարի փողոցը դուրս գա, որտեղ գտնվում էր նրա բնակարանը:

Մարմանը ճիշտ շասաց տարարախտ դպրոցականին, ինչի կռահում աղջկա կերպարանքով տեսիլքի ով լինելը, որի առաջ ծունկի էր եկել Ասկանիոն: Նա իսկույն հասկացավ, որ Մարսի գլխում բնակություն է հաստատել Կոլոմբյան և, որքան մտածում էր, այնքան ավելի էր համոզվում, որ իր ենթադրությունը ճիշտ է: Խեղճ Մարմանը ծանր կույուսթյան մեջ ընկավ: Ինչպես արդեն ասել ենք, նա ցանկանում էր անախորժություն պատճառել երեքին էլ՝ պրևոյին, կոմս դ'Օրբեկին և Չելլինին, իսկ դա ոչ մի կերպ չէր ստացվում: Իսկապես, եթե նա պահպաներ գաղտնիքը, կոմսն ու պրևոն կմնային իրենց ցավալի անտեղյակության մեջ, բայց կցնծար Չելլինին. և ընդհակառակը, հայտարարելով Կոլոմբյայի առևանգման մասին, նա հուսահատության կմատներ Բենվենուտոյին, բայց օգնած կլիներ պրևոյին գտնել աղջրկան, իսկ կոմսին՝ հարսնացուին: Դրա համար նա որոշեց լավ մտածել ու գտնել իր համար ամենաշահավետ որոշումը:

Մարմանը երկար շտատանվեց. նա գիտեր, որ այլևայլ անհասկանալի պատճառներով տիկին դ'էտամուլը շահագրքողոված է դ'Օրբեկի և Կոլոմբյայի ամուսնության մեջ ու որոշեց հետևյալ իսկ առավոտ ամեն ինչ պատմել Փավորիսուհուն: Այդպիսով նա կրարձրանար դքսուհու աչքում, ապացուցելով, որ ինքը, զուրկ լինելով քաջությունից, գոնե խորաթափանց մարդ է: Եվ այդ որոշումն ընդունելով, նա ճշտորեն կատարեց այն:

Երջանիկ պատահականությամբ, որը երբեմն օգնության է հասնում մարդկանց վատ գործի մեջ, բոլոր պալատականներն այդ առավոտ Լուվրում էին՝ գնացել էին Ֆրանցիսկ I-ին և Կարլոս V-ին ողջունելու: Ահա թե ինչու, երբ տիկին դ'էտամուլին զեկուցեցին վիկոնտ դե Մարմանի գալստյան մասին, նրա մոտ ընդամենը երկու հավատարիմ բարեկամ կար՝ պրևոն և կոմս դ'Օրբեկը:

Մարմանը հարգալից գլուխ տվեց դքսուհուն, որը պատասխանեց նրան իր առանձնահատուկ գոռոզ, հովանավորող ու մի քիչ արհամարհական ժպիտով: Բայց դա ամենևին

չվհատեցրեց Մարմանին, քանի որ դքսուհին այդպես ժրպտում էր ոչ միայն նրան, այլև շատ ու շատ պալատականների: Բացի այդ, վիկոնտը գիտեր, որ բավական է մի բառ արտասանի, և այդ արհամարհական ժպիտը տեղի կտա ամենաբարեհաճ ժպիտի:

— Ինչպե՞ս եք, մեսսեր դ'էստուրվիլ,— ասաց նա, դիմելով պրևոյին.— ձեր մոլորյալ զավակը դեռ տուն չի՞ վերագարձել:

— Նորի՞ց նույնը, վիկոնտ,— սպառնալից գոռաց պրևոն, զայրույթից կարմրատակելով:

— Հանգստացեք, հանգստացեք, ինչո՞ւ բորբոքվել, հարգարժան բարեկամս,— շարունակեց Մարմանը:— Ես այդ ասացի միայն նրա համար, որ եթե դուք մինչև հիմա չեք գտել Կոլոմբային, ես կարող էի մատնանշել, թե ձեր աղավանջակը որտեղ է բույն հյուսել:

— Դո՞ւր,— ամենասիրալիր տոնով հարցրեց դքսուհին:— Դե ասացեք՝ որտե՞ղ: Ասացեք, շո՛ւտ, հարգելի պարոն դե Մարման:

— Նելի Մեծ ամբոցի այգում կանգնեցրած Մարսի արձանի գլխի մեջ...

ՓԼՈՒՍ ԻՆՆԵՐՈՐԴ

Մարսը և Վեներան

Ընթերցողն, անկասկած, ինչպես և Մարմանը, կռահել է ճշմարտությունը, որքան էլ դա առաջին հայացքից տարօրինակ թվա: Այդպես ուրեմն, Կոլոմբան թաքնվում էր վիթխարի արձանի գլխում, Մարսը, ժակ Օբրիի արտահայտությամբ, ապաստան էր տվել Վեներային: Բենվենուտոն երկրորդ անգամ ճակատագրին օգնելու կանչեց արվեստը, մարդուն օգնելու՝ նկարչին: Նա իր արձանների մեջ ներդնում էր ոչ միայն հանձարեղ մտահղացում և քանդակագործի տաղանդ, այլև՝ վստահում էր նրանց իր ճակատագիրը: Առաջին անգամ, ինչպես հայտնի է, նա իր ստեղծագործության հետ

կապեց փախուստի ծրագիրը: Այժմ նա վիթխարի արձանին
էր վստահել Կոլոմբայի ազատությունն ու Ասկանիոյի եր-
ջանկությունը:

Սակայն այս ամենը պատմելուց հետո, որպեսզի ամեն
ինչ պարզ լինի, պետք է հետ դառնանք:

Երբ Չելլինին ավարտեց իր պատմութիւնը Ստեֆանայի
մասին, մի քանի բոպե լիակատար լուսթյուն տիրեց: Նկար-
չի մտավոր հայացքի առաջ, նրա բուն պատանեկության
վառ ու խստաշունչ պատկերների ֆոնի վրա փայլկտաց քսան
տարեկան հասակում մեռած Ստեֆանայի թախծոտ ու անա-
պարտ կերպարը: Ասկանիոն, գլխահակ, ջանում էր մտաբե-
րել իր օրորոցի վրա խոնարհված կնոջ գունատ դեմքը. չէ՞
որ մոր արցունքներն այնքան հաճախ էին ընկնում երեխայի
վարդագույն այտերին ու արթնացնում նրան: Իսկ Կոլոմբան
հուզված նայում էր Բենվենուտոյին, որին երբեմնի սիրել
էր իր նման անմեղ ու մանկամարդ մի աղջիկ: Չելլինիի
ձայնը հիմա թվում էր նրան սիրած պատանու ձայնի նման
բնքուշ, և այդ երկու տղամարդու կողքին, որոնք անսահմա-
նորեն սիրում էին նրան, Կոլոմբան զգում էր իրեն բացար-
ձակապես ապահով, ինչպես երեխան մոր ծնկների վրա:

— Հիմա Կոլոմբան կարո՞ղ է վստահել մի մարդու, որին
Ստեֆանան վստահել էր իր միակ որդուն՝ Ասկանիոյին,—
լուսթյունը խախտելով, հարցրեց Բենվենուտոն:

— Հայր եղբք ինձ համար, իսկ դուք, Ասկանիո, եղ-
բայր,— համեստորեն ու արժանապատվությամբ պատաս-
խանեց Կոլոմբան, նրանց մեկնելով երկու ձեռքը:— Ես
տոտանց տատանվելու ապավինում եմ ձեր պաշտպանությա-
նի: Պահպանեցեք ինձ ապագա ամուսնու համար:

— Շնորհակալ եմ, սիրելիս: Շնորհակալ եմ, որ հավա-
սում ես նրան,— բացականչեց Ասկանիոն:

— Ուրեմն, խոստանում եք ամեն ինչում հնազանդե՞լ
ինձ, Կոլոմբա,— հարցրեց Բենվենուտոն:

— Ամեն ինչում,— պատասխանեց Կոլոմբան:

— Կա՞վ: Այդ դեպքում լսեք, զավակներս: Ես միշտ հա-
վատացած եմ եղել, որ հաստատակամ լինելու դեպքում

մարդ կարող է հասնել ամեն ինչի: Կոմս դ'Օրբեկից ազատվելու, անպատվութիւնից պահպանելու և Ասկանիոյի հետ ամուսնացնելու համար պետք է ժամանակ, իսկ մի քանի օր հետո, Կոլոմբա, դուք դառնալու եք կոմսի կինը: Ուրեմն, գլխավորը հիմա այդ անցանկալի հարսանիքը հետաձգելն է: Ճիշտ եմ ասում. Կոլոմբա, զավակս, քույրս, սիրելի դուստրբա: Կյանքում լինում են ծանր բոպեններ, երբ ստիպված ես զանցանք կատարել հանցագործութեան առաջն առնելու համար: Այդքան համարձակութիւն ու հաստատակամութիւն կունենա՞ք, Կոլոմբա: Ձեր մաքուր ու անդաւլաճան սիրո մեջ դեպի Ասկանիոն կգտնե՞ք գեթ մի քիչ անվախութիւն: Պատասխանեք, Կոլոմբա:

— Թող Ասկանիոն պատասխանի,— պատանուն ժպտալով, ասաց Կոլոմբան:— Ես պատկանում եմ նրան ու կանեմ ամեն բան, ինչ նա կամենում է:

— Մի անհանգստացեք, ուսուցիչ, Կոլոմբան քաջութիւն կունենա,— պատասխանեց Ասկանիոն:

— Այդ դեպքում վստահեք մեր պատվին, Կոլոմբա, և համարձակորեն դուրս եկեք մեզ հետ այս տնից:

Ուսուցչի այդ բառերը լսելով, Ասկանիոն շկարողացավ ծածկել զարմանքը: Կոլոմբան մի բոպե լուռ նայում էր տղամարդկանց, այնուհետև վեր կացավ նստարանից ու սլորդամտորեն ասաց.

— Ես պատրաստ եմ:

— Օ՛հ, Կոլոմբա, Կոլոմբա,— այդ տներեր վստահութիւնից մինչև հոգու խորքը զգացված, բացականչեց Բենվենուտոն:— Դուք ազնվագույն, սուրբ արարած եք: Չնայած դրան, Ստեֆանային ճանաչելուց հետո, ես պահանջկոտ եմ դարձել մարդկանց նկատմամբ: Ձեր պատասխանից էր կախված ամեն ինչ: Բայց հիմա մենք փրկված ենք: Փամը հասել է. աստված ինքն է օգնում մեզ: Չկորցնենք թանկագին ժամանակը. տվեք ձեր ձեռքը և դնանք:

Կոլոմբան քողն իջեցրեց դեմքին, ասես ցանկանալով ծածկել շփոթմունքի կարմրութիւնը, և գնաց Բենվենուտոյի ու Ասկանիոյի հետևից: Նելի Մեծ և Փոքր ամբոցները միաց-

նող դուռը փակ էր, բայց բանալին կողպեքի մեջ էր: Բենվենուտոն անաղմուկ բացեց այն:

Այդ ժամանակ Կոլոմբան կանգ առավ:

— Մի քիչ սպասեք, — հուզմունքով ասաց նա:

Սունկի գալով հայրական տան շեմին, որն արդեն չէր կարող հուսալի ապաստան լինել, աղջիկն սկսեց աղոթել: Ի՞նչ էր խնդրում նա՝ աստծուն է հայտնի, բայց ըստ երևույթին թողություն էր հայցում հոր և իր մեղքերի համար: Հետո, խաղաղությամբ ու հաստատակամությամբ լեցուն, Կոլոմբան ոտքի կանգնեց և Չելլինիի հետ շարունակեց ճանուպարհը: Ասկանիոն, խիստ անհանգստացած, գնում էր նրանց հետևից ու քնքշությամբ նայում գիշերային խավարի մեջ իր առաջ փայլատակող սպիտակ շրջազգեստին: Հուզմունքից զողալով, ինչպես սովորաբար մարդ սարսռում է կյանքի վրձնական բոպեններին, նրանք կարեցին-անցան նեյի Մեծ ամբոցի այգին: Նրանց ականջին հասան քեֆ անող ենթավարպետների երգն ու ծիծաղը. այդ օրն, ինչպես գիտենք, ամբողջում տոն էր:

Հասնելով Մարսի արձանին, Չելլինին թողեց Ասկանիոյին ու Կոլոմբային արձանի պատվանդանի մոտ և, ձուլարանից սանդուղք բերելով, դեմ տվեց արձանին: Այդ ամենը տեղի էր ունենում լուսնի աղոտ լույսի սակ: Բենվենուտոն ծունկի եկավ Կոլոմբայի առաջ և նրա խստաշունչ հայացքի մեջ սրտաշարժ պատկառանքի արտահայտություն երևաց:

— Մանկիկս, — ասաց նա, — երկու ձեռքով գրկիր պարանոցս ու ամուր պահվիր:

Կոլոմբան լուռ հնազանդվեց, և Բենվենուտոն թեթևորեն, փետուրի նման կտրեց նրան գետնից:

— Ես կարծում եմ, — դիմեց նա Ասկանիոյին, — որ սիրասուն եղբայրը թույլ կտա անվտանգ տեղ հասցնել իր բրոջը:

Եվ մկանուտ, ամրակազմ Չելլինին սկսեց բարձրանալ սանդուղքով, իր թանկարժեք բեռը տանելով այնքան ճարպիկորեն, ասես աղջիկը փոքր թռչնակ լիներ: Իսկ Կոլոմբան, գլուխը Բենվենուտոյի ուսին հակած, շղարշի միջից գննում էր իր փրկարարի առնական բարի դեմքը փստահության ու

դասեր մտերմության զգացումով, որն ավանդ, մինչ այդ ան-
ժանոթ էր նրան: Չելլինին, հիրավի, երկաթյա կամք ունե-
րնդամենը երկու ժամ առաջ նկարիչը հաճույքով կգոհեր իր
կյանքը հանուն այդ աղջկա սիրո, իսկ հիմա, երբ աղջիկն իր
գրկում էր, նրա սիրտը բաբախում էր խաղաղորեն և դիմքի
ոչ մի մկանը չցնցվեց: Բենվենուտոն հրամայեց իր սրտին
խաղաղվել, և սիրտը հնազանդվեց:

Մարսի պարանոցին հասնելով, Բենվենուտոն բացեց
այնտեղ եղած փոքրիկ դռնակը, մտավ պատերազմի աստծու
գլխի մեջ և Կոլոմբային դրեց ութ ոտնաչափ տրամագիծ և
տաս ոտնաչափ բարձրություն ունեցող բոլորակ սենյակի
հատակին: Օդն ու լույսը սենյակ էին թափանցում վաթսուն
ոտնաչափ բարձրության հասնող արձանի աչքերի, քթանց-
քերի ու բերանի միջով: Չելլինին սարքել էր այդ սենյակը,
երբ աշխատում էր Մարսի դիխի վրա, իր գործիքներն այն-
տեղ սյահելու համար, որպեսզի օրը մի քանի անգամ ստիպ-
ված շինի ցած իջնել: Հաճախ նա իր հետ ճաշ էր բերում և
ուտում էր այդ յուրօրինակ սենյակի կենտրոնում դրված
սեղանի մոտ նստած: Այդպիսով, նույնիսկ ուտելու համար
նա ստիպված չէր լինում ցած իջնել: Այդ սարքավորումն
այժման դուր եկավ Բենվենուտոյին, որ նա հենց այդտեղ
դրեց նաև մի նեղլիկ մահճակալ և վերջին ժամանակներս ոչ
միայն ճաշում, այլև՝ հանգստանում էր Մարսի գլխի մեջ:
Շատ բնական է, որ նա մտածեց այստեղ թաքցնել Կոլոմբա-
յին. ավելի ապահով ապաստարան դժվար էր գտնել:

— Որոչ ժամանակ, Կոլոմբա, դուք պետք է ապրեք այս
սենյակում, — ասաց նա աղջկան, — և միայն գիշերները
ցած կիջնեք: Մնացեք այստեղ ամենազոր ասածու և մեր՝
ձեր լավագույն բարեկամների պաշտպանության տակ ու
սպասեք իմ ջանքերի ավարտին: Հուսանք, որ Յուպիտերը
կվերջացնի Մարսի սկսած գործը, — ժպտալով ավելացրեց
նա, մտաբերելով թագավորի խոստումը: — Բառերիս նշա-
նակությունը դուք հետո կհասկանաք: Չէ՞ որ մեզ համար
հոգ է տանում ամբողջ Ոլիմպոսը, իսկ ձեզ համար, ման-
կիկս, աղոթում են բոլոր հրեշտակները: Ինչպե՞ս կարող ենք
հաջողության շահանել: Դե ժպտացեք, սիրելի Կոլոմբա, եթե

ոչ ներկային, ապա գոնե ապագային: Հավատացեք, դրությունն անհուսալի չէ: Հույս գրեք, մանկիկս, եթե ոչ ինձ վրա, ապա՝ աստծո: Ես էլ մի ժամանակ նստել եմ զնդանում, որը ձեր բանտից էլ վատ էր, և միայն հույսն ստիպեց ինձ մոռանալ գերության մասին: Իսկ հիմա մնաք բարով: Մենք այլևս չենք տեսնվի, մինչև կհասնի ձեր ազատման օրը: Իսկ մինչ այդ ձեր մասին կհոգա եղբայրդ՝ Ասկանիուն: Չէ՞ որ նա կասկածի տեղիք չի տվել և նրան ոչ ոք այնքան խստորեն չի հետևի, որքան ինձ: Ես նրան կհանձնարարեմ այս արվեստանոցը դարձնել կույսի խուց: Լավ հիշեք հրածեղտի պահին ասած խոսքս, դուք արեցիք ամեն բան, ինչ կախված էր ձեզնից, խիզախ ու դյուրահավատ երեխա. մնացածը թողեք ինձ և հույս դրեք նախախնամության վրա: Ինչ էլ որ պատահի, ինչպիսի անհուսալի դրության մեջ էլ որ ընկնեք, նույնիսկ մինչև ճակատագրական «Հնազանդ եմ» արտասանելը, որն ընդմիջտ կապելու է ձեզ կոմս դ'Օրբեկի հետ, կասկածի տակ շառնեք, Կոլոմբա, ձեր բարեկամին ու հորը: Հույս դրեք աստծո, ինձ և Ասկանիոյի վրա, մանկիկս: Երդվում եմ, փրկությունը կգա ժամանակին: Կարո՞ղ եք արդյոք կուրորեն հավատալ և ցուցաբերել հարկ եղած հաստատակամությունը, ասացեք:

— Այո՛, — վստահորեն ասաց Կոլոմբան:

— Ուրեմն հիանալի է: Իսկ հիմա մնաք բարով: Ոչ երկար ժամանակով թողնում եմ ձեզ այս համեստ կացարանում: Ասկանիոն կբերի ձեզ համար այն ամենը, ինչ անհրաժեշտ է: Մնաք բարով, Կոլոմբա:

Նա բարեկամաբար ձեռք մեկնեց աղջկան, բայց Կոլոմբան ճակատը դեմ արեց համբույրի համար, ինչպես սովոր էր անել հորը հրաժեշտ տալիս: Բենվենուտոն ցնցվեց, սակայն անմիջապես խնդրեց իրեն հուզող զգացումներն ու մտքերը: Նա ձեռքով շփեց աչքերը, ասես ինչ-որ տեսիլք քշելով և Կոլոմբայի պայծառ ճակատին հայրական քնքուշ համբույր դրոշմեց:

— Մնաս բարով, սիրելի Ստեֆանայիս դուստր, — շշրնջաց նա:

Այդ բառերն արտասանելով, Բենվենուտոն արագորեն ցած իջավ իրեն սպասող Ասկանիոյի մաս: Երկուսն էլ, ասես ոչինչ սլատահած շիհեր, միացան քեֆ անող ենթավարպետներին, որոնք արդեն ավարտել էին ընթրիքը, բայց շարունակում էին գինի խմել:

Նոր, տարօրինակ, անհասկանալի կյանք սկսվեց Կոլումբայի համար, և այդ կյանքն աղջկան թվաց թագուհուն վայել:

Ինչպես արդեն գիտենք, սենյակում կային մահճակալ ու սեղան. Ասկանիոն դրանց ավելացրեց թավշեպատ, ցածրիկ բաղկաթոռ, մենետիկյան հայելի, կրոնական բովանդակության գրքեր, որոնք ընտրել էր ինքը՝ Կոլումբան, սքանչելի դրվագված խաչելություն և արծաթե սկահակ՝ Չելլինիի գործը, որի մեջ ամեն գիշեր թարմ ծաղիկներ էին դրվում:

Ահա այն ամենը, ինչ կարող էր տեղավորել այդ սպիտակ իուցը, որն այդքան հոգեկան գեղեցկություն ու անմեղություն էր պարփակում իր մեջ:

Յերեկը Կոլումբան սովորարար քնում էր, այդպես էր խորհուրդ տվել Ասկանիոն, վախենալով, որ աղջիկը որևէ անդգույշ շարժումով հանկարծ կմատնի իրեն: Բայց հենց որ երկնքում վառվում էին աստղերը, նա արթնանում էր, ծունկի գալիս անկողնում ու երկար ժամանակ աղոթում էր գլխավերևը կախված խաչելության առաջ. հետո հագնվում էր, սանրում երկար, գեղեցիկ մազերը և սոխակի դաշլայլոցի սակ երազում: Գալիս էր Ասկանիոն, դնովի սանդուղքով վեր մագլցելով, բախում էր փոքրիկ դռնակը: Եթե Կոլումբան արդեն հագնված էր լինում, ներս էր թողնում ընկերոջը, որը մնում էր նրա մոտ մինչև կեսգիշեր: Կեսգիշերին Ասկանիոն գնում էր իր սենյակը, իսկ Կոլումբան, եթե եղանակը լավ էր լինում, իջնում էր այգի ու դբոսնում, հանձնվելով երազանքներին, որոնք ծնունդ էին առել դեռևս իր սիրած ժառուղում զրոսանքներ կատարելու ժամանակ և հիմա մոտ էին իրենց իրականացմանը: Երկու ժամ հետո պայծառ տեսիլքը վերադառնում էր իր հարմարավետ բույնը և գիշերվա մնացած մասն անց էր կացնում զմայլվելով զբոսանքի ժա-

մանակ հավաքած ծաղիկների բույրով, ստիակի դալալով ու ականջ դնելով Պրե-Օ-Կլերից լավող աքլորականչին:

Լուսադեմին Ասկանիոն նորից էր գալիս. նա հարսնացուի համար բերում էր ամբողջ օրվա ուտելիք, որը Չելլինիի աջակցութեամբ ճարպկորեն թոցնում էր տիկին Թուպերտայից: Սիրահարները սքանչելի զրույցներ էին վարում. երազում ապագա երջանկության մասին, մտաբերում առաջին հանդիպումների քաղցր պահերը: Պատահում էր, որ Ասկանիոն լուռ նայում էր իր աստվածուհուն, իսկ Կոլոմբան, նույնպես լուռ, ժպտալով ընդունում էր նրա երկրպագութունը: Հաճախ նրանք բաժանվում էին՝ հանդիպման կարճատև ընթացքում ոչ մի բառ չարտասանելով, բայց այդ տեսակցությունները շատ ավելի էին գոհացնում նրանց, քան որևէ զրույց: Չէ՞ որ նրանց սրտերը ոչ միայն անխոս հասկանում էին միմյանց, այլև լի էին ծածուկ մտքերով, սրունք հայտնի էին միայն աստծուն:

Պատանեկության տարիներին միայնությունն ու տանջանքը վսեմացնում, ազնվացնում են հոգին՝ մինչև կյանքի վերջը երիտասարդ պահելով այն. Կոլոմբան, այդ հպարտ, անմատչելի կույսը միաժամանակ և աշխույժ, ուրախ աղջիկ էր. այդ պատճառով բացի այն օրերից, ավելի ճիշտ՝ գիշերներից (որովհետև, ինչպես գիտենք, սիրահարները խախտել էին ժամանակի բնական ընթացքը), երբ նրանք զրույցում էին ու երազում, լինում էին և այնպիսի գիշերներ, երբ երկուսն էլ զվարճանում էին ու երեխաների պես ծիծաղում. բայց տարօրինակ է, նրանց համար առանձնապես սրագ էին անցնում ոչ այդ գիշերները: Սիրո համար, ինչպես լույսի ամեն մի աղբյուրի, անհրաժեշտ է մթութուն՝ ավելի պայծառ շողալու համար:

Ոչ մի անգամ, ոչ մի բառով Ասկանիոն չխոսվեց այդ մարուր ու երկշոտ աղջկա հանգիստը, որը նրան եղբայր էր անվանում: Նրանք երկար ժամանակ մեն-մենակ էին լինում և սիրում էին իրար, բայց հենց այդ միայնությունը նրանց մերձեցնում էր աստծուն, ստիպում ավելի զգալ նրա ներկայությունը և սրբութեան պես պահպանել իրենց սերը:

Հենց որ արշալույսի առաջին շողերը սսկեզօծում էին ծառերի կատարները, Կոլոմբան ափսոսանքի հառաչանքով հրաժեշտ էր տալիս ընկերոջը, բայց հրաժեշտ էր տալիս սիրահարված Զուլիեաի նման մի քանի անգամ հետ կանչելով: Մերթ Ասկանիոն, մերթ Կոլոմբան միշտ մոտանում էին ինչ-որ կարևոր բան ասել իրար: Բայց, վերջ ի վերջո, այնուամենայնիվ, ստիպված էին լինում բաժանվել:

Մի այնության մեջ Կոլոմբան հանձնվում էր երազանքների: ականջ դնելով հինավուրց այգու լորենիների տակ երգող թռչնակներին և իր սրտում հնչող սիրո քնքուշ ձայնին: Իսկ կեսօրին, աղոթելով, քնում էր բարեպաշտ մարդու քնով: Գնալիս, Ասկանիոն, իհարկե, տանում էր և սանդուղքը:

Ամեն առավոտ Կոլոմբան փետրավոր երգիչների համար փշրանքներ էր թողնում հսկա արձանի վարի շրթունքին: Առաջին օրերին փոքրիկ ալպակներն արագորեն ճանկում էին կերն ու շտապում փախչել, բայց կամաց-կամաց ընտելացան դեռատի տանտիրուհուն. չէ՞ որ թռչնակները շատ լավ հասկանում են աղջիկներին, որոնց հոգին իրենց նման թեթև է ու թևավոր: Խոսնակները հյուր էին մնում Կոլոմբայի մոտ ավելի ու ավելի երկարատև և հյուրասիրության համար վճարում էին գրնգուն երգերով: Մի կարմրակատարիկ այնքան սիրտ առավ, որ առավոտյան ու երեկոյան ներս էր թռչում ւննյակ և ուտում ուղղակի նրա ձեռքից: Իսկ երբ գիշերներն ավելի դով դարձան, կարմրակատարիկը մի անգամ մանկամարդ գերուհուն թույլ տվեց բռնել իրեն, և Կոլոմբան նրատեցրեց նրան իր ուսին, որտեղ թռչնակը քնեց ամբողջ գիշեր, նույնիսկ Ասկանիոյի հետ ունեցած տեսակցության և զբոսանքի ժամանակ: Այդ օրից կարմրակատարիկն ամեն երեկո թռչում գալիս էր Կոլոմբայի ուսին քնելու, իսկ արշալույսի առաջին շողերի հետ սկսում էր բարձրաձայն ճովողել: Այդ ժամանակ աղջիկը վերցնում էր թռչնակին, տալիս Ասկանիոյին, որ համբուրի, ու բաց էր թողնում:

Այդպես էր ընթանում Կոլոմբայի կյանքը վիթխարի Մարսի գլխի մեջ: Եվ երկու անգամ միայն խախտվեց այդ կյանքի խաղաղ ընթացքը. դա տեղի ունեցավ խուզարկությունների ժամանակ, որոնց մասին արդեն պատմել ենք: Առաջին

անդամ Կոլումբային արթնացրեց հոր ձայնը. նա վախեցած վեր թռավ, մտածելով, որ երազ է տեսնում: Բայց արձանի պատվանդանի մոտ իրոք կանգնած էր պարոն դ'էստուրվիլը, և Բենվենուտոն ասում էր նրան.

— Ձեզ հետաքրքրում է իմ ստեղծագործութիւնը, պարոն: Սա Մարսի արձանն է, որը նորին մեծութուն Ֆրանցիսկ 1-ը բարեհաճել է պատվիրել ինձ Ֆոնտենբլոյի համար: Ինչպես տեսնում եք, մեծ բան չէ, վաթսուն ոտնաչափ բարձրութիւն ունի:

— Այո, այո, արձանը լավն է և բավական ազդեցիկ, — սյառասխանեց մեասեր դ'էստուրվիլը: — Բայց շարունակենք մեր որոնումները. եթե չեմ սխալվում, ես այստեղ եմ եկել ոչ Մարսին փնտրելու համար:

— Այո, սրան փնտրելու հարկ չէր լինի:

Եվ նրանք անցան-գնացին:

Կոլումբան ծունկի եկավ իր սենյակում և, ձեռքերը կարկոտելով, պատրաստ էր բացականչել, «Հայրի՛կ, ես այստեղ եմ»: Չէ՞ որ դժբախտ ծերունին փնտրում է նրան ամենուրեք... դուցե դառնորեն արցունք է թափում: Բայց մտաբերելով կոմս դ'Օրբեկին և տիկին դ'էտամպի նողկալի դիտափորութիւնները, նա խեղդեց այդ պոթկումը: Իսկ երկրորդ այցելութեան ժամանկ, երբ հոր ձայնի հետ մեկտեղ Կոլումբայի ականջին հասավ ատելի կոմսի ձայնը, նրա մտքով իսկ շանցավ տեղից շարժվել:

— Այ բեզ բան, — բացականչեց դ'Օրբեկը՝ կանգ առնելով Մարսի պատվանդանի մոտ: — Սա ոչ թե արձան է, այլ ամբողջ մի տուն. եթե ձմեռը կանգնած մնա այստեղ, գարնանը հավանաբար ծիծեռնակները բույն կհյուսեն սրա մեջ:

Այդ օրը, երբ Կոլումբային այնքան սարսափեցրեց փետուցուի ձայնը, Ասկանիոն նամակ բերեց նրան Չելլինիից:

«Չավակս, ես ստիպված եմ մի քանի օր բացակայել, բայց հանգիստ եղեք, ամեն ինչ կարգավորել եմ ձեր ազաման ու երջանկութեան համար: Թագավորը խոստացել է կատարել ցանկացածս խնդիրքը, իսկ դուք գիտեք, որ նա երբեք չի խախտում իր խոստումը: Ձեր հայրն էլ այսօր մեկնում է: Գոտտահատվեք, Կոլումբա, ես ամեն ինչ նախապատրաստել

եմ: Եվ կրկնում եմ. եթե նույնիսկ կանգնած լինեք եկեղեցում: պատրաստվելով արտասանել ճակատադրական բառը, որն ընդմիջտ կկուսի ձեր բախտը կոմսի հետ, չվախենաք և հավատացե՛ք՝ նախախնամությունը ժամանակին օգնության կհասնի ձեզ: Երդվում եմ, որ այդպես կլինի: Մնաք բարով:

Ձեր հայր՝

Բ Ե Ն Վ Ե Ն Ո Ւ Մ Ո Չ Ե Լ Լ Ի Ն Ի »:

Այդ նամակն ուրախալի հույս ներշնչեց Կոլոմբային, սակայն մեծ վնաս հասցրեց սիրահարներին, մոռացնել տալով սպառնացող վտանգը: Պատանեկությանը հատուկ են կտրուկ անցումներ լիակատար հուսահատությունից անսահման վրատահության: Երկինքը նրանց աչքում կամ ծածկված է գորշ ամպերով, կամ ջինջ կապույտ է: Չելլինիի նամակից և պրեվոյի բացակայությունից կրկնակի խաղաղված, Կոլոմբան ու Ասկանիոն մոռացան զգուշության մասին և ամբողջապես տրվեցին իրենց սիրուն: Կոլոմբան իր գիշերային զբոսանքների ժամանակ այնքան անվախ դարձավ, որ տիկին Պերինան տեսավ նրան և բարեբախտաբար ուրվականի տեղ դրեց. Ասկանիոն մի անգամ մոռացավ վրա բերել վարագույրը, և տիկին Ռուպերտան տեսավ Մարսի գլխում վառվող լույսը: Երկու շատախոս տիկնանց պատմությունները շարժեցին Փակ Օբրիի հետաքրքրասիրությունը և բացբերան դարոցականը, Մոլիերի «Կանանց դպրոց»-ի գործող անձերից մեկի՝ Օրասի, նման բացեց գաղտնիքը հենց նրան, ով պետք է որ այդ մասին շիմանար: Նրա ցավալի դյուրահավատության հետևանքները մեզ արդեն հայտնի են:

Բայց վերադառնանք դ՛էտամպ ամրոց:

Երբ վիկոնսին հարցրին, թե ինչպես է ձեռք բերել այդ արժեքավոր տեղեկությունները, Մարմանը խորհրդավոր տեսք ընդունեց և չպատասխանեց: Ծճմարտությունը շափազանց անպաճույճ էր ու ամենևին պատիվ չէր բերում նրա խորաթափանցությանը: Այդ պատճառով նա հասկացնել տվեց, որ այդ փայլուն, զարմանալի հայտնագործությունը հսկայական ջանքերի ու բարդ ինտրիգների արդյունք է: Դքսուհին ցնծում էր. նա բորբոքված անցուդարձ էր անում

սենյակում, հարցերի տարափ տեղալով վիկոնտի դիտին: Այդպես, ուրեմն, փոքրիկ խոռվարարուհին, որն այնքան գրե-
խացավանք շատճառեց իրենց, վերջապես բռնվել է: Տիկին
դ՛էտամարը ցանկացավ անպայման գնալ Նելի ամրոցը, ան-
ձամբ համոզվելու համար, որ որոնումներն, իրոք, բարեհա-
ջող են ավարտվել: Եվ, բացի այդ, տեղի ունեցած իրադար-
ձություններից՝ փախուստից, կամ ավելի ճիշտ առևանգումից
հետո, Կոլոմբային շէր կարելի թողնել Նելի ամրոցում: Դըք-
սուհին հոգ կտանի ամեն ինչի մասին. նա Կոլոմբային իր
դղյակը կբերի և շատ ավելի լավ կհետևի նրան, քան դուեն-
յան, կամ շխանդող փեսացուն: Նա մրցակցուհու պես կհսկի
աղջկան: Այդպիսով, Կոլոմբան հուսալի պաշտպանության
տակ կլինի:

Դքսուհին հրամայեց կառք պատրաստել:

— Այս ամբողջ պատմությունը համարյա գաղտնիք է
մնացել,— ասաց նա, դիմելով պրևոյին ու ավելացրեց.—
Իսկ դուք գ՛Օրբեկ, հուսով եմ, այնպիսի մարդ չեք, որ նշա-
նակություն տաք աղջկա փախուստի աննշան միջադեպին,
այնպես չէ՞: Այդ պատճառով հիմք չեմ տեսնում ձեր հար-
սանիքը խափանելու և ձեր դիտավորություններից հրաժար-
վելու համար:

— Օ՞, տիկին,— բացականչեց մեսսեր դ՛էստրուվիլը,
խոր գլուխ տալով:

— Հարսանիքը կկայանա նույն պայմաններով, այնպես
չէ՞, դքսուհի,— հարցրեց գ՛Օրբեկը:

— Անշուշտ, սիրելի կոմս: Իսկ ինչ վերաբերվում է Բեն-
վենուտոյին, լինի նա այս նողկալի առևանգման հանցագոր-
ծը, թե գործակիցը, հանգիստ եղեք, ես նրա հետ հաշիվ
կմաքրեմ,— շարունակեց տիկին դ՛էտամարը:— Ձեր վրեժը
լուծելով, ես իմ վրեժն էլ լուծած կլինեմ:

— Բայց ասում են, դքսուհի,— առարկեց Մարմանը,—
իրբև թե թագավորը, արվեստի երկրպագու լինելով, խոս-
տալի է Չելլինիին կատարել նրա ցանկացած խնդիրն այն
դեպքում, եթե Յուպիտերի ձուլումը հաջող ավարտվի:

— Մի անհանգստացեք, վիկոնտ, և ամեն ինչ թողեք իմ

տնօրինութեանը: Այդ օրվա համար ես այնպիսի անակնկալ կատարաստեմ, որ Չիլիինն ամենևին չի սպասում:

Եվ իրոք, ավելին անհնարին էր անել: Վաղուց ոչ ոք չէր տեսել դրսուհուն այգքան աշխուժացած ու հմայիչ: Նա ոտից գլուխ փայլում էր ուրախութունից: Տիկին դ՛էտամայն անմիաշարժ ուղարկեց մեսսեր դ՛էտուրվիլին իր պահնորդներին բերելու, և քիչ հետո վիկկոնտո դե Մարմանը, կոմս դ՛Օրբեկը և պրևոն, զինված պահակախմբի առաջնորդութեամբ, հայտնվեցին նեյի ամրոցում: Տիկին դ՛էտամայն իր կառքը կանգնեցրեց հեռվում, գետափին և, անհամբերութունից այրվելով, անընդհատ դուրս էր նայում կառքի լուսամուտից:

Այդ ժամանակ ենթավարպետները ճաշի էին նստած. Ժան-Ճատիկը, Պագոլոն, Ասկանիոն և երկու կանայք մենակ էին ամրոցում: Բենվենուտոյին սպասում էին միայն մեկերկու օր հետո, առավոտյան: Հյուրերին տեսնելով, Ասկանիոն որոշեց, որ պրևոն ցանկանում է երրորդ խուզարկութունը կատարել և, խստորեն հետևելով ուսուցչի հրահանգներին, ոչ միայն արդիւքների առաջ շկանգնեցրեց այցելուներին, այլ ընդհակառակը՝ դիմավորեց նրանց մեծագույն հարգանքով:

Պրևոն և նրա ուղեկիցները գնացին ուղիդ դեպի ձուլարանը:

— Բացեք այս դուռը, — Ասկանիոյին դիմեց դ՛էտուրվիլը:

Պատանու սիրտը ճլվնց վատ նախազգացումից: Սակայն նա կարող էր սխալված լինել և մտածելով, որ փոքրագույն վարանումը կասկածի տեղիք կտա, խաղաղորեն նրան հանձնեց բանալին:

— Վերցրեք այս երկար սանդուղքը, — հրամայեց դ՛էտուրվիլն իր մարդկանց:

Պահնորդները հնավանդվեցին, և պրևոն տարավ նրանց ուղիդ դեպի Մարսի արձանը: Պարոն դ՛էտուրվիլն ինքը հարմարեցրեց սանդուղքը և արդեն պատրաստվում էր բարձրանալ, բայց Ասկանիոն շղիմացավ. զայրույթից ու վախից գունատված, նա վճռականորեն ոտքը դրեց սանդուղքին ու բացականչեց:

— Ի՞նչ եք անում, մեասեր: Այս արձանը ուսուցչիս մեծագույն ստեղծագործութունն է, և նա պատվիրել է ինձ պահպանել այն: Նախազգուշացնում եմ՝ ով դիպչի արձանին, կռպանվի:

Եվ նա գոտու տակից դուրս քաշեց բարակ, սուր դաշույնը՝ այնքան լավ կոփված, որ մի հարվածով կարելի էր ոսկեդրամը կիսել:

Պրեոն նշան արեց պահնորդներին, և Ասկանիոյի վրա հարձակվեցին ութ մարդ, շհաշված իրեն՝ դ՛էստրուվիլին, Մարմանին և կոմս դ՛Օրբեկին: Պատանին խիզախորեն պաշտօնյանվում էր, նույնիսկ երկուսին վիրավորեց, բայց ի վերջո ստիչված էր հանձնվել թվով գերակշռող հակառակորդին: Նրան բռնեցին, ցած գլորեցին, կապկպեցին, բերանը խցոց դրին, և պրեոն սկսեց բարձրանալ սանդուղքով, երկու զինված պահնորդի ուղեկցությամբ, որպեսզի թիկունքից պաշտօնյանված լինի:

Կոլոմբան, տեսնելով այդ ամենը, սրռեց, որ Ասկանիոն սպանված է, և հայրը գտավ նրան ուշաթափված:

Սակայն ուշագնաց աղջկա տեսքը ավելի շուտ զայրացրեց, քան անհանդստացրեց պրեոյին: Նա կոպտությամբ ուսին չրեց աղջկան ու ցած սարավ: Հետո անկոչ հյուրերը բռնեցին վերադարձի ճանապարհը: Պահնորդները տանում էին Ասկանիոյին, որին զգաստորեն հսկում էր դ՛Օրբեկը: Պաղոյուն կանգնած էր անշարժ ու նայում էր, թե ինչպես են տանում բնկերոջը: Ժան-Ճստլիկը չքվեց շղիտես ուր: Եվ միայն Սկոցոնեն, ամենևին չհասկանալով, թե ինչ է կատարվում, փորձեց դեմ կանգնել նրանց:

— Ի՞նչ է կատարվում: Ի՞նչ է պատահել, պարոնայք,— դոռում էր նա:— Ինչո՞ւ եք տանում Ասկանիոյին: Ո՞վ է այս կինը:

Այդ պահին քամին բարձրացրեց Կոլոմբայի դեմքը ծածկող քողը, և Սկոցոնեն ճանաչեց այն աղջկան, որը բնորդուհի էր եղել Հեբեի արձանի համար:

Խանդից գունատվելով, Սկոցոնեն արագ մի կողմ քաշվեց և լուռ դուրս թողեց պրեոյին, գերուն և պահնորդներին:

— Ի՞նչ է նշանակում սա: Ինչո՞ւ եք այսքան կոպտաբար վարվել երիտասարդի հետ,— հարցրեց տիկին դ՛էտամպը, տեսնելով կապկսված, գունատ ու արնաթաթախ Ասկանիոյին:— Անմիջապես քանդեք կապանքները: Հենց հի՛մա: Կսո՞ւմ եք:

— Տիկին, այս պատանին կատաղորեն դիմադրում էր և վիրավորեց իմ պահնորդներից երկուսին,— ասաց պրևոն:

— Ես վստահ եմ, որ սա Բենվենուտոյի համագործակիցն է և, ազնիվ խոսք, պետք է անհապաղ մի ապահով տեղ ուղարկել սրան: Բացի այդ,— շշուկով ավելացրեց նա,— երիտասարդը ոնց որ ջրի երկու կաթիլ նման է խտլացի մանկավիհին, որը ներկա էր մեր գաղտնի խոսակցությանը: Եթե հիմա նրա հագին ուրիշ զգեստ լիներ և նա շխոսեր մեր լեզվով (չէ՞ որ դուք հավատացնում էիք, որ խտլացին ոչ մի բառ չի հասկանում ֆրանսերեն), ես կերզվեի, դքսուհի, որ սա հենց այն նույն մանկավիհն է:

— Իրավացի եք, պարոն պրևո,— շտապեց համաձայնել դքսուհին,— դուք բացարձակապես իրավացի եք. նա կարող է վտանգավոր լինել մեզ համար: Չերբակալեք նրան:

— Բանտարկյալին տանել Շատլե,— կարգադրեց պրևովոն:

— Դե՛հ, իսկ մենք, պարոնայք, զնանք դ՛էտամպ ամբողջը,— ասաց դքսուհին, որի կողքին, կառքում, աեղավորեցին դեռևս ուշքի չեկած Կոլոմբային:

Մի ակնթարթ հետո գետափի սալահատակին դոփդոփեցին քառատրոփ արշավող ձիու սմբակները. այդ Ժան-Ճատլիկն էր շտապում հայտնել Չելլինիին նեւի ամբողջում ծավալված ողբերգության մասին:

Նույն պահին Ասկանիոն ներս էր մտնում Շատլեի դարպասից: Նա այդպես էլ շտեսավ դքսուհուն և շիմացավ, թե ինչ դեր է խաղացել նա իրադարձությունների մեջ, որոնք խորտակեցին նրա բոլոր հույսերը:

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐՈՐԴ

Մրցակցութիւնք

Այն օրից, ինչ տիկին դէտամպն առաջին անգամ լսեց Կոլոմբայի մասին, նրան համակեց աղջկան մոտիկից տեսնելու և ուշադրութեամբ տնտղելու ցանկութիւնը: Այժմ այդ ցանկութիւնը ի կատար ածվեց. խեղճ աղջիկը, դեռ ուշագնաց, պառկած էր կառքում, դքսուհու կողքին:

Կոլոմբայի գեղեցկութիւնը տեսնելով, տիկին դէտամպի աչքերը շարութեամբ բոցկլտացին և ամբողջ ճանապարհին նա խանդոտ հայացքը չէր կտրում մրցակցուհուց՝ նշում էր աղջկա բոլոր արժանիքները, զննում դեռատի գունատ դեմքի ամեն մի դիժը, սքանչելի մարմնի ամեն ծալքը: Վերջապես Կոլոմբան իր իշխանութեան տակ է: Նրանք հայտնվեցին գեմ-դիմաց, այդ երկու կինը, որոնք սիրում են միեկնույն տղամարդուն, փափագում են տիրանալ միեկնույն սրտին: Առաջինը՝ շարասիրտ ու հզոր, երկրորդը՝ անօգնական, բայց սիրված. մեկը շքեղութեան փայլով հնազանդեցնող, մյուսը՝ պատանեկութեան հմայքով ու բույրով. մեկը կրքով, մյուսը՝ անմեղութեամբ: Վերջապես նրանք հանդիպեցին, շնայած բաժանող բոլոր խոչընդոտներին, և դքսուհու ծանր, թավշյա շրջազգեստը հպվում է Կոլոմբայի սպիտակ, անպաճույճ հագուստին:

Եվ շնայած Կոլոմբան դեռևս ուշքի չէր եկել, դժվար էր տեսել, թե երկու կնոջից ո՞րն էր ավելի գունատ: Հավանաբար այդ լսելային հայեցումը ցավագնորեն դիպչում էր դքսուհու փառասիրութեանը, սպանելով նրա բոլոր հույսերը:

— Օ՛հ, այո, — ակամա շնչաց նա: — Աղջիկը գեղեցիկ է, շատ է գեղեցիկ: — Եվ այդ բառերն արտասանելիս, տիկին դէտամպը ջղաձգորեն սեղմեց աղջկա ձեռքը:

Կոլոմբան բացեց իր մեծ աչքերն ու ասաց.

Օ՛հ, տիկին, դուք ինձ ցավ պատճառեցիք:

Դքսուհին անմիջապես բաց թողեց նրա ձեռքը:

Կոլոմբան ուշքի եկավ ոչ միանգամից: Յավից ճշարտով, ինչպէս մի քանի վայրկյան զայրացած նայում էր տիկին

դ'էտամային և ոչ մի կերպ չէր կարողանում մտքերը հաւաքել: Հետո հարցրեց.

— Ո՞վ եք դուք, տիկին, և ո՞ւր եք տանում ինձ:— Եվ անմիջապես հետ քաշվելով բացականչեց.— Ա-ա՛, հիշում եմ, հիշում եմ: Դուք դքսուհի դ'էտամայն եք:

— Լո՛ւք,— հրամայողաբար շշնջաց Աննան:— Շուտով մենք մենակ կմնանք, և այն ժամանակ կարող եք գոտալ ու զարմանալ ինչքան կամենաք:

Դքսուհու բառերն ուղեկցվեցին դաժան, գոռոզ հայացքով, բայց ամենևին ոչ այդ հայացքը, այլ միայն սեփական արժանապատվության զգացումը ստիպեց Կոլոմբային զրսպել իրեն, և ճանապարհի մնացած մասը նա լուռ էր:

Իսկ երբ կառքը կանգ առավ դ'էտամայ ամրոցի մոտ, աղջիկը դքսուհու նշանով հետևեց նրան դեպի տան մատուռը:

Մենակ մնալով, մրցակցուհիները, մեկ-երկու րոպե քրննախույզ հայացքով լուռ նայում էին միմյանց, ընդ որում նրանց դեմքի արտահայտութունը բոլորովին տարբեր էր. Կոլոմբան հանդիստ էր թվում. նրան սատարում էր նախախնամության հավատը և հուշար, որ Բենվենուտոն օգնության կհատնի: Աննան կատաղած էր այդ խաղաղությունից ու, թեև նրա դեմքը նկատելիորեն այլալված էր, ջանում էր զսպել զայրույթը, քանի որ հուշս ունեի իր զորության ու անխորտակելի կամքի ուժի վրա՝ անօգնական աղջկան կոտրելու համար:

Տիկին դ'էտամայն առաջինը խոսեց:

— Ահավասիկ, մանկամարդ բարեկամս, դուք վերագործաք ձեր ծնողի իշխանության տակ,— սկսեց նա այնպիսի տոնով, որի մեջ, շնայած ամբողջ մեղմությանը, հնչում էր գաղտնի ծաղր:— Բայց նախ և առաջ թույլ տվեք հայտնել հիացմունքս ձեր խիզախության վրա: Դուք... Դուք արտակարգ համարձակ եք ձեր հասակի համեմատ, մանկիկս:

— Օ՛, տիկին, դրա պատճառն այն է, որ ինձ օգնում է աստված,— պարզասրտորեն պատասխանեց Կոլոմբան:

— Ի՞նչ աստժո մասին եք բարեհաճում խոսել, մաղմուռազել... Ա-ա՛, ըստ երևույթին, խոսքը Մարսի մասին է,— ասաց դքսուհին, աչքերը ծաղրաբար կկոցելով, ինչպես սովոր էր անել արքունիքում:

— Ես միայն մի աստված գիտեմ, տիկին: Բարի ու ողորմած աստված, որը պատվիրել է հարուստներին լինել առատաձեռն, իսկ մեծ մարդկանց՝ խոնարհ: Եվ վայ նրանց, ովքեր չեն ընդունում նրան, որովհետև կղա մի օր, երբ նա էլ իրենց չի ընդունի:

— Աքանչելի է, սքանչելի է, մաղմուազել, — բացականչեց դքսուհին: — Եվ ժամանակն էլ հիմա շատ հարմար է բարոյախոսութեան համար: Ես ի սրտե կշնորհավորեի քարոզչուհու ձեր տաղանդը, եթե չգտնեի, որ այս ամենը անպատկառ փորձ է միայն ձեր արարքի անամոթութունը ծածկելու:

— Ես չեմ պատրաստվում արդարանալ ձեր առաջ, տիկին: Եվ ի՞նչ իրավունքով կարող եք մեղադրել ինձ, — ուսերը թռթռելով, սակայն առանց բորբոքվելու առարկեց Կոլոմբան: — Եթե, օրինակ, հայրս հարցեր տա, ես կհնազանդվեմ նրան հարկ եղած պատկառանքով: Իսկ եթե նա սկսի նախատել ինձ, կաշխատեմ արդարանալ: Բայց մինչև այդ, դքսուհի, թույլ տվեք ինձ լռել:

— Հասկանում եմ, հոգյակս: Ձեզ գրգռում է իմ ձայնը: Դուք կդերադասեիք մենակ մնալ ու երազել ձեր սիրածի մասին: Այնպես չէ՞:

— Ոչ մի աղմուկ, նույնիսկ՝ ամենաանախորժը, ինձ չի խանգարի մտածել նրա մասին, տիկին, մանավանդ, եթե իմ սիրածը փորձանքի մեջ է:

— Եվ դուք համարձակվում եք բացահայտորեն խոսել ձեր սիրո մասին:

— Դուք էլ, դքսուհի, սիրում եք նրան, բայց վախենում եք խոստովանել: Այդ է իմ և ձեր մեջ եղած ամբողջ տարբերությունը, տիկին:

— Հանդիման աղջիկ, — դուրս թռավ դքսուհու բերանից: — Եթե չեմ սխալվում, նա ինձ մարտահրավեր է նետում:

— Օ՛, ոչ: Ի՞նչ եք ասում, տիկին: Ի՞նչ մարտահրավեր, ես պարզապես պատասխանում եմ ձեր հարցին. չէ՞ որ դուք ինքնիրոք եք ինձ ստիպում այդ անել: Մենակ թողեք ինձ էրպանքներիս հետ, և ես չեմ նշի ձեր դիտավորությունները:

— Թող այդպես լինի, մանկիկա: Քանի որ դու քեզ բա-
նականաչափ ուժեղ ես համարում ինձ հետ պայքարելու հա-
մար, քանի որ խոստովանեցիր ինձ քո սերը, ես էլ կխոս-
տովանեմ ոչ միայն իմ սերը, այլև՝ ատելությունը: Գու-
իրավացի ես. ես սիրում եմ Ասկանիոյին և ատում եմ քեզ:
Եվ, հիրավի, ինչո՞ւ խոբամանկեմ: Չէ՞ որ միայն քեզ կա-
րող եմ հայտնել ամեն բան, քանզի ոչ ոք չի հավատա քեզ,
ինչ էլ ասելու լինես իմ մասին: Այո՛, ես սիրում եմ Ասկա-
նիոյին:

— Այդ դեպքում ես խղճում եմ ձեզ, տիկին, որովհետև
Ասկանիոն սիրում է ինձ:

— Այո՛, Ասկանիոն սիրում է քեզ: Բայց դա ի՞նչ կա-
րևոր է: Ես կստիպեմ նրան մոռանալ այդ սերը: Ես կդայ-
թակղեմ նրան, իսկ եթե իմ հմայքները բավական չլինեն,
կդիմեմ ստախոսության և նույնիսկ՝ հանցագործության:
Լսո՞ւմ ես: Չմոռանաս, որ ես Աննա դ՛էյլին եմ, դքսուհի
դ՛էտամպը:

— Ասկանիոն իր սիրտը կտա այն կնոջը միայն, ով ան-
կեղծորեն կսիրի նրան:

— Լսո՞ւմ եք, թե ինչեր է ասում,— Կոլոմբայի ինքնա-
վստահությունից խայթված բացականչեց դքսուհին:— Գուցե
դուք կարծում եք, սիրելիս, որ ձեր սերը միակն է աշխար-
հում և ուրիշ ոչ մի կնոջ սիրո հետ համեմատվել չի կարող:

— Ես այդ շեմ ասում, տիկին: Իհարկե, ուրիշ կանայք էլ
կարող են սիրել ինձ նման անդավաճանորեն, բայց ո՛չ դուք:

— Իսկ հանուն այդ գովերգածդ սիրո, որը քո կարծիքով
մատչելի չէ ինձ, ի՞նչ ես արել դու: Հանուն այդ սիրո ի՞նչ
ես զբհարերել: Քո միայնությունն ու աննշանությունը:

— Ո՛չ, տիկին, ես զոհաբերեցի իմ հանգիստը:

— Հանուն այդ սիրո ինչի՞ց հրաժարվեցիր: Անմիտ ամուս-
նությունից կոմս դ՛Օրբեկի հե՞տ:

— Ոչ, տիկին, ես հրաժարվեցի հորս հնազանդվելուց:

— Բայց ի՞նչ կարող ես տալ սիրածդ պատանուն: Փա՞ռք,
հարստություն, իշխանություն:

— Ոչ, ես պարզապես կաշխատեմ երջանկացնել նրան:

— Եվ այդքան միայն,— բացականչեց դքսուհին:— Իսկ ես նրան կտամ շատ ավելին: Ես հանուն նրա կզոհաբերեմ նույնիսկ թագավորի համակրանքը, նրա ոտքերի առաջ կնետեմ անվանիություն, հարստություն, մեծարանք: Նա պետության տնօրենը կդառնա— ահա թե ինչ կտամ ես նրան:

— Ուրեմն,— ժպտալով առարկեց Կոլոմբան,— ձեր սերը կտա նրան ամեն ինչ, բացի սիրուց...

— Դե՛հ, բավական է: Վերջացնենք անհեթեթ համեմատությունները,— կտրուկ ընդմիջեց դքսուհին, զգալով, որ Կոլոմբան սկսում է հաղթել:

Որոշ ժամանակ կանայք լուռ էին: Կոլոմբան պահում էր իրեն խաղաղ ու անբռնազբոսիկ, իսկ դքսուհին նկատելիորեն դաշտնում էր: Բայց հետզհետե նրա դեմքը մեղմացավ, պայծառացավ համակրանքի զգացումից, բնական թե շինձով՝ դժվար է ասել: Դքսուհին առաջինը վերսկսեց ընդհատված ճակատամարտը, որից ամեն զնով աշխատում էր հաղթող դուրս գալ:

— Դե՛հ, իսկ եթե քեզ ասեին, Կոլոմբա. «Ձոհիր կյանքդ հանուն նրա», ի՞նչ կանեիր,— հարցրեց նա համարյա մտերմորեն:

— Օ՛հ, հաճույքով կզոհեի:

— Ես նույնպես,— բացականչեց դքսուհին այնպիսի տոնով, որը վկայում էր եթե ոչ նրա դիտավորությունների անկեղծության, ապա, համենայն դեպս, կրքոտ սիրո մասին:

— Իսկ պատի՞վը...— շարունակեց նա,— ասացեք, հանուն նրա կզոհաբերեի՞ք ձեր պատիվը:

— Տիկին, եթե «պատիվ» բառի տակ ենթադրում եք իմ բարի անունը, ապա կզոհաբերեի, իսկ եթե պատիվ ասելով նստկանում եք առաքինությունը՝ ոչ:

— Ինչպես, մի՞թե Ասկանիոն ձեր սիրեկանը չէ:

— Նա իմ փեսացուն է, տիկին, ոչ ավելի:

— Պարզվում է, որ նա Ասկանիոյին չի սիրում,— բացականչեց դքսուհին:— Ամենևին չի սիրում: Պատիվը, այդ մեծազորք բառը, նրա համար սիրուց էլ թանկ է:

— Դե՛հ, իսկ եթե որևէ մեկը ձեզ ասեր, տիկին. «Հանուն նրա հրաժարվիր տիտղոսներից, իշխանությունից, զոհիր

Բնագավորի բարյացակամութիւնը և ոչ գաղտնաբար (դա շափազանց հեշտ կլիներ), այլ այնպես, որ բոլորն իմանան այդ մասին»: Եթէ ձեզ ասեին. «Աննա դ'էյլի, դքսուհի դ'էտամպ, թող սպաւտդ, հրաժարվիր հարստութիւնից, սպաւտական հասարակութիւնից և այդ ամենը փոխիր դովագշի կիսամութ տրհետանոցի հետ»: Ինչպե՞ս կվարվեիք, տիկին,— հարցրեց Կոլոմբան, դուրս գալով համբերութիւնից, շնայած իր ամբողջ հեզութեանը:

— Ես կհրաժարվեի, նրա իսկ շահից ելնելով,— ստիպված խոստվանեց դքսուհին, մրցակցուհու քննախույզ հայացքի տակ անզոր լինելով ստել:

— Կհրաժարվեի՞ք:

— Այո՛:

— Ուրեմն, դուք նրան ամենևին չեք սիրում, տիկին,— հաղթականորեն բացականչեց Կոլոմբան:— Ի՞նչ մեծարանքը՝ հրջանկութեան խղճուկ պատրանքը, գերադասում եք նրա սիրուց:

— Բայց չէ՞ որ ես ասացի, որ հանուն նրա ցանկանում եմ պահպանել իմ գիրքը,— մրցակցուհու նոր հաղթանակից զայրացած, առարկեց դքսուհին:— Ես ասացի, որ ուզում եմ կիսել նրա հետ մեծարանքն ու հարստութիւնը: Բոլոր տղամարդիկ վաղ թե ուշ փառասեր են դառնում:

— Այո, տիկին,— ժպտալով պատասխանեց Կոլոմբան,— բայց Ասկանիոն ամենևին նման չէ այդ տղամարդկանց:

— Դե լուեցեք վերջապես,— ճշաց կատաղած դքսուհին:

Այդ խորամանկ ու իշխանատենչ կինն այդպիսով երկու անգամ պարտութիւն կրեց անպաշտպան աղջկանից, սրին միտք ունեն շփոթեցնել իր տիրական ձայնի մի հնչյունով միայն: Սակայն տիկին դ'էտամպի զայրալից կամ ծաղրական բոլոր դիտողութիւններին Կոլոմբան պատասխանում էր գինաթափող համեստութեամբ ու պարզութեամբ: Եվ շուտով դքսուհին հասկացավ, որ, զայրույթից կուրացած, գնացել է ոչ ճիշտ ճանապարհով. ճիշտն ասած, նա չէր սպասում, որ աղջիկը կլինի ոչ միայն գեղեցիկ, այլև՝ խելոք: Եվ այդպես, Աննա դ'էտամպը փոխեց գործելակերպը. համոզվելով,

որ շի կարող ուժով կոտրել մրցակցուհուն, նա որոշեց խո-
րամանկությամբ զինաթափել նրան:

Ինչ վերաբերում է Կոլոմբային, ապա ինչպես տեսանք,
նրան ամենևին չվախեցրին տիկին դ'էտամպի զայրալից
բռնկումները. նա պարզապես ամփոփվեց արժանապատվու-
թյամբ լի ցառը լոռության մեջ: Բայց դքսուհին արդեն նոր
ծրագիր էր նյութել: Հմայիչ ժպիտով նա մոտեցավ Կոլոմբա-
յին ու քնքշորեն բռնեց նրա ձեռքը.

— Ներեցեք, մանկիկս, ես կարծես բորբոքվեցի. շնեղա-
նաք: Չէ՞ որ դուք այնքան առավելություններ ունեք, որ իմ
խոսնալը լիովին հասկանալի է: Օ՛, ես գիտեմ, գիտեմ, դուք
էլ մյուսների նման ինձ համարում եք զզվելի, շար կին: Բայց
նավատացեք, շարն իմ ճակատագիրն է, ոչ թե ես: Ուրեմն,
ներեցեք ինձ: Մի՞թե մենք մեղավոր ենք, որ երկուսս էլ սի-
րում ենք Ասկանիոյին: Ինչո՞ւ ասենք միմյանց: Մանավանդ
դուք՝ ինձ. չէ՞ որ նա սիրում է միայն ձեզ: Օ՛, դուք պետք է
ներողամիտ լինեք իմ նկատմամբ: Եկեք քույրերի նման ան-
կեղծ լինենք: Ուզո՞ւմ եք, Կոլոմբա, խոսենք մտերմաբար,
և ես կաշխատեմ հարթել վատ տպավորությունը, որ թերևս
գործեց ձեզ վրա իմ խելահեղ բռնկումը:

— Խոսեք, տիկին, — դուստր ասաց Կոլոմբան, անհաղթա-
արելի զզվանքով դուրս քաշելով իր ձեռքը: — Խոսեք, ես
լսում եմ ձեզ, — կրկնեց նա:

— Օ՛, հանգիստ եղեք, փշիշոտ աղջիկ, — զվարթորեն
պատասխանեց տիկին դ'էտամպը, շատ լավ հասկանալով
Կոլոմբայի զսպվածության պատճառը: — Ես ձեզանից վստա-
նավյուն չեմ պահանջում առանց հուսալի երաշխիքի: Ես մի
բանի բառով կպատմեմ ձեզ իմ կյանքը, որպեսզի դուք ինձ
անուշեք նույնքան լավ, որքան ես ինքս: Ա՛յ, կտեսնեք, ես
չուտ տվելի լավն եմ, քան թվում է: Չէ՞ որ մենք՝ այսպես
կոչված, բարձրաշխարհիկ տիկնայքս, հաճախ զրպարտու-
թյան զոհ ենք դառնում: Մեր մասին շարախոսում են նա-
խանձից, այն դեպքում, երբ մենք արժանի ենք ամենայն
կարեկցանքի: Հենց, օրինակ, դուք, մանկիկս, երևի գտնում
էք, որ ես կործանված կին եմ, չէ՞: Անկեղծորեն ասացեք:

Կոլոմբան տարուբերեց գլուխը: Նրա համար դժվար էր այդ հարցին պատասխանելը:

— Մի՞թե ես մեղավոր եմ, որ ինձ կործանեցին,— շարունակեց տիկին դ'էտամպը:— Դուք, Կոլոմբա, միշտ երջանկություն եք վայելել. մի արհամարհեք դժբախտներին: Ձեր կյանքն ընթացել է ողջախոհ միայնության մեջ և աստված մի արասցե փորձեք, թե ինչ է նշանակում դաստիարակված լինել փառասիրության համար: Այդ տառապանքներին դատապարտված դժբախտ աղջիկներին ցույց են տալիս կյանքի փայլփլուն կողմը միայն, ինչպես զոհերին, որոնց սպանելուց առաջ վարդարում են ծաղիկներով: Նրանք պետք է շտիրեն, բայց պարտավոր են դուր գալ: Պատանեկության տարիներից ինձ ներշնչել են, որ չկա թագավորին դյուրեւուց ավելի մեծ երջանկություն: Գեղեցկութունը, որն աստված տալիս է կնոջը իսկական սիրո դեպքում տղամարդուն պարզեւու համար, այդ գեղեցկութունն ինձ ստիպեցին տալ բարձր տիտղոսի համար. կանացի հմայքս ծուղակ դարձրին: Դե՛հ, ասացեք, Կոլոմբա, կարո՞ղ է արդյոք ճիշտ վարվել աղջիկը, որին նախապես ներշնչել են, որ բարին շար է, իսկ շարը՝ բարի: Եվ թող բոլորն աշխարհում ինձ համարեն անհույս կորած, ես չեմ հուսահատվի: Գուցե աստված թողություն տա ակամա մոլորություններին, չէ՞ որ իմ կողքին չկար մեկը, որ ժամանակին հիշեցներ այդ մասին: Ինչ էր մնում ինձ՝ անզոր, անօգնական, միայնակ կնոջս: Ստախոսությունն ու խարդավանքը դարձան իմ միակ զենքը: Բայց հավատացեք, ես ստեղծված չեմ այսպիսի կյանքի համար: Դրա ապացույցն իմ սերն է Ասկանիոյի նկատմամբ և այն, որ նրան սիրելով մեծագույն երջանկություն զգացի և միաժամանակ՝ այրող ամոթ... Դե՛հ, մանկիկս, հիմա հասկանո՞ւմ եք ինձ:

— Այո, տիկին,— միամտորեն պատասխանեց Կոլոմբան, որին մոլորության մեջ էր գցել դքսուհու սքանչելիորեն խաղաղված անկեղծութունը:

— Ուրեմն, դուք կխղճա՞ք ինձ,— բացականչեց տիկին դ'էտամպը:— Եվ թույլ կտա՞ք սիրել Ասկանիոյին գեթ հեռվից, առանց փոխադարձության փոքրագույն իսկ հույսի. ես

երբեք չեմ լինի ձեր մրցակցուհին. չէ՞ որ Ասկանիոն չի սիրի ինձ: Ես կփոխարինեմ ձեր վաղամեռ մորը: Ինձ քաջ ծանոթ են բարձր հասարակութեան կեղծիքը, խարդավանքը և ստորութիւնը. ես հեռու կպահեմ ու կպաշտպանեմ ձեզ այդ ամենից: Գուք կարող եք լինովին վստահել ինձ. չէ՞ որ հիմա ձեզ հայտնի է իմ ամբողջ կյանքը: Երեխա, որի սրտում բորբորում էին կանացի կրքեր՝ այդպիսին էր իմ անցյալը, իսկ տերկան ինքներդ էլ տեսնում եք. խայտառակութիւն է լինել թագավորի ճանաչված ֆավորիտուհին: Իմ ապագան՝ սերս է դեպի Ասկանիոն: Բայց ոչ նրա սերը, որովհետեւ, ինչպէս քիչ առաջ ասացիք և ես էլ հոգուս խորքում գիտեմ այդ, Ասկանիոն երբեք չի սիրի ինձ: Սակայն հենց այն պատճառով, որ իմ սերը կմնա անաղարտ, այն կազնվացնի հոգիս: Դե՛հ, իսկ հիմա ձեր հերթն է, մանկիկս. անկեղծորեն սլատմեք ձեր մասին:

— Բայց ես համարյա ոչինչ չունեմ պատմելու, տիկին, — պատասխանեց Կոլոմբան: — Իմ կյանքը՝ սերն է. ես սիրել եմ, սիրում եմ ու միշտ կսիրեմ աստծուն, հորս և Ասկանիոնին: Առաջ, երբ չէի ճանաչում Ասկանիոնին, իմ սերը դեպի նա երազ էր. այժմ, երբ մենք բաժանված ենք, տառապանք է ապագայում՝ հույս:

— Հիանալի է, — ասաց դքսուհին, խնդրելով խանդն ու հաղիվ դսպելով արցունքները: — Բայց մինչև վերջ անկեղծ եղիք, Կոլոմբա. ասացեք, ի՞նչ եք պատրաստվում անել: Ինչպէս կարող եք դուք, անօգնական մի աղջիկ, պայքարել այնպիսի զուրեղ մարդկանց դեմ, ինչպիսիք են կոմս դ'Օրբեկը և ձեր հայրը: Դեռ չեմ ասում, որ թագավորն առաջին հարցադրից սիրահարվեց ձեզ:

— Օ՛, տե՛ր սուտված, — մրմնչաց Կոլոմբան:

— Թագավորի ուշադրութիւնը ձեզ վրա է հրավիրել ձեր հրացակցուհին՝ դքսուհի դէտամպը, բայց ձեր բարեկամ Աննան դէլին կազատի ձեզ այդ երկրպագուից: Այդպէս, ուրեմն, թագավորին չհաշվենք: Բայց ի՞նչ անենք ձեր հոր և կոմս դ'Օրբեկի հետ: Նրանց փառասիրութիւնն այնքան հեշտ չէ անպիտանարել, որքան Ֆրանցիսկ I-ի թեթև հափշտակութիւնը:

— Չեր բարի գործը մինչև վերջ հասցրեք, տիկին,— բացականչեց Կոլոմբան։— Նրանցից էլ փրկեք ինձ։

— Ես ձեզ օգնելու մի միջոց ունեմ միայն... — խորհրդով ձեռով, ասաց դքսուհին։

— Ո՞րն է այդ միջոցը, տիկին։

— Բայց դուք կվախենաք, կհրաժարվեք հետևել խորհրդիս։

— Օ՛, եթե հարցը միայն արիության մեջ է, ասացեք։

— Նստեք և լսեք,— ասաց տիկին դ՛էտամայր, քնքշորեն նստեցնելով Կոլոմբային ծալովի աթոռակին, իր բազկաթոռի մոտ ու դրկելով նրա իրանը։— Բայց տեսեք, առաջին իսկ բառերից շվախենաք։

— Ուրեմն, դուք պատրաստվում եք ինչ-որ սոսկալի բա՞նասել ինձ,— հարցրեց Կոլոմբան։

— Բանն այն է, թանկագին աղջիկս, որ դուք անսահմանորեն առաքինի եք ու մաքուր, իսկ մենք ատրում ենք այնպիսի ժամանակաշրջանում ու այնպիսի հասարակության մեջ, որտեղ այդ սքանչելի անմեղությունը վտանգավոր է, քանզի ուժասպառ է անում ձեզ թշնամիների առաջ, որոնց կարելի է հաղթել իրենց իսկ զենքով միայն։ Ուրեմն ջանք դործադրեք, ցած իջեք եթերային բարձունքներից, համարձակ նայեք իրականությանը։ Դուք ասացիք, որ հանուն Ասկանիոյի հաճույքով կզոհաբերեիք ձեր բարի անունը։ Ես այդբանն էլ չեմ պահանջի ձեզնից։ Բավական է, եթե առերեւոյթ միայն զոհաբերեք ձեր հավատարմությունը։ Դուք, միայնակ ու անօգնական աղջիկ, մի՞թե կարող եք պայքարել ճակատագրի դեմ։ Դուք, ազնվականի աղջիկ լինելով, մի՞թե կարող եք ամուսնանալ ոսկերչի աշակերտի հետ... Դա պարզապես անմտություն է։ Ավելի լավ է ընդունեք բարեկամական խորհուրդս. շքնդրիմանաք ամուսնությանը կոմս դ'Օրբեկի հետ. տվեք նրան ձեր ձեռքը, հոգու խորքում մնալով ձեր Ասկանիոյի ողջախոհ հարսնացուն, կամ հավատարիմ կինը։ Դուք պետք եք կոմսին բացառապես նրա փառասիրական դիտավորություններն իրականացնելու համար։ Իսկ կոմսուհի դ'Օրբեկ դառնալով, դուք հեշտությամբ կտապալեք այդ բոլոր անազնիվ գործարքները։ Բավական

կլինի, որ հրապարակորեն հայտարարեք դրանց մասին: Հա-
կատակ դեպքում... Դե ասացեք, հիմա ո՞վ կաշակցի ձեզ:
Նույնիսկ ես համարձակութուն չեմ ունենա օգնել ձեզ ձեր
հոր օրինական իրավունքների դեմ պայքարելու: Եթե հարցը
ձեր սմուտնու ծրագրերը խափանելու մեջ լինեք միայն, դուք
ի դեմս ինձ կգանեիք ամենաեռանդուն օգնականի: Լավ կըշ-
ռադատեք այդ ամենը: Հնազանդվեք, դավակս, որպեսզի ձեր
ճակատագրի տիրուհին դառնաք. ձևացրեք, թե զոհաբերում
եք ձեր ազատութունը, որպեսզի անկախութուն ստանաք:
Եվ այն ժամանակ ձեզ անդադար օգնության կհասնի այն
միտքը, որ Ասկանիոն ձեր միակ, օրինական ամուսինն է, որ
միութունն ուրիշ որևէ մեկի հետ սրբապղծություն է և դուք
կվարվեք այնպես, ինչպես թելադրում է ձեր սիրտը: Դուք
երբեք խղճի խայթ չեք դգա, իսկ բարձրաշխարհիկ հասա-
րակութունը, որի առաջ պահպանված կլինեն պատշաճու-
թյան բոլոր կանոնները, կարդարացնի ձեզ:

— Տիկին, օ՛ տիկին,— շնչաց կոլոմբան, վեր թռչելով
աթոռից, թեև գքսուհին փորձ կատարեց ուժով պահել
նրան:— Չգիտեմ, ճի՞շտ հասկացա ձեզ, բայց ինձ թվում է,
ձեր խորհուրդը ստոր արարքի է մղում ինձ:

— Ինչ ասացի՞ք,— բացականչեց գքսուհին:

— Ասացի, տիկին, որ առաքինությունը խորամանկու-
թյունների կարիք չունի և ես ամաչում եմ ձեր փոխարեն:
Ես հասկանում եմ, դուք ատում եք ինձ և քողարկվում եք
բարեկամությամբ՝ ինձ ավելի հեշտորեն ծուղակի մեջ քաշե-
լու համար: Դուք ցանկանում եք անվանարկել ինձ Ասկանիո-
յի աչքում: Չէ՞ որ դուք լավ գիտեք, որ Ասկանիոն չի կարող
սիրել մի կնոջ, որին արհամարհում է: Մի՞թե այդպես չէ,
գքսուհի:

— Ենթադրենք, թե հենց այդպես է,— այլևս անդոր լի-
նելով զսպել իրեն, բացականչեց տիկին դ՛էտամպը:— Վերջ
ի վերջո, ես հոգնեցի այս ամբողջ կատակերգությունից: Դու
ասում ես, որ չես ցանկանում ծուղակն ընկնել: Հիանալի է:
Ես անդունդը կնետեմ քեզ: Մեկընդմիջտ հիշիր՝ ցանկանում
ես դու, թե ոչ, բայց կամուսնանաս կոմսի հետ:

— Ուրեմն, ես բռնության զոհ կդառնամ և դա իմ արդա-

րացումը կլինի: Եվ տեղի տալով ուժի առաջ (եթե միայն տեղի տամ), ես չեմ պղծի իմ սերը:

— Իսկ դու, ինչ է, միտք ունես պայքարե՞լ:

— Բոլոր միջոցներով, որոնք մատչելի են անօգնական աղջկան: Իմացած եղեք, ես երբեք համաձայնություն չեմ տա այդ ամուսնությանը: Դուք իմ ձեռքը բռնությամբ կղնեք այդ մարդու ձեռքի մեջ, իսկ ես կասեմ «ոչ»: Դուք ինձ կտանեք եկեղեցի, այն ժամանակ էլ ես կասեմ «ոչ»: Կստիպեք ինձ ծունկի դալ, բայց քահանայի առաջ ծունկի եկած էլ կպատասխանեմ «ոչ»:

— Եվ ոչինչ չես շահի: Եթե հարսանիքը կայանա, Ասկանին կհամարտա, որ դու համաձայնել ես դառնալ դ՛Օրբեկի կինը:

— Հուսով եմ, տիկին, որ հարսանիքը չի կայանա:

— Հետաքրքիր է ո՞վ կազատի քեզ:

— Երկնքում՝ աստված, երկրի վրա՝ մի մարդ:

— Այդ մարդը բանտո՞ւմ է:

— Ոչ, տիկին, նա ազատ է:

— Ով է նա՞:

— Բենվենուտո Չելլինին:

Կսելով արձանագործի անունը, որին իր մահացու թշնամին էր համարում, դքսուհին բարկությունից ատամները կրճատացրեց և արդեն բերանը բանալով ցանկանում էր որևէ սոսկալի անեծք կցել այդ անվանը, բայց նույն պահին վարազույրը բացվեց և մանկլավիկն ազդարարեց թագավորի ժամանումը:

Դքսուհին ժպտալով ընդառաջ շտապեց Ֆրանցիսկ 1-ին ու տարավ նրան հարևան սենյակը, նշան անելով, որ ծառաները հետևեն Կոլոմբային:

ԳԼՈՒԽ ՏԱՍՆՄԵԿԵՐՈՐԴ

Բենվենուտոն տագնապի մեջ է

Ասկանիոյի բանտարկությունից՝ և Կոլոմբայի առևանգումից մի ժամ հետո Բենվենուտոն, ձի նստած, առանց շտապելու, գնում էր Օգոստինոսականների գետափով: Նա քիչ

առաջ հրաժեշտ էր տվել թագավորին և սլալատականներին, որոնց ամբողջ ճանապարհի ընթացքում զվարճայնում էր ծիծալաշարժ պատմություններով, լինելով դրանց մեծագույն վարպետը, հորինվածքին հմտորեն միահյուսելով սեփական արկածները: Բայց հիմա մենակ մնալով, նա խորասուզվեց իր մտորումների մեջ: Ուրախ պատմողը իր տեղը զիջեց երագողին: Սանձերը դուրս ընկան թուլացած ձեռքից, խոնարհված ճակատի վրա խորին մտորումի դրոշմ կար: Չելլինին մտածում էր Յուպիտերի ձուլման մասին, որից կախված էր հիմա ոչ միայն արձանագործի փառքը, այլև՝ թանկագին Ասկանիոյի ճակատագիրը: Թվում էր, թե հալված բրոնզը, մինչև ձև ստանալը, արդեն եռում էր նրա բորբոքված ուղեղում: Սակայն արտաքուտ նա խաղաղ էր:

Իր տան շեմքին Բենվենուտոն կանգ առավ, զարմացած, որ, չի լսում մուրճերի սովորական թկթկոցը: Մոայլ, լսին պանդվածով սեին էր տալիս ամբողջը, ասես այնտեղ կենդանի շունչ չկար: Արձանագործը երկու անգամ բախեց դարպասը՝ ոչ մի պատասխան. միայն երրորդ բախոցից հետո դուռը բացեց Սկոցոնեն:

— Ա՛խ, պարոն, վերջապե՛ս, — բացականչեց նա: — Ի՞նչ կլինիք, որ երկու ժամ շուտ գայիք:

— Բայց ի՞նչ է պատահել, — հարցրեց Բենվենուտոն:

— Այստեղ եկան կոմս դ՛Օրբեկը, դքսուհի դ՛էտամպը և սյրևոն:

— Հետո՞...

— Խուզարկություն եղավ:

— Եվ ի՞նչ:

— Մարսի գլխում գտան Կոլոմբային:

— Չի կարող պատահել:

— Դքսուհին Կոլոմբային տարավ իր ամբողջը, իսկ պրեվոն Ասկանիոյին ուղարկեց Շատլե:

— Մեզ դավաճանել են, — գոչեց Բենվենուտոն, ոտքը դալրալից զարկելով գետնին:

Եվ իսկույն, սովորականի պես, նրա հոգում բորբոքվեց վրիժառության փափագը: Նա թողեց, որ ձին մենակ գնա ախոռ, իսկ ինքը նետվեց արվեստանոց:

— Բոլորդ ինձ մոտ,— ներս վազելով, գոռաց նա:

Մի րոպե հետո նրան շրջապատեցին ենթավարպետները: Չելլինին խստագույն հարցաքննության ենթարկեց բոլորին, սակայն ոչ ոք չգիտեր ոչ միայն Կոլոմբայի ասպատարանը, այլև այն, թե թշնամուն ինչպես է հաջողվել հայտնաբերել նրան: Բոլորը, նույնիսկ Պագոլոն, որին Չելլինին կասկածում էր ամենից շատ, լիովին արդարացրին իրենց նրա աչքում: Արժե՞ արդյոք ասել, որ ազնիվ գերմանացու վրտ կասկածի ստվեր անգամ չընկավ, իսկ Չախլիկ-Սիմոնը համարյա գերծմնաց դրանից:

Տեսնելով, որ հարցաքննությունը շարունակելն ավելորդ է և հասկանալով, որ չկա մեկը, որից վրեժ լուծի, Բենվենուտոն իրեն հատուկ արագություն մտնում ընդունեց:

Նախ և առաջ նա ստուգեց իր սուսերն ու դաշույնը և պատվիրեց ենթավարպետներին մնալ իրենց տեղերում, որպեսզի անհրաժեշտության դեպքում հեշտ լինի նրանց գտնելը: Հետո նա շտապով դուրս եկավ արվեստանոցից, ցած վազեց արտասանդուղքով ու դուրս թռավ փողոց:

Բենվենուտոյի դեմքը, քայլվածքը, շարժումներ՝ ամեն ինչ վկայում էր սաստիկ հուզմունքի մասին: Նրա մտքով հազարավոր ծրարներ էին անցնում, հազարավոր կասկածներ: Ասկանիոն կալանավորվել է հենց հիմա, երբ Յուպիտերը ձուլելու համար թանկ է ամեն մի ենթավարպետը, մանավանդ Ասկանիոն՝ ամենաընդունակը բոլորի մեջ: Առևանգված է Կոլոմբան, և ով գիտե, գուցե թշնամիների շրջապատում նա կորցնի՞ իր արիությունը... Կոլոմբայի ջինջ, խաղաղ հավատը՝ նրա լավագույն պաշտպանությունը վատ մտքերից ու այն ամենից, ինչ արատավոր է, կարող է լքել աղջկան այդքան վտանգների ու դավերի առաջ:

Անսպասելիորեն Բենվենուտոն մտաբերեց մի խոսակցություն Ասկանիոյի հետ: Մի անգամ ինքը նախազգուշացրեց աշակերտին, որ նենգ դքսուհին կարող է վրեժ լուծել: Բայց Ասկանիոն ժպտալով առարկեց նրան. «Տիկին դ՛էտամպը չի համարձակվի շարիք պատճառել ինձ, որովհետև ես կարող եմ մի խոսքով կործանել նրան»: Չելլինին խնդրեց Ասկանիոյին բացատրել այդ բառերի իմաստը, սակայն վեր-

չինս հայտարարեց. «Ուսուցիչ, հիմա հայտնել ձեզ գաղտնի-
րը, նշանակում է մատնիչ դառնալ: Սպասենք այն օրվան,
երբ այդ կդառնա իմ միակ պաշտպանությունը»:

Բենվենուտոն հասկացավ, որ աշակերտը ղեկավարվում
է ազնիվ շարժառիթներով ու շպնդեց: Ուրեմն հիմա առաջին
հերթին պետք է տեսնել Ասկանիոյին:

Բենվենուտո Չելլինիի խոսքը գործ էր: Այդ պատճառով
հենց որ մտածեց աշակերտին տեսնելու մասին, քիչ հետո
արդեն բախում էր Շատլեի դուռը: Բախոցի վրա փոքրիկ
լուսամուտը կիսաբացվեց, և բանտի դռնապանը հարցրեց
Բենվենուտոյին, թե ով է նա: Բանտապահի թիկունքում, կի-
սախավարի մեջ կանգնած էր էլի ինչ-որ մեկը:

— Ես Բենվենուտո Չելլինին եմ:

— Ի՞նչ գործ ունեք այստեղ:

— Ուզում եմ տեսնել այս բանտի կայանավորներից մե-
կին:

— Կայանավորի անունն ի՞նչ է:

— Ասկանիո:

— Ասկանիոն մենախցում է և տեսակցության իրավունք
չունի:

— Բայց ինչո՞ւ է մենախցում:

— Նրան մեղադրում են հանցագործության մեջ, որի
համար մահապատիժ է սահմանված:

— Ուրեմն առավել ևս պետք է տեսնեմ նրան, — բացա-
կանչեց Բենվենուտոն:

— Տարօրինակ դատողություն ունեք, սենյոր Չելլինի, —
ծաղրանքով ասաց ստվերի մեջ պահված մարդը: — Շատ-
լեում ընդունված չէ այդպես դատելը:

— Այդ ո՞վ է ծիծաղում ասածիս վրա: Ո՞վ է համարձակ-
վում ծաղրել իմ խնդիրքը, — բորբոքվեց Բենվենուտոն:

— Ես, — պատասխանեց նույն ձայնը: — Ես, Ռոբեր դ'էս-
տուրվիլս, Փարիզի պրեզն: Հիմա իմ հերթն է հաղթանակ
տոննելու, սենյոր Չելլինի: Ամեն խաղում լինում են կորուստ-
ներ ու փոխհատուցումներ: Առաջին խաղակեսը դուք տարաք,
երկրորդը՝ ես: Դուք անօրինաբար խլեցիք ինձնից ամրոցը,
ևս օրենքի համաձայն ձերբակալեցի ձեր աշակերտին: Դուք

չկամեցաք ամրոցն ինձ վերադարձնել և դրա համար, հավատացած եղեք, ես էլ շեմ վերադարձնի ձեզ Ասկանիոյին: Բայց չէ՞ որ դուք, պարոն Չելլինի, այնքան ձեռներեց ու խիզախ մարդ եք, հավատարիմ բարեկամների մի ամրողջ բանակ ունեք: Համարձակ եղեք, ամրոցներ գրավող քաջ մարտիկ: Համարձակ եղեք, ճարպիկ պարիսպ մագլցող: Համարձակ եղեք, դոներ տեղահան անող: Առաջ, Շնտլեի վրա: Հաջողութուն եմ ցանկանում:

Եվ այդ բառերից հետո լուսամուտը փակվեց:

Բենվենուտոն կատաղութունից ոռնաց ու հարձակվեց հաստաբետ դարպասի վրա. բայց ինչքան էլ նա զարնվում էր դռանը, եռանդագին գործի դնելով բռունցքներն ու ոտքերը. դարպասը տեղի չտվեց:

— Չնահանջե՛ք, շնահանջեք, բարեկամս: Ամեն ինչ ջարդուփշուր արեք, — գոռում էր դարպասի հետևը կանգնած պրևոն, — բայց նախազգուշացնում եմ, ոչ մի արդյունքի չեք հասնի, միայն աղմուկ կբարձրացնեք: Դե՛հ, իսկ եթե շատ աղմկեք, ձեզ կարող են բռնել դիտակալները: Սա ձեզ համար նեղի ամրոցը չէ: Շատլեն Փրանցիսկ I-ի սեփականութունն է: Եվ մենք դեռ կտեսնենք, թե այստեղ ով է ավելի զորեղ՝ դո՞ւք, թե նորին մեծութունն Ֆրանսիական թագավորը:

Բենվենուտոն շուրջը նայեց և տեսավ դետափին ընկած քարե կարճասյունը, որը հազիվ թե կարողանային բարձրացնել նույնիսկ երկու մարդ: Նա առանց վարանելու մոտ վազեց և այդ կարճասյունը ուսին առավ, ասես սովորական խճաքար լիներ:

Բայց մի քանի քայլ անելով, նկարիչը մտածեց, որ նույնիսկ դարպասը ջարդելով, դեմ-դիմաց կգա բանտի պահակախմբի հետ, որը կբռնի նրան ու բանտ կնետի: Այդ դեպքում ո՞վ կազատի Ասկանիոյին: Այդ մտածելով, Բենվենուտոն ցած նետեց կարճասյունը, որն այնքան ծանր էր, որ մի քանի մատնաշափ խրվեց հողի մեջ:

Հստ երևույթին, պրևոն դիտում էր այդ տեսարանը դռան անցքից, որովհետև Բենվենուտոյի ականջին հասավ ծիծաղի նոր պոռթկում: Խույս տալով գլուխը անիծյալ դարպասին

զարկելու, ջարդուփշուր անելու գայթակղությունից, Բենվե-
նուտոն արագ հեռացավ բանտից:

Նա քայլերն ուղղեց դեպի դ'էտամպ ամրոցը:

Պեռ ամեն ինչ կորած չէ, եթե հաջողվի տեսնել Կոլոմ-
բային: Չէ՞ որ սիրային ղեզումների ժամանակ Ասկանիոն
կարող էր հարսնացուին վստահած լինել գաղտնիքը, որը չէր
համարձակվում հայտնել ուսուցչին:

Մկրբում ամեն ինչ լավ էր, ամրոցի դարպասը փակ չէր:
Բենվենուտոն կտրեց-անցավ բակը ու մտավ նախասենյակ,
որտեղ կանգնած էր ոսկեկար համազգեստ հագած բարձրա-
հասակ մի ծառա՝ իսկակսն հսկա, թիկունքը շորս ոտնա-
չափ, հասակը՝ վեց:

— Ո՞վ եք դուք, — հարցրեց նա Չելլինին՝ ոտից գլուխ
չափելով նրան հայացքով:

Այլ հանգամանքներում այդ վիրավորական հայացքին
Բենվենուտոն կպատասխաներ որևէ հանդուգն արարքով,
բայց պետք էր տեսնել Կոլոմբային, պետք էր փրկել Ասկա-
նիոյին, և նա զսպեց իրեն:

— Ես Բենվենուտո Չելլինին եմ, Փլորենտացի վարպե-
տը, — ասաց նա:

— Ի՞նչ եք կամենում:

— Տեսնել մադամուզել Կոլոմբային:

— Մադամուզել Կոլոմբային տեսնել չի կարելի:

— Ինչո՞ւ:

— Որովհետև նրա հայրը, մեսսեր դ'էստրովիլը, Փարի-
զի պրևոն, իր աղջկան հանձնել է դքսուհի դ'էտամպի խնամ-
քին ու խնդրել է խստորեն հետևել նրան:

— Բայց չէ՞ որ ես նրա բարեկամն եմ:

— Հենց այդ պատճառով էլ ավելի կասկածելի եք թվում:

— Իսկ ես ասում եմ, որ պետք է տեսնեմ նրան, — բա-
ցականչեց Բենվենուտոն. նա սկսում էր բորբոքվել:

— Իսկ ես ասում եմ, որ չեք տեսնի:

— Մի՞թե չի կարելի տեսնել գոնե դքսուհուն:

— Չի կարելի:

— Բայց չէ՞ որ նա իմ պատվիրատուն է:

— Նա ոչ ոքի չի ընդունում:

— Ուրեմն, պարզապես կարգադրված է ինձ ընդունել:

— Հենց այդպես է, շատ ճիշտ կռահեցիր:

— Իսկ դու գիտե՞ս, բարեկամ, թե ինչ մարդ եմ ես, — գոռաց Չելլինին, շկարողանալով զսպել իր ահապտու ծիծաղի պոռթկումը, որը միշտ նախորդում էր նրա կատաղության պոռթկմանը: — Գիտե՞ս արդյոք, որ ես մտնում եմ հենց այնտեղ, որտեղ ինձ չեն թողնում:

— Այդ ինչպե՞ս: Բարի եղեք բացատրել:

— Եթե, օրինակ, դուան առաջ կանգնած է քեզ նման մի տխմար...

— Այդպես, այդպես, — գրգռում էր նրան ծառան:

— ... Ես ցած եմ գլորում տխմարին ու տեղահան եմ անում դուռը, — ավարտեց Բենվենուտոն, անմիջապես գործի անցնելով. բռունցքի ուժեղ հարվածով նա շորս քայլ հեռու շարտեց խեղճ ծառային ու ոտքը զարկեց դուռնը:

— Օգնությո՞ւն, — աղաղակեց ծառան:

Բայց օգնություն կանչելու հարկ չկար. հենց որ Բենվենուտոն դուրս եկավ նախասենյակից, նրա դեմ կանգնեցին վեց լակեյ, որոնք ասես հատկապես սպասում էին նրան:

Ոսկերիչն անմիջապես գլխի ընկավ, որ դքսուհին իմացել է իր վերադարձի մասին և ձեռք է առել նախազգուշական հարկ եղած միջոցները:

Այլ հանգամանքներում Բենվենուտոն, ձեռքի տակ ունենալով սուսեր ու դաշույն, կհարձակվեր բոլոր այդ ծառաների վրա ու պարտության կմատներ, բայց թագավորի ֆավորիտուհու պալատում այդպես վարվելը վտանգավոր էր և կարող էր սոսկալի հետևանքների հանգեցնել: Եվ ահա երկրորդ անգամ, հակառակ իր սովորության, Բենվենուտոն զսպեց զայրույթը, պատյանի մեջ դրեց արդեն մերկացրած սուսերը և հետ դարձավ, ամեն քայլափոխում կանգ առնելով, մարտից հետո նահանջող առյուծի նման: Առանց շտապելու դուրս եկավ նախասրահից, անցավ բակը և, հայտնվելով փողոցում, քայլերն ուղղեց դեպի Լուվր, հավատացած լինելով, որ թագավորը կընդունի իրեն ցանկացած ժամանակ:

Բենվենուտոն գնում էր համաչափ քայլքով և թվում էր հանգիստ է, բայց այդ հանգստությունը կարծեցյալ էր. նրա ճակատը ծածկվել էր քրտինքի խոշոր կաթիլներով, իսկ հոգում ալեկոծվում էր մոռյլ զայրույթը, որը տանջում էր նրան այնքան ավելի սասակորեն, որքան ջանում էր հաղթահարել այն: Ոչ մի բան այնքան հակառակ չէր նրա գործունյա էությունը, որքան անտարբեր սպասումը, ոչ մի բան այնպես համբերությունից չէր հանում նրան, ինչպես փակ դռան, կամ հանդուգն ծառայի մերժման նման աննշան խոչընդոտը: Ուժեղ մարդիկ, որոնք կարողանում են տիրապետել իրենց, լիակատար հուսահատություն մեջ են ընկնում, երբ նրանց առաջ ծառանում է որևէ անհաղթահարելի, իրեղեն արգելք: Բենվենուտոն հիմա իր կյանքից տասը տարի կտար՝ մեկն ու մեկի գլխին զայրույթը թափելու համար: Ժամանակ առ ժամանակ նա բարձրացնում էր գլուխն ու շանթարձակ հայացքը հառում անցորդներին, կարծես ցանկանալով ասել. «Դեհ, ձեր մեջ կա՞ արդյոք մի թշվառական, որին ձանձրացրել է կյանքը: Ես հաճույքով կօգնեմ նրան այն աշխարհը շրվելու»:

Քառորդ ժամ հետո Բենվենուտոն արդեն պալատում էր, մանկավարժների սենյակում, և խնդրում էր իր դալստյան մասին անմիջապես զեկուցել թագավորին: Նա ցանկանում էր ամեն ինչ պատմել Ֆրանցիսկ 1-ին ու խնդրել, որ ազատ արձակի Ասկանիոյին, կամ գոնե թույլ տա տեսակցելու նրա հետ: Չելլինին ամբողջ ճանապարհին խորհում էր, թե իր խնդիրը ինչ բառերով արտահայտի, կանխապես հաճույք պատրվ նախապատրաստած ճառից, որովհետև բարձր կարծիք տներ իր պերճախոսության մասին: Մինչդեռ այդ բոլոր անուպասելի իրադարձությունները, ստացած վիրավորանքները, անհաղթահարելի արգելքները, վազվզոցը, իրարանցումը բորբոքեցին կրակոտ նկարչի արյունը: Նրա քունքերը ցավում էին, ձեռքերը դողում, սիրտն ուժգին բաբախում էր: Ինքն էլ չէր հասկանում, թե ինչու, բայց հոգեկան ու ֆիզիկական ուժերը կրկնապատկվել էին: Երբեմն ամբողջ օրվա ետանդը կենտրոնանում է կյանքի մի բույսի մեջ:

Չենց այդպիսի մի պահ էր ապրում Բենվենուտոն, երբ

դիմեց թագավորական մանկավիհին, խնդրելով իր մասին ղեկուցել Ֆրանցիսկ 1-ին:

— Թագավորը չի ընդունում, — պատասխանեց մանկավիհը:

— Դուք ինձ շնանաչեցի՞ք, — զարմացավ Բենվենուտոն:

— Ընդհակառակը, իսկույն ճանաչեցի:

— Ես Բենվենուտո Չելլինին եմ, և նորին մեծության դռները միշտ բաց են իմ առաջ:

— Հենց այն պատճառով, որ դուք Բենվենուտո Չելլինին եք, հրամայված է ընդունել ձեզ, — պատասխանեց մանկավիհը:

Բենվենուտոն մեխվեց տեղում:

— Ա՛, այդ դո՞ւք եք, պարոն դե Տերմ, — շարունակեց մանկավիհը, դիմելով Չելլինիի հետ ներս եկած պալատականին: — Համեցեք, խնդրեմ... Դուք էլ, կոմս դե լա Փայ, ներս մտեք... Դուք նույնպես, մարշիզ դե Պրե:

— Իսկ ե՞ս: Ես շե՞մ կարող ներս մտնել, — բացականչեց Բենվենուտոն, զայրույթից գունատվելով:

— Դո՞ւք: Ո՛չ, չեք կարող: Թագավորը վերադարձավ տասր րուպե առաջ և ասաց. «Երբ հայտնվի այդ հանգուզն ֆլորենտացին, հայտնեցեք, որ չեմ կամենում տեսնել նրան և խորհուրդ տվեք ավելի համեստ լինել, եթե չի ցանկանում Շատլե բանտը համեմատել Սուրբ Հրեշտակի ամրոցի հետ»:

— Գթա ինձ, տեր աստված, համբերություն տուր, — խուլ ձայնով մրմնջաց Բենվենուտոն: — Աստված վկա, ես սովոր չեմ սպասել միապետների դռների առաջ: Վատիկանն ամենեկին էլ վատ չէ կուզրից, իսկ կեոն X պապը ոչ մի բանով չի զիջում Ֆրանցիսկ 1-ին, և այնուհանդերձ ես երբեք չեմ սպասել ո՛չ Վատիկանի դռան առաջ, ո՛չ կեոն X-ի ընդունարանում: Բայց ես կռահում եմ, թե պատճառն ինչ է: Թագավորը նոր է վերադարձել տիկին դ՛էտամպի պալատից, և դքսուհին հասցրել է լարել նրան իմ ղեմ: Այո՛, այո՛, հենց այդպես է: Համբերատար լինենք հանուն Ասկանիոյի, հանուն Կոլումբայի:

Սակայն, շնայած այդ բարի դիտավորությանը, Բենվենուտոն ստիպված եղավ ուժասպառ հենվել սյանը. նրա ծրնկ-

ները թուլացան, իսկ սիրտը սլուտրաստ էր պայթել: Վերջին վիրավորանքը ոչ միայն խոցեց նրա ինքնասիրութիւնը, այլև պիպիլ լավադուլն զպացմունքներին: Չելլինիի հողին լցվեց դառնութեամբ, հուսախաբութեամբ, իսկ ամուր սեղմված շրթունքները, մտայլ հայացքը և ջղաձգորեն կծկված բռունցքները վկայում էին նրա վշտի սաստկութեան մասին:

Բայց այնուհանդերձ մի րոպե հետո նա տիրապետեց իրեն և գլուխը թափահարելով, հետ գցեց ճակատին թափված մաղերն ու հաստատուն, վճռական քայլքով դուրս եկավ պայտախոյ: Թուր ականատեսներն, ակամա հարգանքով, նայում էին նրա հետևից:

Բայց եթե Բենվենուտոն հանգիստ էր թվում, ապա իր բացառիկ ինքնատիրապետման շնորհիվ միայն, որովհետև իրականում նա իրեն զգում էր հալածված եղջերուի նման: Որոշ ժամանակ նկարիչն առաջ էր գնում, ինքն էլ շիմանալով թե ուր և ինչու. նա շուրջը տեսնում էր գորշ մատախուղ, լսում էր սեփական արյան աղմուկը միայն և հարբածի նման հարց էր տալիս ինքն իրեն՝ երա՞զ է սա, թե՞ իրականութուն: Մի՞թե հռչակավոր վաբպետ Բենվենուտո Չելլինիին, պապերի ու թաղավորների սիրելիին, որի առաջ լայնսրեն բացվում էին բոլոր դռները, մի ժամվա ընթացքում երեք անգամ դուրս վռնդեցին: Եվ շնայած այդ եռակի վիրավորանքին, ինզճը ստիպված էր զսպել զայրույթը, թաքցնել այտերին վառվող ամոթի կարմիրը: Չէ՞ որ մինչև Ասկանյոյին ու Կոլամբային փրկելը նա իրավունք չուներ ազատութիւն տալ պրացմունքներին: Բենվենուտոյին թվում էր, թե բոլոր անցորդները՝ զբոսամոլները կամ գործով աճապարող քաղաքացիները, կարդում են իր դեմքին գրված խայտառակութիւնը ու հուսահատութիւնը: Եվ գուցե կյանքում առաջին անգամ այդ ոչ շարքային, բայց դաժանորեն ստորացված մարդր կասկածեց իր ուժերի վրա: Վերջապես, քառորդ ժամ աննպատակ, խառնիխուռն, խուճապահար փախուստից հետո Բենվենուտոն սթափվեց ու բարձրացրեց գլուխը. հողեկան անկումն անցավ, կրկին սկսվեց տենդը:

— Տեսնե՛նք, — բարձրաձայն բացականչեց նա, համակված միայն մի մտքով, մի ցանկութեամբ: — Տեսնե՛նք,

նրանք կկարողանան արդյոք նույնքան ստորացնել արձանագործին, որքան քիչ առաջ ստորացրին մարդուն: Տեսնենք, Չելլինի, ի՞նչ կասեն նրանք, երբ կրկին ստիպես նրանց հիանալ քո ստեղծագործությամբ: Հապա, Յուսիտեր, ապացուցիր, որ դու առաջվա նման իշխում ես ոչ միայն Ուիմպոսում, այլև՝ հասարակ մահկանացուների վրա:

Այդ բառերն արտասանելով, Բենվենուտոն, հիրավի, գերբնական մղումով արագ քայլեց դեպի Տուրնելի ամրոցը՝ թագավորների նախկին աթոռանիստը, որտեղ դեռ ապրում էր դառամյալ կոնետարլ Ան դե Մոնմորանսին:

Չնայած իր ամբողջ անհամբերությանը, Բենվենուտոն մի ամբողջ ժամ սպասելուց հետո միայն կարողացավ տեսնել Ֆրանցիսկ 1-ի գլխավոր հրամանատարին, որին միշտ շրջապատում էին պալատականներն ու խնդրատուները:

Ան դե Մոնմորանսին բարձրահասակ, տարիներից մի քիչ կորացած ծերունի էր, գոռոզամիտ, սառը, անսիրալիր, հայացքը՝ կենսալից, խոսքը՝ կցկտուր: Նա միշտ անտրամադիր էր, անդադար փնթփնթում էր և հավանաբար իրեն ստորացած կղզւոր, եթե որեւէ մեկը տեսներ նրան ժայտալիս: Այդ խոժոռադեմ, տարեց մարդն ինչպե՞ս էր դուր եկել հմայիչ, սիրալիր թագավոր Ֆրանցիսկին: Ըստ երևույթին, դրա պատասխանը պետք է փնտրել հակադրությունների նմանության որենքի մեջ: Ֆրանցիսկ 1-ը տիրապետում էր նույնիսկ մերժում ստացողներին դժգոհ չթողնելու գաղտնի արվեստին, կոնետարլը, ընդհակառակը, զայրացնում էր նույնիսկ բավարարված խնդրատուներին: Մեծ տաղանդի տեր չլինելով, նա, այնուամենայնիվ, կարողացել էր վստահություն ներշնչել թագավորին կոփված ռազմիկի անհողզողությամբ և կատարյալ դիկտատորի ծանրակշռությամբ:

Երբ Բենվենուտոն ներս մտավ, կոնետարլն, իր սովորության համաձայն, անցուդարձ էր անում սենյակում: Նա Չելլինիի ողջույնին պատասխանեց գլխի շարժումով միայն. հետո հանկարծ կանգ առավ ու խնդրատուին հառելով թափանցող հայացքը, հարցրեց.

— Ո՞վ եք:

— Բենվենուտո Չելլինին:

— Ի՞նչ դործով եք զբաղվում:

— Թագավորի ոսկերիչն եմ,— պատասխանեց Բենվենուտոն, զարմացած, որ իր անունը լսելուց հետո այդպիսի հարց են տալիս:

— Այո, այո, ճիշտ է: Ճանաչեցի,— քրթմնջաց կոնետարը:— Ի՞նչ եք ուզում ինձնից, հարգելիս: Ուզում եք պատվե՞ր ստանալ: Նախազգուշացնում եմ՝ հույս չունենաք, զուրկորցրած ժամանակ է: Ազնիվ խոսք, չեմ հասկանում, թե ինչու այժմ բոլորը հափշտակված են արվեստով: Դա պարզապես ինչ-որ համաճարակ է, և միայն ես զլուխս ազատեցի՝ դրանից: Ո՛չ, քանդակագործությունն ամենևին չի հետաքրքրում ինձ, պարոն արձանագործ: Ձեր ծառայություններն ստաշարկեք ուրիշ մեկին: Գնաք բարով:

Բենվենուտոն ուզում էր արդեն դուրս գալ:

— Ազնիվ խոսք,— շարունակեց կոնտեբալը,— իմ մերձույժը թող ձեզ չվիրավորի: Կգտնվեն ինչքան ասես պալատական կապիկներ, որոնք թագավորին ընդօրինակելով, արվեստներ զնահատող կձևանան, ոչինչ չհասկանալով դրանից: Ի՞նչ վերաբերվում է ինձ, ապա մեկընդմիջտ հիշեցեք. ես ճանաչում եմ մի արվեստ միայն՝ ռազմականը: Եվ անկեղծորեն ասում եմ ձեզ, որ ինձ համար հարցուր անգամ ավելի թանկ է առողջ դեղչկուհին, որն ամեն տարի մի երեխա է ծնում, այսինքն՝ երկրին զինվոր է տալիս, քան խղճուկ քանդակագործը, որն անտեղի ժամանակ է վատնում բրոնզե մարդիկ ձուլելու համար, որոնցից ոչ մի օգուտ չկա. միայն զնդայիրներն են թանկանում:

— Բայց, ձերդ պայծառափայլություն,— առարկեց Բենվենուտոն, այդ ամբողջ ճառը լսելով իր համար անհասկանալի համբերատարությամբ,— ես եկել եմ ձեզ հետ խոսելու ամենևին ոչ արվեստի մասին, այլ՝ պատվի գործի:

— Դե՛հ, այդ ուրիշ բան: Ի՞նչ եք կամենում: Ասացեք, միայն թե շուտ:

— Հիշե՞ւմ եք, ձերդ պայծառափայլություն, ինչպես մի անգամ ձեր ներկայությամբ թագավորը խոստացավ կատարել ցանկացածս խնդիրքը, երբ ավարտեմ բրոնզե Յուպիտերի ձուլումը: Նորին մեծությունը նույնիսկ խնդրեց ձեզ և

վարչապետ Պուաչեին հիշեցնել իրեն այդ խոստումը:

— Հիշում եմ: Հետո՞ ինչ:

— Ձերդ պայծառափայլություն, մոտենում է օրը, երբ պետք է աղերսեմ, որ հիշեցնեք թագավորին իր խոստումը: Կբարեհաճե՞ք, արդյոք, բավարարել խնդիրքս:

— Եվ դրա համար անհանգստացնո՞ւմ եք ինձ, պարոն: Դուք եկել եք ինձ հիշեցնելու իմ պա՞րտքը:

— Ձերդ պայծառափայլություն...

— Դուք հանդուգն մարդ եք, պարոն ոսկերիչ: Իմացած եղեք. պարոն, կոնետաբլ դե Մոնմորանսիին հարկ չկա մատնանշելու, որ նա չկորցնի իր ազնվությունը: Թագավորը խնդրել է հիշեցնել իր տված խոստումը... Վիրավորանք չի նի ասելը, նա պետք է հաճախ դիմեր այդպիսի նախազգուշության: Այո, ես կանեմ այդ, եթե նույնիսկ հիշեցումը դուր չդա նորին մեծությանը: Գնաք բարով, պարոն Չելլինի, ինձ սպասում են ուրիշ գործեր:

Այդ բառերն արտասանելով, կոնետաբլը դեմքը շրջեց Բենվենուտոյից ու նշան արեց, որ ներս թողնեն հետևյալ խնդրատուին: Բենվենուտոն դուրս տվեց կոնետաբլին, որի կուպիտ անկեղծությունը դուր եկավ նրան: Նույն տենդագին հուզմունքի ազդեցությամբ, նույն հետամտող մտքի ճնշման տակ նա քայլերն ուղղեց մոտակայքում՝ Սուրբ Անտոնիոսի կամարի մոտ ապրող վարչապետ Պուաչեի տունը:

Վարչապետ Պուաչեն ինչպես արտաքուստ, այնպես էլ ներքուստ լիակատար հակադրությունն էր մշտապես մոռալ, ասես փայտ կուլ տված կոնետաբլ դե Մոնմորանսի: Պուաչեն քաղաքավարի էր, սրամիտ, նենգ և ոտից զլուխ թաղված էր կնգումի մորթիների մեջ: Այդ մորթիների միջից երևում էին միայն ճերմակահեր գլուխը՝ վիթխարի ճաղատով, խելք, կենսախինդ աչքերը, բարակ շրթունքները և նիհար, գունատ ձեռքերը: Նա, թերևս, կոնետաբլից ոչ պակաս հոգու ազնվություն ուներ, բայց ուղղամտությամբ նրան չէր հասնի:

Այստեղ էլ Բենվենուտոն ստիպված եղավ կես ժամի շափ սպասել. բայց նա պարզապես անճանաչելի էր դարձել ու արդեն վարժվել էր դրան:

— Ձերդ պայծառափայլություն,— ասաց Չելլինին, երբ ներս հրավիրեցին նրան,— ես եկել եմ ձեզ հիշեցնելու թա-

գավորի մի խոստման մասին: Նորին մեծությունը ձեր ներկայութեամբ տվեց ինձ այդ խոստումը և խնդրեց, որ դուք ոչ միայն վկա լինեք, այլև՝ երաշխավոր...

— Հասկանում եմ ձեզ, մեսսեր Բենվենուտո,— ընդմիջեց նրան Պուաշեն,— և եթե կամենում եք, ես պատրաստ եմ առաջին իսկ հարմար առիթի հիշեցնել այդ մասին նորին մեծութեանը: Սակայն պետք է նախազգուշացնեմ, որ օրենքի տեսակետից դուք ոչ մի իրավունք չունեք որևէ բան պահանջելու Քաղաքին այդ խոստումը բանավոր է տվել, վստահելով ձեր համեստութեանը, բայց այն ոչ մի ուժ չունի օրենքի ու դատարանի առաջ: Այդպես, ուրեմն, եթե Ֆրանցիսկո-ը բավարարի ձեր խնդրքը, ապա բացառապես իրեն հատուկ ազնվության ու մեծահոգության շնորհով:

— Ես էլ ճիշտ այդպես եմ մտածում, ձերզ պայծառափայլություն,— պատասխանեց Բենվենուտոն:— Եվ միայն մի բան եմ խնդրում ձեզնից. հարկ եղած դեպքում կատարել լիազավորի հանձնարարութեանը, մնացյալը թողնելով նորին մեծութեան մեծահոգութեանը:

— Հիանալի է,— ասաց Պուաշեն:— Այդ դեպքում կարող եք միանգամայն վստահել ինձ, թանկագին պարոն Զելլինի: Բենվենուտոն դուրս եկավ Պուաշեի տնից մի քիչ խաղաղփած, բայց դեռ զոզում էր անհամբերությունից, զայրույթից, վիրավորանքից, որոնք այդքան ժամանակ ստիպված էր դառնել, իսկ նրա մտքերն ընթանում էին իրենց կարգով՝ ցարուցրիվ: Այդ պահին նրա համար գոյություն չունեք ոչ ստորածություն, ոչ ժամանակ. առաջ գնալով լայն քայլերով, Էննոլինուտոն ասես երազում տեսնում էր Ստեֆանայի սլայժատ կերպարանքը, դել Մորոյի բնակարանը, Սուրբ Հրեշտակի ամրոցը և Կոլոմբային՝ Նելի Փոքր ամրոցի այգում: Իրա հետ մեկտեղ ինչ-որ զերբնական ուժի հորդում էր զգում և նրան թվում էր, թե ինքը ճախրում է բարձր երկնքում:

Այդպիսի հոգեվիճակում նա վերադարձավ Նելի Մեծ ամրոցը: Թուր ենթավարպետները, հնազանդ նրա հրամանին, իրենց տեղերում էին ու սպասում էին հետագա կարգադրությունների:

— Հայա, գավակներս, ձեզ տեսնեմ: Սկսում ենք Յուպիտերի ձուլումը,— ներս մտնելուն պես գոչեց Չելլինին ու նետվեց արվեստանոց:

— Բարի օր, վարպետ Չելլինի,— ասաց ժակ Օբրին, որը մի ուրախ երգ մոմալով ներս մտավ նրանից քիչ հետո:— Մի՞թե իսկապես շտեսաք ու շսեցիք ինձ: Հինգ բոպե կլինի, որ վազում եմ ձեր հետևից ու կոկորդ պատռելով ձայն տալիս. նուչնիսկ շունչս կտրվեց: Այս ի՞նչ է պատահել: Բոլորն այնքան տրտում են, ասես դատավճիռ կայացնող դատավորներ լինեն:

— Չուլարա՛ն: Շուտ, շուտ,— շարունակում էր Բենվենուտոն, համարյա ուշադրութլուն շղարձնելով ժակ Օբրիի վրա:— Ամեն ինչ կախված է ձուլման որակից: Ողորմա՛ծ եղիր, տեր աստված: Ա՛խ, բարեկամներս,— կցկտուր շարունակում էր Չելլինին, դիմելով մերթ ենթավարպետներին, մերթ ժակ Օբրիին:— Ա՛խ, ժակ: Եթե իմանայիր, թե այստեղ շեղածս ժամանակ ինչ է կատարվել: Նրանք ճարակորեն օգտրվել են իմ բացակայութլունից:

— Ի՞նչ է պատահել, վարպետ,— հարցրեց լրջորեն անհանգստացած ժակ Օբրին, տեսնելով Չելլինիի արտասովոր բորբոքվածութլունն ու ենթավարպետների ընկճված տեսքը:

— Նախ և առաջ, տղաներ, այստեղ բերեք եղևնու շոր փայտ, ինչքան որ կարող եք. գիտե՞ք, այն փայտը, որ ես պատրաստել եմ կես տարի առաջ... Իսկ պատահել է այն, սիրելի ժակ, որ իմ լավագույն աշակերտը՝ Ասկանիոն, առանց որի ես անօգնական եմ, նստած է Շատլեում: Կոլոմբան, այդ սքանչելի աղջիկը, պրևոյի դուատրը, որին սիրում է Ասկանիոն, առևանգված է Մարսի արձանից, որտեղ ես նրան թաքցնում էի, և գտնվում է իր շարագույն թշնամու՝ տիկին գ՛էտամպի ձեռքում: Բայց ոչինչ, մենք նրանց կփրկենք... Հե՛յ, հեյ: Այդ ո՛ւր ես գնում, Հերման: Փայտը ներքնատանը չէ, այլ բակում:

— Ասկանիոն ձերբակալվա՛ծ է,— բացականչեց ժակ Օբրին:— Կոլոմբային առևանգե՛լ են:

— Այո: Ինչ-որ գարշելի մի լրտես հետամուտ է եղել դժբախտ երեխաներին ու գաղտնիքը, որը ես պահում էի

նույնիսկ ձեզնից, սիրելի ժակ, հայտնել է դքսուհուն: Բայց սպասեցեք, ես կգտնեմ այդ սրիկային... Արա՛գ, արա՛գ, տղերք... Եվ այդ դեռ բոլորը չէ: Պատկերացրու, թագավորը չի ցանկանում տեսնել ինձ, բայց չէ՞ որ նա միշտ ինձ բարեկամ էր անվանում: Եվ սրանից հետո արի ու հավատա մարդկանց բարեկամությանը: Թեև, ճիշտն ասած, թագավորները մարդ չեն, այլ՝ սոսկ թագավոր: Լուվր մտնելու բոլոր ջանքերըս ապարդյուն անցան. ինձ չթողեցին նորին մեծության մոտ. ես շկարողացա գեթ մի բառ ասել նրան: Ուրեմն թող խոսի իմ արձանը... Շո՛ւտ, սլատրաստեցեք կաղապարը, բարեկամներս, ոչ մի բոպե չկորցնեք... Ո՞վ գիտի, զուցե այդ սոսկալի կինը հիմա վիրավորո՞ւմ է խեղճ Կոլոմբալին: Սրիկա պրեոն ծիծաղում է վրաս, իսկ բանտապահները խաշտանդում են Ասկանիոյին: Այդ մղձավանջային տեսիլքները, ժակ, ամբողջ օրը հանգիստ չեն տալիս ինձ: Ես կյանքիցս տասը տարի կտայի, միայն թե որևէ մեկը մուտք գործեր Ասկանիոյի բանտասենյակն ու նրանից իմանար գաղտնիքը, որը հնարավորություն կտա մեզ ամբարտավան դրքատուհուն ծունկի բերելու: Հասկանո՞ւմ ես, ժակ, Ասկանիոն գիտի ինչ-որ կարևոր դադանիք, որը կապված է դքսուհու հետ: Բայց ազնվաբարո սլատանին շցանկացավ այդ գաղտնիքը հայտնել նույնիսկ ինձ: Եվ, այնուամենայնիվ, ես կհասնեմ նույատակիս: Մի վախենա, Ստեֆանա, ես կպաշտպանեմ բո՛ւ գավակին մինչև արյանս վերջին կաթիլը ու կփրկեմ նրան: Այո, կփրկե՛մ: Ա՛խ, միայն թե ձեռքս ընկներ այդ սրիկան, որը մտանել է մեզ: Ես իմ ձեռքով կխեղդեի նրան: Գոնե երեք օր կյանք ունենայի: Ինձ անընդհատ թվում է, թե հոգիս այրող կրակը շուտով մարմինս էլ կխժո՛ի: Մի՞թե ես կմեռնեմ... չեմ հասցնի ավարտել Յուպիտերը: Շո՛ւտ, շո՛ւտ, տղերք: Աորձի տնցեք:

Ընդմեջնուտոյի առաջին իսկ բառերը լսելով, ժակ Օբրին սոսկայի գունատվեց, կասկածելով, որ հենց ինքն է բոլոր գերախոսությունների պատճառը: Իսկ Չելլինիի խոսելու ընդմեջում ժակը վերջնականապես համոզվեց, որ իր ենթա-

29 Ասկանիո 449

դրությունն արդարացի է: Եվ հանկարծ, ըստ երևույթին, ինչոր որ սրոշում ընդունելով, նա աննկատելի շքացավ: Մինչդեռ Չելլինին, տենդով բռնված, նետվեց ձուլարան: Աշակերտները հետևեցին նրան:

— Շո՛ւտ, շո՛ւտ, գործի անցեք, տղերք, — խելագարի նման գոռում էր Բենվենուտոն:

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ

Այն մասին, թե ազնիվ մարդու համար ինչքան դժվար է բանտ ընկնելը

Թշվառ Ժակ Օբրին դուրս եկավ նեւի ամրոցից շատ ընկրճված. կասկած չինել չէր կարող, որ հենց ինքն է, թեև ահամա, մատնել Ասկանիոյի գաղտնիքը: Բայց ո՞վ է իր հերթին մատնել նրան: Այն մեծատոհմիկ ազնվակա՞նը, որի անունը Ժակը չգիտեր: Իհարկե, ո՞չ: Չէ՞ որ նա իսկական ազնւրվական էր: Ավելի կասկածելի է խաբեբա Անրին, թերևս Ռոբենը կամ Շառլոն, իսկ գուցե Գիլյոմը: Ճիշտն ասած, խեղճ Օբրին խճճվում էր ենթադրությունների մեջ: Բանն այն է, որ բացբերան ուսանողն իր հայտնագործության մասին հայտնել էր տասնյակ մտերիմ ընկերների, իսկ այժմ այնքան էլ հեշտ չէր նրանց մեջ գտնել դավաճանին: Եվ ի՞նչ օգուտ նրան փնտրելուց: Չէ՞ որ զլխավոր, իսկական, միակ դավաճանն ինքը՝ Ժակ Օբրին է: Այո՛, այո՛: Հենց ինքն է այն ստոր լրտեսը, որին Բենվենուտո Չելլինին փափագում էր իր ձեռքով խեղդել: Ընկերոջ պատահաբար հայտնաբերած գաղտնիքը հոգու խորքում թաղելու փոխարեն, ինքը տարփողել և իր անիծյալ լեզվի պատճառով դարձել է եղբոր պես սիրելի Ասկանիոյի տառապանքների պատճառը: Սրտնեղությունից Ժակը փետում էր մազերը, ծեծում կուրծքը, ընտիր հայհոյանք թափում իր գլխին, և, այնուամենայնիվ, բառ չէր գտնում իր նողկալի արարքն ըստ արժանավույն նշավակելու համար:

Խղճի խայթն այնքան մեծ էր, որ ի վերջո ժակ Օբրին նուսահատության մեջ ընկավ և գուցե կյանքում առաջին անգամ սկսեց կշռադատել: Իսկապես, եթե ինքը նույնիսկ փեփի իր բոլոր մազերն ու ճաղատ մնա, եթե ճանկոտի իր ամբողջ մարմինն ու խելագարվի խղճի խայթից, Ասկանիոյի սրտխշունը չի թեթևանա: Ուրեմն, պետք է փորձել ամեն գնով ուղղել պատճառած շարիքը և ոչ թե անտեղի վատնել թանկարժեք ժամանակը: Ազնիվ ժակի հոգում խորապես տպավորվել էին Բենվենուտոյի բառերը. «Ես կյանքիցս տասը տարի կտայի, միայն թե որևէ մեկը մուտք գործեր Ասկանիոյի բանտասենյակն ու նրանից իմանար գաղտնիքը, որը հնարավորություն կտա մեզ ամբարտավան դքսուհուն ծունկի բերելու»: Եվ ինչպես արգեն ասացինք, հակառակ իր սովորության, ժակը սկսեց կշռադատել ու եկավ այն եզրակացություն, որ նախ և առաջ ինքը պետք է մուտք գործի Շատլեի Իսկ այնտեղ մի կերպ կգտնի Ասկանիոյին:

Բանտ մտնել որպես այցելու, ինչպես կամենում էր անել Չելլինին, անօգուտ էր և, բացի այդ, ժակ Օբրին այնքան ինքնավստահ չէր, որպեսզի հաջողության հույս ունենար այնտեղ, որտեղ պարտություն էր կրել ինքը՝ Բենվենուտո Չելլինին: Բայց եթե անհնարին է բանտ մտնել այցելուի անվան տակ, ապա ավելի հեշտ ուշինչ չկա, քան հայտնվել այնտեղ որպես կալանավոր (համենայն դեպս, այդպես էր թվում մտկին): Իսկ հետո, երբ ինքը կտեսնի Ասկանիոյին, որը կհայտնի ընկերոջն իր գաղտնիքը, այլևս Շատլեում մնալու արդ չի լինի: Նա գուրս կգա այնտեղից և փրկարար գաղտնիքը կտանի Բենվենուտոյին, որի համար նկարչից կպահանջի անշուշտ ոչ թե տասը տարվա կյանք, որը պատրաստ էր ինքը զոհաբերել, այլ ներում՝ ակամա դավաճանության ամար:

Ուրախանալով, որ այդքան հարուստ երևակայություն ունի և հպարտ իր նվիրվածության գիտակցությամբ, նա քայլերն ուղղեց դեպի Շատլե:

Մեկ օր, մի լավ մտածենք այդ մասին, որպեսզի նոր հիմարություններ չգործենք,— շարունակում էր խորհել ժակ Օբրին. դեպի բանտ՝ այդ բաղձալի նպատակակետը դնա-

լիս:— Այս պատմութիւնն ինձ թվում է նույնքան խճճված, որքան ժերվեզայի թելի կծիկը:

Եվ այսպես, փորձենք հերթականութեամբ պարզել ամեն ինչ. Ասկանիոն սիրեց պրևոյի աղջկան՝ Կոլոմբային: Լա՛վ: Իմանալով, որ պրևոն պատրաստվում է ամուսնացնել նրան կոմս գ'Օրբեկի հետ, Ասկանիոն առևանգեց սիրած աղջկան: Հիանալի՛ է: Առևանգելով աղջկան և շիմանալով ուր տանել գեղանի փոքրիկին, նա Կոլոմբային թաքցրեց Մարսի գլխում: Սքանչելի է: Աննմա՛ն գաղտնարան է, ազնիվ խոսք: Եվ եթե ինձ նման անասունը... սակայն շարունակենք... իմ հարցը ես դեռ կհասցնեմ քննարկել: Հետևելով ցուցմունքներիս (հավանաբար հենց այդպես էլ եղել է), պրևոն բռնել է աղջկան ու բանտարկել Ասկանիոյին: Ուրեմն, ես կրկնակի անասուն եմ: Բայց հենց այստեղ կծիկն ավելի է խճճվում: Դքսուհին ի՞նչ կապ ունի այդ ամենի հետ: Ինչո՞ւ է նա ատում Կոլոմբային, որին բոլորը սիրում են: Հիրավի, ինչո՞ւ... Ա-ա՛, կոմս հեցի: Երբ արվեստանոցում խոսք է բացվում դքսուհու մասին, ենթավարպետները սկսում են քրքջալ, իսկ Ասկանիոն շփոթվում է... Ուրեմն, պարզ է, տիկին գ'էտամպն անտարբեր չէ նրա նկատմամբ և բնականաբար ատում է իր մրրցակցուհուն: Ժակ, բարեկամս, դու նողկալի սրիկա ես, բայց վախկոտի մեկը չես: Այո, սակայն Ասկանիոն ի՞նչ գաղտնիք ունի, որը կարող է կործանել դքսուհուն: Ինչո՞ւ Չելլինին թողալովորի անվանն անդադար կցում է ինչ-որ Ստեֆանայի: Եվ ինչու նա կռապաշտի նման մշտապես դիմում է Յուպիտերին: Գրողը տանի, ոչինչ չեմ հասկանում այս ամենից: Ի դեպ, դուխ ջարդելու հարկ էլ չկա: Ասկանիոյի բանտախցում՝ ահա՛ որտեղ կպարզվեն բոլոր հարցերը: Գլխավորը բանտ ընկնելն է: Մնացածը հետո կմտածեմ»:

Եվ ժակ Օբրին, որն արդեն հասել էր Շատիե, ամբողջ ուժով բախեց դարպասը: Լուսամուտն անմիջապես բացվեց, և բանտապահի կոպիտ ձայնը հարցրեց, թե ի՞նչ է ուզում նա:

— Մի խցիկ ձեր բանտում, ահա թե ինչ,— մոայլորեն պատասխանեց ժակը:

— Մի խցի՞կ,— գարմացավ բանտապահը:

— Այո, ամենափոքր ու մթին խուցը, որը թերևս էլի շատ կլինի ինձ համար:

— Բայց ինչո՞ւ:

— Որովհետև ես սոսկալի հանցագործ եմ:

— Իսկ ի՞նչ հանցանք եք գործել:

«Իսկապես, ի՞նչ հանցանք եմ գործել», — մտածեց ժակը. նա բոլորովին մոռացել էր որևէ պատշաճ հանցանք հորինել: Թեև խեղճ ժակն իրեն անվանեց «ճարպիկ տղա», նա ամենևին չէր փայլում մտքի սրությամբ. ահա թե ինչու ավելի հարմար ոչինչ չգտավ, քան կրկնել բանտապահի հարցը:

— Ինչ հանցա՞նք:

— Այո, ի՞նչ հանցանք:

— Մի՞թե գլխի շեք ընկնում, — ասաց ժակը, ինքն իրեն մտածելով. «Այս ավազակը պետք է որ ինձնից լավ իմանա այդ բոլորը. թող նա թվարկի հանցագործությունները, իսկ ես որևէ բան կընտրեմ»:

— Սպանություն՞:

— Ի՞նչ եք ասում, — զայրացավ ժակը միայն այն մըտքից, որ իրեն կարող են մարդասպանների շարքը դասել: — Ո՞ւմ տեղ եք դրել ինձ, հարդելիս:

— Իսկ գուցե գողություն՞ եք արել, — շարունակեց բանտապահը:

— Գողություն: Ա՛յդ էր պակաս:

— Ուրեմն, ի վերջո, ի՞նչ եք արել, — անհամբերությամբ դուռաց բանտապահը: — Իրեն հանցագործ հայտարարելը բավական չէ, պետք է ասել, թե ինչ հանցանք ես գործել:

— Բայց եթե ես ինքս եմ ասում, որ ձեր առաջ կանգնած է մի սրիկա, ավազակ, որին պետք է անվահարել, կախապան հանե՞լ:

— Հանցա՞նք: Ասացեք, ի՞նչ հանցանք եք գործել, — անփրրղով կրկնում էր բանտապահը:

— Ուզում եք հանցա՞նքս իմանալու լավ: Ես դավաճանել եմ ընկերոջս:

— Բայց դա ի՞նչ հանցանք է: Գնաք բարով, — պատասխանեց բանտապահն ու փակեց լուսամուտը:

— Հանցագործություն չէ՞: Ընկերոջը խարելը հանցագործություն չէ՞: Բայց ձեր կարծիքով Ի՞նչ է դա:

Եվ, դուան թակը ճանկելով, Ժակ Օբրին սկսեց ավելի ուժգնորեն բախել դուռը:

— Ի՞նչ է պատահել, — լավեց դուանը մոտեցող մի ուրիշ մարդու ձայն:

— Ինչ-որ խելագար է, որն անպայման ցանկանում է ընկնել Շատլի, — պատասխանեց պահակը:

— Դե՛հ, եթե խելագար է, նրան պետք է ուղարկել հիվանդանոց և ոչ բանտ:

— Հիվանդանո՞ց, — աղաղակեց Ժակը, գլխապատառ փախչելով: — Ո՛չ, գրողը տանի: Ես ուզում եմ միմիայն Շատլի. հիվանդանոցն ինձ ամենևին պետք չէ: Թող այնտեղ ուղարկեն աղքատներին ու թշվառներին: Դեհ, ասացեք, լավա՞ծ բան է, որ հիվանդանոց տանեն մի մարդու, որի գրպանում զրնգում է փարիզյան երեսուն սու: Հիվանդանոց: Տեսե՞լ եք այս բանտապանի նման խելոքի, որը հավատացնում է, թե ընկերոջը խարելը հանցագործություն չէ: Ուրեմն բանտ ընկնել կարող է միայն նա, ով սպանել է, կամ թալանել: Օհո՛: Բայց եթե այդ շի պատահել, ապա լիովին կարող էր պատահել... Ուռա՛, գտա: Ահա իմ հանցանքը՝ ես խարել եմ Ժերվեզային:

Եվ Ժակ Օբրին սլացավ իր սիրած աղջկա՝ մանկամարդ ասեղնագործուհու տունը, մի շնչով վազելով բարձրացավ սանդուղքով, որը վաթսունից ոչ պակաս աստիճան ուներ, և սրբնթաց ներս ընկավ սենյակ, որտեղ սիրունատես մի աղջիկ՝ տնային անպաճույճ զգեստ հագած, արդուկում էր կոֆտան:

— Ա՛խ պարոն, — կոկետորեն բացականչեց աղջիկը, — ինչպե՛ս վախեցրիք ինձ:

— Ժերվեզա, թանկագինս, — բացականչեց Ժակը՝ փորձելով գիրկն առնել նրան, — դու պետք է փրկես ինձ:

— Սպասեցե՛ք, սպասեցեք մի րոպե, — արդուկը վահան գարձրած պաշտպանվելով, պատասխանեց Ժերվեզան: — Ավելի յա՛վ է ասացեք, թափառաշրջիկ, ո՞ւր էիք կորել այս երեք օրը:

— Դե՛հ, մեղավոր եմ, մեղավոր եմ, ժերվեզա: Բայց եթե իմանայիր, թե ինչքան դժբախտ եմ: Եվ ես սիրում եմ քեզ: Տեսնո՞ւմ ես, փորձանքի մեջ ընկնելով, ես շտապեցի ուղիղ քեզ մոտ: Մի՞թե դա սիրո լավագույն ապացույցը չէ: Կրկնում եմ, ժերվեզա, դու պետք է փրկես ինձ:

— Այդպես, այդպես, հասկանում եմ. դուք գնացել եք պինետուն, խմել-հարբել ու կոխվ եք արել. իսկ հիմա ձեզ փնտրում են, որպեսզի բանտ գցեն: Դդա համար էլ վազել-կելել եք մոռացության մատնված ձեր ժերվեզայի մոտ, անդաստան ու օգնություն խնդրելու: Ոչ, պարոն, գնացե՛ք բանտ և հանգիստ թողեք ինձ:

— Իմ ուզածն էլ հենց այդ է, սիրելի փոքրիկս: Ես ուզում եմ բանտ, իսկ սրիկա պահակներն ինձ ներս չեն թողնում:

— Տե՛ր աստված, ժակ, դու խելագարվե՞լ ես,— ամենա-րնքուշ կարեկցանքով հարցրեց ժերվեզան:

— Ա՛յ, նրանք էլ ասում են, որ խելագարվել եմ և նույնիսկ ուզում էին գժանոց տանել ինձ. իսկ ես, ինչ գնով էլ լինի, պետք է ընկնեմ Շատլի:

— Շատլի՞: Բայց ինչո՞ւ, ժակ: Շատլեն սոսկալի բանտ է: Ասում են, որ շատ ավելի հեշտ է այնտեղ ընկնել, քան այնտեղից դուրս գալ:

— Բայց և այնպես դա անհրաժեշտ է,— բացականչեց ժակը:— Հասկանո՞ւմ ես, անհրաժեշտ է: Ուրիշ կերպ ես չեմ կարող փրկել նրան:

— Ո՞ւմ:

— Ասկանիոյին:

— Ինչպե՞ս: Այն գեղեցիկ պատանո՞ւն, ձեր բարեկամ Գելլինիի աշակերտի՞ն:

— Այո՛, այո՛, ժերվեզա: Նրան փակել են Շատլիում: Եվ ամենասոսկալին այն է, որ իմ մեղքով:

— Տե՛ր աստված,— բացականչեց ժերվեզան:

— Ահա թե ինչու,— ասաց ժակը,— ես պետք է բանտ լնեմ, ես պետք է փրկեմ նրան:

— Բայց նրան ինչո՞ւ են բանտարկել:

— Որովհետև սիրահարվել է պրետյի աղջկան:

— Խեղճ պատանի,— հառաչեց ժերվեզան,— բայց մի՞թե դրա համար բանտարկում են:

— Բանտարկում են, ժերվեզա: Հիմա հասկանո՞ւմ ես: Նա թաքցրել էր աղջկան: Ծս հայտնաբերեցի գաղտնարանը և վերջին տխմարի նման, ինչպես մի անպիտան սրիկա, պատմեցի այդ մասին բոլորին՝ ում ասես.

— Միայն ոչ ինձ,— բացականչեց ժերվեզան:— Դուք միշտ այդպես եք վարվում, պարոն:

— Բայց մի՞թե քեզ չեմ պատմել:

— Ոչ մի բառ: Դուք շատախոսում եք ուրիշների հետ, իսկ երբ այստեղ եք գալիս, միայն ուտում-խմում ու կատակում եք: Երբեք մարդավարի չեք խոսում ինձ հետ: Բայց չէր խանգարի, պարոն, եթե իմանայիք, որ կանայք շատախոսելու սիրահար են:

— Իսկ հիմա մենք ի՞նչ ենք անում, փոքրիկս: Իմ կարծիքով շատախոսում ենք:

— Դե՛, իհարկե, որովհետև իմ օգնություն կարիքն ունեք:

— Միանգամայն իրավացի ես. դու կարող էիր ինձ մեծագույն ծառայություն մատուցել:

— Ի՞նչ ծառայություն:

— Կարող էիր ասել, որ ես քեզ խաբել եմ:

— Դե՛, իհարկե, խաբել եք, անպիտան:

— Ե՛ս,— գոչեց զարմացած ժակ Օբրին:

— Ավա՛ղ, դուք անամոթաբար գայթակղեցիք ինձ, պարոն, ձեր սքանչելի ճառերով ու կեղծ երդումներով:

— «Սքանչելի ճառերով ու կեղծ երդումներով»:

— Այո: Մի՞թե դուք չէիք ասում, որ ես ամենաղեղեցիկ աղջիկն եմ Սեն-Փերմեն-դե-Պրե արվարձանում:

— Բայց ես հիմա էլ այդ կասեմ:

— Եվ մի՞թե չէիք հավատացնում, որ վշտից կմեռնեք, եթե ձեզ շտրեմ:

— Ես այդպիսի բա՞ն եմ ասել: Տարօրինակ է... ինչ-որ չեմ հիշում:

— Եվ եթե ձեզ սիրեմ, դուք կամուսնանաք ինձ հետ:

— Ոչ, ժերվեզա, այդ մեկը ես երբեք չեմ ասել:

— Ասել եք, պարոն:

— Ոչ, ո՛չ ու ո՛չ: Որովհետև, բանն այն է, ժերվեզա, որ հայրս ստիպել է ինձ երգում տալ, ինչպես մի ժամանակ Համիլկարը՝ Հաննիբալին¹:

— Ի՞նչ երգում:

— Որ կմեռնեմ ամուրի:

— Օ՛, ես շատ դժբախտ եմ,— արցունք թափելով բացականչեց ժերվեզան, որը բոլոր կանանց նման միշտ կարող էր լաց լինել հարկ եղած բոլորներին:— Այ թե ինչպիսին են տղամարդիկ. երգվում են, խոստումներ տալիս ու անմիջապես մոռանում իրենց բոլոր երգումները: Ես էլ խելքի կգամ ու այլևս երբեք այսպիսի ծուղակի մեջ չեմ ընկնի:

— Եվ ճիշտ կանես, ժերվեզա,— խրատաբար ասաց ժակ Օբրին:

— Պատկերացնո՞ւմ եք,— շարունակեց աղջիկը,— Գողերի, ավազակների, սրիկաների համար օրենքներ գոյություն ունեն, իսկ այսպիսի խաբեբաների համար, որոնք մոլորեցնում են խեղճ աղջիկներին, ոչ մի պատիժ չի նախատեսված:

— Նրանց համար էլ պատիժ կա, ժերվեզա:

— Մի՞թե:

— Իհարկե: Չէ՞ որ տարաբախտ Ասկանիոյին կալանավորել ու Շաալե են տարել այն պատճառով, որ նա խաբել է Կոլոմբային:

— Եվ լա՛վ են արել,— պատասխանեց ժերվեզան:— Ես շատ կցանկանայի, որ ձեղ էլ այնտեղ տանեն:

— Տե՛ր աստված, ժերվեզա, չէ՞ որ այդ նույնը ես եմ ցանկանում,— բացականչեց դպրոցականը:— Ես, ինչպես արդեն ասացի, այդ գործում հույսս դնում եմ քո օգնության վրա:

— Իմ օգնությա՞ն:

— Այո:

— Միժաղեք, ծիծաղեք, անշնորհակա՛լ:

¹ Ըստ ավանդության Կարթագենի գորավար Հաննիբալը (247—183 մ. թ. ա.)՝ Համիլկար Բարկայի որդին, ինը տարեկան էր, երբ հայրը տարավ նրան արշավանքի հռոմեացիների դեմ: Արշավանքից առաջ հայրը ստիպեց նրան երգում տալ, որ իր ամբողջ կյանքը կնվիրի Հոմերի՝ իր հայրենիքի զլխավոր թշնամու դեմ պայքարելուն:

— Փերվեզա, ես խոսում եմ ամենայն լրջությամբ: Եթե դու համաձայնեիր...

— Համաձայնեիր... Ի՞նչ անել:

— Եթե համաձայնեիր ինձ վրա գանգատ տալ դատարան:

— Ինչի՞ համար:

— Որ խաբել եմ քեզ: Բայց դու կվախենաս...

— Ե՛ս, — նեղանալով, բացականչեց Փերվեզան, — կվախենամ ասել ճշմարտությո՞ւնը:

— Բայց չէ՞ որ ստիպված կլինես երդում տալ:

— Հետո՞ ինչ:

— Եվ դու կերգվե՞ս, որ խաբել եմ քեզ:

— Այո՛, այո՛, այո՛: Հազար անգամ այո՛:

— Դե՛հ, այդ դեպքում ամեն ինչ կարգին է, — անմիջապես զվարթացավ ժակ Օբրին: — Իսկ ես վախենում էի, որ չես համաձայնի: Ախր երդումը կատակ բան չէ:

— Հենց հիմա կերգվեմ, միայն թե հնարավորին չափ շուտ տանեն ձեզ Շատլի, պարոն:

— Հիանալի է:

— Գնացեք ձեր Ասկանիոյի մոտ:

— Սքանչելի է:

— Այնտեղ բավական ժամանակ կունենաք նրա հետ միասին ձեր մեղքերը խոստովանելու:

— Դա միակ երազանքս է:

— Բայց որտե՞ղ գատավոր գտնեմ:

— Արդարադատության պալատում:

— Հենց հիմա գնում եմ այնտեղ:

— Միասին գնանք, Փերվեզա:

— Այո՛, այո՛, միասին: Եվ հուսով եմ, պատիժը սպասեցնել չի տա:

— Ահա քեզ իմ ձեռքը, Փերվեզա, հենվիր խնդրեմ, — ասաց ժակ Օբրին:

— Գնանք, պարոն:

Եվ միասին, առանց շտապելու, այնպես ինչպես կիրակի օրերը սովորաբար գնում էին զբոսնելու Պրե-Օ-Կլեր, կամ Մոնմարտր, նրանք քայլեցին դեպի Արդարադատության պալատը:

Սակայն որքան մոտենում էին Թեմիսի՝ տաճարին, ինչ-
պես վերամբարձորեն անվանում էր Ժակը փարիզյան դատա-
րանի շենքը, այնքան ժերվեզան ավելի էր դանդաղեցնում
քայլերը. տեղ հասնելով, նա հազիվ բարձրացավ աստիճան-
ներով, իսկ դատավորի դռան մոտ ոտքերը բռնորովին հրա-
ժարվեցին հնազանդել, և աղջիկն ամբողջ ծանրությամբ կախ-
վեց ուսանողի թևից.

— Ի՞նչ է, փոքրիկ, վախեցա՞ր,— հարցրեց Ժակը:

— Ամենևին,— պատասխանեց ժերվեզան,— պարզապես
մի քիչ քաշվում եմ դատավորից:

— Քաշվելու ի՞նչ կա: Նա մեզ նման մարդ է:

— Այո, բայց չէ՞ որ ստիպված կլինեմ, ամեն ինչ պատ-
մել նրան...

— Եվ կպատմես, ի՞նչ մեծ բան է:

— Ստիպված կլինեմ երզում տալ:

— Կերզվե՞ս:

— Ժակ, իսկ դու լիովին հավատացա՞ծ ես, որ խաբել
ես ինձ:

— Գրո՞ղը տանի, անկասկած: Դու չէի՞ր, որ քիչ առաջ
հավատացնում էիր ինձ դրանում:

— Իհարկե, այդպես է, բայց գիտես, ինչքան էլ տարօրի-
նակ թվա, այս ամբողջ պատմությունը հիմա ինձ այնպես չի
համոզում, ինչպես տանը:

— Գնա՛նք, գնա՛նք: Ես այդպես էլ գիտեի, որ կվախե-
նաս:

— Ժակ, սիրելիս,— աղերսեց ժերվեզան,— ավելի լավ է
տուն գնանք:

— Է՛հ, ժերվեզա, ժերվեզա, բայց չէ՞ որ դու խոստա-
ցար:

— Ժակ, հոգիս, ես այլևս երբեք չեմ կշտամբի քեզ: Ոչ
մի բան չեմ խնդրի քեզնից: Ես քեզ սիրեցի պարզապես այն
պատճառով, որ ինձ դուր եկար և ուրիշ ոչինչ:

— Գնանք, գնա՛նք,— քարշ էր տալիս նրան Ժակը:—

Աիրտս վկայում էր, որ այդքան քաջություն չես ունենա: Բայց հիմա արդեն ուշ է:

— Ինչո՞ւ:

— Դու գալիս էիր ինձնից գանգատվելու, ուրեմն գանգատվիր:

— Երբեք, ո՛չ մի դեպքում, ժակ: Ես ուզում եմ տուն գնալ:

— Է՛, ոչ,— պատասխանեց ժակը, ջղայնացած ինչպես նրա համառությունից, այնպես էլ մերժման դրդապատճառից: Ոչ, երի՛ցս ոչ:— Եվ նա վճռականորեն բացեց դուռը:

— Ի՞նչ ես անում,— ճշաց ժերվեզան:

— Մի՞թե չես տեսնում՝ բախում եմ դուռը:

— Մտեք,— լսվեց խնդուն մի ձայն:

— Ես չեմ ուզում մտնել, չեմ ուզում,— կրկնում էր ժերվեզան, փորձելով դուրս պրծնել ժակի ձեռքից:

— Մտեք,— կրկնեց նույն ձայնը, այս անգամ ավելի պարզորոշ:

— Ժակ, թող ինձ, թե չէ կգոռամ,— ասաց ժերվեզան:

— Դե՛հ, ներս մտեք,— երրորդ անգամ արտասանեց ձայնը, բայց արդեն հենց դռան մոտ, որը նույն պահին բացվեց:— Ի՞նչ եք կամենում,— հարցրեց բարձրահասակ, վտիտ, սևազգեստ մի մարդ, որին տեսնելով ժերվեզան դողաց տերևի պես:

— Ահա այս աղջիկը,— ասաց ժակ Օբրին,— եկել է ձեզ մոտ ինձնից գանգատվելու:

Եվ նա ներս հրեց ժերվեզային մութ, նողկալի, կեղտոտ նախասենյակը: Դուռը անմիջապես փակեց, ինչպես թակարդը:

Ժերվեզան կամացուկ ճշաց, շգիտես վախից, թե անսպասելիությունից և ավելի շուտ փլվեց, քան նստեց պատի մոտ դրված աթոռակին:

Իսկ ժակ Օբրին, վախենալով, որ աղջիկը կարող է միտքը փոխել, փախավ միջանցքներով, որոնց գոյություն մասին գիտեին կլերիկները միայն, գրագիրներն ու դատամոլները: Դուրս վազելով Սենտ-Շատլի եկեղեցու բակը, ժակն արդեն ավելի հանդիստ քայլքով գնաց դեպի Սուրբ Միքայելի կա-

մուրջը, որով ժերվեզան անպայման պետք է անցնե՛ր՝ տուն վերադառնալիս:

Կես ժամ հետո աղջիկն, իրոք, հայտնվեց:

— Դե՛հ, գործերն ինչպե՞ս են,— մոտ վազելով, հարցրեց Օբրին:

— Ա՛խ, ժակ, դու ինձ հարկադրեցիր ստել,— պատասխանեց աղջիկը:— Բայց հուսով եմ, աստված ներող կլինի. չէ՞ որ բարի նպատակով այդպես վարվեցի:

— Ես մեղքդ ինձ վրա եմ վերցնում,— հանգստացրեց նրան ժակը:— Պատմի՛ր:

— Ի՞նչ պատմեմ,— պատասխանեց ժերվեզան:— Ես այնքան էի ամաչում, որ նույնիսկ չեմ հիշում, թե խոսքն ինչի մասին էր: Պարոն դատավորը զանազան հարցեր էր տալիս ինձ, իսկ ես պատասխանում էի «այո» կամ «ոչ», նույնիսկ վստահ չեմ, ճի՞շտ էի ասում արդյոք:

— Օ՛, թշվառական,— բացականչեց ժակը:— Չլինի՞ թե հայտարարել ես դատավորին, որ ոչ թե ես եմ խաբել քեզ, այլ դու՛ ինձ:

— Ո՛չ,— առարկեց ժերվեզան,— չեմ կարծում, որ գործը դրան հասած լինի:

— Իսկ նրանք գրեցի՞ն իմ հասցեն դատարան կանչելու համար,— հարցրեց ժակը:

— Այո, ես նրանց տվեցի հասցեն,— թոթովեց ժերվեզան:

— Ուրեմն, ամեն ինչ կարգին է,— թեթևացած շունչ առավ ժակը:— Իսկ մնացածը աստժո կամքն է:

ժերվեզային տուն տանելով և հնարավորին շափ մխիթարելով, որ կեղծ ցուցմունքի համար չվշտանա, ժակ Օբրին տուն գնաց նախախնամության հավատով լի:

Եվ իրոք (արդյոք գործին խառնվեց նախախնամությո՞ւնը, թե՞ դա զուտ պատահականություն էր), հետևյալ առավոտ ժակ Օբրին կոչնագիր ստացավ: Եվ այնպիսին է արդարադատության ուժը, որ այդ թուղթը կարդալիս ժակն ակամացնցվեց, թեև դատարան կանչվելը նրա բաղձալի երազն էր: Սակայն, ի պատիվ ուսանողի, շտապենք ավելացնել, որ

Ասկանիոյին տեսնելու հույսը և իր մեղքով փորձանքի մեջ
ընկած ընկերոջն ազատելու ցանկությունը օգնեցին ժակ
Օբրիին անմիջապես հաղթահարել ակամա թուությունը:

Նրան առաջարկվում էր դատարան ներկայանալ ժամը
տասներկուսին, իսկ հիմա ինն էր միայն: Այդ պատճառով
ժակը սլացավ ժերվեզայի մոտ, որին գտավ նույնքան հուզ-
ված, որքան նախօրեին:

— Դե՛հ, գործերդ ինչպե՞ս են,— հարցրեց ժերվեզան:

— Ահա, տե՛ս,— հաղթականորեն պատասխանեց ժակ
Օբրին, ցույց տալով հիերոգլիֆներով ծածկված թուլթը:

— Ո՞ր ժամին պետք է ներկայանաք:

— Կեսօրին: Ուրիշ ոչինչ չհասկացա:

— Դուք նույնիսկ չգիտեք, թե ինչո՞ւմ են մեղադրում ձեզ:

— Երևի մեղքս այն է, որ խաբել եմ քեզ, սիրելի փոք-
րիկս:

— Իսկ դուք չե՞ք մոռանա, որ ինքներդ ստիպեցիք ինձ
այդպիսի ցուցմունք տալ:

— Անշուշտ, չեմ մոռանա. ես պատրաստ եմ երգվել, որ
հենց այդպես է եղել, եթե նույնիսկ խելքիդ փշի ամեն ինչ
ժխտել:

— Ուրեմն չե՞ք բարկանա ինձ վրա, որ կատարեցի ձեր
ցանկությունը:

— Երբե՛ք: Ես միշտ էլ ի սրտե շնորհակալ կլինեմ քեզ:

— Ինչ էլ որ պատահի՞:

— Ինչ էլ որ պատահի:

— Չէ՞ որ այդ բոլորը ես ասացի ձեր հարկադրանքով
միայն:

— Հասկանալի է:

— Իսկ եթե վախից խելքս թոցրած ու ավել-պակաս
դուրս տված լինեմ, կներե՞ք ինձ:

— Ոչ միայն կներեմ, սիրելիդ իմ ժերվեզա, այլ մինչև
խնդրելդ արդեն ներել եմ:

Տասներկուսին քառորդ էր պակաս, երբ ժակը մտաբերեց,
որ տասներկուսին պետք է լինի դատարանում: Նա հրաժեշտ
տվեց ժերվեզային ու աճաբանքով դուրս վազեց փողոց.
դատարանի շենքը բավական հեռու էր:

Բախելով այն դուռը, որի առաջ կանգնած էր նախօրեին, նա լսեց, որ ժամացույցը խփում է տասներկուօր:

— Մաւք,— խնթխնթացրեց ծանոթ ձայնը:

Փակը շտապեց կրկնել հրավերքը և, բարեհարտորեն ժրպտալով, քիթը ցցած, գլխարկը թեք դրած, մտալ ընդունարան:

— Ձեր անո՞ւնը,— հարցրեց մեզ արդեն ծանոթ, սևազգեստ մարդը:

— Փակ Օբրի:

— Զբաղմո՞ւնքը:

— Ուսանող:

— Ախ հա՛: Երեկ ձեզ վրա գանդատվելու էր եկել Փեր... Փեր...

— Փերվեզա Պոպինոն:

— Շատ ճիշտ է: Նստեք ու սպասեցեք ձեր հերթին:

Փակը ենթարկվեց: Սենյակում արդեն նստած էին հինգ, թե վեց տղամարդ ու կին՝ տարբեր հասակի, տարբեր կացութեան: Նրանք, բնականաբար, Փակից առաջ կանչվեցին դատավորի մոտ: Ոմանք այնտեղից գուրս եկան առանց պահակախմբի՝ այդ նշանակում էր, որ նրանց դեմ եղած հանցանշանները բավարար չեն. մյուսները՝ ոստիկանական սպայի, կամ պրեռոյի երկու պահնորդի ուղեկցութեամբ: Վերջիններիս Փակը նայում էր նախանձով, որովհետև նրանց տանում էին Շատլի՝ իր փափագած բանտը:

Վերջապես կանչեցին և Փակ Օբրիին:

Փակը վեր թռավ տեղից ու այնպիսի գոհունակութեամբ ներս վազեց դատավորի առանձնասենյակը, ասես հաճելիապույն տոնախմբութեան էր գնում:

Առանձնասենյակում նստած էին երկու հոգի: Առաջինը՝ ավելի բարձրահասակ, ավելի սև, ավելի ոսկրոտ, շոր ու ցամաք, քան ընդունարանում աշխատող խոժոռադեմը (ընդամենը հինգ բոպե առաջ դա անհնարին կթվար Փակին)՝ քարտուղարն էր. երկրորդը՝ փոքրիկ, հաստիկ, համարյա կլորիկ մի մարդ, ժպտուն աչքերով, հաճելի ժպտով ու դեմքի կենսուրախ արտահայտութեամբ՝ դատավորն էր:

Ժակի ու դատավորի ժպտուն հայացքները հանդիպեցին, և ուսանողը հանկարծ այնպիսի համակրանք զգաց այդ պատկառելի մարդու նկատմամբ, որ քիչ մնաց սեղմի նրա ձեռքը:

— Հե՛-հե՛-հե՛... Ուրեմն դո՞ւք եք այն երիտասարդը,— շեշտակիրորեն նայելով ներս մտնողին, հարցրեց դատավորը:

— Ճիշտն ասած, այո, մեսսեր,— պատասխանեց ժակ Օբրին:

— Դուք, իսկապես, ճարպիկ տղա եք երևում,— շարունակեց դատավորը:— Դե՛հ, պարոն շարաճճի, վերցրեք աթոռն ու նստեք:

Ժակը նստեց ոտքը ոտքին զցած և գոհունակությամբ փքեց կուրծքը:

— Այդպե՛ս,— ձեռքերը շփելով, ասաց դատավորը:— Հապա, պարոն քարտուղար, կարդացե՛ք հայցվորուհու ցուցմունքը:

Քարտուղարը ոտքի կանգնեց և, կռանալով սեղանին, իր անշափ բարձր հասակի շնորհիվ առանց դժվարության ձեռքը հասցրեց սեղանի հակառակ ծայրը, որտեղից՝ թղթապանակների կույտի միջից հանեց ժակ Օբրիի գործը:

— Ահա գործը,— ասաց նա:

— Հայցվորուհու անունն ի՞նչ է:

— Ժերվեզա-Պյերետա Պոպինո,— կարդաց քարտուղարը:

— Նա ինքն է,— գլխով անելով, հաստատեց Օբրին:

— Անշափահաս է,— շարունակեց քարտուղարը,— տասնինը տարեկան:

— Այ քեզ բա՛ն: Անշափահաս է,— բացականչեց ժակ Օբրին:

— Գրանցված է այնպես, ինչպես աղջիկն ասել է:

«Խե՛ղճ ժերվեզա,— մրմնջաց ուսանողը:— Ճիշտ էր ասում, որ հուզմունքից՝ հիմարություններ է դուրս տվել: Ախր ինքը խոստովանեց ինձ, որ քսաներկու տարեկան է: Եվ ահավասիկ՝ տասնինը»:

— Ուրեմն, թեթևամիտ երիտասարդ,— ասաց դատավորը,— ձեզ մեղադրանք է ներկայացվում, որ խաբել եք աղ-

չրկան... Ընդունում եք այդ մեղադրանքը,— հարցրեց դատավորը:

— Ընդունում եմ, պարոն,— վճռականորեն պատասխանեց ժակը:— Եվ այդ, և ցանկացած ուրիշ մեղադրանք: Ես հանցագործ եմ, պարոն դատավոր, և խնդրում եմ ներողամիտ շինել իմ նկատմամբ:

— Ա՛խ, խորամանկ, ա՛խ, ավարա,— փնթփնթաց դատավորը, կատակերգության քեռու բարեհոգի տոնով:

Եվ կրծքին խոնարհելով իր մեծ, կլոր գլուխը, նա խորատուղվեց մտքերի մեջ:

— Գրեք,— սթափվելով և ցուցամատը բարձրացնելով, ասաց նա:— Գրեք, պարոն քարտուղար. «Նկատի առնելով մեղադրյալ ժակ Օբրիի խոստովանությունը, որ նա սուտ խոստումներով ու սիրո հավաստիացումներով խաբել է ժերվեղա-Պյերետա Պոպինոյին, վերոհիշյալ ժակ Օբրիին դատապարտել քսան փարիզյան սու՝ տուգանքի և դատական ծախքերը վճարելու»:

— Իսկ բա՞նտ,— հարցրեց ժակը:

— Ի՞նչ բանտ,— հարցին՝ հարցով պատասխանեց դատավորը:

— Սովորական: Մի՞թե ինձ չեն տանի բանտ:

— Ո՛չ:

— Եվ ես չեմ ընկնի Շատլե, Ասկանիոյի մո՞տ:

— Իսկ ո՞վ է Ասկանիոն:

— Ոսկերիչ Բենվենուտո Չելլինիի աշակերտը:

— Եվ ի՞նչ է արել այդ աշակերտը:

— Խաբել է մի աղջկա:

— Ո՞վ է այդ աղջիկը:

— Փարիզի պրեոյի դուստրը՝ մադամուազել Կոլոմբա դ'Էստարվիլը:

— Հետո՞ ինչ:

— Ինչպե՞ս թե: Ես դատավճիռն անարդարացի եմ համարում: Մենք երկուսս էլ նույն հանցանքն ենք կատարել, ուրեմն, ինչու նրան տարել են Շատլե, իսկ ինձ դատապարտում են միայն քսան փարիզյան սու տուգանքի: Այս աշխարհում արդարություն չկա՞, ինչ է:

— Իհարկե, երիտասարդ, արդարություն կա: Հենց այդ պատճառով էլ մենք կայացրինք այս դատավճիռը:

— Ոչինչ չեմ հասկանում...

— Բանն այն է, անպիտան, որ ազնվական աղջկա անարատ անունն արժե բանտարկություն, իսկ հասարակ աղջկա անունը՝ փարիզյան քսան սուրից ոչ ավելի:

— Բայց դա հրեշավոր բան է, գարշելի՛,— բացականչեց ժակ Օբրին:

— Դե՛, բարեկամ, վճարեք տուգանքն ու դնացեք ձեր գործին,— ասաց դատավորը:

— Ոչ մի տուգանք չեմ վճարի և ոչ մի տեղ չեմ գնա:

— Այդ դեպքում ստիպված կլինենք պահնորդներ կանչել և բանտ ուղարկել ձեզ, որտեղ կմնաք այնքան ժամանակ, մինչև կվճարեք տուգանքը:

— Իմ ուզածն էլ հենց այդ է:

Դատավորը կանչեց պահնորդներին:

— Այս անբանին տարեք Կարմեղոսյան հայրերի բանտը:

— «Կարմեղոսյան հայրերի» — բացականչեց ժակը: — Բայց ինչո՞ւ ոչ Շատլե:

— Որովհետև Շատլեն կալանատուն չէ, այլ՝ թաղավորական ամրոց: Հասկացա՞ք, բարեկամ: Եվ այնտեղ ընկնելու համար պետք է ավելի ծանրակշիռ հանցանք գործել: Ցանկանում եք Շատլե՞ ընկնել: Չի ստացվի:

— Սպասեցեք, սպասեցե՛ք... — բողոքեց ժակը: — Ասում եմ սպասեցեք:

— Ի՞նչ պատահեց:

— Ծթե ինձ Շատլե չեք ուղարկելու, ես համաձայն եմ վճարել տուգանքը:

— Շատ լավ, ուրեմն ամեն ինչ կարգին է,— ասաց դատավորը, և դիմելով պահնորդներին, ավելացրեց. — կարող եք գնալ, երիտասարդը համաձայն է վճարել:

Պահնորդները գնացին, իսկ ժակը դրամապանակից հանեց ու դատավորի առաջ դրեց փարիզյան քսան սու:

— Հաշվեք,— կարգադրեց դատավորը քարտուղարին:

Քարտուղարը կրկին աղեղի նման ճկվեց թղթերով ծածկված սեղանի վրա՝ ինչպես մթին, սև ծիածան ու տեղից

չշարժվելով, վերցրեց սեղանին դրված փողը. թվում էր, թե նա անսահմանորեն ձգվելու ընդունակութուն ունի:

— Գումարը ճիշտ է, — հաշվելով ասաց նա:

— Այդ դեպքում գնացեք տուն, դատարկապորտ, և տեղ ազատեք ուրիշների համար. արդարադատութունը չի կարող դբաղվել միայն ձեզնով: Գնացե՛ք, գնացե՛ք:

Ժակ Օբրին ինքն էլ տեսնում էր, որ այստեղ այլևս անելիք չունի, ու վհատված հեռացավ:

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐԵՔԵՐՈՐԴ

Որտեղ Ժակ-Օբրին հասնում է հիրավի դյուցազներգական բարձունքների

«Իսկ հետաքրքիր է իմանալ... — մտածում էր ուսանողը, դուրս գալով Արդարադատության պալատից և Զրադացի կամըրջով մեքենայարար գնալով դեպի Շատլե, — հետաքրքիր է իմանալ, ինչպես կվերաբերվի Ժերվեզան այն փաստին, որ իր պատիվը գնահատված է փարիզյան քսան սուս նա կասի, որ ես շատ սրտաբաց եմ խոսել, ավել-պակառ դուրս եմ տվել ու աչքերս կհանի»:

— Վա՛հ, ո՛ւմ եմ տեսնում:

Վերջին բացականչությունը վերաբերում էր այն բարեկիրթ ազնվականի մանկլավիկին, որին Ժակ Օբրին, որպես լավագույն բարեկամի, պատմել էր իր բոլոր գաղտնիքները: Տղան կանգնած էր գետափի պատվարին հենված և փոքրիկ բարեր վեր-վեր նետելով զվարճանում էր:

— Գրողը տանի, այ քեզ հաջողություն՝ն, — բացականչեց ուսանողը: — Իմ անանուն բարեկամը, և թե չեմ ոխալվում, բավականին տղգեցիկ մարդ է արքունիքում և կարող է ինձ բանտ նստեցնել: Նախախնամությունն ինքն է ուղարկում ինձ մոտ նրա մանկլավիկին. տղան կասի, թե որտեղ կարող եմ դտնել բարեկամիս: Ախր ես չդիտեմ ոչ նրա անունը, ոչ հուսցեն:

Եվ ցանկանալով հնարավորին շափ շուտ օգտվել նրանից, ինչը համարում էր նախախնամության առանձնահատուկ շնորհ, Ժակ Օբրին մոտեցավ մանկլավիկին:

Տղան էլ ճանաչեց նրան. նա իսկույն բռնեց երեք քարն էլ, ոտքը զցեց ոտքի հետևն ու սկսեց սպասել Ժակ Օբրիին՝ ծաղրական արտահայտությամբ, որը հատուկ էր այն միավարության բոլոր անդամներին, որին նա պատիվ ուներ պատկանել:

— Բարև, պարոն մանկլավիկ,— դեռ հեռվից ձայն տվեց Ժակ Օբրին:

— Բարև, պարոն ուսանող,— պատասխանեց տղան:— Ի՞նչ եք անում այս տեղերում:

— Ինչպես տեսեմ... Ես ելք էի որոնում և կարծես գտա, որովհետև հանդիպեցի ձեզ: Բանն այն է, որ ինձ հարկավոր է սքանչելի բարեկամիս՝ կոմսի... Ոչ, բարոնի... այսինքն՝ վիկոնտի հասցեն... մի խոսքով ձեր տիրոջ հասցեն:

— Դուք կուզենայիք տեսնե՞լ նրան,— հարցրեց մանկլավիկը:

— Այո, և հնարավորին շափ շուտ:

— Դե, ձեր բախտը բերեց. հիմա նա պրեռյի մոտ է:

— Շատլեո՞ւմ:

— Այո, և ուր որ է դուրս կգա այնտեղից:

— Երանի նրան, որ ուզած ժամանակ կարող է մտնել Շատլե: Հավանաբար մեսսեր Ռոբեր դ'Էստուրվիլը կապված է հարգարժան բարեկամիս, վիկոնտի... կոմսի... ոչ, կարծեմ՝ բարոնի հետ...

— Վիկոնտի,— ուղղում մտցրեց մանկլավիկը:

— Իմ բարեկամ վիկոնտ... Դե՛հ, հիշեցրեք ինձ,— շարունակեց Օբրին, ցանկանալով օգտվել ներկայացած առիթից և վերջապես իմանալ իր բարեկամի անունը:— Վիկոնտ դե...

— Վիկոնտ դե Մար...

Բայց Ժակը շթողեց, որ նա խոսքն ավարտի:

— Օ՛, թանկագին վիկոնտ: Ահավասիկ գտա ձեզ,— բացականչեց նա, տեսնելով դոների մեջ հայտնված Մարմանին:— Դուք այնքա՛ն պետք եք ինձ: Ես ամենուրեք ձեզ էի փնտրում:

— Բարե, բարե, հարգելիս,— պատասխանեց Մարմանը, այդ հանդիպումից ականջադրեն սրանեղած:— Ես հաճույքով կզրուցեի ձեզ հետ, սակայն, ցավոք սրտի, շատ եմ շտապում: Ուստի մնաք բարով:

— Սպասեցեք, սպասեցե՛ք,— զոռաց ժակ Օբրին, բռնելով խոսակցի ձեռքը:— Չեմ թողնի, որ գնաք, գրո՛ղր տանի: Ես ուզում եմ խնդրել ձեզնից մեծագույն մի ծառայություն:

— Դո՞ւք:

— Այո: Չէ՞ որ բարեկամների սուրբ պարտականությունն է ամեն ինչում օգնել իրար:

— Բարեկամների՞:

— Անշուշտ: Մի՞թե մենք բարեկամներ չենք: Վերջ ի վերջո, ի՞նչ է բարեկամությունը՝ բացարձակ վստահություն միմյանց նկատմամբ: Իսկ ես միշտ վստահել եմ ձեզ և դրա համար պատմել եմ ոչ միայն իմ, այլ նույնիսկ ուրիշների պաղանիքները:

— Եվ երբեք չե՞ք զղջացել դրա համար:

— Երբեք: Համենայն դեպս՝ ձեր վերաբերմամբ. ցավոք սրտի, նույնը չեմ կարող ասել մյուս բարեկամներին մասին. Փարիզում կա մի մարդ, որին որոնում եմ ու չեմ գտնում, բայց երբևէ աստժու օգնությամբ կհանդիպեմ մի նեղ արահատում...

— Կսեք, հարգելիս, նորից եմ ասում, որ շտապում եմ,— բնդմիջեց նրան Մարմանը, հիանալիորեն հասկանալով, թե հատկապես ում է փնտրում ժակ Օբրին:

— Բայց սպասեցեք մի քիչ. ախր ես ասացի, որ կարող եք մեծ ծառայություն մատուցել ինձ...

— Դե լավ, ասացեք, միայն թե շուտ:

— Չեզ գնահատո՞ւմ են արքունիքում:

— Համենայն դեպս այդպես են ասում բարեկամներս:

— Եվ թագավորը վստահո՞ւմ է ձեզ:

— Այո, և դրանում լիովին համոզվել են թշնամիներս:

— Սքանչելի՛ է: Սիրելի կոմս... այսինքն՝ բարոն... իմ թանկագին...

— Վրկոնոս,— թելադրեց Մարմանը:

— Թանկագին վիկոնտ, ուղարկեք ինձ Շատլե:

— Բայց իբրև ի՞նչ:

— Անշուշտ, իբրև բանտարկյալ:

— Բանտարկյա՞լ: Ի՞նչ տարօրինակ ցանկություն է:

— Ցանկությունները տարրեր են լինում:

— Բայց ինչո՞ւ անպայման Շատլե, — հարցրեց Մարմանը: Նա կասկածում էր, որ այդ ցանկության մեջ ինչ-որ նոր գաղտնիք է պահված և ուզում էր կորզել այն:

— Ուրիշ մեկին երբեք չէի վստահի, հարգելի բարեկամս, չէ՞ որ իմ սեփական դառը փորձից, ավելի ճիշտ՝ Ասկանիոյի փորձից համոզվեցի, թե ուր է հասցնում բացբերանությունը, — պատասխանեց Փակը: — Բայց ձեզ կարելի է: Ինչպես գիտեք, ես ձեզնից գաղտնիք չունեմ:

— Այդ դեպքում ասացեք, շուտ:

— Իսկ եթե ասեմ, կուղարկե՞ք ինձ Շատլե:

— Հենց այս վայրկյանին:

— Հիանալի՛ է: Պատկերացրեք, ես այնքան անզգույշ եմ գտնվել, որ ձեզնից բացի ոմանց էլ պատմել եմ Մարսի գրելխում տեսածս գեղանի աղջկա մասին:

— Հետո՞ ինչ:

— Այդ թեթևամիտները, այդ անբանները իմ հայտնագործությունը տարփողել են, և լուրը հասել է պրեսոյին. իսկ քանի որ մի քանի օր առաջ կորել էր պրեսոյի աղջիկը, նա սկսում է մտածել, որ գուցե հենց իր աղջիկն է ապաստանել այնտեղ: Դ՛հաստրովիլը շտապում է նախազգուշացնել Կոմս դ՛Օրբեկին և դքսուհի դ՛էտամպին, ու քանի դեռ Զելլինին Ֆոնտենբլոյում էր, նրանք խուզարկության են ենթարկում նեղի Մեծ ամրոցը: Կոլոմբային տանում են, իսկ Ասկանիոյին բանտարկում Շատլեում:

— Մի՞թե:

— Ձուտ ճշմարտություն է, թանկագին բարեկամ: Եվ ի՞նչ եք կարծում, ո՞վ է նյութել այդ բոլորը: Ոմն վիկոնտ դե Մարման:

— Բայց դուք այդպես էլ շասացիք, թե Շատլեում ի՞նչ գործ ունեք, — շտապով վրա բերեց Մարմանը, անհանգստացած նկատելով, որ Փակ Օբրին շեշտում է իր անունը:

- Իսկ դուք գլխի շե՞ք ընկնում:
- Ոչ:
- Ասկանիոյին ձերբակալե՞լ են:
- Այո:
- Եվ տարե՞լ են Շատլե:
- Աչդպես է...
- Դե՛, հիմա ես կհայտնեմ ձեզ այն, ինչ դքսուհի դ'է-տամպից, Բենվենուտոյից ու ինձնից բացի ոչ ոք չգիտէ: Ասկանիոն ինչ-որ նամակ ունի, ինչ-որ գաղտնիք, որը կարող է կործանել դքսուհուն: Հիմա հասկացա՞ք:
- Այո՛, այո՛, յիշում եմ հասկանալ: Բայց օգնեք ինձ, Թանկագին բարեկամ:
- Բանն այն է, վիկոնտ,— արիստոկրատական հովերով շտրունակեց Փակ Օբրին,— որ ես ուզում եմ ընկնել Շատլե, տեսնել այնտեղ Ասկանիոյին, վերցնել նրանից նամակը, կամ իմանալ գաղտնիքը: Բանտից դուրս գալուց հետո ես ամեն ինչ կպատմեմ Բենվենուտոյին, և մենք միասին միջոց կգտնենք Ասկանիոյի ու Կոլոմբայի սերը պսակելու, ի հեճուկս այդ բոլոր դե Մարմանների, դ'Օբրեկների, դքսուհիների ու պրետրի:
- Վատ չի մտածված,— ասաց Մարմանը:— Շնորհակալ եմ վստահության համար, սիրելի բարեկամ: Դուք երբեք չեք պղծա:
- Եվ դուք խոստանում եք օգնե՞լ ինձ:
- Ինչո՞ւմ:
- Որ ընկնեմ Շատլե. ախր ես ասացի:
- Հանգիստ եղեք:
- Հենց հիմա՞:
- Սպասեք ինձ այստեղ:
- Հենց այստե՞ղ:
- Այո, այո:
- Իսկ դո՞ւք:
- Ես զնամ ձերբակալման հրամանագիր բերելու:
- Օ՛, անգին բարեկամ, Թանկագին բարոն, կոմս... Վերտապետ ասացեք ինձ ձեր անունը, ձեր հասցեն, որ եթե ուշա-տապու լինեք, կարողանամ գտնել ձեզ:

- Ոչ, ոչ, ես հիմա կվերադառնամ:
- Շուտ վերադարձեք: Իսկ եթե հանդիպելու լինեք այդ անիծյալ Մարմանին, ասացեք նրան...
- Ի՞նչ ասեմ...
- Ասացեք նրան, որ ես երդում եմ տվել...
- Ի՞նչ երդում:
- Որ նա իմ ձեռքով է գնալու...
- Մնաք բարով, — հեռանալով ձայն տվեց վիկոնտը: — Սպասեցեք ինձ այստեղ:
- Ցտեսություն, — պատասխանեց ժակը: — Շուտ վերադարձեք: Դուք իսկական բարեկամ եք. ձեզ նման մարդուն կարելի է վստահել, և ես շատ կցանկանայի իմանալ...
- Մնաք բարով, պարոն ուսանող, — ասաց մանկավիհը, որն այդ ամբողջ ժամանակ կանգնած էր որոշ հեռավորության վրա, իսկ հիմա գնաց իր տիբոջ հետևից:
- Գնաք բարով, հարգելի մանկավիհ, — պատասխանեց ժակ Օբրին: — Բայց մինչև հեռանալը մի ծառայություն մատուցեք ինձ:
- Ի՞նչ ծառայություն:
- Ասացեք, խնդրեմ, ի՞նչ է բարի ազնվականի անունը, որի մոտ դուք ծառայում եք:
- Նրա, ում հետ շաղակրատեցիք ամբողջ քառորդ ժամ:
- Այո:
- Եվ որին ձեր բարեկամն էիք կոչում:
- Այո:
- Եվ դուք շփտե՞ք նրա անունը:
- Ոչ:
- Չէ՞ որ նա...
- Հավանաբար, շատ անվանի մարդ է:
- Անշուշտ:
- Եվ ազդեցի՞կ:
- Առաջին մաբդն է թագավորից և գրսուհի գ'էտամպիե հետո:
- Իսկապե՞ս: Բայց ի՞նչ է նրա անունը...
- Վիկոնտ դե... բայց ես շտապում եմ... ներեցեք, ես հետ նայեց, ինձ է սպասում:

— Դուք ասում եք վիկոնտ...

— Վիկոնտ դե Մարման...

— Մարմա՞ն,— դուք ժակ Օբրին:— Վիկոնտ դե Մարմա՞ն: Այդ կավալերը վիկոնտ դե Մարմա՞նն է:

— Նա ինքը:

— Պրևոյի, կոմս դ'Օբբեկի և դքսուհի դ'էտամպի բարեկա՞մը:

— Մերձավո՞ր:

— Բենվենուտո Չելլինիի սխերիմ թշնամի՞ն:

— Ճի՛շտ այդպե՛ս:

— Օ՛,— բացականչեց ժակը, որի առաջ, ասես կայծակի փայլատակումից, անմիջապես պատկերացան այդ հանդիպմանը նախորդող բոլոր իրադարձությունները:— Հիմա հասկանում եմ: Ուրեմն նա Մարմանն է, Մարմա՛նը:

Եվ վայրկենաբար մանկավիկից խլելով կարճ սուսերը (որովհետև ինքն անզեն էր), նետվեց Մարմանի հետևից, գոռալով.

— Կանգնեցե՛ք:

Մարմանն անհանգստացած հետ նայեց և, տեսնելով զենքը ձեռքին վազող ուսանողին հասկացավ, որ դիմակազերծ է արված: Նրան մնում էր կամ ընդունել մարտահրավերը, կամ փախուստի դիմել: Սակայն Մարմանը ոչ այնքան քաջ էր, որպեսզի կռվի բռնվեր, և ոչ էլ այնքան վախկոտ, որպեսզի փախուստի դիմեր:

Այդ պատճառով նա ընտրեց միջինը. այսինքն՝ ներս վազեց մոտակա տան բաց դարպասից, հույս ունենալով իր հետևից փակել այն: Ի դժբախտություն նրա սլարզվեց, որ դարպասը չի փակվում. խանգարում էր պատի մեջ զետեղված շղթան, որը Մարմանը ոչ մի կերպ արձակել չէր կարողանում: Այդպիսով ժակ Օբրին բակ մտավ ավելի շուտ, քան վիկոնտը հասցրեց սլահվել շենքում:

— Ա-ա՛, վերջապես ես գտա քեզ, անիծյալ լրտես: Վերջապես, ստոր Մարման, դու իմ ձեռքում ես: Ավազա՛կ: Ուրիշի գաղտնիքներ փախցնո՞ղ: Պաշտպանվի՛ր, շարագործ:

— Մի՞թե դուք ենթադրում եք, պարոն,— մեծամտորեն

պատասխանեց Մարմանը, ջանալով խոսել արխտոկրատի արհամարհական տոնով,— որ վիկոնտ դե Մարմանը կբարեհաճի հավասարվել ինչ-որ ուսանող ժակ Օբրիի ու կհամաձայնի նրա հետ խաչաձևել իր սուսերը:

— Բայց եթե վիկոնտ դե Մարմանը շրարեհաճի հավասարվել ժակ Օբրիին, ապա ժակ Օբրիին կբարեհաճի հավասարվել վիկոնտ դե Մարմանին ու կխոցի նրան իր սուսերով:

Ի հաստատումն իր խոսքերի, ժակը վիկոնտի կրծքին դեմ արեց սուսերը և, բաճկոնակը ծակելով, սուր ծայրով թեթևակի խտղտեց թշնամուն:

— Փրկե՛ք, սպանում են,— աղաղակեց Մարմանը:

— Գոռա, գոռա ինչքան ուզում ես,— գրգռում էր ժակը:— Մինչև որևէ մեկը ձայնդ լսի, դու ընդմիշտ կլռես: Քեզ համար միակ ելքը կովելն է: Այգպես, ուրեմն, նախազգուշացնում եմ՝ պաշտպանվիր, վիկոնտ:

— Դե սպասիր: Քանի որ ինքդ այդ կամեցար, կիմանաս, թե ինչ է նշանակում կովել վիկոնտ դե Մարմանի հետ:

Մարմանը, ինչպես արդեն հնարավորություն ունեցանք համողվելու, կտրիճ. շէր, բայց իր ասպետական ժամանակների բոլոր ազնվականների նման զինվորական դաստիարակություն էր ստացել: Դեռ ավելին, նա լավ սուսերամարտիկի համբավ ուներ: Ճիշտ է, ասում էին, թե այդ համբավն ավելի շուտ փրկում էր նրան մենամարտերից, քան օգնում հաղթել մենամարտում: Ինչևիցե, բայց տեսնելով, որ թշնամին կասազորեն հարձակում է գործում, վիկոնտը մերկացրեց սուսերը և սրամարտի արվեստի բոլոր կանոնների համաձայն կեցվածք ընդունեց:

Սակայն եթե Մարմանը լավ սուսերամարտիկ էր համարվում արքունական շրջաններում, ապա ժակ Օբրին հռչակվել էր ուսանողների ու դատարանի գրագիրների միության անդամների շրջանում իր անգերազանցելի ճարպկությամբ: Այդպիսով նրանցից ամեն մեկը հենց սկզբից հասկացավ, որ գործ ունի արժանի թշնամու հետ: Բայց Մարմանը հսկայական առավելություն ուներ. նրա սուսերը վեց մատնաչափ երկար էր ժակի սուսերից. պաշտպանության ժամանակ այդ

հանգամանքն այնքան էլ չէր խանգարում ժակ Օբրիին, բայց շատ էր դժվարացնում հարձակումը:

Եվ իրոք, Մարմանը, որը վեց մատնաշափ բարձր էր ժակից, և բացի այդ զինված էր ավելի երկար սուսերով, հեշտությամբ կարողանում էր պահել թշնամուն պատկառելի տարածության վրա՝ նրա դեմքին մոտեցնելով սուսերի սուր ծայրը: Եվ ինչքան էլ ժակը գրոհում էր, ինչքան էլ խաբս էր տալիս, բավական է վիկոնտը մի քայլ աներ, հայտնվում էր նրա հասանելիության սահմաններից դուրս: Մինչդեռ, չնայած ժակի ճարպիկ պաշտպանությանը, Մարմանի սուսերն արդեն երկու, թե երեք անգամ դիպել էր նրա կրծքին: Ուսանողը, իր ամբողջ ճարպկությամբ հանդերձ, անընդհատ վրիպում էր

Օբրին հասկացավ, որ եթե այդպես շարունակվի, ինքը կորած է: Եվ անմիջապես որոշեց խորամանկության դիմել: Թշնամուն հիմարացնելու համար նա ձևացավ, թե շարունակում է պաշտպանվել, դիմելով արտանկումների ու խաբսերի, իսկ ինքը աննկատելի, կամաց-կամաց սկսեց մոտենալ վիկոնտին: Հայտնվելով բավական մոտ տարածության վրա, ուսանողն ասես պատահաբար բացվեց: Այդ տեսնելով, Մարմանը հարձակում գործեց: Ժակն, իհարկե, հանկարծակիի չեկավ, նա հետ մղեց հարվածն, իսկ հետո, օգտվելով նրանից, որ թշնամու սուսերն այդ պահին իր գլխավերևում էր, առաջ նետվեց և արագ, ճարպիկ մի հարվածով վիրավորեց վիկոնտին, ընդ որում, կարճ սուսերը մինչև երախակալը մխվեց վիկոնտի կուրծքը:

Մարմանը վիրավոր մարդու ազեկտուր ճիշ արձակեց, սոսկալի գունատվեց, ցած գցեց սուսերն ու ընկավ երեսնիվայր:

Այդ միջոցին դարպասի մոտով անցնում էր հսկող պահակախումբը: Ճիշը լսելով, տեսնելով ձեռքերը տարուբերող մանկլավիկին ու դարպասի մոտ խմբված բազմությունը, պահնորդները վազեցին պատահարի վայրը: Ժակը դեռ ցած չէր գցել արյունոտ սուսերը, և բնականաբար նրան անմիջապես ձերբակալեցին:

Ուսանողն ուղում էր դիմադրութիւն ցույց տալ, բայց այդ բողոքին պահակախմբի պետը գոչեց.

— Զինաթափե՛լ սրիկային և տանել Շատլի:

Հրամանից ուրախացած, ժակը հնազանդորեն հանձնեց սուտերը, և պահակների հսկողութեան տակ գնաց Շատլի, հիանալով իմաստուն նախախնամութեամբ, որի շնորհիվ ինքը միանգամից երկու նապաստակ սպանեց. ընկավ բանտ՝ Ասկանիոյի մոտ և վրեժ լուծեց վիկոնտ դե Մարմանից:

Այս անգամ ժակ Օբրիին անարգել ներս տարան թաղափարական ամրոց: Վերակացուն և դոնապանը երկար խորհրդակցում էին, թե որտեղ տեղավորեն նրան, որովհետև բանտը լեփ-լեցուն էր: Ի վերջո այդ պատկառելի պարոնայք համաձայնութեան եկան: Դոնապանը ձեռքի շարժումով հրամայեց ժակին հետևել իրեն, ստիպեց ցած իջնել երեսուներկու աստիճան, բացեց ինչ-որ դուռ, բանտարկյալին ներս հրեց մի մութ սենյակ և դուռը կողպեց:

ԳՂՈՒԽ ՏԱՍԵՉՈՐՍԵՐՈՐԳ

**Այն մասին, թե ազնիվ մարդու համար ինչքան դժվար է
բանտից դուրս գալը**

Պայծառ լույսից հետո բացարձակ խավարը շլացրեց ժակ Օբրիին և նա մի քանի վայրկյան չէր կարողանում ուշքի գալ. որտե՞ղ է ինքը: Հայտնի չէ: Մո՞տ է Ասկանիոյին, թե ոչ՝ դժվար է ասել: Միջանցքում, որով քիչ առաջ բերում էին նրան, իր բանտասենյակի դռնից բացի նա տեսավ ևս երկու կողպված դուռ: Սակայն ամեն դեպքում ինքը հասել է նպատակին՝ Ասկանիոյի հետ նույն հարկի տակ է:

Բայց հո չի կաբելի հավիտյան կանգնած մնալ նույն տեղում: Այդ պատճառով, տասնհինգ քայլ հեռավորութեան վրա, բանտասենյակի մյուս ծայրում լույսի փայլատակում տեսնելով, ժակը զգուշորեն գնաց այդ ուղղութեամբ, բայց իսկույն սայթաքեց, երեք-չորս աստիճանի վրայով ցած սահեց և հավանարար գլուխը պատին կգարկեր, բայց ոտքը դի-

պավ ինչ-որ փափուկ բանի ու փովեց գեանին: Այդպիսով նրան հաջողվեց գլուխն ազատել:

Խոշընդոտը, որին այդքան բարեհաճությամբ զարնվեց ուսանողը, խուլ տնքոց արձակեց:

— Ներեցեք, խնդրեմ,— ասաց ժակը, ոտքի կանգնելով և քաղաքավարությամբ գլխարկը հանելով:— Ես կարծեմ ոտքս դրի ինչ-որ մեկի կամ ինչ-որ բանի վրա: Երբեք այդպիսի անքաղաքավարություն չէի անի, եթե այստեղ ավելի լույս լիներ: Ներեցեք ինձ:

— Դուք տրորեցիք մեկին, որը վաթսուն տարիների ընթացքում մարդ է եղել, իսկ հիմա շուտով դիակ կդառնա,— պատասխանեց ձայնը:

— Այդ դեպքում,— ասաց ժակը,— ավելի եմ ցավում, որ անհանգստացրի ձեզ: Ինչպես վայել է բարի քրիստոնյային, դուք, հավանաբար, մահվանից առաջ խոստովանել եք աստծուն ձեր մեղքերը:

— Ես վաղուց արդեն խոստովանել եմ, պարոն ուսանող: Ես մեղանչել եմ, ինչպես բոլորը, բայց տառապել եմ նահատակի նման և հուսով եմ, երբ աստված կշոի արարքներս, տառապանքների թաթն ավելի ծանր կլինի, քան մեղքերինը:

— Թող այդպես լինի,— բացականչեց Օբրին:— Ի սրտե այդ եմ ցանկանում ձեզ: Իսկ հիմա, թանկագին դժբախտակից, ասացեք խնդրեմ, եթե խոսակցությունը ձեզ այնքան էլ չի հոգնեցնում, ի՞նչ հրաշքով իմացաք, որ ես ուսանող եմ: Ես ասում եմ «թանկագին», քանզի հույս ունեմ, որ դուք՝ ներել եք անքաղաքավարությունս: Ի դեպ, լավ էր, որ այդպես եղավ. չէ՞ որ դրա շնորհիվ ծանոթացա ձեզ հետ:

— Ես կոահեցի ձեր հագուստից, իսկ դի:ավորը՝ թանաքամանից, որը կախված է ձեր դատուց, այնտեղ, որտեղ ազնվականները դաշույն են կրում:

— Իմ հագուստից ու թանաքամանի՞ց... Բայց լսեք, թանկագին ընկերակից, եթե չեմ սխալվում, դուք ասացիք, որ մեռնո՞ւմ եք:

— Այո, երկրային տառապանքներիս վերջն արդեն եկել է: Եվ հուսով եմ, որ այսօր քնելով այս աշխարհում, վաղը՝ կարթնանամ երկնքում:

— Դրու դեմ ես չեմ առարկում,— պատասխանեց ժակը,— բայց թույլ տվեք նկատել, որ ձեր դրությունն ամենևին չի տրամադրում կատակների:

— Բայց ինչո՞ւ եք կարծում, որ ես կատակում եմ,— ծանշոր հառաչելով, մրմնջաց մեռնողը:

— Ինչպե՞ս թե ինչու: Քիչ առաջ դուք ասացիք, որ տեսնում եք իմ հագուստն ու թանաքամանը, իսկ ես ինչքան էլ չոտում եմ աչքերս, ոչինչ չեմ տեսնում:

— Հնարավոր է,— պատասխանեց ծերունին:— Բայց երբ ինձ նման տասնհինգ տարի կնստեք բանտում, դուք էլ մթության մեջ կտեսնեք նույնքան լավ, որքան ամենապայծառ ցերեկային լույսի տակ:

— Ավելի լավ է գրողի ծոցը կորչեն աչքերս, ես այդպիսի դպրոց անցնել չեմ ուզում,— բացականչեց ժակը:— Հեշտ է ասելը՝ տասնհինգ տարի:

— Տասնհինգ, թե տասնվեց... Ի դեպ, մի՞թե դա կարևոր է: Ես վաղուց արդեն կորցրել եմ ժամանակի հաշիվը:

— Բայց, ըստ երևույթին, դուք սոսկալի հանցագործ եք, եթե այդպիսի դաժան պատժի եք հնթարկվել,— բացականչեց ժակը:

— Ես անմեղ եմ,— պատասխանեց կալանավորը:

— Անմե՞ղ եք,— սարսափահար բացականչեց ժակը:— Հերիք է կատակ անեք, թանկագինս: Չէ՞ որ ես արդեն ասացի, որ հիմա դրա ժամանակը չէ:

— Իսկ ես ձեզ արդեն պատասխանեցի, որ կատակ չեմ անում:

— Բայց սուտ ասելն առավել ևս վայել չէ: Վերջ ի վերջս, կատակը մտքի անմեղ խաղ է միայն, որը չի վիրավորում ո՛չ մարդուն, ո՛չ աստծուն, այն դեպքում, երբ ստախոսությունն անբավելի մեղք է, որը սպանում է հոգին:

— Ես երբեք ստախոս չեմ եղել:

— Ուրեմն դուք, իսկապես, առանց որևէ մեղքի տասնհինգ տարի նստել եք բանտո՞ւմ:

— Ես ասացի՝ մոտ տասնհինգ տարի:

— Ուրեմն այդպե՞ս,— բացականչեց ժակը:— Իսկ դուք դիտե՞ք, որ ես էլ անմեղ եմ:

— Այդ դեպքում թող աստիճած պահապան լինի ձեզ,—
ասաց մեռնողը:

— Բայց մի՞թե ինձ որևէ բան է սպառնում:

— Այո, թշվառական: Հանցագործը դեռ կարող է հույս
ունենալ, որ դուրս կգա այստեղից, իսկ անմեղ մարդը՝
կրքեք:

— Ձեր դատողություններն անշափ խորիմաստ են, բա-
րեկամս, բայց գիտե՞ք, որ այդ ամենն այնքան էլ մխթա-
րական չի հնչում:

— Ես ձեզ ասացի զուտ ճշմարտությունը:

— Եվ, այնուամենայնիվ, եթե լավ պրպտելու լինեք,
անկասկած կգտնվի ինչ-որ աննշան մեղք: Խնդրում եմ, որ-
պես գաղտնիք, պատմեք ինձ այդ մասին:

Եվ Ժակ Օբրին, որն իրոք մթության մեջ սկսում էր ազոտ
կերպով զանազանել առարկաների ուրվանկարները, վերցրեց
պատի մոտ դրված աթոռակը, դրեց անկյունում, մեռնող
ծերունու մահճի մոտ: Այնուհետև ավելի հարմար տեղավոր-
վելով այդ կոշտ ու կոպիտ սարքված աթոռին, պատրաստվեց
լսել:

— Բայց ինչո՞ւ եք լուում, թանկագինս... Ա՛հ, հասկա-
նում եմ, տասնհինգ տարի մենավոր բանտարկությունից հե-
տո դարձել եք կասկածամիտ ու սիրտ չեք անում վստահել
ինձ: Ի՞նչ արած: Եկեք ավելի մոտ ծանոթանանք, իմ անունը
Ժակ Օբրի է, ես քսաներկու տարեկան եմ և, ինչպես արդեն
որոշեցիք, ուսանող: Ես ինքս ցանկացա Շատլի ընկնել և
զրա համար լուրջ պատճառներ ունեմ: Ես այստեղ գտնվում
եմ ընդամենը տասը րոպե և արդեն հասցրի ծանոթանալ
ձեզ հետ: Ահա, կարճ ասած, իմ ամբողջ կյանքը: Հիմա դուք
Ժակ Օբրին ճանաչում եք նույնքան լավ, որքան նա ինքը:
Դուք էլ պատմեք ձեր մասին, թանկագինս, ես լսում եմ:

— Իմ անունը էտյեն Ռեմոն է,— ասաց կալանավորը:

— էտյեն Ռեմոն,— կամացուկ հարցրեց Ժակ Օբրին:—
Նրբեք այդ անունը չեմ լսել:

— Նախ և առաջ դուք դեռ երեխա էիք, երբ աստծու կամ-
քով ես անհետացա երկրի երեսից,— ասաց ծերունին,— իսկ

երկրորդ՝ ես ապրում էի այնքան խաղաղ ու աննշմարելի, որ ոչ ոք ուշադրութուն չդարձրեց բացակայութեանս վրա:

— Բայց ո՞վ էիք դուք: Ինչո՞վ էիք զբաղվում:

— Ես կոնետաբլ Բուրբոնի հավատարմատարն էի:

— Այդ դեպքում ամեն ինչ հասկանալի է. դուք նրա հետ մեկտեղ դավաճանել եք հայրենիքին:

— Ոչ, ես պարզապես հրաժարվեցի դավաճանել տիրոջս. այդ է իմ ամբողջ մեղքը:

— Բայց պատմեք, դա ինչպես տեղի ունեցավ:

— Այն ժամանակ ես գտնվում էի Փարիզում, կոնետաբլի պալատում, իսկ նա ինքը՝ Բուրբոն-դ'Արշամբո ամրոցում: Եվ ահա մի անգամ նրա թիկնապահների կապիտանը նամակ րերեց ինձ. կոնետաբլը կարգադրում էր անմիջապես պատգամաբերին հանձնել ոչ մեծ, կնքված ծրարը, որը պահված էր նրա ննջասենյակում, մահճակալի զլխավերևի պահարանում: Ես սուրհանդակին տարա դուքսի ննջասենյակը, բացեցի պահարանը, գտա ծրարն ու տվեցի նրան. կապիտանն անմիջապես մեկնեց: Իսկ մի ժամ հետո Լուվրից ինձ մոտ եկան զինվորներ՝ սպայի զլխավորութեամբ և նույնպես կարգադրեցին բացել դուքսի ննջասենյակն ու ցույց տալ մահճակալի զլխավերևի պահարանը: Ես հնազանդվեցի: Նրանք տակնուվրա արեցին պահարանը, բայց անշուշտ, ոչինչ չգրտան. իսկ փնտրում էին այն նույն ծրարը, որը քիչ առաջ տարավ դուքսի սուրհանդակը:

— Այ քեզ բա՛ն,— մրմնջաց Օբրին, ցավակցութեամբ համակվելով դեպի իր ընկերակիցը:

— Սպան ամեն կերպ սպառնում էր ինձ, բայց ես լուռ էի, ասես շհասկանալով, թե ինչ են ուզում ինձնից: Չէ՞ որ եթե ասեի ճշմարտութունը, նրանք կնետվեին գուքսի սուրհանդակի հետևից ու կխլեին ծրարը:

— Գրո՞ղը տանի,— շփմացավ Ժակը,— ահա թե ինչ է նշանակում խելոք գործել: Գուք վարվել եք որպես նվիրված ու ազնիվ ծառա:

— Այդ ժամանակ սպան թողեց ինձ երկու զինվորների հսկողութեան տակ, իսկ ինքը մյուս երկուսի հետ գնաց Լու-

վրբ: Կես ժամ հետո վերադարձավ, այս անգամ բերելով հրամանագիր՝ ինձ կրօնի Պյեռ Անսեզացու ամրոցը տանելու: Ինձ շղթայակապ արին, գցեցին կառեթը, որտեղ ես հայտնվեցի երկու պահակի մեջտեղում: Իսկ հինգ օր հետո արդեն նստած էի բանտում... Ի դեպ, պետք է խոստովանեմ, այդ բանտը ամենևին էլ սրա նման խօտաշունչ ու շարագուշակ չէր: Բայց ընդհանուր առմամբ միևնույնն է՝ բանտը մնում է բանտ,— շշուկով ավելացրեց մեռնողը:— Ի վերջո ես ընտելացա Շատլեին այնպես, ինչպես մյուս բանտերին:

— Հը՛մ... Այդ ապացուցում է, որ դուք փիլիսոփա եք,— սուսաց ժակը:

— Առաջին երեք օրն ու երեք գիշերն անցան հանգիստ, իսկ շորրորդ գիշերը ինձ արթնացրեց ինչ-որ թեթև աղմուկ-բայցեցի աչքերս ու տեսա, որ բանտասենյակի դուռը բացվեց երեսու մտավ մի կին՝ դեմքը քողածածկ, բարապանի ուղեկցությամբ: Խորհրդավոր այցելուհու նշանի հրամանով բարապանը կանթեղը դրեց սեղանին ու հնազանդորեն դուրս եկավ. այդ ժամանակ անծանոթուհին մոտեցավ իմ մահճակալին և բարձրացրեց դեմքի քողը: Ես բարձրաձայն ճշացի...

— Եվ ով էր այդ տիկի՛նը,— հարցրեց Օբրին, ավելի մոտենալով պատմողին:

— Այդ տիկիներ ոչ այլ սք էր, քան Լուիզա Սավոյացին, Անգուլեմի դքսուհին, Ֆրանսիայի ռեզենտուհին ու թագավորի մայրը:

— Այ քեզ բա՛ն,— բացականչեց Օբրին:— Բայց ի՞նչը կարող էր նրան բերել ձեզ նման խեղճ մարդու մոտ:

— Նա եկել էր ինձ հարցաքննելու ծրարի մասին, որը տարել էր դուքսի լրաբերը: Պարզվեց, որ այդ ծրարի մեջ սիրային նամակներ են եղել, որոնք երբեմնի անհեռանկատորեն գրել էր այդ անվանի տիկիները այն մարդուն, որին այժմ հետապնդում էր:

— Սպասիր, սպասիր, սպասիր,— ատամների արանքից մրմնջաց ժակը:— Այդ պատմությունն ինձ շափազանց հիշեցնում է դքսուհի դ՛էտամպի և Ասկանիոյի պատմությունը:

— Է՛հ, սիրահարված ու խենթ անվանի տիկնանց այդ բոլոր պատմությունները, ինչպես ջրի երկու կաթիլ, նման

են միմյանց,— պատասխանեց ծերունին, որի լսողութունն ասես նույնքան սուր էր, որքան և տեսողութունը:— Բայց վայ այս աշխարհի փոքր մարդկանց, եթե նրանք մասնակից են այդ պատմութուններին:

— Սպասեցե՛ք, սպասեցե՛ք, նախագուշակ,— բացականչեց ժակ Օբրին:— Այդ ինչե՛ր եք ասում: Չէ՞ որ ես էլ մասնակից եմ սիրահարված ու խենթ տիկնոջ պատմությանը:

— Դե՛հ, որ այդպես է, ստիպված կլինեք ընդմիշտ հրաժեշտ տալ լույս աշխարհին և նույնիսկ կյանքին:

— Թող գրողի ծողը կորչի ձեր կոկոսը: Ես ի՞նչ կապ ունեմ այդ ամենի հետ: Չէ՞ որ սիրահարված են ոչ թե ինձ, այլ Ասկանիոյին:

— Բայց մի՞թե ինձ էին սիրահարված,— առարկեց կալանավորը:— Իմ գոյության մասին որոշ ժամանակ չէին էլ կասկածում: Ամբողջ մեղքս այն էր, որ ես ընկա անպտուղ սիրո ու վրիժառության մոլեգին կրթի ճիրանների մեջ, որոնք ճգմեցին ինձ:

— Երդվում եմ պատվովս,— բացականչեց Օբրին,— այդ ամենն այնքան էլ մխիթարական չէ, հարգելի բարեկամ: Բայց վերադառնանք տիկնոջը. ձեր պատմութունն անշափ հետաքրքրում է ինձ. ձեզ հետ տեղի ունեցածը շատ նման է իմ սեփական ճակատագրին, մինչև անգամ մարմինս փշաքաղվում է:

— Այդպես, ուրեմն,— շարունակեց ծերունին,— ինչպես արդեն ասացի, նրան պետք էին նամակները: Դրանց համար ինչ ասես չէր խոստանում ինձ. շնորհներ, մեծարանք, փող: Իր նամակները հետ ստանալու համար նա պատրաստ էր թագավորական գանձապահից կորզել շորս հարյուր հազար էկյու, եթե նույնիսկ այդ ծառայության համար վերջինս ստիպված լիներ բարոն դե Սեմբլանսի¹ նման կախաղան բարձրանալ:

Ես պատասխանեցի, որ ինձ մոտ ոչ մի նամակ չկա և որ ես առհասարակ չեմ հասկանում, թե խոսքն ինչի մասին է:

¹ Սեմբլանսե, բարոն (1457—1527)— Ֆրանցիսկ I-ի գանձապահը, որը մեղադրվեց իրեն վստահված գանձերը վատնելու մեջ ու կախաղան բարձրացվեց:

Դրանից հետո գրավիչ առաջարկութիւններն իսկույն փոխարինվեցին սպառնալիքներով. բայց ինձ վախեցնելը նույնքան դժվար էր, որքան և գայթակղելը, որովհետև ես ասում էի դուռ ճշմարտութիւնը. ինձ մոտ նամակներ չկային: Չէ՞ որ ես դրանք տվել էի լրաբերին: Դքսուհին հեռացավ խիստ գայրացած և մի ամբողջ տարի ես նրա մասին ոչ մի տեղեկութիւն չունեի:

Մի տարի հետո նա կրկին եկավ ու տեղի ունեցավ ճիշտ նույնպիսի տեսարան: Բայց այս անգամ ես աղերսում, համոզում էի նրան հանուն իմ կնոջ ու երեխաների ազատել ինձ: Ամեն ինչ զուր էր: Նա հայտարարեց, որ եթե նամակները չտամ՝ ցմահ դուրս չեմ գա բանտից:

Մի անգամ հացի կտորի մեջ խարտոց գտա: Այդ ազնիվ տկուս էր մտաբերել իմ մասին: Իր ամբողջ ցանկութեամբ շնորհերձ, նա չէր կարողացել ոչ աղերսանքով, ոչ ուժով դուրս բերել ինձ բանտից. չէ՞ որ նա ինքն էլ օտարութեան մեջ էր, դժբախտ, հալածված: Եվ, այնուամենայնիվ, կոնստարլ Բուրբոնը Ֆրանսիա էր ուղարկել իր ծառային, որպեսզի նա համոզի բանտապահին խարտոցը հանձնել ինձ և ասել, թե ով է ուղարկողը:

Ես սղոցեցի լուսամտի երկաթյա վանդակի երկու ձողը, ստվաններից պարան հյուսեցի ու սկսեցի ցած իջնել: Բայց նստնելով պարանի ծայրը, զուր էի ոտքերիս տակ հող փրնտրում. պարանը շատ կարճ էր: Այդ տեսնելով, ես օգնութեան կոչեցի սաստձուն ու պարանը ձեռքիցս բաց թողնելով, ցած թռա. շրջանցման ժամանակ զիշերային պարեկը գտավ ինձ կտորված ոտքով, ուշագնաց:

Դրանից հետո ինձ ուղարկեցին Սոնա գետի Շալոն բերդը. այնտեղ ես անցկացրի երկու տարի՝ մենախցում բանտարկված: Իսկ երկու տարի հետո նորից հայտնվեց ինձ հետամտող տիկինը: Նամակները, այդ շարաքաստիկ նամակները հանպիստ չէին տալիս նրան: Այս անգամ նա դահիճ բերեց, որպեսզի խոշտանգելով հարկադրի ինձ խոստովանել: Անտեղի՞ դամանութիւն: Դքսուհին այս անգամ էլ ձեռնունայն մնաց, և այլ կերպ չինել չէր կարող: Ես ինքս ոչինչ չգիտեի, բացի Դրանից, որ նամակները տվել եմ դքսի լրաբերին:

Մի անգամ ջրով լի սափորի հատակին ոսկով լի մի քսակ գտա: Այդ նորից ազնիվ տերս էր մտաբերել իր հավատարիմ ծառային:

Այդ փողով ես կաշառեցի բանտապանին... Ավելի ճիշտ սրիկան ձևացավ, թե կաշառված է: Կեսգիշերին նա բացեց բանտախցիս դուռը և դուրս բերեց ինձ: Նրա հետ անցնելով բանտի միջանցքները, ես արդեն ազատ էի զգում ինձ, երբ հանկարծ մեզ վրա հարձակվեցին երկու պահնորդ ու երկուսիս էլ կապկպեցին: Հետո ամեն ինչ պարզվեց, իմ ձեռքին ոսկի տեսնելով, բանտասլանը ձևացել էր, թե աղերսանքներս շարժել են իր գուլթը, իսկ ոսկուն տիրանալով, սրիկան մատնել էր ինձ, որպեսզի ձեռքից բաց չթողնի մատնիչներին հասանելիք պարզևատրումը:

Այդ ժամանակ ինձ ուղարկեցին Շատլե:

Այստեղ մի վերջին անգամ ինձ մոտ եկավ Լուիզա Սավոյացին և նորից՝ դահճի հետ:

Բայց մահվան սպառնալիքն ինձ վրա ավելի մեծ աղդեցություն չգործեց, քան խոշտանգումներն ու խոստումները: Ձեռքերս կապեցին, վզիս օղակ գցեցին: Սակայն պատասխանս մնում էր անփոփոխ: Եվ, բացի այդ, ես կրկնում էի, որ մահն ինձ համար բարօրություն կլինի, քանզի դժբախտ կալանավորին կազատի բանտից:

Հավանաբար հենց այդ բառերը ստիպեցին դքսուհուն հրաժարվել իր դիտավորությունից: Նա դահճի ուղեկցությամբ դուրս եկավ բանտախցից:

Այլևս ես նրան չտեսա: Ի՞նչ եղավ իմ ազնիվ տերը: Ո՞րչ է արդյոք դքսուհի Լուիզա Սավոյացին: Չգիտեմ: Այն օրից անցել է տասնհինգ տարի և այդ ժամանակամիջոցում ես բանտապանից բացի ուրիշ ոչ ոքի հետ չեմ խոսել:

— Նրանք երկուսն էլ մահացել են, — պատասխանեց ժակը:

— Մահացել են: Իմ բարի տերը մահացել է: Բայց չէ՞ որ նա դեռ երիտասարդ էր, ընդամենը հիսուներկու տարեկան: Ի՞նչ պատահեց նրան:

— Ես սպանվեց Հոռմի պաշարման ժամանակ և գուցե... — Ժակն ուզում էր ասել. «Գուցե բարեկամներիցս մեկի ձեռքով», բայց ժամանակին զսպեց իրեն, հասկանալով, որ կարող է վանել ծերունուն: Իսկ ինչպես հայտնի է, որոշ ժամանակից ժակ Օբրին ավելի զգույշ էր դարձել:

— Գուցե ի՞նչ, — հարցրեց ծերունին:

— Գուցե նրան սպանել է Բենվենուտո Չելլինի անունով մի մարդ:

— Քսան տարի առաջ ես կանիժեի սպանողին, իսկ այսօր՝ ի սրտե օրհնում եմ: Բայց դուքսի նման ազնվագույն մարդու համար արժանի դամբարան կառուցեցի՞ն արդյոք:

— Կարծում եմ, որ այդ նրա աճյունը հանգչում է Գատայի մայր եկեղեցում: Տապանագիրը բարբառում է, որ այդ տեղ թաղված մարդու համեմատությամբ Ալեքսանդր Մեծն արկածներ որոնող էր միայն, իսկ Կեսարը՝ շրջմոլիկ:

— Դե, իսկ մյո՞ւսը:

— Այսինքն՝ ո՞վ:

— Իմ հոգեառը: Ի՞նչ եղավ նա:

— Ես էլ մահացավ ինը տարի առաջ:

— Ես այդպես էլ կարծում էի, որովհետև մի անգամ գիշերը բանտասենյակումս տեսա ծնկաշոք աղոթող մի կնոջ ուրվական: Ես ճշացի, և ուրվականն անհետացավ: Այդ դրքսուհին էր, որը եկել էր ինձնից ներումն ինդրելու:

— Ուրեմն, կարծում եք, որ մահվանից առաջ նա զղջացե՞լ է:

— Հուսով եմ, հանուն իր հոգու փրկության:

— Բայց եթե այդպես լիներ, ձեզ պետք է ազատեին:

— Գուցե նա հրամայել է այդ անել, բայց ես այնքան անշուք մարդ եմ, որ հավանաբար պատերազմի ժամանակ մոռացել են գոյությանս մասին:

— Իսկ դուք, մեռնելիս, նույնպես կներե՞ք նրան:

— Բարձրացրեք ինձ, երիտասարդ, ես ուզում եմ աղոթել նրանց երկուսի համար:

Եվ ժակ Օբրիի օգնությամբ տեղից բարձրանալով, մեռնողը սկսեց աղոթել իր բարերարի և իրեն հետամտողի համար, այն մարդու, որը մինչև մահ սիրով հիշում էր իր ծա-

ուային և այն կնոջ, որն ատելութեամբ բռնված երբեք չէր մոռանում նրան՝ կոնեստաբլի և ռեգենտուհու:

Մերունին իրավացի էր. ժակի աչքերը հետզհետե վարժվեցին մթութեանը և այժմ նա արդեն խավարի մեջ նշմարում էր կալանավորի դեմքը՝ ծերունական սքանչելի մի դեմք, ճերմակաթույր մորուքով ու լայն ճակատով, շատ նման այն տեսիլքին, որը հայտնվում էր նկարիչ Գոմենիկինոյին՝ «Սուրբ Հերոնիմոսի հաղորդութիւնը» նկարի վրա աշխատելիս:

Աղոթքն ավարտելով, ծերունին խոր հոգոց հանեց ու ցած ընկավ՝ կորցնելով գիտակցութիւնը:

Ժակը կարծեց, թե տառապալը հոգին ավանդեց, բայց և այնպես վերցրեց սափորն ու ձեռքի ափի մեջ ջուր լցնելով, թրջեց նրա դեմքը: Մերունին ուշքի եկավ:

— Դու լավ արեցիր, երիտասարդ, որ ինձ կյանքի բերիր և ահավասիկ հատուցումը:

— Ի՞նչ է սա:

— Դաշույն:

— Դաշու՞յն: Բայց սա ինչպե՞ս ձեր ձեռքն ընկավ:

— Լավ լսիր. մի անգամ, երբ բանտապանը հաց ու ջուր բերեց, լապտերը դրեց աթոռակին, որը պատահաբար ընդհուպ մոտ էր քաշված պատին: Այդ միջոցին ես նկատեցի, որ մի քար թեթևորեն դուրս է ցցված ու դրա վրա իազմզված են ինչ-որ տառեր: Բայց կարդալ չհասցրի: Մենակ մնալով, սկսեցի մթութեան մեջ ուշի-ուշով շոշափել մակագրութիւնը և ի վերջո կարդացի «Վրիժառու» բառը: Ի՞նչ կարող էր նշանակել դա: Ես բռնեցի քարը, փորձելով այն դուրս քաշել: Քարը ծերունու ատամի պես թեթևակի շարժվում էր, և երկար ջանքերից հետո ես սլատից հանեցի այն ու անմիջապես ձեռքըս մտցրի գոյացած խոռոչի մեջ: Հենց այնտեղ էլ գտա այս դաշույնը: Եվ այդ պահին ինձ համակեց ազատութեան մոլեգին փափազը:

Որոշեցի անցք բացել դեպի հարևան բանտասենյակն ու անձանոթ կալանավորի հետ կազմել փախուստի ծրագիր: Եվ թող իմ ձեռնարկից ոչինչ դուրս չգար, բայց հող փորելը, անցք բացելը, այնուամենայնիվ, զբաղմունք է: Երբ մնաք

բանտում այնքան տարի, ինչքան ես եմ մնացել, երիտասարդ, կհասկանաք, թե ժամանակն ինչ սոսկալի թշնամի է կալանավորի համար:

Ժակ Օբրին ցնցվեց:

— Բայց դուք, այնուամենայնիվ, ի կատար ածեցի՞ք ձեր ծրագիրը, — հարցրեց նա:

— Այո, և դա շատ ավելի հեշտ էր, քան կարծում էի: Ես այստեղ այնքան վաղուցվանից եմ, որ արդեն ոչ ոք չի վախենում իմ փախուստից: Ինձ հետևում են ոչ ավելի, քան ահա այն պատի օղակին: Կոնետաբլը և ռեգենտուհին մեռել են, իսկ նրանցից բացի ո՞վ կարող է հիշել ինձ: Այստեղ ոչ ոք չի էլ լսել էտյեն Ռեմոնի անունը: Ոչ ոք չգիտի, թե անունս ինչ է:

Այդ լիակատար մոռացման, այդ կործանված կյանքի մասին մի պահ մտածելով, Ժակի ճակատը ծածկվեց սառը քրտինքով:

— Իսկ հետո՞ ինչ եղավ:

— Հետո՞: Ես ամբողջ մի տարի հող էի փորում, — շարունակեց կալանավորը, — և ինձ հաջողվեց պատի տակ անցք բացել, որի միջով մարդն ազատորեն կարող է անցնել:

— Իսկ հանած հողն ի՞նչ էիք անում:

— Շաղ էի տալիս գետնին ու ոտքով պինդ տրորում:

— Իսկ անցքը որտե՞ղ է:

— Մահճակալի տակ: Տասնհինգ տարվա ընթացքում ոչ մեկի զխոսվ շանցավ տեղաշարժել մահճակալը: Բանտապանը օրվա ընթացքում գալիս է ինձ մոտ մի անգամ միայն: Հենց սր կողպեքի մեջ շրխկում է բանալին և նրա քայլերի ձայնը պաղարում է, մի կողմ եմ քաշում մահճակալն ու գործի անցնում: Իսկ նրա գալուց քիչ առաջ մահճակալը դնում եմ տեղն ու պառկում վրան... Երեկ ահա պառկեցի այլևս ոտքի չկանգնելու համար: Սպառվեցին ուժերս, կյանքս վերջացավ... օրհնում եմ քեզ, երիտասարդ: Դու կօգնես ինձ մեռնել, իսկ ես կդարձնեմ քեզ իմ ժառանգորդը:

— Ժառանգո՞րդը, — զարմացավ Ժակը:

— Այո, ես այս դաշույնը քեզ կթողնեմ: Դու ժպտո՞ւմ ես: Բայց մի՞թե կալանավորի համար սա երանելի ժառան-

դությունն չէ: Ախր դաշույնը ազատության հնարավորությունն է:

— Իրավացի եք, շնորհակալ եմ,— ասաց ժակը:— Բայց ո՞ր է տանում ձեր փորած անցքը:

— Ես դեռ մինչև վերջը չեմ հասել, բայց կարծում եմ, որ քիչ է մնացել: Երեկ հարևան բանտախցից ձայներ լսեցի:

— Գրո՞ղը տանի: Դուք կարծում եք...

— Ես կարծում եմ, որ մի քանի ժամվա գործ է մնացել:

— Շնորհակալություն,— ասաց ժակ Օբրին,— շնորհակալություն:

— Իսկ հիմա քահանա կանչեք... Ես ուզում եմ խոստովանել,— ասաց մեռնողը:

— Իհարկե, հայր իմ, չի կարող պատահել, որ նրանք մերժեն մեռնողի խնդիրքը:

Նա մոտ վազեց դռանը (աչքերն արդեն վարժվել էին մթությանը) և սկսեց ամբողջ ուժով, ոտքերով ու ձեռքերով բախել դուռը:

Ներս մտավ բանտապանը:

— Դե՛հ, ինչո՞ւ եք աղմկում,— հարցրեց նա:— Ի՞նչ է պատահել:

— Մերունին, բանտախցի ընկերս, մեռնում է,— ասաց ժակը,— և խնդրում է քահանա կանչել: Մի՞թե կմերժեք նրան:

— Հը՛մ...— փնթփնթաց բանտապանը:— Ախր որ թողնես, այս բոլոր ավազակներն էլ քահանա կկանչեն... Դե լավ, քահանան կգա:

Եվ իրոք, տասը րոպե անց հայտնվեց քահանան, սուրբ հաղորդություն տալու համար, իսկ նրա առջևից գալիս էին երկու տղա մոնթ, մեկը խաչը ձեռքին, մյուսը՝ քշոցը:

Վեհաշուք տեսարան էր այդ անմեղ նահատակի խոստովանությունը, որը մահվանից առաջ աղոթում էր ոչ թե իր՝ այլ իր տանջարարների հոգու փրկության համար:

Ժակ Օբրին, թեև զգայուն մարդ չէր, ծունկի եկավ ու ակամա մտաբերեց մանկությունից մոռացված բոլոր աղոթքները:

Երբ խոստովանությունն արդեն ավարտված էր, քահա-

նան ինքք ծունկի եկավ մեռնողի առաջ ու խնդրեց նրա օրհնությունը:

Մերունու դեմքին ճառագեց լուսաճաճանշ ժպիտը, որ հատուկ է աստծո ընտրյալներին միայն, նա ձեռքերը տարածեց քահանայի ու ժակ Օբրիի գլխավերևում, խոր հոգոց հանեց ու ընկավ երեսնիվայր:

Այդ շունչը վերջինն էր:

Քահանան մոնթերի ուղեկցությամբ դուրս գնաց, և բանասենյակը, որը մի ակնթարթ լուսավորվել էր մոմերի թըրթրոուն բոցով, կրկին թաղվեց խավարի մեջ:

Ժակ Օբրին մենակ մնաց հանգուցյալի հետ:

Անուրախ ընկերակցություն, որը հարուցում էր ծանր մտքեր... Չէ՞ որ այստեղ պառկած մարդը բանտ է ընկել անմեղ տեղը ու բանտում մնացել ամբողջ տասնհինգ տարի, մինչև որ մահը՝ այդ մեծագույն աղատարարը, եկել է նրան տանելու:

Զվարճասեր ժակ Օբրին չէր ճանաչում ինքն իրեն: Առաջին անգամ նա կանգնեց վեհաշուք ու դժնի առեղծվածի առաջ, առաջին անգամ փորձեց պարզաբանել կյանքի այրող զաղտնիքը, մի հայացք նետել մահվան յոին խորքերը...

Հետո նրա հոգում գլուխ բարձրացրեց եսասիրությունը. նա մտածեց, որ այս ծերունու նման ընկել է մեծանուն մարդկանց կրքերի հորձանուտը, որը ջարդում, աղավաղում, ոչրնչացնում է մարդու կյանքը: Ինքն ու Ասկանիոն կարող են շքվել երկրի երեսից՝ էտյեն Ռեմոնի նման: Ո՞վ կհոգա նրանց մասին: Դուցե ժերվեզան միայն և Բենվենուտո Չելլինին...

Բայց ժերվեզան անզոր է, արցունք թափելուց բացի ուրիշ ոչինչ անել չի կարող. ինչ վերաբերում է Բենվենուտոյին, ապա նա ինքը խոստովանեց, որ անօգնական է, պատմելով, թե ինչպես ապարդյուն ջանքեր է գործադրել բանտ ընկնելու և Ասկանիոյին տեսնելու համար: Փրկության միակ հնարավորությունը, միակ հույսը ծերունու կտակած դաշույնն էր:

Ժակը ծոցում թաքցրեց զենքը և իսկույն ջղաձգորեն սեղմեց դաստապանը, ասես վախենալով, որ կարող է կորչել:

Այդ բոպեին դուռը բացվեց, բանտի ծառայողները եկան դիակը տանելու:

— Ճաշը ե՞րբ կբերեք, — հարցրեց ժակը: — Ես ուտել եմ ուզում:

— Երկու ժամ հետո, — պատասխանեց բանտապանը: Եվ ուսանողը մենակ մնաց բանտասենյակում:

ԳՆՈՒԽ ՏԱՍՆՀԻՆՔԵՐՈՐԴ

Ազնիվ գողը

Մինչև ճաշ մնացած ամբողջ երկու ժամը Օբրին անշարժ նստեց աթոռակին: Մտածմունքներն այնքան կլանեցին նրան, որ ուժ չկար շարժվելու:

Նշանակված ժամին եկավ բանտապանը և հաց ու ջուր բերեց. հինց դա էլ Շատլեի լեզվով կոչվում էր ճաշ:

Ուսանողը մտաբերեց մեռնողի խոսքերը, որ բանտասենյակի դուռը բացվում է օրը մի անգամ. և այնուամենայնիվ, նա դեռ երկար տեղից չէր շարժվում, վախենալով, որ ծերունու մահվան պատճառով կարող են խախտել բանտի կարգը:

Շուտով նա փոքր լուսամուտից տեսավ, որ մուժն ընկնում է: Անցած օրն արտակարգ անհանգիստ էր. առավոտը հարցաքննություն դատավորի մոտ. կեսօրին՝ մենամարտ Մարմանի հետ. ժամը մեկին՝ բանտարկություն, ժամը երեքին՝ կալանավորի մահը, իսկ հիմա պետք էր հնարավորին չափ արագ պատրաստվել փախուստի:

Մարդու կյանքում այդպիսի օրեր հաճախ չեն լինում:

Ժակը դանդաղորեն ոտքի կանգնեց, մոտեցավ դռանն ու ականջ դրեց: Լռություն էր... Այնուհետև հանեց բաձկոնը, որպեսզի հողից ու կրից չաղտոտվի, մի կողմ քաշեց մահճակալը և, տեսնելով անցքը, օձի նման ներս սողոսկեց:

Նրա առաջ բացվեց նեղլիկ սողանցք, մոտ ութ ստնաչափ

երկարութեամբ, որն անցնում էր պատի տակով, իսկ մյուս կողմում կտրուկ վեր բարձրանում:

Դաշույնի առաջին իռկ հարվածից ժակը զգաց, որ շուտով կհասնի նպատակակետին՝ դուրս կգա մակերևույթ: Բայց որտե՞ղ, ո՞ւր: Այդ հարցին պատասխանել կարող էր թերևս միայն գուշակը:

Ինչևիցե, ժակը շարունակում էր եռանդով աշխատել, ջանալով հնարավորին շափ քիչ աղմկել: Ժամանակ առ ժամանակ նա վերագառնում էր բանտասենյակ, որպեսզի գետնին շաղ տա հանած հողն, ու կրկին շարունակում էր փորել...

Մինչդեռ Օբրին աշխատում էր, Ասկանին թախիժով մտածում էր Կոլոմբայի մասին: Մենք արգեն գիտենք, որ նա էլ նսաած էր Շատլեում, և ինչպես Օբրին՝ մենախցում: Բայց նրա բանտասենյակը, պատահաբար, թե՛ դքսուհու կարգադրութեամբ, այնքան մերկ ու մոայլ չէր, ինչքան Օբրիի խուցը:

Սակայն բանտում ի՞նչ կարևոր են հարմարությունները: Ասկանիոյի բանտասենյակը, այնուամենայնիվ, բանտասենյակ էր: Եվ այնտեղ փակված լինելը նշանակում էր բաժանված լինել սիրած աղջկանից: Նա շատ էր կարոտում Կոլոմբային. աղջիկը նրա համար աշխարհում ամեն ինչից թանկ էր՝ թե՛ ազատութունից, թե՛ կյանքից: Եթե հիմա նա իր հետ լիներ, բանտը կդառնար ավետյաց երկիր, հեքիաթային սլալատ:

Որքա՞ն հրջանիկ էր նա վերջին ժամանակներս: Ցերեկը մտածում էր սիրած աղջկա մասին, իսկ գիշերը, նրա կողքին նստած, երազում. այն ժամանակ նրան թվում էր, թե այդ երջանկութունը վերջ չունի: Սակայն նույնիսկ հրանության դուրաթնակետին, կասկածի սուր ճիրանները մխրճվում էին նրա սիրտը: Եվ այն ժամանակ, մահացու վտանգի տակ գտնվող մարդու նման, նա շտապով քշում էր իրենից տագնապալից մտքերն ապագայի մասին, որպեսզի ներկայի հաճույքն ավելի լիակատար լինի:

Եվ ահավասիկ, հիմա նա մենակ էր իր բանտասենյակում: Կոլոմբան հեռու էր, ո՞վ գիտի, գուցե աղջկան վանք են տա-

րել և այնտեղից նա դուրս կգա ատելի կոմսի կինը դարձած...

Դժբախտ սիրահարներին սոսկալի վտանգ էր սպառնում. տիկին դ՛էտամպի ցանկասիրությունը հետամտում էր Ասկանիոյին, կոմս դ՛Օրբեկի փառամոլությունը՝ Կոլոմբային:

Միայնակ մնալով, Ասկանիոն բոլորովին վհատվեց: Նա այն մեղմ բնավորության տեր մարդկանցից էր, որոնց պետք է ուժեղ մարդու օգնություն: Սքանչելի, փխրուն ծաղկի նման նա փոթորկի առաջին իսկ շնչից գլուխը կախեց, կորացավ, և նրան կյանքի կոչել կարող էին միայն արևի կենսատու շողերը:

Եթե Բենվենուտոն բանտ ընկներ, ամենից առաջ կհետազոտեր իր բանտասենյակի դռները, պատերն ու հատակը, նրա աշխույժ, անհնազանդ ուղեղն անդադար կաշխատներ, ջանալով փրկության որևէ միջոց գտնել: Բայց Ասկանիոն զլխահակ նստեց մահճակալին ու մրմնջաց Կոլոմբայի անունը: Նրա մտքով էլ շանցավ, թե կարելի է փախչել բանտասենյակից, որը գտնվում էր երեք երկաթյա վանդակապատի հետեր, և ծակել վեց ոտնաչափ յայնություն ունեցող սլառը:

Մենք արդեն ասացինք, որ Ասկանիոյի բանտասենյակն այնքան դառարկ ու խղճուկ չէր, որքան ժակ Օբրիինը. այնտեղ մահճակալ կար, սեղան, երկու աթոռ, իսկ հատակին՝ հնամաշ խսիր: Բացի այդ, քարե ելուստի վրա, որը, ըստ երևույթին, հատկապես դրա համար էր սարքված, դրված էր վառ կանթեղ: Անկասկած, դա արտոնյալ հանցագործների բանտասենյակ էր:

Այստեղ նկատելիորեն տարբերվում էր և կերակուրը. հացի ու ջրի փոխարեն, որ ժակ Օբրին ստանում էր օրը մեկ անգամ, Ասկանիոյի համար կերակուր էին բերում օրը երկու անգամ. բայց այդ գերադասությունն արժեքազրկվում էր նրանով, որ բանտապանն էլ հայտնվում էր երկու անգամ: Ի պատիվ Շատլիի հոգատար վարչության, պետք է ասել, որ ուտելիքն այնքան էլ զզվելի չէր:

Բայց Ասկանիոյին չէր էլ հետաքրքրում բանտի կենցաղի այդ կողմը. նա այն պատանիներից էր՝ կանացի զգայուն հոգով, որոնց նայելիս թվում է, թե ապրում են ծաղիկների

բույրով միայն և վաղորդյան ցողի թարմությամբ: Ամբողջովին խորասուզվելով իր երազանքների մեջ, Ասկանիոն մի քիչ հաց կերավ ու մի քանի կում գինի խմեց. նա մտածում էր Կոլոմբայի մասին, որպես իր միակ սիրածի, և Բենվենուտոյի մասին, որպես իր միակ հենարանի:

Եվ իրոք, մինչև հիմա Ասկանիոն ստիպված չէր եղել հաղթահարել որևէ խոչընդոտ, ամեն ինչի մասին հոգ էր տանում Չելլինին, իսկ պատանին ապրում էր անհոգ, ստեղծում արվեստի սքանչելի գործեր ու սիրում Կոլոմբային: Նա նման էր հուժկու ծառի վրա աճող պտղի, որն անհրաժեշտ կենսական բոլոր հյութերը ստանում է այդ ծառից:

Եվ նույնիսկ հիմա, շնայած անելանելի դրությանը, նրա հավատն ուսուցչի նկատմամբ անսահման էր: Եթե այն պահին, երբ ձերբակալեցին պատանուն, կամ երբ նրան տանում էին Շատլե, նա տեսներ Բենվենուտոյին, և ուսուցիչը սեղմեր նրա ձեռքն ու ասեր. «Մի անհանգստանա, ղափակս, ես պաշտպանում եմ քեզ և Կոլոմբային» — Ասկանիոն խաղաղորեն կսպասեր իր բանտասենյակում, վստահ, որ բանտի գոներն ու վանդակապատերը, որոնք այնքան անսպասելիորեն փակվեցին իր հետևից, մի գեղեցիկ օր անպայման կբացվեն: Բայց Բենվենուտոն չգիտեր, որ իր սիրելի աշակերտը, իր Ստեֆանայի տղան, տանջվում է բանտում: Եվ բացի այդ, եթե մեկն ու մեկի մտքով անցներ հայտնել նրան այդ մասին ֆոնտենըլոյում, այնտեղ գնալու ու հետ դառնալու համար պետք էր առնվազն երկու օր. այդ ժամանակամիջոցում Ասկանիոյի և Կոլոմբայի թշնամիները կարող էին շատ փորձանքներ բերել նրանց գլխին:

Այդպես ուրեմն, բարեկամի օգնությունից զրկված, Ասկանիոն այդ օրվա երկրորդ կեսը և իր բանտարկության առաջին գիշերն անցկացրեց անքուն. նա մերթ անցուդարձ էր անում բանտասենյակում, մերթ կրկին նստում, կամ մեկնրվում էր մահճակալին, որը ծածկված էր մաքուր սավաններով՝ կալանավորի արտոնյալ դրության ապացույցը:

Այդ ամբողջ օրվա, ամբողջ գիշերվա և հետևյալ առավոտի ընթացքում ոչինչ տեղի չունեցավ, եթե չհաշվենք ուտելիք բերող բանտապանի սովորական այցելությունը:

Կեսօրվա ժամը երկուսը կլինեն, ինչքան կալանավորն առհասարակ կտրող էր դատել ժամանակի մասին, երբ նրան թվաց, թե մոտերքում ինչ-որ ձայն է լսվում՝ թույլ, հազիվ լսելի շշուկ, որի մեջ անհնարին էր դատել բառերը, բայց, այնուամենայնիվ, պարզ էր, որ դա մարդկային ձայն է: Ասկանիոն ականջ դրեց և ձայնի վրա գնաց դեպի բանտասենյակի անկյունը, ականջը լռելյայն հպեց պատին, հետո՝ հողե հատակին: Թվում էր, թե շշուկը լսվում է գետնի տակից: Ուրեմն, նրա բանտասենյակը հարևանի բանտասենյակից բաժանում է մի բարակ պատ, կամ միջնապատ միայն:

Երկու ժամ հետո ձայնը դադարեց ու կրկին տիրեց լռություն:

Եվ հանկարծ, գիշերվա կեսին, աղմուկը վերսկսվեց, բայց հիմա արդեն դրանք ձայներ չէին, այլ ասես քարին զարնվող քլունգի հաճախակի, խուլ հարվածներ, որոնք լսվում էին նույն անկյունից և ոչ մի վայրկյան չէին դադարում, հետզհետե դառնալով ավելի պարզորոշ:

Եվ շնայած Ասկանիոն կլանված էր իր մտքերով, տարօրինակ աղմուկը գրավեց նրա ուշադրությունը. պատանին աչքը շէր կտրում անկյունից, որտեղից լսվում էր աղմուկը: Ժամը ուշ էր, կեսգիշեր կլիներ, բայց Ասկանիոն, շնայած նախօրեի անքուն գիշերվան, քնելու մասին չէր մտածում:

Աղմուկը շարունակվում էր. ժամանակից դատելով, դժվար էր ենթադրել, թե բանտում ինչ-որ աշխատանքներ են կատարվում. հավանաբար կալանավորներից մեկը անցք է փորում փախուստի նպատակով: Ասկանիոն տխրորեն ժրպտաց, մտածելով այն մասին, որ դժբախտ կալանավորը, գործը վերջացնելով, ազատության փոխարեն կրնկնի իր իուցը և մի բանտասենյակը կփոխարինի մյուսով...

Վերջապես աղմուկն այնքան պարզորոշ դարձավ, որ Ասկանիոն վերցրեց կանթեղն ու մոտ վազեց պատին: Համարյա նույն պահին հողե հատակն անկյունում փքվեց, հողաշերտը պոկ եկավ, և անցքի մեջ հայտնվեց ինչ-որ մեկի գլուխը:

Ասկանիոն ճշաց նախ անսպասելիությունից, ապա՝ հիացմունքից, և նրան պատասխանեց մի ուրիշի ոչ պակաս ուրախ բացականչությունը. այդ մարդը ժակ Օբրին էր:

Ասկանիոն անմիջապես օգնեց ժակին դուրս գալ անցրից, և ընկերներն ամուր գրկախառնվեցին:

Անշուշտ, առաջին հարց ու պատասխանները բավական անկապ էին. բայց մի քանի կցկտուր խոսք փոխանակելուց հետո, իրենց մտքերը կարգի բերելով, ընկերներն սկսեցին քննարկել այն ամենը, ինչ պատահել էր: Ասկանիոն, իսկապես ասած, պատմելու ոչինչ չուներ, սակայն, պետք է տեղեկանար շատ բաների մասին:

Ժակ Օբրին պատմեց ամեն ինչ. և՛ այն, թե ինչպես Բենվենուտոյի հետ եկավ Նելի ամրոց, և՛ այն, թե ինչպես իրենք լսեցին Ասկանիոյի ձերբակալութեան ու Կոլոմբայի առևանգման մասին, և թե ինչպես Բենվենուտոն խելագարի նման նետվեց արվեստանոց, գոչելով. «Շո՛ւտ, շո՛ւտ գործի անցեք» — իսկ ինքը՝ ժակ Օբրին սլացավ Շատլե: Իսկ թե հետո ինչ տեղի ունեցավ Նելի ամրոցում, ժակ Օբրին չգիտեր:

Այդ յուրօրինակ «Իլիական»-ին հաջորդեց «Ոդիսական»-ը: Օբրին պատմեց Շատլե ընկնելու իր անհաջող փորձերի մասին, ժերվեզայի հետ ունեցած խոսակցության, դատավորի հարցաքննության, փարիզյան քսան սու տուգանքի, դատավճռի և, վերջապես, իր հանդիպման մասին Մարմանի հետ, երբ արդեն ոչ մի հույս չուներ բանտ ընկնելու, և այն լամենի մասին, ինչ հաջորդեց դրան՝ մինչև այն րոպեն, երբ քանդելով հողի վերջին բարակ շերտը, նա հայտնվեց ինչ-որ մեկի բնատասնելակում ու կանթեղի աղոտ լույսի տակ տեսավ Ասկանիոյին:

Եվ ընկերները նորից գրկախառնվեցին ու համբուրվեցին:

— Իսկ հիմա, հավատա, Ասկանիո, մենք ոչ մի րոպե կորցնելու իրավունք չունենք:

— Նախ ասա ինձ, որտե՞ղ է Կոլոմբան, ինչպե՞ս է նա, — հարցրից Ասկանիոն:

— Կոլոմբա՞ն: Բայց ես նրա մասին ոչինչ չգիտեմ, հավանաբար, տիկին դ՛էտամպի մոտ է:

— Տիկին դ՛էտամպի՞, — բացականչեց Ասկանիոն: — Իր մրցակցուհո՞ւ:

— Ուրեմն ճի՞շտ են ասում, որ դքսուհին սիրում է քեզ: Ասկանիոն շիկնեց և ինչ-որ անհասկանալի բան մրմնջաց:

— Դե՛հ, կարմրելու ի՞նչ կա,— զարմացավ ժակը:— Գրողը տանի, կյանքում ամեն մարդու այդպիսի բախտ չի վիճակվում: Անհավատալի բան է՝ դքսուհի: Եվ այն էլ թագավորի ֆավորիտուհին: Ես երբեք չէի հրաժարվի: Բայց գառնանք մեք գործին:

— Այո, այո,— ձայնակցեց Ասկանիոն,— խոսենք Կոլոմբայի մասին:

— Կոլոմբայի՞: Ոչ, ավելի լավ է խոսենք նամակի մասին:

— Ի՞նչ նամակ:

— Որը գրել էր քեզ դքսուհի դ՛էտամպը:

— Ո՞վ ասաց, որ ես դքսուհուց նամակ ունեմ:

— Բենվենուտո Չելլիինին:

— Իսկ ինչո՞ւ ասաց:

— Որովհետև նրան պետք է դքսուհու նամակը, պարզապես անհրաժեշտ է, որովհետև ես հանձն առա ձեռք բերել այդ նամակը. ախր հենց դրա համար դիմեցի այն բոլոր արարքներին, որոնց մասին քիչ առաջ պատմում էի:

— Բայց Բենվենուտոն ի՞նչ է անելու այդ նամակը,— հարցրեց Ասկանիոն:

— Իմ ի՞նչ գործն է: Ես ոչինչ չգիտեմ և իմանալ էլ չեմ ուզում: Բենվենուտոյին պետք է նամակը, ու ես հանձն առա տեղ հասցնել այն և ուրիշ ոչինչ: Ինձ հաջողվեց բանտ ընկնել, գտնել քեզ, և ահա ես այստեղ եմ: Տուր նամակը, և կհանձնեմ Չելլիինին: Դե՛հ... Ինչո՞ւ ես լռում:

Վերջին հարցի պատճառն այն էր, որ Ասկանիոն հանկարծ մոռացվեց:

— Իմ խեղճ ժակ,— ասաց նա:— Բանն այն է, որ ջանքերդ զուր էին:

— Ինչպե՞ս թե զուր,— բացականչեց Օբրին:— Նամակը քեզ մոտ չէ՞:

— Նամակն այստեղ է, գրպանումս,— պատասխանեց Ասկանիոն, ձեռքը կրծքին սեղմելով:

— Ուրեմն տուր ինձ, և ես կհանձնեմ Բենվենուտոյին:

— Ոչ մի գեպքում, ժակ:

— Այդ ինչո՞ւ:

— Որովհետև ես չգիտեմ, թե այս նամակը Բենվենուտոյի ինչի՞ն է պետք:

— Բայց այդ նամակի օգնութեամբ նա ուզում է փրկել քեզ:

— Եվ գուցե կործանել տիկին դ'էտամպի՞ն: Ո՛չ, ժակ, ես երբեք չեմ համաձայնի կովել կնոջ դեմ:

— Բայց այդ կինը ջանում է կործանել քեզ: Ասկանիո, նա ատում է քեզ: Ասենք՝ ոչ, նա պաշտում է քեզ:

— Եվ դու ուզում ես, ժակ, որպեսզի ի պատասխան այդ զգացմունքի...

— Բայց չէ՞ որ դու նրան չես սիրում: Ի՞նչ կարևոր է ատում է նա քեզ, թե պաշտում: Եվ, բացի այդ, այս բոլորը նրա սարքած գործերն են:

— Ի՞նչ ես ուզում ասել:

— Այն, որ քեզ ձերբակալեցին և Կոլումբային տարան դրսուհու հրամանով:

— Ո՞վ ասաց:

— Ոչ ոք: Պարզապես ուրիշ ո՞վ կարող էր այդ անել:

— Իսկ պրևո՞ն: Իսկ կոմս դ'Օրբեկը: Իսկ Մարմա՞նը, որին դու, քո իսկ խոստովանութեամբ, ամեն ինչ պատմել ես:

— Ա՛խ, Ասկանիո, Ասկանիո,— բացականչեց ժակը, տեսնելով, որ չի կարողանում համոզել ընկերոջը,— դու կործանում ես քեզ:

— Ավելի լավ է կործանվեմ, քան ստորութուն անեմ:

— Ախր դա ի՞նչ ստորութուն է, եթե ինքը՝ Բենվենուտո Չելլինին, ընդունելի է համարում:

— Լսիր ինձ, ժակ,— սկսեց Ասկանիոն,— և մի բարկանա ասածիս վրա: Եթե քո տեղը Բենվենուտո Չելլինին լիներ և նա՛ ինքն ասեր ինձ.«Տիկին դ'էտամպը քո թշնամին է, նա նրամայել է ձերբակալել քեզ, տարել է Կոլումբային ու պատում է նրան փակի տակ, ցանկանալով ամուսնացնել կոմս դ'Օրբեկի հետ: Ես կարող եմ փրկել Կոլումբային այդ նամակի օգնութեամբ միայն»— ես կստիպեի Չելլինին երդվել, որ թագավորին ցույց չի տա նամակը ու գրանից հետո միայն կհանձնեի նրան: Սակայն Բենվենուտոն այստեղ չէ և

Ես ամենևին համոզված չեմ, որ մեր դժբախտությունների մեղավորը դքսուհին է: Բացի այդ, եթե նամակը քեզ տամ, վստահ չեմ լինի, որ այն հուսալի ձեռքերում է: Ներիր, սիրելի ժակ, բայց ինքդ էլ գիտես, որ շափազանց թեթևամիտ ես:

— Երդվում եմ, Ասկանիո, մի օրվա մեջ ես տասը տարով ծերացա:

— Դու կարող ես կորցնել նամակը, ժակ, կամ օգտագործել անհեռանկատորեն, թեկուզ և ամենալավագույն դիտավորություններով: Ոչ, ավելի լավ է նամակն ինձ մոտ մնա:

— Բայց մտածիր, սիրելիդ իմ, չէ՞ որ Բենվենուտոն ասաց, որ քո փրկությունն այդ նամակի մեջ է:

— Բենվենուտոն առանց այս նամակի էլ կկարողանա փրկվել ինձ, ժակ: Թագավորը խոստացել է կատարել նրա ցանկացած խնդիրքը Յուպիտերի արձանն ավարտելուց հետո: Եվ այն ժամանակ, երբ Բենվենուտոն վազվզում էր ու գոռում՝ «Շուտ, շո՛ւտ, գործի անցեք», ամենևին չէր խելագարվել, ինչպես դու ենթադրեցիր, այլ պարզապես սկսել է իմ փրկության գործը:

— Իսկ եթե Յուպիտերի ձուլումն անհաջող անցնի՞, — հարցրեց ժակը:

— Այդպիսի բան չի կարող լինել, — պատասխանեց Ասկանիոն:

— Բայց ասում են, որ այդպիսի դեպքեր պատահել են Յրանսիայի ամենափորձված ձուլողների հետ անգամ:

— Ձեր հմուտ ձուլողները Բենվենուտոյի համեմատությամբ խղճուկ աշակերտներ են:

— Ձուլումն ինչքա՞ն կտևի:

— Երեք օր:

— Իսկ ինչքա՞ն ժամանակ է պետք արձանը տեղ հասցնելու համար:

— Նույնպես երեք օր:

— Ուրեմն մի ամբողջ շաբաթ: Բայց եթե այդ ժամանակամիջոցում դքսուհին ստիպի Կոլոմբային ամուսնանալ կոմս դ'Օրբեկի հե՞տ:

— Տիկին դ՛էտամայր ոչ մի իրավունք չունի Կոլումբայի ճակատագիրը տնօրինելու: Եվ Կոլումբան էլ երբեք չի համաձայնի:

— Ենթադրենք: Բայց չէ՞ որ Կոլումբան պարտավոր է հնազանդվել պրևոյին իբրև նրա դուստրը, իսկ պրևոն, որպես հպատակ, պարտավոր է հնազանդվել թագավորին: Թագավորը կհրամայի պրևոյին, իսկ պրևոն՝ Կոլումբային:

Ասկանիոն սոսկալի գունատվեց:

— Պատկերացրու, որ Բենվենուտոյին հաջողվի ազատել քեզ մի շաբաթ հետո միայն, իսկ այդ ժամանակամիջոցում Կոլումբային ամուսնացնեն ուրիշի հետ: Այն ժամանակ ինչի՞դ է պետք ազատությունը:

Ժակ Օբրիի այդ բառերից Ասկանիոյի ճակատը ծածկվեց սառը քրտինքով. նա մի ձեռքը տարավ ճակատին, մյուս ձեռքը՝ գրպանը, նամակը հանելու: Ժակը գրեթե համոզված էր, որ Ասկանիոն հանձնվում է, բայց վերջինս, ասես կասկածները փարատելով, համառորեն տարուբերեց գլուխը:

— Ո՛չ, — վճռականորեն բացականչեց նա: — Այս նամակը ես կտամ միայն Բենվենուտոյին... Ավելի լավ է խոսենք ուրիշ բաներից:

Այդ բառերն արտասանելու տոնից ժակը պարզորեն զգաց, որ պնդելն անօգուտ է, համենայն դեպս՝ հիմա:

— Ուրիշ բաների մասին վաղն էլ կհասցնենք խոսել, — ասաց Օբրին, ըստ երևույթին, ինչ-որ կարևոր որոշում ընդունելով: — Բանն այն է, որ վախենում եմ, թե ստիպված լինենք որոշ ժամանակ մնալ այստեղ: Բացի այդ, ես հոգնել եմ ցերեկային հուզումներից ու գիշերային աշխատանքից և հանգստի կարիք ունեմ: Մնա այստեղ, իսկ ես գնամ իմ բանտասենյակը: Երբ ցանկանաս ինձ տեսնել, կանչիր: Միայն թե անցքը նորից փակիր խսիրով, որպեսզի մեկն ու մեկի աչքով չընկնի: Դե՛, բարի գիշեր: Լույսը կբացվի, բարին էլ հետը և վաղը, հուսով եմ, դու ավելի խելամիտ կլինես, քան այսօր:

Ժակը, որն այլևս չէր կամենում ոչինչ լսել, իջավ ստորերկրյա անցքը և շորերթաթ վերադարձավ իր բանտասենյակը:

Ասկանիոն հետևեց ընկերոջ խորհրդին. հենց որ ժակն անհետացավ, խսիրը քաշեց սենյակի անկյունն ու ծածկեց անցքը, վերացնելով երկու բանտասենյակների միջև եղած անցուղու բոլոր հետքերը: Այնուհետև հանեց բաճկոնը, գցեց աթոռներից մեկի վրա, մեկնվեց մահճակալին և շուտով քնեց. ֆիզիկական հոգնածությունը հաղթահարեց հոգեկան տառապանքները:

Թեև ժակ Օբրին Ասկանիոյից ոչ պակաս կարիք ուներ հանգստի, բայց նստեց աթոռակին ու սկսեց մտածել: Ինչպես հայտնի է ընթերցողին, նա այդ սովորությունը շուներ, ուստի իսկույն երևաց, որ ժակը կարևոր հարց է լուծում:

Ուսանողը մոտ տասնհինգ-քսան ռուպե խորասուզված էր մտքերի մեջ, հետո դանդաղ ոտքի կանգնեց, ինչպես իր բոլոր կասկածները փարատած մի մարդ, ծանր, հաստատուն քայլքով գնաց դեպի սողանցքը, ներս մտավ, հասավ մյուս ծայրը և գլխով խսիրը բարձրացնելով, ուրախությամբ համողվեց, որ Ասկանիոն չի էլ արթնացել, այնքան անաղմուկ ու զգուշորեն էր կատարված այդ մանյովորը:

Ժակ Օբրին էլ հենց այդ էր պետք: Առավել մեծ նախադրուշություններով նա դուրս եկավ սողանցքից, շունչը պահած գազտագողի մոտեցավ աթոռին, որի վրա կախված էր բաճկոնը և, աչքը շարժելով քնած Ասկանիոյից, գրպանից դուրս քաշեց թանկագին նամակը՝ Չելլինիի բաղձանքի առարկան: Հետո ծրարից թուղթը հանեց և տեղը դրեց ժերվեզայի երկտողը, որը ծալված էր ճիշտ այնպես, ինչպես դրսուհու գրությունը, մտածելով, որ եթե Ասկանիոն կրկին շարժվի նամակը, ապա ոչինչ էլ չի նկատի:

Հետո նա նույնքան կամացուկ մոտեցավ սողանցքին, բարձրացրեց խսիրը, սահեց անցքի մեջ ու անհետացավ, ինչպես տեսիլքը օպերային թատրոնի բեմում:

Ժակը գնաց ճիշտ ժամանակին, քանզի իր բանտասենյակը մտնելուն պես լսեց, որ հարևան բանտասենյակի դուռը ճոռաց, և Ասկանիոն, հանկարծակի արթնացած մարդու նման, վախեցած ճիշ արձակեց:

— Ո՞վ է:

— Մի վախեցեք, — պատասխանեց կանացի քնքուշ մի ձայն, — այդ ես եմ, ձեր բարեկամը:

Ասկանիոն, որն ինչպես ասացինք քնել էր կիսահագնաված, տեղից բարձրացավ: ձայնը ծանոթ թվաց նրան և կանթեղի թրթռուն լույսի տակ նա տեսավ քողածածկ մի կնոջ: Կինը դանդաղ մոտեցավ անկողնուն ու բարձրացրեց դեմքի քողը: Ասկանիոն շէր սխալվել. դա տիկին դ'էտամպն էր:

ՔԼՈՒՍ ՏԱՍՆՎԵՑԵՐՈՐԴ

Որը ցույց է տալիս, որ եթե այրելու լինենք հասարակ աղջկա նամակը, ապա այն ոչ պակաս կրակ ու մոխիր կտա, քան դքսուհու նամակը

Աննա դ'էյլիի գեղանի, խոսուն դեմքը արտահայտում էր վախիժ, կարեկցանք: Ասկանիոն զգացվեց և, մինչ դքսուհին կխոսեր, որոշեց, որ նա մեղք չունի իր և Կոլոմբայի գլխին եկած դժբախտության մեջ:

— Ահա թե սրտեղ հանդիպեցինք, Ասկանիո, — բացականչեց տիկին դ'էտամպն իր քաղցրահնչյուն ձայնով: — Ես երազում էի պալատներ նվիրել ձեզ, բայց գտնում եմ բանտում:

— Ա՛խ, տիկին, — պատասխանեց պատանին, — ուրեմն դուք իրո՞ք մեղք չունեք մեր դժբախտության մեջ:

— Ինչպե՞ս կարող էիք կասկածել, Ասկանիո, — բացականչեց դքսուհին: — Հիմա ես հասկանում եմ ձեր ատելությունն պատճառը և ինձ մնում է միայն տրտնջալ այն բանի համար, որ ինձ վատ է հասկացել մի մարդ, որին ես այդքան լավ եմ հասկանում:

— Ոչ, տիկին, ես չեմ կասկածել: Ճիշտ է, ինձ ասացին, որ դուք մեղավոր եք իմ ձերաբեկալության մեջ, բայց ես ոչ որի չհավատացի:

— Եվ յով արեցիք, Ասկանիո: Դուք շեք սիրում ինձ, գիտեմ, բայց ես ուրախ եմ և նրա համար, որ ատելությունից չեք կուրացել: Ո՛չ, Ասկանիո, ես ոչ միայն շարունակում չեմ

արել ձեզ, այլև ինքս ոչինչ չգիտեի: Ամեն ինչում մեղավոր է պրևոն. այդ նա է հայտնաբերել Կոլումբայի ապաստարանը, նա է ամեն ինչ պատմել թագավորին ու պահանջել, որ վերադարձնեն աղջկան և ձեզ ձերբակալեն:

— Ուրեմն, Կոլումբան հոր մոտ է,— աշխուժորեն հարցրեց Ասկանին:

— Ոչ, նա ինձ մոտ է,— պատասխանեց դքսուհին:

— Ձեզ մոտ,— բացականչեց պատանին:— Բայց ինչո՞ւ:

— Նա այնքան գեղեցիկ է, Ասկանիո,— շնչաց դքսուհին:— Ես հասկանում եմ, ինչ դուք ինչու եք ընտրել հենց նրան ու երբեք չեք սիրի ուրիշ կնոջ, եթե նույնիսկ նա ձեզ ընծայի ամենահարուստ դքսությունը:

— Ես սիրում եմ Կոլումբային, տիկին, իսկ դուք կարծեմ գիտեք, որ սերը երկնային պարզե է և վեր է երկրային բոլոր բարիքներից:

— Այո, Ասկանիո, դուք սիրում եք նրան ամեն ինչից շատ: Ես հույս ունեի, որ դա անցողիկ հրապուրանք է, բայց սխալվեցի: Այո, հիմա ես շատ լավ տեսնում եմ,— հոգոց հանելով ավելացրեց նա,— որ ձեզ բաժանելու փորձը կնշանակեր դեմ կանդնել աստծու կամքին:

— Ա՛խ, տիկին,— բացականչեց Ասկանիոն, ձեռքերն աղերսագին ծալելով,— աստված իշխանություն է տվել ձեզ... Մինչև վերջ մեծահոգի եղեք, տիկին, օգնեք երկու խեղճ երեխայի իրենց կյանքը կարգավորելու, և նրանք ցմահ կսիրեն ու կօրհնեն ձեզ:

— Լավ,— պատասխանեց դքսուհին:— Ես պարտաված եմ, Ասկանիո. ես համաձայն եմ պաշտօյանել ու հովանավորել ձեզ: Բայց ավստղ, հիմա թերևս արդեն շատ ուշ է...

— Ո՞ւշ է: Ի՞նչ եք ուզում ասել, տիկին,— բացականչեց Ասկանիոն:

— Գուցե հենց այս րոպեին, Ասկանիո, ես կանդնած եմ կործանման եղրին:

— Կործանման եզրի՞ն: Ինչո՞ւ:

— Ձեզ սիրելու համար, Ասկանիո:

— Ինձ սիրելու համար: Գուք կործանվում եք, որովհետև սիրե՞լ եք ինձ:

— Այո, կործանվում եմ, կործանվում եմ սեփական ան-

զգուշությանս պատճառով, ձեզ գրածս երկտողի պատճառով:

— Ես ոչինչ չեմ հասկանում, տիկին...

— Մի՞թե չեք հասկանում, որ թագավորից հրաման ստանալով, պրեոն կարգադրել է խուզարկության ենթարկել Նելի ամբողջ ամբողջը: Մի՞թե չեք հասկանում, որ ամենամասնաւորին կերպով կխուզարկեն ձեր սենյակը: Չէ՞ որ նրանց ասույցույցներ են պետք Կոլոմբայի նկատմամբ ունեցած ձեր սերը հաստատելու համար:

— Հետո ի՞նչ, — անհամբերությամբ հարցրեց Ասկանին:

— Ինչպե՞ս թե, — զարմացաւ դքսուհին, — եթե ձեր սենյակում գտնեն նամակը, որը խենթության պահին գրել եմ ձեզ, եթե ճանաչեն ձեռագիրս ու նամակը հանձնեն թագավորին, ես կորած եմ. Ֆրանցիսկ 1-ը կհամոզվի, որ ես սիրում եմ ձեզ, որ պատրաստ եմ դավաճանել նրան հանուն ձեզ և այդ ժամանակ վե՛րջ իմ իշխանությանը: Հասկանո՞ւմ եք, որ այն ժամանակ արդեն ոչ մի բանով չեմ կարող օգնել ո՛չ ձեզ, ո՛չ Կոլոմբային: Վերջապես հասկանո՞ւմ եք, որ ես կանգնած եմ կործանման անդունդի եզրին:

— Օ՛, տիկին, հանգստացեք: Ձեզ ոչինչ չի սպառնում. ձեր նամակն ինձ մոտ է, այստեղ, ես երբեք չեմ բաժանվում դրանից:

Դքսուհին խոր հոգոց հանեց և նրա դեմքի տաղնասլը փոխարինվեց ուրախության արտահայտությամբ:

— Երբեք չե՞ք բաժանվում, — բացականչեց նա: — Երբե՞ք: Բայց ասացեք, Ասկանիո, ի՞նչ զգացմունքի եմ պարտական, որ այդ նամակը միշտ ձեզ հետ է:

— Ողջախոհությանը, տիկին, — մրմնջաց Ասկանին:

— Միայն ողջախոհությա՛նը: Ուրեմն, ես նորի՞ց սխալվեցի: Օ՛ տեր աստված, տեր աստված, ժամանակն է արդեն հաշտվելու, հասկանալու: Այդպես ուրեմն, ողջախոհությա՛նը: Ինչ արած, ավելի լավ, — ավելացրեց նա, ձեացնելով, թե հաղթահարում է իր զգացմունքը: — Բայց եթե խոսելու լինեմք ողջախոհության մասին, ապա ասացեք, մի՞թե դուք ողջախոհություն եք համարում նամակը ձեզ մոտ պահելը,

իմանալով, որ ամեն բոլոր կարող են խուզարկել ձեզ: Մի՞թե ողջամտություն է վտանգի ենթարկել միակ մարդուն, որն ի վիճակի է օգնել ձեզ և Կոլումբային:

— Զգիտեմ, տիկին,— ասաց Ասկանիոն մեղմորեն և այն թախիծով, որը համակում է անազարտ հոգու տեր մարդկանց, երբ նրանք ստիպված են լինում կասկածի տակ առնել որևէ մեկին.— Դուք իրո՞ք ցանկանում եք փրկել ինձ ու Կոլումբային, թե դա լոկ խոսք է: Զգիտեմ... գուցե ձեզ այստեղ է բերել պարզապես նամակն ստանալու ցանկությունը... Ձէ՞ որ դուք ինքներդ ասացիք, որ այդ երկտողը կարող է ձեզ կործանել: Զգիտեմ, վերջապես, թե այդ նամակը ստանալով, դուք կմնա՞ք արդյոք մեր բարեկամը, ինչպես ներկայանում եք և շե՞ք դառնա մեր թշնամին... Բայց ես հաստատապես գիտեմ, տիկին, որ այդ նամակը ձերն է, հետևապես դուք իրավունք ունեք պահանջել այն: Եվ քանի որ պահանջում եք, ես պարտավոր եմ վերադարձնել:

Ասկանիոն ոտքի կանգնեց, մոտեցավ աթոռին, որի վրա կախված էր նրա բաճկոնը, պրպտեց գրպանն ու հանեց նամակը. դքսուհին իսկույն ճանաչեց ծրարը:

— Ահա, տիկին, ձեզ համար այնքան ցանկալի նամակը,— ասաց նա,— որն ինձ պետք չէ, իսկ ձեզ կարող է վնաս հասցնել: Վերցրեք, պատռեք, ոչնչացրեք: Ես կատարեցի իմ սլարտը, իսկ դուք վարվեք, ինչպես կամենաք:

— Ա՛խ, Ասկանիո, դուք ավնվագույն սիրտ ունեք,— բացականչեց դքսուհին այնպիսի անկեղծությամբ, որից երբեմն զերծ չեն նույնիսկ ամենափշաջած մարդիկ:

— Զգուշացե՛ք, տիկին, մարդ է գալիս,— բացականչեց Ասկանիոն:

— Դուք իրավացի եք,— ասաց դքսուհին:

Եվ քանի որ քայլերն իրոք մոտենում էին, նա նամակն արագորեն մոտեցրեց կանթեղին. կրակը վայրկենապես խլեց թուղթը: Եվ այն ժամանակ միայն, երբ բոցը դիպավ դքսուհու մատներին, նա ցած գցեց այրված նամակի մնացորդները. թղթի ածխացած կտորը, օդում պտտվելով, ցած իջավ ու

հատակին դիպչելուն պես փոշիացավ: Սակայն դքսուհին մոխիրն իսկ տրորեց ոտքով:

— Այդ պահին դռների մեջ հայտնվեց պրևոն:

— Ինձ նախազգուշացրին, որ դուք այստեղ եք, տիկին,— ստաց նա, անհանգստացած նայելով մերթ տիկին դ'էտամպին, մերթ Ասկանիոյին,— և ես որոշեցի տեղեկանալ, թե որևէ բանի կարիք ունե՞ք. ես և իմ մարդիկ ամբողջապես ձեր տրամադրութեան տակ ենք:

— Ո՛չ, մեսսեր,— պատասխանեց տիկին դ'էտամպը, շկարողանալով ծածկել մեծագույն ուրախությունը, որից շողում էր նրա դեմքը:— Բայց ի սրտե շնորհակալ եմ ինձ օգնելու ցանկութեան համար: Ես եկել եմ բանտարկված պատանուն մի բանի հարց տալու միայն և ստուգելու, թե նա իրո՞ք այնքան մեղավոր է, ինչպես ինձ ասել են:

— Եվ ի՞նչ եզրակացութեան եկաք, տիկին,— ոչ առանց հեղինակների հարցրեց պրևոն:

— Իմ կարծիքով Ասկանիոն շատ ավելի քիչ մեղք ունի, բան ես ենթադրում էի. այդ պատճառով խնդրում եմ ձեզ, մեսսեր, ավելի ուշադիր լինել նրա նկատմամբ: Նախ և առաջ հոգ տարեք այն մասին, որ պատանին ավելի վայելուչ սենյակ ստանա:

— Վաղն իսկ կտեղափոխեմ նրան ուրիշ բանտասենյակ, տիկին: Դուք դիտեք, որ ձեր խոսքն ինձ համար օրենք է: Ուրիշ կարգադրություններ չունե՞ք: Հարցաքննությունը շարունակել չե՞ք կամենում:

— Ոչ, մեսսեր, ես իմացա ամեն բան, ինչ ցանկանում էի,— պատասխանեց դքսուհին:

Եվ այդ բառերն արտասանելուց հետո նա դուրս եկավ, շնորհակալ ու քնքուշ մի հայացք նետելով Ասկանիոյին:

Պրևոն հետևեց դքսուհուն ու փակեց բանտասենյակի դուռը:

— Գրո՞ղը տանի,— մրմնջաց ժակ Օբրին, որը ոչ մի բառ բաց չէր թողել այդ զրույցից,— այ թե ինչ է նշանակում մամանակին հասնել:



Եվ իրոք, երբ Մարմանը ուշքի եկավ, նրա առաջին հոգսն էր տեղեկացնել դքսուհուն, որ ինքը ծանր... գուցե մահացու վերք է ստացել և մահվանից առաջ կամենում է կարևոր գաղտնիք հայտնել նրան: Դքսուհին շհապագեց հայտնվել: Մարմանը սլատմեց նրան, որ փողոցում իր վրա հարձակվել է ոմն Ժակ Օբրի, ուսանող, որը ցանկանում էր անպայման ընկնել Շատլե, Ասկանիոյին տեսնելու և նրանից ինչ-որ նամակ տանելու Բենվենուտո Չելլինիին:

Այդ լսելով, դքսուհին իսկույն հասկացավ, թե ինչ նամակի մասին է խոսքը ու, թեև առավոտվա ժամը երկուսն էր, շտապեց Շատլե, անիժելով իր կիրքը, որի պատճառով մոռացության էր տվել ամեն մի ողջամտութուն: Բանտ գալով, նա Ասկանիոյի բանտասենյակում խաղաց վերոհիշյալ կատակերգությունը և գտնում էր, որ ամեն ինչ շատ լավ կարգավորվեց, թեև ինչպես գիտենք, Ասկանիոն հասկացավ գործի-չությունը:

Այդպես ուրեմն, Ժակ Օբրին իրավացի էր. նա իրոք ժամանակին միջամտեց:

Սակայն արված էր գործի կեսը միայն. մնում էր ամենադժվարինը՝ թանկարժեք նամակը, որը քիչ առաջ նա փրկեց ոչնչացումից և որն իսկական արժեք կստանար Բենվենուտո Չելլինիի ձեռքում միայն:

Բայց Ժակ Օբրին ինքն էլ բանտում էր և հավանաբար երկար ժամանակով. չէ՞ որ իր նախորդից նա իմացավ, որ Շատլե ամբողջում փակված մարդու համար այնքան էլ հեշտ չէ այնտեղից դուրս գալը: Այդպիսով, նա ընկավ մարգարտահատիկ գտած աքլորի դրության մեջ, որը շգիտի, թե ինչ անի իր գանձը:

Բռնի ուժով բանտից դուրս գալու փորձ կատարելն իսկ անմտութուն էր: Իհարկե, դաշույն ունենալով, Ժակը կարող էր սպանել բանտապանին, որը ուտելիք էր բերում նրա համար և վերցնել բանալիներն ու նրա հագուստը: Սակայն, էլ շասած, որ ծայրահեղ միջոցներն ազնիվ ուսանողի սրտովը

չէին, նա գտնում էր, որ դրանք այնքան էլ հուսալի չեն: Կարելի էր համարյա հաստատապես ասել, որ նրան տեղնուտեղը կբռնեն, կխուզարկեն, կխլեն նամակն ու նորից իր բանտախուցը կտանեն:

Ճարպկությունն էլ չէր օգնի. բանտասենյակը գետնի մակերևույթից ութսուն ոտնաչափ ցած էր. փոքրիկ լուսամուտը, որի միջով վերևից ազոտ լույս էր թափանցում, ծածկված էր երկաթե հաստ ճաղերով: Ամիսներ էին պետք այդ ճաղերից դեթ մեկը սղոցելու համար: Եվ հայտնի էլ չէր, թե բանտախցից դուրս դալուց հետո ինչ է սպասում փախստականին: Դուցե նա հայտնվեր բանտի բակում, որը շրջափակված էր անառիկ պարսպով և որտեղ հետևյալ առավոտ կգտնեին նրան:

Մնում էր կաշառքը: Բայց տուգանքը վճարելուց հետո, որին դատապարտել էր նրան դատավորը՝ ժերվեկայի պատիվը գնահատելով փարիզյան քսան սու, ժակ Օբրին հիմա գրպանում ուներ ընդամենը տասը սու՝ պարզապես անբավարար գումար նույնիսկ ամենաանշուք բանտի ամենաանշուք բանտապահին կաշառելու համար. իսկ թագավորական Շատլի ամրոցի փքված բարապանին այդ գումարն առաջարկելը պարզապես անսլատշաճ կլիներ:

Այդպես ուրեմն, ժակ Օբրին սոսկալի ծանր դրության մեջ էր:

Ժամանակ առ ժամանակ նրա գլխում փայլկտում էր ազատվելու միտքը, բայց այն իրականացնելն, ըստ երևույթին, հեշտ չէր, երբ ամեն մի սքանչելի մտքի սևեռայնությունը այն հանգում էր ձախորդության, Օբրիի դեմքը նկատելիորեն մռայլում էր, և խեղճ պատանին ծանր հառաչանքներ էր արձակում, որոնք վկայում էին ներքին սաստիկ պայքարի մասին:

Հոգեկան այդ պայքարն այնքան ուժեղ էր ու սևական, որ ժակն ամբողջ գիշեր աչք շփակեց: Նա անցուդարձ էր անում բանտասենյակում, նստում, ոտքի կանգնում ու կրկին սկսում անցուդարձ անել: Դա առաջին անքուն գիշերն էր, որը նա անցկացրեց մտորումների մեջ:

Առավոտյան դեմ պայքարը մի քիչ խաղաղվեց, հավանաբար, հաղթանակեց հակամարտ ուժերից մեկը: Ժակ Օբրին է՛լ ավելի ողբագին հոգոց քաշեց ու մեկնվեց մահճակալին, վերջնականապես ուժասպառ եղած մարդու նման:

Դեռ նոր էր պառկել, երբ աստիճանների վրա քայլերի ձայն լսվեց:

Քայլերը մոտենում էին. հետո բանալին շիկաց կողպեքի մեջ, ծխնինները ճոնչացին, գուռը բացվեց, և շեմքին հայտնեղվեցին օրենքի երկու պահապան. նրանցից մեկը դատավորն էր, մյուսը՝ նրա քարտուղարը:

Այդ այցելության անախորժ տպավորությունը մեղմացավ այն հաճույքից, որ ժակն զգաց իր վաղեմի ծանոթներին տեսնելով:

— Ա-ա-ա՛: Այդ դո՞ւք եք, երիտասարդ, — բացականչեց դատավորը, ճանաչելով ժակ Օբրին: — Ուրեմն ձեզ հաջողվե՞ց բանտ ընկնել: Ա՛յ թե ճարպիկն եք: Ձեզ համար մեծ բան չէ ազնվականին սրախողխող անելը: Զղուշացե՛ք: Այս անգամ դուք չեք աղատվի փարիզյան քսան սուով, գրո՞ղը տանի: Կավալիերի կյանքն ավելի թանկ արժե, քան հասարակ աղջկա պատիվը:

Ինչքան էլ ահարկու էին դատավորի խոսքերը, այնուամենայնիվ, տոնը մի քիչ սրտապնդեց կալանավորին: Թվում էր, թե դեմքի սիրալիր արտահայտություն ունեցող այդ մարդուց, որի ձեռքն ընկնելու բախտը ժակն ունեցել էր, ոչ մի վատ բան սպասել չէր կարելի: Այլ էր քարտուղարը, որը դատավորի ամեն մի սպառնալիքը շարագուժորեն հաստատում էր դիխի շարժումով: Ժակ Օբրին առաջին անգամ էր տեսնում այդ մարդկանց կողք կողքի և ինչքան էլ մտահոգված էր իր ցավալի դրությունը, ակամա խորասուզվեց փիլիսոփայական մտորումների մեջ՝ բախտի քմահաճույքների մասին: Որոնք երբեմն, կատակի տալով, միացնում են երկու կատարելապես տարբեր (թե՛ բնավորությամբ և թե՛ արտաքին կերպարանքով) մարդկանց:

Սկսվեց հարցաքննությունը: Ժակ Օբրին ոչինչ չթաքցրեց: Նա պատմեց, թե ինչպես հանդիպեց Մարմանին և, տեղեկանալով, որ նա հենց այն ազնվականն է, որը բազմիցս

խաբել էր իրեն, դուրս քաշեց մանկլավիկի դաշույնն ու վիկոնտին մենամարտի կանչեց: Մարմանն ընդունեց մարտահրավերը և կռիվն սկսվեց: Հետո հակառակորդը ցած ընկավ: Իսկ թե այնուհետև ինչ եղավ, ժակը չգիտի:

— Դուք չգիտեք, թե ինչ եղավ հետո: Չգիտե՞ք, — փնթփնթում էր դատավորը, թելադրելով քարտուղարին հարցաքննության արձանագրությունը: — Գրո՞ղը տանի: Բայց իմ կարծիքով այն, ինչ պատմեցիք, լիովին բավական է: Ձեր գործը միանգամայն պարզ է, մանավանդ որ վիկոնտ դե Մարմանը տիկին դ'էտամպի հովանավորյալներից է: Հենց դքսուհին էլ գանգատ է ներկայացրել ձեզ վրա, իմ պատանի կտրիճ:

— Այ բեզ բա՛ն, — բացականչեց ուսանողը, որն սկսել էր հուզվել: — Բայց ասացեք, պարոն դատավոր, մի՞թե իմ զործերն իրոք այդքան վատ են:

— Վատ են, բարեկամս: Շա՛տ վատ են: Ես սովոր չեմ վախեցնել կլիենտներին, և նախազգուշացնում եմ ձեզ այն պատճառով միայն, որ գուցե ցանկանաք ինչ-որ կարգադրություններ անել...

— Կարդադրություններ, — բացականչեց ուսանողը: — Բայց, պարոն դատավոր, մի՞թե դուք հիմք ունեք մտածելու, որ ինձ սպառնում է...

— Ճիշտ այդպես, — պատասխանեց դատավորը, — ճի՛շտ այդպես: Դուք փողոցում հետապնդում եք անվանի մարդու, մենամարտի եք հրավիրում և սուսերով խոցում: Եվ դրանից հետո դեռ հարցնում եք, թե ձեզ հո որևէ վտանգ չի՞ սպառնում: Այո՛, սիրելիս, սպառնում է և այն էլ շատ մեծ վտանգ:

— Բայց չէ՞ որ մարդիկ ամեն օր մենամարտում են, և ես երբեք չեմ լսել, որ դրա համար նրանց դատեն:

— Իրավացի եք, պատանի բարեկամս, բայց այդպես լինում է այն դեպքերում միայն, երբ մենամարտող կողմերը ավելականներ են: Օ՛, եթե երկու ազնվական ցանկանում են անպայման իրար սրախողխող անել, այդ ի վերջո նրանց անձնական գործն է, և թագավորը չի միջամտի: Բայց եթե մի գեղեցիկ օր ուամիկների խելքին փչեր կովել ազնվական-

ների հետ (չէ՞ որ ուամիկները շատ ավելի շատ են, քան ազ-
վականները), ապա շուտով աշխարհում ոչ մի ազնվական
չէր մնա և դա հիրավի ցավալի կլիներ:

— Իսկ ի՞նչ եք կարծում, քանի՞ օր կարող է տևել դա-
տական քննութիւնը:

— Հինգ-վեց օր:

— Ինչպե՞ս, — բացականչեց ժակ Օբրին, — ընդամենը
հինգ-վեց օր:

— Անշուշտ: Գործը միանգամայն պարզ է. մարդը սպան-
ված է, դուք խոստովանում եք, որ սպանողը դուք եք, և ար-
դարադատութիւնը բավարարված է: Բայց եթե... — շարունա-
կեց դատավորն ավելի մեծահոգաբար, — եթե երկու-երեք
ավելորդ օրը ձեր գործին հարմար կգա...

— Այն էլ ինչպե՞ս, — բացականչեց ժակը:

— Այդ դեպքում կարելի է ձգձգել դատավարութիւնն
ու շահել այդ երկու-երեք օրը: Դուք լավ տղա եք, և վերջ ի
վերջո ես կցանականայի որևէ բանով օգնած լինել ձեզ:

— Շնորհակալ եմ, պարոն դատավոր:

— Իսկ հիմա, — շարունակեց դատավորը, — դուք որևէ
խնդիրք չունե՞ք:

— Կարելի՞ է, որ ինձ մոտ քահանա ուղարկեք:

— Անշուշտ դուք այդ իրավունքն ունեք:

— Այդ դեպքում, պարոն դատավոր, կարգադրեք, որ քա-
հանա ուղարկեն ինձ մոտ:

— Անպայման կկատարեմ ձեր խնդիրքը, պատանի բա-
րեկամս: Եվ վատ չհիշեք ինձ:

— Ինչի՞ համար: Ընդհակառակը, ես ի սրտե երախտա-
պարտ եմ ձեզ:

— Պարոն ուսանող, շե՞ք կարող արդյոք կատարել իմ մի
խնդիրքը, — ժակին մոտենալով, կիսաձայն ասաց քարտու-
ղարը:

— Հաճույքով, — պատասխանեց ժակը: — Ասացեք:

— Բայց դուցե դուք հարազատներ ունեք, բարեկամներ
կամ ուրիշ որևէ մեկը, ում կցանկանայիք թողնել ձեր իրե՞րը:

— Բարեկամներ: Ես ունեմ մի բարեկամ, բայց նա էլ
ինձ նման կալանավոր է: Իսկ ինչ վերաբերում է հարազատ-

ներին, ապա քեռու տղաներ ունեմ միայն, ավելի ճիշտ՝ ինչոր հեռու ազգականներ: Ուրեմն պարզապես ասացեք, պարոն քարտուղար, ի՞նչ եք կամենում:

— Պարոն, ես աղքատ մարդ եմ և հինգ հրեխա ունեմ:

— Շատ լավ: Հետո՞...

— Գիտեք, իմ բախտը երբեք չի բերում, թեև ազնվորեն ու խնամքով կատարում եմ պարտականություններս: Իմ բոլոր պաշտոնակիցներն առաջ են անցնում ինձնից:

— Ինչո՞ւ:

— Ինչո՞ւ. Բանն էլ հենց այդ է: Ես ձեզ կասեմ, թե ինչու:

— Այո, այո, լսում եմ:

— Որովհետև նրանց բախտը բերում է:

— Ա-ա՛:

— Իսկ ինչու է նրանց բախտը բերում, չգիտե՞ք:

— Հենց այդ էլ կամենում էի հարցնել ձեզ, պարոն քարտուղար:

— Ես կասեմ, պարոն ուսանող:

— Շնորհ արեք:

— Նրանց բախտը բերում է, որովհետև... — Քարտուղարն ավելի իջեցրեց ձայնը: — Նրանց բախտը բերում է, որովհետև ամեն մեկի գրպանում կա կախաղան հանված մարդու պարանից մի կտոր: Հասկացա՞ք:

— Ո՛չ:

— Դժվար եք գլխի ընկնում: Դուք կտակ եք գրելու, այնպես չէ՞:

— Կտա՞կ: Բայց ինչո՞ւ:

— Այսպես ասած... Դե՛հ, նրա համար, որ ձեր ժառանգները ստիպված չլինեն դատվել: Է՛հ, ուրմեն ձեր կտակի մեջ չիշատակեք Մարկ-Բոնիֆացի Գրիմուանոյին, Փարիզ քաղաքի բրնձեղեն դատավորի քարտուղարին և կարգադրեք, որպեսզի դեհիճը տա նրան ձեր պարանից մի կտոր:

— Հա՛-ա՛, — խուլ ձայնով ծոր տվեց Ժակը: — Հիմա հասկացա:

— Իսկ խնդիրքս կկատարե՞ք:

— Իհարկե:

— Միայն թե շմոռանաք, երիտասարդ: Ուրիշներն էլ ինձ խոստացել են, բայց նրանցից ոմանք մեռան առանց կտակ լ'ողնելու, մյուսները ճիշտ չէին գրել անունս՝ Մարկ-Բոնի-Ֆացի Գրիմուանո. և դա պատրվակ բռնելով, կտակն անվավեր համարեցին. վերջապես, ոմանք էլ թեև իսկական հանցապորձներ էին, հավատացեք խոսքիս, սլարոն, այնուամենայնիվ ներում ստացան, շնայած ի վերջո կախաղան հանվեցին, բայց ուրիշ երկրներում: Ես արդեն բոլորովին հույսս կորցրել էի, երբ հանկարծ ձեզ բանտարկեցին:

— Լա՛վ, լա՛վ, պարոն քարտուղար, — ասաց ժակը, — այս անգամ կարող եք հանգիստ լինել. եթե ինձ կախաղան բարձրացնեն, պարանը ձերն է:

— Ձեզ կկախեն, պարոն, անպայմա՛ն կկախեն: Վստահ եղեք:

— Հե՛յ, Գրիմուանո, ի՞նչ եք անում այդտեղ, — ձայն տվեց դատավորը:

— Գալիս եմ, պարոն դատավոր, գալիս եմ... Ուրեմն, որոշվա՞ծ է, պարոն ուսանող:

— Որոշված է:

— Ազնիվ խո՞սք:

— Ռամիկի խոսք:

— Դե լավ, — դուրս գնալով, մրմնջաց քարտուղարը, — այս անգամ, թերևս, կհասնեմ նպատակիս: Պետք է բաբի լուրն անմիջապես հայտնել կնոջս ու երեխաներիս:

Եվ նա գնաց դատավորի հետևից, որն արգեն դուրս էր եկել ու բարեհոգությամբ դիտողություն էր անում քարտուղարին այդքան ուշանալու համար:

ՓԼՈՒԽ ՏԱՍՆՅՈՒԹԵՐՈՐԳ

Որտեղ խոսվում է այն մասին, որ իսկական ընկերն ընդունակ է նույնիսկ այնպիսի անձնագոհության, ինչպես ամուսնությունն է

Մենակ մնալով, ժակ Օբրին խորասուզվեց մտորումների մեջ, և պետք է ասել դրան քիչ շնչաստեց նրա դրույցը դատավորի հետ: Շտապենք, սակայն, ավելացնել, որ եթե կա-

րողանայինք կարդալ նրա մտքերը, ապա կհամոզվեինք, որ դրանց մեջ գլխավոր տեղը գրավում էին Ասկանիոն ու Կոլումբան, որոնց ճակատագիրը կախված էր ժակի ձեռքում գտնվող նամակից. նա իր բարեկամների համար անհանգրստանում էր շատ ավելի, քան սեփական անձի, իմանալով, որ առջևում դեռ ժամանակ ունի իր հարցով զբաղվելու:

Նա արդեն խորհրդածում էր մոտ կես ժամ, երբ հանկարծ դուռը կրկին բացվեց ու շեմքին հայտնվեց բանտապանը:

— Այդ դո՞ւք էիք քահանա կանչել, — փնթփնթալով հարցրեց նա:

— Այո՛, այո՛, — պատասխանեց ժակը:

— Գրո՞ղն ինձ տանի, շեմ հասկանում, թե սրանց ինչին է պետք այդ անիծյալ քահանան, — մրմնջաց բանտապանը: — Վա՛յ ինձ, ոչ մի բոպե հանգիստ չունեմ սրանց ձեռքին: — Եվ քահանային ներս թողնելու համար մի կողմ քաշվելով, ավելացրեց. — Ներս մտեք, տեր հայր, բայց շատ շմնաք այստեղ:

Շարունակելով փնթփնթալ, նա փակեց դուռը, և քահանան մենակ մնաց կալանավորի հետ:

— Դուք ինձ կանչե՞լ եք, զավակս, — հարցրեց քահանան:

— Այո՛, տեր հայր, կանչել եմ, — պատասխանեց ուսանողը:

— Խոստովանությա՞ն համար:

— Ոչ բոլորովին... Ես պարզապես ցանկանում էի խոսել ձեզ հետ խղճի հարցերի մասին:

— Խոսեք, զավակս, — պատասխանեց քահանան, նստելով աթոռին: — Եվ եթե իմ համեստ կարողությամբ կարողանամ օգնել ձեզ...

— Դուք կոահեցիք, ինձ խորհուրդ է պետք, տեր հայր:

— Դեհ, խոսեք:

— Ես մեղավոր մարդ եմ, տեր հայր, — ասաց ժակը:

— Ավա՛ղ, զավակս: Երանի նրան, ով գոնե գիտակցել է իր ամբողջ նողկալիությունը:

— Ես ոչ միայն ինքս եմ շատ մեղավոր, տեր հայր, այլև Այմարտության ճանտպարհից շեղել եմ ուրիշ մարդկանց:

- Իսկ կարո՞ղ եք քաղել ձեր դործած մեղքերը:
- Հուսով եմ, որ կարող եմ, տեր հայր: Հուսով եմ: Ես անառակության հորձանուտը ձգեցի երիտասարդ, անմեղ մի աղջկա:
- Դուք խաբեցի՞ք նրան:
- Խաբեցի... Այո՛, այո՛, ճիշտ այդպես, խաբել եմ:
- Եվ կցանկանայիք շտկե՞լ նրան պատճառած շարիքը:
- Համենայն դեպս, պետք է փոքձեմ, տեր հայր:
- Դրա համար մի ճանապարհ կա միայն:
- Գիտեմ, տեր հայր, այդ պատճառով էլ այսքան ժաշմանակ ձգձգում էի. եթե երկու ելք լիներ, ես անկասկած կընտրեի երկրորդը:
- Ուրեմն, դուք ցանկանում եք ամուսնանա՞լ աղջկա հետ:
- Մի շտապեք, տեր հայր: Ինչո՞ւ ստեմ. ես այդ չեմ ցանկանում, այլ պարզապես ենթարկվում եմ անհրաժեշտությանը:
- Լավ կլիներ, եթե ղեկավարվեիք ավելի մաքուր, ավելի սուրբ զգացումով:
- Ի՞նչ արած, տեր հայր: Որոշ մարդիկ ասես ստեղծված են ամուսնական կյանքի համար, իսկ սմոնք՝ ընդհակառակը, հակված են ամուրի մնալու: Ամուրիությունն իմ կոչումն է և երդվում եմ, միայն պատահականությունն է ստիպում ինձ...
- Ուրեմն, ուրեմն, զավակս: Եթե դուք ցանկանում եք վերադառնալ առաքինության ուղին, ապա ինչքան շուտ, այնքան լավ:
- Դե՛հ, իսկ կարելի՞ է շուտ գլուխ բերել այդ գործը, — հարցրեց Օբրին:
- Ի՞նչ ասեմ, — բացականչեց քահանան: — Քանզի դա ամուսնություն է *in extremis*¹, կարելի է որոշ արտոնու-

¹ Արտակարգ պայմաններում (լատ.)

թյունների հույս ունենալ և կարծում եմ, որ նույնիսկ վաղը
չէ մյուս օրը...

— Թող լինի վաղը չէ մյուս օրը,— հառաչեց Ժակը:

— Իսկ աղջի՞կն ինչ կասի,— հարցրեց քահանան:

— Ի՞նչ պիտի ասի:

— Համաձայնություն կտա՞:

— Ինչի՞ համար:

— Ձեզ հետ ամուսնանալու:

— Գրո՞ղը տանի, համաձայնություն կտա՞: Այն էլ մե-
ծադո՞ւլն հաճույթով: Այդպիսի առաջարկություններ նա
ամեն օր չի ստանում:

— Ուրեմն, ոչ մի խոչընդոտ չկա՞:

— Ո՛չ մի:

— Իսկ ձեր ծնողնե՞րը:

— Ես ծնողներ չունեմ:

— Իսկ աղջկա՞ ծնողները:

— Անհայտ են:

— Աղջկա անունն ի՞նչ է:

— Ժերվեդա-Պլերետա Պոպինո:

— Դուք ցանկանո՞ւմ եք, որ ես անձամբ հայտնեմ նրան
այդ մասին:

— Եթե հանձն առնեք, տեր հայր, ես ի սրտե շնորհակալ
կլինեմ:

— Հենց այսօր կտեղեկացնեմ նրան:

— Իսկ դուք չե՞ի՞ք կարող, տեր հայր, մի նամակ հանձ-
նել նրան:

— Ոչ, դավակա: Մենք՝ բանտի քահանաներս, երդում ենք
տալիս բանտարկյալներից ոչինչ չվերցնել ու չհանձնել որևէ
մեկին, քանի դեռ վերջիններս ողջ են: Նրանց մահից հետո,
խնդրեմ, ինչ որ կամենաք:

— Շնորհակալ եմ, բայց այն ժամանակ այդ արդեն ան-
օգուտ կլինի: Բավարարվե՞նք ամուսնությամբ,— շնջաց Օբ-
րին:

— Դուք ուրիշ ասելիք չունե՞ք:

— Ոչ... Եթե միայն որևէ դժվարության հանդիպելու լի-

ներ, կարելի է ի հաստատումն իմ խնդիրքի վկայակոչել իր իսկ ժերվեզա-Պյերետա Պոպինոյի գանդատը, որը գտնվում է պարոն դատավորի մոտ:

— Դուք համաձայն եք, որ ես ամեն ինչ գլուխ բերեմ երկու օրում,— հարցրեց քահանան, որին թվում էր, թե ժակն առաջիկա ամուսնությանը վերաբերում է բավական սառնորեն և գործում է անհրաժեշտության ազդեցության տակ:

— Երկու օրո՞ւմ...

— Այդպիսով դուք կարող եք ավելի շուտ վերադարձնել աղջկան նրանից խլած բարի անունը:

— Թող այգպես լինի,— խոր հոգոց հանեց ժակը:

— Ուրեմն ամեն ինչ հիանալի է, զավակս,— ուրախացավ քահանան:— Որքան ավելի ծանր է զոհաբերությունը, այնքան ընդունելի է աստծուն:

— Երբվում եմ պատվովս, այդ դեպքում աստված պետք է անշափ երախտապարտ լինի ինձ: Դե գնացեք, տեր հայր, գնացեք,— բացականչեց ուսանողը:

Եվ իրոք, ժակն այդ որոշումն ընդունեց ներքին մեծագույն պայքարով: Ինչպես նա արդեն բացատրել էր ժերվեզային, ինքը բնածին զզվանք էր տածում ամուսնության հանդեպ ու միայն Ասկանիոյի նկատմամբ տածած սերը և այն միտքը, որ ինքն է ընկերոջ դժբախտությունների սլատճառը, ստիպեցին նրան դիմել այդ զոհաբերությանը, որը նրա կարծիքով արժանի էր հին աշխարհի հերոսների սխրանքներին:

Ի՞նչ կապ կա, կհարցնի ընթերցողը, ժակի և ժերվեզայի ամուսնության ու Ասկանիոյի և Կոլոմբայի երջանկության միջև: Ինչպե՞ս կարող է Օբրին փրկել ընկերոջը:

Այդ հարցին կարող ենք պատասխանել՝ ընթերցողին պակասում է խորաթափանցությունը: Ճիշտ է, ընթերցողն էլ իր հերթին կարող է առարկել, որ դա ամենևին իր պարտականությունների մեջ չի մտնում: Եթե այդպես է, ապա թող ջանք թափի ու մինչև վերջ կարդա այս գլուխը, որից կարող էր խուսափել, եթե ավելի սրամիտ լիներ:

Քահանայի գնալուց հետո ժակ Օբրին, տեսնելով, որ նահանջին ուշ է, խաղաղվեց: Այդպիսին է ամեն մի որոշման յուրահատկությունը, նույնիսկ՝ ամենաանախորժ որոշման.

պայքարից հողնած միտքը հանգստանում է, տագնապահար սիրտը՝ հավասարակշռվում:

Եվ այդպես, Օբրին հանգստանում էր, նույնիսկ մի քիչ նիրհեց: Ասկանիոյի բանտասենյակից ինչ-որ աղմուկ լսելով, նա որոշեց, որ ընկերոջ համար նախաճաշ են բերել և մի քանի ժամ կարելի է չվախենալ, որ բանտապանը կհայտնվի: Որոշ ժամանակ էլ սպասելով և համոզվելով, որ ջուրջը լիակատար լուռթյուն է տիրում, ժակն իջավ ստորեբկրյա անցքը, դնաց մինչև հակառակ ծայրն ու սովորականի պես գլխով բարձրացրեց խսիրը: Ասկանիոյի բանտասենյակը թաղված էր մթության մեջ:

Ժակը կամացուկ ձայն տվեց նրան: Ոչ ոք չարձագանքեց. բանտասենյակը դատարկ էր:

Սկզբում ուսանողն ուրախացավ. ուրեմն, Ասկանիոյին ազատել են: Իսկ եթե այդպես է, ինքը՝ ժակ Օբրին, ամուսնանալու պետք չունի... Մակայն նա անմիջապես մտաբերեց տիկին դ'էտամպի երեկվա կարդադրությունը Ասկանիոյին ավելի հարմար բանտասենյակ տանելու մասին: Հավանաբար քիչ առաջ լսած աղմուկը պետք է բացատրել հենց դրանով, որ ընկերոջն ուրիշ բանտասենյակ էին տեղափոխում:

Հույսը, որ պայծառացրեց խեղճ ուսանողի հոգին, լուսաճաճանչ էր, սակայն մարեց նույնքան արագորեն, որքան կայծակի փայլատակումը:

Նա ցած իջեցրեց խսիրն ու, հետ-հետ գնալով, վերադարձավ իր բանտասենյակը: Նրանից խլեցին վերջին մխիթարությունը՝ ընկերոջ մերձավորությունը, հանուն որի նա պատաստ էր զոհաբերել կյանքը:

Ժակ Օբրին ուրիշ ոչինչ չէր մնում, քան խորհրդածել: Բայց վերջին ժամանակներս ուսանողն այնքան էր խորհրդածել և դա հանգեցրեց այնպիսի ցավալի հետևանքների, որ նա գերադասեց պառկել քնելու:

Ժակը մեկնվեց մահճակալին և, շնայած կրծող անհանդրստությանը, ընկղմվեց խոր քնի մեջ, որովհետև մի քանի օր էր արդեն քունը չէր առել:

Երագում տեսավ, որ իրեն դատապարտել են մահապատ-

ժի ու կախազան են բարձրացրել, սակայն դահճի անփութութեան պատճառով պարանը վատ էր սապոնված ու կտրրովեց: Ժակը դեռ ողջ էր, բայց նրան, այնուհանդերձ, թաղեցին: Նա արդեն սկսեց կրժոտել ձեռքերը բոլոր ողջ-ողջ թաղվածների նման, բայց այդ ժամանակ հայտնվեց վտիտ քարտուզարը, որին պարան էր խոստացված, փորեց գերեզմանն ու նրան վերադարձրեց կյանքն ու ազատութունը:

Ավա՛ղ, այդ միայն երազ էր. աչքերը բացելով, ուսանողը, կրկին հայտնվեց գերութեան մեջ ու մտաբերեց իրեն սպառնացող մահապատժի մասին:

Երեկոն, գիշերը և հետևյալ ամբողջ օրը անցան հանդիսաբանտասենյակ էր մտնում բանտապանը միայն: Ժակը փորձեց հարցուփորձ անել նրան, սակայն սշինչ իմանալ չկարողացավ. փնթփնթանից ոչ մի բառ հնարավոր չէր դուրս կորզել:

Իսկ կեսգիշերին, երբ ժակը խոր քնած էր, դռան ճոնչոցից անմիջապես արթնացավ: Ինչքան էլ խոր քնած լինի կալանավորը, բացվող դռան աղմուկն անպայման կարթնացնի նրան: Ժակը տեղից բարձրացավ:

— Վեր կացեք ու հագնվեք, — լսվեց բանտապանի կոչիտ ձայնը:

Նրա թիկունքում, ջահի լույսի տակ շողշողում էին պրևոյի երկու պահակների տապարատեգերը:

Հրամանը կրկնելու հարկ չեղավ: Ժակն իսկույն վեր թրթռավ, որովհետև հագնված էր քնել. ոչ վերմակ ուներ, ոչ սափան:

— Ո՛ւր եք տանում ինձ, — քնաթաթախ հարցրեց նա:

— Շատ հետաքրքրասե՛րն եք, բարեկամ, — պատասխանեց բանտապանը:

— Եվ, այնուամենայնիվ, կկամենայի իմանալ, — պնդեց ժակը:

— Դե գնանք, հերի՛ք է շատախոսեք: Հետևեք ինձ:

Դիմադրելն անօգուտ էր: Կալանավորը ենթարկվեց:

Բանտապանը գնում էր առջևից, ժակը հետևում էր նրան, իսկ պահակները վերջափակում էին երթը:

Ժակը տազնապով շուրջն էր նայում, շջանալով ծածկել

իր անհանդատութիւնը. նա վախենում էր, որ շնայած ուշ
ժամին, իրեն տանում են կառափնարան, բայց շուրջը ոչ
դահիճ տեսնելով, ոչ քահանա, կարծես խաղաղվեց:

Տասը ընդհանր անց ժակ Օբրին հայտնվեց Շատլի ընդու-
նարանում. նրա մտքով անցավ, որ քիչ հետո բանտի դռները
կբացվեն իր առաջ. չէ՞ որ դժբախտութեան մեջ մտրդ հակ-
ված է ինքնախաբեութեան: Բայց դրա փոխարեն բանտապա-
նը բացեց անկյունի փոքրիկ դուռը, և նրանք դուրս եկան
միջանցք, իսկ այնուհետև՝ բակ:

Հայտնվելով բակում, բաց երկնքի տակ, ուսանողն առա-
ջին հերթին լիաթոք շնչեց գիշերային թարմ օդը, որովհետև
չգիտեր, թե երբևէ նորից այսպիսի անսպասելի հաջողութեան
կհանդիպի՞ արդյոք:

Հետո, բակի հակառակ ծայրում տեսնելով XVI դարի աղո-
թատան կամարակապ լուսամուտները, ժակը գլխի ընկավ,
թե իրեն ինչ է սպասում:

Այստեղ պատմիչի պարտքը մեզ պարտավորեցնում է
նշել, որ այդ մտքից խեղճ կալանավորը քիչ մնաց ուշա-
թափուկեր:

Նա մտաբերեց Ասկանիոյին, Կոլումբային, սեփական
սխրանքի վեհութեան գիտակցութիւնն օղնեց նրան հաղթա-
հարելու ակամա խուլութիւնը և նա քիչ թե շատ հաստատուն
քայլքով դնաց դեպի մատուռը:

Ներս մտնելով, ժակ Օբրին համոզվեց, որ իրավացի էր.
քահանան արդեն կանգնած էր սեղանի մոտ, իսկ աջակողմ-
յան դասում կալանավորներին սպասում էր մի կին. ժերվե-
ղան էր:

Նկեղեցում նրան մոտեցավ թագավորական Շատլի ամ-
րոցի պետը:

— Դուք խնդրել էիք, որ մահից առաջ ձեզ հնարավորու-
թիւն տրվի պսակվել այն աղջկա հետ, որին գայթակղել
էք, — ասաց նա ժակին, — Ձեր պահանջն արդարացի է, և
մենք բավարարում ենք այն:

Ժակ Օբրի աչքերը մթնեցին, բայց նա ձեռքը տարավ
դրպանը, որտեղ պահված էր դքսուհու նամակը ու կրկին
խաղաղվեց:

— Օ՛, իմ խեղճ ժակ,— բացականչեց ժերվեզան նրա գիրկը նետվելով։— Եվ սա մտքով կանցներ, որ այս երանելի իրադարձութունը տեղի կունենա այսպիսի հանգամանքներում։

— Ինչ արած, սիրելի ժերվեզա,— պատասխանեց ժակը, կրծքին սեղմելով նրան։— Աստծու կամքն է, թե ում կպատժի և ում ներում կշնորհի։ Ապավինենք նրա սուրբ կամքին։— Եվ աննկատելիորեն աղջկան տալով դքսուհու նամակը, շշուկով սվելացրեց,— կհանձնես Բենվենուտոյին՝ անձնապես։

— Այդ ի՞նչ եք քշփշում,— արագորեն մոտենալով հարսու փեսային, հարցրեց բանտապետը։

— Ես պարզապես ասացի ժերվեզային, որ սիրում եմ նրան։

— Դե՛հ, այս դեպքում երդումներն ավելորդ են. չէ՞ որ աղջիկը չի էլ հասցնի համոզվել, որ ստում եք։ Մոտեցեք սեղանին, մի դանդաղեք։

Ժակ Օբրին և ժերվեզան լուռ մոտեցան քահանային և ծնկի իջան։ Սկսվեց պսակադրության արարողութունը։

Ժակը շատ էր ուզում գեթ մի քանի բառ ասել ժերվեզային, իսկ ժերվեզան սյրվում էր իր շնորհակալութունը ժակին հայտնելու ցանկությունից, բայց երկու կողմում կանգնած պահուկները հետապնդում էին նրանց ամեն մի բառը, ամեն շարժումը։ Լավ է, որ բանտապետն, ըստ երևույթին, փեսային ու հարսին խղճալով, հանդիպման առաջին րոպեին թույլ տվեց զրկախառնվել։ Հակառակ դեպքում ժակը չէր կարողանա նամակը հանձնել, և նրա ամբողջ անձնագոհությունը զուր կանցներ։

Քահանան, հավանորեն, նույնպես որոշ կարգադրություններ էր ստացել. նրա քարոզն արտակարգ կարճառոտ էր։ Իսկ գուցե նա պարզապես որոշեց, որ ավելորդ է մանրամասն բացատրել նորափեսային ամուսնու և հոր պարտականությունները, եթե նա երկու-երեք օր հետո կախաղան է հանվելու։

Ժակն ու ժերվեզան մտածում էին, որ քարոզից ու պսակադրությունից հետո նրանց գոնե մի րոպե մենակ կթողնեն,

բայց այդպես չեղավ: Չնայած ժերվեզայի արցունքներին, պահակները, արարողությունն ավարտելուց հետո, անմիջապես բաժանեցին նորապսակներին:

Եվ, այնուամենայնիվ, նրանց հաջողվեց բազմանշանակայից հայացքներ փոխանակել: Օբրիի հայացքն ասում էր. «Չմոռանաս հանձնարարությանս մասին», ժերվեզայի հայացքը պատասխանում էր. «Չանհանգստանաս, կկատարեմ հենց այս գիշեր, կամ ամենաուշը՝ վաղն առավոտյան»:

Դրանից հետո նրանց տարան տարբեր ուղղություններով. ժերվեզային սիրալիր դուրս հրավիրեցին բանտից, ժակին կրկին փակեցին բանտախցում, ուր ոտք դնելով, նա ծանր հոգոց հանեց՝ ամենածանր հոգոցը բանտում գտնվելու ողջ մամանակամիջոցում. հարկավ, ահավասիկ նա ամուսնացած է:

Այդպիսով, ընկերոջը նվիրված լինելու հետևանքով ժակ Օբրին, այդ նորահայտ Կուրցիուսը՝ նեովեց Հիմենետոսի² խորխորատը:

ԳԼՈՒԽ ՏԱՆՈՒԹԵՐՈՐԳ

Յուպիտերի ձուլումը

Իսկ հիմա, ընթերցողի թույլտվությամբ, մենք դուրս կգանք Շատլեից ու կվերադառնանք Նելի ամրոցը:

Բենվենուտոյի գոչյունի վրա հավաքվեցին ենթավարպետներն ու նրա հետևից գնացին ձուլարան:

Բոլորը շատ լավ գիտեին, թե ինչպիսի կրքոտությամբ է պիտատում ուսուցիչը, բայց մինչև հիմա ոչ ոք չէր տեսել,

¹ Առասպելի համաձայն հին Հռոմում մի անգամ երկրաշարժ է եղել և բազաբի կենտրոնական հրապարակում, Ֆորումում, իտր ճեղք է գոյացել: Կուրցիոսը-քուրմերը պնդում էին, որ այն լի էր գանձերով: Եվ անվանի լավագույն Կուրցիուսը, ցանկանալով հանել դրանք ու կրճնապատվել պետության գորությունը, ոտից զլուխ դիմված, մարտական ձին հեծած, նեովեց խորխորատը, որը գոցվեց նրա գլխավերևում:

² Հիմենետոս — աստված, ամուսնության հովանավորը: «Հիմենետոս խորխորատը նեովել», այսինքն՝ ամուսնանալ:

որ նրա դեմքն այդպես շառագունած լիներ, իսկ աչքերն այդ-
քան պայծառորեն շողային: Եվ եթե որևէ մեկն այդ պահին
դրոշմեր նրա դեմքի արտահայտությունը, ստեղծելով քան-
դակագործի արձանը, դա կլիներ արվեստի սքանչելագույն
գործերից մեկն աշխարհում:

Ամեն ինչ պատրաստ էր. քանդակապատկերի մոմե մո-
դելը, կավի շերտով պատած ու երկաթյա գոտեկապերով
ամրացված, դրված էր թրծիչ վառարանում, փայտերը խնամ-
քով շարված էին: Բենվենուտոն չորս կողմից կրակ վառեց.
եղևնու լավ շորացած փայտերը վայրկենարար բոցավառվե-
ցին ու կրակը բռնեց ամբողջ վառարանը, այնպես որ կաղա-
պարը մնաց հսկայական իարույկի կենտրոնում: Հատուկ
անցքերից սկսեց դուրս հոսել մոմը. իսկ կաղապարը՝ թրծվել:
Ռա աշխատանքի առաջին փուլն էր: Այդ ընթացքում ենթա-
վարպետները վառարանի մոտ մեծ փոս փորեցին արձանի
ձուլման համար: Չելլինին, որը չէր ցանկանում ոչ մի բույն
կորցնել, որոշեց կաղապարը թրծելուց անմիջապես հետո
սկսել այդ կտրևորագույն գործը:

Երեսունվեց ժամ անդադար կաղապարից արտահոսում էր
մոմը և այդ ամբողջ ժամանակամիջոցում ենթավարպետնե-
րը հերթափոխվում էին, ինչպես նավաստիները ռազմանա-
վի վրա: Բենվենուտոն ոչ մի վայրկյան չհանգստացավ. նա
պատվում էր հնոցի շուրջը, փայտ էր ավելացնում, խրախու-
սում էր աշակերտներին: Վերջապես արձանագործը համոզ-
վեց, որ ամբողջ մոմն արտահոսել է և կաղապարը շատ լավ
թրծված է: Ավարտվեց աշխատանքի երկրորդ փուլը: Երրորդը
և վերջինը պետք է լիներ մետաղը հալելն ու արձանի ձու-
լումը:

Ենթավարպետները, հասկանալով, թե ուսուցիչն ինչու է
աշխատում այդպիսի անսանձ եռանդով, այդպիսի մոլեգին
բորբոքվածությամբ, համոզում էին նրան մի քիչ հանգստա-
նալ և հետո միայն սկսել ձուլումը: Բայց հանգստի ամեն մի
ժամը համապատասխանորեն երկարաձգում էր Ասկանիոյի
բանտարկության ժամանակամիջոցն ու կոլումբայի տառա-

պանքները: Եվ Բենվենուտոն կտրականապես հրաժարվեց պառկել: Կարելի էր կարծել, թե նա ինքը նույն մետաղից է սարքված, որից պատրաստվում էր ձուլել Յուպիտերը:

Նա կարգադրեց կաղապարը կապկալել ամուր պարանեն-
րով. այնուհետև ճախարակների օգնությամբ այն բարձրաց-
րին, ամենայն նախազգուշություններով տեղափոխեցին փոր-
ված փոսի մոտ ու խնամքով իջեցրին հնոցին հավասար:
Այստեղ Բենվենուտոն տեղակայեց կաղապարը, ծածկեց հո-
դով, որը լավ տոփանեց, այնուհետև անցկացրեց կավե խո-
զովակներ՝ մետաղ մատակարարելու համար: Այդ բոլոր պատ-
րաստությունները զբաղեցրին օրվա մնացած մասը: Վրա
հասավ գիշերը: Քառասունութ ժամ էր արդեն, որ Բենվենու-
տոն չէր քնել. դեռ ավելին՝ նա չէր էլ պառկել, նույնիսկ չէր
նստել:

Ենթավարպետները զուր էին համոզում նրան հանդսաա-
նալ, զուր էր փնթփնթում Սկոցոնեն. ուսուցիչը ոչինչ լսել
չէր ցանկանում: Թվում էր, թե նրան սատարում է ինչ-որ
զերբնական ուժ, և ուշադրություն չդարձնելով քրթմնջոցների
ու հորդորանքների վրա, նա, ինչպես գեներալը մարտի դաշ-
տում, շարունակում էր տիրական, կտրուկ ձայնով հրաման-
ներ տալ:

Բենվենուտոն ուզում էր անմիջապես սկսել ձուլումը: Այդ
ևսանդուն մարդը, սովոր լինելով հաղթահարել բոլոր խոշըն-
դոտները, որոշեց ինքն իրեն ենթարկել իր զորեղ կամքին:
Հողնածությունից ցած ընկնելով, տազնապից ու դուլերոցքից
տառապելով, նա իշխեց իր մարմնին: Մինչդեռ ենթավար-
պետները, մեկը մյուսի հետևից, շարքից դուրս էին գալիս,
ինչպես զինվորները մարտի դաշտում:

Ձուլման համար վառարանը պատրաստ էր: Բենվենուտոն
կարգադրեց լցնել այն շուգունի ու պղնձի ձուլակտորներով,
դասավորել դրանք այնպես, որ կրակն ընդգրկի ամբողջ մե-
տաղը և ձուլումը կատարվի ավելի արագ ու համաշափ: Հե-
տո նա ինքն այդ հնոցում կրակ վառեց: Փայտը եղևնու էր,
չստ շոր ու խեժոտ, և բոցը, սպասածից ավելի բարձրանա-
լով, բռնեց ձուլարանի փայտե տանիքը, որն անմիջապես

սկսեց այրվել: Վախենալով հրդեհից, իսկ գլխավորը՝ անտանելի տապից, բոլոր ենթավարպետները, Հերմանից բացի, դեսուզեն փախան: Բայց Բենվենուտոն ու Հերմանը շատ ավելի դիմացկուն էին: Նրանք մեկական կացին վերցրին ու սկսեցին կոտրատել փայտե նեցուկները, որոնց վրա հենվում էր տանիքը: Մի րոպե հետո բոցավառվող տանիքը փլվեց: Հերմանն ու Բենվենուտոն կարթաձողերով սկսեցին հնոցը գցել այրված գերանները: Կրակը թեժացավ ու ձուլման գործն ավելի հաջող ընթացք ստացավ:

Այգ ժամանակ ուժերը լքեցին Բենվենուտոյին: Հեշտ է ասելը՝ վաթսուն ժամ նա չէր քնել, քսանչորս ժամ չէր կերել և, այնուամենայնիվ, այդ թեժ գործի հոգին էր, առանցքը: Նա բռնվել էր սաստիկ տենդով: Դեմքը, որ քիչ առաջ կասկարմիր էր, սոսկալի գունատվեց: Ջուլարանի շիկացած օդում, որտեղ նրանից բացի ոչ ոք դիմանալ չէր կարող, Բենվենուտոն զոդում էր ցրտից, իսկ ատամներն այնպես էին կափկափում, ասես Լապլանդիայի հավիտենական սառույցների մեջ լիներ: Ուսուցչի դրուժյունը նկատելով, ենթավարպետները շրջապատեցին նրան: Նա դեռ փորձում էր մաքառել հիվանդության դեմ, ժխտել իր պարտությունը, որովհետև խայտառակություն էր համարում նույնիսկ անխուսափելիությանը ենթարկվելը: Բայց ի վերջո նա էլ ստիպված էր խոստովանել, որ բոլորովին ուժասպառ է եղել: Բարեբախտաբար ամենակարևորն արդեն արված էր. ձուլումը ավարտվելու վրա էր. մնում էր միայն զուտ տեխնիկական աշխատանքը, որը լիովին կարող էր հաղթահարել փորձված ենթավարպետը: Բենվենուտոն ձայն տվեց Պագոլոյին, բայց աշակերտը հակառակի պես չքվել էր ինչ-որ տեղ: Ընկերները սկսեցին խլամբովին ձայն տալ նրան, և վերջապես նա հայտնվեց ու ասաց, որ զնացել էր աղոթելու ձուլման հաջող ընթացքի համար:

— Հիմա աղոթելու ժամանակը չէ, — բացականչեց Բենվենուտոն: — Ինքն աստված է ասել. «Աշխատանքը աղոթք է»: Աշխատել է պետք, Պագոլո: Ուշադիր լսիր. ես զգում եմ, որ մեռնում եմ. բայց կմեռնեմ ես, թե ոչ, ամեն դեպքում Յուպիտերը պետք է ավարտվի: Պագոլո, բարեկամս, հանձնա-

բարում եմ քեզ ղեկավարել ձուլումը: Ես վստահ եմ, որ դու ինձնից վատ չես կատարի այդ գործը: Զուլման ջերմաստիճանի մեջ դու սխալվել չես կարող. հենց որ մետաղը կարմրի, կարգադրիչը Հերմանին ու Զախլիկ-Սիմոնին մեկական լինգ վերցնել... Տեր աստված, ի՞նչ պիտի ասեի... Ա՛խ, հա՛, թող նրանք հնոցի երկու խցանները դուրս գցեն և մետաղը կլժվի կաղապարի մեջ: Եթե ես մեռնեմ, հիշեցրեք թագավորին, որ ինձ խոստացել է խնդիրքս կատարել, ասացեք, որ դուք ե՛լել եք իմ փոխարեն և ես խնդրում եմ նրան... Օ՛հ, տեր աստված, ես չեմ հիշում... Ի՞նչ էի ուզում խնդրել Ֆրանցիսկ Առաջինից: Ա՛խ, մտաբերեցի: Ասկանիոն... Նելի ամբոցի տերը... Կոլոմբան՝ պրևոյի դուստրը... կոմս դ՛Օրբեկը... տիկին դ՛էտամպը: Օ՛, տեր աստված, ես խելագարվում եմ...

Բենվենուտոն երեքաց ու ընկավ Հերմանի ձեռքերի վրա, որը նրան երեխայի պես զրկած տարավ ննջասենյակ, իսկ Պազոլոն, ուսուցչի հրամանը կատարելով, ենթավարպետների կարգադրեց շարունակել աշխատանքը:

Բենվենուտոն իրավացի էր, երբ խոսում էր մահացու հիվանդության մասին: Նա ընկավ սոսկալի զառանցանքի մեջ: Սկոցոնեն, որն, ըստ երևույթին, աղոթում էր Պազոլոյի հետ, սղնության վազեց Բենվենուտոյին, որը շէր դադարում գոռալ:

— Մեռնո՞ւմ եմ... Մեռա՞... Ասկա՛նիո... Հիմա նա ի՞նչ պիտի անի: Ասկա՛նիո...

Հիվանդի փխում մեկը մյուսի հետևից հայտնվում էին մոզմավանջային տեսիլքներ: Ասկանիոյի, Կոլոմբայի, Ստեֆանոյի պատկերները հայտնվում ու շքանում էին ստվերների նրման: Հետո հառնում էին ոսկերիչ Պոմպեոյի (որին Բենվենուտոն սպանել էր դաշույնի հարվածով) և Սիենայի փոստատարի (որին գնդակահարել էր արկերուզից) արնաթաթախ ուրվականները: Անցյալը միահյուսվում էր ներկային: Մերթ նա տեսնում էր, որ Կլիմենտ VII պապն է բանտում պահում Ասկանիոյին, մերթ Կոզիմո Մեդիչին էր ստիպում Կոլոմբային ամուսնանալ կոմս դ՛Օրբեկի հետ: Նրան թվում էր, թե իր պիմաց կանգնած է տիկին դ՛էտամպը. նա ստիպում էր,

աղերսում և անմիջապես նկատում, որ խոսում է դքսուհի էլեոնորայի ուրվականի հետ. հետո սկսում էր ծիծաղել լացակումած Սկոցոնեի երեսին, խորհուրդ տալով, որ լավ հրակի իր Պագոլոյին, թե չէ, մեկ էլ տեսար կատվի նման քիվերի վրայով վազվզելիս վիզը կկտորի: Սաստկագույն գրգռվածության պահերին հաջորդում էին ուժերի լիակատար անկման պահերը, երբ իրոք թվում էր, թե նա մեռնում է:

Նոպան շարունակվում էր արգեն երեք ժամ: Բենվենուտոն լիովին ուժասպառ էր եղել, երբ սենյակ մտավ գունատ, այլալվիված դեմքով Պագոլոն:

— Թող գթան մեզ Հիսուս Քրիստոս և սուրբ աստվածածինը, — բացականչեց նա: — Ամեն ինչ կորած է, մնում է ապավինել նախախնամության օգնությանը:

Բենվենուտոն պառկած էր ուժասպառ, անշարժ, կիսամեռ, և այնուամենայնիվ լսեց Պագոլոյի խոսքերը, որոնք տակնուվրա արին նրա սիրտը: Մշուշապատ գիտակցությունը պայծառացավ և, Քրիստոսի ձայնը լսած Ղազարոսի նման, հիվանդը վեր թռավ անկողնուց, բացականչելով.

— Ո՞վ է համարձակվում ասել, թե ամեն ինչ կորած է, երբ Բենվենուտոն դեռ չի մեռել:

— Ավա՛ղ, ուսուցիչ, այդ ես եմ, — պատասխանեց Պագոլոն:

— Արիկա՛, անբա՛ն, — գոչեց Բենվենուտոն: — Ուրեմն դու միշտ դավաճանե՞լ ես ինձ: Բայց հանգիստ եղիր, հոգիս, Հիսուս Քրիստոսն ու սուրբ աստվածածինը, որոնց դիմում էիր, օգնում են միայն ազնիվ մարդկանց, իսկ դավաճաններին պատժում են:

Այդ ժամանակ լսվեցին ենթավարպետների հուսահատույթ աղաղակները:

— Բենվենո՛ւտո, Բենվենո՛ւտո:

— Ես այստե՛ղ եմ, — գոչեց նկարիչը, դուրս վազելով սենյակից՝ գունատ, բայց ուժով ու վճռականությամբ լի: — Ես այստեղ եմ: Եվ վա՛յ նրանց, ովքեր մոռացել են իրենց սլարտականությունները:

Երկու սատյունով Բենվենուտոն հայտնվեց ձուլարանում,

որտեղ գտավ ենթավարպետներին՝ շփոթված ու ընկճված։
Բայց չէ՞ որ երբ ինքը թողեց նրանց, աշխատանքը ետում էր։
Նույնիսկ հսկա Հերմանը կարծես հոգնածությունից հազիվ
էր կանգնում ոտքի վրա. հավասարակշռութիւնը կորցրած,
նա ստիպված էր հենվել անվնաս մնացած դիմհարին, որ
դեպքի շնորհիւ։

— Հապա, լսեցեք ինձ,— անսպասելիորեն, ասես որոտ
պարզ երկնքից, դղրդաց Բենվենուտոն, հայտնվելով ենթա-
վարպետների կողքին։— Ես դեռ չդիտեմ, թե ինչ է կատար-
վել այստեղ, բայց երզվում եմ հոգովս, ամեն ինչ կարելի է
ուղղել։ Միայն թե կուրորեն ենթարկվեք ինձ, քանի որ ես
կրկին գործի գլուխ եմ անցնում։ Նախազգուշացնում եմ՝ ան-
հնազանդ գտնվողին տեղն ու տեղը կսպանեմ։ Ես այդ ասում եմ
անբաններին։ Իսկ ջանասերներին կասեմ՝ ձուլման հաջող-
ությունից է կախված բոլորիդ սիրելի ընկերոջ՝ Ասկանիոյի
աղատությունը, երջանկությունը։ Դե՛հ, ոկսենք։

Այդ ասելով, Զելլինին մոտեցավ վառարանին, որպեսզի
իր աչքով տեսնի, թե ինչ է կատարվում։ Պարզվեց, որ փայտ-
առ վերջացել է, և մետաղը, սառելով, դարձել է մասնագետ-
ների լեզվով ասած «բլիթ»։

Բենվենուտոն իսկույն հասկացավ, որ այդ ուղղելը դժվար
բան չէ։ Պարզապես Պագոլոն անուշադիր է գտնվել, և ջերմ-
աստիճանը հնոցում ընկել է. հարկավոր էր բարձրացնել այն,
մետաղին հոսունկութիւն տալու համար։

— Վառելի՛ք,— գոչեց Բենվենուտոն։— Ինչքան հնարա-
վոր է շատ վառելիք։ Վազեք հացթուխների մոտ և եթե հարկ
լինի՝ գնեք վառելափայտը. հավաքեք ամբողջում եղած-չեղա-
ծր, մինչև վերջին ծեղը, Նելի Փոքր ամբողջում՝ նույնպես.
Եթե տիկին Պերինան շցանկանա բացել դարպասը, ջարդեք
այն. պատերազմի դաշտում բոլոր միջոցները հարգի են։
Իլխավորը՝ վառելափայտ։ Ինչքան կարող եք շատ վառելա-
փայտ բերեք։

Եվ ցանկանալով օրինակ ցույց տալ ենթավարպետներին,
Բենվենուտոն ճանկեց կացինն ու ամբողջ ուժով սկսեց կոտ-
րատել մնացած երկու դիմհարը, որոնք շուտով փլվեցին

տանիքի մնացորդների հետ միասին. գերաններն ու տանիքը նա շտապեց վառարանը խցկել:

Ամեն տեղից վաղում-գալիս էին ենթավարպետները, փայտի կապուկները խտտած:

— Այ սա գո՛րծ է,— բացականչեց Բենվենուտոն:— Դե՛հ, հրամաններս կատարելո՞ւ եք:

— Կատարելու ենք, կատարելու ենք,— ամեն կողմից լավեցին ձայները:— Կարգադրեք, մինչև վերջին ջունը կհնազանդվենք ձեզ:

— Այդ դեպքում նախ վառարանի մեջ գցեք կաղնու տախտակները: Կաղնին լավ է վառվում և անմիջապես կարգի կրերի մեր Յուպիտերին:

Իսկույն հնոցի մեջ թափվեցին կաղնու տախտակներն ու կոճղիկները, այնպես որ Բենվենուտոն ի վերջո ստիպված էր կանգնեցնել ենթավարպետներին:

— Հերի՛ք է,— բացականչեց նա:

Արձանագործն իր եռանդով վարակել էր շրջապատի բոլոր մարդկանց, որոնք կես խոսքից հասկանում էին նրա հրամաններն ու վայրկենարար կատարում: Միայն Պագոլոն էր ժամանակ առ ժամանակ ծոր տալիս ատամների արանքից:

— Դուք ցանկանում եք անհնարինը, ուսուցիչ, դա նշանակում է շարժել աստծո զայրույթը:

Չելլինին պատասխանում էր նրան սոսկ հայացքով, որն ասում էր. «Մի անհանգստանա, հոգիս, ես քեզ հետ դեռ հետո կխոսեմ»:

Եվ ահա, շնայած Պագոլոյի մռայլ նախազգուշությանը, մետաղը կրկին սկսեց հալվել: Այդ պրոցեսն արագացնելու համար Բենվենուտոն մերթընդմերթ վառարանի մեջ էր պցում կապարի կտորներ ու երկաթե երկար ձողով խառնում հալված բրոնզը, այնքան, մինչև իր իսկ արտահայտությամբ «մետաղյա դիակը» սկսեց կյանք առնել: Իսկ նրա հետ մեկտեղ կյանք առավ և ինքը՝ արվեստագետը: Նա զվարթացավ և այլևս չէր զգում ոչ տենդ, ոչ թուլություն:

Վերջապես մետաղը եռաց ու բարձրացավ: Այդ ժամանակ Բենվենուտոն բացեց կաղապարի անցքը ու կարգադրեց

մետաղահալ հնոցի խցանները դուրս գցել, որն անմիջապես կատարվեց: Բայց, ըստ երևույթին, այդ անմարդկային աշխատանքին վիճակված էր մինչև վերջ նմանվել հսկաների գոտեմարտի: Հիրավի, երբ խցանները հանվեցին, Չելլինին նկատեց, որ մետաղը ոչ միայն դանդաղ է հոսում, այլև կարող է շրավարարել: Եվ այդ պահին արձանագործի գլուխը փայլուն մի միտք եկավ, որը կարող էր ծագել միայն հանճարների գլխում:

— Թող մի քանի մարդ մնան այստեղ, մյուսներն իմ հետևի՛ց, — հրամայեց նա:

Եվ հինգ ենթավարպետների ուղեկցությամբ նա վազեց Նելի ամրոցը: Մի քանի րոպե անց բոլորը դուրս եկան այնտեղից, ծանրաբեռնված արծաթե ու անաղե ամանեղենով, մետաղների ձուլակտորներով, անավարտ լվացարաններով, կժերով, գավաթներով: Բենվենուտոյի նշանով ենթավարպետներն իրենց թանկագին բեռը գցեցին հնոցը, որը վայրկենաբար լափեց ամեն ինչ. բրոնզը, արճիճը, արծաթը, մետաղյա ձուլակոճղերը, գրվազված նրբաղեղ իրերը, ընդ որում նույնպիսի անտարբերությամբ, ինչպես կլափեր և իրեն՝ արձանագործին, եթե վերջինիս խելքին փշեր նետվել կրակի մեջ:

Այդ մետաղների օգնությամբ բրոնզը շուտով հեղուկ դարձավ և ասես զղջալով հալվելու իր համառ շկամությամբ համար, սրբնթաց հոսեց կաղապարի մեջ: Դա լարված սպասումի պահ էր, որին հաջորդեց հոգին ճմլող վախը, երբ Բենվենուտոն նկատեց, որ ամբողջ բրոնզը դուրս է հոսել, իսկ հալված մետաղի մակարդակը դեռ չի հասել կաղապարի անցքին: Նա համաձուլվածքի մեջ իջեցրեց երկար մի ձող և սրտի թրթիռով համոզվեց, որ Յուպիտերի գլուխը լցված է:

Այդ ժամանակ մեծ վարպետը ծունկի իջավ ու փառք տվեց աստծուն: Յուպիտերը, որը պետք է փրկի Ասկանիոյին ու Կոլոմբային, ավարտված է և տա աստված, որ հաջող ստացվի: Սակայն Բենվենուտոն դրանում համոզվել կարող էր միայն հետևյալ օրը:

Ի՞նչ քնքստինքյան հասկանալի է, որ գիշերը նա անցկացրեց շատ անհանգիստ: Չնայած հոգնածությանը, Բենվենու-

տոնն դժվարութեամբ ննջեց, բայց քունն էլ թեթևութուն չբերեց նրան: Հենց որ նկարիչը փակում էր աչքերը, իրական աշխարհը փոխարինվում էր երևակայականով: Նա տեսնում էր իր Յուպիտերին՝ աստվածների տիրակալին, Ուլիսսիսի զարդն ու սլարծանքը, Վուլկանի՝ նման ծուռկողանի, և ոչ մի կերպ չէր կարողանում հասկանալ, թե ինչո՞ւ է այդպես պատահել. կաղապարն էր մեղավոր արդյոք, թե սխալ էր հենց ձուլման պրոցեսը: Իր սխալն է դա, թե՛ ճակատագրի ծաղրը: Նրա կուրծքը սեղմվում էր, քունքերն ուժգնորեն արտփում էին և նա անընդհատ արթնանում էր սառը քրտինքի մեջ, սրտի բարախոցով: Սկզբում Բենվենուտոն չէր կարողանում հասկանալ՝ երա՞զ է դա, թե իրականութուն: Հետո մտաբերեց, որ իր Յուպիտերը դեռ հանգչում է կաղապարի մեջ, ինչպես շծնված երեխան մոր արգանդում: Նա միտքն էր բերում նախօրեին ձեռնարկած բոլոր նախազգուշական միջոցները և վկայակոչում էր աստծուն, որ ջանացել է ոչ միայն գլուխգործոց ստեղծել, այլև՝ բարի գործ կատարել:

Վերջապես, մի քիչ խաղաղված, նա քնում էր, հոգնածութունից ջարդված, բայց միայն նրա համար, որպեսզի ավելի տանջալից, ավելի մղձավանջային երազ տեսնի:

Լույսը բացվելուն պես Բենվենուտոն վեր թռավ անկողնուց, հաղնվեց ու մի րոպե հետո արդեն արվեստանոցում էր:

Բրոնզն, ըստ երևույթին, դեռ բավականաչափ չէր սառել և շարժեր բացել այն, բայց արվեստագետը չէր համբերում, ցանկանալով համոզվել, թե արձանը հաջո՞ղ է արդյոք. անզոր լինելով զսպել իրեն, նա սկսեց կաղապարից ազատել Յուպիտերի գլուխը: Ձեռքն արձանին դիպցնելով, նա սոսկալի գունասավեց:

— Դուք հիվա՞նդ, փարոն,— նրա կողքին լավեց մի ձայն, որից դժվար չէր ճանաչել Հերմանին:— Ավելի լավ լինի անկողին պառկեք:

— Սխալվում ես, բարեկամս,— պատասխանեց Բենվենուտոն, զարմանալով, որ այդ վաղ ժամին Հերմանը ոտքի վրա է:— Ընդհակառակը, ես անկողնում էի մեռնում: Իսկ դու այս լուսամուկին ինչո՞ւ ես վեր կացել:

¹ Վուլկան — հին Հռոմում կրակե աստվածը, դարբնության հովանավորը

— Ես ուզեցի ման դալ, փարոն: Ես շատ սիրում ման գալ,— մրմնջաց Հերմանը, մինչև մազերի ծայրը կարմրատակելով:— Թե ուզեք, փարոն, ես ձեզ օգնեմ:

— Ո՛չ, ո՛չ,— բացականչեց Բենվենուտոն,— ինձնից բացի ոչ ոք չպիտի ձեռք տա կաղապարին: Սպասիր: Սպասիր:

Եվ նա սկսեց արձանի գլխից զգուշորեն հանել կաղապարի կտորները: Եթե Բենվենուտոյի մտքով շանցներ վառարանի մեջ գցել իր ամբողջ արծաթը՝ սկուտեղներ, սափորներ, գավաթներ, Յուպիտերը կստացվեր առանց գլխի:

Սակայն, բարեբախտարար, գլուխը սքանչելի էր դուրս եկել:

Նրա տեսքը քաջալերեց Բենվենուտոյին: Նա սկսեց բացել ամբողջ արձանը, հանելով կաղապարն ընկույզի կճեպի նման: Եվ շուտով գերությունից ազատված Յուպիտերը հայտնվեց իր ամբողջ վսեմությամբ, ինչպես և սլատշաճ է Ոլիմպոսի աստծուն: Արձանի բրոնզե մարմնի վրա շհայտնաբերվեց ոչ մի պակասություն, և երբ ցած ընկավ թրծված կավի վերջին կտորը, ենթավարպետները, որոնք աննկատելիորեն խմբվել էին ուսուցչի շուրջը, հիացմունքի ճիշ արձակեցին: Իսկ Բենվենուտոն այնքան կլանված էր իր հաջողությամբ, որ մինչև այժմ չէր նկատել նրանց ներկայությունը:

Բայց այդ գոչյունը լսելով, արվեստագետն իրեն աստված զղաց: Նա բարձրացրեց գլուխն ու հպարտորեն ժպտալով, ասաց.

— Տեսնե՞ք, Ֆրանսիական թագավորը սիրտ կանի՞ մերձեղ այսպիսի արձան ստեղծող մարդու խնդիրքը:

Եվ իսկույն, ասես զղջալով իր մեծամտության համար, որն, ի դեպ, հատուկ էր նրան, Բենվենուտոն ծունկի իջավ ու, ձեռքերը ծալելով, բարձրաձայն երախտագիտության աղոթք կարդաց:

Դեռ նոր էր աղոթքն ավարտել, երբ ներս վազեց Սկոցոնեն. ու հայտնեց Բենվենուտոյին, որ նրան ցանկանում է տեսնել տիկին Օբրին. նա նկարչին նամակ է բերել, որն ամուսինը սլատվիրել է հանձնել Բենվենուտոյին՝ անձամբ:

Չելլինին ստիպեց Սկոցոնեին երկու անգամ կրկնել այ-

ցելուհու անունը, որովհետև ամենևին չէր ենթադրում, թե ժակ Օրբին օրինական կին ունի:

Այնուամենայնիվ, նա անմիջապես գնաց իրեն սպասող կնոջ մոտ, հնարավորություն տալով ենթավարպետներին հուշարտանալ ու հիանալ իրենց ուսուցչի տաղանդով:

Բայց ուշադրությամբ զննելով արձանը, Պագուլոն Յուպիտերի կրունկի վրա նկատեց ոչ մեծ մի թերություն. հավանաբար ինչ-որ բան խանգարել էր, որ մետաղը մինչև վերջ թափանցի կաղապարի մեջ:

ՓԼՈՒԽ ՏԱՍՆԻՆՆԵՐՈՐԴ

Յուպիտերը և Ուլիմպոսը

Այդ նույն օրը Բենվենուտոն հայտնեց Ֆրանցիսկ I-ին, որ արձանը պատրաստ է և հարցրեց, թե Ուլիմպոսի արքան ե՞րբ կարող է ներկայանալ Ֆրանսիայի թագավորին:

Ֆրանցիսկ I-ը պատասխանեց, որ հաջորդ հինգշաբթի օրը կալսը Կարլոս V-ի հետ գնալու է որսի, Ֆոնտենբլո, և մինչ այդ արձանը պետք է դնել պալատի մեծ սրահում:

Պատասխանը մի քիչ շոր էր. տիկին դժտամպն, ակրնհայտորեն, տրամադրել էր թագավորին նրա սիրելի նկարչի դեմ:

Զգիտես հպարտությունն օգնության հասավ Բենվենուտոյին, թե աստծու հավատը, միայն թե նա ի պատասխան ժպտաց և ասաց.

— Կա՛վ:

Վրա հասավ երկուշաբթին: Զելլինին սալակառքի մեջ տեղավորեց արձանը և, ձի հեծնելով, որոշեց ուղեկցել իր ստեղծագործությունը, որպեսզի ճանապարհին մի բան չպատահի:

Հինգշաբթի օրը, առավոտյան ժամը տասին, արձանագործը և նրա ստեղծագործությունը հասան Ֆոնտենբլո:

Բավական էր թեթևակի մի հայացք նետել Չելլինիի վրա, նկատելու համար նրա դեմքի վեհ հպարտության ու ճաճանչափայլ հույսի արտահայտությունը: Արվեստագետի հոտառությունը թելադրում էր, որ ինքը ստեղծել է գլուխգործոց, իսկ ազնիվ սիրտը՝ որ շուտով բարի գործ կկատարի: Այդ պատճառով Բենվենուտոն առանձնապես ուրախ էր և բարձր էր պահում գլուխը, որպես մի մարդ, որին խորթ է ատելությունը, հետևաբար և վախը: Իհարկե, Յուպիտերը դուր կգա թագավորին: Մոնմորանսին և Պուլայեն կհիշեցնեն Ֆրանցիսկ I-ին նրա խոստումը. այդ տեղի կունենա կայսրի և բոլոր պալատականների ներկայությամբ, և թագավորը ստիպված կլինի կատարել իր խոսքը:

Դքսուհի գ'էտամպն էլ ծրագրեր էր կազմում. ճիշտ է, առանց Չելլինիի պայծառ հույսերի, բայց նույնպիսի անզուսպ կրքոտությամբ: Թեև տիկին դ'էտամպը պարտության մատնեց նկարչին, երբ վերջինս փորձում էր մուտք գործել նրա և Ֆրանցիսկ I-ի մոտ, այնուամենայնիվ, նա շատ լավ հասկանում էր, որ դա առաջին ընդհարումն է միայն, որին անպայման կհաջորդի մի ուրիշը՝ ավելի վտանգավորը, և մեկ էլ տեսար Բենվենուտոն թագավորին կատարել կտա նրա խոստումը: Դքսուհին որոշեց ինչ գնով էլ լինի խանգարել նրան: Ահա թե ինչու նա Ֆոնտենբլո եկավ Չելլինիից մի օր առաջ և իր խաղը վարեց զուտ կանացի խորամանկությամբ, հասցնելով զյն կատարելության:

Բենվենուտոն անմիջապես զգաց այդ իր մաշկի վրա: Սրահի շեմքը ոտք դնելուն պես, որտեղ նա պետք է կանգնեցներ իր Յուպիտերը, Բենվենուտոն շեշտակի հարված ստացավ ու կանգ առավ ընկճված, հասկանալով, թե ով է նախապատրաստել այդ հարվածը:

Սրահը, որը պատկերազարդված էր մեծ Ռոսսոյի ձեռքով (և այդ արդեն, ինքնըստինքյան, կարող էր շեղել ուշադրությունն այդտեղ գտնվող ամեն մի գլուխգործոցից), վերջին երեք օրվա ընթացքում համալրվել էր Հոոմից Պրիմատիչոյի ուղարկած անտիկ քանդակներով: Այստեղ ներկա-

յացված էին քանդակագործութեան հրաշալիքներ՝ սրբազործ-
ված գնահատողների երկու հազարամյա գովարանութիւն-
ներով, քանդակներ, որոնք բացառում էին որեէ համեմա-
տութիւն կամ մրցութիւն: Արիադնան, Վեներան, Հերկուլե-
սը, Ապոլոնը և վերջապես ինքը՝ Ոլիմպոսի արքա Յուպիտե-
րը, մեծագույն հանճարների մարմնավորված անուրջները,
քարի ու բրոնզի մեջ հավերժացած երկնաբնակները հավաք-
վել էին այստեղ, ասես աստվածների խորհրդի, որին ներկա-
յանալը սրբապղծութիւն կլինէր, իսկ այդ գերագույն տրի-
բունալի դատավճռից պետք է սարսուար ամեն մի արվեստա-
գետ:

Իր Յուպիտերին տեղավորել այդ Ոլիմպոսում, Ֆիդիասի
Յուպիտերի կողքին, նշանակում էր ձեռնոց նետել մեծ ար-
ձանագործին, իսկ Բենվենուտոյի համար դա համահավա-
սար էր աստծուն անարգելուն, և այդ մտքից արդարադատ
արձանագործը, շնայած սեփական ուժերի նկատմամբ ունե-
ցած անսահման հավատին, երեք քալ հարգալից հետ քաշ-
վեց սքանչելի ստեղծագործութիւնից:

Ավելացնենք, որ անտիկ արձաններն, ըստ արժանատւոյն,
գրավում էին թուր լավագույն տեղերը. Չելլինիի դժբախտ
Յուպիտերի համար մնացել էին մութ անկյունները միայն,
որտեղ կարելի էր հասնել հին աստվածների վեհաշուք շարքի
առջևով անցնելուց հետո:

Բենվենուտոն ընկճված, գլխահակ կանգնել էր սրահի
շեմին, նայելով այդ ամենին թախծոտ ու հիացած հայաց-
քով:

— Մեսսեր Անտուան Լե Մասոն, — դիմեց նա իրեն ուղեկ-
ցող թագավորի քարտուղարին, — ես ուզում եմ, ես հարկա-
դրված եմ անմիջապես հետ տանել իմ Յուպիտերը: Աշակեր-
տը չի համարձակվի վիճարկել ուսուցչի գերազանցութիւնը.
մանուկը չի կարող պայքարել իր նախնիների դեմ. ես շա-
փազանց հպարտ ու շափազանց համեստ եմ դրա համար:

— Բենվենուտո, — պատասխանեց թագավորի քարտու-
ղարը, — հավատացեք թարեկամական խորհրդիս. եթե դուք
այդպես վարվեք, ապա կորած եք: Անկեղծորեն պետք է

ասեմ ձեզ, որ ձեր թշնամիները հենց դրան են սպասում, որպես անգարության խոստովանություն: Ինչ էլ որ ես ասելու լինեմ նորին մեծությանը, ինչպես էլ ներողություն խնդրեմ ձեր անունից, թագավորը, որն անհամբերությամբ սեյասում է Յուպիտերին, ոչինչ լսել չի կամենա և տիկին դ'էտամպլէ ազդեցության տակ ընդմիշտ կզրկի ձեզ իր ողորմածությունից: Վախենում եմ, որ հենց այդ են ցանկանում ոմանք: Զգուշացեք, Բենվենուտո, ոչ թե հանգուցյալ մրցակիցներից, այլ՝ ողջ թշնամիներից:

— Իրավացի եք, մեսսեր, ես հասկանում եմ ձեզ և շնորհակալությունս եմ հայտնում: Դուք ինձ հիշեցրիք, որ հիմա ես իրավունք չունեմ հպարտ լինելու:

— Թող այդպես լինի, Բենվենուտո: Բայց մի բարեկամական խորհուրդ էլ լսեք. տիկին դ'էտամպլէ այսօր այնքան հմայիչ էր, որ հավանաբար ինչ-որ դավեր է նյութել: Եթե տեսնեիք, թե ինչպիսի անդիմադրելի կոկետությամբ նա Ֆրանցիսկ I-ին տարավ անտառ, գրոսանքի: Հիրավի, ես անհանդստացա ձեզ համար. չէ՞ որ դքսուհին կարող է թագավորին այնտեղ սլահել մինչև մութն ընկնելը:

— Մի՞թե այդ հնարավոր է,— գունատվելով բացականչեց Բենվենուտոն:— Այդ դեպքում ես կորած եմ. արհեստական լուսավորության տակ իմ արձանը կրկնակի վատ կերևա:

— Հուսանք, որ ես սխալվել եմ,— պատասխանեց Անտուան Լե Մասոնը,— սպասենք հետագա իրադարձությունների:

Եվ Զելլինին, տենդագին հուզմունքով բռնված, սկսեց սպասել: Նա Յուպիտերի համար ընտրեց լավագույն տեղը, և այնուամենայնիվ, շատ լավ հասկանում էր, որ մթնշաղին արձանը տպավորություն չի գործի, իսկ գիշերը՝ առավել ևս անհրապույր կթվա: Իր ատելության մեջ դքսուհին ամեն ինչ հաշվել էր այն ճշգրտությամբ, որով քանդակագործը շափակցում է իր ստեղծագործության համամասնությունները: Այդպիսով, դեռևս 1541 թվականին տիկին դ'էտամպլէ կանխել էր XIX դարի քննադատության մեթոդները:

Բենվենուտոն հուսահատորեն նայում էր մայր մսնուղ

արևին և ազահորեն որսում ամեն մի հնչյուն, բայց պալատում, ծառաներից բացի, ոչ ոք չկար:

Ժամացույցը հնչեց ժամը երեքը: Տիկին դ՛էտամպի դիտավորութիւններն արդեն կասկածի տեղիք չէին տալիս և թվում էր, թե նրա հաջողութիւնն ապահովված է: Բենվենուտոն ուժասպառ փլվեց բազկաթոռին:

Ամեն ինչ տապալվում էր, կործանվում և առաջին հերթին՝ արվեստագետի իր փառքը: Խայտառակութիւնը միակ պարզևը կլինի տենդագին պայքարի համար, որը տրվեց նրան համարյա կյանքի գնով և որի դժվարութիւնների մասին արձանագործն այնժամ մոռացել էր, քանզի դրանք հաղթանակ էին խոստանում: Նա ցավով էր նայում իր Յուպիտերին, որի շուրջն արդեն թանձրանում էր խավարը, և տեսնում էր, որ անցած ամեն մի րոպեն ավելի աղոտ է դարձնում արձանի գծագիրը:

Սվ հանկարծ նրա գլխում մի հանճարեղ միտք ծագեց: Նա վեր թռավ, կանչեց իր հետ ժամանած Ճստյիկ-Ժանին ու շտապով դուրս վազեց պալատից: Թագավորի վերադարձը կանխագուշակող ոչ մի նշան դեռ չկար: Չեկինին շտապեց քաղաքի ատաղձագործի մոտ և այդ մարդու ու նրա աշակերտների օգնութեամբ մի ժամվա ընթացքում կաշնու փայտից պատրաստեց քառանիվ մի գետնախարիսի:

Հիմա նա վախենում էր, որ պալատականներն ավելի շուտ կվերադառնան, քան ամեն ինչ պատրաստ կլինի: Բայց ժամացույցը հնչեցրեց ժամը հինգը, թագակիրները դեռ չէին հայտնվում: Տիկին դ՛էտամպը, որտեղ էլ հիմա գտնվելիս լիներ, հավանաբար այս րոպեին իր հաղթանակն էր տոնում:

Շնեց որ գետնախարիսիսը պատրաստ էր, Բենվենուտոն դրա վրա տեղակայեց արձանը: Չախ ձեռքում Յուպիտերը բռնել էր երկրագունդը, իսկ աջ ձեռքում, որը բարձրացված էր գլխից վեր՝ կայծակ, ասես պատրաստվելով շանթահարել մահկանացուներին: Այդ նույն ձեռքում արձանագործն աննկատելիորեն հարմարեցրեց մի մոմ:

Նոր էր նա ավարտել իր նախապատրաստութիւնները, երբ լսվեց փողհարութիւն, որն ազդարարում էր թագավորի

ու կայսեր գալուստը: Այդ ժամանակ Բենվենուտոն վառեց մոմը, պատվիրեց Ճատլիկ-ժանին կանգնել արձանի հետևը, որտեղ նա ամենևին չէր երևում և սրտի ուժեղ բաբախոցով սկսեց սպասել թագավորին:

Տասը բռայե անց սրահի դռները լայնորեն բացվեցին, և շեմքին հայտնվեց Ֆրանցիսկ I-ը՝ կարլոս V-ի թևը մտած: Նրանց հետևից գալիս էին դոֆինը, դոֆինուհին, նավարայի թագավորը, մի խոսքով՝ ամբողջ արքունիքը: Բոլորից հետո ներս մտան պրևոն՝ աղջկա հետ և կոմս դ'Օրբեկը: Կոլոմբան տխուր էր ու շատ գունատ: Սակայն, Չելլինիին տեսնելով, նա բարձրացրեց գլուխն ու նրա դեմքը լուսավորվեց պայծառ, վստահող ժպիտով:

Չելլինին պատասխանեց նրան հայացքով, որն ասում էր. «Մի անհանգստանա, ինչ էլ պատահի, ես ձեզ հետ եմ»:

Հենց որ դռները բացվեցին, Ճատլիկ-ժանը, Բենվենուտոյի նշանով, թեթևորեն հրեց գետնախարիսխը, և արձանը, տեսն կլանքով լի, սահունորեն ընդառաջ գնաց թագավորին, հետևում թողնելով հին ժամանակների ստեղծագործությունները:

Բոլոր հայացքներն անմիջապես ուղղվեցին Յուպիտերին: Վերևից ընկնող մեղմ լույսը շատ ավելի հաճելի էր, քան ցեղեկային վառ լուսավորությունը:

Տիկին դ'էտամպը բարկությունից շրթունքը կծեց:

— Չե՞ք գտնում, արդյոք, սիր, որ շողոքորթությունը փորրու-ինչ ակնհայտ է,— հարցրեց դքսուհին:— Չէ՞ որ թագավորն ինքը պետք է ընդառաջ գնա երկնաբնակին:

Ֆրանցիսկ I-ը քմծիծաղ տվեց, բայց նկատելի էր, որ շողոքորթությունն այնքան էլ անախորժ չէր նրա համար. իր սովորության համաձայն նա մոռացավ ստեղծագործողի մասին հանուն ստեղծագործության և, մոտենալով Յուպիտերին, երկար ժամանակ լուռ դիտում էր քանդակը: Կարլոս V-ը, որը հոգով ավելի քաղաքագետ էր, քան՝ արվեստագետ (թեև լավ տրամադրության պահին բարձրացրել էր Տիցիանի վրա գցած վրձինը), Կարլոս V-ը, կրկնում ենք, պալատականների հետ, որոնք պատշաճ չէին համարում սեփական

կարծիք ունենալ, համբերատարութեամբ սպասում էր թե ինչ կասի թագավորը:

Մի քանի ընթացքներ լարված լուծություն էր տիրում, որի ընթացքում Բենվենուտո Չելլինին և տիկին դ'էտամպը խորին ատելութեամբ լի հայացքներ փոխանակեցին:

Եվ հանկարծ թագավորը բացականչեց.

— Սքանչելի՛ գործ է: Իրոք որ սքանչելի: Խոստովանում եմ, արձանը գերազանցեց իմ ակնկալությունները:

Եվ այդ ժամանակ միայն բոլորն սկսեցին գովեստներ շռայլել ու շնորհավորել քանդակագործին, իսկ ամենից բարձրաձայն՝ Կարլոս V-ը:

— Եթե կարելի լիներ զրավել արվեստագետներին, ինչպես քաղաքները, — ասաց նա Ֆրանցիսկին, — ես անմիջապես պատերազմ կհայտարարեի ձեզ, եղբայրս, այս վարպետին խլելու համար:

— Բայց Յուպիտերի արձանը, — արտասանեց զայրացած տիկին դ'էտամպը, — բոլորովին ծածկեց մեր աչքից հին վարպետների սքանչելի ստեղծագործությունները, որոնք անկաստ մնացին: Իսկ ես կարծում եմ, որ դրանք արժանի են ոչ պակաս ուշադրության, քան այս բոլոր ժամանակակից շինվածքները:

Թագավորը մոտեցավ անտիկ քանդակներին, որոնք լուսավորված էին ջահերով՝ ցածից-վեր և այդ իսկ պատճառով դրանց իրանները մնում էին մթության մեջ, ուստի այնքան ուժեղ տպավորություն չէին գործում, որքան Յուպիտերը:

— Ֆիդիասը, անկասկած, աստվածային է, — ասաց թագավորը, — բայց չէ՞ որ Ֆրանցիսկ 1-ի և Կարլոս V-ի դարաշրջանում էլ կարող է Ֆիդիաս լինել, ինչպես Պերիկլեսի ժամանակներում:

— Բայց պետք է անպայման այստեղ գալ ցերեկով, — զուտնութեամբ ասաց դքսուհին: — Առաջին տպավորությունը խաբուսիկ է, իսկ լույսի էֆեկտը դեռ արվեստ չէ: Եվ հետո, ո՞ւմ է պետք այս ծածկոցը: Խոստովանեք, վարպետ Չելլինի, դուցե սա արձանի ինչ-որ թերություն թաքցնելու համար է: Խոսքը թեթև գործվածքի մասին էր, որով Չելլինին պա-

բուրեւ էր Յուպիտերին, նրան է՛լ ավելի վեհութիւն տալուն համար:

Դքսուհու այդ բառերը լսելով, Բենվենուտոն, որն իր արձանի նման համր, անշարժ ու սառն էր թվում, արհամարհանքով քմծիծաղ տվեց ու աչքերը զայրալից փայլեցնելով, հեթանոսական ժամանակների նկարչի հանդուգն խիզախությամբ պոկեց ծածկոցը:

Նա կարծում էր, թե դքսուհին կկատաղի:

Սակայն դքսուհի դ՛էտամպը կամքի շտեմնված ուժով դուպեց զայրույթը. նրա դեմքին հայտնվեց թեև սիրալիր, բայց սոսկալի մի ժպիտ և նա ողորմածությամբ ձեռքը մեկնեց նկարչին: Բենվենուտոն ապշեց այդ անսպասելի փոփոխութիւնից:

— Խոստովանում եմ, ես իրավացի չէի,— քմահաճ տոնով բարձրաձայն ասաց դքսուհին:— Դուք, Չելլինի, մեծ արձանագործ եք: Ներեցեք բժախնդրութիւնս և բարեկամներ լինե՛ք: Դեմ չե՞ք: Ձեր ձեռքը:— Եվ շուտասելուկի պես ցածրաձայն ավելացրեց.— Բայց տեսե՛ք Չելլինի, շփորձե՛ք Ասկանիոյի ու Կոլոմբայի ամուսնութեան համար թույլտվութիւն խնդրել թագավորից, հակառակ դեպքում և՛ դուք, և՛ նրանք կորած եք:

— Իսկ եթե ուրիշ մի բան խնդրեմ, դուք ինձ կօգնե՞ք,— նույնպես շշուկով հարցրեց Բենվենուտոն:

— Այո,— աշխուժորեն պատասխանեց դքսուհին:— Եվ երկվում եմ, ինչ էլ խնդրելու լինեք, թագավորը կկատարի:

— Իսկ ես կարիք չունեմ թագավորի թույլտվութիւնը խնդրելու Ասկանիոյի ու Կոլոմբայի ամուսնութեան համար,— նկատեց Բենվենուտոն:— Դուք ինքներդ կխնդրեք այդ, տիկին:

Դքսուհին արհամարհանքով քմծիծաղ տվեց:

— Այդ ինչի՞ մասին եք քչփշու՛մ,— հարցրեց Ֆրանցիսկոն:

— Դքսուհին այնքան բարի գտնվեց, որ մտաբերեց ձեր խոստման մասին, այն դեպքի համար սիր, եթե իմ Յուպիտերը ձեզ գոհացնի:

— Մենք էլ վկա էինք, ձերդ մեծութիւն, ես և վարչապետ Պուլայեն,— մոտենալով ասաց կոնետարը:— Դուք նույնիսկ պատվիրեցիք ինձ և իմ կոլեգային...

— Այո, այո կոնետար, — ուրախ ընդմիջեց նրան թագավորը:— Ես խնդրել էի ձեզ հիշեցնել խոստմանս մասին, եթե ես այն մոռանալու լինեմ. ազնվականի խոսք, ես ամեն ինչ շատ լավ հիշում եմ: Այսպես ուրեմն, պարոնայք, շնորհակալ եմ ձեզնից միջնորդութեան համար, թեև այն բացարձակապես ավելորդ է: Չէ՞ որ ես խոստացել եմ կատարել Բենվենուտոյի ցանկացած խնդիրքը, երբ Ցուպիտերը պատրաստ կլինի: Այդպես չէ՞, կոնետար... Կա՞մ հիշողութիւն ունեմ, վարչապետ... Պահանջեք, Չելլինի, ես ձեր ձեռքում եմ, միայն խնդրում եմ, աշխատեք շատաբերել ձեր արժանիքները, քանզի դրանք անսահման են և ավելի շատ մտածեք մեր հնարավորութիւնների մասին, քանզի դրանք խիստ սահմանափակ են: Պահանջեք ամեն զան, ինչ ցանկանում եք, բացի մեր թագից և մեր սիրուհուց:

— Թող այդպես լինի, սիր, — ասաց Չելլինին, — եթե դուք այդքան ողորմած եք ձեր անարժան ծառայի նկատմամբ, եռ կօզտվեմ դրանից և մի բան կխնդրեմ միայն. ներում շնորհեք խեղճ ուսանողին, որը գետափին, Շատլիի մոտ, գծտվել է վիկոնտ դե Մարմանի հետ և մենամարտի ժամանակ սուսերով խոցել է նրան:

Այդ համեստ խնդիրքն ապշեցրեց բոլոր պալատականներին և առաջին հերթին՝ տիկին դէտամպին. նա զարմացած նայում էր Չելլինին, մտածելով, որ ճիշտ չի լսել:

— Գրո՞ղը տանի, — բացականչեց Ֆրանցիսկ I-ը:— Դուք ցանկանում եք առնվազն ստիպել ինձ օգտվելու ներում շնորհելու իրավունքից, քանզի դեռ երեկ վարչապետն ասում էր, որ հանցադործն արժանի է կախաղանի:

— Օ՛, սիր, — բացականչեց դքսուհին, — ես ինքս էլ ցանկանում էի բարեխոսել այդ երիտասարդի համար:— Բանն այն է, որ քիչ առաջ ես տեղեկութիւն ստացա Մարմանից: Վիկոնտն իրեն շատ ավելի լավ է զգում և խնդրել է հայտնել

ինձ, որ ինքն է կովի բռնվել այդ ուսանողի հետ... Ի՞նչ է նրա անունը, վարպետ Չելլինի:

— Ժակ Օբրի, տիկին:

— Եվ որ այդ ժակ Օբրին ոչ մի մեղք չունի: Իմ խորհուրդրն է, սիր, մի վիճեք Բենվենուտոյի հետ և հնարավորին շափ շուտ կատարեք նրա խնդիրքը, քանի դեռ նա ուշքի չի եկել և խնդրել շատ ավելին:

— Լավ, վարպետ, թող ձեր ցանկացածը լինի,— ասաց Ֆրանցիսկ I-ը:— Առակը զուր չի ասում. «Ով տալիս է առանց ծանր ու թեթև անելու, տալիս է կրկնակի»: Դրա համար թող աղատման հրամանադիրն անմիջապես ուղարկեն: Լսո՞ւմ եք, վարչապետ:

— Այո, սիր, ամեն ինչ կկատարվի:

— Իսկ ձեզ, թանկադին վարպետ Չելլինի,— շարունակեց Ֆրանցիսկ I-ը,— ես կխնդրեմ երկուշաբթի օրը գալ Լուվր: Մենք կխոսենք մանրուքների մասին, որոնք վերջերս աչքաթող է արել իմ դանձապահը...

— Բայց մի՞թե ձերդ մեծությանը հայտնի չէ, որ Լուվրի դռները...

— Ոչինչ, ոչինչ: Այդ հրամանը ավող անձնավորությունը նախառակը կկարգադրի: Դա ռազմական միջոցառում էր, բայց քանի որ հիմա մենք շրջապատված ենք միայն բարեկամներով, ռազմական դրությունը վերացվում է:

— Հիանալի՞ է, սիր,— բացականչեց դքսուհին:— Բայց եթե դուք, ձերդ մեծություն, այդքան մեծահոգի եք, կատարեք նաև իմ խնդիրքը, թեև ես ընդհանուր ոչինչ չունեմ Յուպիտերի հետ:

— Բայց, տիկին, դուք ընդհանուր շատ բան ունեք Դանուբյայի՞ հետ,— կիսաձայն մրմնջաց Բենվենուտոն:

— Իսկ ո՞րն է ձեր խնդիրքը, տիկին,— հարցրեց Ֆրանցիսկ I-ը, որը չէր լսել Բենվենուտոյի կծու խոսքը:— Հավատացեք, դքսուհի, մեր ցանկությունն է միշտ սիրաշահել

1 Դանալա— ըստ հին հունական դիցաբանության գեղանի աղջիկ, որն իր գեղեցկությամբ հմայեց Ջևսին (Յուպիտերին):

ձեզ և այդ ցանկութիւնը կախված չէ որևէ իրադարձութիւնից՝ նույնիսկ ամենահանդիսավոր:

— Շնորհակալ եմ, սիր: Ես խնդրում եմ ձեզ պատիվ անել պարոն գ'էստուրվիլին և մյուս երկուշաբթի օրը ստորագրել մանկամարդ ընկերուհու՝ մագմուազել գ'էստուրվիլի և կոմս գ'Օրբեկի ամուսնութեան պայմանագիրը:

— Բայց մի՞թե դա շնորհ է,— բացականչեց Ֆրանցիսկ I-ը:— Դա հաճույք է և, առաջին հերթին, հենց թագավորի համար. ես դեռ կմնամ ձեր պարտապանը, տիկին, երգվում եմ:

— Ուրեմն, սիր, պայմանավորվեցինք, երկուշաբթի,— հարցրեց դքսուհին:

— Երկուշաբթի,— պատասխանեց թագավորը:

— Բայց մի՞թե ցավալի չէ, դքսուհի, որ այդ հանդիսավոր օրը ձեզ չի զարդարի Ասկանիոյի սլատվիրած ոսկե շուշանը,— կիսաձայն հարցրեց Բենվենուտոն:

— Իհարկե, ցավալի է,— պատասխանեց տիկին գ'էտամպր:— Բայց ինչ արած, չէ՞ որ Ասկանիոն բանտում է:

— Այո՛, սակայն ես բանտում չեմ,— առարկեց Բենվենուտոն:— Ես հաճույքով կավարտեմ շուշանն ու կբերեմ ձեզ, տիկին:

— Օ՛, եթե այդպիսի բան անեք, ես կասեմ, որ...

— Ի՞նչ կասեք, տիկին:

— Կասեմ, որ դուք շատ սիրալիր եք:

Եվ դքսուհին Բենվենուտոյին մեկնեց ձեռքը, իսկ նկարիչը մի համբույր դրոշմեց ֆավորիտուհու ձեռքին:

Այդ միջոցին ինչ-որ մեկը ճշաց:

— Ի՞նչ պատահեց,— հարցրեց թագավորը:

— Ներեցեք, ձերդ մեծութիւն,— ասաց պրևոն,— այդ իմ աղջիկն էր. նա իրեն վատ զգաց:

«Խեղճ աղջիկ,— մտածեց Բենվենուտոն,— նրան թվաց, թե ես դավաճանեցի»:

ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐՈՐԴ

Հաշվեցկատ ամուսնություն

Բենվենուտոն պատրաստվում էր մեկնել Ֆոնտենբլոյից նույն երեկոյան, բայց Ֆրանցիսկ I-ը այնքան երկար պահեց, որ նա ստիպված եղավ գիշերել ամրոցում:

Բացի այդ, իրեն հստակ վճռականությամբ, արվեստագետը մտքում դրել էր հետևյալ օրն իսկ վերջ տալ վաղուց ձեռնարկած մի ինտրիգի: Այդ դործն ամենևին կապ չուներ ծավալվող իրադարձությունների հետ, և Բենվենուտոն ցանկանում էր ավարտել այն, մինչև Ասկանիոյի ու Կոլոմբայի ճակատագրով լիովին զբաղվելը:

Այդպես ուրեմն, նա ընթրեց ամրոցում և կեսօրին միայն, հրաժեշտ տալով թագավորին ու տիկին դ'էտամպին, Ճստլիկ-ժանի ուղեկցությամբ բռնեց վերադարձի ճանապարհը:

Երկուսն էլ գնում էին լավ հանգստացած ձիերով, և այնուամենայնիվ, հակառակ իր սովորության, Բենվենուտոն չէր շտապում: Իսկույն երևում էր, որ նա ուզում է Փարիզ հասնել որոշակի ժամի: Եվ իրոք, միայն երեկոյան ժամը յոթին նա ու Ճստլիկ-ժանը հասան Քնարի փողոցը:

Դեռ ավելին. Բենվենուտոն, չդիտես ինչու, միանգամից շինաց նեղի ամրոցը, այլ բախեց իր ընկերոջ, Գվիդոյի՝ Ֆլորենտացի բժշկի, դուռը: Համոզվելով, որ ընկերը տանն է և իրեն ընթրիք կտա, նկարիչը պատվիրեց Ճստլիկ-ժանին մեռակ գնալ նեղի ամրոց և ասել ենթավարպետներին, որ ուսուցիչը վաղը միայն կվերադառնա Ֆոնտենբլոյից. իսկ հետո նա պետք է կամացուկ բացի դուռը, հենց որ ուսուցիչը բախի:

Ճստլիկ-ժանը խոստացավ ամեն ինչ ճշտորեն կատարել ու անմիջապես սլացավ նեղի ամրոց:

Ընթրիքը մատուցեցին, բայց մինչև սեղան նստելը Բենվենուտոն հարցրեց ընկերոջը, թե չի՞ ճանաչում արդյոք որևէ ազնիվ ու ձեռնհաս նոտարի, որը կարողանար այնպիսի պայմանագիր կազմել, որի ոչ մի բառը բժախնդրության

առիթ շտար: Ընկերն առաջարկեց իր փեսային ու անմիջապես մարդ ուղարկեց նրան կանչելու:

Երբ ընթրիքն ավարտվելու վրա էր, հայտնվեց նոտարը: Չելլինին վեր կացավ տեղից, նրա հետ փակվեց հարևան սենյակում ու խնդրեց կազմել ամուսնության պայմանագրություն, շնչելով ամուսինների անունները: Երկու անգամ պայմանագրությունը կարդալուց հետո (համոզվելու համար, որ ոչ մի անճշտություն չի մնացել) Բենվենուտոն գրպանը դրեց փաստաթուղթը, առատաձեռնորեն վճարեց նոտարին, ընկերոջից խնդրեց երկրորդ սուսերը, որն իր սեփական սուսերի երկարությունն ուներ, թաքցրեց թիկնոցի տակ և քայլերն ուղղեց դեպի Նելի ամրոց: Մութն արդեն ընկել էր:

Դարպասին մոտենալով, նա կամացուկ բախեց: Դարպասը վայրկենարար բացվեց: Ճստիկ-ժանն արթուն էր իր պահակակետում:

Չելլինիի հարցին նա պատասխանեց, որ ենթավարպետներն ընթրում են և վաղվանից շուտ շին սպասում նրան: Բենվենուտոն կարդադրեց պատանուն ոչ ոքի շասել իր վերագարձի մասին և գնաց դեպի Կատերինայի ննջասենյակը, որի բանալին իր մոտ էր:

Դադտազոդի սենյակ մտնելով, նա փակեց դուռը, պահվեց վարագույրի հետևն ու սկսեց սպասել:

Քառորդ ժամ հետո աստիճանների վրա թեթև ոտնաձայներ լսվեցին. դուռը բացվեց ու սենյակ մտավ Սկոցոնենն՝ լամպը ձեռքին: Նա ներսից փակեց դուռը, կանթեղը գրեց բուխարու վրա ու նստեց մեծ բազկաթոռին, որի դրվածքը հնարավորություն էր տալիս տեսնել աղջկա դեմքը:

Ի մեծ զարմանս նկարչի, Կատերինայի մշտապես անամպ, զվարթ ու կենսալից դեմքը մտազբաղ էր, թախծոտ:

Բանն այն է, որ Սկոցոնեին տանջում էր խղճի խայթը:

Մենք սսվոր ենք տեսնել աղջկան երջանիկ ու անհոգ, բայց դա այն ժամանակ էր, երբ Բենվենուտոն սիրում էր նրան: Քանի դեռ նա զգում էր այդ սերը, կամ ավելի ճիշտ ուսուցչի բարյացակամությունն իր նկատմամբ, քանի դեռ նրա անուրջներում, ինչպես ոսկեփայլ ամպը հորիզոնում,

փայլատում էր Չելլինիի կինը դառնալու հույսը, նա չէր դավաճանում իր երազանքին: Սերը մաքրագործեց Կատերինայի հոգին անցյալի բոլոր ապականություններից, բայց այն օրից, երբ նա նկատեց, որ սխալվել է ու Չելլինիի զգացումը, որը սիրո տեղ էր դնում, ընդամենը հրապուրանք է, կորցրեց երջանիկ լինելու հույսը, և նկարչի ժպիտից ծաղկած նրա հոգին կրկին թառամեց:

Հետզհետե Սկոցոնենն զրկվեց իր մանկական անմիջականությունից ու կենսաբախությունից: Նա տխրում էր, և նախկին սովորությունները սկսեցին գլուխ բարձրացնել: Այդպես նոր ներկած պատն արևոտ օրերին պահպանում է իր դույնը, իսկ անձրևի տակ՝ դունաթափվում:

Չելլինիից լքված Սկոցոնենն, ինքնասիրությունից դրդված փորձեց պահել արձանագործին:

Օգտվելով Պագոլոյի սիրահետությունից, նա սկսեց պատմել Չելլինիին նոր երկրպագուի մասին, հուսալով շարժել նրա խանդը: Բայց այդ հարցում էլ հուսախաբություն ապրեց: Բենվենուտոն շղայրացավ, ինչպես Սկոցոնենն սպասում էր, այլ քահ-քահ ծիծաղեց. նա շարդելեց աղջկան տեսնվել Պագոլոյի հետ, այլ ընդհակառակը, խորհուրդ տվեց ավելի հաճախակի հանդիպել: Այդ ժամանակ Սկոցոնենն զգաց, որ կործանվում է և, առաջվա պես ամեն ինչի նկատմամբ անտարբեր, հանձնվեց դեպքերի ընթացքին՝ աշնանային քամու բերանն ընկած շորացած տերևի նման:

Հենց այդ ժամանակ էլ Պագոլոյին հաջողվեց հաղթահարել նրա անտարբերությունը: Ինչքան չլինի Պագոլոն երիտասարդ էր ու եթե չլիներ նրա թթված սֆաթը, կարող էր զեզեցիկ պատանի համարվել: Պագոլոն սիրահարված էր, նա անդադար պատմում էր Սկոցոնենին իր զգացմունքների մասին, իսկ Չելլինին իսպառ հրաժարվել էր նման զեղումներից: «Ծս քեզ սիրում եմ». այդ շորս բառի մեջ բովանդակվում է մարդկային սրտի ամբողջ լեզուն, և ամեն մի սիրտ պետք է դեթ որևէ մեկի հետ խոսի այդ լեզվով:

Չանձրույթից, սրտնեղությունից, իսկ գուցե ինքնախարկության ազդեցության տակ Սկոցոնենն ասաց Պագոլոյին,

որ սիրում է նրան, ասաց շտիրելով ու հոգու խորքում փայ-
փայելով Չելլինի կերպարը, ինքն իրեն կրկնելով նրա անու-
նը:

Եվ անմիջապես նրա մտքով անցավ, թե դուք ե մի գեղե-
ցիկ օր Բենվենուտոն կվերադառնա, կտեսնի, որ, հակառակ
իր խորհուրդների, աղջիկն առաջվա պես հավատարիմ է իրեն
ու կհատուցի նրան անդավաճանության համար, ոչ ամուս-
նությամբ, այդ մասին խեղճ աղջիկն արդեն չէր էլ երազում,
այլ հարգանքով ու խղճահարությամբ, որոնք կարող էին
նախկին սիրո վերադարձի պատրանքը ստեղծել:

Հենց այդ մտքերից էլ Սկոցոնենն այդքան տրտում էր,
թախծոտ, հենց դրանք էլ նրա հոգում արթնացնում էին խղճի
խայթ:

Հանկարծ նրա միայնակ մտորումները խախտվեցին թեթև
աղմուկից. Կատերինան ցնցվեց ու բարձրացրեց դուխր.
աստիճանները ճռնչացին, հետո կողպեքի մեջ շխկաց բանա-
լին, և դուռը բացվեց:

— Պագոլո, ինչպե՞ս ներս մտաք, ո՞վ է տվել ձեզ բա-
նալին, — ոտքի կանգնելով, ճշաց Սկոցոնենն: — Այս դուռը
երկու բանալի ունի միայն, մեկն ինձ մոտ է, մյուսը՝ Չելլի-
նի:

— Ինչ արած, հոգիս, եթե դուք այդքան քմահաճն եք, —
ծիծաղելով ասաց Պագոլոն: — Մերթ դուռը բաց եք թողնում,
մերթ փակվում եք, իսկ երբ ուզում եմ այստեղ մտնել լու-
սամուտից, սկսում եք օգնության կանչել, թեև ինքներդ եք
թույլ տվել դալու: Ես էլ ստիպված եմ խորամանկել:

— Օ՛, տեր աստված: Բայց դո՞նե ասացեք, որ դուք
գաղտագողի եք հանել բանալին Բենվենուտոյի գրպանից,
ասացեք, որ նա չի տվել ձեզ, որ նա ոչինչ չգիտի այդ մա-
սին, հակառակ դեպքում ես ամոթից ու հուսահատությունից
կմեռնեմ:

— Հանգստացիր, իմ լավ Կատերինա, — ասաց Պագոլոն,
բանալին երկու անգամ պտտելով կողպեքի մեջ ու նստելով
աղջկա կողքին, և ստիպելով նրան նույնպես նստել: — Բեն-
վենուտոն այլևս ձեզ չի սիրում, այդ ճիշտ է, բայց Բենվե-

նուտոն շատ նման է այն ժլատներին, որոնք հսկում են իրենց դանձր, թեև իրենք էլ չեն օգտվում դրանից: Ո՛չ, այս բանալին ես պատրաստել եմ իմ ձեռքով: Ով կարող է ստեղծել վիթխարին, կսարքի նաև շնչին մի բանալի: Ոսկերչի համար դժվար չէ հասարակ արհեստավոր դառնալը: Տեսնո՞ւմ եք ինչպես եմ սիրում ձեզ, Կատերինա: Այս մատները, որոնք վարժվել են մարդարիտներից, ոսկուց ու ադամանդից ծաղիկներ ստեղծել, շխորչեցին մշակել անարգ երկաթի կտորը: Ճիշտ է և այն, նենգամիտ, որ երկաթից ստացվեց շտեսնված մի բանալի՝ դրախտի դարպասի բանալին:

Այս բառերն արտասանելով, Պագոլոն ցանկանում էր բռնել Կատերինայի ձեռքը, բայց ի մեծ վարմանս Բենվենուտոյի, որը բաց չէր թողնում սիրահարվածների ոչ մի բառը, ոչ մի շարժումը, Կատերինան հետ հրեց պատանուն:

— Այդպե՛ս, այդպե՛ս: Եվ երկա՞ր են շարունակվելու այս կամակորուժյունները, — հարցրեց Պագոլոն:

— Լսեք, Պագոլո, — պատասխանեց Կատերինան այնպիսի թախծոտ ձայնով, որ մինչև հոգու խորքը հուզեց Չելլինին: — Ես դիտեմ, որ եթե կինը դեթ մի անգամ զիջել է տղամարդուն, նա առաքինի ձևանալու իրավունք չունի, բայց եթե տղամարդը, որի ցանկության առաջ նա տեղի է տվել, օրինավոր մարդ է, և եթե կինն ասում է նրան, որ ինքնատիրապետումը կորցնելով ենթարկվել է ըստ հակա թուլության, տպա հասկացեք, տղամարդը պետք է շարաշահի կնոջ սխալմունքը: Հավատացե՛ք, Պագոլո, ես էլ զիջել եմ ձեզ առանց սիրելու. ես սիրում էի ուրիշ մարդու՝ Բենվենուտո Չելլինին: Կարող եք արհամարհել ինձ, դուք այդ իրավունքն ունեք, բայց խնայեցեք և այլևս մի տանջեք ինձ:

— Սքանչելի՛ է, ինչ ասել կուզի: Շատ խորամանկորեն եք սարքել այս բոլորը, — բացականչեց Պագոլոն: — Դուք երկար, շատ երկար ստիպեցիք ինձ հետամուտ լինել ձեր բարյացակամությանը, իսկ հիմա ամեն ինչում ինձ եք կշտամբում: Բայց չսպասեք, որ ես կհրաժարվեմ ձեր տված խոսքից: Ի դեպ ասած՝ միանդամայն հոժարակամ: Երբե՛ք: Եվ դժվար է պատկերացնել, որ այս ամենը արվում է հանուն Բենվե-

նուտոյի: Հանուն մի մարդու, որը տարիքով կրկնակի մեծ է ձեզնից և ինձնից՝ նույնպես: Բայց չէ՞ որ նա ձեզ ամենևին չի սիրում:

— Լո՛ւք, Պազուլո, անմիջապէ՛ս լո՛ւք, — ամոթից, խանդից ու բարկությունից շիկնելով, բացականչեց Սկոցոնեն: — Բենվենուտոն լի սիրում ինձ, այդ ճիշտ է, բայց առաջ սիրում ու հարգում էր և հիմա էլ հարգում է:

— Լավ, այդ դեպքում ինչո՞ւ նա շամուսնացավ ձեզ հետ, քանի որ խոստացել էր:

— Խոստացե՞լ էր: Ո՛չ: Բենվենուտոն երբեք չի խոստացել ամուսնանալ ինձ հետ, իսկ եթե խոստանար, ապա ա՛նպայման կկատարեր իր խոսքը: Պարզապես ես շատ էի ցանկանում, որ այդպես լինի. ցանկությունս հետզհետե փոխվեց հույսի, իսկ հույսն այնպես թեւավորեց ինձ, որ երազանքներս իրականութեան տեղ դրի ու սկսեցի աջ ու ձախ խոսել այդ մասին: Ո՛չ, Պազուլո, — շարունակեց Կատերինան, թախծոտ ժպիտով, ուժասպառ իջեցնելով ձեռքը, — ո՛չ, Բենվենուտոն երբեք ոչինչ չի խոստացել ինձ:

— Լավ: Բայց մտածեք, Սկոցոնե, ինչքան անշնորհակալն եք դուք, — բացականչեց Պազուլոն՝ աղջկա ձեռքը բռնելով, որովհետեւ քնքշութեան վերադարձի տեղ դրեց այն, ինչ պարզապես վհատութեան նշան էր: — Ես խոստանում եմ, ես առաջարկում եմ ձեզ այն, ինչ Բենվենուտոն, ձեր իսկ ասածով, երբեք չի խոստացել ու չի առաջարկել: Ես նվիրված եմ ձեզ. ես սիրում եմ ձեզ, իսկ դուք ինձ հեռացնում եք: Բենվենուտոն դավաճանեց և, այնուամենայնիվ, եթե իմ փոխարենն նա լիներ, ես վստահ եմ, որ դուք ուրախութեամբ կհամաձայնեիք նրա կինը դառնալ: Իսկ ինձ մերժում եք, իմանալով հանդերձ, թե ինչպես եմ սիրում ձեզ:

— Ա՛խ, եթե նա այստեղ լիներ, — բացականչեց Սկոցոնեն: — Եթե միայն նա այստե՛ղ լիներ, Պազուլո, դուք ամոթից դետինը կմտնեիք: Ախր դուք ատելությունից դավաճանեցիք նրան, իսկ ես, թեև նույնը արեցի, բայց նրան սիրելուց:

— Թույլ տվեք հարցնել, թե ինչի՞ց պետք է ամաչեմ, — բացականչեց Պազուլոն, սրտապնդված, որ Բենվենուտոն հե-

ուռ է:— Մի՞թե տղամարդն իրավունք չունի սիրահետել կնոջը, եթե այդ կինն ազատ է: Եթե Չելլինին այստեղ լիներ, ես պարզապես կասեի նրան. «Դուք դավաճանեցիք Կատերինային, լքեցիք դժբախտ աղջկան, իսկ նա այնքան էր սիրում ձեզ: Սկզբում հուսահատության մեջ էր, սակայն բարեբախտարար նրան հանդիպեց լավ ու համակրելի մի պատանի, որը կարողացավ գնահատել նրան, սիրեց ու առաջարկեց իր կինը դառնալ՝ ինչ որ դուք երբեք չեք առաջարկել: Ձեր իրավունքներն անցել են այդ պատանուն և աղջիկը հիմա նրանն է»: Հետաքրքիր է իմանալ, ի՞նչ կպատասխաներ քո Չելլինին:

— Ոչի՞նչ, — հնչեց շաղակրատությամբ տարված Պադուլոյի թիկունքում, — պարզապե՛ս ոչինչ:

Եվ պատանու ուսին իջավ ծանր մի ձեռք: Պադուլոյի պերճախոսության հեղեղը վայրկենաբար սպառվեց: Չելլինիի կողմից հետ շարտվելով, նա փոփեց հատակին ու քիչ առաջվա անվահերությունը փոխվեց ողորմելի երկյուղի:

Տեսարանը, հիրավի, սքանչելի էր. սակայն դունատ, վերջնականապես շփոթված, կծկված Պադուլոն փորսող էր տալիս հատակին: Սկոցոնեն թեթևակի բարձրանալով բազկաթոռից ու կռթնելով արմնկակալներին, անշարժ ու անձայն քարացել էր, ինչպես տարակուսանքի արձան, իսկ Բենվենուտոն կանգնել էր նրանց առաջ, շղիտես դեմքի ահարկու, թե՛ հեգնական արտահայտությամբ, մի ձեռքում բռնած մերկացրած սուսերը, մյուսում՝ պատյանը դրած սուրը:

Տանջալից սպասումի մի պահ էր դա: Ապշահար Պադուլոն ու Սկոցոնեն լռում էին ուսուցչի մոայլ հայացքի տակ:

— Դավաճանությո՞ւն, — վերջապես մրմնջաց Պադուլոն, խորապես ստորացված զդալով իրեն: — Դավաճանությո՞ւն է:

— Այո՛, թշվառակա՛ն, — պատասխանեց Չելլինին, — դավաճանություն է, սակայն քո՛ կողմից:

— Ի՞նչ կա որ, Պադուլո, դուք ցանկանում էիք նրան տեսնել: Ահավասիկ և նա, — ասաց Սկոցոնեն:

— Այո, ահավասիկ և նա, — մրմնջաց Պադուլոն, ամոթահար, որ սիրած կնոջ ներկայությամբ իր հետ այդպես են վարվում: — Միայն թե նա զենք ունի, իսկ ես ոչինչ չունեմ:

— Ես քեզ համար զենք եմ բերել: Ահա, բռնիր,— գոչեց Չելլինին, մի քայլ հետ դնալով ու Պագոլոյի ոտքերի առաջ նետելով ձախ ձեռքում բռնած սուսերը:

Ենթավարպետը տեղից շարժվելով, լուռ նայում էր զենքին:

— Դե՛հ, շուտ, վերցրու սուսերն ու ոտքի կանգնիր,— հրամայեց Չելլինին:— Ես սպասում եմ:

— Մենամա՞րտ,— թոթովեց Պագոլոն, վախից ատամները կափկափեցնելով:— Բայց մի՞թե ես կարող եմ ընդունել այդպիսի ուժեղ հակառակորդի մարտահրավերը:

— Լավ,— համաձայնեց Չելլինին, սուսերը մի ձեռքից մյուսը տեղափոխելով,— ես ձախ ձեռքով կկռվեմ, այդ դեպքում մեր ուժերը կհավասարվեն:

— Ես կռվեմ ձեզ հե՞տ: Իմ բարեկամի՞, մի մարդու, որին պարտական եմ ամեն ինչ... Երբե՛ք,— քացականչեց Պագոլոն:

Բենվենուտոն արհամարհանքով ժպտաց, իսկ Սկոցոնեն մի քայլ հետ քաշվեց, նույնիսկ շփորձելով թաքցնել իրեն համակած նողկանքի զգացումը:

— Չէր խանդարի իմ բարերարությունները մտաբերել մինչև Սկոցոնեին ինձնից խլելը, որին վստահել էի քո և Ասկանիոյի պատվին,— պատասխանեց Բենվենուտոն:— Իսկ հիմա ուշ է, Պագոլո, պաշտպանվիր:

— Ո՛չ, ո՛չ, պետք չէ,— թոթովում էր վախկոտը, ծնկաչոք հետ-հետ քաշվելով Բենվենուտոյից:

— Դե լավ, շեռ ուզում կռվել, ինչպես վայել է ազնիվ մարդուն, ես կպատժեմ քեզ, որպես սրիկայի:

Եվ այդ ասելով, Չելլինին, դեմքի անտարբեր արտահայտությամբ, սուսերը պատյանը դրեց և դաշույնը դուրս քաշելով դանդաղ, բայց հաստատուն քայլքով սկսեց մոտենալ Պագոլոյին:

Սկոցոնեն ճշաց ու նետվեց նրանց միջև: Բենվենուտոն ձեռքի հանդիստ, բայց տիրական շարժումով, որ հիշեցնում էր բրոնզե արձանի ձեռքը, հետ պահեց նրան. աղջիկը վախից կիսամեռ ընկավ բազկաթոռին: Իսկ Չելլինին, շարունա-

վ գրոհել, շարաքախտ աշակերտին պատին սեղմեց ու դաշուլնը դեմ արեց կոկորդին:

— Աղոթի՛ր,— ասաց նա,— քեզ ընդամենը հինդ րոպե կյանք է մնացել:

— Խնայե՛ք,— խեղդված ձայնով աղաղակեց Պագոլոն:— Խնայեք: Զսպանե՛ք ինձ:

— Ի՞նչ,— բացականչեց Զելլինին:— Չէ՞ որ դու գիտեիր իմ վարք ու բարքը և շնայած դրան գայթակղում էիր Կատերինային: Ես ամեն ինչ լսեցի, ամեն ինչ՝ մինչև վերջին բառը: Եվ դեռ համարձակվում ես խնդրել, որ խնայե՞մ քեզ: Ինչ է, ծիծաղո՞ւմ ես ինձ վրա, Պագոլո:

Եվ Բենվենուտոն ինքը ծիծաղեց, բայց այնպիսի սոսկալի, այնպիսի ահազդու ծիծաղով, որ Պագոլոն սարսափից դողաց:

— Ուսուցիչ, ուսուցի՛չ,— գոչեց ենթավարպետը, զգալով, որ դաշուլնի ծայրը խտղտում է կոկորդը:— Մեղավորը ես չեմ: Այդ նա՛ Կատերինա՛ն էր ինձ գլխահան անողը:

— Զրպարտությո՞ւնն է, դավաճանությո՞ւնն, վախկոտությո՞ւնն: Երբևէ այդ երեք հրեշից ես քանդակախումբ կստեղծեմ և սարսափելի կլինի դրան նայելը: Ուրեմն, ասում ես, նա՞ է քեզ խելքահան արել: Թշվառակա՛ն: Մի մոռանա, որ ես այստեղ էի ու ամեն ինչ լսեցի:

— Օ՛, Բենվենուտո,— աղերսադին ասաց Կատերինան,— մի՞թե չեք հասկանում, որ նա ստում է:

— Այո,— պատասխանեց Բենվենուտոն,— ես շատ լավ հասկանում եմ, որ նա ստում է, ինչպես և ստում էր, խոստանալով ամուսնանալ քեզ հետ, բայց հանգիստ եղիր, նա իր արժանի պատիժը կստանա այդ կրկնակի ստախոսության համար:

— Ի՞նչ արած, պատժեք ինձ,— բացականչեց Պագոլոն,— բայց ողորմած եղեք, մի՛ սպանեք:

— Դու ստո՞ւմ էիր, ասելով, որ Կատերինան է դայթակղել քեզ:

— Այո՛, ստում էի, մեղավորը ես ինքս եմ, բայց ես խեն-

թի նման սիրեցի նրան. դուք ինքներդ գիտեք, ուսուցիչ, թե սերն ուր է հասցնում մարդուն:

— Եվ դու ստո՞ւմ էիր, ասելով, որ պատրաստ ես ամուսնանալ նրա հետ:

— Ո՛չ, ուսուցիչ, այգ արդեն չէի ստում:

— Ուրեմն, դու իրո՞ք սիրում ես Սկոցոնեին:

— Այո՛, ես սիրում եմ նրան,— պատասխանեց Պագուլոն, հասկանալով, որ կրքի ուժը միակ արդարացումն է Չելլինիի աչքում:— Ես սիրում եմ նրան.— կրկնեց Պագուլոն:

— Ուրեմն դու հաստատո՞ւմ ես, որ չէիր ստում, խոստանալով ամուսնանալ նրա հետ:

— Չէի ստում, ուսուցիչ:

— Դու նրան քո կի՞նը կդարձնեիր:

— Այո՛:

— Հիանալի՛ է. ուրեմն, ամուսնացիր Կատերինայի հետ, ես նրան քեզ եմ տալիս:

— Ինչ ասացի՞ք: Դա կատա՞կ էր:

— Ո՛չ, Պագուլ, դեռ երբեք ես այսքան լուրջ չեմ եղել: Եթե չես հավատում՝ նայիր ինձ:

Պագուլոն մի երկչուտ հայացք նետեց Չելլինիի վրա և նրա դեմքի արտահայտութունից տեսավ, որ ամեն ընդհանուր կարող է դատավորից դառնալ դահիճ: Պատանին հոգոց հանելով, խոնարհեց աչքերը:

— Հանի՛ր մատանիդ, Պագուլ, ու դիր Կատերինայի մատը:

Ենթավարպետը հնազանդորեն կատարեց առաջին հրամանը: Բենվենուտոն նշան արեց Կատերինային. աղջիկը մոտեցավ:

— Մեկնիր նրան ձեռքդ, Սկոցոնե,— կարգադրեց Չելլինին: Սկոցոնեն հնազանդվեց:

— Կատարի՛ր հրամանս, Պագուլ,— շարունակեց Բենվենուտոն:

Պագուլոն Կատերինայի մատը դրեց մատանին:

— Իսկ հիմա, երբ նշանդրեքն ավարտված է, սկսենք հարսանիքը,— առաջարկեց Բենվենուտոն:

— Հարսանի՞քը, — մրմնջաց Պագուլոն: — Ի՞նչ հարսանիք: Հարսանիքի համար պետք են քահանա ու նոտար:

— Նախ և առաջ պետք է պայմանագրութիւն, — առարկեց Բենվենուտոն, գրպանից մի թուղթ հանելով: — Իսկ այն արդեն պատրաստ է, մնում է անունները դրել:

Նա պայմանագիրը գրեց սեղանին և Պագուլոյին մեկնեց գրիչը:

— Գրի՛ր:

— Եո ծուղակն ընկա, — թոթովեց ենթավարպետը:

— Ի՞նչ: Ինչ ասացի՞ր, — հարցրեց Բենվենուտոն առանց ձայնը բարձրացնելու, թեև՝ սպառնալից: — Դու խոսում ես ծուղակի մասի՞ն: Բայց որտե՞ղ ես ծուղակ տեսնում: Մի՞թե ես ուժով ներս հրեցի քեզ Սկոցոնեի սենյակը: Մի՞թե ես խորհուրդ տվի քեզ առաջարկութիւն անել նրան: Որ այդպես է, ամուսնացիր, Պագուլո: Իսկ երբ դառնաս նրա ամուսինը, մեր դերերը կփոխվեն՝ եթե ես այցելեմ Կատերինային, դու կըսպառնաս ինձ մենամարտով, իսկ ես կվախենամ:

— Ա՛խ, ինչ զվարճալի կլիներ, — բացականչեց Կատերինան, ահավոր սարսափից վայրկենաբար անցնելով խելացնոր ուրախութեան և իրադարձութիւնների այդպիսի շրջադարձի մտքից ծիծաղից թուլանալով:

Պագուլոն մի քիչ ուշքի եկավ և, Կատերինայի ծիծաղից սրտապնդված, սկսեց ավելի հանգիստ նայել այդ ամենին: Մտածելով, որ ուսուցիչը պարզապես վախեցնում է նրան, որպեսզի ստիպի ամուսնանալ (ամուսնութիւնը շափազանց ողբերգական վախճան կլիներ կատակերգութեան համար), նա որոշեց դուրսն ազատել հարկադրական ամուսնութիւնից՝ և ավելի հաստատակամորեն պահել իրեն:

— Դեհ, ի՞նչ արած, — ուրախ բացականչեց նա Սկոցոնեի տրամադրութեանը ներդաշնակ: — Ես համաձայն եմ, որ բավական զվարճալի դրութիւն կստեղծվեր, բայց, ցավոք, այդ երբեք չի լինի:

— Ինչպե՞ս թե չի լինի, — գոչեց Բենվենուտոն, ապշած ոչ պակաս, քան այն առյուծը, որը տեսնում է իր վրա հարձակման փորձ կատարող աղվեսի:

— Այո, շի լինի,— շարունակեց Պագոլոն,— Ավելի լավ է ես մեռնեմ: Ավելի լավ է սպանե՛ք ինձ:

Հազիվ էր Պագոլոն արքասանել այդ բառերը, որ Չելլինին մի ոստյունով հայտնվեց նրա կողքին: Պատանին տեսավ շողացող սայրն ու արագորեն մի կողմ ցատկեց: Դաշույնը թռավ անցավ նրա կողքից, թեթևորեն վիրավորելով ուրը և երկու մատնաչափ խրվեց պատի փայտե կողվածքի մեջ:

— Ես համաձայն եմ,— գոռաց Պագոլոն:— Խնայեցե՛ք: Ես կանեմ ամեն բան, ինչ կհրամայեք:

Եվ մինչդեռ Բենվենուտոն պատի միջից դժվարությամբ դուրս էր քաշում դաշույնը, Պագոլոն մոտ վազեց սեղանին ու արագորեն ստորագրեց պայմանագրությունը: Այդ ամենը տեղի ունեցավ այնքան արագ, որ Կատերինան չհասցրեց նույնիսկ միջամտել:

— Շնորհակալ եմ, Պագոլո, ինձ ձեր կինն անվանելու համաձայնության պատվի համար,— ասաց նա, սրբելով վախից դուրս ցայտած արցունքները և միաժամանակ զսպելով ակամա ժպիտը:— Բայց մենք պետք է բացատրվենք: Ես ունկնդրեցի ձեզ, դուք էլ ինձ ականջ դրեք. քիչ առաջ դուք հրաժարվում էիք ամուսնանալ ինձ հետ, իսկ հիմա ես եմ հրաժարվում ձեզանից: Այս ասում եմ ոչ ամենևին ձեզ ստորացնելու համար: Ո՛չ, Պագոլո, ես պարզապես չեմ սիրում ձեզ և գերադասում եմ բնավ չամուսնանալ:

— Այդ դեպքում նա կմեռնի,— սառնասրտորեն պատասխանեց Չելլինին:

— Բենվենուտո, բայց չէ՞ որ ես ինքս եմ մերժում նրան:

— Նա կմեռնի՛,— կրկնեց Բենվենուտոն:— Թող ոչ ոք չհամարձակվի ասել, որ ինձ վիրավորած տղամարդը պատժից ազատվեց... Դու պատրաստ ես մեռնելու, Պագոլո:

— Կատերինա,— բացականչեց ենթավարպետը,— ես սիրում եմ ձեզ: Ես միշտ, մի՛շտ կսիրեմ ձեզ: Աստծու սիրուն, խղճացե՛ք ինձ: Ստորագրեք պայմանագրությունը: Իմ կի՛նը դարձեք, Կատերինա, ծնկաչոք աղերսում եմ ձեզ:

— Դե՛հ, Սկոցոնե, շուտ որոշիր,— ասաց Չելլինին:

— Իսկ դուք շատ խիստ շե՞ք վարվում ինձ հետ, ուսուցիչ,— բարկացած հարցրեց Կատերինան։— Չէ՞ որ ես այնքան սիրում էի ձեզ և, ճիշտն ասած, բոլորովին այլ բան էի երազում... Օ՛, տեր աստված։ Մի նրան նայեք։ Ի՛նչ սֆաթ է,— բացականչեց աղջիկը տխրությունից կրկին անցնելով ուրախության։— Անմիջապե՛ս ժպտացեք, Պագոլո։ Հակառակ դեպքում շեմ համաձայնի ձեր կինը դառնալ։ Օ՛հ, ինչ ծիծաղելի տեսք ունեք հիմա։

— Փրկե՛ք ինձ, Կատերինա, և այն ժամանակ, եթե ուզում եք, մենք միասին կծիծաղենք։

— Դե՛հ, ինչ արած, եթե դուք այդքան ցանկանում եք...

— Այո, շատ, շատ եմ ցանկանում,— բացականչեց Պագոլոն։

— Ձեզ հայտնի՞ է, թե ես ինչ կյանք եմ վարել։

— Այո, ես ամեն ինչ գիտեմ։

— Ուրեմն, ես շե՞մ խաբում ձեզ։

— Ո՛չ։

— Եվ դուք շե՞ք ափսոսա, որ ամուսնացել եք ինձ հետ։

— Ոչ, երբե՛ք։

— Այդ դեպքում համաձայնության եկանք։ Այս ամենը շատ տարօրինակ է, և ես չէի սպասում, որ ձեր կինը կդառնամ, բայց ինչ արած...

Սկոցոնեն վերցրեց գրիչն ու, ինչպես վայել է հնազանդ կնոջը, ստորագրեց իր ամուսնու անվան տակ։

— Շնորհակալ եմ, Կատերինա, թանկագինս,— բացականչեց Պագոլոն։— Այ կտեսնես, թե ինչ լավ ամուսին կլինեմ։

— Իսկ եթե նա մոռանա իր խոստման մասին,— ավելացրեց Բենվենուտոն,— դրի՛ր ինձ, Սկոցոնե, և որտեղ էլ լինեմ, կգամ նրա հիշողությունը թարմացնելու։

Այդ ասելով, Բենվենուտոն շանթող մի հայացք նետեց ենթավարպետի վրա, դաշույնը պատյանը դրեց, սեղանից վերցրեց ամուսինների ստորագրած պայմանագրությունը, խնամքով շորս տակ ծալեց, գրպանը դրեց. հետո Պագոլոյին դիմելով, իրեն հատուկ անողոք հեգնանքով ասաց.

— Հիմա, բերեկամս, դու և Կատերինան ամուսիններ եք, բայց միայն մարդկանց առաջ և ոչ աստծու, որովհետև եկեղեցին դեռ չի սրբագործել ձեր միությունը: Այդ իսկ պատճառով քո ներկայությունն այստեղ դեմ է բոլոր օրենքներին, թե՛ աստծու և թե՛ մարդկային: Գնաս բարով, Պագոլո:

Պագոլոն սոսկալի դունատվեց, բայց Չելլինին հրամայարար մատնացույց արեց դուռը, և պատանին հետ-հետ քաշվելով, դուրս գնաց:

— Միայն ձեր դիխում, Բենվենուտո, կարող էր այդպիսի միտք ծագել, — խենթորեն ծիծաղելով ասաց Կատերինան և քանի դեռ Պագոլոն իր հետևից չէր ծածկել դուռը, գոչեց. — Ծն ձեզ բաց եմ թողնում, Պագոլո, որովհետև այդպես է ընդունված, բայց հանգիստ եղեք, երդվում եմ սուրբ աստվածածնով, հենց որ ամուսինս դառնաք, մյուս բոլոր տղամարդիկ, այդ թվում և Բենվենուտոն, ի դեմս ինձ կգտնեն միայն ձեզ անդավաճանորեն նվիրված կնոջ:

Եվ երբ դուռը շրխկոցով փակվեց, Կատերինան զվարթորեն բացականչեց:

— Օ՛, Չելլինի, դու ինձ ամուսին տվեցիր, բայց լավ է որ այսօր ինձ ազատեցիր նրանից: Ինչ արած, այդքանի համար էլ շնորհակալ եմ: Վերջ ի վերջո դու պետք է որևէ բանով հատուցեիր ինձ:

ՎՈՒՄ ԲՍԱՆՄԵԿԵՐՈՐԴ

Պատերազմը շարունակվում է

Վերը նկարագրած տեսարանից երեք օր անց լուվրում մի ուրիշ տեսարան խաղացվեց:

Վրա հասավ երկուշաբթին, այսինքն՝ ամուսնության պայմանագրի ստորագրման համար նշանակված օրը: Առավոտյան ժամը տասնմեկն էր, երբ Բենվենուտոն, նեղի ամրոցից դուրս գալով, ուղղվեց դեպի լուվր և, շնայած իր հուզմունքին, հաստատուն, վճռական քայլքով բարձրացավ շքամուտքի աստիճաններով:

Ընդունարանում, ուր նրան հրավիրեցին, նա տեսավ պրե-

վոյին և կոմս Պ'Օրբեկին, որոնք անկյունում զրուցում էին նոտարի հետ: Սրահի մյուս ծայրում նստած էր Կոլոմբան՝ անշարժ, գունատ, շուրջը ոչինչ չնկատող: Տղամարդիկ, ըստ երևույթին, հեռու էին քաշվել նրանից, որպեսզի աղջիկն իրենց խոսակցութունը չսի:

Դժբախտ Կոլոմբան նստած էր մենակ, գլխահակ, անկենդան հայացքը գետնին հառած:

Չելլինին անցավ նրա մոտով, գնալիս հասցնելով ասել.

— Մի՛ վհատվեք, ես այստեղ եմ:

Այդ ձայնը լսելով, Կոլոմբան ուրախ ճիշ արձակեց ու գլուխը բարձրացրեց: Բայց մինչ նա կհասցնեք դե՞մի բառ արտասանել, արձանագործն անցավ հարևան սրահ:

Ծառան բացեց ծանրադիպակ վարագույրը և Բենվենուտոյին ներս թողեց թագավորի սենյակները:

Չելլինիի բառերը վերստին կյանքի կոչեցին Կոլոմբային: Խեղճ աղջիկն արդեն իրեն համարում էր բոլորի կողմից լռե-ված ու կործանված: Մեսսեր դ'էստուրվիլն այստեղ բերեց աղջկան՝ վշտից կիսամեռ, չնայած աստծու ու Բենվենուտոյի հանդեպ ունեցած նրա ամբողջ հավատին: Կոլոմբան այնպիսի հուսահատության մեջ էր, որ մինչև կառեթ նստելը մի կողմ թողեց ամեն հպարտություն ու սկսեց աղերսել տիկին դ'էտամպին, որ վանք ուղարկի իրեն, խոստանալով ընդմիշտ հրաժարվել Ասկանիոյից, միայն թե շամուսնանա կոմս Պ'Օրբեկի հետ: Բայց դքսուհին ցանկանում էր լիակատար հստակությամբ ստանալ իր հաղթանակից. նրան պետք էր, որ Ասկանիոն հավատա սիրած աղջկա դավաճանությանը. և Աննա դ'էլլին անխղճորեն մերժեց Կոլոմբայի աղերսանքները: Մի այն այն միտքը, որ Բենվենուտոն պատվիրել էր հանգիստ մնալ ու անվրդով, նույնիսկ եթե սկսելու լինեին պսակադրության արարողությունը, փրկեց աղջկան լիակատար հուսահատությունից և ուժ տվեց լուր գնալու, որտեղ թագավորը կեսօրին պետք է ստորագրեր նրա ամուսնության պայմանագրությունը:

Բայց այնտեղ Կոլոմբան կրկին թևաթափ եղավ: Նրան մնում էր երեք հնարավորություն՝ օգնություն ստանալ Բեն-

վենուտոյից, արցունքներով շարժել Ֆրանցիսկ I-ի գուլթը, կամ մեռնել վշտից:

Եվ Բենվենուտոն հայտնվեց: Բենվենուտոն պատվիրեց հուսալ: Կոլոմբան վերստին աշխուժացավ: Մտնելով թագավորի սենյակները, Չելլինին այնտեղ գտավ դքսուհուն միայն: Հենց այդ էլ պետք էր նրան, այլապես ստիպված կլիներ անվանի տիկնոջից տեսակցութիւն խնդրել:

Չնայած իր հաղթանակին, տիկին դ'էտամպը աստիկ անհանգստացած էր: Ճիշտ է, սեփական նամակը վառելուց հետո նա իր դիրքի համար վախենալու ոչինչ չուներ, սակայն դքսուհին սարսափով էր նայում ամեն քայլափոխում իր սերը հետամտող վտանգներին: Եվ միշտ այդպես էր. հենց որ դքսուհուն հանգիստ էին թողնում փառասիրութեան տառապանքները, նրա սիրտն էր սողոսկում սիրո թույնը: Տիկին դ'էտամպը հյուսված էր փառասիրութեանից ու կրքից և երազում էր երջանկացնել Ասկանիոյին, բարձրացնելով նրան, բայց շուտով նկատեց, որ Ասկանիոն թեև արիստոկրատական ծագում ունի (Գաղղի տոհմը, որին նա պատկանում էր, սկիզբ էր առնում հին Ֆլորենտական պատրիկներից), մի բան էր ցանկանում միայն՝ զբաղվել արձեստով: Եթե նա երազում էր որևէ բանի մասին, ապա՝ սկահակի, սափորի կամ արձանի նրբադեղ գծերի, իսկ եթե ցանկանում էր ունենալ ոսկի, ադամանդ ու մարգարիտ՝ աշխարհի այգ գանձերը, ապա դրանցից ծաղիկներ պատրաստելու համար միայն, ավելի սքանչելի ծաղիկներ, քան նրանք, որ ծածկված են կենարար ցողով. նա անտարբեր էր տիտղոսների ու մեծարանքների նկատմամբ, եթե դրանց աղբյուրն իր տաղանդը չէր, եթե դրանք չէին պսակում արվեստագետի իր փառքը: Ի՞նչ պետք է աներ այդ երազողը տիկին դ'էտամպի անհանգիստ, անհարմարավետ աշխարհում: Առաջին իսկ փոթորիկը կշարդեր նրբին ցողունն այն քնքուշ կոկոն ծաղկի, որը խոստանում էր սքանչելի պտուղներ տալ: Գուցե հոգեկան ընկճվածութեան կամ անտարբերութեան պահին նա նույնիսկ հանձնվեր իր արքայական հովանավորուհու խարդավանքներին, բայց դունաստվեր դառնալով, կապրեր սոսկ անցյալի հուշերով: Դքսուհին պատկերացնում էր Ասկանիո-

յին այնպես, ինչպես նա կար՝ քնքուշ ու նրբին հոգու տեր, հանգիստ ու մաքրութիւնն փափագող գեղանի երեխա, որին վիճակված չէր տղամարդ դառնալ: Նա կարող էր լիովին տրվել զգացմունքին, բայց գաղափարին՝ երբե՛ք: Ստեղծված լինելով քնքշութեան ու սիրո համար, նա իսկույն կշախշախվեր կրքերի պայքարում, առօրյա հոգսերի ծանրութեան տակ: Այդպիսի մարդը կարող էր բավարարել տիկին դ՛էտամպի սիրտը, բայց ոչ նրա փառամոլութիւնը:

Հենց այդ մասին էլ մտածում էր դքսուհին, երբ ներս մտավ Բենվենուտոն. ֆավորիտուհու դեմքին կար նրան հանգիստ շտվող մռայլ մտքերի դրոշմը:

Թշնամիները հայացքով շափեցին միմյանց. երկուսի շուրթերին էլ հեգնական ժպիտ հայտնվեց, իսկ աչքերը պարզորեն ասում էին, որ երկուսն էլ պատրաստ են ոչ թե կենաց, այլ մահու կռվի:

«Վերջապես ես հանդիպեցի արժանի թշնամու,— մտածում էր Աննան:— Չելլինին իսկական տղամարդ է: Բայց իմ գերազանցութիւնը նրա համեմատութեամբ անշափ մեծ է, և այդպիսի հաղթանակն ինձ պատիվ չի բերում»:

«Իրո՛ք, տիկին, դուք հաստատակամ կին եք,— ինքն իրեն ասում էր Բենվենուտոն,— և ինձ համար հազվադեպ մենամարտ է այսքան ծանր եղել. բայց ոչինչ, նրբակրթութեան զենքին էլ ես տիրապետում եմ ամենևին ոչ պակաս, քան ցանկացած ուրիշ զենքի»:

Այդ երկու լուռ մենախոսութիւնը շխախտեցին լարված լուծութիւնը: Դքսուհին առաջինը խոսեց:

— Դուք շտապել եք, վարպետ Չելլինի,— ասաց նա բարձրաձայն:— Թագավորն ամուսնութեան պայմանագրութեան ստորագրումը նշանակել է կեսօրին, իսկ հիմա տասնմեկից քառորդ է անց: Թույլ տվեք ներողութիւն խնդրել նորին մեծութեան անունից: Սակայն բանն այն է, որ ոչ թե թագավորն է ուշացել, այլ դուք եք ժամանակից շուտ եկել:

— Ես երջանիկ եմ, տիկի՛ն, որ շտապեցի. դրա շնորհիվ պատիվ ունեմ զրուցել ձեզ հետ մեն-մենակ: Ես ստիպված կլինեի տեսակցութիւն խնդրել ձեզնից, եթե չլիներ այս երջանիկ պատահականութիւնը:

— Այդ ի՞նչ է, Բենվենուտո: Մի՞թե դժբախտության մեջ դուք շողոքորթ եք դարձել:

— Դժբախտությա՞ն: Ո՛ր, տիկին, խոսքն իմ մասին չէ: Սակայն ես պարզապես միշտ առաքինություն եմ համարել շնորհազրկված մարդկանց կողմնակիցը լինել և ահավասիկ ապացույցը, տիկին:

Այդ ասելով, Չելլինին թիկնոցի տակից դուրս բերեց դրքսուհու պատվիրած ոսկե շուշանը, որն ավարտել էր այս առավոտ: Դքսուհի դ՛էտամպը զարմանքի և ուրախության ճիշ արձակեց. դեռ երբեք նա այդպիսի ոքանչելի զարդ չէր տեսել: Ծվ երբեք Շեհերազադեի հեքիաթային այգիներում աճող ծաղիկներն այդքան հրճվանք չէին պատճառել փերիներին:

— Ա՛խ,— բացականչեց նա ու ձեռքը մեկնեց թանկարժեք շուշանին:— Դուք իրոք ինձ խոստացել էիք բերել շուշանը, սակայն եո չէի սպասում:

— Բայց ինչո՞ւ, տիկին: Մի՞թե չէիք վստահում իմ խոսքին: Դուք պարզապես վիրավորում եք ինձ:

— Դե՛հ, եթե ձեր խոսքը վրիժառություն խոստանար և ոչ սիրալիրություն, այգ դեպքում՝ ուրիշ:

— Իսկ դուք անհնարի՞ն եք համարում, որ կարելի է համատեղել այդ երկուսը,— հարցրեց Բենվենուտոն, շուշանը բռնած ձեռքը հետ քաշելով:

— Ծս ձեզ չեմ հասկանում,— պատասխանեց դքսուհին:

— Դուք չե՞ք գտնում, տիկին, որ Ֆրանսիայի շահերին դավաճանելու համար ստացած կանխավճարը սքանչելի տպավորություն կգործի,— շարունակեց Բենվենուտոն, ցույց տալով դքսուհուն ոսկե շուշանի ծաղկաբաժակի մեջ դողացող ադամանդը, որը դքսուհուն նվիրել էր Կարլոս V-ը:

— Դուք խոսում եք հանելուկներով, թանկագին Չելլինի, բայց ցավոք սրտի ես ժամանակ չունեմ դրանք լուծելու. շուտով կգա թագավորը:

— Իսկ ես ձեզ կպատասխանեմ լատինական հիս առածով. «Verba volant, scripta manent»— «Բառերն անցողիկ են, գրերը մնայուն»:

— Մխալվում եք, սիրելի ոսկերիչ. գիրը մոխիր դարձավ: Մի շանացեք վախեցնել ինձ, ես երեխա չեմ: Տվեք ինձ շուշանը, իրավունքով այդ զարդն ինձ է պատկանում:

— Համբերություն, տիկին, ես պետք է զգուշացնեմ, որ շուշանն իմ ձեռքում կախարդական թալիսման է, իսկ ձեռքում՝ կարծեքազրկվի: Իմ բանվածքը շատ ավելի ճարտար է, քան կարող է թվալ առաջին հայացքից: Չէ՞ որ այնտեղ, ուր ամբոխը տեսնում է սոսկ զարդարանք, արվեստագետների համար հաճախ պահված է գաղտնի մտահղացում: Ցանկանո՞ւմ եք, որ ես ցույց տամ իմ մտահղացումը, տիկին: Ավելի դյուրին ոչինչ չկա: Դուք սեղմում եք ահա այս անտեսանելի զսպանակը, վարսանդը բացվում է, և ծաղկաբաժակի հատակում մենք տեսնում ենք ոչ թե որդ, որ երբեմն հանդիպում է կենդանի ծաղիկների ու մարդկային փշացած սրտերի մեջ, ո՛չ, այլ դրա նման և, թերևս, ավելի վատթար մի բան՝ դքսուհի դ'էտամպի անպատվությունը՝ դրոշմված իր իսկ ձեռքով և իր իսկ ստորագրությամբ:

Այդ ասելով, Բենվենուտոն սեղմեց զսպանակը, և շուշանի ծաղկապսակի միջից հանեց մի գրություն:

Հետո նա, առանց շտապելու, բացեց գրությունն ու ցույց տվեց քարսափից գունատված, զայրույթից պապանձված դքսուհուն:

— Դուք չէիք սպասում, այնպես չէ՞, տիկին, — անվրդով հարցրեց Չելլինին, կրկին ծալելով գրությունն ու շուշանի մեջ պահելով: — Բայց եթե դուք ավելի լավ գիտենայիք իմ սովորությունները, ձեզ այդ չէր զարմացնի: Մի անգամ ես արձանի մեջ ձեռնասանդուղք պահեցի, իսկ մի ուրիշ անգամ՝ գեղանի աղջկա. այս անգամ խոսքն ընդամենը մի թղթի կտորի մասին էր և ինձ համար, անշուշտ, դժվար չէր գաղտնարան սարքելը:

— Բայց չէ՞ որ ես իմ ձեռքով ոչնչացրի այդ շարաբաստիկ գրությունը, որն այրվեց աչքիս առաջ. ես տեսա բոցը, շոշափեցի մոխիրը:

— Իսկ վառելուց առաջ կարդացի՞ք գրությունը:

— Ո՛չ: Ինչպիսի՞ անմտություն. ես չկարդացի այն:

— Իզուր, տիկին, այլապես կհամոզվեիք, որ հասարակ

աղջկա նամակը, եթե վառելու լինենք, տալիս է ոչ պակաս մոխիր, քան դքսուհու նամակը:

— Ուրեմն, սրիկա Ասկանիոն խաբե՞ց ինձ:

— Լո՞ւք, լո՞ւք, տիկին: Չկասկածեք այդ առաքինի ու մաքուր երեխային: Ի դեպ, նույնիսկ ձեզ խաբած լինելու դեպքում նա պարզապես նույն դրամով հատուցած կլիներ միայն: Բայց ո՞չ, Ասկանիոն չի խաբել ձեզ: Նա այդպիսի բան չէր անի նույնիսկ հանուն իր փրկության, նույնիսկ հանուն Կոլոմբայի փրկության: Նա ինքը խաբված էր:

— Ո՞վ խաբեց նրան:

— Մի պատանի, այն նույն ուսանող ժակ Օբրին, որը վիրավորել էր վիկոնտ դե Մարմանին: Վիկոնտը, հավանաբար, պատմե՞լ է ձեզ այդ մասին:

— Իսկապես, — մրմնջաց դքսուհին, — Մարմանն ասում էր, որ ինչ-որ ժակ Օբրի փորձում էր մուտք գործել Ասկանիոյի բանտասենյակը, որպեսզի նրանից մի նամակ վերցնի:

— Եվ այդ մասին իմանալով, դուք գնացիք Ասկանիոյի մոտ: Բայց ուսանողներն, ինչպես հայտնի է, ճարպիկ մարդիկ են. ժակ Օբրին ձեզնից առաջ ընկավ: Երբ դուք դուրս էիք գալիս դ՛էտամպ ամրոցից, այդ պահին նա սողոսկեց իր ընկերոջ բանտասենյակը, իսկ երբ դուք այնտեղ մտաք, նա արդեն հասցրել էր հեռանալ:

— Բայց ես ոչ ոքի չտեսա:

— Եթե դուք, տիկին, ավելի ուշադիր լինեիք, անպակունում կնկատեիք խսիրը, որը բարձրացնելով, կհայտնաբերեիք հարևան բանտասենյակը տանող ստորերկրյա անցքը:

— Բայց այդ ամենի հետ ի՞նչ կապ ունի Ասկանիոն:

— Երբ դուք ներս մտաք, նա քնած էր, այնպես չէ՞:

— Այո:

— Ուրեմն, քանի դեռ նա քնած էր, ժակ Օբրին, որին ընկերը մերժել էր տալ ձեր նամակը, Ասկանիոյի գրպանից հանել էր այն ու փոխարենը դրել իր սիրած աղջկա երկտողը: Երարը ձեզ մոլորության մեջ է գցել և դուք կարծել եք, թե

ոչնչացրիք դքսուհի դ'էտամպի նամակը, այնինչ իրականում
այրել եք ժերվեզա Պոպինոյի գրությունը:

— Բայց այդ խարդախ ժակ Օբրին, այդ ռամիկը, որն
անվանի մարդուն սպանելու փորձ է կատարել, թանկ կվճա-
րի ինձ իր հանդգնության հ. մար: Նա բանտում է և դատա-
պարտված է մահվան:

— Նա ազատ է, դքսուհի, և դրա համար ես պարտական
եմ նախ և առաջ ձեզ:

— Ինչպե՞ս:

— Շատ պարզ. շէ՞ որ նա հենց այն խեղճ մարդն է, որին
ներում շնորհելու համար դուք բարեհաճեցիք, ինձ հետ միա-
սին, խնդրել թագավորին:

— Անմի՛տ,— շրթունքները կրծոտելով, շնչաց տիկին
դ'էտամպը, շեշտակիորեն նայելով Չելլինիին և, հուզմուն-
քից շնչահեղձ լինելով, հարցրեց:— Ի՞նչ պայմաններով կհա-
մաձայնեք նամակն ինձ վերադարձնել:

— Թողնում եմ ինքներդ կռահեք, տիկին:

— Ես շուտ կռահողներից չեմ: Ասացե՛ք:

— Դուք կխնդրեք թագավորին համաձայնություն տալ Աս-
կանիոյի ու Կոլոմբայի ամուսնությանը:

— Շա՛տ վատ եք ճանաչում դքսուհի դ'էտամպին, պարոն
ոսկերիչ: Սպառնալիքով չեք ստիպի ինձ հրաժարվել սիրած
մարդուց:

— Դուք պատասխանեցիք առանց մտածելու, տիկին:

— Եվ, այնուամենայնիվ, ես իմ մտադրությունից չեմ
հրաժարվում:

— Թղլլ տվեք ինձ, տիկին, նստել ու խոսել ձեզ հետ
առանց ձևականությունների, անկեղծորեն,— ասաց Բենվե-
նուտոն այն կաշառող անբռնազրոսիկությամբ, որը հատուկ
է ոչ սովորական մարդկանց:— Ես ընդամենը համեստ արձա-
նագործ եմ, իսկ դուք՝ անվանի դքսուհի և, շնայած մեզ բա-
ժանող հսկայական Խարածությանը, մենք կկարողանանք
լիովին հասկանալ միմյանց: Բարի եղեք ամբարտավան թա-
գուհու տեսք շքնդունել, կարիք չկա: Ես չեմ պատրաստվում
վիրավորել ձեզ, այլ ցանկանում եմ միայն որոշ բաներ պար-

զաբանել: Գոռոզամտութիւնն այս դեպքում, ճիշտն ասած, անտեղի է. չէ՞ որ ձեր հպարտութեանը ոչինչ չի սպառնում:

— Զարմանալի մարդ եք, Բենվենուտո, ազնիվ խոսք,— ահամա ծիծաղելով, բացականչեց Աննան:— Դե լավ, խոսեք, ես համաձայն եմ լսել ձեզ:

— Ես արգեն ասացի, դքսուհի,— սառնութեամբ շարունակեց Բենվենուտոն,— որ շնայած իմ և ձեր դիրքի տարբերութեան, մենք կարող ենք լեզու գտնել և նույնիսկ օգտակար լինել միմյանց: Դուք զայրացաք, երբ ես խնդրեցի հրաժարվել Ասկանիոյի նկատմամբ ունեցած ձեր սիրուց, անհնարին համարելով այդ: Եվ ահավասիկ, իմ սեփական օրինակով ես ցանկանում եմ ապացուցել ձեզ հակառակը:

— Զեր սեփական օրինակով:

— Այո, տիկին: Դուք սիրում եք Ասկանիոյին, իսկ ես սիրում էի Կոլոմբային:

— Դո՞ւք:

— Այո: Ես սիրում էի նրան այնպես, ինչպես սիրում են կյանքում մեկ անգամ միայն: Ես պատրաստ էի նրա համար զոհել կյանքս, հոգիս և, այնուամենայնիվ, հանուն Ասկանիոյի հրաժարվեցի նրանից:

— Հիրավի, անշահախնդիր սեր է,— հեղճորեն ասաց դքսուհին:

— Օ՛, տիկին: Ծաղրի առարկա մի դարձնեք տառապանքներս, մի հեղճեք իմ վիշտը: Ես շատ տանջվեցի ու հասկացա, որ Կոլոմբան ինձ համար չէ, ինչպես և Ասկանիոն ձեզ համար չէ, դքսուհի: Լսեք, թե ինչ կասեմ. ես և դուք, եթե այդպիսի համադրումն այնքան էլ չի վիրավորում ձեզ, պատկանում ենք բացառիկ ու տարօրինակ մարդկանց թվին, որոնք ունեն զգացմունքների առանձնահատուկ աշխարհ, առանձնահատուկ կյանք և որոնք հազվադեպ են մերձենում մյուսներին: Մենք երկուսս էլ, տիկին, քուրմեր ենք մեծ ու սուկալի կուռքերի, որոնց ծառայելը վսեմացնում է հոգին, ամբողջից վեր բարձրացնելով մարդուն: Զեր կուռքը փառասիրութիւնն է, իմը՝ արվեստը: Այդ երկու պաշտամունքն էլ խանդոտ են և որքան էլ մեզ տառապանք պատճառեն, ամե-

նուրեք ու միշտ կիշխեն մեզ վրա: Դուք փափագում էիք Ասկանիոյի սերը, որպեսզի ձեզ պսակող թագ դարձնեք այն, ես երազում էի Կոլոմբայի մասին, ինչպես Պոլիփեմոսը՝ Գալաթեայի: Դուք սիրում էիք ինչպես դքսուհի, ես՝ ինչպես արվեստագետ. դուք հետապնդում էիք, ես՝ տառապում էի: Օ՛, շկարծեք, թե ես դատապարտում եմ ձեզ: Ընդհակառակը, ես հիանում եմ ձեր եռանդով, խիզախութեամբ: Եվ ինչ էլ ասելու լինի խաժամուժը, իմ կարծիքով, սքանչելի է տակնուվրա անել ամբողջ աշխարհն իր սիրո ճանապարհը հարթելու համար: Դրա մեջ ես տեսնում եմ կրքի ամենակործան ուժը և ողջունում եմ անխախտ բնավորութեան տեր մարդկանց, որոնք ընդունակ են հերոսութեան ու հանցագործութեան. ողջունում եմ գերմարդկայինը, քանզի ինձ հմայում է այն ամենը, ինչ անսպասելի է, ինչ դուրս է սովորականի շրջանակներից: Եվ այդպես, տիկին, ամբողջ հոգով սիրելով Կոլոմբային, ես հասկացա, որ իմ հպարտ, անսանձ էութեանը հարմար չի գա այդ հրեշտակային, մաքուր հոգին: Եվ Կոլոմբան ինքն էլ սիրեց քնքուշ, անշար Ասկանիոյին. աղջկան կվախեցնեք իմ կտրուկ, խստաշունչ բնավորությունը: Ես սրտիս պատվիրեցի լռել, իսկ երբ սիրտս շհնազանդվեց, օգնության կոչեցի աստվածային արվեստը և նրա հետ մեկտեղ կարողացա հազթահարել այդ անսաստ սերն ու ընդմիշտ ազատվել գրանից: Քանդակագործությունը՝ իմ միակ իսկական մոլությունը, ջերմ համբույր դրոշմեց ճակատիս, և ես խաղաղվեցի: Դուք էլ ինձ նման վարվեք, դքսուհի, մի կործանեք այդ երեխաների երկնային սերը, մի մթազնեք նրանց երանությունը: Իմ և ձեր բաժինն է՝ երկիրն իր բոլոր վշտերով, ճակատամարտերով ու հաղթանակի արբեցուցիչ ուրախութեամբ: Փորձեք սրտի վերքերն ամոքել բավարարված փառամոլության հովանու տակ. կործանեցեք կայսրություններ, եթե այդ ձեզ դուր է գալիս, զվարճանալու համար խաղացեք աշխարհիս թագավորների ու տիրակալների հետ: Նրանք արժանի են դրան, և ես առաջինը կծափահարեմ ձեզ: Բայց խնայեցեք անմեղ երեխաների երջանկությունն ու հանգիստը. նրանք այնքան քնքշորեն են սիրում միմյանց՝ աստժո և սուրբ աստվածածնի օրհնությամբ:

— Ի՞նչ մարդ եք դուք, վարպետ Բենվենուտո Չելլինի: Մինչև հիմա ես չէի ճանաչում ձեզ,— զարմացած ասաց դքսուհին:

— Ես շարքային մարդ չեմ, աստված վկա: Ինչպես և դուք, դքսուհի, բացառիկ կին եք,— ծիծաղելով պատասխանեց Բենվենուտոն իրեն հատուկ պարզասրտությամբ:— Իսկ եթե դուք ինձ չէիք ճանաչում, ուրեմն իմն է գերազանցությունը, որովհետև ես շատ լավ եմ ճանաչում ձեզ, տիկին:

— Հնարավոր է,— պատասխանեց դքսուհին,— բայց ես հիմա հասկացա, որ բացառիկ կանայք կարողանում են սիրել շատ ավելի ուժգնորեն, քան բացառիկ տղամարդիկ: Երանք արհամարհում են գերմարդկային ինքնազոհությունը և մինչև վերջին հնարավորությունը բոլոր միջոցներով պաշտպանում են իրենց սերը:

— Այդպես, ուրեմն, դուք շարունակում եք ընդդիմանալ Ասկանիոյի և Կոլոմբայի ամուսնությա՞նը:

— Ես շարունակում եմ սիրել Ասկանիոյին՝ հանուն ինձ:

— Թող այդպես լինի: Բայց զգուշացեք: Ես ծանր ձեռք ունեմ և իմ դեմ պայքարելը ձեզ էժան չի նստի: Դուք ամեն ինչ կշռադատել եք, այնպես չէ՞: Եվ կտրականապես հրաժարվում եք համաձայնություն տալ Ասկանիոյի և Կոլոմբայի ամուսնությանը:

— Կտրականապե՛ս,— պատասխանեց դքսուհին:

— Լա՛վ: Ուրեմն գրավենք մեր դիրքերը,— բացականչեց Բենվենուտոն:— Պատերազմը շարունակվում է:

Այդ միջոցին դուռը բացվեց, և ծառան ազդարարեց թագավորի գալուստը:

ԳԼՈՒԽ ՔԱՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ

Սիրով ամուսնություն

Ներս մտավ Ֆրանցիսկ I-ը, Դիանա դե Պուատյեի թևը մտած, որի հետ քիչ առաջ այցելության էր գնացել հիվանդ որդուն: Դիանան, ատելությամբ առաջնորդվելով, բնազդաբար զգում էր, որ իր մրցակցուհուն ստորացում է սպառնում

և շէր ցանկանում բաց թողնել այդ հաճելի տեսարանը:

Իսկ Ֆրանցիսկ I-ը ոչինչ չէր տեսնում, ոչինչ չէր լսում, ոչինչ չէր կասկածում. նա կարծում էր, թե տիկին դ'էտամպն ու Բենվենուտոն վերջնականապես հաշտվել են և, տեսնելով նրանց կողք կողքի նստած, խաղաղ զրուցելիս, երկուսին էլ ողջունեց ժպիտով ու գլխի շարժումով:

— Բարև, գեղեցկության թագուհի: Բարև, բոլոր արվեստագետների արքա,— ասաց նա:— Այդ ինչի՞ մասին էիք զրուցում և այն էլ այդքան աշխուժորեն:

— Ա՛խ, ձերդ մեծություն: Մենք պարզապես խոսում էինք քաղաքականությունից,— պատասխանեց Բենվենուտոն:

— Ցանկալի է իմանալ, թե ի՞նչ հարց էր գրավել ձեր լուսավորյալ ուշադրությունը:

— Այն հարցը, որի մասին այժմ խոսում է ամբողջ աշխարհը,— շարունակեց Բենվենուտոն:

— Հասկանում եմ. Միլանի դքսության հարցը:

— Այո՛, սիր:

— Եվ ի՞նչ է ձեր կարծիքն այդ մասին:

— Ես և դքսուհին տարբեր կարծիքներ ունենք. դրանցից մեկն այն է, որ կայսրը, խախտելով իր խոստումը, պատրաստվում է Միլանի դքսությունը հանձնել ձեր որդուն՝ Կարլոսին:

— Եվ այդպես մտածողն ո՞վ է:

— Կարծեմ դքսուհին:

Տիկին դ'էտամպը սաստիկ գունատվեց:

— Եթե կայսրն այդպես վարվի՝ նրա կողմից դա կլինի ստոր գավաճանություն,— ասաց Ֆրանցիսկ I-ը,— բայց նա այդպիսի բան չի անի:

— Եթե նույնիսկ նա այդ շանի,— խոսակցությանը խառնրվեց Դիանան,— Եպա ամենևին ոչ այն պատճառով, որ բարի խորհրդատուներ քիչ է ունեցել: Համենայն դեպս, ասեկոսներն այդ են ապացուցում:

— Կցանկանայի իմանալ, գրողը տանի, ո՞վ կարող էր նրան այդպիսի խորհուրդ տալ.— բացականչեց Ֆրանցիսկ I-ը:

— Ի՛ սեր աստծո, մի անհանգստացեք, սի՛ր,— առար-

կեց Բենվենուտոն:— Չէ՞ որ խոսակցութիւնը զուտ վերացական էր, և մենք պարզապես ենթադրութիւններ էինք անում: Դե՛հ, ես և տիկին դ'էտամպն Ի՞նչ քաղաքագետներ ենք, ձերդ մեծութիւն: Դքսուհին իսկական կին է ու հոգ է տանում միայն իր շրջազգեստնե: Ի մասին, թեև նրա գեղեցկութեան առկայութեամբ այդ ամենևին ավելորդ է: Իսկ ես, ձերդ մեծութիւն, բնատուր արձանադորժ եմ և արվեստից բացի ուրիշ ոչնչով չեմ հետաքրքրվում: Այդպես չէ՞, դքսուհի:

— Իսկ գլխավորը, թանկագին Չելլինի,— ասաց Ֆրանցիսկ I-ը,— դուք և դքսուհին աշխարհի մեծագույն գանձերի տերն եք և հարկ չունեք նախանձելու նույնիսկ նրան, ում պատկանում է Միլանի դքսութիւնը: Դքսուհին գեղեցկութեան թագուհի է, դուք՝ հանճարների արքա:

— Արքա՞, սիր:

— Այո՛: Եվ եթե ձեր զինանիշի վրա չկա երեք շուշան, որոնք զարդարում են իմ զինանիշը, ապա դուք ունեք մեկը, որն այժմ ձեր ձեռքին է և որն ինձ թվում է բնութեան ծոցում կամ զինանիշի ֆոնի վրա երբևէ եղած բոլոր շուշաններից առավել գեղեցիկը:

— Այս շուշանը, սի՛ր, պատկանում է դքսուհուն և պատրաստված է նրա պատվերով, իմ աշակերտ Ասկանիոյի ձեռքով, բայց Ասկանիոն շհասցրեց գործը վերջացնել, և ես, հասկանալով դքսուհու ցանկութիւնը հնարավորին շափ շուտ ստանալու այս սքանչելի զարդը, ինքս ավարտեցի այն, ի սրտե հուսալով, որ շուշանն իմ և դքսուհու հաշտութեան խորհրդանիշը կդառնա, քանզի օրերս մենք համերաշխութեան երդում տվինք ձերդ մեծութեան ներկայութեամբ:

— Ի՞նչ սքանչելի զարդ է,— բացականչեց թագավորը, ձեռքը մեկնելով ոսկե ծաղկին:

— Այդպե՛ս եք կարծում, ձերդ մեծութիւն,— ասաց Բենվենուտոն, իբրև թե պատահմամբ ձեռքը հետ քաշելով:— Աշխատանքն արժանի է, որ դքսուհին առատաձեռն վարձատրի պատանի վարպետին, այնպես չէ՞:

— Ես հենց այդպես էլ պատրաստվում եմ վարվել,— պա-

տասխանեց տիկին դ'էտամպը,— ըստ որում, իմ պարզեին կնախանձի ինքը՝ թագավորը:

— Բայց չէ՞ որ ձեզ հայտնի է, տիկին, որ շնայած պարզեի արժեքին, Ասկանիոն բոլորովին այլ բան է նախընտրում: Ինչ արած, դքսուհի, մենք՝ արվեստագետներս, քմահաճ մարդիկ ենք և հաճախ շենք գնահատում այն, ինչին, ձեր իսկ խոսքով, կնախանձեր ինքը՝ թագավորը:

— Եվ, այնուամենայնիվ, Ասկանիոն ստիպված կլինի բավարարվել իմ առաջարկած վարձատրությամբ,— զայրույթից շիկնելով, պատասխանեց տիկին դ'էտամպը:— Ես արդեն ասացի ձեզ, Բենվենուտո, որ որոշումս չեմ փոխի:

— Այդ դեպքում դու որպես դադտնիք կասես ինձ, թե ինչ է ցանկանում Ասկանիոն և, եթե հնարավոր է, կաշխատենք դործը հարթել,— կրկին ձեռքը ծաղկին մեկնելով, ասաց Ֆրանցիսկ I-ը:

— Ավելի ուշագիտ զննեք այս զարդը,— ասաց Բենվենուտոն, Ֆրանցիսկ I-ին տալով ոսկե ծաղիկը:— Լավ տընտղեք ամեն մի ծաղկաթերթիկը և կհասկանաք, որ այսպիսի դուխգործոցի համար արժանի վարձատրություն չկա:

Այդ բառերն արտասանելով, Բենվենուտոն դքսուհուն հառնեց խորաթափանց հայացքը, բայց տիկին դ'էտամպն այնքան լավ էր տիրապետում իրեն, որ աչքն էլ չթարթեց, երբ շուշանը հայտնվեց Ֆրանցիսկ I-ի ձեռքում:

— Իրո՞ք սքանչելի գործ է,— պատասխանեց թագավորը:— Բայց որտեղի՞ց եք ձեռք բերել այս հոյակապ ադամանդը, որից ծաղկաբաժակն այսպես շողշողում է:

— Զգիտեմ, ձերդ մեծություն,— զմայլելի պարզամտությամբ պատասխանեց Զելլինին:— Ադամանդն իմ աշակերտին տվել է ինքը՝ դքսուհին:

— Ես այս քարը երբեք չեմ տեսել ձեզ մոտ, դքսուհի: Որտեղի՞ց է սա:

— Որտեղի՞ց, սիր: Հավանաբար այնտեղից, որտեղից ստացվում են և մյուս անգամանդները. Գուզերաթի կամ Հուկոնդի ադամանդաբեր հողաշերտերից:

— Օ՛, ձերդ մեծություն, այս ադամանդն իր պատմությունն ունի և, եթե կամենում եք, ես կպատմեմ ձեզ,— առա-

շարկեց Բենվենուտոն:— Այս քարն իմ վաղեմի բարեկամն է. սա երիցս եղել է իմ ձեռքում: Առաջին անգամ ես այս ադամանդն ադուցեցի նորին սրբազանություն պապի թագին, որը սքանչելիորեն զարդարեց այն, հետո Կլիմենտ VII-ի կարգադրությամբ ղետեղեցի մաշտոցի կափարիչի վրա, որը նորին սրբազանությունը նվիրեց կայսր Կարլոս V-ին, իսկ Կարլոս V-ը պատվիրեց քարը դնել իր մատանուն, ցանկանալով, հավանաբար, համենայն դեպս ձեռքի տակ ունենալ չէ՞ որ այս քարը մեկ միլիոնից ավելի արժե: Չերդ մեծությունը, թերևս, նկատած կլինի կայսեր մատանին:

— Իսկապե՛ս,— բացականչեց թագավորը:— Մեր առաջին հանդիպման ժամանակ, Ֆոնտենբլոյում, ես նրա մատին տեսա այս քարը: Բայց ինչպե՞ս է սա ձեր ձեռքն ընկել, դժբասունհի:

— Այո՛, այո՛, պատմեք, խնդրում եմ, թե ինչպես է ձեր ձեռքն ընկել կայսրին պատկանող այս թանկարժեք քարը,— ուրախությունից աչքերը փայլեցնելով, ասաց Դիանան:

— Եթե այդ հարցը ձեզ տալու լինեին, տիկին,— նկատեց դքսուհի դ'էտամպը,— դուք, անշուշտ, չէիք դժվարանա պատասխանել. չէ՞ որ շատ ինտիմ բաներ դուք պատմում եք ոչ միայն ձեր խոստովանահորը:

— Բայց դուք այդպես էլ չպատասխանեցիք թագավորի հարցին, տիկին,— ասաց Դիանա դե Պուատյենն:

— Այնուամենայնիվ, այս ադամանդն ինչպե՞ս է ձեր ձեռքն ընկել,— կրկնեց Ֆրանցիսկը:

— Հարցրեք Բենվենուտոյին, նա ձեզ կպատմի,— պատասխանեց դքսուհին, վերջին մարտահրավերը նետելով իր հակառակորդին:

— Ասա՛, Չելլինի, և մի՛ ձղձդիր, ես ձանձրացա սպասելուց,— հրամայեց թագավորը:

— Կա՛վ,— պատասխանեց Բենվենուտոն:— Պետք է խոստովանեմ, որ այս քարը տեսնելուն պես, ինձ էլ տարօրինակ կասկածներ համակեցին: Դուք գիտեք, ձերդ մեծություն, որ ես և դքսուհին մի ժամանակ թշնամի էինք. դե՛հ, ես էլ ցանկանում էի որևէ գաղտնիք իմանալ, որը կնվաստացներ նրան ձեր աչքում: Ես սկսեցի որոնումներս և իմացա...

— Ի՞նչ իմացար:

Չելլինին մի թուուցիկ հայացք նետեց դքսուհու վրա և տեսավ, որ նա ժպտում է: Այդպիսի ինքնատիրապետումը, որն արձանագործին էլ հատուկ էր, դուր եկավ նրան և մի հարվածով մենամարտն ավարտելու փոխարեն, նա որոշեց երկարաձգել այն, ինչպես իր ուժերին վստահ մարտիկն արժանի հակառակորդի հանդիպելիս ցանկանում է փայլել ուժով ու ճարպկությամբ:

— Եվ ի՞նչ իմացար,— պնդեց թագավորը:

— Ես իմացա, որ դքսուհին պարզապես զնել է այս ադամանդը վաշխառուից: Ի դեպ, սիր, դուք պետք է իմանաք, որ Ֆրանսիա ոտք դնելուց հետո կայսրը շատ փող ծախսեց և ստիպված էր նույնիսկ գրավ դնել իր ադամանդները: Իսկ տիկին դ'էտամպն, արքայական առատաձեռնությամբ, զնում էր այն, ինչ կարլոսը՝ աղքատության հետևանքով, պահպանել չէր կարող:

— Սակայն դա ամենևին վատ չէ, ազնիվ խոսք... — բացականչեց Ֆրանցիսկ I-ը, կրկին շոյված՝ թե՛ որպես սիրեկան և թե՛ որպես թագավոր: — Բայց, թանկագին դքսուհի,— ավելացրեց նա, տիկին դ'էտամպին դիմելով,— դուք հավանաբար սնանկացել եք այս քարը դնելու համար, և մենք մեր պարտքն ենք համարում հատուցել այդ ծախսը: Չմոռանաք, որ Ֆրանցիսկ I-ը ձեր պարտապանն է: Իսկապես, քարը հրաշալի է, և ես կկամենայի, որ դուք այն ստանայիք ոչ թե կայսրից, այլ՝ Ֆրանսիայի թագավորից:

— Շնորհակալ եմ, Չելլինի,— շնչաց տիկին դ'էտամպը: — Ես սկսում եմ հավատալ, որ մենք իրոք կկարողանանք հասկանալ միմյանց:

— Այդ ինչի՞ մասին եք քչփշում,— հարցրեց թագավորը:

— Օ՛, դատարկ բան, սիր: Ես ներողություն խնդրեցի դքսուհուց կասկածներիս համար, իսկ նա բարեհաճեց ներել ինձ. ես առավել բարձր եմ զնահատում նրա մեծահոգությունը, քանզի այդ առաջին կասկածից հետո ծագեց երկրորդը՝ ավելի լուրջը:

— Եվ ի՞նչ կասկած էր այդ,— հարցրեց Ֆրանցիսկ I-ը:

Իսկ Դիանան, որին բնավ չէր հիմարացրել այդ կատակ-
երգությունը, քանզի ատելությունը խորաթափանց էր դարձ-
րել նրան, հայացքը գամեց հաղթանակ տանող իր ախոյա-
նուհուն:

Դքսուհին հասկացավ, որ մենամարտն անդադրում հա-
կառակորդի հետ դեռ ավարտված չէ և նրա դեմքին վախի
ստվեր երևաց: Բայց հարկ է պատշաճը հատուցել գեղեցկու-
հու ինքնատիրապետմանը, վախի արտահայտությունն ան-
միջապես շքացավ: Դեռ ավելին, օգտվելով թագավորի վայր-
կենական ցրվածությունից, դքսուհին կրկին փորձեց նրա
ձեռքից վերցնել շուշանը: Սակայն Բենվենուտոն, ասես պա-
տահմամբ, կանգնեց նրա և Ֆրանցիսկ I-ի միջև:

— Ինչ կասկած: Օ՛, հիրավի, հրեշավոր, — ժպտալով
ասաց արվեստագետը: — Ես պարզապես ամաչում եմ դրա
համար և չգիտեմ՝ իմ կողմից հանդգնություն չէ՞ր լինի ար-
դյոք այդ մասին խոսելը: Միայն ձերդ մեծության խստագույն
հրամանը կարող է ստիպել ինձ...

— Ես ձեզ հրամայում եմ: Ասացե՛ք, — բացականչեց թա-
գավորը:

— Լա՛վ: Նախ և առաջ անկեղծորեն խոստովանում եմ,
թեև դրա պատճառը գուցե արվեստագետի պարզամիտ փա-
ռասիրությունն է, որ ես շատ զարմացա, երբ դքսուհին իմ
աշակերտին տվեց այնպիսի պատվեր, որը կարող էր եր-
ջանկացնել ամեն մի վարպետի: Դուք հիշում եք իմ աշակեր-
տին՝ Ասկանիոյին, սիր: Գեղեցի՛կ պատանի է: Եվ երգվում
եմ, նա կարող էր սքանչելի մոդել լինել էնդիմիտի արձանի
համար:

— Հետո՞ ինչ, — անհամբերությամբ հարցրեց թագավորը,
որի սիրտը կասկած ընկավ:

Այս անգամ տիկին դ՛էտամպը, չնայած ամբողջ ինքնա-
տիրապետմանը, չկարողացավ իր տառապանքները թաքցնել:
Նա Դիանա դե Պուատյեի աչքերում պարզորեն կարդում էր
չարանենգ հետաքրքրասիրություն և, բացի այդ, շատ լավ
գիտեր, որ եթե Ֆրանցիսկ I-ը ընդունակ է ներել նրա պե-
տական դավաճանությունը, ապա սիրո անհավատարմությու-
նը՝ երբեք չի ների:

Իսկ Բենվենուտոն, ասես դքսուհու վախը շնկատելով, շարունակեց.

— Այդպես ուրեմն, սի՛ր, իմ Ասկանիոյի գեղեցկութիւնը մտաբերելով, ես մտածեցի... Ներեցեք, գուցե ֆրանսիացիներին մի քիչ հանդուդն կթվա իմ ենթադրութիւնը, բայց ես դատում եմ հայրենիքիս՝ Իտալիայի բարքերից ելնելով, որտեղ արքայադստրերն, անկեղծ ասած, սիրո հարցերում պահում են իրենց հասարակ մահկանացուների նման... և այդպես, ես մտածեցի, որ այն զգացմունքը, որից զրդված դքսուհին այդ պատվերն Ասկանիոյին է հանձնարարել, ընդհանուր ոչինչ շունի գեղեցիկ արվեստը սիրելու հետ...

— Վարպետ Չելլինի,— ավելի մոայլվելով, ընդմիջեց նրան Ֆրանցիսկ I-ը,— մտածեք, թե ինչ եք ասում:

— Ես նախապես ներողութիւն ինդրեցի հանդիմութեանս համար, սիր, և նույնիսկ խնդրեցի, որ ձերդ մեծութիւնը թույլ տա ինձ լռել:

— Ես վկա եմ, որ դուք ինքներդ հրամայեցիք նրան խոսել,— միջամտեց Դիանան:— Իսկ հիմա, երբ նա սկսեց...

— Երբեք ուշ չէ լռելը, եթե զիտես, որ ստում ես,— առարկեց տիկին դ'էտամպլ:

— Եթե կամենում եք, դքսուհի, ես կլռեմ,— առաջարկեց Բենվենուտոն:— Դրա համար բավական է ձեր մի խոսքը:

— Բայց ես ցանկանում եմ, որ նա շարունակի: Դուք իրավացի եք, Դիանա, կան բաներ, որոնք պետք է մինչև վերջ հասցնել,— ասաց թագավորը, աչքը շկտրելով դքսուհուց ու Բենվենուտոյից:— Այդպես ուրեմն, պարոն, շարունակեք:

— Այդ ամենը ենթադրութիւններ էին միայն, մինչև որ մի պարմանալի հայտնագործութիւն նոր նյութ տվեց ինձ կռահումների համար:

— Ի՞նչ հայտնագործութիւն,— միաբերան բացականչեցին թագավորն ու Դիանա դե Պուատյեն:

— Աս շարունակում եմ,— կիսաձայն շշնջաց Բենվենուտոն, ղիմելով տիկին դ'էտամպլին:

— Սիր, մինչև նա պատմում է իր երկար պատմութիւնը, ինչո՞ւ շուշանք ձեր ձեռքում մնա,— ասես Բենվենուտոյի

խոսքերը շլեկով, նկատեց դքսուհին:— Զնոր մեծութունն այնպես է վարժվել գայիստնին ու այնքան ամուր է բռնում այն, որ ես, ճիշտն ասած, վախենում եմ, թե հանկարծ կջարդի այդ քնքուշ ծաղիկը:

Եվ դքսուհին, միայն իրեն հատուկ ժպիտով, ձեռքը մեկնեց շուշանին:

— Ներեցեք, դքսուհի,— մեջ ընկավ Բենվենուտոն,— բայց այս ծաղիկն իմ պատմության մեջ կարևոր դեր է խաղում, ուստի թույլ տվեք պատմությունս պարզաբանելու համար...

— Ուրեմն, շուշանը կարևոր դե՞ր է խաղում պատմության մեջ,— բացականչեց Դիանան, կայծակի արագությամբ թազավորի ձեռքից խլելով ոսկե ծաղիկը:— Այդ դեպքում տիկին դ'էտամպն իրավացի է. եթե այդ պատմությունը գեթ մասամբ հաստատում է կասկածներս, ապա շատ ավելի լավ կլինի, որ ծաղիկն ինձ մոտ մնա: Չէ՞ որ դիտավորությամբ, կամ առանց որևէ դիտավորության, գուցե պարզապես ինքնատիրապետումը կորցնելով, դուք, ձերդ մեծութուն, իրոք կարող եք ջարդել այն:

Տիկին դ'էտամպը, մոտալուտ կործանումը նախազգալով, սոսկալի գունատվեց. նա բռնեց Բենվենուտոյի ձեռքը և արդեն պատրաստվում էր ինչ-որ բան ասել, բայց ճիգ գործադրեց իր վրա, բաց թողեց արվեստագետի ձեռքն ու շրթունքները սեղմեց:

— Ասացեք ինչ որ կամենում եք,— ատամների արանքից նետեց նա,— ասացե՛ք...— Եվ հազիվ լսելի ձայնով ավելացրեց.— Եթե կհամարձակվեք:

— Այո, այո, շարունակեք, վարպետ, բայց զգույշ եղեք և ավելորդ բան չասեք,— նկատեց Ֆրանցիսկ I-ը:

— Իսկ դուք, տիկին, զգույշ եղեք և շատ երկար չլռեք,— շշուկով դքսուհուն դիմեց Բենվենուտոն:

— Շո՛ւտ: Մենք սպասում ենք,— հետաքրքրասիրությունից այրվելով, բացականչեց Դիանա դե Պուատյեն:

— Կա՛վ, ես շարունակում եմ: Պատկերացրեք, սիր, պատ-



կերտցրեք, տիկին, պարզվում է, որ դքսուհին և Ասկանիսն նամակագրութիւն ունեին...

Դքսուհին այնպիսի տեսք ուներ, ասես զենք էր փնտրում, Չելլինիին խոցելու համար:

— Նամակագրութիւն՞ն,— հարցրեց թագավորը:

— Այո՛, նամակագրութիւն: Եվ ամենահետաքրքիրն այն է, որ խեղճ ենթավարպետի և դքսուհու այդ նամակագրութիւնը սիրային էր:

— Ապացույցնե՛ր, վարպետ Չելլինի: Հուսով եմ, որ ապացույցներ ունեք,— կասաղած բացականչեց թագավորը:

— Անկասկած, սի՛ր,— պատասխանեց Բենվենուտոն:— Դուք հասկանում եք, ձերդ մեծութիւն, ես երբեք սիրտ չէի անի այդպիսի կասկած հայտնել, եթե ձեռքումս ապացույցներ չունենայի:

— Դե՛հ, ո՞ւր են այդ ապացույցները,— բացականչեց թագավորը:

— Ներեցեք, ձերդ մեծութիւն, ես սխալվեցի, ասելով, որ ապացույցներն իմ ձեռքում են: Դրանք քիչ առաջ ձերդ մեծութեան ձեռքում էին:

— Իմ ձեռքո՞ւմ,— զարմացավ թագավորը:

— Այո՛, Իսկ հիմա տիկին դե Պուատյեի ձեռքում են:

— Ի՞մ,— բացականչեց Դիանան:

— Այո՛,— անվրդով շարունակեց Բենվենուտոն. նա էր միայն, որ պահպանել էր ստունասրտութիւնը, քանզի թագավորը համակված էր զայրույթով, դքսուհին մահացու սարսափ էր ապրում, իսկ Դիանա դե Պուատյեն այրվում էր մըրցակցուհու նկատմամբ ունեցած ատելութիւնից:— Այո, սիր, ապացույցները շուշանի մեջ են:

— Շուշանի մե՞ջ,— բացականչեց թագավորը, Դիանայի ձեռքից վերցնելով ծաղիկն ու զննելով մեծագույն ուշադրութեամբ, որն այս անգամ ընդհանուր ոչինչ չուներ արվեստի նկատմամբ ունեցած սիրո հետ:— Շուշանի մե՞ջ, ասում եք:

— Այո՛, սի՛ր, շուշանի մեջ,— հանգիստ կրկնեց Չելլինին:— Դուք, դքսուհի, գիտեք, որ այդ ապացույցներն այնտեղ են,— բազմանշանակալից շարունակեց նա, շրջվելով դեպի հուզմունքից շնչահեղձ լինող տիկին դ՛էտամպը:

— Ես դիջում եմ,— շնչաց դքսուհին:— Կոլումբան չի՛
ամուսնանա Կոմսի հետ:

— Այդ քիչ է,— նույնպես շշուկով պատասխանեց Չել-
լինին:— Նա պետք է ամուսնանա Ասկանիոյի հետ:

— Երբե՛ք,— առարկեց տիկին դ'էտամպը:

Մինչդեռ թագավորը շարունակում էր ձեռքում պտտել
ճակատագրական ծաղիկը, առավել զայրանալով ու հուզվե-
լով, քանզի չէր կարող բացահայտորեն արտահայտել իր
զգացմունքները:

— Ապացույցները շուշանի մեջ են,— կրկնում էր նա:—
Շուշանի մեջ: Բայց ես այստեղ առանձնահատուկ ոչինչ չեմ
տեսնում:

— Ձերդ մեծութուն, դուք երբեք ոչինչ չեք գտնի, չիմա-
նալով գաղտնի փակը, որի օգնությամբ ծաղիկը բացվում է:

— Ուրեմն գաղտնի փա՛կ կա: Անմիջապես բացե՛ք այն,
այլապե՛ս...

Ֆրանցիսկ I-ը մի շարժում արեց, ասես պատրաստվելով
կոտրել ծաղիկը. երկու կանայք ճիշտ արձակեցին: Թագավորը
զսպեց իրեն:

— Օ՛, սիր, ափսոս է փշացնել այդպիսի սքանչելի դար-
դը,— բացականչեց Դիանան:— Տվեք ինձ այդ ծաղիկը, և ես
երաշխավորում եմ, որ կգտնեմ փակը, եթե այն գոյություն ունի:

Եվ իր նրբին, ճկուն մատներով, որոնք ասես ավելի փութ-
կոտ էին դարձել ատելության ազդեցության տակ, Դիանան
սկսեց շոշափել ոսկե ծաղիկի բոլոր ծալքերն ու ոլորքները:
Իսկ դքսուհի դ'էտամպը, հուզմունքից ուժասպառ, խելացնոր
աչքերով հետևում էր նրա ամեն մի շարժումին: Սկզբում
Դիանայի բոլոր փորձերն ապարդյուն էին:

Վերջապես, երջանիկ պատահականության կամ խանդից
սրված խորաթափանցության շնորհիվ, Դիանան սեղմեց ան-
տեսանելի զսպանակը: Շուշանն անմիջապես բացվեց:

Երկու կանայք կրկին բարձրաձայն ճիշտ արձակեցին. մե-
կը՝ յուրաքանչյուրի, մյուսը՝ վախի: Տիկին դ'էտամպը նետվեց
դեպի Դիանան, որպեսզի նրանից խլի ծաղիկը, բայց Բեն-
վենուտոն, մի ձեռքով հետ պահելով նրան, մյուսով ցույց

տվեց շուշանից հանած ճակատագրական նամակը: Արագորեն մի հայացք նետելով ծաղկաբաժակի մեջ, տիկին դ՛էտամպը տեսավ, որ գաղտնարանը դատարկ է:

— Ես ամեն ինչի համաձայն եմ,— ընկճված ձայնով ասաց դքսուհին, անզոր լինելով շարունակել պայքարը:

— Երգվում եք ավետարանով,— հարցրեց Բենվենուտոն:

— Երգվում եմ:

— Իսկ ո՞ւր են ձեր այդ ապացույցները,— վարպետ Չելլինի,— անհամբերությամբ հարցրեց թագավորը:— Ես ծաղկի մեջ տեսնում եմ միայն հմտորեն սարքված ոչ մեծ մի բացվածք և ուրիշ ոչինչ:

— Ճի՛շտ է, ձերդ մեծություն, այստեղ ոչինչ չկա,— հաստատեց Բենվենուտոն:

— Բայց առաջ, թերևս, եղել է,— նկատեց Դիանան:

— Իրավացի եք, տիրուհի,— համաձայնվեց Չելլինին:

— Իսկ դուք չե՞ք մտածել, պարոն, որ նման կատակները կարող են շատ թանկ նստել ձեզ վրա: Չեղնից շատ ավելի զորեղ մարդիկ դաժանորեն հատուցել են ինձ հետ խաղ խաղալու փորձի համար:

— Հավատացեք, սիր, ես անշափ կվշտանայի, եթե շարժելի ձեր դայրույթը,— միանգամայն հանգիստ պատասխանեց Չելլինին:— Բայց, արդարև, ես ոչ մի վատ բան չեմ տեսել և հուսով եմ, որ դուք, ձերդ մեծություն, լուրջ շնորհունեցիք այս կատակը: Մի՞թե հնարավոր եք համարում, որ ես այդպիսի թեթևություններ այդքան ծանր մեղադրանք բարդեմ դքսուհու վրա: Տիկին դ՛էտամպը, եթե կամենում եք, կարող է ցույց տալ ձեզ դադոնարանից հանած նամակը, որի մեջ իրոք խոսվում է սիրո մասին, բայց Ասկանիոյի սիրո՝ հանգեպ ազնվազարմ մի օրիորդի: Առաջին հայացքից այդպիսի սերը կարող է խելագարություն թվալ, բայց Ասկանիոն, ինչպես ամեն մի ճշմարիտ արվեստագետ, ենթադրել է, որ սքանչելի ստեղծությունն արժանի է սքանչելի աղջկա: Նա այս շուշանն օգտագործել է որպես սիրո պատգամաբեր և նրա մեջ նամակ է դրել, որով դիմում է տիկին դ՛էտամպին, ինչպես նախախնամությունը, օգնություն աղերսելով նրանից: Բայց չե՞ որ, ինչպես գիտեք, սիր, նախախնամությունն

ամենազոր է. և կարծում եմ, որ դուք շեք զայրանա տիկին դ'էտամպի վրա, քանի որ այդ բարի գործը կատարելով, նա դրան մասնակից կդարձնի Ֆրանսիայի թագավորին: Ահա և ամբողջ հանելուկը, ձերդ մեծություն: Իսկ եթե սերձախոսության իմ վարժությունները վիրավորել են ձեզ, մեծահոգաբար ներեցեք: Մտաբերեք, ձերդ մեծություն, որ միշտ ինձ թույլ եք տվել ձեր ներկայությունամբ լինել պարզ ու անբռնազրոսիկ:

Այդ լուրը, համարյա խիստ խոսքն իսկույն փոխեց ամբողջ իրադրությունը: Չելլինիի խոսելու ընթացքում Գիանայի դեմքը գնալով ձգվում էր, տիկին դ'էտամպի դեմքն, ընդհակառակը, պայծառանում, իսկ Ֆրանցիսկ I-ի տրամադրությունը կամաց-կամաց լավացավ և ուրախ ժպիտ հայտնեց վեց նրա դեմքին:

— Ներեցեք, թանկագին դքսուհի,— բացականչեց նա:— Աղաչում եմ, ներեցեք ինձ, որ մի վայրկյան կասկածի տակ առա ձեր հավատարմությունը: Ասացեք, ինչո՞վ կարող եմ քավել մեղքս և վերդարձնել ձեր բարեհաճությունը:

— Նրանով միայն, ձերդ մեծություն, որ ողորմածաբար կատարեք այն խնդիրքը, որով ուզում է դիմել ձեզ դքսուհին,— ֆավորիտուհու փոխարեն պատասխանեց Բենվենուտոն:

— Չելլինի, դուք դիտեք իմ ցանկությունը: Ինքներդ հայտնեք թագավորին,— ասաց տիկին դ'էտամպը շատ ավելի սիրովիր, քան կարող էր սպասել արձանազործը:

— Ինչ արած, եթե տիկին դ'էտամպն ինձ հանձնարարում է իր միջնորդը լինել, թույլ տվեք ասել, սիր, որ նա խընդրում է ձեր ամենազոր միջամտությունն իմ դժբախտ Ասկանիոյի սիրային գործերին:

— Հաճույքով կմիջամտեմ,— ծիծաղելով բացականչեց թագավորը:— Ես ի խորոց սրտի երջանկություն եմ ցանկանում այդ համակրելի ենթավարպետին: Ի՞նչ է հարսնացուի անունը:

— Կոլոմբա դ'էստուրվիլ, սիր:

— Կոլոմբա դ'էստուրվիլ,— բացականչեց Ֆրանցիսկ I-ը:

— Չմոռանաք, ձերդ մեծություն, որ այդ շնորհի մասին ձեզ խնդրում է դքսուհի դ'էտամպը... Հաստատեք, որ այգպես է,— դքսուհուն դիմեց Բենվենուտոն, գրպանից կրկին հանելով շարաքաստիկ նամակը:— Հակառակ դեպքում նորին մեծությունը կարող է մտածել, թե դուք այդ խնդիրքով դիմում եք պարզապես ինձ նեղացրած շիինելու համար:

— Դուք իրո՞ք ցանկանում եք այդ ամուսնությունը, տիկին,— հարցրեց Ֆրանցիսկ I-ը:

— Այո, սիր, ցանկանում եմ,— շշնջաց դքսուհին:— Ի սրտե ցանկանում եմ...

Տիկին դ'էտամպին հարկադրելու համար, որ ավելի համողիչ դարձնի իր խնդիրքը, Բենվենուտոն ստիպված եղավ մի անգամ էլ ցույց տալ նամակի ծայրը:

— Բայց ես չգիտեմ,— նկատեց Ֆրանցիսկ I-ը,— թե պրևոն կհամաձայնի՞ արդյոք իր փեսան անվանել ազգ ու տոհմ շունեցող մի մարդու:

— Նախ և առաջ, սիր,— առարկեց Չելլինին,— պրևոն, որպես հումառարիմ հպատակ, պետք է կամենա սոսկ այն, ինչ կամենում է նրա թագավորը: Եվ հետո, Ասկանիոն, բոլորովին էլ ազգ ու տոհմ շունեցող մեկը չէ: Նրա անունն է Ասկանիո Գաղղի, իսկ նրա նախնիներից մեկը Ֆլորենցիայում պողեստա¹ էր: Ճիշտ է, Ասկանիոն ոսկերիչ է, բայց Իտալիայում արվեստով զբաղվելը չի գատապարտվում և, նույնիսկ, եթե Ասկանիոն հին արիստոկրատական տոհմից սերելիս շիներ, հիմա նա ֆրանսիական ազնվական է, քանի որ ես ինձ թույլ տվի իմ անվան փոխարեն նրանը գրել այն հրովարտակում, որ ձերդ մեծությունը շնորհել էր ինձ: Չկարծեք, սի՛ր, թե դա զոհաբերություն է: Ինձ համար Ասկանիոյին վարձատրելը նշանակում է կրկնակի վարձատրել ինքս ինձ: Ինչևիցե, Ասկանիոն Նելի ամրոցի տերն է, և ես հոգ կտանեմ, որ նա փողի կարիք չունենա: Ասկանիոն կարող է, ացնկության դեպքում, թողնել իր արհեստն ու ձեռք բերել

¹ պոդեստա— Իտալական մի շարք քաղաք-հանրապետություններում վարչական գիւնվորական, օրենսդրական բնորովի պետ

նիզակակիրների մի վաշտ, կամ արքունիքում որևէ պաշտոն: Ես կվճարեմ բոլոր ծախսերը:

— Իսկ մենք, անշուշտ, հոգ կտանենք այն մասին,— ասաց թագավորը,— որ այդպիսի առատաձեռնությունն իսպառ շղատարկի ձեր քսակը:

— Ուրեմն, սիր...

— Համաձայն եմ, համաձայն եմ: Թող փեսացուն լինի Ասկանիո Գադգին, Նելի ամրոցի տերը,— քահ-քահ ծիծաղելով, բացականչեց թագավորը:

— Դքսուհի,— կիսաձայն ասաց Բենվենուտոն,— ճիշտն ասած, դուք այլևս չեք կարող Շատլետում պահել Նելի ամրոցի տիրոջը. այդպես կարելի էր վարվել միայն ենթավարպետ Ասկանիոյի հետ:

Դքսուհին կանչեց պալատի պահակային սպաներից մեկին ու ցածրաձայն ինչ-որ բան հրամայեց նրան: Հետո, ձայնը բարձրացնելով, ավելացրեց:

— Թագավորի անունով:

— Այդ ի՞նչ հրաման տվիք, տիկին,— հարցրեց թագավորը:

— Առանձնապես ոչինչ, ձերդ մեծություն,— նրա փոխարեն պատասխանեց Չելլինին:— Դքսուհին ուղարկեց փեսացուին բերելու:

— Բայց որտե՞ղ է փեսացուն:

— Այնտեղ, որտեղ տիկին դ՛էտամպը, շլատկածելով ձերդ մեծության բարեսրտությանը, հրամայել էր նրան սպասել թագավորի կամքին:

Քառորդ ժամ հետո բացվեցին ընդունարանի դռները. այնտեղ Ֆրանցիսկ I-ին էին սպասում Կոլոմբան, պրևոն, կոմս դ'Օրբեկը, իսպանական դեսպանը և համարյա բոլոր բարձրաստիճան հյուրերը, բացառությամբ վիկոնտ դե Մարմանի, որը դեռևս հիվանդ էր. ծառան ազդարարեց.

— Նորին մեծությունը:

Ներս մտավ Ֆրանցիսկ I-ը, Դիանա դե Պուատյեի թևը մտած, նրանց հետևից գալիս էր Բենվենուտո Չելլինին՝ տիկին դ՛էտամպի ու Ասկանիոյի հետ, որոնց երեսին գույն չկար:

Թագավորի հայտնվելուն պես բոլոր պալատականները շրջիցին դեպի դուռը և, այդ տարօրինակ խումբը տեսնելով, մի ոչա՛հ քարացան դարձանքից, իսկ Կոլոմբային թվաց, թե ուր որ է կուշաթափվի:

Ընդհանուրի զարմանքն ավելի սաստկացավ, երբ Չելլինիին առաջ թողնելով, Ֆրանցիսկ I-ը, ի լուր ամենքի, հայտարարեց.

— Վարպետ Բենվենուտո, մի բոպե զիջում ենք ձեզ մեր բարձր աստիճանն ու մեր իշխանությունը: Խոսեցեք Ֆրանսիայի թագավորի անունից և թող բոլորը ենթարկվեն ձեզ, ինչպես թագավորի:

— Զգուշացեք, սի՛ր, ցանկանալով արժանանալ այդ սլատվին, ես պարզապես անզուգական կլինեմ, — կատակեց Չելլինին:

— Լա՛վ, լա՛վ, Բենվենուտո, — ծիծաղելով պատասխանեց թագավորը: — Մենք կդիտենք ձեր ջանասիրությունը որպես մեղ հաճոյանալու ցանկություն:

— Թող այդպես լինի, բարի կատարում, ձերդ մեծություն: Նման խոսքերն ինձ դուր են գալիս և ես կաշխատեմ հնարավորին շափ հաճոյանալ ձեզ... Այսպես ուրեմն, — շարունակեց նա, դիմելով պալատականներին, — անվանի տիկնայք ու պարոնայք, շմոռանաք, խնդրեմ, որ իմ շուրթերով խոսում է ինքը՝ թագավորը: Պարոնայք նոտարներ, պատրաստե՛լ եք պայմանագիրը, որը նորին մեծությունը բարեհաճում է հաստատել ինքնաձեռագիր ստորագրությամբ: Ուրեմն, գրեք ամուսինների անունները:

Երկու նոտարները վերցրին գրիչներն ու իրենց առաջ դրին երկու պայմանագիր, որոնցից մեկը պետք է պահվեր սկիտական արխիվում, իսկ մյուսը՝ իրենց գրասենյակում:

— Ամուսնացող կողմերից մեկը անվանի ու մեծատոհմիկ մսղմուազել Կոլոմբա դ'էստուրվիլն է:

— Կոլոմբա դ'էստուրվիլ, — մեքենայաբար կրկնեցին նոտարները:

Պալատականները լսում էին Բենվենուտոյին մեծագույն զարմանքով:

— Մյուս կողմը, — շարունակեց Չելլինին, — շատ անվա-
նի ու շատ մեծազոր Ասկանիո Գադդին է, նեւի սենյորը:

— Ասկանիո Գադդի, — միաբերան բացականչեցին պրե-
վոն և դ'Օրբեկը:

— Հասարակ ենթավարպե՛տ, — դառնությամբ ավելա-
ցրեց պրևոն, շրջվելով դեպի Ֆրանցիսկ I-ը:

— Ասկանիո Գադդին, նեւի սենյորը, — անվրդով շարու-
նակեց Բենվենուտոն, — որին թագավոր Ֆրանցիսկ I-ը, իր
մեծագույն ողորմածությամբ շնորհում է ֆրանսիական հպա-
տակություն և թագավորական կառավարչի պաշտոն:

— Եթե ձերդ մեծությունը հրամայում է, ես պատրաստ
եմ ենթարկվել, — ասաց պրևոն, — բայց և այնպես...

— Ասկանիո Գադդիի խնդրանքով նորին մեծությունը
մեսսեր դ'էստուրվիլին՝ Փարիզ քաղաքի պրևոյին, շնորհում
է սենեկապետի տիտղոս:

— Սի՛ր, ես համաձայն եմ, — ասաց պարոն դ'էստուր-
վիլը, վերջնականապես անձնատուր լինելով:

— Օ՛, աստված իմ, աստված իմ, մի՞թե սա երազ չէ, —
մրմնջաց Կոլոմբան, փլվելով աթոռին:

— Իսկ ե՞ս: Ես ի՞նչ պետք է անեմ, — բացականչեց դ'Օր-
բեկը:

— Ինչ վերաբերում է ձեզ, կոմս, — հայտարարեց Չելլի-
նին, շարունակելով կատարել թագավորական պարտակա-
նությունները, — ես կխնայեմ ձեզ և դատական քննություն
չեմ նշանակի ձեր գործերը ստուգելու համար, թեև ձեր վար-
քագիծն անթույլատրելի էր: Մեծահոգությունն էլ, ինչպես և
առատաձեռնությունը, թագավորի առաքինություններից է:
Այնպես չէ՞, սիր, — ասաց նա՝ դիմելով Ֆրանցիսկ I-ին: —
Բայց ահա պայմանագրերը պատրաստ են: Եկեք ստորա-
գրենք, պարոնայք:

— Դե՛հ, ի՞նչ պակաս նորին մեծություն է, — բացական-
չեց Ֆրանցիսկ I-ը, ուրախանալով, ինչպես դպրոցականն
արձակուրդների ժամանակ:

Թագավորը ստորագրեց պայմանագիրը և գրիչը սվեց
Ասկանիոյին, որը դողացող ձեռքով գրեց իր անունը. հետո

գրիչը հանձնեցին Կոլոմբային, որին Դիանան օգնեց ուրի կանգնել ու թևը մտած մոտեցրեց սեղանին:

Սիրահարների ձեռքերը միացան, և երկուսն էլ քիչ մնաց ուշաթափվեին:

Պայմանագիրը ստորագրելու հերթը հասավ Դիանային, այնուհետև՝ տիկին ղ'էտամպին. դքսուհին գրիչը հանձնեց պրևոյին, իսկ պրևոն՝ կամս ղ'Օրբեկին և վերջապես կոմսը՝ իսպանական դեսպանին:

Եվ այդ բոլոր մեծազդորդ անունների տակ պարզ, հաստատուն ձեռագրով ստորագրեց Բենվենուտո Չելլինին: Բայց չէ՞ որ նրա զոհաբերությունը, թերևս ամենամեծն էր:

Պայմանագիրը ստորագրելուց հետո իսպանական դեսպանը մոտեցավ դքսուհուն:

— Մեր համաձայնությունն ուժի մեջ է մնում, այնպես չէ՞, տիկին, — հարցրեց նա:

— Օ՛, տեր աստված, — բացականչեց դքսուհին: — Վարվեք ինչպես կամենում եք: Ինձ չի՛ հետաքրքրում Ֆրանսիան, ինձ չի՛ հետաքրքրում ամբողջ աշխարհը:

Դուքսը գլուխ տվեց ու վերադարձավ իր տեղը:

— Կարծեմ կայսրը մտադիր է Միլանի դուքս դարձնել ոչ թե Ֆրանցիսկ թագավորին, այլ նրա որդո՞ւն, — հարցրեց դեսպանին նրա քեռորդին՝ դեռ երիտասարդ ու անփորձ մի դիվանագետ:

— Ոչ մե՛կը, ոչ մյո՛ւսը Միլանի դուքս չեն դառնա, — պատասխանեց դեսպանը:

Մինչդեռ ներկա գտնվողները, մեկը մյուսի հետևից, շարունակում էին իրենց ստորագրությունները դնել պայմանագրի տակ:

Երբ բոլորը ստորագրեցին, Բենվենուտոն մոտեցավ Ֆրանցիսկ I-ին և ծունկի գալով, ասաց.

— Սիր, քիչ առաջ ես հրամայում էի, ինչպես թագավոր, իսկ հիմա աղերսում եմ ձեզ, ինչպես ձեր հպատակներից ամենահնազանդն ու նվիրվածը. ձերդ մեծություն, վերջին շնորհն եմ խնդրում ձեզանից:

— Ասա՛, Բենվենուտո, ասա՛, — բարյացակամորեն պա-

տասխանեց թագավորը, հրճվելով իր թագավորական գորու-
թյամբ:— Ասա, ի՞նչ ես ցանկանում:

— Վերադառնալ Իտալիա, սի՛ր,— պատասխանեց Բեն-
վենուտոն:

— Իտալիա,— բացականչեց թագավորը:— Դու դեռ այն-
քան հոյակապ գործեր պետք է ստեղծես ինձ համար: Իսկ դու
կամենում ես լքե՞լ ինձ: Ո՛չ, համաձայն չեմ:

— Ես կվերադառնամ, երդվում եմ ձեզ, սի՛ր: Բայց հիմա
թողեք ինձ: Ես պետք է հայրենիք մեկնեմ: Դուք չգիտեք, թե
ինչ ասյրումներ ունեցա և ինչպես եմ տառապում,— կամա-
ցուկ ավելացրեց նա, տխրությամբ տարուբերելով գլուխը,—
րառերով անկարելի է արտահայտել: Միայն հայրենիքի օդը
կարող է ապաքինել վիրավոր սիրտս: Դուք ամենազոր եք,
առատաձեռն, ձերդ մեծություն, և ես սիրում եմ ձեզ: Ես ան-
պայման կվերադառնամ, հենց որ հայրենիքի արևը կազդու-
րի ինձ: Եվ բացի այդ, ես ձեզ մոտ եմ թողնում Ասկանիո-
յին՝ իմ երկրորդ եսը և Պագոլոյին՝ իմ աջ ձեռքը: Նրանք
կփոխարինեն Բենվենուտոյին, ձերդ մեծություն: Իսկ երբ
հարազատ Ֆլորենցիայի փաղաքուշ քամին ցրի իմ թախիծը,
ես կվերադառնամ ու այն ժամանակ արդեն ոչ մի բան աշ-
խարհում, մահից բացի, չի բաժանի մեզ:

— Գնացե՛ք,— տխրությամբ համաձայնեց Ֆրանցիսկ
I-ը:— Արվեստագետը պետք է ծիծեռնակի պես աղատ լինի:
Գնացե՛ք, Չելլինի:

Եվ թագավորը ձեռքը նրան մեկնեց ու Բենվենուտոն, ի
նչան շնորհակալանքի, հարգալից համբույր դրոշմեց նրա
ձեռքին:

Գնալուց առաջ Չելլինին մոտեցավ դքսուհի դ'Էտամպին:

— Գուք շա՞տ եք զայրացած ինձ վրա, տիկին,— հարց-
րեց նա, աննկատելիորեն դքսուհուն հանձնելով ճակատա-
գրական նամակը, որը քիչ առաջ մոզական թալիսմանի նման
խսկական հրաշք գործեց:

— Ո՛չ,— ասաց դքսուհին, ուրախանալով, որ նամակը
վերջապես իր ձեռքում է:— Եվ, այնուամենայնիվ, դուք ինձ
հաղթեցիք այնպիսի ղենքով, որը...

— Երբեք, դքսուհի, — ընդմիջեց նրան Բենվենուտոն: — Չէ՞ որ ես այդ զենքով միայն սպաննացի ձեզ: Մի՞թե կարող էիք մտածել, որ ես կհրապարակեմ այդ նամակը:

— Տե՛ր աստված, — ասես շանթահար, բացականչեց դքսուհին: — Որքան հեշտ է սխալվելը, եթե ուրիշների մասին դատում ես քեզնով...

Հետևյալ օրը Ասկանիոյին ու Կոլոմբային պսակեցին Լուվրի աղոթատանը և, շնայած պալատական էտիկետի բոլոր կանոններին, երիտասարդները պնդեցին, որ պսակադրության արարողությանը ներկա լինեն Ժակ Օբրին ու նրա կիներ:

Ժակի համար դա մեծագույն պատիվ էր, սակայն չի կամրելի չհամաձայնել, որ համեստ ուսանողը լիովին արժանի էր նման վերաբերմունքի:

ՎԼՈՒԽ ՔՍԱՆԵՐԵՔԵՐՈՐԴ

Ամուսնություն պարտքի զգացումից

Իսկ մի շաբաթ հետո Հերմանը հանդիսավորությամբ պսակվեց տիկին Պերինայի հետ, որն օժիտ բերեց քսան հազար լիվր՝ արժաթադրամով:

Շտապենք ավելացնել, որ վերջին հանգամանքը շատ ավելի նպաստեց նրա որոշմանը, քան մյուս բոլոր հանգամանքները:

Այն օրվա երեկոյան, երբ տեղի ունեցավ Ասկանիոյի ու Կոլոմբայի հարսանիքը, Բենվենուտո Չելլինին, որքան էլ նրան թախանձում էին նորապսակները, մեկնեց Ֆլորենցիա:

Հենց այնտեղ էլ նա ստեղծեց Պերսեսի իր նշանավոր արձանը, որը մինչև օրս էլ զարդարում է պալատական Հին հրապարակը:

Եվ, թերևս, դա արվեստագետի լավագույն ստեղծագործությունն է, քանզի այդ արձանը նա կերտել է հոգեկան մեծագույն տառապանքների պահին:

«Ասկանիոն» (1843) Դյումայի լավագույն պատմական վեպերից է: Իտալացի հուշակալոր արձանագործ ու ոսկերիչ Բենվենուտո Չելլինիի հուշագրությունները թելադրեցին գրողին այս ստեղծագործության մտահղացումը: Չելլինին (1500—1571) իտալական ուշ վերածննդի գործիչներից էր, հուշակալոր «Պերսես» բրոնզաձույլ արձանի հեղինակը, նա կյանքի մայրամուտին հուշեր գրեց իր բուռն, զարմանալի արկածներով չի կյանքի մասին:

Չելլինիի պատվիրատուները Հռոմի պապերն էին, թաղավորներն ու անվանի մեծատոհմիկները: Նա ծառայել է Կլիմենտ VII և Պողոս III պապերին, ապրել է Ֆրանսիայի թագավոր Ֆրանցիսկ I-ի և Ֆլորենցիայի մեծ դուքս Կոզիմո Մեդիչիի արքունիքներում: Իր բնավորությանը հատուկ խրատություններ ու շիտակություններ արվեստագետն իր հուշերում բավական անհարգալից է խոսում բարձրաստիճան պատվիրատուների մասին:

Չելլինիի հուշերի բնորոշ գիծը հեղինակի սեփական արժանապատվության վառ արտահայտությունն է: Անվանի մարդկանց շրջապատում, որոնք սոցիալական սանդուղքի վրա անհամեմատ բարձր էին կանգնած նրանից, նա՝ արվեստագետ, Ֆլորենցիայի քաղաքացի, զոռվ է իրեն ազատ ու աներեր: Չելլինիին չի կուրացնում տիտղոսների փայլը, նա տեսնում է այդ մարդկանց ամբողջ էությունը, տեսնում է նրանց փառամոլությունը, բարոյալքվածությունը, ագահությունն ու հիմարությունը: Զարմանալի չէ, որ հարյուր հիսուն տարի նրա ճշմարտացի ու խիղախ գրքի ձեռագիրը լույս չտեսավ: Միայն 1728 թ. Նեապոլում, սուաջին անգամ, հրատարակվեց այն՝ ոչ լրիվ, ոչ ստույգ, քանի որ կատարված էր ոչ թե բնագրի համաձայն, այլ ավելի ուշ շրջանի կրկնօրինակներից մեկի: Անցավ ևս 100 տարի, մինչև որ 1829 թ. լույս տեսավ Ֆլորենցիայի հանդուզն ոսկերչի ձեռագրի առաջին լրիվ հրատարակությունը: Շուտով այն թարգմանվեց եվրոպական շատ լեզուներով ու լայն ճանաչում գտավ:

«Բենվենուտո Չելլինիի՝ Ֆլորենցիացի վարպետ Զովանի Չելլինիի որդու կյանքը, գրված իր իսկ ձեռքով, Ֆլորենցիայում» գիրքը (այդ է գրքի լրիվ վերնագիրը) ճշմարտացի պատմությունն է XVI դ. Իտալիայի կենցաղի ու բարքերի:

Այս պարիներին կենտրոնական Եվրոպան բռնկված էր պատերազմի հրդեհով: Պալքարի մեջ, որը տեղի էր ունենում դերմանական կայսր Կարլոս V-ի և Ֆրանսիական թագավոր Ֆրանցիսկ Առաջինի միջև, ներգրավվեցին Անգլիան, պապական Հռոմը և իտալական ազգային մազնատները: Իտալիայի տարածքը դարձավ պատերազմական գործողությունների հիմնական թատերաբեմ: Սոցիալ-պատմական խոր հակասությունները հրահրում ու բարդացնում էին երկիրն ամայացնող կործանարար պատերազմները: Միջերկրական ծովի տերերը՝ իտալական գործող քաղաքները, XVI դ. կորցրին իրենց իշխանությունը միջազգային սուետրի շուկայում: Դրա

պատճառը Ամերիկայի (1492 թ.) և Հնդկաստան տանող ծովային ճանապարհի (1498 թ.) հայտնագործումն էր, որի հետևանքով Անգլիան, Իսպանիան, Պորտուգալիան հարստացան և դաժան հարված հասցրին Իտալիայի արդյունաբերությանն ու առևտրին. Իտալիայի տնտեսության անկումը թուլացրեց երկրի օազմական հզորությունը: Սկսվեց Իտալիայի գիշատիչ ու արյունոտ բաժանումը Եվրոպայի զորեղ պետությունների միջև Իտալիայում հաստատվեց ֆեոդալական-կաթոլիկական ռեակցիան:

Որպես վերածնության դարաշրջանի իսկական ներկայացուցիչ, Չելլինին բազմապիսի հետաքրքրություններ ուներ: Նա հատում էր դրամ ու մեդալներ, պատրաստում թանկարժեք զարդեր, ծեփում էր արձաններ, հորինում բանաստեղծություններ, գրադվում երաժշտությամբ և սքանչելի հրետանավոր էր: Երբ Կարլոս V-ի զորքերը, կոնետարլ Բուրբոնի գլխավորությամբ, 1527 թ. մոտեցան Հռոմին, Բենվենուտոն մասնակցում էր քաղաքի պաշտպանությանը: Ըստ ավանդության, նա է արկերուզից կրակել ու սպանել կոնետարլ Բուրբոնին:

Չելլինիի կյանքը լի էր դրամատիկական իրադարձություններով: Նա մենամարտում էր, զժամում մեծատոհմիկների հետ, սիրահարվում, հաճախ վտանգի ենթարկում իր կյանքը: 1534 թ. աշնանը, իր վաղեմի ախոյան օսկերիչ Պոմպոնյի հանդուգն վարքագծից բորբոքված, Բենվենուտոն ցերեկով, փողոցի մեջտեղում, հարձակվեց նրա վրա, շնայած պատկառելի պահակախմբին, ու դաշունահարեց նրան:

Հենց այդ ժամանակ վախճանվեց Կլիմենտ VII պապը: Չնայած պապի հետ ունեցած բազմաթիվ դաժան ընդհարումներին, Չելլինին շատ տարիներ ծառայում էր նրան: Կլիմենտ VII-ին փոխարենեց կարդինալ Ալեքսանդր Ֆարնեզեն՝ Պողոս III անվան տակ: Հպարտ ու անսաստ Չելլինին շուտով իր մալիի վրա զգաց այդ բռնակալ մարդու վրեժխնդրությունն ու դաժանությունը: Որոշ ժամանակ Չելլինին օգտվում էր նոր պապի շնորհներից, որն անվանի օսկերչի ծառայությունների կարիքն ունենալով, կարգադրեց պահպանագիր տալ նրան, իսկ այնուհետև ներում շնորհեց Պոմպոնյի սպանության համար: Սակայն պապի ողորմածությունը շատ անհաստատուն էր: Պապի արքունիքում Չելլինին մի շարք վտանգավոր թշնամիներ ուներ, այդ թվում և Պյետրո Լուիջի Ֆարնեզեն՝ Պողոս III-ի ապօրինի գավակը: Չելլինիի գրխին, մեկը մյուսի հետևից, հարվածներ տեղացին: Նրան մեղադրեցին հանգուցյալ Կլիմենտ VII-ի աղամանդները հափշտակելու մեջ. անկշտում Պյետրո-Լուիջին նախապես համոզել էր պապին իրեն առաջ աղամանդները: Ինչ-որ մեկը տեղեկացրեց պապին, որ Բենվենուտոն նրան անվանել է թագակիր ժողտեխարավիլակ: Պողոս III-ի հրամանով Չելլինին բանտարկվեց: Փախուստը Սուրբ Հրեշտակի անառիկ ամրոցից Չելլինիի անունը դարձրեց առասպելական:

Փախստականին, կոտրված ոտքով, գտավ ու իր ամրոցում թաքցրեց Չելլինին համակրող մաժատոհմիկներից մեկը: Բայց պապը սպառնալիքներով, խոստումներով, նվիրատվություններով ստիպեց մեծատոհմիկին

վերադարձնել գերուն, և Բենվենուտոն կրկին ընկավ բանտ, ավելի ծանր պայմանների մեջ: Չկարողանալով կոտրել նրա կամքը, թշնամիները փորձեցին թունավորել Չելլիին: Նրա կյանքը մազից էր կախված: Միայն Ֆրանսիայի թագավոր Ֆրանցիսկ I-ի համառ խնդրանքներն օգնեցին արձանագործին դուրս բերել բանտից: Պապի ու նրա մերձավորների նոր հետապնդումներից փրկվելով, 1540 թվականին Բենվենուտոն մեկնեց Ֆրանսիա:

Այդ ժամանակներում Ֆրանցիսկ I-ի արքունիքը հումանիստական առաջավոր կուլտուրայի կենտրոն էր: Թագավորն իրեն շրջապատել էր գիտնականներով, գրողներով, նկարիչներով: Նրա քարտուղարն էր գիտնական, լատինագետ Գիլյոմ Բյուդեն, երիտասարդ Ռաբլեի՝ Վերածննդի շրջանի Ֆրանսիացի մեծագույն հումանիստ-գրողի, հովանավորը:

Ֆրանցիսկ I-ը ջանում էր, որ իտալական նշանավոր վարպետները ծառային իրեն: Միքելանջելոն նրա սլավերով ստեղծեց «Սուրբ Միքայել»-ը: Նրա պատվերով Ռաֆայելը նկարեց մի քանի կտավ: Թագավորի հրավերքով Ֆրանսիա ժամանեց տարեց Լեոնարդո դա Վինչին ու բերեց իր հետ անգնահատելի մի գործ՝ Մոննա Լիզայի դիմանկարը: Ֆրանսիական արքունիքում իտալացի շատ նկարիչներ ու արձանագործներ կային՝ Անդրեա դել Սարտոնեն, Պրիմատիչոն, Ռոսսոն, իտալացի ճարտարապետները Ֆրանցիսկի համար ամրոցներ էին կառուցում Բյուալում, Ֆոնտենբլոյում ու Եամբորում:

Սակայն պետք է ասել, որ թագավորի հովանավորությունն ուներ և իր բացասական կողմը: Հավակնություն ունենալով գլխավորել հումանիստական շարժումը, Ֆրանցիսկն, ըստ էության, գաղափարապես սահմանափակում ու աղքատացնում էր այն, փորձում էր սլալատական բնույթ տալ այդ շարժմանը: Բացի այդ, Ֆրանցիսկի հովանավորությունը երկար չտևեց: Արդեն XVI դարի 30-ական թվականների երկրորդ կեսից իրադրությունը Ֆրանսիայում սկսեց փոխվել: Գյուղացիական Մեծ պատերազմը Գերմանիայում և ռեֆորմացիայի հետևանքով տեղի ունեցող հեղափոխական խմորումները՝ եվրոպայում վտիանցրին իշխող դասակարգին: Ֆրանսիայում սկսեցին հետապնդել աղատամիտ մարդկանց: Թագավորն անցավ մարտնչող կաթոլիկական կուսակցության կողմը:

Բենվենուտո Չելլինին Ֆրանսիայում մնաց մոտ հինգ տարի (1540—1545 թ.). դրանք համառ աշխատանքի, բոցաշունչ մտահղացումների, արվեստագետի ստեղծագործական հասունացման տարիներ էին: Հենց այդ ժամանակաշրջանում ծավալվեց արձանագործի տաղանդը: Թագավորը հանձնարարեց նրան Ֆոնտենբլոյի պուրակը զարդարելու աշխատանքներն ու պատվիրեց տասներկու մեծ, արծաթե արձան, որոնք պետք է դրվեին պալատում որպես կանթեդներ: Թագավորի շնորհները՝ Չելլինին նեյի ամրոցը նվիրելն ու մեծ աշխատավարձ նշանակելը (այնքան, ինչքան մինչ Բենվենուտոն ստանում էր Լեոնարդո դա Վինչին), շարժեցին պալատականների նախանձը: Չելլինին ձեռք բերեց շատ ազդեցիկ թշնամիներ, որոնք

ցանկանում էին ամեն գնով գծտել նրան թագավորի հետ: Դրանքից ամենավաճառվորը թագավորի ֆավորիտուհին էր՝ Աննա դե Պիսսելեն՝ դքսուհի դ'Էտամպրե: Պալատական բարձր ազնվականության հետապնդումները թունավորեցին Չելլինիի կյանքը: Ճրանսիայում և խանգարեցին նրան իրականացնել երևակայությունը հուզող շատ ստեղծագործական մտահղացումներ: Դքսուհու պնդումով Չելլինիից հետ վերցրին Ֆոնտենբլոյի շատրվանների պատվերը, նա շավարտեց Մարսի արձանը: Ֆոնտենբլոյի պուրակի համար Չելլինիի կերտած քանդակներից պահպանվել է միայն բրոնզե սքանչելի մի ցածրաբանդակ, որը հայտնի է «Ֆոնտենբլոյի հավերժահարսը» անվան տակ: Տասներկու արծաթե արձաններից Չելլինիին հաջողվեց պատրաստել միայն մեկը: Դա Յուպիտերի երկու մետրանոց արձանն էր՝ մի ձեռքում՝ երկրագունդը, մյուս ձեռքում՝ կայծակ: Արձանը չի պահպանվել: Ենթադրում են, որ այն ոչնչացել է դեռևս XVI դարում: Նույնիսկ մատիտանկարներ չեն մնացել, որոնցով հնարավոր լիներ պատկերացում կազմել արձանի մասին: Չելլինին մանրամասն նկարագրել է այդ արձանն իր հուշագրություններում:

Թշնամիներն ստիպեցին Չելլինիին հեռանալ Ճրանսիայից:

Նրա կյանքի վերջին տարիներն անցան Ֆլորենցիայում, դուքսի պալատում: Թողալով փողոցի ոչ մեծ տնակում նա խորհում էր իր վաղեմի մտահղացումների մասին: Դա նյութական գծավարությունների ժամանակաշրջան էր՝ կախված տիրակալի քմահաճույքներից ու պալատականների մեքենայություններից: Սակայն միաժամանակ՝ ստեղծագործական մեծ հաջողությունների ժամանակաշրջան: Հենց այդ տարիներին նա ստեղծեց իր գլուխգործոցները՝ դուքս Կոզիմո Մեդիչիի բրոնզե կիսանդրին, հսկայական մարմարե խաչելությունը և Մեդուզայի գլուխը ձեռքին բռնած Պեքսեսի արձանը: Մինչև մեր օրերը պահպանվել են Չելլինիի մի քանի ստեղծագործությունները միայն: Անհետացել է նրա ոսկերչական աշխատանքների մեծ մասը, ոչնչացել են շատ արձաններ, մոմե մոդելներ ու նկարներ: Սակայն նույնիսկ այն, ինչ պահպանվել է, հնարավորություն է տալիս դատելու մեծ ֆլորենտացու հսկայական, յուրօրինակ տաղանդի մասին:



Բենվենուտո Չելլինիի հուշագրություններն առաջին անգամ ֆրանսերեն թարգմանվեց ու հրատարակվեց 1833 թվականին և անմիջապես ուշագրություն գրավեց: XVI դարի Ֆլորենցիայի արձանագործի հուշերը՝ բարձրի հյուսիս սրակերներով, հախուռն կրթերով, պարզամիտ դաժանությամբ և խոսքի փշոտ արտահայտչականությամբ անսահմանորեն դուր եկան ռոմանտիկորեն արամադրված ընթերցողներին:

Դյումային հիացրեց այդ գիրքը: Նա ասում էր, որ այդ հուշերը շատ ավելի գրավիչ են, քան ամենահետաքրքրական վեպը:

Չեղիմի հուշագրությունները հարուստ նյութ տվին Դյումային, որը նա լայնորեն օգտագործեց իր «Ասիական» վեպում:

Աշխատելով վեպի վրա, Դյուման ընտրել է Չլոյենտացի արձանագործի կյանքի ժամանակահատվածը միայն՝ Ֆրանցիսկ I-ի արթունքում եղած տարիները: Այդ ընտրությունը թույլ տվեց Դյումային հավատարիմ մնալու իրեն ծանոթ ու հարազատ Ֆրանսիական կյանքին: Միաժամանակ զրոյզ օգտագործեց հուշերի կամ հերոսի պատմության ձևով Չեղիմի կյանքի (մինչև Ֆրանսիա գալու ժամանակամիջոցի) առավել ուշագրավ իրագարձությունները:

Զնայած պատմական պրոցեսի նկատմամբ Դյումայի ունեցած մակերեսային, թեթև պատկերացումներին, նրա վեպերը զուրկ չեն հանաչողական նշանակությունից:

Ազգային հին ժամանակների սիրահար ու զիտակ Դյուման իր վեպում տվել է XVI դ. կենցաղի ու բարքերի խոստուն պատկերները: Նա ընթերցողին ստիպում է թափառել հին Փարիզի փողոցներում ու նրբանցքներում, տանում է նրան հրապարակ, դատարանի շենք, եկեղեցի, բանտ, արվեստագետի արվեստանոց, ֆալորիտուհու շքեղ առանձնատուն: Նա ընթերցողի առաջ ծավալում է այն դարաշրջանի եվրոպական ամենապրճաշուք արթունքի պալատական կյանքի պատկերները:

Ընթերցողը ծանոթանում է պատմական ականավոր գործիչներից շատերի հետ, տեսնում Ֆրանցիսկ I-ին, Կարլոս V-ին, Մարգարիտա նավարացուն, բանաստեղծ Կլեման Մարոյին և շատ ուրիշներին:

Հետաքրքրաշարժ, արկածային վեպի հյուսվածքի մեջ Դյուման հմտորեն ներհյուսում է այն ժամանակի մարդկանց մտքերը, միշտազգային քաղաքականության հուզող իրադարձությունները: Վեպի կենտրոնական միջուկը պերից մեկը գերմանական կայսր Կարլոս V-ի ժամանումն է Փարիզ և բանակցությունները Միլանի դքսության ճակատագրի մասին:

Դեռ Լյուդովիկոս XII-ը՝ Ֆրանցիսկ I-ի նախորդը, իրեն հայտարարեց Նեապոլիտանական թագավոր և Միլանի դուքս: Ֆրանցիսկ I-ի ամբողջ թագավորությունը մթափում էին անդադար պատերազմներն իտալական ժառանգության համար:

1519 թվականին մեռավ գերմանական թեր կայսր Մաքսիմիլիանը: Ֆրանցիսկ I-ը ամեն կերպ ձգտում էր տիրանալ թափուր մնացած գահին: Նա փող և խոստումներ չէր խնայում գերմանական մեծատոհմիկներին կաշառելու, որոնք իրավունք ունեին մասնակցելու նոր կայսեր ընտրությանը: Ֆրանցիսկի կողմնակից Հոմի պապը Գերմանիա էր ուղարկում սպառնալից հրամանագրեր, պահանջելով, որ եկեղեցու տերերը սատարեն ֆրանսիական թագավորի հավակնություններին:

Սակայն համառ ու դաժան քաղաքական պայքարից հետո գերմանական կայսր ընտրվեց ոչ թե Ֆրանցիսկ I-ը, այլ հանգուցյալ Մաքսիմիլիանի թոռը՝ իսպանական թագավոր Կարլոս V-ը:

Կարլոսը, գերմանական կայսր ընտրվելու օրից, զորեղ մրցակից դար-

ձով Ֆրանցիսկի համար Քառորդ դար լարված մրցակցության ընթացքում պատերազմական բախտը ժպտում էր մերթ մեկին, մերթ մյուսին, և Միլանի դքսությունը հաճախակի փոփոխում էր իր տերերին: Ֆրանսիացիների համար գծրախտ Պափիայի ճակատամարտի ժամանակ, 1525 թվականի փետրվարին, Ֆրանցիսկ I-ը ընկավ իր թշնամու ձեռքը: Մադրիդում գերի եղած ժամանակ նա ստիպված էր հաշտության պայմանագիր ստորագրել, որով փրկագնեց իր ազատությունը՝ Կարլոս V-ին զիջելով Բուրգունդիան, Ֆլանդրիան, Արտուան և Նեապոլը:

Բայց գերությունից վերադառնալով, Ֆրանցիսկ I-ը պատեց Մադրիդյան հաշտության պայմանագիրն ու հիմնադրեց «Սուրբ լիգան»-ն, որին միացան Անգլիան և պապական շոտը՝ Կարլոս V-ի դեմ պատերազմելու համար:

Ֆրանսիական թագավորի համար մեծ հարված էր նրա խոշորագույն զորավարի՝ կոնետաբլ Բուրբոնի դավաճանությունը: Ֆրանցիսկի հետ զրգուկելով, Բուրբոնն անցավ Կարլոս V-ի կողմը: Գերմանական կայսրին մեծ հույսեր էր ներշնչում նրա ռազմական տաղանդը. ցանկանալով ամրացնել իր կայսր հռչակվող զորավարի հետ, կայսրը խոստացավ կնություն տալ նրան իր ջրոջը՝ էլեոնորային: Ինչպես վերն ասացինք, կոնետաբլը զխավորեց Կարլոսի գործը Իտալիայում և զոհվեց շոտի պաշարման ժամանակ:

Լիգայի ռազմական անհաջողություններն ստիպեցին Ֆրանցիսկին նոր բանակցություններ վարել: 1529 թվականին հաշտության պայմանագիր ստորագրվեց Կամբրում: Այդ պայմանագրի համաձայն Ֆրանցիսկ I-ը պահպանում էր Բուրգունդիան, բայց զրկվում էր Ֆլանդրիայի, Արտուայի, Միլանի և Նեապոլի վրա ունեցած իրավունքներից:

Հաշտությունն ամրապնդելու համար Ֆրանցիսկ I-ը 1530 թվականին ամուսնացավ Կարլոս V-ի ջրոջ՝ էլեոնորայի հետ, որն առաջ խոստացված էր կոնետարին: Բայց սնցավ ընդամենը հինգ տարի, և Ֆրանսիան կորկին պատերազմի մեջ մտավ: 1544 թվականի սեպտեմբերին, Ֆրանցիսկ I-ը և Կարլոս V-ը վերջին՝ չորրորդ պատերազմն ավարտելուց հետո, նոր բանակցություններ սկսեցին Միլանի դքսության հարցը լուծելու համար: Որոշ պատմաբանների կարծիքով դքսուհի դ'Էտամպլը, որը մեծ ազդեցություն ուներ թագավորի վրա, բանակցությունների մեջ դավաճանական դեր խաղաց: Այդ է ակնարկում և Զելլինին իր հուշագրություններում: Գլուման զարգացնում է այդ թեզը և պաշտոնական քաղաքականությունն ու դիվանագիտությունը կապում իր վեպի սիրային-արկածային սյուժետի հետ:

Նրա գրքում Ասկանիոյին սիրահարված դքսուհի դ'Էտամպլը մասնակից է դառնում Միլանի հարցի լուծմանը, գաղտնի բանակցություններ է վարում իսպանական դեսպանի հետ, դավաճանում է Ֆրանսիայի շահերին հանուն ֆանտաստիկ մտահղացմանը՝ Զելլինիի գեղեցիկ աշակերտին Միլանի շխազարված արքան դարձնելու համար:

«Ասկանիո» վեպում թագավորական արքունիքը պատկերված է որպես անսիրտ, անբարոյական ու նենգ աշխարհ:

Քաղաքապետական բարձր ազնվականությունը, որը վեպում ներկայացնում են վտանգավոր բանասարկու դքսուհի դէտամուն ու նրա մերձավորները՝ անհոգի, հաշվենկատ պրետն և խարդախ, վախկոտ վիկոնտը, գրողը հակադրում է բոլորովին այլ բնույթի մարդկանց: Նրա սիրելի հերոսները՝ նկարիչները, ենթավարպետները, բնորդուհին, աղքատ ուսանողը, մարմնավորում են ժողովրդի լավագույն գծերը՝ տաղանդը, մեծահոգությունը, քաջությունը, կենսուրախությունը:

«Ասկանին» վեպն իր սյուժեով բավական մտտ է Չելլինիի հուշագրություններին: Դյուման այնտեղից է վերցրել իր գրքի համարյա բոլոր հերոսներին:

Սակայն, թեև գրողը լայնորեն օգտագործել է Չելլինիի հուշերը, «Ասկանին» վեպը միանգամայն ինքնուրույն ստեղծագործություն է, որը շատ րանով բացարձակապես տարբերվում է Ֆլորենտացի արվեստագետի բնագրից: Աշխարհազգացողությունը, որով համակված է Բենվենուտոյի խստաշունչ, հախուռն և յուրովի ողբերգական դիրքը, խորապես խորթ է Դյումային:

Այն հասարակության մեջ, որտեղ ապրում էր Բենվենուտո Չելլինին, տիրում էր անարդարություն, և հաղթանակողը շարիքն էր Տերերի դաժան բռնակալությունը, մեծատոհմիկների կամայականությունները, պալատականների ինտրիգները, նախանձողների զրպարաանքը մոռյում էին նկարիչ կյանքը: Չելլինին ցավով էր մտաբերում այն տարիները, որ անց էր կացրել բանտում, իշխանավորների հետապնդումները, անիրավացի վիրավորանքները, ստեղծագործական տապալված ծրագրերը: Այդ մոռյլ իրականությանը ումանտիկ Դյուման հակադրեց իր վեպի շողշողան, արևափայլ, տոնական, զգացմունքային աշխարհը, որտեղ շարք խայտառակ պարտության է մատնվում, իսկ տաղանդը, երիտասարդությունը, սերը, գեղեցկությունն ու բարությունը հաղթանակում են:

Ինչպես հուշագրություններում, Դյումայի գրքում էլ Չելլինին պայքար է մղում թաղապետական զորեղ ավագանու դեմ: Այդ պայքարը վեպի սյուժետային հիմքն է և որոշում է նրա դինամիկական կառուցվածքը, լարված տեմպը, կյանող հետաքրքրությունը: Բենվենուտո Չելլինիի Ֆրանսիայում ապրած տարիների իրական սյատմությունն ավարտվում է արվեստագետի պարտությանը: Սակայն Ալեքսանդր Դյուման չէր կարող համաձայնել այդպիսի վերջաբանի հետ, որը կհակասեր նրա վեպի կենսուրախ բնույթին: Բարեհաջող ավարտը պատահականություն չէ Դյումայի համար: այն քաջահայտում է գրողի աշխարհազգացողությունը: Ինչպիսի պատահական դիպվածով էլ որ ձեռք էր բերվում հերոսի հաղթանակը, Դյուման տեսնում էր այդտեղ բարոյական ինչ-որ ընդհանուր օրինքների իրականացում: Նրա վեպում Չելլինին Ֆրանսիայից հեռանում է իր բարի կամքով, հասնելով ճանաչման և թաղապետական բարձր շնորհների, տապալելով թշնամիների դավադրություններն ու բարիքների արժանացնելով բարեկամներին:

Այդ չի նշանակում, թե Դյումայի հերոսները անհաշդության դառնություններ չէին գրում և չդիտեին, թե ինչ տաել է տանջանք: Բենվենուտան մեկնում է Բաայի, իր սրտում ասանելով անփոխադարձ սիրո տառապանքները: Բայց, այնուամենայնիվ, նա մեկնում է որպես հաղթող. արվեստագետը դքսուհուց ուժեղ գանձեց և բարին հաղթեց շարին:

Ալեքսանդր Դյուման ասյրում է XIX դարի կեսերի բուրժուական քաղքենիական հասարակության մեջ, որտեղ փողի հրեշավոր պաշտամունքն ու աշխատանքի կապիտալիստական անողոր բաժանումը, որը դիմազրկում և աւելադրում էր մարդուն, արգեն տվել էին իրենց պտուղները: Դյուման յուրովի փորձում էր պաշտպանել ժամանակակից մարդուն: Այդ պաշտպանութանը պակասում էր թափը, խիզախությունը, հետևողականությունը, իսկական սկզբունքայնությունը, բայց, այնուհանդերձ, դա պաշտպանություն էր: Քաղքենիական կյանքի հոգևոր աղքատությունը, տրտում, տնգույն առօրյային գրողը հակադրում էր վառ ու գրավիչ պատկերներ. նրա հերոսներն ուժեղ, համարձակ, մեծահոգի մարդիկ էին, որոնք ամենևին նման չէին ժամանակակից խանութպաններին ու անաշխատ եկամուտով ապրողներին: «Այն ժամանակներում ամեն ինչ զորեղ էր ու երիտասարդ, տեղուն մարդիկ կանգ չէին առնում կես ճանապարհին՝ ոչ սիրո, ոչ արվեստի, ոչ էլ ռազմի գործերի մեջ», — գրում է Դյուման: Այստեղից էլ նրա վեպում սկիզբ է առնում պատմական ոեալ անձնավորությունների յուրօրինակ իդեալականացումը:

Թե՛ Չելլինիին, թե՛ Ասկանիոյին և թե՛ Կոլոմբային գրողն առատաձեռնորեն օժտում է վեհ ու ազնիվ զգացմունքներով: Վեպի բոլոր հերոսները սիրահարված են և սերը զարդարում, ազնվացնում է նրանց ներաշխարհը: Այդ մտախմբերը ստիպեցին գրողին իր վեպի համար հորինել Փարիզի պրետի սքանչելի աղջկա կերպարը: Չելլինիի նոթերում Կոլոմբան չկա: Այդ իդեալականացված կերպարը նույնքան խորթ է Ֆլորենտացու բարոյական հասկացություններին ու կենսափորձին, որքան անհրաժեշտ է Դյումայի համար: Ասկանիոն և Կոլոմբան իրենց երիտասարդությամբ, գեղեցկությամբ, անմեղությամբ ստեղծում են պոեզիայի ու բարոյական մաքրություն այն մթնոլորտը, որը Դյումայի վեպի բնորոշ առանձնահատկություններից մեկն է: Բայց այդ իդեալականացված հերոսներն իրենց էությունով չափազանց անզորժունյա ու երկշտ են, և գրողը չէր կարող վրստահել նրանց բարդ, հետաքրքրաշարժ ինտրիգի վարումը: Կոլոմբայի և Ասկանիոյի կողքին նա պիտք է զներ մի ուրիշ զույգ՝ դորժոն էությունը մարմնավորող: Չելլինին և դքսուհին երկշտ սիրահարներ չեն, այլ իրար արժանի թշնամիներ, հաստատակամ ու անվախ մարդիկ՝ բաժանված թշնամական անհաշտ շահերով:

Մեր պատկերացումը Դյումայի նկարագրած մարդկանց կյանքի մասին լիարժեք չէր լինի, և թե ազնվաբարո Բենվենուտոյի և պոետիկ Կոլոմբայի կողքին լինեիր զվարճալի, ուրախ, շնկճվող սրամիտ ուսանող ժակ Օրրին: Ժակը ստեղծագործության դադափարական մտահղացումներում հտ-

մարյա նույնքան կարևոր տեղ է գրավում, որքան կոլումբան: Նա հումորիստական տարերբեր է ողն է վեպում:

«Ասկանիո» վեպը համակված է բարեհոգի հումորով. դրամատիկական, կամ լիրիկական լարված տեսարաններին սովորաբար հաջորդում են ուրախ, հումորիստական պատկերներ՝ լարվածությունը թուլացնելու համար: Ասկանիոյի և կոլումբոյի կողքին հայտնվում են ժակի և ժերվեզայի, Ներմանի և տիկին Պերինայի կատակերգական զույգերը, իսկ «Սիրով ամուսնություն» լիրիկական գլխին հաջորդում է «Ամուսնություն պարտքի զգացումից» զավեշտական գլուխը: Վեպում կան շատ զվարճալի միջադեպեր, կատակներ, սրամտություններ, անկեղծ, անմիջական ուրախություն և այդ ամենի մեջ էլ բացահայտվում է գրողի պայծառ, կենսուրախ աշխարհայացքը:

Այն աշխարհը, որտեղ ապրում են Դյումայի հերոսները, ղեկավարվում է ո՛չ նախախնամությամբ, ո՛ր մարդկային ըմբռնմանը անհասանելի ուժերով, այլ հենց մարդկանց ձեռքով: Եվ երբեմն ավելի ուժեղ են լինում ո՛չ նրանք, ովքեր սոցիալական սանդուղքի վերին աստիճանին են կանգնած, այլ նրանք, ում կողմն է հանճարը, համառությունն ու խիզախությունը: Այստեղ արվեստագետի եռանդը, կամ անհայտ ուսանողի հնարամտությունը կարող են թագավորների ու կայսրերի վարած մեծ խաղի բոլոր խաղաթղթերը խառնել: Դյումայի մականբասային, պարզամիտ, բայց անկեղծ, գեմոկրատական համակրանքով տոգորված պատկերացումը կյանքի մասին շատ բանով որոշում է նրա վեպի գեղարվեստական առանձնահատկությունները: Ստեղծագործության սյուժետը կառուցված է հաստատական թշնամիների պայքարի վրա: Այդ պայքարը բարդացնելու համար նրանցից ամեն մեկը մենամարտի մեջ է մտնում իր մերձավորների հետ մեկտեղ: Անձնական մրցակցությանը մեծ մասամբ միահյուսվում են ինչ-որ լրացուցիչ, հաճախ՝ քաղաքական շարժառիթներ: Այդ յուրօրինակ մենամարտի վախճանը, որպես օրենք, կախված է նրանից, թե ում կողմն է ճշմարտությունն ու արդարությունը: Վեպի առերևույթ բարդ, սյուժետային բազմաթիվ ճյուղավորումներ ունեցող կառուցվածքն իրականում հանդում է այդ բանաձևին և աչքի է ընկնում արտակարգ բարեկազմությամբ, հրատակությամբ ու սրբազնությամբ:

Վեպի իրադարձությունները ծավալվում են կայծակնային արագությամբ, իսկ հերոսներն ապրում են դրավիչ, լարված կյանքով՝ իրենց հոգևոր ու ֆիզիկական ուժերի ամբողջ թափով:

Առատորեն օգտագործելով Չելլիսիի նոթերից բաղաժ փաստերը, Դյուման մեծ վարպետությամբ ընտրում, համակցում, ձևափոխում է դրանք, ձգտելով պատմությունը դարձնել ավելի սեղմ, գինամիկ, դրամատիկ: Ընթերցողի ուշադրությունը լցրելու և պատմության մեջ լրացուցիչ մանրամասնություններ ու նոր գործող անձինք շփոթանելու համար նա զսպանակի պես սեղմում է իրադարձությունները, ընտրում ամենանշանակալից երեվույթները, երկու-երեք նմանօրինակ փաստը պարձնում մեկ, կենցաղային

իրարից անջատված երևույթներն անքակտելիորեն կապելով միասնական պատճառական-հետևանքային մի կապով:

Այսպես, օրինակ, վեպում Բենվենուտոն բանտ է ընկնում Պոմպոնյի սպանության համար: Դա հնարավորություն է տալիս Դյումային հեռանալ ոչ պիտանի ու բավական ըարդ թեմայից՝ արձանագործի հարաբերություններից պապի արքունիքի հետ, թույլ է տալիս միացնել իրադարձությունները, բաց թողնել սպանված ոսկերչի հարազատների դեմ Բենվենուտոյի պայքարի մանրամասնությունները:

Այդ նույն նպատակով Դյուման իր վեպում Չելլինիի ծախորգությունները շոտմում ավարտում է նրա փախուստով Սուրբ Հրեշտակի ամրոցից, քանի որ երկրորդ ընտարկության պատմությունը սկզբունքային ոչ մի նոր բան չի ավելացնում հերոսի բնութագրին ու սյուժետի զարգացմանը: Հեղինակն ավելի սեղմ է դարձրել նաև Չելլինիի Ֆրանսիայում անցկացրած ժամանակաշրջանը՝ հնարավորին շափ իրադարձություններով հագեցնելով: Բենվենուտոյի փարիզյան երկու ենթավարպետներից՝ Ֆլորենտացի Պագոլոյից ու հոմեացի Պագոլոյից, Դյուման ստեղծել է մեկը՝ երկուսի կենսագրություններից ընտրելով ամենահետաքրքրականը: Սկոցոնի համար էլ գրողն օգտագործել է երկու ունալ նախակերպար: Սակայն Չելլինիի նոթերում անցողակի հիշված Ասկանիոյի արկածը, թե ինչպես նելի ամրոցի այգում նա թաքցնում էր բավական գեղեցիկ մի աղջկա, որը ծնողներից փախել էր նրա մոտ, վեպում, ընդարձակվելով, դարձել է ռոմանտիկական մի ամբողջ պատմություն:

Դրողի այդ կարողությունը՝ վեպի սյուժետային բազմապիսի, իլալտարդետ թելերն ի մի հավաքելու, դրամատիկական կապ հաստատելու Ասկանիոյի ու Կոլոմբայի սիրո, Ֆավորիտուհու բմահաճույքի, պալատականի փառամոլության, արվեստագետի ճակատագրի, թագավորների մրցակցության ու Միլանի դքսության պատմության միջև, բնորոշ է Դյումայի համար իբրև արկածային ուշագրավ վեպերի հեղինակի: Ասես կախարդական գավաղանով կառավարում է նա իր վեպի ըարդ աշխարհը, ստեղծում ինտրիգների ամուր հանգույցներ, ամենաանսպասելի ձևով շրջում է իրագործությունների ընթացքը, հերոսներին կանգնեցնում փակուղու առաջ, որպեսզի վերջին թուպին, երբ կործանումն անխուսափելի է թվում, հաղթականորեն դուրս բերի նրանց այդ փակուղուց: Եվ այդ բոլոր զխապտույտ արկածները, զարմանալի իրադարձությունները, մարդկային կրթրի բախումները լի են երիտասարդ, երջանիկ, անհագ, զվարթ կենսասիրությամբ: Այդ կենսասիրությանը, առույզությանը, մարդասիրությանը ընթերցողը կհանդիպի նաև Դյումայի մյուս վեպում:

8. Վանդակայտ

Ր Ո Վ Ա Ն Գ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Մասն առաջին	
Գլուխ առաջին. Փողոցն ու արվեստանոցը	5
Գլուխ երկրորդ. XVI դարի ոսկերիչը	22
Գլուխ երրորդ. Գեղալոս	34
Գլուխ չորրորդ. Սկոցենե	55
Գլուխ հինգերորդ. Հանճարը և թագավորական իշխանությունը	67
Գլուխ վեցերորդ. Ինչի համար են դուենյաները	82
Գլուխ յոթերորդ. Փեսացուն և բարեկամը	100
Գլուխ ութերորդ. Հարձակման և պաշտպանությունն նախապատրաստությունը	117
Գլուխ իններորդ. Անսպասելի հարձակում	133
Գլուխ տասներորդ. Ամբոցների տառվելության մասին	150
Գլուխ տասնմեկերորդ. Բուեր, կոշազակներ, սոխակներ	163
Գլուխ տասներկուերորդ. Ռազավորի տիրուհին	163
Գլուխ տասներեֆերորդ. Գեղեցկուհու սիրտը	197
Գլուխ տասնչորսերորդ. Որտեղ խոսվում է այն մասին, որ մարդկային կյանքի էությունը տառապանքն է	217
Գլուխ տասնհինգերորդ. Այն մասին, թե ինչպես ուրախությունը փոխվում է վշտի	229
Գլուխ տասնվեցերորդ. Արքունիքում	241
Գլուխ տասնյոթերորդ. Սեր-կիրք	249
Գլուխ տասնութերորդ. Սեր-անուրջ	261
Գլուխ տասնիններորդ. Սեր-երազանք	270
Մասն երկրորդ	
Գլուխ առաջին. Խիղճը վաճառող մարդը	281
Գլուխ երկրորդ. Չորս հարյուր ավազակներ	309
Գլուխ երրորդ. Աշնանային գիշերվա երազը	323
Գլուխ չորրորդ. Ստեֆանա	323
Գլուխ հինգերորդ. Խուզարկություն	347
Գլուխ վեցերորդ. Կարլոս V-ը Տոնտենբուրգում	361
	597

Գլուխ յոթերորդ. Մոսյլ վանականի առասպելը	378
Գլուխ ութերորդ. Ինչ կարելի է տեսնել դիշերը բարդու կատարից	391
Գլուխ իններորդ. Մարսը և Վեներան	408
Գլուխ ասաներորդ. Մրցակցուհիներ	423
Գլուխ տասնմեկերորդ. Բենվենուտոն տազնապի մեջ է	434
Գլուխ տասներկուերորդ. Այն մասին, թե ազնիվ մարդու համար ինչքան դժվար է բանտ բնկնելը	450
Գլուխ տասներեֆերորդ. Որտեղ ժակ Օբրին հասնում է հիրավի դյուցազ- նեբրգական բարձունքների	467
Գլուխ տասնչորսերորդ. Այն մասին, թե ազնիվ մարդու համար ինչքան դժվար է բանտից դուրս դալը	476
Գլուխ ասանհինգերորդ. Ազնիվ գողը	490
Գլուխ տասնվեցերորդ. Որը ցույց է տալիս, որ նթե այրելու լինենք հա- տարակ աղջկա նամակը, ապա այն ոչ պակաս կրակ ու մոխիր կտա, քան դքսուհու նամակը	501
Գլուխ տասնյոթերորդ. Որտեղ խոսվում է այն մասին, որ իսկական ըն- կերն ընդունակ է նույնիսկ այնպիսի անձնագոհության, ինչպես ամուսնությունն է	512
Գլուխ ասանուրբերորդ. Յուպիտերի ձուլումը	521
Գլուխ ասանիններորդ. Յուպիտերը և Ուլիմպոսը	532
Գլուխ քսաներորդ. Հաշվենկատ ամուսնություն	543
Գլուխ քսանմեկերորդ. Պատերազմը շարունակվում է	556
Գլուխ քսաներկուերորդ. Սիրով ամուսնություն	566
Գլուխ քսաներեֆերորդ. Ամուսնություն սբարտքի զգացումից	585
Ա. Դյումայի «Ասկանիո» վեպը — Տ. Վանդակյալա	586

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԴՅՈՒՄՍ

Ա ս կ ան ի ո

Վ Ե Պ

А. ДЮМА
А С К А Н И О
РОМАН

(на армянском языке)
Ереван «Луйс» 1991

Խմբագիր՝ Հ. Հ. Ֆելեֆյան

Հրատ. խմբագիր՝ Է. Պ. Չալիկյան

Նկարիչ՝ Ա. Ա. Բաղդասարյան

Գեղ. խմբագիր՝ Ս. Վ. Պողոսյան

Տեխն. խմբագիր՝ Ռ. Ն. Ախիրյան

Վերատպուող սրբագրիչ՝ Մ. Կ. Մկրտչյան

ИБ № 3045

Հանձնված է շարվածքի՝ 22. 03. 90 թ.:


Ստորագրված է տպագրության՝ 24. 10. 90 թ.:

Չափեր՝ $84 \times 108^{1/32}$: Թուղթ՝ տպագրական № 2: Տառատեսակ՝ «Գրքի սովորական»: Տպագրություն՝ բարձր: Պայմ. տպ. 31,5 մամ.: 31,9 գ. թ. օտ.: հրատ. 29,4 մամ.: Պատվեր՝ 517: Տպաքանակ՝ 60 000: Գինը՝ 5 ուր.: «Լույս» հրատարակչություն, Երևան-9, Տերյան 19 ա:

Издательство «Луйс», Ереван-9, ул. Теряна, 19а.

Հայաստանի հանրապետության հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի Հակոբ Մեղուպարտի անվան պոլիգրաֆկոմբինատ, Երևան—9, Տերյան 91:

Полиграфкомбинат им. Акопа Мегاپарта Госкомитета Республики Армения по делам издательств, полиграфии и книжной торговли. Ереван-9, ул. Теряна, 91.



57.



LIBRARY · WYLLIAMS ·

UNIVERSITY ·

